ՍՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 10—11 1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ 1898 № 10—11

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՈՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца Гол. пр., д. № 41.
1898

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Ноября 1898 г.

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր Ը

մտնելու է առաջիկայ 1899 *թուականին իւր գոյութեան*

ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻԵԼՈՎ ՆՈՅՆ ԾՐԱԳՐՈՎ, ՈՐՊԷՍ ՄԻՆՉԵՒ ԱՅԺՄ

ՀԱՐՍՏԱՅՆԵԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ, *աւելի բազմակողմանի դարձնելով ամսագրի բաժինները, և դորա համեմատ մեծացնել Մուրճի ծաւալը—այդ ամենը կախուած է բաժանորդների թուից։*

ԱՇԽԱՏԱԿՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ *բաղկացած է շուրջ երեսուն հոգուց, որոնք ծանօթ են ամսագրիս մշտական ընթերցողներին։*

ՀՐԱՒԻՐՈՒՄ ԵՆՔ *հայ ընթերցող հասարակութիւնը որ պաշտպանի Մուրճ՝ը բաժանորդագրութիւնով, որը միակ զրաւականը կարող է լինել ամսագրի յարատեւութեան, ճոխութեան և հրատարակման կանոնաւորութեան։*

ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ *են տրուած քիչ ունեւորներին բաժանորդ գրելու, որպէս զի Մուրճ-ը կարողանայ կարելիին չափ լայն խաւերը թափանցել։*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ *ներկայ համարի հետ զրկւում են բոլոր բաժնորդներին ծրարները նամակներով։*

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ *դիմել խմբագրատուն՝* Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ". *արտասահմանից* Tiflis. Rédaction de Mourtch. *Կարելի է դիմել նաև այն բոլոր անձերին, որոնց խմբագրութիւնս հաւատացել է անդորրոգրերի բլանկներ խմբագիր հրատարակչի ստորագրութեամբ։*

ԲԱԺՆԵԳԻՆԸ 10 *ռուբլի, որ կարելի է վճարել կէսը ստորագրելիս, միւս կէսը մինչև յունիսի վերջը* 1899 *թ.*

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ *գտնւում է Թիֆլիս,* Սերգիևսկայա *փողոց, տուն* № 6 *և բաց է ամեն օր, ժամ* 12—2, 5—7։

ՄՈՒՐՃԻ ՏԱՍԸ ՏԱՐԻԱՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ *կազմւում է և պիտի հրատարակւի ամանձին բրոշիւրով.* 1899-*ի բաժանորդները այդ ցուցակը պիտի ստանան ձրի։*

ՏԱՍՆԱՄԵԱԿԻՑ

Տասը տարի առաջ, երբ լոյս տեսաւ Մուրճ՝ը հրատարակելու մասին յայտարարութիւնը, զգացւում էր որ այս ամսագրի հետ որոշ յոյսեր են կապուած. բաւական է աչքի անցկացնել Մուրճ՝ի առաջին տարւայ աշխատակիցների և առաջին տարւայ բաժանորդների ցուցակները, եզրակացնելու համար, որ այդ յոյսերը տածում էին բոլոր խմբերը, որոնց վրայ բաժանուած էր ժամանակի ընթերցող հասարակութիւնը, խմբեր, որոնց ընդունուած էր կուսակցութիւն անունը տալու։ Բայց բաւական է միայն ամսագրիս առաջին տարւան ժամանակակից օրաթերթերի համարները աչքի անցկացնել, համոզուելու համար, որ Մուրճ՝ը եկած էր ոչ թէ արդարացնելու քիչ առաջ յիշեալ խմբերից արտայայտուած յոյսերը, այլ, բոլորովին ընդհակառակը, կատարելապէս հիասթափելու յուսադիրներին։

Պատճառը պարզ էր. Մուրճ՝ը չէր եկած սնուցանելու այն ոգին, որով տոգորած էին ժամանակի մամուլի օրգանները մեր ընթերցող հասարակութեանը, ոգի, որը մեզ չէր թուում նպաստաւոր՝ յառաջդիմական գործի ամուր հաստատմանը մեր մէջ։ Յառաջդիմութեան գործը պահանջում էր աւելի հաստուն սերունդ, սնուցուած մի գրականութիւնով, որը աւելի կ՝համապատասխանէր մեր ազգի առաջաւոր մասի ոգեկան ու մտաւոր պահանջներին, և, միւս կողմից, կարող լինէր ուղղել արթնանալու ընդունակ մտքերը դէպի աւելի լուրջ գրականութիւն, դորանով իսկ ստեղծել ինտելիգենտ մասսայի մէջ պահանջ դէպի շլատակ և լուրջ վերաբերմունք

կեանքի բազմակողմանի խնդիրներին, որոնց ծառայելու է կոչուած մամուլն ու գրականութիւնը, մղելով նոցա դէպի յառաջադէմ մտքի մեծ ճանապարհը։

Այս մտքով ոգեորուած մենք սկսեցինք այս ամսագրի հրատարակութիւնը, որի առաջին համարի մէջ իսկ չառաջնորդեցինք յայտնել մեր միտքը մեր մամուլի անցեալի մասին, բայց ամենից առաջ պարտք համարելով անարկբայելի կերպով շեշտել հայկական մտքի յառաջդիմութեան այն քայլերը, որ արուել են անցեալում հուժկու զարկերով։

Մենք յայտնում ենք մեզ ոգեորած զգացմունքները, և ոչ թէ այն, թէ ինչ ենք կատարել։ Սակայն մի բան, որ համարձակ կարող ենք ասել և արդարութիւն կ'լինէր որ այդ ասելու իրաւունքը ամենից առաջ մե՛զ պատկանէր, այդ այն է, որ մենք շիտակութեամբ և անձնուիրութեամբ ենք կատարել մեր պարտքը, ամենևին չազդուելով թէ մեր դէմ մղուած հրապարակական թշնամութիւններից և թէ որ և է այլ արտաքին խոչնդոտներից, երբէք աչք չդարձնելով սկզբից յայտարարուած և քանիցս կրկնած նպատակից։

Տասը տարուայ տարածութեան սկզբի ծայրում, ուրեմն, Մուրճը պիտի լսէր լոկ հիասթափութեան, անհանգստութեան և նոյն իսկ զայրոյթի ձայներ. տասը տարուայ այս ծայրը հասնում է նա արդէն մի հասարակութեան հանդիպելու համար, որը անարկդիմի խօսքերով ողջունում է մեր նաւի ծովափ հասնելը, առանց ճանապարհին վնասներ կրած լինելու։ Եւ վնասը կը լինէր այն, որ Մուրճը մի նշանախնդ անգամ փոխած լինէր իւր ընթացքից, պաշտում լինէր այն՝ ինչ ատում էր, ատում լինէր այն՝ ինչ պաշտում էր։

Անցած տարածութեան երկու ծայրերի մէջ տեղը դրած է ծրագիրը և նորա գործադրութիւնը։ Չենք կարող պնդել թէ մենք լիովին հասել ենք մեր նպատակին. դեռ այդ ուղղութեամբ շատ ու շատ պիտի գործել։ Բայց անհուն զոհունակութեամբ կարող ենք այսօր արձանագրել մի բան, որ մենք այժմ միմակը չենք հաւա-

տացող, թէ Մուրճով գործ կատարուել է, և ոչ միակն ենք հաւատով դէպի Մուրճի ուղղութեան ապագան։

Եթէ տասը տարում կարողացել ենք այդքանին հասնել— մենք պատճառ ունինք գոհ լինելու։ Բայց դա այն գոհունակութիւնը չէ, որ հրաւիրէ մեզ հանգչել եղածի վրայ, այլ, բոլորովին ընդհակառակը, դա այն գոհունակութիւնն է, որը մարդուս գիտակցել է տալիս թէ հիմքը ամուր է և որ նորա վրայ կարելի է շէնքը կառուցանել։

Մեզ համար առանձնապէս թանկ է այնքան միաձայնութեամբ Մուրճ՝ին տուած վկայութիւնը իբրև մաքուր, շիտակ օրգանի։ Մուրճի այդ տիտղոսը անասելի թանկ է մեզ համար, աւելի թանկ, քան այս թերթի կատարած որ և է ծառայութիւնը։ Եւ ասենք թէ ինչու։ Այս թերթը հրատարակելու միտքը յղանալիս՝ աչք դարձնելով եղածի վրայ, մեզ ոչ միայն անհանգիստ էր անում մեր գրականութեան ու մամուլի բովանդակութեան խեղճութիւնը, այլ և մանաւանդ մամուլի բարոյականը, որի նկատմամբ մենք եկել էինք ամենատխուր եզրակացութիւնների։ Եւ մամուլն էլ ստեղծել էր իւր նման ընթերցող հասարակութիւն, որը արդէն մամուլի մէջ սովոր էր կրկեսային զւարճութիւն որոնել։ Երբէք չէինք կարող թոյլ տալ, թէ այդ բնազդներով կրթուած մի հասարակութիւն ընդունակ լինի յառաջդիմութեան գործին ծառայելու, ինչ դրօշակի անունով էլ նա կամենար խօսել և գործել։ Յառաջդիմութիւնը ունի իւր յատուկ բարոյական պայմանները, որոնց բացակայութեամբ խօսքը նոյն նշանակութիւնն ունի, ինչ ստախօսի երդումը, սուտ ճգնաւորի ասուածպաշտութիւնը, խաչագողի բարեպաշտութիւնը, ցեցի բարոյախօսութիւնը։

Ոչ մի լուրջ գործ չի կարող կատարուել առանց համոզմունքի. բայց և ոչ մի միտք չի կարող համոզմունք դառնալ, երբ նա չի հաշուում բարոյականի տարրական պահանջների հետ։ Ազգի ոգեկան յառաջդիմութեան նախանձախնդիրը չէր կարող առանց սրտի մորմոքի և զայրոյթի տեսնել, որ մամուլը կատարելապէս իւրացրել է և գրական նուրբ ձևերի վերածել դռեհկի ստոր ճարպիկու-

թեան բոլոր եղանակները։ Եւ մեզ համար միանգամայն պարզ էր, որ այդ ասնում է ոչ միայն դէպի մամուլի և, սորա ազդեցութեամբ՝ գրականութեան անկում, այլ և դէպի ժողովրդի և մասնաւորապէս ինտելլիգէնցիայի անկում, որ առաջինից՝ գրականից՝ շատ ու շատ աւելի ծանր բան է։ Մեր խորին համոզմունքով, գրականութիւնը պիտի ոչ միայն տաղանդներ այլ և մարդիկ արտադրէ։ Ոչ թէ այն ազգն է բարձր և ապագայ խոստացող, որը ամենից շատ գրականագէտներ է տալիս, այլ այն ազգը, որը ամենից շատ բարոյական անձեր է տալիս. և այն գրականութիւնն է իսկապէս բեղմնաւոր և յառաջդիմութեան նպաստող, որից մաքրութիւն և շիտակութիւն է բուրում. իսկ այդպէս լինելու համար մամուլը ոչ թէ պէտք է բարոյականութեան սրբութիւնները բերան անի, այլ դոցանով տոգորուած լինի մինչև ոսկորի զուղն ու ծուծը. մամուլը պէտք է մտաւոր հորիզոններ բաց անելով՝ մարդ կրթի, և ոչ միայն քարոզով, և դեռ ամենից քիչ՝ քարոզով, այլ իւր էութեամբ. նորանից պէտք է այդ բոյրը գայ, թէկուզ ձայնը չլսւի։

Խորապէս համոզուած որ յառաջդիմութիւնը տեւական կերպով հնարաւոր է միմիայն շիտակ, ազնիւ բարքերի ժամանակ, մենք մեր ազգի վերածնութիւնը, որքանով որ նա կախուած է դրաւոր արտադրութիւններից, սպասում ենք միմիայն այնպիսի գրականութիւնից, որը մտքերի արծարծման և մշակման հետ ի միասին ընթերցող հասարակութեանը ներշնչում է մտածելու և գործելու շիտակ եղանակ, բարոյական մաքրութիւն։ Եւ այդ՝ վերաբերելի է գլխաւորապէս մամուլին, որը առօրեայ շփման մէջ է ընթերցող ժողովրդի հետ և շարունակական ընդհարումների մէջ՝ այլ և այլ հակառակ հոսանքների հետ. մամուլին այդպիսով վիճակուած է մշտական փորձութիւնների բովից անցնելու. և հէնց այդտեղ է որ նա, համոզմունքների անյողդողդութեան հետ, պիտի ցոյց տայ իւր բարոյական սկզբունքների ամրութիւնը։ Ուր պակաս է վերջինս՝ պիտի բացակայի նաև առաջինը։

Այժմ տեսնում ենք որ Մուրճ'ի բարոյական մաքրութիւնը վկայւում է միաժամանակ բազմաթիւ մօտ ու հեռու անձերից, և թւում է մեզ թէ այդ հանգամանքը շեշտւում է որպէս Մուրճ'ի առանձնայատկութիւն։ Զենք կարող այդ առթիւ մեր ուրախու-

թիւնը չյայտնել, և դորանով կատարած չտեսնել մի գործ, որը Մուրճ'ի ուղղութեան հիմնաքարերից մէկն է կազմում։ Այդ հանգամանքի ընդհանուր նշանակութիւնը կայանում է նորանում, որ հայ ընթերցող հասարակութեան մէջ կը վերհաստատուի խախտուած հաւատը դէպի հայ տպագրական խօսքը, և, միւս կողմից, մաքուր մտածող գրական մարդոց համար հայկական ասպարէզը հրապուրիչ կը դարձնէ։

Այսպիսով մի տասնեակ տարուայ շրջանի սկզբում մենք հանդիպել ենք թերահաւատների, եթէ չասենք ուելին. իսկ այս ծայրում՝ մենք գտնում ենք արդէն մեր գործը հրապարակաւ քաջալերող մի հասարակութիւն։ Հին թշնամութիւնները չեն վերացել. բայց ոչ, ձեռքը սրտին դրած, չի վկայիլ որ այդ թշնամանքների բարոյական ոյժը այսօր արդէն արժանապէս գնահատուել է։ Թող ներուի մեզ ասել՝—այստեղ կրկնուած ենք տեսնում իդէալական գործերի յաղթութեան սովորական պրոցէսը։ Այդ պրոցէսի Ֆիլոսոֆայութիւնը սովորել ենք մենք քայլ առ քայլ առաջ տանելով մեր ծրագիրը և տեսնելով թէ ինչպէս աւելի նոր ինտելլիգէնտ սերունդները իրենց յատուկ դիւրազգացութեամբ և բնազդի թարմութեամբ՝ դալիս յարում են այն բանին, ինչի մէջ նոքա գաղափարականը բարձր և անխախտ պահուած են տեսնում։ Դա մխիթարական է։ Սնուցանել այդ նոր սերունդների մէջ գաղափարականի պահանջը, դա եղել է և կը լինի Մուրճ'ի մի կարևոր պաշտօնը։ Միմիայն գաղափարի յարած սերունդները կարող են կեանքում գործ կատարել. նոցանից է որ պէտք է սպասուի կեանքի թարմացում. և մամուլի կոչումն է այդ զգացումները թէ արթնացնել և թէ թարմ պահել և յարաճուն դարձնել նոցա մէջ։

Հրապարակական արտայայտութիւններից նոր ոյժ քաղելով՝ Մուրճ'ը կ'շարունակի գործել անշեղ կերպով, կամենալով իւր ցայժմեան կատարածը նկատել որպէս մի ընդարձակ սկզբնաւորութիւն։ Մեր ժամանակը առաջադրում է մեզ բարդ խնդիրներ, որոնք ինք-

նին պահանջում են լուրջ վերաբերմունք։ Այդ խնդիրները լուծելու համար սոսկական անհատների ոյժը բաւական չէ. պահանջւում է մի ոգով կրթւած և միևնոյն նպատակների դիմող սերունդների մասնակցութիւնը. պահանջւում է մի խօսքով հասարակական ոյժ։ Մամուլը կոչւած է անհատական ոյժերը հասարակականի վերածելու. իսկ դորա համար անհրաժեշտօրէն հարկաւոր է որ թերթը մշակէ որոշ սկզբունքներ, մտածելու որոշ եղանակ, վերաբերմունքի որոշ ձև, մի խօսքով շկոլա։

Որոշ վերաբերմունքը դէպի խնդիրները, անշեղ կերպով պահպանելը այդ վերաբերմունքի յընթացս երկար տարիների, փորձելով նորա ոյժը այլ և այլ խնդիրների նկատմամբ,—ահա թէ ինչն է ստեղծում շկոլան. և այդ նկատմամբ Մուրճ.ը ունի և մշակում է իւր շկոլան, հիմնւած թէ գիտութիւնների, թէ նախորդների օրինակների և թէ կենսական փորձի տուեալների վրայ։ Շկոլան անհրաժեշտ է մասնակի ոյժերը հասարակականի վերածելու համար. առանց դորան չի կարող կազմել մտածողութեան և ձգտումների այն միութիւնը, որը այնքան անհրաժեշտ է ընդհանուր գործեր առաջ տանելու համար։ Բայց այդ շկոլան դեռ պէտք է շարունակել մշակել և ընդհանրացնել, մի գործ, որ կարող է կատարւել համակիր ոյժերի միացումով։

Արդ, տասը տարուայ փորձը ցոյց տուեց, որ Մուրճի դաղափարը այդ միացման ոյժն ունի, որովհետև թերթը այսօր ներկայանում է իւր արդէն շատ տեղ ցրւած աշխատակցական խմբով, որի անդամներից շատերն են այժմ իրենց անունը կապել բացառապէս և միւսները՝ գլխաւորապէս այս օրգանի հետ և, որ գլխաւորն է, այն անունները մեծագոյն մասամբ հասունացել են այս ամսագրի մէջ և այժմ այդ անձերը անհրաժեշտ ոյժերից և կրողներից են հայոց գրականութեան։ Այդ հանգամանքը շատ կարևոր նշանակութիւն ունի. նա ցոյց է տալիս որ Մուրճը իւր ժամանակի սերնդի գործն է, որ այս ամսագիրը, ուրեմն, օրգանական կապերով կապ-

ւած է իւր ժամանակի հետ և որ նա իւր ժամանակի սերնդի համար հայկական մտքի մշակման աշխատանոցն է։

Այդ մտքով հիմնւած էր այս ամսագիրը, որի համար մեր ընթերցողներին յղում ենք սկզբի տարւայ մեր ամենառաջին յօդւածին, և մխիթարութիւն ենք զգում տեսնելով որ տարիները իրար յաջորդեցին վկայելու որ մեր այդ դիտաւորութեան մէջ սխալւած չենք եղած։

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԻՔՍԱՆԴՐ ԹԱՏՈՒՐԵԱՆԻ

1

„ՍԻՐԵՑԷ՛Ք ՄԻՄԵԱՆՑ“

Ես տաճար մտայ... «Սիրեցէք միմեանց»
Լսւում էր բեմից քարոզ փրկչաւանդ,
Եւ օտար շարքեր բարեպաշտ մարդկանց
Աղօթում էին այնտեղ ջերմեռանդ։

«Սիրեցէք միմեանց»... Օ՛, վսեմ ուսմունք,
Որ միշտ կրկնւում ես միայն տաճարում.
Եւ միայն այնտեղ անչար զգացմունք,
Գուցէ, զարթեցնում մարդկանց սրտերում...

Շատ եմ փափագած, որ լսեմ ես քեզ
Ե՛ւ կեանքում—հեռու տաճարի բեմից,
Բայց իզուր փափագ... Դու հալածւած ես
Ե՛ւ մարդկանց սրտից, և՛ կեանքի շեմից...

2

ՁԱՏԵՐԻՑ ՄԷԿԸ

Ես տեսայ նորան—այն մատաղ կուսին
Հարսնական շորով տաճարում կանգնած.

Տանջանքի հետքեր գունատ երեսին,
Տխուր հայեացքը գետին խոնարհած։

Անզօր, անբարբառ։ որպէս մի գառնիկ,
Սպանդանոց բերուած բռնակալ ձեռքով.
Կոյսը զսպում էր սրբոյի փոթորիկ,
Կոյսը լալիս էր սրոյի արցունքով...

Եւ նորա կողքին ինքնագոհ, հրպարտ
Կանգնած էր փեսան Կրեսոսի փառքով.
Զոհը—կենսավառ, որպէս գարնան վարդ,
Դահիճն—ուժասպառ, խորշոմած դէմքով...

Եւ խուռ բազմութիւն, ծընողք, ազգական,
Դպիր, քահանայ խաչ ու մոմ ձեռին՝
Լուռ վրկայ էին զոհաբերութեան
Այդ սրբագործուած զաղիր պատկերին...

Օ՛, խղճուկ հայ կին, անարգուած էակ,
Համր ստրկութիւն—ահա քո անուն.
Անգարմուն—քո կեանք, անլոյս—քո վիճակ,
Արդեօք ե՞րբ պէտք է բացուի քո լեզուն...

3

ՏՈ՛ՒՐ ՁԵՌՔԴ, ԸՆԿԵ՛Ր...

Տո՛ւր ձեռքդ, ընկե՛ր—այս ծանր օրերին
Թող գործի սիրով յուզին մեր սրտեր.
Նայիր—մեր առջև շատ նեղ է ուղին,
Մեր շուրջը—գժգոյն, սրտամաշ պատկեր...

Դեռ խոր թմրութիւն հայրենի երկրում,
Ազգը ծարաւի ուսման, գիտութեան.
Ազգային դեկը անշարժ ձեռքերում,
Եւ իշխող ոգին յետադիմութեան...

Վառ մոքի առաջ փակված ասպարէզ,
Թզուկին պահած և՛ գործ, և՛ դափնիք,
Օ՛, ընկեր, կարծես, մեր կեանքն է կըրկէս,
Ուր քաջ վիտուում են խեղկատակ մարդիկ...

Տգէսը—գիտուն, անգործը—մըշակ,
Ազգային հացով նա է կշտանում,
Ով հոգով աղքատ, երեսին դիմակ,
Հայրենի արտում որոմն է ցանում...

Ազգի գանձերին դեռ գողեր պաշտպան,
Լոյսին թշնամիք—մեզ լուսաւորիչ.
Ոչխարի վերայ գայլն է պահապան,
Կոյրը—առաջնորդ, համրը—քարոզիչ...

Տուր ձեռքդ, ընկեր, լարենք մեր ոյժեր,
Անգուլ գործի է մեր կեանքը կարօտ.
Առատ է հունձը, սակաւ—մշակներ,
Դեռ խոր է նինջը, դեռ լոյսը աղօտ...

4

ՆԱՒԱՎԱՐ

(ԽՐԻՄԻ ԱԼԲՈՄԻՑ)

—Է՛յ, նաւավար, ինչ ես անում,
Ո՞ւր ես նստում դու նաւակ.
Սև ամպեր են, տես, բարձրանում
Դէպի երկինք կապուտակ։

Հորիզոնն էլ մութով պատած,
Հեռուում ամպն է որոտում.
Նայիր, ծովն էլ կամաց-կամաց
Պարզ երեսն է կնճռոտում...

Է՛հ, աղա՛ ջան, դարդ մի՛ արա,
Ծովափին եմ ես ծնուել.

Մեծացել եմ ծովի վերայ,
Ծովի ջրերով միշտ սնուել։

Մանուկ օրից շատ եմ տեսել
Ե՛ւ փոթորիկ, և՛ աղէտ.
Ծովն է ինձ միշտ օրօր ասել,
Նոր չեմ ծանօթ ծովի հետ։

Հայր ունէի—ծովում կորաւ,
Որսի ելած մութ գիշեր.
Նորան ալիք լափեց, կերաւ.
Նա ձկնորս էր անվեհեր։

Ծովում կորցրի երկու եղբայր,
Նաւավարներ ինձ նըման.
Որ իմացայ—երկինք, աշխարհ,
Ասես, գլխիս փուլ եկան...

Լ՛ռ, աղա՛ջան, դարդ մի՛ անիլ,
Թէ ծովն ինձ էլ կուլ կըտայ.
«Կուժն ամեն օր ջուր չի բերիլ»...
Ամեն բանի վերջը կայ...

Կեանքը լաւ է... Բայց ի՞նչ արած...
Համ էլ մահից ինչ փախչեմ...
Ծովն է տալիս մեզ կեանք ու հաց,
Ծովի տակ էլ կը հանգչեմ...»

Ասաց, շարժեց նա թիակներ,
Եւ բարձրաձայն երգելով,
Քանջ սլացաւ ծովի խորքեր,
Սև ալիքներ ճեղքելով...

5

ՊՈԷՏԻՆ

Պոէտ, դու հպարտ, սէգ արծուի նըման,
Բարձրից մի՛ նայիլ ադէտ ամբոխին.

Եւ կըծու երգով մի՛ ծաղրիլ նորան,
Շանթեր մի՛ թափիր խղճուկի գլխին։

Ի՞նչով է, ասա, ամբոխն յանցաւոր,
Որ խորթ են նորան քո հոգու ձայներ.
Դու վարդ ես երգում, պոէտ բախտաւոր,
Երբ նորա կեանքին պատած են փշեր...

Ի՞նչ անէ ամբոխն, ինչպէս հասկանայ
Քո գողտրիկ տաղերն, երբ թեւեր առած,
Դու միշտ ապրում ես ամպերի վերայ,
Կեանքից անջատուած, եթեր վերացած...

Ամբոխը, պոէտ, զաւակ է երկրի,
Լուսազուրկ զաւակ, քրտնաթոր մշակ.
Նա միշտ կարօտ է կեանքի երգերի—
Երգիր նորան հաց և արդար վաստակ։

Երգիր նորան լոյս, բարիքներ ուսման,
Եղիր ամբոխին ուսուցիչ—ընկեր.
Նստիր նորա հետ մի ճաշի սեղան,
Շոշափիր մօտից դու նորա վէրքեր...

Ապրիր նորա հետ, նորա տանջանքով,
Մի զլուիր նորան ձեռքդ պարզելու.
Դու ոչ ներշնչիր նորան քո երգով—
Խաւարի կապանքն անվախ փշրելու...

Եւ տես, ով պոէտ, քեզ այն ժամանակ
Որպիսի սիրով կը սիրէ ամբոխ.
Սէրն այդ կը հիւսէ քեզ դափնէ պսակ,
Սէրն այդ կը կանդնէ քեզ յաւերժ կոթող...

Մոսկւա։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նէր Մուրճի տասնամեայ անընդհատ եւ անխոնջ գործունէութեանը

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑԻ

Կեանքումս ատենախօսութիւններ շատ եմ լսել, բայց նրանցից ոչ մէկը կարող չէ համեմատուել այն ատենախօսութեան հետ, որ ես լսեցի մօտ ժամանակներս։ Եկեղեցին հոյակապ էր եւ փառաւոր։ Նրա մէջ չկար ոչ մի սիւն. երեւի առաստաղը երկաթակապ էր։ Բեմ բարձրացաւ մի երիտասարդ քահանայ, նիհար, բայց համակրելի դէմքով, երկայն հասակով եւ կրակոտ աչքերով։ Ձայնը մաքուր էր եւ զօրեղ, առոգանութիւնը քաղցրահնչիւն եւ դուրեկան, ասածները նոր եւ ազդու։ Ես միայն մօտաւորապէս կարող եմ հաղորդել, թէ ինչ էր նրա ատենախօսութեան բնաբանը եւ բովանդակութիւնը, առաջուց խոստովանելով, որ իմ գրածովս չեմ կարող կենդանի խօսքի զօրեղ տպաւորութիւնը գործել, նրա պէս հմայել եւ յափշտակել, քանի որ խօսելու եղանակը, ձեւը եւ կենդանութիւնը գրի առնել կարելի չէ։

—Ցարգելի եղբայրներ եւ քոյրեր,—այսպէս սկսեց ատենախօսը։—Ի՞նչ բան կարող է մեր սրտին, մեր հոգուն եւ մեր մտքին այնքան մօտիկ լինել, որքան նոյն իսկ այդ սիրտը, այդ հոգին եւ այդ միտքը, որքան մեր անձը, մեր կեանքը եւ մեր կեցութիւնը։ Մենք մեր քթերը չենք տեսնում, որովհետեւ շատ է մօտիկ մեր աչքերին։ Մենք քննում ենք երկնքի երեսը—եւ հէնց այդ միջոցին ընկնում ենք մի փոսի մէջ։ Այսպէս մօտիկը տեսնելու, մօտիկը

հետազօտելու և ուսումնասիրելու սովորութիւն չունինք։ Եւ կարժէ միթէ հետաքրքրութիւն մտիկով, որ շատ տեսնելուց արդէն դառել է մի շատ ծանօթ բան։ Այսօր ես շատ մտիկից պիտի սկսեմ իմ առենախօսութիւնը. ես պիտի խօսեմ մեր ապրելու մասին. պիտի ցոյց տամ, թէ ինչպիսի երևոյթ է մեր ապրելը, ինչպիսի պահանջներ ունի և ինչպիսի ազդեցութիւն մեր կենցաղավարութեան վրայ։

Նախ և առաջ այս հարցնենք, թէ ինչու համար ենք մենք ստեղծուած. և միթէ մենք մեր յօժար կամքովն ենք լոյս աշխարհ ընկել։ Ինչպէս ծնուել ենք առանց մեր կամքի, նոյնպէս և ապրում ու մեռնում ենք առանց մեր կամքի։ Մեր բնութիւնն այնպէս է ստեղծուած, որ ծնուելուց յետոյ պիտի ապրենք։ Կեանք ասածդ ահա այս ապրելու վրայ է հաստատուած։ Այս կեանքի մէջ ամեն մարդու միակ հոգսն է նրա ապրելը։ Ինչ որ անում է մարդ՝ թէ լաւ և թէ վատ, ապրելու համար է անում։ Ամեն ոք աշխատում է՝ հնար եղածին չափ՝ լաւ ապրել։ Մարդ չի կարող ոչ մի քայլ անել կամովին, որ ապրելու համար չլինի։ Ամեն մի հաստատութիւն՝ քաղաքական, կրօնական, բարեգործական, մարդասիրական, պատերազմական, թշնամական, բարեկամական, ուսումնարան, արհեստանոց, գործարան, խանութ և ամեն տեսակ բնակարան—բոլորը, բոլորը ապրելու համար են։ Բոլոր մոլութիւնները,—գողութիւնը, մարդասպանութիւնը, խաբէութիւնը, ստախօսութիւնը, մատնութիւնը, դաւաճանութիւնը, ագահութիւնը, ինչպէս և բոլոր առաքինութիւնները, որոնք թւով անհամեմատ քիչ են մոլութիւններից,—բոլորն էլ ապրելու համար են կատարւում։

Ապրելու ցանկութիւնը այնքան բնական և այնքան զօրաւոր է մարդու մէջ, որ նա կարող չէ ներկայացնել իրան, թէ կարելի է և չապրել։ Թէպէտ փորձով գիտէ, որ մահկանացու է, որ մի օր պիտի մեռնի, բայց կարող չէ թոյլ տալ, որ մեռնելուց յետոյ էլ նա ապրելու չէ յաւիտեան, և այն էլ աւելի լաւ կեանքով, քան թէ ունեցել է այս աշխարհումս։ Հաւատացած է որ դժոխքումն անգամ ապրելու է, թէև տանջւելով։ Միթէ քիչ կան այս աշխարհումս էլ տանջւելով ապրողներ. բայց դարձեալ ապրում են, յուսալով, որ մի օր էլ լաւ կապրեն՝ եթէ ոչ այս աշխարհում, գոնէ միւսում։

Մարդն ապրել ուզենալով նաև մեռնելուց յետոյ, ստեղծել է մի յաւիտենական աշխարհ, անհամեմատ գեղեցիկ, քան թէ այս աշխարհն է։ Այնտեղ ամենքն էլ՝ այր թէ կին, ծեր թէ մանուկ՝ հաւասարապէս երջանիկ են։ Ներկայ աշխարհի զանազան դասակարգերը, զանազան բարձր ու ցածր աստիճանները այնտեղ գոյութիւն չունին։ Բացարձակ հաւասարութիւն է տիրում ամենի մէջ։ Սնա հին մարդու ապրելու իդէալը, որ նոր մարդու իրագործութեանն է սպասում։

Մի ժամանակ, երբ աշխարհիս կեցութիւնը ներկայիս համեմատութեամբ շատ դառն էր, իսկ վերացական կրօնասիրութիւնն աւելի սաստիկ, այս յաւիտենական կեանքը չափից դուրս էր գրաւիչ ու չափից դուրս շատ մարդիկ էր քաշում դէպի ինքը։ Մարդիկ տուն ու տեղ, կին ու զաւակ թողած, փախչում էին այս անցաւոր աշխարհից և քաշւում անապատներ, այնտեղ ճգնում, որ սրբուին իրանց մեղքերից և հրեշտակների դասին արժանանան։ Հիմա եկէք ու տեսցէք որ այդ մարդիկը նոյնպէս ապրելու համար չէին այդպէս վարւում, և այն էլ այնպէս ապրելու, ինչպէս միւս կեանքի ապրելն էր պատկերանում իրանց երևակայութեան մէջ։ Բանի վրայ նոյն ժամանակի տեսակէտից նայելով՝ պիտի ասենք, որ այդ մարդիկը իրանց ժամանակակիցների մէջ ամենից խելօքն էին։ Ինչ բան էր մի քանի տարուայ թեթև տանջանքը՝ համեմատած այն յաւիտենական երջանկութեան հետ, որ պիտի ձեռք բերէին։ Դեռ չեմ ասում այն պատիւները որ կենդանութեան ժամանակ ստանում էին բազմաթիւ ուխտաւորներից, և այն, որ այս աշխարհումն էլ պիտի սուրբերի կարգն ընկնէին և պաշտուէին։

Երևակայութիւնը, որով մարդ զանազան ցնորական աշխարհներ է ստեղծում՝ թէ չար և թէ բարի, թէ երջանիկ և թէ թշուառ, հեթանոս հնդկացուն ստեղծել է տուել մի ամենաթշուառ և ամենասոսկալի կեանք։ Նրանց հայեացքով՝ ապրելը մի տանջանք է, որովհետև մարդ մի անգամ չէ ծնւում և մէկ անգամ մեռնում, այլ անորոշ թւով շատ անգամ։ Նա շարունակ ծնւում ու մեռնում է և այն էլ ամեն անգամ մի ջոկ կերպարանքով, երբեմն մարդու և երբեմն այլ և այլ կենդանու,—գազանի, սողունի, թռչունի և այլն։ Եւ որքան ստոր է լինում մարդու հոգին, այն-

քան սառը և պիղծ արարածի մէջ է մնում նա։ Յայտնի չէ, թէ որքան է տևում այս մարմնափոխութիւնը միևնոյն հոգու համար, բայց վերջ ի վերջոյ այլ ևս չի կրկնւում նրա ծնունդը և նա ընկնում է յաւիտենական լռութեան գիրկը, ուր այլ ևս տանջանք չկայ, այլ մշտնջենական հանգստութիւն։

Ընայած այս դժոխային տանջանքին, հնդկացիք դարձեալ ապրում են։ Եւ ինչ անեն որ չապրեն, քանի որ մարմինն սպանելով հոգին չեն կարող սպանել. նա պէտք է աւելի մեծ տանջանքների մէջ ընկնի։ Բայց դրանց երևակայութիւնն ստեղծել է մի այլ տեսակ մարմնասպանութիւն, որով հոգին ազատւում է մի նոր մարմնի մէջ մտնելուց և ուղղակի գնում է իր հանգստանալու տեղը։ Սրանց ճգնաւորութիւնն է այս։ Ճգնաւորը պէտք է իր յարաբերութիւնը այս աշխարհի հետ բոլորովին կտրէ, մարմնական և հոգեկան կրքերը բոլորովին ոչնչացնէ, իր մարմնաւոր գոյութիւնը չգոյութեան վերածէ, և զուտ հոգով վերանայ իբրև մի անմարմին գոյութիւն։ Եւ հնդկացին ինքն իրան դժոխային տանջանքների է ենթարկում՝ այդ վերացման աստիճանին հասնելու համար։ Մարդկային նախանձն ու սնափառութիւնը այստեղ էլ է խաղացնում պոչը. ճգնաւորներն աշխատում են միմեանց գերազանցել մարմնասպանութեան ասպարիզում։ Եթէ մէկն իր քիթն է կտրում, միսը և՛ քիթն է կտրում և՛ աչքերը հանում, երրորդը ականջներն էլ է խլացնում, չորրորդն այդ բոլորն անելուց յետոյ՝ լեզուն էլ է կտրում, հինգերորդն այնպէս է անդամատում իրան, որ դառնում է մի կոյտ մարմնական զանգուած։ Մենք պիտի զարմանանք, որ մեր ճգնաւորները սրանց պէս չեն վարւել, քանի որ Աւետարանի մէջ էլ ասուած է, որ «եթէ աչքդ դայթակղեցնէ քեզ, հանիր և դէն ձգիր, եթէ ձեռքդ դայթակղեցնէ քեզ, կտրիր և դէն ձգիր»...

Բուդհան սկզբումը փորձեց իրան այդ տեսակ ճգնութեան ենթարկել, բայց տեսնելով նրա անօգուտ լինելը, հոգեպէս վերանալն ու յափշտակուելը բաւական համարեց։ Ծայրայեղ ճգնութեան մէջ նա սնափառութիւն է տեսնում և նախանձ, որ սուրբ մարդը պէտք է չունենայ. աւելի լաւ է համարում ողորմութիւն հաւաքել և բաժանել աղքատներին։ Հոգու վերացումով և բարեգործութիւնով կարող է բացարձակ սրբւել մարդ և արժանանալ նիրւա-

նային ուղղակի։ Բայց թէ ինչ էր Բուդհայի Ներւանան, այդ մեզ ներկայացնել չենք կարող, որովհետև դա մի չգոյ էակ էր, մի չէութիւն, որ սակայն գոյութիւն ունէր Բուդհայի երևակայութեան մէջ։ Բուդհան, որ նոյն էր բրահմանականութեան համար, ինչ որ Քրիստոս հրէութեան, աղօթքի դէմ էր, և իր հետևողներին աղօթք չսովրեցրեց՝ ասելով։—«Ի՞նչ է աղօթքը, ձեմ պիտի դիմէք աղօթքով, ումից պիտի օգնութիւն խնդրէք, ձեմ պիտի աղաչէք, ձեմ պիտի փառաբանէք։ Նա, ում որ պիտի դիմէք, Անմռունչ է. աչք չունի, որ ձեզ տեսնի, ականջ չունի, որ ձեզ լսի, ձեռք չունի, որ ձեզ օգնի։ Դուք ձեր յոյսը ձեզ վրայ պիտի դնէք, դուք ինքներդ պիտի օգնէք միմեանց»։

Այսպէս ահա Բուդհայի Աստուածը մեռած է բոլորովին. նրա կրօնը նոյնպէս մեռած է, նրանում չկայ ոչ կեանք, ոչ ապրելու համար մի իդէալ։

Բուդհայի Ներւանան այն Ոչինչն է, որից Մովսէսի Եհովան առաջ է բերում ամբողջ տիեզերքը, բացի այր մարդուց, որին հողից է ստեղծում, և կին մարդուց, որին այր մարդուցն է առաջ բերում։ Մովսէսի կեանքի իդէալը եդեմական դրախտն էր, որ լիքն էր Տիրոջ բոլոր բարիքներով։ Ադամն ու Եւան շատ երջանիկ էին այդ փափուկ դրախտի մէջ, բայց նրանք չիմացան իրանց երջանկութեան պատիւը, (և ինչպէս կիմանային, քանի որ չգիտէին իրանց չարն ու բարին, քանի որ մի այլ վիճակի ծանօթ չէին) չպահեցին Եհովայի պատուէրը, կերան բարու և չարի գիտութեան ծառի պտղից և հասկացան թէ ինչ է մերկութիւնը, և ամաչեցին. իմացան որ պատուիրազանց են եղել և վախեցան Աստծուց։ Բայց էլ ինչ կօգնէր. աստած էր, որ եթէ նոյն պտղից ուտեն, պէտք է մեռնին։ Բարկացաւ Եհովան և անիծեց մարդուն՝ ասելով «հող էիր առաջ, էլի հող դառնաս»։ Խեղճ Ադամին ու Եւային դուրս արին դրախտից և նրա դուռը փակեցին յաւիտենական փականքով, նա այլ ևս բաց չէր լինելու մարդկութեան համար։

Դրախտում փափուկ մեծացած Ադամն ու Եւան հարկադրեցան ապրելու իրանց երեսի քրտինքով։ Ուրիշ ելք չկար, ապրելը մի բնական և սոցիալական պահանջ էր, իսկ առանց աշխատելու էլ անկարելի էր ապրել։ Եւ եթէ մի այնպիսի երկիր չէին աքսորուած,

ուր բնութիւնն առատութեամբ տալիս է ամեն ուտելիք տարբայ ամեն եղանակներում, ապա երևակայել պէտք է, թէ որքան դժուարութիւնով պիտի հայթայթէին իրանց ապրուստը մարդ ու կին, երկուսն էլ մերկ, երկուսն էլ անպատսպար և անդէնք։

Պիտի ասէք՝ շատ խիստ է այս պատիժը։ Ես էլ կ՚ասեմ որ խիստ է, ինկատ առնելով նրանց անփութութիւնը, անմեղութիւնը, հետևանքի մասին մտածելու կարողութիւն չունենալը, օձի խորամանկութիւնը և այլն։ Բայց եթէ նրանք այսչափ արդարանալու հանգամանքներ ունենալով հանդերձ, արտաքսւում են դրախտից՝ Աստծոյ հրամանը չկատարելու համար, որքան առաւել արտաքսելու արժանի են իրանց դրախտից այն մարդիկը, որոնք անխտիր ուտում են ամենայն պտուղ և չեն կատարում իրանց մարդասիրական պարտքը։ Ինաւ անարդարութիւն չէր լինիլ՝ եթէ այդպիսիներին արտաքսէին դրախտից և հարկադրէին, որ երեսների քրտինքովն ուտէին իրանց հացը, և ոչ թէ ուրիշի քրտինքով շաղախւած համեղ պատառներով պարարտացնէին իրանց մարմինը։

Այսպէս ահա Մովսէսը մի դրախտ տւաւ միայն, այն էլ աւելի մահւան համար, քան թէ կենդանութեան և բարեկեցութեան։ Նա չտւաւ մարդկութեանը ապրելու իդէալ։

Մահմէդը՝ օգուտ քաղելով Մովսէսի դրախտի և Քրիստոսի երկնքի արքայութեան գաղափարից՝ մի այնպիսի հէքիաթական աշխարհ ստեղծեց երկնքումը, որ արաբական բոլոր հէքիաթները գլուխ խոնարհեցրին նրա առջև և խոստովանեցին իրանց ոչնչութիւնը։ Արաբացիք առհասարակ զուտ հոգեկան և վերացական ոչինչ չունին, նրանց երևակայութիւնը ամենայն ինչ մարմնացնում է։ Այսպէս է վարւել և Մահմէդը, իբրև արաբացի։ Քրիստոսի հոգևոր, վսեմ և վերացական գաղափարը նա բոլորովին մարմնացրել է այնպիսի մանրամասնութիւններով, որ ամեն մի միւսլիմ կը փափագէր գոնէ մէկ անգամ աչքովը տեսնել, իսկ այս աշխարհիս վրայ գոնէ նրա ստւերն ունենալ։

Ես անվայել եմ համարում այս սուրբ տաճարի մէջ նկարագրել, թէ ինչ խառնակ երևակայութեան ծնունդ է այդ հսկայական հարէմը, որով Մահմէդը սրբապղծել է դրախտի և երկնային ար-

քայութեան անունը։ Այս է Մահմէդի տաճծ կեանքի և ապրելու իդէալը։

Ամենայն մի ծայրայեղութիւն կորցնում է մարդկային բնութեան հաւասարակշռութիւնը և նրան անդունդ գլորում։ Բնաւ ապացուցի կարօտ չէ, որ ապրելու այդ եղանակը մի բաղեղ է, որ փաթաթելով հասարակ ժողովրդի կեանքի ծառին, պիտի ծծէ նրա հիւթը, ինքը պարարտանայ և նրան կմախք դարձնէ, մինչև այլ ևս սնունդ չստանալով՝ չորանայ և վայր թափւի ծառի ոտքերի տակ։ Այս է մուսլիմութեան թշւառ ապագան։ Նա պիտի ընկէր նրա ոտների տակ, ում արիւնը որ ծծել է այնպէս անխընայ։

Այժմ դառնանք մեր կրօնին, և տեսնենք սա ինչպիսի իդէալ է տրւել մեզ ապրելու համար։ Բայց այստեղ թոյլ տւէք ինձ մի միջանկեալ նկատողութիւն անել։ Ամեն մարդ ամենայն ազատամրտութեամբ և աթէիստական ուղղութեամբ դատաքննում ու դատափետում է այս և այն կրօնի ստութիւնը և մոլորութիւնը, բայց երբ բանը իւր կրօնին է հասնում, նրան համարում է միակ անսխալ։ Աշկարա բան է, որ նա կեղծում է, բայց կեղծելու պատճառն ինչ է։ Պատճառն ապրելու պրն է, որ այստեղ էլ է դեր խաղում։ Օտար կրօնի պախարակողը և իր կրօնի գովաբանողը կը վայելէ իր կրօնակիցների յարգանքը, պատիւը, կը համարւի ուղղահաւատ, ազգասէր և հայրենասէր, իսկ եթէ իր կրօնին դիպչի, չէ՞ որ նա կը համարւի հերետիկոս, կրօնադրուժ, դաւաճան եկեղեցու, ազգի և հայրենիքի։ Ո՞ր խելացի մարդը կուզենայ, որ այդ սև տիտղոսները իր ճակատի վրայ դրոշմէին։ Արդ՝ չկեղծելու համար, եթէ խնդիրը վերաբերէր մեր ազգային եկեղեցուն, ես կը հետևէի այն առածին, որ ասում է՝ «Կամ լաւ, կամ ոչինչ». բայց քանի որ մեր խօսքը Աւետարանի վարդապետութեան մասին է, այստեղ ես ամենայն հաւատով և սրբութեամբ կարող եմ վկայել և ապացուցանել, որ քրիստոնէական կրօնը բոլոր կրօններից այնքան բարձր է, որքան երկինքը գետնքից։ Քրիստոնէական կրօնի բուն հեղինակը, որ է Յիսուս, ահա թէ ինչպիսի իդէալ տրւաւ մեզ մեր կենցաղավարութեան համար։ Նա ասաց, որ աշխարհիս վրայ պէտք չէ որ մոլութիւններ տեղի ունենան, բայց որովհետև

ոչինչ չի լինում առանց պատճառի, ապա ուրեմն պէտք է վերացնել այն բոլոր պատճառները, որոնք մոլութիւն և թշուառութիւն են առաջ բերում։ Բոլոր մոլութիւններ առաջ բերող միակ պատճառը մեր եսականութիւնն է, մեր ինքնասիրութիւնը։ Ապա ուրեմն բոլոր մոլութիւնները կը վերանան միայն այն ժամանակ, երբ մեր ապրելու եղանակը ոչ թէ եսական կը լինի կամ ինքնասիրական, այլ երբ նա կը լինի համայնասիրական, մարդասիրական, այլասիրական։ Եթէ ամեն ոք միայն իր անձի համար աշխատէ, նա պիտի թշնամական դիրք բռնէ դէպի ամենքը, սկսած իր ընկերից, եղբօրից, հարևանից մինչև աւելի հեռուն, մինչև ամբողջ մարդկութիւնը. իսկ դրա հակառակը եթէ ամեն ոք աշխատէ ամենքի համար, նա դրանով բարեկամական դիրք կը բռնէ դէպի ամենքը։ Առաջին դիրքից առաջ կը գան կռիւներ, խռովութիւններ, խաբէութիւն, խարդախութիւն, հարստահարութիւն, աւազակութիւն, բռնութիւն և առհասարակ այն բոլոր չարիքները, որոնք զոյութիւն են առել աշխարհիս երեսին, իսկ երկրորդ դիրքից առաջ կը գայ՝ սէր, միութիւն, եղբայրութիւն, մի խօսքով՝ մարդկավայել կեանք և երջանկութիւն։ Այսպէս Աւետարանի մէջ ցրուած գոյնզգոյն անգին քարերից երբ մի մոզաիկ ենք կազմում ըստ մեր ներկայ հասկացողութեան, կարողանում ենք կարդալ հետևեալը։ Ոչ մի անհատ մի ուրիշ անհատից կախու�չպիտի ունենայ, այլ ամենքն էլ պիտի համարեն համայնքի հարազատ որդիքը։ Մարդը մարդու դէմ գոյութեան կռիւ չպիտի մղէ, այլ ամենքը միացեալ ուժով, իրանց բանականութեամբ ձեռք բերած զէնքերով ու գործիքներով պիտի կռիւ մղեն բնութեան դէմ, պիտի յափշտակեն բնութիւնից ամենայն ինչ, որ պէտք է իրանց կեցութիւնը շարունակ բարեքելու համար։ Մարդը պէտք է կատարեալ լինի, որպէս իր Ստեղծողը. Նրա պէս ստեղծող և հնարող պիտի լինի։ Ոչ ոք քանքարաթաքոյց չպէտք է լինի, ամեն ոք իր ունեցած բնական ձիրքերը պիտի գործ դնէ յօգուտ ընդհանրութեան։

Աշխարհ չէ՞ արդեօք, որ ոչ մի կրօն մարդու բարեկեցութեան եղանակը այսչափ արդար և խելացի հիմքերի վրայ չի դրած։ Պարզ չէ՞ արդեօք, որ քրիստոնէական կրօնը մարդկային երջանկութեան միակ արդար և ճշմարիտ ուղեցոյցն է։ Երբ Քրիստոսին մեղադրե-

ցին փարիսեցիք, թէ Նա շաբաթը սուրբ չի պահում, Նա պատասխանեց, թէ «շաբաթն է մարդու համար և ոչ մարդը շաբաթի։ Այս ասել չէ՞ միթէ որ կրօնը մարդու համար է և ոչ մարդը կրօնի։ Բոլոր կրօնների մէջ միայն քրիստոնէականն է, որ այսչափ մարդասէր է, որ մարդու համար է և Նրա փրկութեանն է ծառայում։

Ժողովուրդները այս ու այն կրօնի կենսական մասին են նշանակութիւն տալիս, և հէնց որ տեսնում են, թէ իրանց կրօնը այլ ևս չի ծառայում իրանց բարեկեցութեանը, անցնում են դէպի այն կրօնը, որ նրանց աւելի բարեկեցիկ վիճակ է խոստանում։ Լինում են անհատներ, որոնք իրանց կրօնի համար նահատակութիւն են յանձն առնում, բայց հազարաւորները փոխում են իրանց կրօնը թէ կամովին և թէ նեղն ընկած ժամանակ։ Քրիստոս ասում էր, «եկէք ինձ մօտ, ով վաստակածներ և բեռնաւորներ, ես ձեզ կը հանգստացնեմ։ Եւ գալիս էին Քրիստոսի մօտ ամենքը, որոնք դժգոհ էին իրանց վիճակից, հարստահարուածները, թշուառացածները, գերիները և ստրուկները։ Նա էլ կերակրում էր ամենքին այնպէս, որ սեղանի վրայ դեռ շատ ուտելիք էր մնում։ Իսկ քրիստոնէութեան թարմ օրերում, երբ հաւատացեալների կեցութիւնը համայնական կազմակերպութիւն էր ստացել, ամենքն էլ գոհ էին իրանց բարեկեցութիւնից։

Հիմա շատ բնական է, որ ինձ հարցնէք, թէ ո՞ւր մնաց ա՛ռ քրիստոնեաների այդ համայնական բարեկեցութիւնը։ Ի՞նչպէս է պատահել որ Քրիստոսից մօտ երկու հազար տարի անցնելուց յետոյ՝ դեռ չի իրագործուել Նրա պատուէրները։ Այն եսականութիւնը, որին Նա հակառակ էր, այսօր աւելի էլ զարհուրելի մեծութեան է հասել և վիշապի պէս կուլ է տալիս ամենքին։

Ցամենայն դէպս, չիրագործուելու պատճառը ոչ Քրիստոսն է— և ոչ Նրա Աւետարանը, կը պատասխանեմ ես։—Բաւական է, որ մենք այսօր էլ զգում ենք, որ Աւետարանի ասածը զուտ ճշմարտութիւն է։ Անդրանիկ քրիստոնեաների դլխով շատ փոթորիկներ անց կացան, համարեա ամենքն էլ նահատակուեցին իրանց քարոզած ճշմարտութեան համար, և աշխարհն ազատեցին հեթանոսական խաւարից, բայց նրանց յետնորդները և յետնորդների էլ յետնորդները Աւետարանի ոգին ըմբռնելու չափ հասկացողութիւն, խելք

չունեցան։ Դուք հիմա չէք հաւատալ, որ ասեմ կրօնի քարոզիչների միակ և գլխաւոր ջանքը եղաւ հաւատացեալների գլխից հանել նրանց խելքն ու առողջ դատողութիւնը՝ իբրև չար ոգու թելադրութիւն, և զարգացնել նրանց հաւատալու միտումը միայն։ Զօրացնելով ժողովրդի հաւատը, կորցնել էին տալիս նրա խելքը. որքան անմիտ լինէր մէկը, այնքան նա առաքինի կը համարուէր, որովհետև ասուած էր, մինչև երեխի պէս միամիտ չլինիք, արքայութիւն չէք կարող ժառանգել։ Եթէ խելք նկատուէր մէկի մէջ, նա կը համարուէր չար ոգի ունեցող։ Այս ուղղութեամբ էին կրթում վանական հայրերը իրանց սաներին, ինչպէս այդ գտնում ենք նրանց վարքերում, որտեղից աւելորդ չեմ համարում մի օրինակ բերել։

—Արդեակ, ասում է սուրբ հայրը իր աշակերտին.—եթէ քեզ լաւ և վատ հագուստ առաջարկեն, դու լաւը չընտրես, այլ վատն ընտրիր։ Եթէ երկու տեսակ ուտելիք առաջարկեն լաւ և վատ, դու լաւը չընտրես այլ վատն ընտրիր։ Առհասարակ աշխարհումն ինչ որ լաւ է երևում, թող չգրաւէ քեզ, դու նոյն իսկ վատերի մէջ ամենավատն ընտրիր քեզ համար։

—Հայր, հարցնում է աշակերտը, եթէ այդպէս վարւիմ, մի՞թէ յիմարութիւն չի լինիլ իմ կողմից։

—Ի հարկէ, որդեակ, յիմարութիւն կը լինի, և պէտք է յիմարութիւն էլ լինի, որովհետև ինչ որ յիմարութիւն է թւում մարդկանց, այն է իմաստութիւն համարում Աստուած։

Աշակերտը չէր կարող չհաւատալ սուրբ հօր ասածին և այնպէս չվարուել։ Նա ոչ միայն հաւատում էր, այլ և չափազանց ուրախանում էր, որ մի նոր իմաստութիւն սովորեց աշխարհքը լուսաւորելու համար։ Ի՞նչ մեծ շնորհք է՝ բանն այնպէս գիտենալ, ինչպէս նա կայ, այդպէս հօ ամեն երեխայ էլ գիտէ. շնորհքն այն է, որ բանն այնպէս գիտենաս, ինչպէս նա չկայ։ Ո՞վ չգիտէ, որ լաւը լաւ է և վատը վատ, գեղեցիկը գեղեցիկ է և տգեղը տգեղ։ Բանն այն է, որ գիտենաս թէ գեղեցիկը տգեղ է և վատը՝ լաւ։ Կրթութիւնը նրա համար չէր տրւում, որ մարդիկ իրանց լաւ չգիտցածը աւելի լաւ գիտենային, այլ որ բոլորովին հակառակը գիտենային. ինչ որ սուտ էր թւում, ճշմարիտ համարէին և ինչ որ ճշմարիտ—սուտ։ Մարդիկ այնպէս չպիտի վարւէին, ինչպէս իրանց

խելքն էր թելադրում, այլ բոլորովին նրա հակառակը։ Մարդկութիւնն այս ուղղութեամբն առաջ գնաց բաւական երկար ժամանակ և ամեն մի յաջորդ սերունդ նախորդին գերազանցեց իր անխելքութիւնով։ Մարդու մտաւոր զարգացումն սկսեց յետ ու յետ շարժուել հսկայական քայլերով։ Այս յետաշարժութեան մէջ ևս քրիստոնեայ Եւրոպան միւս երկրների առջևն էր գնում։ Անխելքութեան կողմից նրանց հետ համեմատելով՝ մենք շատ աղքատ էինք, հարկադրուած էինք փոխ առնել նրանց ազիտութիւնը, ինչպէս այժմ փոխ ենք առնում նրանց գիտութիւնը։

Բայց գլխաւորն այն չէ, թէ մարդիկ օրպիսի վիճակի մէջ էին մտաւորապէս, այլ թէ ինչպէս էին տնտեսապէս, արդեօք գոհ էին իրանց կեցութիւնից, թէ դժգոհ, չէ որ այդ հանգամանքն է միայն, որ մարդկանց այս ու այն կողմն է մղում։—Հաւատի այս բարձրագոյն շրջանում մարդիկ դժգոհ չէին իրանց կեցութիւնից, որովհետև ինչքան վատ լինէր նրանց կեցութիւնը այս կեանքում, այնքան լաւ պիտի լինէր միւս կեանքում։ Հաւատացեալների ապրուստի մէջ խոշոր տարբերութիւն չկար։ Հարուստը, որ կարող էր շատ ձոխ ապրել, ապրում էր շատ աղքատ, որովհետև մեղք էր համարում լաւ ապրելը. աղքատն էլ ուզէր չուզէր՝ պէտք է վատ ապրէր, լաւ ապրելու համար գայթակղելու առիթ չունէր, ամենքի ապրելն էլ համարեա միատեսակ էր։ Կրօնաւորները, որոնք ապրում էին համայնական, միաբանական կեանքով, կարող էին եթէ ուզենային, շատ լաւ ապրել, բայց ամենից վատ և ամենից խիստ նրանք էին ապրում։ Նրանք էին պահպանում աղքատանոցները, անկելանոցները, հիւրանոցները, և ծառաների պաշտօնն իրանք էին կատարում։ Կեանքի այս սակաւապէսութիւնը, չքաւոր կեցութիւնը առաջ էր բերել մի տեսակ խաղաղութիւն, անշարժութիւն, ոչ ոք միւս օրւայ համար հոգս չէր քաշում։ Այժմ սրա վրայ աւելացրէք և այն հաւատը, որով աշխարհքը շուտով պիտի վերջանար, էլ ո՞վ կը մտածէր ձեռք զարկել այնպիսի բանի, որի արդիւնքը վայելելու համար պիտի տարիներով սպասէր։ Հարկաւոր էր արթուն լինել միշտ և միայն միւս կեանքի մասին մտածել։

Քրիստոնեայ աշխարհը այս վիճակի մէջ էր, երբ Հարաւից արաբական և Արևելքից թաթարական արշաւանքներն սկսեցին։

Հաւատացեալ Եւրոպան քառասուն հազար անմեղ մանուկներից մի բանակ կազմեց և նրանով ուզեց ազատել Քրիստոսի գերեզմանը անօրէնների ձեռքից, իսկ հայ քրիստոնեաները Թաթարների դէմ առնելու համար՝ երկաթէ խաչերով զինաւորեցին իրանց զորքերը, այսինքն՝ փոխանակ զինուորներին սուր ու նիզակ տալու՝ նրանց ձեռքը տուին մէկ մէկ երկաթէ խաչ։ Ինչ ասել պէտք է որ Թշնամին էլ հէնց այդ կուզէր։ Պարսից մի Թագաւոր Եգիպտացոց դէմ արշաւելիս՝ առաջապահ զինուորների ձեռքը մի մի կատու է տալիս, գիտենալով, որ Եգիպտացիք կատուի վրայ նետ չեն արձակիլ, քանի որ նրանց կրօնը խստիւ արգելում էր այդ։ Եւ նա չսխալուեց։ Եգիպտացիք այդ բանը տեսնելով՝ հետ փախան զարհուրելով։ Մերոնք փոխանակ օգուտ քաղելու Թշնամու Թոյլ կողմից, իրանց Թոյլ կողմն էին Թշնամու առջևը դնում, որովհեռև պիտի խելքի հակառակ վարուէին։ Մահմէդականութեան մէջ ևս չկար խելք, այլ միայն հաւատ, բայց բոլորովին հակամարդասիրական և սաստիկ մոլեռանդացնող։ Մահմէդը իր կրօնի մէջ մացրել էր ոչ միայն մի չափազանց դայթակղեցուցիչ դրախտ, այլ և նախասահմանութիւն, որ կրօնի գլխաւոր մասն էր։ Նախասահմանութիւնը մարդու ճակատագիրն էր, որ ծնելու օրից դրոշմուում էր նրա ճակատին։ Մարդը մի կամազուրկ և կոյր գործիք էր իր ճակատագրի ձեռին, ինչ որ անէր, ինչ որ դառնար, այնպէս էլ պիտի լինէր։ Ի հարկէ ինչպէս ամեն մի սնահաւատութիւն, նոյնպէս և ճակատագիրը զուրկ է տրամաբանութիւնից, բայց սա է մահմէդականի մոլեռանդութեան գլխաւոր աղբիւրը։—Զինուորներ, ասում էր զօրապետը, կռիւ սկսելուց առաջ. մ'իտ բերէք, որ ձեր մեռնելու օրը գրուած է ամեն մէկիդ ճակատին։ Ով որ այսօր մեռնելու է, նա պիտի մեռնի, որտեղ էլ որ լինի,—տանը, դռանը, ծովումը, թէ ցամաքումը։ Իսկ եթէ այսօր չէ նրա մեռնելու օրը, նա չի մեռնիլ, թէկուզ կրակ թափեն գլխին։ Դուք արդէն գիտէք, թէ պատերազմի մէջ մեռնող միսլեմին ինչ փառք, ինչ վայելչութիւն է սպասում միւս կեանքում։ Քանի կեանք կը տար մարդ՝ եօթանասուն հուրիներից միայն մէկին արժանանալու համար. բայց ձեզ եօթանասունը միասին է տրուում։ Ձեզ տրուում է հարիւր մարդու ուժ, յաւիտենական խարմութիւն և երիտասարդութիւն, անկշռում ախորժակ, որ ինչքան էլ վայելէք

դրախտի անմահական բարիքը, միշտ էլ ցանկանաք վայելել, և ձեր վերջին պատառը նոյնքան համեղ լինի, ինչքան և առաջինը։

Այս մոլեռանդ արնախումեերի դէմ ինչ կարող էր անելքրիստոնեան իր հաւատովը, որով սուր բռնելը մեղք էր համարում. նա միայն կարող էր նահատակուել, որ այն կեանքումը մարտիրոսական պսակին արժանանայ։ Եւ նահատակւում էին խմբերով ու բանակներով։ Մահմէդականի հաւատի մէջ սուր կար, իսկ քրիստոնեայի հաւատի մէջ պատրաստի պարանոց. «սուր քո և պարանոց մեր», ասում էին քրիստոնեաները և ամենայն քաջութեամբ....նահատակւում։ Վերջապէս մահմէդականութիւնը սանձարձակ առաջ վազեց, տիրեց Հայաստանին ու հռչակաւոր Բիւզանդիոնին, և խաչի տեղ տնկեց իր կիսալուսինը, որ մի կողմից մաշւում և միւս կողմից նորոգւում է շարունակ։

«Ով որ ականջովը չլսի, թիկունքովը կը լսի» ասում է առածը։ Անօրէնների սուրն ու մտրակը քրիստոնեաներին քիչ քիչ խելքի բերին։

Զարմանալի չէր արդեօք, որ վայրենի թաթարն աւելի խելք ունենար, քան թէ որքան և իցէ քաղաքակրթուած հայը։ Պատճառը՝ ինչպէս տեսանք, սխալ հասկացած կրօնն էր։ Այս երևոյթի մէջ անբնական ոչինչ չկար։ Հաւատը պիտի լրացնէր իր զարգացման շրջանը՝ հասնելով իր ամենաբարձր գագաթնակէտին, որտեղից բնականաբար կամաց կամաց պիտի վայր իջնէր, տեղի տալով մարդու խելքի զարգացմանը, թէև ոչ առանց ինքնապաշպանութեան և կռուի։

Յարգելի եղբայրներ և քոյրեր, թոյլ տուէք ինձ այստեղ մէկ միջանկեալ նկատողութիւն անել. — բացատրել, թէ ինչ կը նշանակէ պատմական զարգացում։ Զարգանալ՝ կը նշանակէ աճել, մեծանալ։ Նորածին երեխան օրէցօր և տարեցտարի աճում մեծանում է, և իր հասակի այլ և այլ շրջաններում նորանոր յատկութիւններ է երևցնում, առաջ միայն կենդանական ուժ, յետոյ հաւատ և ապա առողջ մտածութիւն և դատողութիւն։ Երեխան երբ լրացնում է իր հասունութեան շրջանը, նա բոլորովին նման է լինում իր ծնողներին, իր հարազատ արենակիցներին, թէ Ֆիզիքապէս և թէ հոգեպէս։ Այստեղ մենք տեսնում ենք աշխարհ, որ ամեն մարդ ժառան-

գում է իր ծնողների մարմնական և հոգեկան յատկութիւնները՝ լաւ և վատ կողմերով։ Բայց ամեն ոք իր ծնողներից ժառանգաբար ստացած յատկութիւնները նոյնութեամբ չի տալիս իր զաւակներին, այլ փոփոխած, պակասեցրած և աւելացրած։ Ամեն ոք աշխատում է ոչնչացնել իր մէջ այն յատկութիւնը, որ ագեղ է թւում իրան, որ անվայել է համարւում բանական արարածին և զարգացնում է իր մէջ այն յատկութիւնը, որ գեղեցիկ է թւում, որ օգտակար և վայելուչ է համարում։ Ամեն ոք իր ժառանգաբար ստացած յատկութիւնները իր հասկացողութեան ու կարողութեան չափով բարեկրթում է և այնպէս տալիս իր ժառանգներին։ Այս է պատճառը, որ թոռները և թոռների էլ թոռները աւելի են լինում բարեփոխուած, քան թէ իրանց պապերի պապերը։ Այստեղից մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ ինչպէս կայ ժառանգականութիւն, նոյնպէս կայ և ժառանգականութեան բարեկրթութեամբ զարգացում։ Եթէ այս զարգացումը չլինէր, մարդիկ անհուն դարերի ընթացքում ոչ մի փոփոխութեան չէին ենթարկւիլ, այլ նոյնը կը լինէին, ինչ որ եղել են սկզբումը իրանց նախնական վիճակի մէջ։ Բայց ինչն է, որ աճում, զարգանում և փոփոխւում է։ Ոչնչից ոչինչ չի ածիլ, պէտք է մի բան լինի, և այն էլ աճեցական բան, որ աճի։ Երևում է որ այդ յատկութիւններն ևս ունին իրանց նիւթական սաղմերը, որոնք կարող են և չաճել, եթէ աճելութիւնը խանգարող առիթներ լինին, և ընդհակառակն՝ կարգէ դուրս աճելութեան և զարգացման հասնել, որով և դուրս գան՝ մէկն ապուշ և միւսը հանճար։ Առաջինի մէջ ընդարմացած լինելով բոլոր դարերից ստացած ժառանգական յատկութիւնը, չի կարող նմանել ոչ իր ծնողներին և ոչ իր պապի պապերին, այլ ով գիտէ՝ գուցէ միայն իր ցեղի նախատիպին։ Երկրորդի մէջ էլ կարգէ դուրս աճելով ժառանգական յատկութիւններից մէկն ու մէկը կամ մի քանիսը, դարձեալ նման չի լինել՝ կամ ֆիզիքապէս և կամ մտաւորապէս՝ ոչ իր ծնողներին և ոչ նրանց նախորդներին, այլ գուցէ միայն շատ հեռաւոր յետնորդներին։ Եթէ ապուշը օժտուած է միայն շատ հեռաւոր նախորդի աղքատ յատկութիւններով, հանճարն էլ ուրեմն օժտուած պէտք է լինի շատ հեռաւոր ապագայ յետնորդի հարուստ յատկութիւնով։ Այս հանճարաւոր մարդիկն են, որոնք հանդիսանում

են իբրև ապագայի մարդիկ և մեզ առաջնորդում են դէպի ապագան։ Լսուած բան չէ, որ մէկը լինի հանճարաւոր մարդ, և մարդկանց առաջնորդէ դէպի անցեալը, դէպի նախնական վայրենութիւնը։ Հանճարը մարդկանց մտաւոր զարգացման ճանապարհը հարթողն է և նրանց առաջնորդողը դէպի ապագան։ Այս բանը գիտէ նոյն իսկ հասարակ ժողովուրդը, և միշտ՝ նեղն ընկած ժամանակ՝ սաստիկ փափագում է, որ լոյս ընկնի մի հանճարաւոր հերոս և իրան ազատէ նոյն նեղ վիճակից։ Հաւատի ամենաթունդ ժամանակ՝ մարդկութեան բախտից մի քանի հանճարներ լոյս ընկան իրար ետևից, և դրանք դարերով կանգնած և անշարժ երկրագունդը շարժման մէջ ձգեցին, նորանոր աշխարհներ գտան և սկսեցին բացատրել բնութեան և կեանքի երևոյթները։ Եթէ մարդկութիւնը կարգէ դուրս ընդունակ զաւակներ ծնելու յատկութիւն չունենար, նրա յառաջադիմութիւնը շատ դանդաղ քայլերով առաջ կերթար, բայց շնորհիւ հանճարների՝ մարդկութեան յառաջադիմութիւնը սաստիկ արագանում է։ Ներկայ ժամանակումս մէկ օրուայ կատարածը անցեալում տասնեակ դարերում չէ կատարուած։ Եւ ինչպէս կարելի է, որ մարդու մանկութիւնը հաւասարի նրա երիտասարդութեանը։ Հաւատի դարերում մարդկութիւնը մտաւորապէս մի պատանի էր, իսկ գիտութեան դարում մի առոյգ և առողջամիտ երիտասարդ։ Աւելի հասուն հասակի մէջ կը հասունանայ նրա մէջ և Բարեխոհութիւնն ու Արդարասիրութիւնը, որ այժմ շատ նուազ է։

Յարգելի եղբայրներ և քոյրեր, դժուարը դէպի առաջ, դէպի ապագան նայելն է. ոմ կիմանայ, թէ ապագան ինչ ունի թաքցրած իր մէջ. իսկ յետ նայելը շատ է հեշտ։ Կեանքի մէջ առաջ ենք գնում մեզ անծանօթ մի ճանապարհով, իմանում ենք, թէ ինչ տեղերով անց կացանք, բայց չենք կարող գուշակել, թէ էլի ինչպիսի տեղերով պիտի անցնենք և որպիսի արկածների և փորձանքների պիտի հանդիպենք։ Մենք հիմա կարող ենք գիտենալ, թէ մօտաւոր անցեալում որպիսի սխալներ է արել մարդկութիւնը, կամ ինչ պատճառից է առաջ եկել նրա այս կամ այն սխալը։

Երևակայեցէք ձեզ մի ահագին լեռնաշղթայ, որ իր մէջ թաքցրած ունենայ շատ պատուական գանձեր, բայց այդ շղթան ունենայ և անթափանցելի անտառներ, անդնդանման ձորեր, անմատչելի

գաղաթներ, չարաթոյն վիշապներ և ամեհի գազաններ։ Մարդը կարող է արդեօք ձեռք բերել այնտեղից այն պատուական գանձը, մինչև զինուած և զրահաւորուած չլինի հանճարի հնարած զէնքերով և գործիքներով։ Մարդկութիւնն ուզեց առանց խելքի օգնութեան, այլ միայն հաւատով՝ հասնել կրօնի ցոյց տրուած իդէալին, շահելի՝ նրա պատուական գանձից, բայց նա ոչ միայն չմօտեցաւ իր նպատակին, այլ ընկաւ կրօնի անյատակ և մութ ձորերը և դարերով մնաց խաւարի և թշուառութեան մէջ։ Այս այնքան բնական էր, որքան բնական էր այն, որ ագէտը գիտուն և յիմարն իմաստուն լինել չէին կարող։ Ամեն մարդ միևնոյն Աստծուն իրան է նմանեցնում, և դուրս է գալիս, որ մարդը չէ, որ Աստծոյ նման է, այլ Աստուած է մարդու նման, և այն էլ անիսաիր, լինի այդ մարդը մի տխմար, թէ մի իմաստուն։ Կրօնն էլ այնպէս է հասկանում իւրաքանչիւր ոք, ինչպիսի հասկացողութիւն որ ինքն ունենում է։ Այս է պատճառը, որ մի և նոյն Աւետարանից խելագարութեան հասած հրէշաւոր աղանդներ են ծնունդ առնում և մի և նոյն ժամանակ իրանց բարեկարգութիւնովն ու ներքին իմաստովը վսեմ և սքանչելի եկեղեցիներ։

Մենք հիմա միայն, դարեր անցնելուց յետոյ, գիտութեան զարգանալուց յետոյ, հասկանում ենք, որ կրօնը՝ իբրև մի հոգեբանական երևոյթ, իբրև երևակայութեան և հաւատի արդիւնք, հետազօտելի և ուսումնասիրելի առարկայ է և ոչ թէ հետազօտող և ուսումնասիրող։ Ուսումնասիրող առարկան գիտութիւնն է, որ խելքի, փորձառութեան և հանճարի արդիւնք է, և ոչ հաւատի։ Գիտութիւնն է ուսումնասիրում կրօնի էութիւնը, նրա ծագումը, զարգացումը, ներգործութիւնը, նրա դրական և բացասական կողմերը, կատարած լաւ և վատ դերը, ներկայ վիճակը և ցոյց է տալիս, թէ ինչով է նա շահաւէտ կամ վնաս մարդկութեանը։ Գիտութիւնը Աւետարանի համայնասիրութիւնը համարում է շատ արդար, բայց դանում է որ դրան կարելի է հասնել միայն գիտական զարգացումով։

Այսօր մարդու միտքը զարգանում է հսկայական քայլերով և որքան շատ է առաջ գնում, այնքան աւելի է յետ թողնում իրանից կրօնը իր բոլոր հաւատալիքներով։ Ինչպէս մի ժամանակ հաւատն

էր տիրում խելքի վրայ և նրան դուրս մղում, այսօր էլ խելքն է տիրում հաւատի վրայ և նրան դուրս մղում։ Ինչպէս առաջ մարդիկ իրանց փրկութիւնը կրօնի մէջ էին որոնում, այսօր էլ գիտութեան մէջ են որոնում։ Այսօր այլ ևս կրօնի եռևից վազող չկայ հոգու փրկութեան համար. և եթէ կան, այդ միայն մարմնի համար է, բարեկեցութեան համար է, և ոչ երբէք հոգու փրկութեան։

Մեր ազգի առածն ասում է «գայլի գլխին Աւետարան կարդացին, ասեց՝ շուտ արա, ոչխարը սարովն անցաւ»։ Այս առածն աւելի լաւ է բնորոշում, թէ մարդն այսօր ինչպէս է նայում իր կրօնի վրայ։ Զղիտեմ ինչ գրքում եմ կարդացել միսիոնարական կեանքից մի պատմութիւն, որ շատ նման է մեր ազգային առածին։ Մի միսիոնար գնում է Աֆրիկէի վայրենիներին քարոզելու։ Երևի առաջին անգամը չի լինում, որ նրանք սիպտակ քարոզչի երես են տեսնում. իսկոյն հաւաքւում են մօտը և առաջին հարցմունքը լինում է այն՝ թէ՝ նա հաց բերե՞լ է արդեօք իրանց ուտեցնելու համար։ Միսիոնարը ինչ պաշար որ ունենում է, տալիս է նրանց. նրանք էլ մի կողմից ուտում և միւս կողմից լսում են նրա քարոզը։ Այս միջոցին՝ որտեղից որտեղ՝ մի որս է անցնում նրանց մօտերիցը։ Ամենքն էլ վեր են թռչում, վազում որսի եռևիցը, բացի մի երկուսից, որոնք շարունակում են լսել։ Երբ որ քարոզը վերջանում է, այդ մնացողներն ասում են միսիոնարին։ «Ինչ որ ասացիր, շատ լաւ ասացիր, մենք ընդունում ենք. բայց որովհետև քեզ մօտ մնալով մենք զրկւեցինք մեր բաժին որսից, դրա փոխարէն դու պէտք է վճարես մեզ կամ հացով և կամ դրամով»։

—Յարգելի եղբայրներ և քոյրեր, իմ այսօրուայ բնաբանից դուրս է քննել կրօնի նշանակութիւնը, (այս մասին ես խօսելու եմ մի ուրիշ անգամ), այլ միայն կամենում եմ ցոյց տալ, թէ մարդ ամենայն ինչ որ անում է, լաւ թէ վատ, ապրելու համար է անում։ Առաջ կրօնները էին առաջնորդում մարդուն դէպի բարեկեցութիւն, այսօր այդ դերը գիտութիւնն է կատարում։ Կրօնական դասակարգը ամենից լաւ է առել նոր տեսակ ապրելու համը և նա, մնալով իր հին դիրքի և իշխանութեան մէջ, այդ իշխանութիւնը գործադրում է իր մարմնական և աշխարհային պէտքերին, իր բարեկեցութեանը։ Այսօր այդ դասակարգը իր գոյութիւնը պահպանելու համար՝ հետ-

զհետէ աշխարհականանում, գիտնականանում է իր շահի, իր օգտի համար։ Գիտութեան նոր վերածնուած ժամանակ այսպէս հաշտ չէր նրա հետ, այլ սաստիկ թշնամի։ Կրօնական դասակարգը որքան կարողացաւ, հալածեց և՛ գիտութիւնը, և՛ գիտնականներին, բայց վերջ ի վերջոյ խոստովանեց, որ մարդու հանճարն ևս Աստուած է տուել, որ նա կարողանայ իր կեանքն ապահովել աշխարհիս երեսին։ Եւ այս կողմանէ առաջին օրինակն ինքն է տալիս, չարաչար պաշտպանելով իր դասակարգային շահերը։

Մարդու հաւատալը չի գալիս, որ միևնոյն ազգի մէջ այս ու այն դասակարգը կարող է իր օգուտը վեր դասել ընդհանուր ազգի օգուտից. բայց այս բանն աշկարա է, և մենք ամեն օր տեսնում ենք մեր աչքովը։ Շատ վրդովեցուցիչ բան է մանաւանդ, երբ այդ դասակարգից վատերը աստուածային, կրօնական և հոգևոր կոչում է կրում իր վրայ։ Սա է, որ յեղաշրջում է Աստուծոյ խօսքը և նրան, փոխանակ կեանքի աղբիւր շինելու, թշուառութեան ու մահուան աղբիւր է շինում, շարունակ հարստահարելով ժողովրդի հաւատը։ Այս հանգամանքը շօշափելի կացուցանելու համար, մենք դեռ պիտի իմանանք, թէ որտեղ է թաքկացած ժողովրդի թշուառութեան և երջանկութեան աղբիւրը։

Երևակայեցէք ձեզ մի համայնք, որ իր գիւղամիջումն ունի մի մեծ ծառ։ Այդ ծառը ոչ ոքի սեփականութիւնը չէ, այլ ամբողջ համայնքին է պատկանում։ Ամեն մի ծերունի յիշում է, որ ինքը դեռ մի մանուկ էր, որ այդ ծառը գոյութիւն ունէր նոյն հսկայական մեծութիւնովը, նոյն բազմաճիւղ ոստերովը և նոյն լայնատարած սաւերովը։ Նրա հովանու տակ հաւաքւում են ծերունիները և համայնքի առօրեայ և ընդհանուր հոգսերի մասին են խորհում։ հաւաքւում են երիտասարդները և իրանց կատարած թարմ սխրագործութիւններն են պատմում միմեանց. հաւաքւում են մանուկները, և իրանց մանկական խաղերն են խաղում։ Լուսաբացին սարեակներն ու ծիծեռնակներն են ճուռղում նրա սաղարթախիտ ճղների վրայ, իսկ գիշերները սոխակն է իջնում և սկսում իր աքանչելի դայլայլիկը։

Արդեօք ինչ կը լինի այդ դարաւոր ծառը նոյն հասարակութեան համար, որքան սիրելի և պաշտելի։ Ո՞ւմ ձեռք կը զօրէ որ և իցէ վէրք հասցնել նրա կեղևին։ Ոչ ոքի։ Նա սուրբ է և ան-

ձեռնմխելի։ Երբ հեռաւոր գիւղերից օտար մարդիկ են գալիս և ամառուայ շոքին նստում նոյն ծառի հովանու տակ, նրանք աւելի են սքանչանում և երանի են տալիս նոյն համայնքին, որ այսպիսի մի հսկայական ծառ ունին իրանց հովանաւորող։ Կը գայ ժամանակ, որ այդ ծառը կընկնի, բայց նրա հովանաւորութիւնը ոչ ոքի մըտքից չի ընկնիլ. մարդը մարդուն կասէ. «ինձ քո հովանաւորութեան տակն առ». «փուշը որ փուշ է, կասէ, ճնճղուկին հովանաւորում է»։ Այս հովանաւորութիւնը կը շարունակուի սերնդէ սերունդ։

Ոչ թէ այս ծառի չափ, այլ շատ աւելի սիրելի է ամեն մէկի համար իր ծննդարանը, նրա խոր-խոր ձորերովը, մութ անտառներովը, ծաղկաշատ լեռներովը, ականակիտ ու վճիտ աղբիւրներովը ու վտակներովը։ Ապա իր ուխտատեղիքը, որ այցելում է ամեն տարի և միշտ էլ անհամբեր սպասում է, թէ երբ կը գայ տօնի օրը, որ տեսակցի իր հեռաբնակ բարեկամների հետ և ուրախ ու զարթ ժամանակ անց կացնէ։ Ապա իր եկեղեցին, ուր նա մկրտուել է։ Ապա իր սիրելիների շիրիմները, որոնց հետ թաղուած է իր սրտից մէկ մէկ կտոր։ Ո՛չ, մարդը սիրտ ունի, հոգի ունի, նա մի բիւրեղացած խելք չէ, և ոչ էլ ճարպապատ, անարիւն և անզգայ մի մարմին, մի մարդակերպ խոզ։

Թողնենք մարդու այս բանաստեղծական կողմը և դառնանք նրա նիւթական կողմին։ Բայց որ չկարծէք, թէ մարդու հոգեկան աշխարհն ուրիշ օրէնքի տակ է գտնուում և մարմնականն ուրիշ, պէտք է յիշեցնեմ ձեզ, որ տիեզերքի մէջ ջոկ ջոկ օրէնքներ չկան։ Միևնոյն օրէնքն է տիրողը թէ հոգու և թէ մարմնի վրայ։ «Մարդը սիրում է ինքն իրան և այն ամենը, ինչ որ իրանն է համարում»։ Այս է ահա օրէնքը։ Ցիշեալ ծառը եթէ մի մասնաւոր անձի սեփականութիւն լինէր, նախ և առաջ նա չէր դառնալ ընդհանուրի համար ժողովատեղ և զբօսարան։ Տէրը թոյլ չէր տալ։ Իսկ եթէ նա տնկած լինէր մի ուրիշ տեղ, տիրոջ աչքիցը հեռու, ով ասես իր կացնի ուժը նրա վրայ կը փորձէր, նրան կը կեղևէին և կը չորացնէին։ Մարդն իր ծննդարանն է սիրում, և ոչ ուրիշինը. իր սիրելիների վրայ է ողբում այնպէս աղեկոտուր և յուսահատ, և ոչ ուրիշի։ Մարդն իր եկեղեցին է սիրում, և ոչ մի օտար հաւատի աղօթարան, որ մի յաջող դէպքում պատրաստ է նաև քանդելու։ Շատ

Բաներ կան որ մարդ պէտք է իրանը համարէր և սիրէր ու պաշտպանէր, բայց որ չի անում, այդ կախուած է նրա ճանաչողութեան աստիճանից։ Նա այդ բաներն էլ կը սիրէ և կը պաշտպանէ, երբ որ կը համոզուի որ իրանն է։ Նա հասկանում է, որ ուրիշին օգնելը մի բարոյական պարտք է, բայց չի հասկանում, որ այդ բարոյական պարտքը կատարելուց մարդիկ նիւթապէս կը շահուին։ Քանի որ այդ շահը նրա համար տեսանելի չէ, նա չի էլ օգնում։

Սրա համար մի օրինակ բերենք նիւթական աշխարհից։ Մի գիւղի մէջ ամենքն էլ ունին իրանց ջոկ ջոկ հողաբաժինը, արտը, այգին և արօտատեղը։ Կայ և մի այլ արօտատեղ, աւելի մեծ, որ մասնաւորի սեփականութիւն չէ, այլ պատկանում է ամբողջ համայնքին։ Եւ ահա հարևան գիւղից մի քուրդ, իր հօտն առաջն արած, հրացանն ուսին, իր հովիւներով և բարդ ու բարխանայով անցնում է այդ տեղով դէպի իր լեռները։ Նա հանդիպում է մասնաւոր արօտատեղին և առանց այլ և այլութեան, իր հօտն անում է նրա մէջը, որ մի լաւ կշտացնէ։ Արօտատէրը տեսնում է այդ բանը, հարայ է տալիս, ոչ ոք չի գնում նրան օգնելու, ինքն էլ մենակ վախում է գնալ։ Ո՞վ է գժուել իր անցաւ գլուխը ցաւի մէջ գցել, ինչու համար, քանի որ իրան մի ֆլաս չի հասնում։ Տէրը ստիպուում է անճարացած, իսկ քուրդը վայելում է ուրիշի սեփականութիւնը։ Նոյն քուրդից յետոյ գալիս է մի ուրիշ քուրդ, աւելի բազմաթիւ հօտերով և հովիւներով, աւելի ահեղ զինաւորուած, բացի հրացանից ունի նաև վահան ու նիզակ և մէկ մէկ կէս թուր էլ կողքերից քաշ արած։ Սրանք իրանց հօտերն անում են համայնքի արօտատեղը։ Ցանկարծ գիւղի ամեն անկիւնից հարայ—հրոց է բարձրանում և մի ակնթարթի մէջ ամբողջ գիւղը տեղիցը գչլուած՝ վազում է պաշտպանելու իր սեփականութիւնը։ Ասել պէտք է արդեօք, թէ ինչ սև օր կը սպասեցնէին քրդի գլխին։ Սուտ հօ չէ ասած, թէ «համայնքը որ հաւաքուի, դերան կը կոտրի»։ Կիսաշունչ եղած քուրդը խոստովանում է, որ ինքը սխալուել է, չի իմացել, որ արօտատեղը ամբողջ համայնքին է պատկանում։

Այս դէպքից պարզապէս երևում է, որ մի անհատ թոյլ և անզօր լինելով իր առանձին սեփականութիւնը պաշտպանելում, շատ զօրեղ կարող է լինել ընդհանուր սեփականութեան պաշտպանելում։

որովհետև այստեղ նա մենակ չէ, այլ ընդհանուրի հետ, որից կազմուում է մի հաւաքական խոշոր ուժ։ Բայց աւելի հետաքրքրական է քրդի խոստովանութիւնը, թէ նա չի իմացել, որ արօտատեղը ամբողջ հասարակութեան է պատկանում։ Այս ի՞նչ է նշանակում։ Ուրեմն մասնաւոր մարդունը կարելի՞ է ուաեցնել։ Այո՛, և այդ բանը ոչ ոքի զարմանքը չի յարուցանիլ, դա մի ընդունած և սովորական բան է։ Քրդի ասածի մէջ ուժի կշռելու խնդիր կայ. նա խոստովանում է միայն իր հաշուի սխալը, և ոչ թէ գործողութեան։ Երբ աւազակը մտադրուում է յարձակում գործել, նա պարտաւոր է նախ և առաջ իր ուժը կշռել հակառակորդի ուժի հետ։ Այլ է հինգ մարդու և տասը մարդու հետ գործ ունեալ կրկնապատիկ ուժով, և այլ, երբ քո ուժը հինգ է, իսկ հակառակորդինդ մի քանի հարիւր։ Ով ասես, նրան կը մեղադրէ, նրան կը յանդիմանէ, ասելով՝ դու քանի՞ գլուխ ունէիր, որ մի ամբողջ հասարակութիւն քո դէմ բարձրացրիր։ Այսպէս է օրէնքը. յարձակողը միշտ պիտի աշխատի իրանից թոյլի վրայ յարձակուել, եթէ ոչ՝ առակի ագռաւի նման ոչխարի բրդումը կը խճճուի։ Թոյլը շարունակ յարձակման ենթակայ է, ամեն ոք իր ուժը թոյլի վրայ է փորձում, ով ասես՝ նրա գլխին է խփում։ Նոյն իսկ գիւղի տանուտէրը և նրա գլիրը զօրեղներից հեռու են փախչում և իրանց ուժերը թոյլերի վրայ են գործ դնում։ Ամեն տեղ զրկողը թոյլերն են լինում։ Ասած է։« Ցախը ցաւագար տեղին կը դիպչի»։ Կամ թէ «գողը եկաւ, վայ մէկի տէր, գայլը եկաւ, վայ մէկի տէր»։ Եւ ճշմարիտ, գողութիւն, բռնաբարութիւն, հարստահարութիւն և ամենայն տեսակ զրկանք թոյլի վրայ է թափուում։

Այդ դէպքի նման հազարաւոր դէպքեր կարելի է բերել ապացուցանելու համար, որ ընդհանուրի ուժը մէկ տեղ հաւաքողը ընդհանուրի շահն է, իսկ ընդհանուրի շահը ընդհանուր սեփականութեան մէջ է գտնուում։ Մէկ ուրիշ օրինակ էլ բերեմ, որ ընդհանուր սեփականութեան օգուտն աւելի պարզւի։

Միևնոյն գաւառում, միևնոյն ճանապարհի վրայ բնակչութեան միևնոյն թիւով, միևնոյն կլիմայական և վարչական պայմանների տակ գտնուում էին երեք գիւղ։ Առաջին գիւղում փորձառու և բանիմաց մարդիկ կային, ունէին և մի խելքը գլխին և ժիր քահանայ։ Սրանք

յորդորեցին ժողովրդին և համախօսական վճռով վճռեցին, որ ունենան մի կարգին ուսուցիչ երկու սեռի համար և մի դեղատուն։ Ուրեմն ուսուցիչ, ուսուցչուհի, բժիշկ, բժշկի օգնական և մանկաբարձուհի։ Բայց գիւղն աղքատ էր, ուրեղից պէտք է վճարէին դրանց ծախքը։ Առաջ պէտք էր եկամուտի մասին հոգալ։ Եկամուտ ձեռք բերելու համար վճռեցին, որ ամենայն ինչ որ պէտք է հասարակութեանը, բայց հնարաւոր չէ որ ամենքն էլ ունենան, այդ տեսակ բաները լինեն հասարակութեան սեփականութիւն։ Եւ ինչ անբաժան բան որ ունի հասարակութիւնը նրանց եկամուտն էլ որոշուի գործ դնել հասարակաց կրթութեան և առողջութեան վրայ։ Այս տեսակ բաները երբ սկսեցին ցուցակագրել, ստացան հետևեալ առարկաները. երեք ջրաղաց, որ յետոյ միացնելով շինեցին մի մեծը և մէն էլ մի մեծ այգի, մի բաւական մեծ անտառ, մի արօտատեղ, մի ձկնորսարան, մի շտեմարան, մի կշեռք կամ ինչպէս ասում են՝ զանթար, մի արաղի գաւօդ, թէև մասնաւոր մարդու անունով, մի քանի խանութ և մի քանի վարձու տալու տներ և եկեղեցու տարեկան եկամուտը։ Այս ընդհանուր սեփականութիւնից այնքան եկամուտ գոյացաւ որ ոչ միայն մոռաղուած ուսուցիչարանն ու դեղատունը հիմնեցին օրինաւոր սարք ու կարգով, այլ գիւղի տարեկան հարկն էլ վճարեցին և շինական դատարանի ծախքն էլ հոգացին։

Կրթուած ուսուցչի ու բժշկի ներս գալը գիւղին մի նոր զարկ տուաւ իր ընդհանուր սեփականութիւնը ճոխացնելու։ Գիւղը նորանոր հողեր գնեց շրջակայ բեգերից. նոր առու հանեց ու ջրարբի դարձրեց շատ անջրդի տեղեր, մօտ եօթը վերստ հեռաւորութիւնից մի սառնորակ և վարար աղբիւր բերաւ գիւղամէջ, ուր մի ջրամբար շինելով՝ բաժանեց զանազան թաղերի վրայ։ Այս ջրից օգուտ քաղելով, ամենքն էլ իրանց տների առջև մի մի պարտէզ տնկեցին և գեղը վերափոխեցին մի հոտաւէտ բուրաստանի։ Գիւղի այս բոլոր բարեփոխութիւնը մի տասը տարուայ մէջ կատարուեց, նախնթաց տասնեակ տարիներում նա մի ընդարմացած և անշարժ վիճակի մէջ էր։ Օտար մարդը ներս մտնելիս հիանում էր, տեսնելով մաքուր, ուղիղ և լայն փողոցներ, բոլորն էլ խիճած, ափերը սալայատակ, երկու կողմից ծառեր տնկուած, տները շէնք ու

շնորհքով, փառաւոր եկեղեցի, հոյակապ ուսումնարան, գեղեցիկ դեղատուն, կարգին շինական դատարան, օրինաւոր շտեմարան։ Տեսնողն այն տպաւորութիւնն էր ստանում, որ այս գիւղացիք հասարակ ասիայի ռամիկներ չեն, այլ Եւրոպական քաղաքակրթութեան ճաշակն առած խելքը գլխին մարդիկ։ Տասը տարուց յետոյ քսան տարեկանների մէջ ոչ մէկը չկար որ անգրագէտ լինէր։ Շուտով զգացին փոստատուն և հեռագրատուն ունենալու պահանջը, որովհետև հիմա ամենքն էլ նամակ էին գրում, լրագիր էին ստանում։ Տեղական վարչութիւնը՝ գաւառապետ և նահանգապետ՝ այնքան հաւանեցին այս գիւղացիներին, որ բոլոր գիւղերում յորդորում էին նրանց օրինակին հետևել։ Սրանց խնդիրն անկատար չէր կարելի թողնել, ուին և փոստատուն և հեռագրատուն, պրիստաւին էլ տեղափոխեցին այնտեղ։ Գիւղն արդէն առաջուց հոգացել էր որ բոլոր պաշտօնատները և պաշտօնեաները մասնաւոր տներ չվարձեն, այլ գիւղի սեփական տներում բնակին ու վարձը գիւղին վճարեն։ Հարկ չկայ ասելու որ այս գիւղումը աչքի ընկնող աղքատներ և չքաւորներ չկային, կարօտեալները միշտ օգնութիւն էին ստանում հասարակական դրամարկղից՝ որը իբրև օգնութիւն, որը անտոկոս, և որը թեթև տոկոսով, նայած նրանց չքաւորութեան աստիճանին։ Իսկ անգործ մնալն արգելած էր. ամեն ոք պէտք է իր գործին երթար, իր հողի մշակութիւնովը պարապէր։

Հասարակութեան առաջադիմութեան ճանապարհը հարթուած էր, նա առաջ էր գնում առանց խոչ ու խութի հանդիպելու։ Երբ մի ճանապարհ այնպէս հարթուած լինի, որ ոչ դար ու փոս ունենայ, ոչ ցեխ, ոչ զառիվեր ու զառիվայր, այնտեղ մի ձիով էլ կարելի է շատ գործ տեսնել, էլ գոմեշներ լծելու հարկ չի լինիլ։ Համայնքի բարոյական և նիւթական առաջադիմութիւնը նրա ուղիղ մտածելուցն է կախուած։ Առածն ասում է «Եթէ մեղու ունենամ, մեղրս Մեղրիից կը գայ»։ Հասարակութիւնն սկսեց ոչ միայն մեղու ունենալ և մեղուաբուծութիւն, այլև շերամապահութիւն, կաթնատնտեսութիւն, գինեգործութիւն և առհասարակ օրինաւոր հողագործութիւն և գիւղական անտեսութիւն, բոլորն էլ ընկերական և խմբական ուժերով, որոնց մասնակցում էր ամբողջ գիւղը։ Մասնաւոր դրամատէրն այդ տեղ նուաճում մեր անելու ասպարէզ չունէր։

Պրիստաւի գալուց յետոյ՝ այդտեղ տեղափոխուեց և հաշտարար դատարանը։ Գիւղը նրան էլ տուաւ հարկաւոր շինութիւնները։ Դրանից երկու տարի անցնելուց յետոյ՝ գիւղը կատարեց ուսումնարանի քսանամեակի տօնախմբութիւնը փառաւոր ինչոյքով, ուր հրաւիրուած էին և քաղաքից ու հեռաւոր գիւղերից պատուաւոր հիւրեր։ Այդտեղ ճառախօսութիւններ շատ եղան մէկը միւսից ազդու։ Հաշտարար դատաւորն իր ճառի մէջ ասաց։ Ահա երկու տարի է, որ ես տեղափոխուել եմ այստեղ. այս գիւղի ոչ մի անդամից ոչ մի գանգատ չի մտել իմ դատարանը։ Այս ինչ է նշանակում, մտածում էի ես, գուցէ սրանք խօսք մէկ են արել, որ ինձ չդիմեն, գուցէ պրիստաւին են դիմում կամ շինական դատարանին և նրանցով էլ վերջ են տալիս իրանց վէճերին։ Սկսեցի հարց ու փորձ անել, տեսայ որ այդպէս բան չկայ։ Ձեզ յայտնի է, որ ներկայից միշտ ծերունիներն են լինում գժգոհ, միշտ նրանք են գանգատւում, որ անցեալը լաւ էր, քան թէ ներկան։ Բայց տեսէք ինչ ասաց ինձ մի ծերունի։ —Պարոն, ասաց, ներեցէք համարձակութեանս, ձեր հետաքրքրութեանը բաւականութիւն տալու համար ես պէտք է ասեմ, որ այժմ մեր գիւղումը Աստուծոյ ողորմութեամբ «մեռոն կ'եփւի»։ Մենք ոչ մի խոշոր վէճի առիթ չունինք, իսկ մանր վէճերն ու թիւրիմացութիւնները մենք ինքներս ենք վերջացնում մեր մէջ։ Մեր գիւղը հիմա, փառք Աստուծոյ, շատ լաւ է, կլսին էլ չենք արժանի։ Հիմայ մեր քահանան ամբողջ ժողովրդին մի անդամից է թողութիւն տալիս հաղորդելու ժամանակ, գիտէ, որ ոչ ոք առանձին և ծածուկ բան չունի. այդպէսներ եթէ լինին, իր հետ կը տեսնին առանձին։ Աստուծոյ ողորմութիւնն ու հովանաւորութիւնը այժմ մեր տեղի վրայ է։

Աչքի ընկաւ մանաւանդ տանուտէրի վիճակագրութիւնը քսան տարւայ ընթացքում՝ թէ որպիսի աճելութիւն է եղել, որպիսի փոփոխութիւն և որպիսի զարգացում տնտեսական այս և այն ճիւղի մէջ։ Այս վիճակագրութիւնից երևաց, որ այստեղ բարեկեցիկ ապրելու կատարեալ գիտակցութիւն կայ. մարդիկը գիտակցաբար են ապրում և առաջ գնում և ոչ կուրօրէն։ Ի միջի այլոց նա ցոյց տուաւ, որ գիւղը քսան տարի առաջ միջին թւով ունեցել է իւրաքանչիւր տասը հոգու համար մէկ տուն, իսկ այժմ իւրաքանչիւր

երեք հոգուն մի տուն է ընկնում։ Առաջ ունեցել է 150 տուն և 1500 հոգի, իսկ այժմ՝ որդին պատկերեց թէ չէ՝ պէտք է բաժանուի հօրից և իր գլխի հոգուն ինքը քաշէ, սկզբնական օգնութիւն ստանալով հօրից։ Առաջ մի տան մէջ եղած քսան հոգուց հազիւ տասն էին աշխատում, կամ տասը հոգով հազիւ երկու մարդու գործ էին կատարում, իսկ այժմ անգործ ձեռք չկայ, ամենքն էլ զբաղուած են։ Առաջուան ապրուստը նահապետական և բռնապետական էր, իսկ այժմ անհատական, ընկերական և համայնական։ Այժմ եղբայրը եղբօր ընկերն է, միասին աշխատում են, ջոկ ջոկ ապրում, ամեն մէկն իր ճաշակի համեմատ և ինքնագլուխ։ Այժմ մեր տների մէջ չկայ այլ ևս պատրոնութիւն և սկեսրութիւն, չկայ տագրակնկութիւն, որ շարունակ կռիւ էր առաջ բերում. այլ ևս չկայ չխոսկանութիւն, բերանկապութիւն։ Մեր օրիորդաց ուսումնարանը կին սեռի բերանը բաց արաւ, նրա լեզուն ճարտարացրեց, նրան շինեց իր ամուսնու մտերիմ խորհրդակիցը և ընկերուհին։ Նոր գինին հին տկի մէջ չէր կարող կենալ, մեր հին տկերը բոլորն էլ պատռեցին, այժմ մենք մեր գինիքը երկաթակապ տակառների մէջ ենք պահում, իսկ տակառագործութիւնն էլ՝ հիւսնութեան հետ մեր ուսումնարանն է սովորեցնում իր արհեստական բաժնում։

Տանուտէրի այս ճառը ծափահարութեան ահագին դղրդոց բարձրացրեց։ Հիւրերից մէկը, որ գերմանացի անասնաբոյժ էր, մնացել էր հիացած և երևակայում էր, թէ նոյն բոպէին Սոֆիայի խորքերումը չի գտնուում այլ Բեռլինի բուն կենտրոնումը։ «Ձեր Հայերը ծայրայեղ ընդունակ են։ ՀՀնջաց նա գիւղի հայ բժշկի ականջումը։ Էլ չեմ ուզում երկարացնել՝ ինքներդ մտէք միւս մանրամասնութիւնների մէջ և լրացրէք իմ պակաս թողածը։

—Ցարդելի եղբայրներ և քոյրեր, այստեղ ակամայ պատկերանում է իմ առջև կեանքի աճելութեան և զարգացման ներդաշնակութեան օրէնքը։ Այո, կայ և ներդաշնակութեան օրէնք։ Ամեն մի կազմակերպութեան մի մասից կարելի է գուշակել և միւս մասերի որպիսութիւնը, ի հարկէ մօտաւորապէս, քանի որ չկայ օրէնք առանց բացառութեան, այսինքն ընդհանուր կանոնից շեղումներ պատահում են—և ասում են անկանոնութիւն։ Այս ներդաշնակութեան օրէնքի ճիշտ պատկերը մենք տեսնում ենք ուղղի

կազմակերպութեան մէջ։ Առաջ կայ թէ՝ «Ուղտին ասացին, վիզը դ ինչի է ծուռ, ասեց. ինչս է ուղիղ, որ վիզս ուղիղ լինի»։ Ուղտի կազմակերպութեան բոլոր մասերի մէջ կատարեալ ներդաշնակութիւն կայ, որովհետև ոչ մէկն էլ ուղիղ չէ։ Այս, ի հարկէ, մի տգեղ և վայրենի ներդաշնակութիւն է, բայց ներդաշնակութիւն է։ Եթէ մի գիւղ էք մտնում և տեսնում էք ձախ ու ծուռ և անկանոն փողոցներ, իմացած եղէք, որ դա ուղտի վիզն է միայն, և եթէ հարցնէք, թէ ձեր փողոցներն ինչու են այսպէս ձախ ու ծուռ, նրանք ձեզ կը պատասխանեն, թէ «Օրհնեալ, մեր ինչն է ուղիղ, որ փողոցներս ուղիղ լինի. խեղճ, մարդիկ ենք, մի կերպ եօլա ենք գնում։ Ահա այսպիսի գիւղեր էին միւս երկու գիւղերը, որոնք առաջին գիւղի հետ մի գծի վրայ էին գտնւում։ Դրանցից մէկը մասնաւոր սեփականութիւն ունէր, բայց ոչ ընդհանուր, իսկ միւսը՝ ոչ մասնաւոր ունէր և ոչ ընդհանուր։ Բոլոր հողերը պատկանում էին զանազան բէգերի, իսկ իրանք գիւղացիք ենթարկւած էին բէգերի քմահաճոյքին և մի տեսակ ստրկական վիճակի մէջ էին։ Ոչ մի բան չկար ոչ մէկում և ոչ միւսում, որ ասէիր՝ ահա այս մէկ բանը լաւ է։ Եկեղեցին գոմանման և խարխուլ, քահանան՝ տգէտ, դատաւորներն ու տանուտէրը՝ հարբեցող և կաշառակեր, գրագիրը՝ մի սրիկայ և շատ փուչ-կենդանի, վաշխառութիւնը՝ ծայրայեղ անխղճութեան հասած, որբն ու այրին, խեղճն ու տնանկը, աղքատն ու թոյլը հողի հետ հաւասարացրած. ամենայն տեղ ծայրայեղ ստրկութիւն և բռնութիւն։ Գողութիւնը սովորական դարձած, աւազակութիւնը հերոսութիւն համարւած։ Եւ ինչ նորանոր չարիքներ ասես, որ չէին հնարում մարդիկ միմեանց տուն քանդելու համար։ Խոտի ու ցորենի դէզեր կրակ տալ, այգիներ կտրատել, եզան ու գոմէշի ոտքեր սրատել, կովի ծիծ կտրել, և ինչեր, ինչեր ասես, որ այստեղ չէր կատարւում մինը միւսից չար։

Առաջին գիւղի և այս գիւղերի օրինակից պարզ երևում է, որ ժողովրդի բարոյական վիճակը նրա տնտեսական վիճակից կախում ունի, իսկ տնտեսական բարեկեցութիւնը նրա համայնական սեփականութիւնից։ Մի հասարակութեան մէջ որքան շատ ու բազմատեսակ լինին ընդհանուրին պատկանող սեփականութիւններն ու հաստատութիւնները, նոյն չափով բարձր կը լինի նրա բարօրու-

թեան աստիճանը և նոյն չափով սակաւ չարիք կը գործուի նրա մէջ։ Կարճ ասել՝ համայնքի բարեկեցութեան և երջանկութեան աղբիւրը նրա ընդհանուր սեփականութիւնից կարող է բղխել։

Պիտի ասէք՝ եթէ այդպէս է, ապա ուրեմն մասնաւոր սեփականութիւն որ բնաւ չլինի, այլ միայն ընդհանուր, այն ժամանակ չարութիւնն իսպառ կը վերանայ աշխարհիցս և միայն բարին կը թագաւորէ։—Այո՛, բայց երբ կը լինի այդ և ինչպէս։ Մանուկը շատ է ցանկանում, որ բեխեր ունենայ, բայց նա դեռ պիտի մեծանայ, հասունանայ, այնուհետև ոչ միայն բեխեր կունենայ այլ և մօրուք, և այդ մօրուքն էլ կը սկսի սպիտակել, որ շատ էլ չի դուր գալ իրան։ Մեր բարեկեցութիւնն էլ դեռ ևս մանուկ հասակի մէջ լինելով, պիտի աստիճանաբար զարգանայ, առանց թռիչքներ գործելու։ Ի հարկէ, դուրս կը գան աւելի զօրեղ հանճարներ, որոնք թռչելու հնարն ևս կը գտնեն, բայց առ այժմ միայն արագացնել կարող են համայնքների ձգտումը դէպի այդ երջանիկ ապագան, դէպի Աւետարանի նախագծած բարեկեցութիւնը։

—Ցարդելի եղբայրներ և քոյրեր, զարգացման արագանալը մեր ինքնաճանաչութեան արագանալն է։ Որքան լաւ ճանաչենք մենք մեզ և մեր ունեցածը, այնքան կը բարձրանայ մեր զարգացումը։ Մի թէ մենք չունենք բնական և ընդհանուր սեփականութիւններ, որոնցից կարող կը լինէինք ահագին օգուտ քաղել։ Ահա այս սուրբ տաճարը, ուր հաւաքուած էք դուք ամենքդ, թէ մեծ և թէ փոքր, թէ տէր և թէ ծառայ, թէ այր և թէ կին,—ինչ է այս, եթէ ոչ այնպիսի հաստատութիւն, մի այնպիսի սեփականութիւն, որ ըստ ամենայնի Աւետարանի արքայութեանն է նման, որովհետև այստեղ ամենքս էլ հաւասար ենք, և ամենքս էլ եղբայր։ Այն հողը, որի վրայ շինուած է եկեղեցին, մի փոքրիկ կտորն է այն երկրի, որ ասում է հայրենիք, և նոյնպէս մեր ամենիս սեփականութիւնն է։ Այն լեզուն, որով մենք այսօր խօսում ենք միմեանց հետ, մեր ընդհանուրիս սեփականութիւնն է։ Ահա ձեզ երկք մե՛ծ, ահաւոր և զօրաւոր ընդհանուր սեփականութիւն, որոնցից կարող ենք և ահագին օգուտ քաղել, եթէ լաւ վերահաս լինինք դրանց էութեանը և որակութեանը։

Մասնաւոր սեփականութեան համար մենք կարող ենք իրար

դէմ կուռել, մինչև կը գայ Արդարութիւնը և մեզ կը հաշտեցնէ. բայց ընդհանուր սեփականութեան պահպանելը, խնամելը, զօրացնելը ընդհանուրիս օգուտն է։ Սրանից չեն փախչիլ ոչ հարուստը և ոչ աղքատը, ոչ մեծը և ոչ փոքրը։ Ով կուզենայ իր նախնեաց ժառանգական յատկութիւններից զուրկ մի ապուշ լինել, չունենալ ոչ կրօն, ոչ լեզու և ոչ ծննդարան։ Կրօնից ծնունդ է առնում եկեղեցին, որ ունենում է իր համայնական հաստատութիւնները,— դպրանոց, հիւանդանոց, աղքատանոց և զանազան բարեգործական և կրթական հաստատութիւններ։ Լեզուից ծնունդ է առնում գիրն ու գրականութիւնը, որ նոյնպէս դառնում է ընդհանուրի սեփականութիւն։ Ծնունդ են առնում պարբերական հրատարակութիւններ, որոնք ծառայում են հասարակութեան և ազգի ընդհանուր շահերին, առաջնորդում են դէպի լաւը, դէպի կատարեալը։ Արդ՝ եթէ մենք գիտակցաբար վերաբերուենք դէպի մեր կրօնն ու լեզուն, կարելի՞ բան է, որ մեր եկեղեցին պայծառ չլինի, չունենայ արդիւնաբեր հաստատութիւններ, չունենայ իրանց պաշտօնին յարմարաւոր սպասաւորներ։ Կարելի՞ բան է, որ գրականութիւնը խեղճութիւն քաշէ, գրողի կեցութիւնն ապահովուած չլինի։ Ամեն ոք, ինչ որ անում է, ապրելու համար է անում, թէկուզ ուրիշին ապրեցնելու համար լինի անելիս։ Երբ գրողն իր գրչից ապրուստ չի գտնում, նա մի այլ պաշտօնի է դիմում։ Լաւ վարձատրութիւնը լաւ մշակների թիւը կը շատացնէ, իսկ անվարձ մշակութիւնից վատ մշակներն էլ կը փախչեն։ Ոչ մի ասպարէզ կեանքի մէջ այնքան փշոտ չէ, որքան գրական ասպարէզը գրական կոչում ունեցողի համար։ Այդ ասպարէզում կուռողը կուռում է իր նեարդերովը, իր ուղեղովը, որի հետ կատակ անել չի լինում։ Հարկաւոր է խնամք, հոգատարութիւն, թարմութիւն, նոր ուժ մտաւոր կռիւը շարունակելու համար։

Եկեղեցի, դպրոց, գրականութիւն, թատրոն և զանազան բարեգործական հաստատութիւններ՝ ընդհանուր սեփականութիւն լինելով՝ ընդհանուր էլ օժանդակութիւն են պահանջում։ Ընդհանուր օժանդակութիւն պահանջող հաստատութիւնները պէտք է նիւթական արդիւնք բերող ընդհանուր էլ հաստատութիւններ ունենան։

Լեզուից և կրօնից յետոյ գալիս է ծննդարանը որ ընդհանուր հայ-

բենիքի մի կտորն է։ Այստեղ է երևում ահա ամեն մի ազգի առանձնայատկութիւնը, նրա մտաւոր և բարոյական զարգացման աստիճանը։ Որովհետև ծննդարանը կարող է լինել ոչ թէ մի ազգի և մի կրօնի ընդհանուր սեփականութիւն, այլ շատ ազգերի և շատ կրօնների, այս պատճառով ծննդարանի բովանդակութիւնը սիրելու համար ազգասիրութիւնը մենակ բաւական չէ, հարկաւոր է որ մարդ մի քանի աստիճան աւելի վեր բարձրանայ բարոյապէս և մտաւորապէս և դառնայ ոչ միայն ազգասէր, այլ և մարդասէր և այլասէր։

Ինքնասէրն ուրիշին չի սիրում, այլ ատում է. նա ուզում է, որ ամենքն էլ իրան սիրեն, իսկ ինքը՝ ոչ ոքի։ Նա միայն իրաւունք է ուզում ունենալ, իսկ պարտաւորութիւն՝ և ոչ մի։ Ազգասէրն էլ սիրում է միայն իր ազգին, իսկ միւս ազգերին ոչ միայն չի սիրում, այլ և ատում է և հալածում։ Ազգասէրը չի ուզում, որ ուրիշ ազգերն էլ լինին ազգասէր, այլ պահանջում է, որ ուրիշները լինին մարդասէր, որ չատեն իրան, այլ սիրեն։ Խօսքս մասնաւորացնելով՝ պէտք է ասեմ, որ մենք չենք սիրում Բիսմարկներին, որովհետև նրանցում չենք գտնում մարդասիրութիւն, որից կարող էինք ինքներս էլ շահուել, մինչդեռ նրանց ազգասիրութիւնից միայն վնասւում ենք։ Բայց Գլադստոնին մենք սիրում ենք և անուանում ենք մե՛ծ մարդասէր, մոռանալով՝ որ նա միևնոյն ժամանակ և մե՛ծ ազգասէր է, որովհետև նրա պէս մարդիկն են իրանց ազգի անունն ու պատիւը մինչև երկինք բարձրացնում։

Ցաւոնի է, որ հրէաները շատ ազգասէր են, բայց ինձ ցաւոնի չէ, թէ նրանք որքան մարդասէր են։ Եթէ դրանք միւս ազգերից միայն շահւում են, իսկ իրանք ոչ մի շահ չեն տալիս նրանց, ապա արժանի չեն ապրելու ոչ մի տեղ։ Եթէ նրանց որդիքը կրթւում են բոլոր համալսարաններում, բայց այդ համալսարաններից ոչ մէկը մի նշանաւոր զոհաբերութիւն չի ստանում նրանց Ռոտշիլդներից, ապա արժան էր, որ այդ համալսարանների դռները փակէին հրէաների առջև, որովհետև որքան շատ զարգանան նրանք, այնքան շատ կը կողոպտեն միւս ազգերին։ Եթէ դրանք այն քաղաքներում, ուր որ ապրում են և ահագին հարստութիւն դիզում, չեն հիմնում ընդհանուր բարեգործական հաստատութիւններ բոլոր քաղաքացոց համար անխտիր, արժանի չեն դրանք այդ քաղաքներում բնակւելու։ Իսկ

եթէ կատարում են իրանց մարդասիրական պարտականութիւնները, իբրև քաղաքացի, բայց դարձեալ հալածւում են, այդ ժամանակ մեղաւոր են միայն հալածողները և ամենայն դատապարտութեան արժանի։

Մարդասէր լինել՝ չի նշանակիլ սիրել նաև մարդատեացներին, բռնաւորներին, կեղեքիչներին, գիշատիչներին և աւազակներին։ Այդպէս որ լինէր, Գլադստոնը Թուրքերի մեծին չէր անուանիլ մե՛ծ մարդասպան։ Եթէ մի որ և է մարդկային ցեղ ինքնակար է հանդիսանում ընդհանուր խաղաղ մարդկութեանը իր գիշատիչ բնաւորութիւնովը կամ մի այլ ինքնակար յատկութիւնովը, մարդասիրութիւնը պահանջում է, որ նա ջնջուի իբրև մի ինքնակար տարր, իբրև մի ցեց և թունաւոր միջատ։ Բնութեան մէջ չկայ և ոչ մի միջատ որ թունդ ազգասէր չլինի։

Աշխարհիս երեսին ոչ մի ազգ չկայ, որ յոյն ազգի չափ ազգասէր լինի։ Յոյների ազգասիրութիւնը մոլեռանդութեան ամենաբարձր ծայրին է հասնում։ Յոյներ կան, որոնք ոչ կարգին ուտել ունին և ոչ խմել, որոնք իրանց զրկում են ամուսնութիւնից և աշխարհային ամեն զուարճութիւնից, հոգւով մարմնով նուիրւում են միայն մի բանի—հարստանալու, և հարստանում են հարստահարութեան բոլոր միջոցները ներելի համարելով, ու միլիոնի կարողութիւն դիզելով՝ բոլորը միասին նուիրում են իրանց ազգին։ Դրանց թէ կրօնականները և թէ աշխարհականները միապէս մոլեռանդ են և իրանց են համարում աշխարհիս երեսին միակ ընտրեալ ազգը։ Եւ ինչքան սիրում են իրանց ազգին, նոյնչափ ատում են միւս բոլոր ազգերին։ Բայց սրա փոխարէն իրանք էլ վաստակում են բոլորի ատելութիւնը։ Ոչ մի ուրիշ ազգ, որքան էլ որ հալածւած լինի տաճկի ձեռքում, չի կարող տանել յոյնի իշխանութիւնը և նրան հպատակ մնալ։ Ահա թէ ինչ աստիճանի է հասցնում մի ազգի՝ նրա ազգասիրական մոլեռանդութիւնը։ Յոյնի այս յատկութիւնը ժառանգական յատկութիւն է, հնումն էլ այսպէս է եղել նա։ Ինքն ատել է բոլոր ազգերին, բոլոր ազգերն էլ ատել են իրան։

Հայ ազգի առանձնայատկութիւնը յունական յատկութեան հակապատկերն է։ Նա միշտ սիրել է բոլոր ազգերին, բոլոր ազգերն էլ սիրել են նրան, բացի ի հարկէ յոյներից։ Հայը օտարասէր, հիւրասէր և մարդասէր է եղել միշտ։

Մի ծննդարանում ապրող ազգերի մէջ այն ազգն է օգտակար, որ իր գոյութիւնովը ոչ միայն ՀԱՍ չի տալիս միւս ազգերին այլ և օգուտ։ Բայց այդ օգուտը պէտք է լինի մարդկային և ոչ թէ ոչխարային։ Տաճկաստանի հայը իր ոչխարային բնաւորութիւնովը մի շատ օգտակար տարր է գիշատիչ ցեղերի համար։ Հայը քուրդի ու թուրքի ոչխարն է, որ թէ կթւում, թէ խուզւում և թէ մորթւում է, երբ ձայն է հանում քերթելիս։ Նա իր գոյութիւնը պահպանել է այնտեղ միայն նրա համար, որ եղել է մի շատ օգտակար կենդանի, ինչպէս ոչխարը և ինչպէս մեղուն։ Նա երբէք կարող չէ ազատուել այդ դրութիւնից, մինչև դրսից մի մարդասիրական օգնութիւն չհասնի նրան։ Բայց այդ մարդասիրութեան օրինակը առաջ մենք ինքներս պիտի տանք։ Ինչ ազգ որ մարդասիրութիւն չունի, նա արժանի չէ մարդասիրական օգնութեան։

Մենք կովկասաբնակ հայերս, որ ամենայն առատութեամբ վայելում ենք տեղական մարդասիրական բարիքները, փոխանակ ինքներս էլ մարդասիրական օրինակ տալու, գլխներս ողնու պէս ներս ենք քաշում։ Ովքե՞ր են կրթւում Թիֆլիսի բոլոր ուսումնարաններում, բոլոր գիմնազիոններում։ Անշուշտ մեծ մասամբ Թիֆլիսի հարուստների որդիքը։ Բայց ե՞րբ է պատահել, որ Թիֆլիսի որևէ հարուստ հայը մի առատ նուիրաբերութիւն լինի արած այդ ընդհանուր կրթական հաստատութիւններին։ Ի՞նչ ՀԱՍ կունենար, եթէ հայ հարուստներից մէկը իր անունով մի ամբողջ գիմնազիոն հիմնէր, ուր կրթուէին բոլոր կովկասաբնակ պատանիները, առանց խտրութեան կրօնի և ազգութեան։ Ոչ միայն ՀԱՍ չէր լինիլ, այլ ահագին օգուտ և մեծ պատիւ մեր ազգին։ Մրցման մէջ մի ազգ միւսին կարող է յաղթել ոչ թէ ազգասիրութիւնով, այլ մարդասիրութիւնով։ Ազգասէրը կարող չէ մարդասէր լինել, բայց ճշմարիտ ազգասէր կարող է միայն մարդասէրը լինել։ Ահա քանի ժամանակ է, որ հայ հարուստները բարերար են հանդիսանում և հայ երիտասարդներ են ուղարկում զանազան համալսարաններ ուսանելու։ Ի՞նչ կը լինի, որ այդ ողորմութիւնից հասցնի և վրացի երիտասարդներին։ Եթէ հայ կրեսոսի մէկը տարեկան տասը ուսանող է պահում, թող դրանցից գոնէ երեքը լինին մեր դրացիներից մի ռուս, մի վրացի և մի թուրք։ Դժուարը մէկի կողմից օրինակ տալն է, այդ

օրինակին կը հետևեն և ուրիշները, և այնուհետև անխտիր ամեն ազգից էլ կուզարկեն բարձր կրթութիւն ստանալու։ Հայերը Հրատարակչական ընկերութիւն ունին, վրացիք էլ ունին։ Մենք տեսնում ենք, որ երկուսն էլ պէտք են, քանի որ տեղական ազգաբնակութեանն են ծառայում։ Ի՞նչ վնաս կունենայ ուրեմն, որ հայ ընկերութեանն օգնող հայը օգնի և վրաց ընկերութեանը։ Լսում ենք որ մայրաքաղաքներում գտնուած կովկասաբնակ ուսանողները իրարից հեռու են մնում ազգասիրաբար։ Դրանք իբրև մի հայրենիքի, մի ծննդարանի զաւակներ՝ ինչու պէտք է խորշին իրարից, ինչու իրանց նիւթական պաշարը չպէտք է բաժանեն իրար մէջ եղբայրաբար։ Եթէ վրացի ուսանողները շատ են թունդ ազգասէր, թող հայ ուսանողները թունդ մարդասիրութեան օրինակ տան նրանց։

Թէ ինչ նշանակութիւն ունի և որքան օգտակար է ծննդարանում բնակող բոլոր ազգերի և կրօնների շահերին ծառայել անխտիր, դրա մի գեղեցիկ օրինակը տուաւ Շուշի քաղաքում պ. Թամիրեանցը՝ իր հաշուով քաղաք բերելով մի վարար աղբիւր։ Ի՞նչ լեզու և ինչ կրօն ասես որ նրան չի օրհնում։ Նոյն օրհնութեանն անշուշտ պէտք է արժանանան և ծամ հարեան եղբարք, որոնք մի խոշոր գումար նուիրեցին նոյն քաղաքում մի ընդհանուր հիւանդանոց բանալու համար։ Եթէ բոլորին անխտիր ջուր տալը, բոլորին անխտիր առողջութիւն տալը մեծ բարերարութիւն է և պարծանք է բերում այն ազգին, որի անդամներն այդպիսի բարերարութիւն են անում, որքան առաւել մեծ պատիւ կը լինի մի ազգի համար, եթէ նրա մի քանի անդամներն էլ միացեալ ուժով կամ ջոկ ջոկ կը յաղեցնեն բոլորի ուսման ծարաւն անխտիր, կօգնեն բոլորի բարեկեցութեանն անխտիր, կաշխատեն որ իրանց մայրենի քաղաքը թէ ներսից և թէ դրսից ներկայանայ իբրև մի կատարեալ դրախտ, որ վայելեն ամենքն էլ անխտիր։ Երկուսից մէկը—կամ պէտք է լինի ընդհանուր սեփականութիւն, և կամ մասնաւոր սեփականութեան ընդհանրացում։ Մի ազգ միւս ազգին կը գերազանցէ մասնաւոր սեփականութեանն ընդհանրացումով, և սրանով կապացուցանէ իր մարդասիրութիւնը և իր օգտակար ազգ լինելը, որով և կը գրաւէ բոլոր ազգերի սէրն ու համակրութիւնը։ Լուսաւորութիւնը՝ ինչ ձևով էլ որ լինի, խաւարից լաւ է։ Լուսաւորութիւնը ոչ մի ժո-

ղովրդի ազգայնութեանը մագի չափ վնաս չի հասցնիլ, այլ միայն ահագին օգուտ կը բերէ։ Թող բացուին մեր ժողովրդական դպրոցները, ինչ ձևով էլ որ լինի, հարկաւոր է դրանց զարգացմանն օգնել կրկնապատիկ օժանդակութեամբ։ Խնդիրն այստեղ մեր լեզուին է վերաբերում, որ ազգայնութեան մի յատկանիշն է։ Բայց մ'թթէ լեզուի պահպանութիւնը ոգէտ և աղքատ դասակարգի պարտականութիւնն է միայն, և ոչ նաև հարուստի։ Հարստի համար լեզուն հարստութիւն ձեռք բերելու հնարներից մէկն է միայն. նա պէտք է համարում այն լեզուները սովորել, որոնցով կարելի է հարստութիւն ձեռք բերել։ Զարմանալի կը լինի, որ հարստութեան ձգտում ունեցող աղքատը նոյնպէս չգիտենայ այդ բանը։ Աղքատը դռնէ դուռը կընկնի, ողորմութիւն կը հաւաքի, որ կարողանայ իր որդուն տալ հարստանալու այդ հնարը։ Այդ ձգտումը ոչ մի ազգի մէջ այնպէս աչքի չի ընկնում, ինչպէս հայի մէջ։ Այրի մայրեր կան, որ լուացարարութիւն են անում և հացթուխութիւն, բայց իրանց որդոյը տալիս են այնպիսի կրթութիւն, որ նրանք նոյն իսկ պրոֆէսորութեան են հասնում։ Աղքատը շատ լաւ գիտէ, որ հարուստը հարստանում է ուրիշների աղքատութեան և տգիտութեան հաշուով. սրա համար էլ նա ամեն ջանք գործ է դնում հարուստի տորուկ չմնալ։ Բայց այստեղ մի խնդիր կայ միայն, որ շատերի համար մութն է։ Բանն ինչ լեզուով խօսելը չէ, այլ ինչպէս մտածելն է։ Մտածել սովորեցնողն ուսումնարանը չէ, այլ ժամանակը, որի տուած կրթութիւնը հազարապատիկ բարձր է դպրոցական կրթութիւնից։ Ժամանակ ասածդ մեր օրերում սաստիկ արագացրել է իր ընթացքը և ամեն մի բոպէում մի նոր չար և մի նոր բարի է ծնում։ Ժամանակի բերմունքի առաջքը ոչ մի ուժ չի կարող առնել. նա կարողանում է յեղաշրջել ամենայն ինչ և գըլխիվայր դրուած մարդուն նորից ոտքի վրայ կանգնեցնել։ Պէտք է լայն սիրտ ունենալ և լայն հայեացք։

Այստեղ ես պէտք է լռեմ, որովհետև բաւական շատ խօսեցի և ձեր համբերութիւնն ի չար գործ դրի։ Միւս անգամ կը խօսեմ դասակարգական շահերի մասին և ցոյց կը տամ, թէ ինչ հնարներ կան, որոնցով կարելի կը լինի այդ շահերն ընդհանրացնել և ծառայեցնել ընդհանուրի բարեկեցութեան օգտին։

*
* *

Ատենախօսութիւնը վերջացաւ և մենք էլ դուրս եկանք եկեղեցուց մի շատ քաղցր տպաւորութեան տակ։ Ամբողջ օրը ամենի խօսակցութեան առարկան նոյն օրւայ քարոզն էր, և խօսում էին շատ պատկառանքով։ Ամենքն էլ գիտէին, որ ինքն ատենախօսը մի ճշմարիտ քրիստոնեայ է, ինչպէս խօսքով, նոյնպէս և գործով։ Նրա ծուխերի մէջ շատ աղքատներ կային, բայց ոչ մէկը նրանցից օրւայ հացի կարօտ չէր, ոչ մէկը տան մնացած աղջիկ չունէր, ոչ մէկի զաւակը անկիրթ ու անգործ չէր մնում, և այդ բոլորը շնորհիւ իրանց քահանայի, որ հարազատ հօր նման խնամք էր տանում ամենքի վրայ։ Այս բանը տեսնելով՝ բոլոր աղքատ ծուխերը նրա ժողովուրդն էին ուզում դառնալ. բայց նա չէր ընդունում իբրև ծուխ. միայն անուններն ու հասցէները գրում էր, գնում այցելութեան և ծանօթանում նրանց ընտանեկան թշուառութեանը։ Հարուստ ծուխեր էլ շատ չունէր ու բոլորին էլ չէր ընդունում, բայց ամենքին էլ այցելութեան էր գնում և ամեն մէկին տալիս էր մի որ և է աղքատ ընտանիքի հասցէ։ Ամեն մի աղքատ տուն մէկ կամ երկու հարուստի խնամքի էր յանձնում, և նրանք ընդունում էին մեծ սիրով։ Այսպիսի դէպքերում նա մրմնջում էր քթի տակին Աւետարանի այն խօսքը թէ՝ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ»։ Նակայն նա տեսնում էր, որ այս տեսակ,ողորմութիւնով աղքատութիւնը չի կարելի նւազեցնել. այս պատճառով գիշեր ցերեկ մտածում էր արմատական հնարներ գտնել։ Եւ նա գտնում էր, բայց իրագործելու համար այնպիսի դժւարութիւններ էին դէմը կանգնում, որ իր գիւտը դառնում էր մի ուտոպիա։ Այսու ամենայնիւ նա չէր յուսահատւում։ Ժողովրդի բարեկեցութեան գաղափարը բուն դնելով նրա սրտի և ուղեղի մէջ, նրան հանգիստ չէր տալիս, և նա օրէցօր շատացնում էր խոչընդոտները վերացնելու հնարները։ Նա գտնում էր, որ գիւղերումն աւելի դիւրին կը լինի ընդհանուր սեփականութեան զօրացնելը, իսկ քաղաքումը՝ մասնաւոր սեփականութեան մի բաժնի ընդհանրացումը, որով կարելի կը լինի շատացնել բարեգործական և կրթական հաստատութիւնների թիւը։

Մասնաւոր խօսակցութեան մէջ տէր հայրն իր կրօնական դաւանութիւնը չէր ծածկում։ Նա զուտ Աւետարանական էր։ Կրօնի

խնդիրներում Աւետարանից դուրս՝ ոչ մի ուրիշ գիրք չէր ընդունում։ Առաքեալներից Պօղոսին չէր համարում Քրիստոսի աշակերտ։ Ասում էր. Քրիստոս վերացրեց մարդկային թշուառութեան միակ աղբիւր եղող սարկութիւնը և բռնութիւնը, իսկ Պօղոսը չճանաչելով ոչ Քրիստոսին և ոչ նրա Աւետարանը, վաւերացրեց մարդկային այդ սոր վիճակը իբրև ի վերուստ նախասահմանուած մի ճակատագիր և բռնութիւնը փառաբանելով՝ հասցրեց մինչև երկինք։ Իր այս ասածն ապացուցանելու համար՝ տէր հայրը բերում էր Պօղոսի ասածներից այնպիսի կտորներ, որ լսողը սոսկում էր բոլոր մարմնով։

Նրա ծուխերի մէջ հազիւ թէ լինէր մէկը, որ Աւետարանի ոգին ըմբռնած չլինէր։ Թերահաւատներն ու անհաւատներն իրանք էին գնում մօտը իրանց իմաստակութեան բոլոր զէնքերով զինաւորուած, և նա ամենքին էլ զինաթափ էր անում։ Ներս էին մտնում իբրև Աւետարանի հակառակորդ—և դուրս էին գալիս իբրև ամենաջերմեռանդ պաշտպան։ Նա առաջ մերկացնում էր Աւետարանը իր արտաքին արդ ու զարդից և ապա անդամատելով ցոյց էր տալիս այս և այն մասի նշանակութիւնը, և վերջումը լսողի առջևն էր դնում Աւետարանի սիրտը, այն սիրտը, որտեղից բղխում է մարդկային կեանքի անմահական աղբիւրը—ազատութիւն, սէր, եղբայրութիւն, մի խօսքով՝ երջանիկ կեանք։ Աւետարանի բոլոր այլաբանութիւնները պարզւում էին, և ինչ որ երկինք էր լինում տարուած, իջնում էր երկրիս վրայ, ինչ որ Աստուած էր, դառնում էր մարդ, և ինչ որ մարդ էր, դառնում Աստուած, և այդ Աստուծոյ առջև չոքում էին նախկին թերահաւատները, երկրպագում նրան և յուզուած ու աչքերն արտասուքով լիքը՝ դուրս էին գալիս այնտեղից մի նոր լուսով, Աւետարանի լուսով լուսաւորուած և Աստուծոյ որդիք դառած, զի «Որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել»։

---

*
* *

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Թէ թարմ կաղնին է մեղմիկ շշնջում՝
Մանուկ ոստերը գլխիս տարածած,
Թէ մանուկներն են անուշ կարկաչում՝
Դալար խմբերով շուրջս բոլորուած՝—
Երնէկ, ասում եմ, դեռ թարմ կը մնայ
Ձեր դալար կեանքը, սիրունիկներս...
Խաղացէք սիրուս թարմ շիրմի վրայ,—
Վաղն էլ պիտ կոխէք սառ դերեզմանս...
Պատկներ հիւսէք ձեր մատաղ կեանքին,—
Նրանք իմ գլխին կը չորնան, սևնան,
Պատկներ բերէք դուք սիրուս շիրմին,
Քանի որ նա էր ձեր գարնան նման...
Ա՛խ, նոր սէր չկայ, որ դայ, նորոգի
Թարշամած կեանքս, բուժէ վէրքերս,—
Ես էլ մնում եմ, որ կեանքս տանի
Աղի ու լեղի տառապանքներս...
Ա՛խ, երբոր ձեզ հետ ինձ էլ են դրկում
Բնութեան երգերն յաւիտենական,—
Նա ձեր մանկութեան օրօրն է երգում,
Բայց իմ խեղճ կեանքիս վերջին շարական...
Բնութեան անկիւնը թող քամին քշէ
Մէկ-մէկ թափթփած չոր տերևներս,
Եւ աւլած հովտում թող ազնտ շնչէ
Ձեր դալար կեանքը, սիրունիկներս...

„ԴԱՐՁ“

ՇԱՆԹԻ

Ա.

Ցորեկւան տաքը դեռ կոտրած չէր բոլորովին. ու ձին դժուար ու ծանր կը բարձրանար։

Ճամբան պինդ մը վակած էր ձորի ձախ պատին, ու այդ պատին հետ միասին ինքն իր կողքին վրայ կը ծուէր չէրքէզի սուրին պէս. ու միևնոյն ժամանակ քիչ-քիչ վեր կը սողար, միշտ վեր ձորի յատակէն դէպի Խծկոնքի վանքը։

Մինչ ձիաւորը քրտինքը սրբելով՝ ճամբու իւրաքանչիւր կոր տալուն՝ ձիուն վրայէն դէպի առաջ կը ծուէր վանքի գմբէթները նշմարելու յոյսով։

Քսան-քսանըհինգի մէջ երիտասարդ մըն էր ան. ճերմակ, տաքէ պարզ հագուստ մը վրան. ճերմակ ալ քազըրաք մը գլխուն, որուն տակէն դուրս կը ցայտէին դանգուրի մօտեցող սև առատ մազերը. մօրուքի տեղ փոքր շէկ փունջ մը դունչին. ինքը միջահասակ ու նիհար. զոյգ մը կենդանի, արտայայտիչ աչքերով, որոնք կը սահէին հիմա ձորի երկու վայրի պատերն ի վեր, որոնց վրայ երկնքի տաքկապոյտ կտոր մը եկեր իր վրանն էր քաշեր։

Թեթև ոլոր մըն ալ. և, հա, վերջապէս։

Իր դէմն էր վանքը. հինգ մանրանկար եկեղեցիներ, գրեթէ իրարու կից, իրարու թեւի տակ, իրենցմէ ամենէն մեծի շուրջը խոնուած. և առոնց փոքր ու փոքրիկ գմբէթներու ամբողջ երամը շրջապատող ծառերուն մէջէն վիզերնին վեր երկնցուցած՝ հետաքրքիր նայուածքով եկւորը կը դիտէին։

Կարծես, լեռնական հսկայ ուրուր մը իր ձագերուն հետ, որ ձորի ձախ կուրծքին, հոն, դուրս ցըցուած ժայռոտ հարթակին վրայ դրեր էր իր ամեհի բոյնը ծառերու արցակին մէջ։

Ու շիտակ այդ ամեհի բոյնը կը մտնէր հիմա ձիաւորը՝ փընտրտող նայուածքը իր շորս դին յածելով։

Եկեղեցիներուն ոտքը հին ու ցած պատ մը կ'երկընար, որուն դռան առջևը հաղիւ էր հասած ձին, երբ գըզգըզուած մազերով երկարահասակ բոբիկ ու գլխաբաց պատանի մը սեմէն դուրս նետուեցաւ։

—Բարև՛. հայր սուրբը վանքն է։

—Հրամանք ես։

Ու մօտեցաւ առաւ ձիուն սանձը։

Երիտասարդը ցատկեց թամբէն վար ու մտաւ արագ բակը, որու մէկ կողմը խումբի աւագ եկեղեցին էր, միւս կողմն ալ մէկերկու հինկէկ հոդէ սենեակներ։

Եւ ճիշտ այդ սենեակներէն մէկու դուռն էր, որ ճըռռաց յանկարծ իր սռնիներուն վրայ, ու սեմի շրջանակին մէջ երևցաւ պարթև հասակով թիկնեղ ծերուկ մը. երբեմն սև, իսկ հիմա դեղինի ու կանանչի տարբեր աստիճանի բոլոր բաղադրիչ երանգները ներկայացնող կապայ մը վրան. ու խոշոր, կոշտ, գունաւոր երիսրբիչը ձեռքը, որով իր մինչև կուրծքը հասնող ալեխառն մօրուքը կը շորցընէր։

Կէս-օրուան քնէն նոր ելած ու դեռ բոլորովին չըսթափած ուղեղով կը լուացէր մեքենաբար, երբ իր մենակութեան վարժուած ականջը դեռ հեռուէն սմբակներու արոփը լսեց, և ուխտաւորներու հաճելի գաղափարը իր գլուխը վերջնականապէս թարմացուց։

Եւ հիմա դոհ ու բարեացակամ դէմքի արտայայտութիւնով մըն էր, որ իր խուցի սեմէն դուրս ելաւ հիւրին դէմ, երբ իր անուան հարցը-իլը լսեց։

—Աստուած օգնական, հայր-սուրբ։

—Աստուած օրհնէ, որդիս։

Երիտասարդը ծռեցաւ համբուրեց ծերուկի աջը. ու գրպանէն մեծկակ նամակ մը հանելով տուաւ անոր։

Նամակը, ըստ երևոյթին, ախորժելի տպաւորութիւն չըրաւ

վարդապետին վրայ. աջ ու ձախ դարձուց անգամ մը, դրաւ մոտակայ քարին, ու ծանր շարժումով մը հանեց ծոցէն մաշուած ու ազատ պատեան մը, որուն մէջէն ահագին ապակիներով հին ձեւի ակնոցը դուրս քաշելով՝ ծանր-բարակ սկսաւ ականջներուն անցնել։

—Ո՞ւրկէ կու գաս հրամանքդ. հարցուց այդ բարդ ու դժուար աշխատանքի միջոցին։

—Էջմիածնէն, հայր-սուրբ. շատ բարեւներ ունիմ ձեզի։

—Հը՛մ. շնորհակալ եմ. խրկող, բերող ողջ լինին։

Ու դէմքը աւելի խոժոռեցաւ։

Այդ նամակէն լաւ հոտ չէր գար։

Վարժ ձեռքով գրուած տողերը կարդալու քանի մը իզուր ջանքերէն վերջը՝ նամակը մեկնեց երիտասարդին.

—Մէկ հրամանքդ կարդաս տեսնենք ինչ է գրած. ես ծերացեր եմ, աչքերս աղէկ չեն ջոկեր։

Տղան կարդաց. ընդամէնը չորս-հինգ տող էր ու թունդ պաշտօնական դարձուածներով շարադրած։ Երեք վարդապետացուներ քանի մը օր Խծկոնք էին մնալու, և Մայր-Աթոռի վարչութեան անունով կը յանձնարարուէր, որ հայր-սուրբը անոնց ամէն կերպ լաւ հիւրասիրութիւն ցոյց տար։

Ծերուկի դէմքը քիչ մը պարզուեցաւ. չարիքը իր կարծածին չափ մեծ դուրս չեկաւ։

—Ա՞յդ է բոլորը. հարցուց տարակուսանքով։

—Այո, հայր-սուրբ։

—Այդ տիրացուներէն մէկը դուն ես։

—Այո. այդ վարդապետացուներէն մէկը ես եմ. սրբագրեց տղան «տիրացու» բառէն շատ չախորժելով։

—Իսկ միւս տիրացուները ինչու ճամբան ետ մնացին, շարունակեց վարդապետը կրկին իր ոճովը։

—Ո՛չ, հայր-սուրբ. անոնք քանի մը օր ուշ պիտի գան։ Խընդիրն այսպէս է. անգամ մը Շիրակը միասին պտոյտ տալ ու Անի երթալ էր մտքերնիս. անոնք որոշեցին Կողբին ու Երեւանդակերտի վրայով Ախուրեանէն վեր ելնեն. բայց այն կողմերը ես անգամ մը եղեր եմ. վճռեցինք, որ ես Ալէքսանդրապոլի վրայով հոս գամ ու

սպասեմ. վերջը հոսկէ միասին երթանք Անի. ու Հառիճի վրայով անցնենք Ապարան։

—Բայց Շիրակը պտոյտ տալու միտքերնիդ ինչ է. հարցուց վարդապետը կասկածամտութեամբ։

—Ոչինչ. այնպէս շրջել անդամ մը։

—Զէ. երևի, Էջմիածնէն պաշտօն մը կ'ունենաք. հէ. ժպտեցաւ ծերուկը ծախ աչքը կըծկելով։

—Ի՞նչ պաշտօն, հայր-սուրբ. մենք դեռ միաբան ալ չենք. դեռ երկու ամիս վերջը պիտի ձեռնադրուինք։ Իսկ Շիրակը շրջիլը, է, մեր հայրենիքի հին պատմական կեդրոններէն է. կ'ուզենք ծանօթանանք։

—Հապա, ի հարկէ, նշանաւոր վանքեր կան. մեր վանքն ալ շատ հին է, ու շատ յայտնի։ Է՛, հիմա ոքքան ժամանակ հոս մնալ է միտքերնիդ։

—Դէ՛հ, մինչև ընկերներս դան, մինչև հանգստանան քիչ մը, մինչև հոս շուրջը պտոյտ տանք. երևի տաս օր մը կը տևէ։

—Լաւ. ըրաւ վարդապետը կոտրած ձայնով մը։

Եւ ակընթարթ մը թաւ, ճերմակ ունքերը խաղցընելէն վերջը աւելցուց.

—Միայն, որդիս, այս տարեան արօտները այնքան ալ աղէկ չեն հոս. անասուններն ալ տեսակ մը ինկած են. կթեարնիս ալ քիչ է. այս աչքի առաջ ունեցէք. թէև, ի հարկէ, Աստծու տուածէն ինչ որ ունիմ ձեզմէ չեմ խնայեր։ Եւ այս ալ կայ, որ վիզիս արդէն ամբողջ տուն մը հիւր ունիմ. ի հարկէ իրենց ուտելիքը իրենք կ'եփեն, բայց վերջապէս...

Եւ չդիտէր ինչպէս վերջացընէ իր կրած բեռի ծանրութիւնը հնար եղածին չափ խոշոր ցոյց տալու. թէև այդ «իր վիզը» ունեցած տուներն ամենէն աւելի ուրախ էր. նախ վստահ էր վերջը մեծկակ դրամական նուէր մը ստանալու, և բացի այդ յաճախ կ'ըստանար անոնց խոհանոցէն քաղքի կերակուրներ։

—Այդ ինչ հիւր է. հարցուց երիտասարդը։

—Ալէքսանդրապոլէն. ուսումնական մարդ. ոտքի ցաւ ունի, ինչ է, եկեր է մեր ծծումքի ջուրը լողալու, իր կնկանը հետ. սիրուն կնիկ մը ունի. շատ լաւ մարդիկ են. շատ ալ երևելի. լեզուն

բերնին մէջ կը դառնայ, բոլոր օրէնքներուն խորը տեղեակ։ Ան որ չլիներ՝ վերը դաշտին վրայ վանքի ահագին արօտատեղին արդէն հիմա ձեռքէս խլած կը լինէին Սալօի լամուկները. անցած աշնան էր. դատարանը վերջապէս մեր վանքին վրայ վաւերացուց։ Զէ, շատ յայտնի մարդ է. կարելի է լսած կը լինիս՝ Նիկոլայ Քանեան։

—Քանեանն. էջմիածին ընկեր մը ունիմ Ալէքսանդրապոլէն Քանեան. կարելի է անոնցմէ է. վերջը երթամ տեսնեմ։

—Գնա, գնա. ուսումնական մարդ է. վրայ տաւ ծերուկը աշխուժ ու գոհ շեշտով մը։

Այս խօսքերուն հետ առաջնորդեց տղան իր խուցին կից ցած տուն մը. ու դուռը ետ հրեց։

Փոքրիկ հողայատակ սենեակ մըն էր, ուր փայտէ երկար տախտէն ու փորփրուած հասարակ սեղանէ մը զատ ոչինչ չի կար։

—Ահա այս ալ քեզի ձեր սենեակը. ես հիմա կ'երթամ մնացած պէտք եղած բաները կ'ուղարկեմ։

Երիտասարդը առանց ոչինչ ըսելու հայեացք մը ձգեց իր շուրջը այդ զով, հող հատող ու քիչ մըն ալ փըլփըլած խրճիթին մէջ. ու իսկոյն մօտեցաւ սենեակի միակ պատուհանը բանալու, որու ապակիին կէսին տեղը թուղթ էր փակցուած։

Բայց հազիւ պատուհանը բացած՝ կանգ առաւ յափշտակուած։

Սենեակը նստած էր սեպ ու ամէհի ապառաժի շրթունքին ու շիտակ ձորի դատարկութեան վրայ կը նայէր։ Հանդիպակաց ձորափէն ժայռի ահագին բեկորներ իրենց խոռոչներէն դուրս կը նետուէին յոխորտանքով՝ հարու տալու սպառնալիքով մը իրենց մամուռ դլուխները քիչ մը վար հակած. մինչ այդ դատարկ սպառնալիքին արդէն շատունց վարժուած, նոյն այդ ժայռերու ոտքին, ցիրցան ծառերու խումբ մը հանգիստ կ'օրօրէին իրենց վերին ճիւղերը՝ վերադարձող սաւերներու զովութեան մէջ խլրտուն։ Ախորժ լռութիւն մը վերն ու շուրջը, որուն մէջէն աւելի թունդ ու աւելի յստակ շեշտերով կ'որոշուէր դեռատի միապաղաղ ու ճռռոմ մենախօսութիւնը, որը երբեմն կը սուլէին՝ ծառերը անդիէն՝ աւելի ձանձրոյթէն քան հեգնելու համար։

—Հը՞, հաւնեցա՞ր. հարցուց վարդապետը ժպտուն։

—Հիանալի է. բացականչեց տղան աշխուժ ետ դառնալով իր

հիւրընկալին։ Այսպէս ձորերուն մէջ, գետին վրայ, ժայռերուն դէմ, ջրերու օրօրին տակ. չէ, այս ալ ուրիշ բան է, ամբողջովին բնութեան գիրկը. ճշմարիտ, հայր-սուրբ կը նախանձեմ ձեր կեանքին։

—Հը՛մ. ըրաւ վարդապետը անտարբեր շեշտով մը։ Դէհ, հիմա հանգստացիր քիչ մը, յոգնած կը լինիս. ես ալ անգամ մը ելնեմ վեր արտը. տեսնեմ շան գիւղացիք ինչ բանի են. մարդ որ աչքը վրանին չի պահէ վանքը կը կողոպտեն ծոյլ անպէտքները։

Եւ սեմէն ետ դառնալով՝ պոռաց.

—Գրիգոր, տիրացուին իրեղէնները ձիու վրայէն ներս բեր, ու ձիուն առջևը դարման նետէ։

Ու իր բարձրագոչ հրամանին արձագանքը ձորի պատերուն մէջ դեռ չի կորցուած՝ մտաւ իր խուցը։

Ասով ալ վերջացաւ «տիրացուի» պաշտօնական ընդունելութիւնը։

Բ.

Վանքէն դուրս, վանքէն քիչ մը աւելի բարձր և ըստ երեւոյթին նոր շինուած հիւրասենեակներէն երկու ամենալաւերը յատկացուած էր Քանեաններուն։

Անբիծ ճերմակ սիրոցով փոքր սեղանին մօտիկ դէմ դէմի նստած էին Նիկոլայն ու տիկինը. ու պարոնի մօտն ալ նորեկ վարդապետացուն։

Սամավարը ուրախ կը շնչէր սեղանին միւս անկիւնը, ու շոգին բաժակներուն վրայէն թեթև-կոր գիծով մը դէպի բաց պատուհանը կը ծուէր։

Մութը սկսել էր խտանալ. տիկինը լամպը վառեց։

Երեսունըհինգի սահմաններուն վրայ լայնաթիկունք, նիհար, երկար մարդ մը էր պարոնը։ Առատ սև մօրուքը՝ վար կախուած երկար պեխերուն հետ միասին՝ դէմքին խիստ արտայայտութիւն մը կու տար, որուն տարօրինակ կերպով կը հակադրէին ժպտուն ու բարի աչքերը։

Հազիւ կէս ժամ կար, որ ծանօթացեր էին իրարու. միայն պարոն Նիկոլայի վարմունքին ու ձայնին մէջ այնպէս պարզ շեշտ մը կար, որ պաշտօնական յարաբերութեան անմիջական մահն է։

Խօսեր էին վանքի կեանքի, դպրոցի ու իր եղբօրորդու մասին. վարդապետացուի անցեալէն, ներկայէն ու անոր ապագայի դիտաւորութիւններէն։ Դուրս էր եկեր, որ պարոնը ծանօթ էր մեր արդի գրական հասարակական կեանքին. եղած էր նաև շատ մը վանքեր ու անձամբ գործ էր ունեցած բազմաթիւ հոգևորականներու հետ. և, ինչպէս կ'երևար, այնքան ալ մեծ համակրանք չունէր դէպի այդ դասակարգը։

Խօսակցութեան տաք ատենն էր, որ դուրսէն կանացի սուր ձայն մը լսեցաւ. ձիգ երգող տոնով մը տիկնոջ անունը կը կանչէր։

—Մարի։

—Եկուր, եկուր. ուր մնացիր այսչափ ուշ. պոռաց տիկինը դէպի պատուհանը դառնալով։

Երգ մը մռընչտալով ստուեր մը անցաւ արագ պատուհանին առջևէն. և ակրնթարթ մը վերջը սենեակ մտաւ դեռատի աղջիկ մը իր երգին հետ միասին. նկատեց անծանօթը ու կանգ առաւ իսկոյն՝ առնական կեցուածքով մը։

Միջահասակ, լեցուն, առոյգ մարմին մը. չափազանց տիկնոջ նմանող կլոր դէմքով, միայն աւելի թարմ ու աւելի հպարտ արտայայտութեամբ. առանց դլխարկի, ու մանչու պէս մազերը կարճ կտրած. մութ դոյնի շրջազգեստ մը վրան. ու մէջքը լայն կաշիգոտի։

—Եկուր, քեզի ծանօթացընեմ. մեր Կարօի ընկերն է. դարձաւ Քանեան աղջկանը։

—Պարոն Սարաքեանն։ Քենիս՝ Նուշանիկ Մելինեան։

Աղջիկը համարձակ շարժումով մը ձեռքը մեկնեց.

—Կարօի ընկերը. ուրեմն դուք ալ այս տարուան ընթացաւարտներէն էք։

—Այո, օրիորդ. պատասխանեց տղան թեթև շփոթութեամբ մը։

—Եւ երևակայէ, Նուշանիկ, երկու ամիսէն կուսակրօն պիտի ձեռնադրուի. կցեց Քանեան չսպասուած ժպիտով մը։

—Կուսակրօն. ան. ըրաւ աղջիկը, ու ձեռքի գրքերը պատուհանին մէջ դնելով՝ մտաւ քովի սենեակը։

Բայց նոյն վայրկեանին իսկ ներսը իր աղմուկը լսեցաւ, որ մէկուն հետ կը վիճէր. և իսկոյն ետ եկաւ նորէն երկու տարեկանի մօտիկ երեխայ մը պինդ գրկած, որ գրեթէ մերկ էր։

—Այս կինը երեխան փճացընէ պիտի, Մարի. անկանոն կը վարժեցընէք. տես, դեռ մինչև հիմա պառկեցուցած չէ, իսկ երէկ հինգին քնացուցեր էիք արդէն. այսպէս անկարգ, անշնորհք, խեղճ Թուչնիկս։

Եւ իբրև շոյանք երեխայի մերկ ազդրները ծեծելով՝ քանի սը ռուսերէն ու հայերէն փաղաքշական ածականներ իրարու խառնեց, «մեծերու քմահաճոյքին զոհ» անուանելով շարունակ, ու հնչիւն-հնչիւն համբուրելով անոր թևերը, վիզը, անրակը՝ մտաւ կրկին կից սենեակը։

Երեխայի մայրն ալ գնաց քրոջը եռևէն. նախ աւելի սաստիկ իրարանցում մը բարձրացաւ ներսը, բայց իսկոյն կորուեցաւ բոլորովին։

—Իսկ մեր խօսքը ուր մնաց. դարձաւ Քանեան երիտասարդին։ Հա, ձեր նոր ուղղութեան վարդապետներու մասին կը պատմէիք. ուրեմն կը կարծէք, որ խնդիրը այդպէս մեծ ծաւալ առնելու է։

—Ա՛, անշուշտ. շարժումը սկսած է արդէն. ես ու իմ ընկերներս բացառութիւն չենք, այլ ամբողջ խումբ մը, որ շուտով կրկնապատիկ եռապատիկ պիտի դառնայ։

—Եւ ինչ է ձեր այդ խումբի դծած նպատակը կամ ծրագիրը։

—Գիտէք, պարոն, այդպէս որոշ գրուած-չափուած ծրագիրներ պէտք չէ որ երևակայէք. մեզմէ իւրաքանչիւրի ձգտման մէջ այս կամ այն անհատական գիծը կրնայ շեշտուած լինիր. բայց այն, որ ամէնքիս ընդհանուր է ու ամէնքիս տենչը—այդ է նորոգել, բարձրացընել մեր ինկած հոգևորականութիւնը. կողոպուտ, կաշառք, անառակութիւնն ու ագիտութիւնը վերցընել ժողովուրդին առաջնորդող դասակարգին մէջէն։

—Ժողովուրդին առաջնորդող. ձայնը ձիգ աւաւ Քանեան երգիծանքի ժպիտը շրթունքին։

Մինչ երիտասարդը տաքցած վրա-աւաւ՝ հետզհետէ աւելի ու աւելի ոգևորուելով.

—Այո, այո։ Ա՛խ, չգիտէք, պարոն, թէ ինչ սարսափելի անպէտք է դարձած մեր հոգևորականութիւնը ժողովրդի բարձրացման, զարգացման գործի մէջ. վախկոտ, շահամոլ, եսական, ոգեր. ոչ

մէկ քիչ թէ շատ իդէական ձգտում, անձնազոհութիւն, մաքուր զգացում։ Եւ, է, չէք կրնար երևակայեր, թէ ինչ հաճոյք է մտածելը, որ այդ փոտած մարմինը պատռես պիտի, որ այդ ճահճացած կեանքին մէջ նոր հոսանք, նոր ձգտումներ պիտի մտցընես, որ պիտի կուռես, մաքառես, նոյն իսկ հալածուիս. ա, այդ կռիւը։

Քանեան յափշտակուած կը նայէր տղու ոգևորութենէն կայծկըլտող աչքերուն։ Ու ակընթարթ մը լռութենէ վերջը՝ ըսաւ տեսակ մը վարանումով։

—Գիտէք, պարոն Սիրաքեան, քանի ձեզի կը լսեմ, այնքան աւելի խոր ցաւ մը կ՚ըզգամ մէջս. ձեր այդ ձգտումներուն ու ոգևորութեանը համար աւելի էական ու աւելի արժանի նպատակ մը կը ցանկայի, քան այդ ձեր ընտրած հոգևորականութիւնը։

—Ի՞նչպէս թէ. հարցուց տղան բոլորովին պաղած։

Ու Քանեան շարունակեց՝ ինքն ալ տեսակ մը պաղած ու հանդիստ խօսուածքով.

—Հոգևորականներու դարը անցած է, բարեկամս, հիմա մտքերն ու գիտութիւնները կառավարողը ոչ միայն հաւատքն ու աստուածաբանական ֆիքիւլտէները չեն, այլ ճիշտ հակառակը, կեանքի դրական, նիւթական, փորձնական հայեացքները. հիմա այլևս ժողովուրդի առաջնորդողները հոգևորականները չեն, ինչպէս քիչ մը առաջ միամտօրէն կը պնդէիք, այլ ան մարդիկը, որոնք ժամանակակից գիտութիւններուն ու քաղաքակրթութեան արդի ըմբռնումներուն վրայ կրթընած՝ խօսքի, օրինակի, մամուլի, ու ընկերական ցընցումներու միջոցով ժողովուրդը ժամանակի պահանջներուն ու հոսանքին մէջ կը վարեն։ Ով կեցած չէ դարուս հայեացքներու բարձրութեան վրայ՝ ան կրնայ գուցէ ժողովուրդ մը ետ քաշել, բայց առաջ՝ երբէք։

Այդ միջոցին՝ այս արդէն երրորդ անգամ՝ աղջիկը մտաւ սենեակ, և սամավարէն իրեն բաժակ մը թէյ լեցընելով՝ առանց անոնց խօսակցութիւնը ընդհատելուն կարևորութիւն տալու՝ դարձաւ Քանեանին։

—Լսեցիր, Կոլէի, Գայիանէն ծներ է։

—Մի՛թէ. բացականչեց մարդը զարմացած։

—Մարին դեռ քեզի չըսաւ. քիչ մը առաջ սայլապանը նա-

մակ բերաւ։ Հա՛, ի հարկէ նորէն մեռած. ա՛, այդ աղջիկը, որ այդպէս անզգուշ է. արդէն ամիսուկէս առաջ, ես դեռ նոր էի եկեր Ալէքսանդրապոլ, որ քիչ էր մնացեր նորէն պիտի վիժէր. արդէն ո՛չ ինքը խելք ունի, ո՛չ մարդը. անոնք զաւակ ունենալու չեն, պարապ բան է, թող քսան տարի սպասեն։

—Խեղճ կին, այդ անոր բաղդն է. բացականչեց տիկինը ցաւակցաբար։

— Բա՛ղդ, ինչ բաղդ, ըսէ՛ ապուշութիւն. աւելցուց Շուշանիկ բարկացած, ու նստեցաւ իր թերի բաժակին առջևը։

Բացաւ հեռը բերած ուսերէն ամսագրի մը համարը, դրաւ սեղանին. և երկու արմուկները յենելով գրքի երկու կողմերը՝ գլուխը առաւ ափերուն մէջ ու սկսաւ կարդալ։

Վարդապետացուն տեսակ մը ամաչած ու կարմրած՝ զարմանքով կը նայէր աղջկան։

Այդ ինչ տեսակի մարդիկ էին։

—Իսկ ես ինչ կ'ըսէի. դարձաւ Քանեան երիտասարդին։ Այո՛, ըսել կ'ուզէի, որ ժամանակակից ուղեղներու ձգտումն է արթնցընել մարդկութիւնը հանդերձեալ կեանքի տափակ երևակայութիւններէն. բարձրացընել մարդու իր անձին վրայ ունեցած ինքնավստահութիւնը՝ մէկդի նետելով բոլոր գերբնական օգնութիւնները, սպառնալիքները, արքայութիւնները. գիտակցութիւն ու հպարտութիւն ներշընչել անոր իր ուժերուն ու կարողութեան վրայ. հասկըցընել, որ բնութենէն դուրս ոչինչ չի կայ, որ մարդն ու ընկերականութիւնն ալ այդ բնութեան մէկ մասն է. և յառաջդիմութիւն, քաղաքակրթութիւն ըսածն ալ ուրիշ բան չէ, եթէ ոչ վերլուծել, ուսումնասիրել ու իրեն օգտին ծառայեցընել բնութիւնը. բնութիւնը, որ մե՛ր մէջն է, բնութիւնը, որ մեր շուրջը։ Արդ, բարեկամս, եթէ ձեր նոր խումբի քարոզածն ալ այս պիտի լինի, այլ ես ինչ հոգևորական. իսկ եթէ նորէն հին աւանդական երգերը պիտի կրկնէք՝ այն ատեն դուք ալ քաղաքակրթութեան նոյն լոչընդոտ տարրերէն էք, ինչպէս որ հոգևորականութիւնը միշտ եղեր է ու պիտի լինի, իբրև բնական թշնամի ազատ մտքի ու յառաջդիմութեան։

—Ա՛խ, պարո՛ն, եկէք այդ բոլորը մէկ կողմ դնենք։ Մեր ժո-

ղովուրդի դիրքը պէտք չէ որ մոռնաք. մեր արդի պատմական պայմանները այնպէս են ձևակերպուած, որ մեր ներքին հասարակական շատ մը գործեր սերտ կապուած են հոգևորականութեան հետ, կամ ուղղակի անոնց ձեռքն են. նորոգենք, բարձրացընենք մեր հոգևորականութիւնը, որ մեր հասարակական կեանքն ալ բարձրանայ։

—Նախ՝ շատ նեղ մտածում է, պարոն Սիրաքեան, ձեր այդ վերէն բարենորոգելու սիստեմը. ճշմարիտ բարենորոգումը, իրական բարձրացումը արմատէն կ՚ըսկըսի՝ ժողովուրդէն. եթէ կրնաք՝ ժողովուրդի տնտեսական պայմաններուն բարենորոգմանը աշխատեցէք. հոտ է զարգացման բանալին։ Եւ երկրորդ՝ ճշմարիտ տարօրինակ է ձեր այդ միամիտ հաւատքը, որով կ՚երևակայէք, թէ հոգևորականութիւնը նորոգելու, բարձրացընելու պիտի յաջողիք։ Դժբաղդաբար, կամ աւելի ճիշտը՝ բարեբաղդաբար, այդ անկարելի է։

—Մթթէ. և ինչու։

—Բնական մահուան դէմ բժշկութիւն չի կայ։ Կ՚ընդունեմ, որ այս կամ այն անհատը իր բնածին գործնականութեան ու բնաւորութեան ուժի միջոցով հասարակութեան որ և է օգուտ կրնայ տար նաև իբրև հոգևորական, ինչպէս նաև ուրիշ որ և է կոչման մէջ պիտի տար, և, հաւանօրէն, շատ աւելի արդիւնաւոր կերպով։ Բայց այդ ցան-ցիր անհատական ուժերը ինչ ալ որ լինին, հոգևորականութիւնը իբրև ամբողջութիւն մը առած՝ վնասէն զատ օգուտ չունի մեզի. ալ անկէ խէր չի կայ մեզի։

Սիրաքեան գլուխը կախ՝ թէյի գդալին հետ կը խաղար. տեսակ մը լարում, կծկում դրոշմուած էր իր դէմքին. ու խելացի, գրաւիչ, ազնուական բան մը կար դիմագծերու այդ կծկումին մէջ։

Օրիորդը բաւական ատենէ՝ գիրքը թողած՝ ողան կը նայէր շնչակի՝ գլուխը միշտ ձեռքերուն մէջ. նախ անդիտակից մեքենական էր այդ նայուածքը, բայց շուտով սկսաւ ուշադրութեամբ դիտել այդ նիհար, դժգոյն դէմքը. ու յանկարծ խղճաց։

«Խնձոր ողայ» մտածեց ինքնին ու նորէն կախեց գլուխը գրքին վրայ։

—Կը չափազանցէք. ըսաւ վերջապէս ողան՝ թեթև մը դէմքը դէպի խօսակիցը դարձընելով։ Եթէ ձեր խօսքը միայն հիներու մասին լիներ՝ ես ալ ձեզի հետ, չէ որ այդ հասարակութիւնները մէջ-

տեղէն վերցընելն է նաև մեր նպատակը։ Միայն դուք անիրաւ կը վարուիք, երբ մտաւոր զարգացման տէր ու որոշ ձգտումներով նոր հոգևորականները հիներուն հետ միասին մէկ ջրով լաւ կ'ուզէք։

—Ա՛խ, նոր կամ հին. հոգևորականը, ինչ ալ որ դառնայ, հոգևորական է. և եթէ իմ մասնաւոր զգացումս լսել կ'ուզէք, ձեր այդ կրթուած կրօնաւորները իմ վրաս շատ աւելի անախորժ տպաւորութիւն կ'ընեն, քան գուցէ հիները. կրօնաւորութիւնը միամիտ զգացումներու վրայ միայն կրնայ հիմնուած լինիր. մտաւոր զարգացումը մէջ եկածին պէս կամ կ'ըսկըսի լուծուիլ, կամ դէպի ծիծաղելիութիւն կը տանի։ Եւ, ի դէպ, այդ ծիծաղելիթական գիծը արդէն սկսած է շատ աչքի իյնալ ձեր կրթուածներուն մէջ. մէկ երկուքը ես ալ կը ճանչնամ։

—Սակայն, Կօլեա, ինչ քաղաքավարութիւն է այդ. նկատեց տիկինը։ Պարոնը մեզի հիւր է եկեր, դուն նստեր ես գլխուն գայլի աւետարան կը կարդաս։

—Ա՛խ, ոչինչ, տիկին. այդ բոլորը լսելը ինձի համար հետաքրքիր է. պատասխանեց վարդապետացուն՝ հնար եղածին չափ ինքզինքը անփոյթ ցոյց տալու ճիգով մը։

—Վաղը մեր վրայ հովիւ պիտի դառնայ. աղէկ է, որ այսօրընէ իր ոչխարներուն կարծիքը գիտնայ. աւելցուց պարոնը ծիծաղելով։

Ու. կատակի շեշտով մը երիտասարդի ձեռքին զարկաւ թեթև։

Գ.

Վարդապետացուն լոյսին հետ եկաւ անկողնէն. իջաւ դէպի ձորը, ուր գետակի քովէն սողոսկող նեղ արահետով սկսաւ վեր քալել. ծանր, հանդարտ ու տեսակ մը ցրուած։

Մտածումները իր գլխուն մէջ մօրացեր էին, կանգ առած ջուրի պէս. ու տարտամ տխրութիւն մը ծանրացեր էր իր հոգիին վրայ. նախորդ գիշերուան տպաւորութեան տակն էր միշտ։

Արդէն գիշերն ալ շատ ուշ և շատ անհանգիստ էր քնացեր, թէև իսկապէս լուրջ ոչինչ մտածած չէր։ Քանեանի մէկ-երկու նախադասութիւնները կը կրկնուէին շարունակ իր գանգին տակ. և այն գաղափարը, թէ ինչպէս ոչ ոք չէր ուզեր հասկընալ իրենց նպա-

տակներուն արժէքը, իրենց անձնազոհութիւնը. նոյն իսկ այդպէս կրթուած մարդիկ։ Մասնաւորապէս Քանեանի վստահ ու վճռական խօսուածքը, անոր արհամարհոտ շեշտը տղու կոչման ու տպագրային վրայ կը սեղմէր կը վրդովէր երիտասարդին սիրտը. մանաւանդ կ'ըզգար, որ իւկապէս անոր ըսածներու մէկ բաւական մեծ մասին դէմ ինքը հազիւ առարկել կրնար. չէ՞ որ ինքն ալ երկար ժամանակ առանց նման հարցեր իր գլխուն մէջ շուռ էր տուեր դեռ վարդապետանալու վերջնական խօսքը տալէն առաջ։

Գետակը ժայռերուն մէջ ջրվէժ մը կազմեր էր, որ ահագին շառաչով կը խուժէր վար ու իր մէջքի ճերմակ գոգնոցէն բուռով փրփուր կը ցանցընէր շուրջը։

Տղան կեցաւ ու պիշ հայեացքով սկսաւ նայել. յանկարծ սթափեցաւ, անդրադարձաւ իր ցրուած վիճակին վրայ ու տեսակ մը զայրոյթ զգաց իր այդ ընկճուած տրամադրութենէն։

«Բաւական է, որ ես իմ ըրածս գիտեմ—մտածեց—բաւական է, որ ինքս գնահատեմ իմ վարմունքս. ինծի՞ ինչ ուրիշներուն դատողութիւնները. արդէն ո՞ր գործի վերաբերմամբ ժամանակակիցներու կարծիքը շիտակ է եղեր. է՞, արժէ՞ զլուխ ցաւցընել։»

Եւ մտածումները բռնի ընդհատելով՝ վազեց ձորէն վեր, ելաւ ոտքի նեղ ճամբան, որ ձորի լանջէն ժայռերու ու ծառերու մէջէն ետ դէպի վանք կը տանէր։

Արևը արդէն եկեր էր ու ձորի աջ շրթունքէն ներս սահելով՝ գիմացի չեչոտ ու խոժոր ժայռերու ճակտին իր բարի-լոյսի համբոյրը կու տար։

Տղան վանքէն մօտեցեր էր բոլորովին, երբ իր դէմը քանի մը տասնեակ քայլ հեռու նշմարեց օրիորդ Մելինեանը։

Աղջիկը նստած էր խոշոր քարի մը վրայ ոտքը ոտքին նետած, ճանապարհին գրեթէ կից. և իր քովի թեք ու քիչ մը աւելի բարձր ժայռին վրայ գիրք մը դրած կը կարդար։ Այսինքն գիրքը բաց էր իր առջևը ու գիրքը կարդացողի մը գիրքն էր, բայց իր աչքերը գրքին վրայէն սահեր ինկեր էին վարը գետի փրփուրուն եռմանը, ուրկէ ախորժ ժխոր մը իր մտածումները կ'օրօրէր։

Սիրաքեանի առաջին ըրածը ետ դառնալու շարժում մը եղաւ. դժկամութիւն մը կ'ըզգար այլ ևս այդ մարդոց հանդիպե-

լէն. ամենքն ալ կարեկցութեան ժպիտ մը ունէին կարծես իրենց շրթունքներուն ու այնպէս բարձրէն նայել մը։

Է՛, ինչ յիմար բան էր. ինքը եկեր էր այդ լեռներուն մէջ վէճէ ու աղմուկէ կտրուած քանի մը օր առանձին բնութիւնը վայելելու. և ահա այդ անմեղ հաճոյքն ալ չէին ուզեր իրեն տալ։

Բայց ետ դառնալը անհնար էր. աղջիկը անշուշտ պիտի նկատէր. և վերջապէս ուրիշ ճամբայ ալ չի կար. ձորի մէջէն նորէն երկար պտոյտ ընելը անիմաստ էր։

«Բարև մը կու տամ ու կ'անցնեմ» վճռեց ու քայլերը արագացուց։

—Բարև՛ ձեզի, օրիորդ։

—Օ՛, բարև՛. դուք էք. պարոն. այս ուրկէ կու գաք այսպէս կանուխ։ Ու ելաւ ոտքի։

—Ձորի մէջ փոքրիկ պտոյտ մը. հիանալի թարմ օդ է, կազդուրիչ ու առողջարար։

—Աշխարհքը սկսել է փոխուիլ. ժպտեցաւ աղջիկը երկու ձեռքը կարճ մազերուն մէջ խրելով։ Հիմա հոգևորականները երևի սկսեր են աւելի առողջապահութեան մասին մտածելու, քան աշխարհականներս։

—Ինչու չէ. պատասխանեց տղան չոր։

—Իսկ ես, տեսէք, նստեր կ'աշխատիմ. այսինքն պէտք է, որ աշխատիմ. աւելցուց դժգոհութեամբ։

—Այդչափ ստիպողական. կարդացածնիդ ինչ է որ։

—Խնդրեմ, եթէ կը հետաքրքրուիք։

Ու գիրքը տղուն մեկնեց։

Վարդապետացուն առաւ գիրքը ու բացաւ առաջին պատահած երեսը. ունելիի նման երկար ու կեռ գործիքի մը նկարն էր. բան չի հասկըցաւ ու նոր երես մը դարձուց. բայց հազիւ պատկերը նշմարեր էր, որ ամբողջ դէմքով կարմրեցաւ ու արագ թուղթը շուռ տուաւ։

Աղջիկը ձեռքերը մէջքին կեցեր էր անշարժ։

Երիտասարդը նայեցաւ գրքին ճակատը. «Ծննդաբերական օգնութիւն»։

—Դուք բժշկութիւն կ'ուսանիք. հարցուց վերջապէս։

—Դժբաղդաբար ոչ. եղաւ աղջկան հառաչի մը նմանող պատասխանը։ Մանկաբարձուհի եմ միայն. այսինքն կը պատրաստուիմ լինելու։

—Ո՞ւր։

—Թիֆլիս։ Կը զարմանաք չէ՞, որ քսան-քսանըմէկ տարեկան աղջիկ մը սիֆիլիսի նշաններով և չգիտեմ—ինչերով իր ուղեղը կ'ըզբաղեցընէ. այնպէս, չէ՞։ Եա՛, դուք միշտ զբաղուած էք բարոյական, հոգեբանական ու աստուածաբանական բարձր պրոբլեմներով. մի՛շտ վերերը. մե՛նք, կը տեսնէք, համեստ ենք. մի՛շտ ցածը. հիւանդութիւններու, աղտոտութիւններուն ու տառապանքներուն մէջ։

Աղջիկը կը քոքէթանար իր արեւոտովը։

—Հապա՛, վարդապետութեան չի նմանիր. բուրվառ տալով ու աղօթք ընելով չի վերջանար. պէտք է աշխատել ու չարչարուել. վերջացուց յանկարծ լուրջ զարկով մը և բոլորովին անսպասելի կերպով ռուսերէն. կարծես դիմացինը բոլորովին շւարեցընելու համար։

Բայց տղան հանդարտ, ու մաքուր ռուսական արտասանութեամբ պատասխանեց ինքն ալ ռուսերէն.

—Կը զարմանամ, օրիորդ. ինչպէս կրնաք այդպէս արհամարանքով խօսիլ ուրիշի մը գործի մասին, որ մանկաբարձուհիի մը համար միայն այնքան ծանօթ է, որքան վարդապետի մը համար «Ծննդաբերութեան օգնութիւնները»։

Աղջիկը նորէն ժպտեցաւ. բայց այդ բոլորովին ուրիշ ժպիտ էր արդէն. այդ համարձակ լուրջ-կատակը աղջկան վրայ տարօրինակ տպաւորութիւն մը ըրաւ. և մանաւանդ այդ վարժ ռուսերէնը. տղան յանկարծ կարծես ուրիշ գոյն մը առաւ իր այդ ռուսերէնովը։

Ու ալ խօսակցութիւնը շարունակուեցաւ ռուսերէն։

—Ո՛չ, ըսենք այդ բոլորովին շիտակ չէ. ես եկեղեցի ալ շատ եմ եղած, գոնէ մանկութեանս. և վերջապէս դուրսն ալ հոգևորականներ միշտ կարելի է տեսնել ու անոնց մասին լսել, թէև ի հարկէ այնքան ալ հետաքրքիր չեմ եղած իրենցմով։ Մինչդեռ դուք ոչ թէ իմ արհեստիս, այլ նոյն իսկ մարդու ու իր ֆիզիկական կազմի մասին շնորհքով տեղեկութիւն չէք կրնար ունենար, երբ ամբողջ

ձեր կրթութիւնը տարիներով վերացական խնդիրներու ու կրօնի դասերու շուրջն է դարձեր։ Ձեր համեմատութիւնը ճիշտ չէ։

—Դէ, կը տեսնէք, օրիորդ, ինչ ըսել է առանց գործին ծանօթ լինելու խօսիլը։ Նախ դպրոցը կրօնի դասերը միայն քանի մը ժամ է. և որոնք, փակագծի մէջ ըսած, ինծի ոչ հետաքրքրած են ոչ ալ զբաղեցուցած. իսկ ընդհակառակը ձեր բնական գիտութիւնները ես միշտ սիրած եմ ու ձեր կասկածածէն ալ քիչ մը աւելի ծանօթ. մասնաւորապէս կենդանաբանութիւնը ու բիոլոգին։ Մի կարծէք, թէ միայն ձեզի է ծանօթ Դարուինի, Սպենսէրի ու Հիւքսլէյի երկերը։

Աղջիկը սեղմեած շրթունքներով ու աչքերը լայն բացած խոսակցին կը նայէր. բոլորովին զարմացած։ Հիւքսլէյէն միայն փոքր գրքոյկ մը կարդացած էր. Սպենսէրի մէկ աշխատութեան բովանդակութիւնը լոկ յայտնի էր իրեն ամսագրի մը դրախօսութենէն, իսկ Դարվինի անունը, թէև շատ լաւ գիտէր, բայց բնաւ ծանօթ չէր մտքէն։

Ու կարճ լռութիւն մը, որը ընդհատողը աղջիկը եղաւ.

—Այն ատեն ես բոլորովին կը զարմանամ. ուրեմն ինչպէս կը նայք դուք այդ բոլորին հետ հաշտեցընել կրօնական մանր ու մեծ նախապաշարումները, ինչպէս կրնաք դուք այդ բոլոր պաշտամունքներուն ու ծէսերուն հաւատալ։

—Եւ ձեզի ո՞վ ըսաւ, որ այդ ամէնքին ես կը հաւատամ։

—Բայց չէ՞ որ վարդապետ դառնալ կ'ուզէք, չէ՞ որ ամէն օր պիտի կրկնէք նոյն աղօթքները, սաղմոսները, և ալ ինչ գիտնամ. և այն ալ հանդիսապէս, բոլորի ներկայութեան, կատարեալ ջերմեռանդութեամբ։

Տղան գլուխը կախ՝ քիչ մը մտածեց.

—Ի՞նչ կարելի է ընել. ամէն գործ և իր մեքենական մասը ունի. գործի լաւ մասին ու նպատակին համար պէտք է յարմարիլ և իր անախորժ կողմերուն։

—Բայց, պարո՛ն, ես ճշմարիտ ձեզի չեմ հասկընար. ամէն օր ահագին բազմութեան առջև արտաքուստ կատարեալ լրջութեամբ անթիւ խօսքեր, դարձբլուածներ ու արարողութիւններ կատարել, բազմութիւնը ձեզի հետ միասին նոյնը կրկնել տալ, և նոյն միջո-

ցին ձեր գլխուն մէջ անոնց վրայ գուցէ խնդալ, չէ՞ որ պարզապէս այդ խաբէութիւն է. այդ կեղծ դերասանութեան հետ ինչպէս կըրնայ մարդ հաշտիր, և այն ալ իր ամբողջ կեանքի ընթացքին։ Ո՛չ, պարոն, չի վշտանաք, բայց այդ ազնիւ բան չէ. ճիգ-ի-թիւթիւն է այդ։

Ու երիտասարդը սուր խայթ մը զգաց այդ բառէն. այս երկրորդ անգամն էր, որ այդ անունը իր երեսին կը նետէին։

Մինչ աղջիկը շարունակեց.

—Բարի, ազնիւ ու հաւատքով և դիցուք նոյն իսկ անկիրթ ու տգէտ հոգևորականը ես չեմ կրնար չի յարգեր. ան իր ըսածին ու ըրածին համոզուած է. երբեմն մինչև մոլեռանդութեան աստիճան, ու մարդ ակամայ կը պատկառի զգացումի այդ ուժին առջև. բայց այդպէս, ինչպէս որ դուք կ'ըսէք...

—Սակայն, օրիորդ, առանց այդ ծէսերու անկարելի է հոգևորական երևակայել. իմ կամքէս կախուած չէ ուզած մասս ընտրել, չուզածս անդին նետել. այն ատեն պէտք է բոլորովին հեռանալ։

—Հեռացէք. գործ է պակաս. ո՞վ է ձեզի ստիպողը, որ անպատճառ հոգևորական դառնաք։

—Իմ հաւատքս, որ այդ մեր ժամանակի ու պայմաններուն մէջ ամենէն շիտակ ու ամենէն յարմար ճամբան է ժողովուրդին ծառայելու։

—Ա՛խ, ժողովուրդին ծառայելու դեռ ուրիշ շատ շատ ճամ. բաներ կան. և հաւատացէք դեռ շատ աւելի լայն, անկախ, հրապուրիչ ու պատուաւոր. է, մարդ միայն գիտաւորութիւն ունենայ կամք և ուժ. ուրիշ ոչինչ։

—Կը սխալիք, օրիորդ. խնդիրը այն է, որ հոգևորականի մը դիւրութիւններն ու առաւելութիւնները հիմա մեզի համար ուրիշ ոչ մէկ պաշտոն չունի ժողովուրդին մէջ խրելու, ազդելու, անոր վէրքերը մօտէն շօշափելու և բուժելու համար։

—Ա՛յ, եթէ ձեր միտքը ժողովուրդի վէրքերը շօշափելն ու բուժելն է՝ ես ձեզի ամենէն կարճ ճամբան ցոյց տամ. ճամբայ մը, որ գիտութիւններուն վրայէն կ'երթայ, և ոչ թէ ժողովուրդի նախապաշարումներուն կրթընելով։ Վէրքեր բուժել կ'ուզէք. լաւ. ըսէք թէ բնական գիտութիւնները մանաւորապէս կը սիրէք. վարժ

ալ ռուսերէն կը խօսիք ահա. գացէք քանի մը տարի Ռուսաստան, սովրեցէք բժշկութիւն, դարձէք ու խրատեցէք ժողովուրդին մէջ. և բժշկեցէք ինչքան վէրքեր որ կ'ուզէք։

—Իմ խօսքս հիւանդի վէրքերուն մասին չէր. նկատեց տղան միամտօրէն ժպտելով։

Ժպտեցաւ և աղջիկը։

—Այդչափը կը հասկընամ. բայց միթէ գէշ է ձեր ըսած հիւանդութիւններուն հետ և մարմնական հիւանդութիւններ բժշկել. վերջապէս բոլոր բարոյական հիւանդութիւնները ֆիզիկական ու ոնտեսական հիւանդութիւններու զուգահեռականներն են միայն. դեռ անցած օր հիանալի յօդուած մը կը կարդայի այդ խնդրին վերաբերմամբ։ Եւ մի մոռնաք, որ բժիշկը անխտիր ամէն տեղ յարգ ունի, մուսաք ու դիրք. և մանաւանդ բացարձակապէս անկախ է թէ մտաւոր, թէ բարոյական և թէ դրամական տեսակէտէն. իհարկէ, եթէ բանի մը նման է։

—Է՛, աղէկ, օրիորդ. եթէ այդչափ յափշտակուած էք բժշկութեամբ, ինչու ինքներդ ուղղակի բժշկութեան չէք հետևած. կարծեմ այդ ասպարէզը շատ աւելի լայն պիտի լինի, քան ձեր ընտրած մանկաբարձութիւնը. հարցուց երիտասարդը դիտմամբ խօսքի ուղղութիւնը ծռելով։

—Ա՛խ, իմ պայմաններս ուրիշ են։ Եթէ գիտնաք, պարոն, ինչ առաւելութիւն ունիք ձեռքերնիդ. թևերնիդ ազատ. կը հետևիք ինչի որ կը ցանկաք։

—Սակայն ձեզի կապողը ինչն է. դուցէ կին լինելնիդ կ'ակնարկէք։

—Իհարկէ այդ ալ դժուարութիւններ կը հանէ առջևս. բայց միայն եթէ այդ լինէր՝ նորէն կարելի էր գուցէ կերպ մը տակէն ելնել։ Ամենաէականը ընտանեկան պայմաններս են. ինծմէ փոքր չորս քոյր ու եղբայր ունիմ, և երկու տարի կայ մեռաւ հայրս. պէտք է հնար եղածին չափ շուտով անկախ դառնալ մօրս վրայէն բեռ մը պակսեցնելու և կարելի եղածին չափ իրեն օգնելու համար. պէտք է այդ փոքրիկները մեծցընել, կրթութիւն տալ. դիւրին բան չէ։ Հիմա կ'ըմբռնէք, որ ընդարձակ ծրագիրներու մասին մտածելու ոչ ժամանակ ունիմ ոչ միջոց. թէ չէ այդ ծրագիրները ես ալ

եմ ունեցած. Է, իմ բաղդէս է. հայրս մեռնելու չէր. ինչ և է։ Հապա, հապա, բարեկամ, աշխարհի կեանքը վանքի չորս պատերուն չի նմանիր, հոս ոչինչ չի կայ պատրաստ ու ձրի. նոյն իսկ ապրուստի տարրական անհրաժեշտ պէտքերու համար պիտի կռուիլ, պիտի կռուիլ շարունակ. ծրագիրներ, բաղձանքներ բոլորը մէկդի դնելով։

Տղան անթարթ խօսակցի շարժուն դիմագծերուն կը նայէր, մինչդեռ տարօրինակ զգացում մը իր մէջն էր սպրդեր. կարծես սկսաւ ամրշնալ։

«Ահա ուր է անձնազոհութիւնը—կը մտածէր ակամայ—ես և ան»։

—Բայց ըսէք, խնդրեմ, այդ ի՞նչպէս է, որ դուք այդպէս մաքուր ռուսերէն կը խօսիք· կրօնաւորներու մէջ խիստ հազուագիւտ բան է այդ. հարցուց յանկարծ աղջիկը իր հետաքրքրութիւնը այլևս զսպել չկարողանալով։

—Ես Խրիմցի եմ, օրիորդ. բացի այդ դպրոցը ռուսերէն շատ եմ կարդացած. ռուսական գրականութեան գրէթէ բոլոր յայտնի երկերը. և թարգմանութիւններ ինքնին հասկընալի է։

—Եւ բանաստեղծութիւններ, և ռոմանն. հարցուց աղջիկը կանացի փորփրող հետաքրքրութեամբ։

—Այո. բայց իհարկէ անոնք, որոնք գրական արժէք մը ունին։

—Կամ վարդապետներու մասին ես չափազանց սխալ գաղափար ունիմ, կամ դուք շատ տարօրինակ վարդապետացու էք. պատասխանեց աղջիկը վարանոտ շեշտով մը։

—Զգիտեմ. ինչպէս որ կ'ուզէք։

Ու երիտասարդը գլխարկը ուղղեց ինքնաբաւական. ակընթարթ մը լռութիւն. վերջը աւելցուց.

—Դէ, օրիորդ, ներեցէք. ձեր ընթերցումը խանգարեցի. ցտեսութիւն։

—Ա՛խ, ոչինչ. ընդհակառակը, ես շատ ուրախ եմ. ցտեսութիւն։

Ու ձեռքը մեկնեց տղուն։

Երիտասարդը թոթուեց, ու դէպի վանք ուղղուեցաւ։

Դ.

Մութը սկսէր էր կծիկը ձորին վրայ փաթթելու, որ Սիրաքեան ամբողջ օրուան թափառելէն յոգնած՝ վերադարձաւ ետ ու շիտակ մտաւ վանահօր սենեակը։

Նոյն միջոցին տնտեսուհին — երեսունը անց տգեղ ու խոշոր կին մը ամուր ու փայտէ կազմուածքով — մէկ ծունկի վրայ գետինը չոքած՝ սամավարէն ջուր քաշելով էր զբաղուած. իսկ վարդապետը անոր գլխուն վրայ ծռած՝ ձեռքը կնոջ թուշին բան մը ըսելու վրայ էր, որ սենեակին դուռը ետեւէն ճռընչեց։

Հայր-սուրբը իսկոյն շտկուեցաւ, արագ դուրս քաշեց գօտիէն ահագին կապոյտ թաշկինակը ու սկսաւ պինդ-պինդ հազալ որքան իր թոքերը կը ներէին։

—Ատուած օգնական, հայր-սուրբ. բարեւեց տղան ոչինչ չի տեսնել ձեւացընելով։

—Դո՞ւ ես, տիրացո՛ւ. ո՞ւր էիր, տեսնե՞նք, ամբողջ օրը։

—Ա՛, հայր սուրբ, այնպէս յոգնած եմ ու անօթի։

—Դէ՛, նստէ, տղա՛ս, հանգստացիր։ Եղսո՛, մեզի շուտով մէյ-մէկ բաժին թէյ տուր, ու տիրացուին գնա՛ քիչ մը մածուն ու ձու բեր։

Երկու ճաթռատած ու տարբեր ձեւի բաժակներով թէյը արդէն փայտէ անծածկ սեղանի վրայ էր։ Վարդապետը նստեցաւ լայն տախտի ծայրին, իսկ վարդապետացուն դիմացը կոշտ ու խոշոր աթոռին վրայ։

Խօսքը զկիզբը Խծկոնքի մասին էր, վերջը դարձաւ Սիրաքեանի ու իր ընկերներուն վրայ։

—Իհարկէ, այդպէս շատ լաւ է ուսումնառած հոգեւորականներ՝ վրայ բերաւ վարդապետը թէյի բաժակը շրթունքներէն չի հեռացընելով։ Բայց, գիտէս, միայն ուսումը բանի պէտք չէ. քիչ մը խորամանկութիւն ունենալու է և մեծաւորներուն կողքը մտնելու շնորքը. թէ չէ ոչինչ դուրս չի գար. տասը տարի սարկաւագ կը պահեն. վերջն ալ երբ մազերդ ճերմկին կը շինեն վարդապետ ու կ՚ուղարկեն փլած վանք մը։

Վարդապետացուն ոչինչ չասուարկեց։

—Ա՛յ, իմ ընկեր սարկաւագները հիմա բոլորն ալ կամ եպիսկոպոս են, կամ առաջնորդ, մէկը նոյն իսկ Սինոդի անդամ

Ինչու. կը կարծես ես ամէնէն վատն էի մէջներնին. ա, եթէ գիտնաս ինչ դդում-գլուխներ էին. մանաւանդ մէկը. և ճիշտ այդ մէկը հիմա N թեմի առաջնորդն է. որովհետև իր հաշիւը գիտցաւ մարդը. իսկոյն մնաւ եպիսկոպոսի մը փեշերուն տակը. իւղոտ պաշտօններ ձեռք անցուց. առաջ մառանապետ էր, ետքը չգիտեմ ինչ կապալի գործերն էր իր վրան, վերջերն ալ կարծեմ հաշուի մատեաններուն մէջ մատ ունէր. կարճ խօսքով քիչ-քիչ իւղոտեցաւ. և անգամ մը որ ստակը կայ՝ ալ ամէն բան կայ։ Հապա. միայն ես էի մէջերնին էշը. ջահիլութիւն, ինչ ըրած. ով կ'ըսէր ինծի ուրիշներու գործերուն խառնիմ. ճիշտ խօսողի գրպանը ծակ կը լինի. ինծի սկսան ետ-ետ ձգել, ես աւելի կատղեցայ ու բերնիս կապը բոլորովին քակեցի. սկսայ ամէնքի երեսին ըսել ինչ որ ճըշմարիտ էր. թէ անառակ, գող, կաշառակեր, լիրբ մարդիկ էին. ետեւէ ելայ, մէկ-երկուքի գողութիւնը բռնեցի. Աբրահամ եպիսկոպոսի սենեակէն աղջիկը դուրս քաշեցինք. ահագին խայտառակութիւն դուրս եկաւ. բայց այդ պատմութիւնը ինծի ալ սուղի նըստեցաւ. «գիժ սարկաւարգը» բռնեցին շտապ շինեցին վարդապետ ու խրկեցին հոս, այս աշխարհքի անմարդ ծայրը. դէ, նստէ ու մեղքերդ քաւէ. հապա, տիրացու ջան։

Երիտասարդը հեռաքրքրութեամբ կը լսէր, թէև այդ պատմութիւնը ինքնին իրեն համար ոչինչ նորութիւն չունէր։

—Որդիս, այս ականջիդ օղ շինէ. եթէ առաջ երթալ կ'ուզես մէկ մեծաւորներուդ խունկ ծխէ, մէկ ալ նայէ ինչ ճամբով ալ լինի շուտով գրպաններդ իւղոտես. այ, իմ այս չոլերուն մէջ ճերմկած մօրուքս քեզի խրատ։

—Է՛, հայր-սուրբ, առաջ երթալու աւելի ազնիւ ճամբաներ ալ կան։ Իհարկէ, խելացիութիւն չէ մեծերու թշնամութիւնը աւելորդ տեղը գրգռելը, ինչ արժէ անկարելի բաներու դէմ կուելը. անոնք կը թողնենք իրենց հալին. իսկ մենք նորերս կ'աշխատենք աւելի ազնիւ լինելու ու գործունեայ. տասը-տասներկու տարիէն չէ որ մեծաւորները մենք ենք լինելու։

—Է՛, կը կարծես դուք եղածներէն աղէկ էք լինելու. այդ երիտասարդութիւն է, որդիս. ես ալ այդպէս կը մտածէի։ Վանքի կեանքը իր առանձին ճամբան ունի. ամենքն ալ անպատճառ այդ

ճամբով պիտի երթան. ով այդ ճամբէն ծռել ուզէ, անոր բոլորը միասին քացի կու տան ու մէկ կողմը կը նետեն։

—Զէ, հայր-սուրբ, գիտէք, ժամանակները սկսած են փոխուիլ. և մէկ ալ հիմա կրթուած կրօնաւոր մը առանց այլևայլութեան բռնել մէկդի նետելը դժուար խնդիր է։

—Երեք ամիսի չափ առաջ ես Էջմիածին էի, որ Սիմօն վարդապետին Խոր-վիրապ ուղարկեցին. ահա քեզի ուսում առած վարդապետ. իսկ անցած օր լսեցի, որ Աշոտ եպիսկոպոսն ալ Ֆիշնև են ուղարկեր, թէ ուր. այդ չէ՞ ձեր ամենէն ուսումնականը։

Երիտասարդի մէջէն տարօրինակ զգացում մը անցաւ յանկարծ. ետ քաշուեցաւ սեղանէն ու մտախոյզ կրթընեցաւ իր աթոռի խարխուլ թիկունքին։

Այդ Սիմոնն ու Աշոտը գործերէ հեռացընելու համար ամէն ճիգ թափողը բնաւ հին գլխու մարդիկը չէին եղած, այլ իրենք. այսինքն կրթուած նոր սերունդը, որոնց մէջ ինքն ալ շուտով մրտնելու էր։ Եւ չէ՞ ինքն ալ էր ուրախացեր այն ժամանակ իրեններու յաջողութեանը. բայց ինչո՞ւ այդ հալածանքը։

Վարդապետացուի մտքին առջևէն կարծես սկսաւ բան մը ետ ետ քաշուել, ու երիտասարդը սկսաւ անսովոր պայծառ գոյնով մը եղելութիւնները տեսնել։ Նախ անձնական մէկ-երկու հաշիւներ կային, որուն ինքն ալ, իր ընկերներն ալ շատ ազէկ տեղեակ էին. և եկրորդ այն, որ այդ մարդիկը աւելի անկախ ու աւելի ազատ շարժուելու վարժած էին, իրենց շրջապատողներուն մէջէն իրենց կամքի ու խելքի ուժովը աչքի կ'իյնային, և իրենց ազդեցիկ դիրքին մէջ հպարտ՝ միւսներուն շատ ականջ կախելու տրամադիր չէին։ Իսկ այդ «միւսները» կը նախանձէին իհարկէ. նախանձ, զայրոյթ, ինտրիգներ, ու ահա աքացեր էին վանքէն դուրս միայնակ ու անգործ անկիւն մը. ճիշտ ինչպէս որ հիները կ'ընէին իրենց հաշիւներուն ու ընդհանուր հոսանքին կատարելապէս չյարմարուողներուն։

«Վանքի կեանքը իր ճամբան ունի. ամենքն ալ անպատճառ այդ ճամբէն պիտի երթան». արդեօք ծերուկը իրաւունք ունէր։

Տղու մտածումներր ընդհատեց սնտեսուհին, որ պղինձէ ամանով մը ուտելիքները բերաւ ու անոր առջևը դրաւ։

Վանահայրը կը շարունակէր դեռ իր պատմութիւնները. իր

քաջագործութիւններէն, յայտնութիւններէն, այս ինչ ու այն ինչ եպիսկոպոսի կեանքէն։

Սենեակը թաղուած էր արդէն բոլորովին խոր խաւարի մէջ. բայց պատուհաններէն ախորժ ճռինչ մը կը լուէր հեռուէն ու գեղակի իրարանցումը վարէն։

Երիտասարդը հազիւ էր իր ընթրիքէն ետ քաշուեր երբ վարդապետի ծառան, դպիրն ու ժամկոչը միանգամայն ներկայացնող տղան՝ մտաւ վանքի բակը և, մօտենալով ցած պատուհանին, յայտնեց, որ «մեծ աղան» պարոնը կը կանչէր։

Վարդապետացուն անսովոր յուզում մը ունեցաւ. տարօրինակ խառնուրդ մը դժգոհութեան ու տարտամ թեթեւ հաճոյքի մը. դժգոհութիւն, երևի, այդ մարդուն կրկին հանդիպելէն. բայց այդ ախորժի զգացումը ուրկէ՞ էր։

Երբ Քանեաններու սեմէն ներս մտաւ, գտաւ նորէն նոյն մաքուր ճերմակ փոքրիկ սեղանը սենեակին մէջտեղը, ու նոյն ցոլցը-լուն սամավարն ալ վրան. և անոնք ալ սեղանին շուրջը։

—Բարև՛ ձեզի. ըսաւ տղան ընդհանուր կերպով՝ ձեռքը իր դէմը եկող պարոն Քանեանին մեկնելով։

—Մենք կարծեցինք որ ինքներդ պիտի գաք, սա՛յն տեսնելով որ շատ ուշացաք՝ ծառան ուղարկեցինք. բացատրեց Քանեան սիրալիր առնով մը։

—Ա՛խ, շատ շնորհակալ եմ։

Ու երկու կիներուն ձեռք տուաւ։

—Նստեցէք, խնդրեմ. առաջարկեց տիկինը՝ մատնանիշ ընելով իր ամուսնի ու քրոջը մէջտեղի աթոռը։

—Նո՛ւ, ի՞նչ եղրակացութեան եկաք իմ այս օրուան առաջարկիս մասին. հարցուց Նուշանիկ խնդալով։

—Ի՞նչ առաջարկ. զարմացաւ տղան բոլորովին շւարած։

—Ձեր մասնագիտութեան փոքրիկ փոփոխութեան մասին ինչ որ ըսի։

—Հա՛, այս առտու ամբողջ ժամ մը քենիս պրոպագանդ է ըրած յօդուտ բժշկութեան, ինչպէս լսեցի. աւելցուց պարոնը։

—Ա՛խ, և այնպէս յաջող, որ եթէ հոգևորական չլինէի՝ անշուշտ բժիշկ դառնալ պիտի ցանկայի. իր կողմէն կատակել ուզեց Սիրաքեան։

—Վա՜յ. ըրաւ աղջիկը տղուն թեթեւ խոնարհութիւն մը ընելով։

—Թէյը կաթով կը խմէք, թէ...

—Շատ շնորհակալ եմ, տիկին. ես խմած եմ արդէն հայրսուրբի մօտ։

—Չէ՞ ինչ. բացականչեց Քանեան դժգոհ, և խսկոյն աւելցուց.

Եւ գիտէք ինչ. տիկինս կը խնդրէ, որ քանի հոս էք՝ ամէն իրիկուն մեզի գաք թէյի, առանց ձևականութիւններու. անշուշտ չէք մերժիր։

—Սրտանց շնորհակալ եմ. ճշմարիտ... շարեցաւ տղան։

Այս բոլորը տղուն վրայ քաշող, փայփայող ազդեցութիւն մը կ՚ընէր. կ՚ըզգար, որ իր մասին խօսք էր դարձած այս տան մէջ, և որ անոնց վրայ նպաստաւոր տպաւորութիւն ըրած էր։

—Է՛, ինչ ըրիք, նայինք, այսօր ամբողջ օրը։

—Շարունակ թափառեր եմ. ձորի մէջը, վրան, շուրջը, բոլորովին ուժասպառ էի, որ վերադարձայ։

—Ես ձեզի տեսայ այսօր. մէջ նեռւեցաւ աղջիկը։ Կէս օրի մօտերն էր. վարը՝ գետի ափն էի. դուք հեռուն ժայռերուն մէջէն վեր կ՚ելնէիք։

—Այո՛. Ագարակ գիւղը գացի. անշուշտ եղած էք արդէն։

—Ա՛խ, ո՛չ. տրանջաց աղջիկը։ Դուք, տեսէք, օր մըն է հոս էք, արդէն ահագին տեղ շրջեցաք. մենք երկու շաբաթէն աւելի է հոս նստեր ենք. ու ձորէն վար ջաղացէն անդին անցած չեմ դեռ, դէպի վեր ալ մինչև ծծումբի բաղնիքը. քոյրս երեխայէն բաժնուիլ չի կրնար. իսկ Քոլիային արդելուած է շատ լարուած քալելը, մանաւանդ այսպէս դժոխքի ճամբաներուն մէջ։

—Դէ՛, տրանջալդ աւելորդ է. ամբողջ օրը դուրսն ես. նկատեց քոյրը։

—Դուրսը. շարունակ տան չորս կողմը։ Ա՛, եկէք գիտնաք, պարոն Սիրաքեան, ինչպէս նախանձեցայ այսօր ձեզի. ձեր գլխուն, ազատ, անհոգ, ժայռերուն մէջէն գաւազաննիդ քարերուն զարնելով կը բարձրանայիք։ Կ՚երթաք կը հեռանաք ինչպէս որ կ՚ուզէք։ Վերէն տեսարանն ալ շատ սիրուն է լինելու ձորի բերնէն։

—Այո՛, հիանալի է. մանաւանդ իրիկուան դէմ։

—Դէ, եթէ այդչափ կը ցանկաս՝ ելիր անգամ մը պարոնի հետ միասին գնա. նկատեց Քանեան։

Աղջիկը երիտասարդին նայեցաւ։

Սիրաքեան չէր հասկընար, թէ իրեն հետ ինչ կը դառնար։ Նախ թեթև մը կարմրեցաւ, և վերջը իբրև քաղաքավարութեան պարագ մը համարեց կրկնելը.

—Եթէ կը ցանկաք, օրիորդ, խնդրեմ։

—Շնորհակալ եմ. օ, շատ գալանտ վարդապետացու էք։ Բայց մի՛ վախնաք, ես ձեզի շատ ծանրութիւն չեմ պատճառեր. քալելու ալ վարժուած եմ, շատ ալ քնքուշ չեմ։ Ուրեմն վաղը ճաշէն վերջը, այո՞։ Ճաշէն առաջ չեմ կրնար. թէ կարդալու գործ ունիմ և թէ առունը զբաղուած։

—Ինչպէս որ կը կամենաք, օրիորդ. ճաշէն վերջը կ'երթանք։

Խօսքը դարձաւ պարոն Քանեանի զբաղումներուն վրայ. ու դուրս եկաւ, որ պարոնը իր այս պաշտօնէ ազատ օրերէն օգտուելով այժմ ձեռնարկած է երկար ժամանակէ ի վեր արդէն մտադրուած աշխատութեանը. սկսած է թարգմանելու ռուսաց օրէնագրքի այն մասերը, որոնք անմիջապէս կապ ունին ժողովուրդի առօրեայ կեանքին հետ, ու հանրամատչելի բացատրութիւններով տպագրութեան տալ կ'ուզէ։ Եւ սկսաւ երկար-բարակ պարզել այդ տեսակ գործի մը անհրաժեշտ պահանջը. թէ ինչ աստիճան անտեղեակ է ժողովուրդը տիրող օրէնքներուն, թէ նոյն իսկ ժողովուրդի գլուխ կեցած մարդիկը որոշ ու հաստատ ոչինչ չգիտեն։ Եւ այս ամէնը այնքան երկար ծամծլմեց, որ Սիրաքեան սկսաւ յոգնութիւն ու ձանձրոյթ զգալ. այնպէս որ իսկապէս սրտանց ուրախացաւ, երբ տիկինը առաջարկեց քիչ մը թուղթ խաղալ ժամանակ անցընելու համար։

Երկար ընտրութենէ վերջը կանգ առին պրեֆերանսի վրայ. տղան ոչ մէկ խաղ շնորհքով չգիտէր. օրիորդը նմանապէս, բացի այդ վերջին խաղէն։

—Սակայն, ճշմարիտ, ես այդ ալ կարգին չգիտեմ. կը ձանձրանաք. նկատեց երիտասարդը։

—Ոչինչ. եկէք. դուք խաղացէք երեքով. ես ալ կ'օգնեմ ձեզի. վրայ բերաւ աղջիկը։

Այդպէս ալ ըրին։

Երեքը յարմարեցան սեղանին երեք կողմը. աղջիկն ալ աթոռը քաշեց տղուն մօտ. մէկ ոտքը գետինը, մէկ ծունկը աթոռին՝ ամբողջ կուրծքովը ինկաւ սեղանին վրայ. ու դէպի տղու բռնած թուղթերը հակած՝ սկսաւ ցոյց տալ, թէ ո՞րը խաղալու էր և ինչո՞ւ։

Սիրաքեան սկսաւ տանել. թուղթերը անսովոր կերպով յաջող կու գային. Քանեան հեռզհեռէ աւելի կը զայրանար և ճիշտ այդ ալ աւելի զարմութիւն կը պատճառէր միւսներուն. դժգոհութենէ ու յաղթանակէ ծնած սրախօսութիւնները իրարու կը յաջորդէին. ու երիտասարդը կը շահէր շարունակ. երեք պարտի իրարու վրայ։ Ուշ էր արդէն, որ վերջ տային։

—Զէ. ձեզի հետ խաղալ կարելի չէ. բաղդի սիրեկանն էք. եղբակացուց Քանեան ձեռքի թուղթերը թափելով։

—Հապա՛, ինչ գիտցար. պատասխանեց Նուշիկ։ Երբ վարգապետ ու մանկաբարձուհի գլուխ գլխի տան՝ ալ անոնց յաղթելը քիչ մը դժուար խնդիր է. չէ՞, պարոն Սիրաքեան։

Ու առողջ ծիծաղ մը բարձրացաւ։

Ջերմ զգացում մը երակներուն մէջ՝ տղան ուղղեցաւ դէպի իր խցիկը։ Ա՛, այնպէս տաք կու գար իրեն այն պայծառ ը սաւորուած փոքրիկ սենեակը, քառակուսի ճերմակ սեղանը մէջտեղը. մէկ անկիւնը լամպը. և իրենք չորսը սեղանին շուրջը. այնպէս զւարթ, այնպէս ընտանի։

Անմիջապէս հանուեցաւ, սահեցաւ անկողինը ու աչքերը պինդ գոցեց. բայց փոխանակ քնանալու՝ սկսաւ այդ իրիկուան բոլոր մանր-մունր դէպքերը իր յիշողութենէն անցընել։ Կը յիշէր ինչպէս աղջիկը չէր թողներ կոզը իջնելու, ինչպէս անդամ մը ուժով բռնեց իր ձեռքէն՝ արգելելով կարմիր բացիլ. ինչպէս իր ուսին ծռած՝ թուղթերը կարգով շարելու կ'օգնէր, պահանջելով որ անպատճառ իր ուզած ձևովը կարգի բերուի նման գոյները իրարու քով ու կարմիրները սևերէն վեր. ինչպէս հնչիւն-հնչիւն կը ծիծաղէր Քանեանի անզօր զայրոյթին վրայ։ Ու կարծես աչքերուն դէմն էր դեռ, ինչպէս ոգևորուած վեր ցատկեց աղջիկը աթոռէն ու սկսաւ ուրախութենէն ծափ տալ, երբ երկրորդ պարտին ալ իրենք էին տարեր։

Այս բոլորը անկարգ կը յաջորդէին իրարու. ու տղան հաճոյքով կը հետեւէր յիշողութիւններու այս ոստոստուն պանորամային։

Բայց յանկարծ սթափեցաւ. ու մոռաբերեց, որ քնանալու էր։

«Երեւի թղթախաղը անվարժ ուղեղս գրգռեց». մտածեց տղան. դարձաւ կողքին վրայ ու մտածումները մէկդի հրելով՝ փորձեց քնանալու։

Բայց իզուր էր այդ կռիւը. քունը գալ չէր ուզեր, իսկ այդ պատկերները երթալ։

Ե.

Ձորի վերին անկիւնը գեաը կը նեղնար։

Եւ մէկ եզերքէն միւսը անցնելու համար ծառի երկայն բունմը ձգեր էին ափէ ափ իբրեւ կամուրջ, որ անմիջապէս կը հանէր փայտորմով պատած ծծումբի փոքրիկ աւազանը։

Եռեւի քարակոյտէն վար ցատկրտող գետակը փայտորմին կը ռնակէն ոլոր կու տար, կը սեղմուէր պահ մը ծառ-կամուրջին տակ, ու անմիջապէս կ'ըշտապէր ցան-ցիր լերկ ժայռերուն մէջ իր փրփուրէ բանուածքը նորէն փռելու։

—Միայն, օրիորդ, զգուշ. ըսաւ Սիրաքեան։ Կամուրջնիս քիչ մը շատ նահապետական է։

—Աւելի աղէկ. բացականչեց աղջիկը, վազեց թափով բունին, վրայէն ու բաղնիքին ոտքը կանգ առաւ։

—Դէ, ալ ուժերնիդ ժողուեցէք. ալ բարձրանանք պիտի շարունակ. նկատեց տղան՝ քարքարոտ ու բաւական սեպ ելքը մատնանիշ ընելով։

—Եւ դեռ այս համեմատաբար հանգիստ մասն է. աւելցուց իսկոյն։ Ձեզի առաջնորդնէ ըսեմ, որ այս մեր երէկուան Տիկոր իջնելը չի նմանիր. քիչ մը ոստոստէք պիտի քարէ քար։

—Ա՛խ, դուք ձեր քարերովը ինծի չէք վախցներ։ Մարշ։

Ու քով քովի սկսան ելնել։

Կէս օրէն վերջն էր։ Քանի ժամ է՝ արեւը պինդ մտեր էր ամպերու կարանի մը ետեւը և ոչ մէկ կերպ նորէն դուրս ելնելու տրամադրութիւն չէր ցոյց տար։ Որով առուան ախորժելի թարմութիւն մը կարծես դեռ կրցեր էր պահպանել մամռոտ ժայռերուն մէջ։

Հսկայ ու թզուկ ժայռերու ամբողջ ամբոխ մը էր արդէն շուրջը, որոնք իրենց գիրքերուն մէջ անշարժ՝ իրարու ուսէ՝ յառած ու ծամածուռ դէմքերով վար կը նայէին լուռ. հոն ձորին մէջի ալիքներուն կըզբաղուքը դիտելու, որ ոչ վերջ ունէր, ոչ դադրում։

Եւ այդ խռնած հոծ բազմութեան մէջէն ոտքի նեղ արահետը դժուարով իրեն ճամբայ կը բանար՝ շարունակ ծռելով, կըտրըւելով, կոր տալով ինքն իր վրայ։

Այլ ևս զոյգ երթալ հնար չէր։ Յարմար ելքը ընկերուհիին թողած՝ տղան մէկ եռ կը մնար, մէկ քովի քարերուն վրայէն կը ցատկէր։

Սկիզբները դեռ կը խօսէին տաք-տաք. բայց վերելքի պատճառած շնչառութեան դժուարութիւնը շուտով կտրեց անոնց խօսակցութիւնը վերջնականապէս. հազիւ մէջէ-մէջ շնչատ բառ մը կը փոխանակէին իրարու հետ. անկապ ու փրթած կտոր մը՝ իրենց մտածումներուն։

Այս երրորդ օրն էր, աղջիկն ու տղան միասին պտոյտի կելնէին։ Առաջին անգամ ամբողջ ձորի երկայնքով շրջան մը էին ըրած վանքի տակէն։ Նախորդ օրն ալ եղած էին Տիկոր գիւղը, ուր օրիորդը անօթեցեր էր. տղան տունէ մը ճարեր էր լաւաշ ու պանիր ու պարէզի պէս տեղ մը ծառի մը տակ նստեր կերեր էին միասին. վերջը շրջեր էին գիւղը, աւերակ եկեղեցին, և ուշ ատեն վերադարձեր տուն՝ հետերնին գիւղացիներէն գնած բաւական հաւկիթ ու երկու հաւ բերելով ընտանիքին համար։

Այս բոլորը սկսած էր տեսակ մը ընտանեկան յարաբերութիւն առաջացընելու տղու ու Քանեանններուն մէջ։ Իրիկունները արդէն միշտ անոնց էր թէյի. վերջի օրն ալ հրաւիրեր էին ճաշի՝ միասին բերած հաւը միասին ուտելու պատրաստակով։

Սկիզբը տղան տեսակ մը քաշուեր էր ու վարաներ, երբ աղջկան հետ առանձին մներ էին ձորը. անորոշ վախ մը անյարմար կամ անպատշաճ բան մը ընելու. ինքզինքը ինչպէս պահէ և ինչ խօսի։ Բայց Շուշիկի պարզ, կարուկ և անհոգ վարմունքը շուտով փոխանցեր էր և անոր. քիչ-քիչ սկսեր էր սիրտ առնելու, մինչև որ հետզհետէ բոլորովին վերադարձեր էր իր շարժումներուն ու լեզուին բնական ազատութիւնը։

Ալ կծիկը բացուած էր. անցեալ, ներկայ, տպաւորութիւններ, գրականութիւն, գիտութիւն, հակումներ բոլորը խառնուեր էին իրարու այդ երկու օրուան մէջ։ Մէկ խօսքով հիմա դարձեր էին արդէն «լաւ բարեկամներ», ինչպէս աղջիկը կ'ըսէր։

Շուշիկ ելքէն շնչասպառ վերջապէս նստեցաւ քարի մը վրայ։

Տղան մօտեցաւ ու կեցաւ դիմացը։

—Դէ, օրիորդ, յոգնեցաք. ես ձեզի չըսի։

Օրիորդը խոր շունչ մը առաւ ժպիտը շրթունքին. և ձեռքը դրաւ կուրծքին շնչառութիւնը կանոնաւորելու համար։

Լեցուն ու թուխ դէմքը հաճելի կարմիր մըն էր առել. ու պարզ յարդէ գլխարկին տակէն ցոլուն սեփ-սև աչքերը ինկեր էին երիտասարդի նիհար դէմքին։

—Խծկօնքի օդը ձեզի աղէկ եկաւ, պարոն Սիրտքեան. նկատեց աղջիկը յանկարծ։

—Ի՞նչպէս։

—Դէմքերնիդ սկսեր է արիւն շրջան առնել և կարծես լեցուել։

—Մի՛թէ. կմկմաց տղան, ու իր դէմքին քիչ մը աւելի ուժով սկսաւ «արիւն շրջան առնել»։

—Ըսենք զարմանալու ոչինչ չի կայ. վանքի միշտ գոց ունըսուած կեանքէն վերջը այս բնութեան ու ազատութեան մէջը։

—Երևի։ Ա՛, կ'թէ գիտնաք, օրիորդ Մելինեան, թէ բնութիւնը ինչպէս կը սիրեմ։ Լեռներ, այս ձորերը, այս չէչոտ ժայռերը, այս աղմկոտ խելագար գետակը. վերը դաշտերուն հարթութիւնը, արտերուն ծածանուած ծովը. և, ՀԷ, իսկական ծովը. ապրած էք ծովու հետ. կարծեմ չորրորդ տարին է այս, որ ծովու երես տեսած չեմ, ու եթէ գիտնաք ինչպէս կարօտ ունիմ։ Դեռ աղէկ միտքս է մանկութիւնս. մեր տունը ծովէն հեռու չէր. մինչև վերջը ափն էի կամ աւազին մէջ ընկերներուս հետ կամ քիչ մը հեռուն ապառաժներու խոռոչին մէջ, ուր փոթորիկի ատեն տեսնելու էք ինչ սոսկալի իրարանցում է. և այնպէս զրոշմուած է այդ ամէնը ուղեղիս մէջ։ Իմ մխիթարութիւնս, իմ հաճոյքս ու ինծի սիրտ տուողը բնութիւնն է արդէն. երբ կոտրած է սիրտս կամ մաղձոտ կ'երթամ անտառ. ու ծառերու շշուկին տակ թափառուն,

չգիտեմ, կը հանգստանամ կարծես. չէ, խենթի պէս կը սիրեմ բնութիւնը։

—Բայց, գիտէք, այդ քիչ մը վտանգաւոր նշան է վարդապետացուի մը համար։

—Բնութիւնը սիրելը։

—Այո՛, բնութիւնը սիրելը. կրկնեց աղջիկը ժպտուն։

Ու կցեց.

—Զգիտեմ ուր լսած եմ, որ բնութեան այդ բուռն սէրերուն կնոջ փոթորկոտ սէրերը կը յաջորդեն սովորաբար։ Զգուշ եղէք այդ նախերգէն։

—Է՛հ, ըրաւ տղան ուսը թոթուելով, ու խեչափառի պէս կարմրեցաւ։

—Իրա՞ւ, պարոն Սիրաքեան, ներեցէք հետաքրքրութեանս, ամենևին սիրա՞ծ էք։

—Ո՛չ։

Ու գլուխը խոր վար կախած՝ սկսաւ ձեռքի փայտովը երկու ժայռի ճեղքին մէջ գորգ կապած մամուռը ուրբշտել։

—Եւ սիրելու պէտքը չէ՞ք զգար։

Երիտասարդը քիչ մը մտածեց. ու թեթև մը գլուխը բարձրացուց.

—Շիտակը չգիտեմ ինչ պատասխան տամ։ Նախ վերջին քիչ-շատ հասուն տարիներս միշտ կանանց շրջանէ հեռու եմ ապրած, որով արդէն ինքնին առիթ չի կայ այդ զգացումներուն։ Երկրորդ ալ երբ մարդ անգամ մը գլուխը դրեր է կուսակրօն դառնայ՝ այլ ևս բնականաբար մէկ կողմ պիտի նետէ այդ հարցերն ու զգացումները, եթէ նոյն իսկ մէջէմէջ անորոշ բաներ մը իր մէջը դառնան։

—Բայց եթէ այդ անորոշ յուզումները յանկարծ որոշնան, եթէ, օրինակի համար, աղջկան մը սիրահարիք, ի՞նչ կ՚ընէք։

—Այդ անկարելի է։

—Միթէ. ինչո՞ւ։

—Շատ պարզ. չեմ թողներ, որ խնդիրը այդչափ հեռուները երթայ։ Այդ տեսակ զգացման մը արթընալը նշմարելուս պէս՝ ամէն կերպ կաշխատեմ առաջը առնեմ, կը հեռանամ, ինքզինքս կ՚ըզբաղեցընեմ. վերջապէս կը մոռնամ, կը խեղդեմ։

Աղջիկը դէմքի հեգնական ցլնցում մը ըրաւ։

—Կը կարծէք։ Բայց ենթադրենք, որ այդ ամենուն հակառակ չի յաջողեցաք ձեր զգացումները մարել։

—Դէհ, երևի ինքս իմ մէջս կը տանջուիմ. ալ ինչ գիտնամ։ Ի հարկէ ինքնին հակաբնական ու անմիտ բան է կուսակրօնութիւնը արդէն. բայց ինչ կարելի է ընել. եթէ յանձն առիր՝ խաչդ պիտի կրես։

Շուշանիկ լուռ վայրկեան մը շեշտ նայեցաւ աղու գլխահակ դիրքին, ուր տեսակ մը համակերպութիւն, դժգոհութիւն ու վրնռականութիւն իրարու էին փարած. ու վերջապէս ըսաւ.

—Ուրիշ խօսքով կնոջ մը սէրը, կենակցութիւնը, ընտանիքի կեանքը, ու իր մանր ու խոշոր երջանկութիւնները դուք կամքով կը զոհէք, ու ձեզի կը դատապարտէք մշտական մենակեցութեան. միևնոյն ժամանակ համոզուած ձեր վարմունքի անիմաստ ու հակաբնական լինելուն։ Եւ այս բոլորը միայն հասարակութեան ծառայել կարողանալու համար. չէ՞. մէկ բառով՝ կատարեալ անձնազոհութիւն։

—Անուանեցէք ինչպէս որ կ'ուզէք։

—Աղէկ. ուրեմն խնդրեմ չվիրաւորիք, եթէ յայտնեմ, որ ձեր այդ անձնազոհութիւնը իմ աչքիս վերին աստիճանի ազեղ վարմունք է, և նոյն իսկ անբարոյական։

Տղան ցընցուեցաւ, բարձրացուց գլուխը. ու կեղծ ժպիտ մը փակաւ դէմքին։

—Այդ ինչպէս։

—Մէկդի դնենք այն հարցը, թէ արդեօք իրաւ իրական օգուտ մը պիտի տայ ձեր այդ զոհը, և եթէ նոյն իսկ վայրկեան մը ենթադրենք որ պիտի տայ, արդեօք այդ բերած արդիւնքը ձեր ըրած զոհը արժէ. բայց այդ հիմա մէկդի։ Միայն այն փաստը, որ դուք ձեր մարդկային անհատական ամենէն սուրբ զգացումները ոտքի տակ կու տաք, երբ միևնոյն ժամանակ ինքներդ այդ բոլորը անբնական կ'անուանէք. որ դուք ձեր ժամանակի և ուժերու մէկ խոշոր մասը կը նուիրէք դադարկ ծէսերու ու արարողութիւններու, երբ միևնոյն ժամանակ ինքներդ այդ բոլորին բնաւ չէք հաւատար. չէ՞, այդ գիտակցութեան և զործունէութեան կատարեալ հակասութիւնը ես

չեմ կրնար համակրեր. գործել այն, ինչ որ գիտես թէ պէտք չէ գործել. ոչ մէկ նպատակ այդ չարդարացներ. այդ ճամբան վար, շատ վար կրնայ տանիր, բայց վեր. օ, երբէք, չհաւատաք։

Բայց նկատելով, որ տղան միշտ գլուխը կախ իրեն ոչինչ չէր պատասխաներ՝ յանկարծ անդրադարձաւ.

—Սակայն, պարոն Սիրաքեան, չլինի թէ խօսքերս իբրև վիրաւորանք ընդունէք. դուցէ կը սխալիմ. միայն դժբախտութիւն մը ունիմ, որ իմ կարծիքս լռել չեմ կրնար.

—Եւ շատ ալ աղէկ կ'ընէք, օրիորդ. ես վիրաւորուելու բնաւ տրամադիր չեմ՝ կրնաք վստահ լինիր. պատասխանեց երիտասարդը տեսակ մը լուրջ ու դառն ծիծաղով։

Ու խոր շունչ մը առնելէն ետքը շարունակեց.

—Իսկ ինչ կը վերաբերի ձեր այդ բոլոր ըսածներուն՝ ատոնց մէջը բաւական իրաւացի կէտեր կան. բայց կայ և կարծեմ քիչ մը սոփեստութիւն. միայն անկեղծ խօսելով՝ ես ինքս ալ չեմ կրնար որոշել, թէ ուր կը վերջանայ ճշմարտութիւնը և ուր սոփեստութիւնը կ'ըսկսի։

—Աղէկ. շնորհակալ եմ։ Բայց հիմա որ փոխադարձաբար իրարու հայհոյեցինք ու կշտացանք՝ եկէք հաշտուինք նորէն ու ճամբանիս շարունակենք. այո՞։

Նայեցան իրարու, ժպտեցան, ու շարժըւեցան առաջ։

Մօտցեր էին արդէն ձորի բերնին, որ արահետը յանկարծ սկսաւ աւելի սեպանալ. ու ժայռերը խտացան՝ դիզուած իրարու վրայ տեսակ մը անտաշ ու անկանոն սանդուղ կազմելով։ Սանդուղ մը որու աստիճանները հետզհետէ կը խոշորնային՝ վերելքը դժուարացնելով։

Աղջկայ շրջազգեստը աւելի կը խանգարէր աստիճանէ աստիճան հանգիստ ոտքերը փոխելը։

—Զեռքերնիդ տուէք ինծի. ըսաւ տղան։

Ցատկեց սանդուղի վերի ոտքը. բռնեց ամուր աղջկայ մեկնած ձեռքէն ու քաշեց իր կեցած ժայռին վրայ. ցատկեց ինքը յաջորդին վրայ, ու դարձաւ իսկոյն նորէն ընկերուհիին օգնելու։

—Ա՛, ինչ հանգիստ է այսպէս. բացականչեց աղջիկը՝ ոտքը ժայռի եղերքին յենած կէս մը օդին մէջ, կէս մը տղու թեւէն կախուած.

—Եւ ինչպէս ալ ուժով էք։

Երիտասարդը բուռն հաճոյք մը ըզգաց յանկարծ այդ գովեստէն, այդ իր ֆիզիկական ուժի գովեստէն։ Սիրտը սկսաւ վայրագ բաբախել, օր ալ աւելի պինդ բռնեց աղջկան մերկ դաստակէն։

Նոր զգացում մը, կարծես անզուսպ հպարտութիւն մը սկսեր էր շրջան առնել իր ջիղերուն մէջէն։

Հպարտութիւն մը իր առնական ուժին, հպարտութիւն մը իր այդ ուժերին աղջիկ մը կախուած լինելուն։

(Շարունակելի)

ՊԱԼՏԱՒԱ

ՊՈԷՄԱ

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ — Թարգմ. Յակ. Տէր-Գէորգեանի

The power aud glory, of the war,
Faithless, as their vain votaries, men,
Had pass'd to the triumphant Czar,
I love this sweet name.

Byron [1].

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Պալտաւայի կռիւը Պետրոս Մեծի թագաւորութեան ամենամեծ և ամենաերջանիկ անցքերից մէկն է։ Այդ կռիւը փրկեց Նրան իւր ամենավտանգաւոր թշնամուց, հաստատեց ռուսաց իշխանութիւնը հարաւի վրայ, ապահովցրեց հիւսիսային նոր նուաճումները և ցոյց տուեց տէրութեանը թագաւորի կատարած բարեկարգութիւնների անհրաժեշտութիւնն ու յաջողութիւնը։

Շէդիայի թագաւորի սխալը առած է դառել. Նրան մեղադրում են իւր անզգուշութեան համար, և Նրա արշաւանքը Ուկրայինայի վրայ—համարում են անմիտ։ Բայց „на критиковъ не угодишь", մանաւանդ անյաջողութիւնից յետոյ։ Աշնուամենայնիւ Կարլոսը իւր այս արշաւանքով խուսափեց Նապոլէոնի հռչակաւոր սխալը գործելուց. նա չը դիմեց Մոսկ-

---

[1]) Պատերազմական փառքն և զօրութիւնը,—
Անհաւատարիմ, ինչպէս և իրանց երկրպագու մարդիկ,—
Անցել են այժմ յաղթական Կեսարի կողմը.
Սիրում եմ ես այս քաղցր անունը։

Բայրն։

ալի վրայ։ Եւ մի՞թէ նա կարող էր ապասել, որ շարունակ անհանգիստ Մալորոսիան չէր գրաւի իւր գեղեցիկ օրինակով և գլուխ չէր բարձրացնի Պետրոսի նոր տիրապետութեան դէմ, որ Լենինգրադում երեք օր յաջորդաբար ջարդ կը կրէր, որ վերջապէս 25,000 Շուէդներ իրանց կայսրի առաջնորդութեամբ կը փախչէին Նարուայի փախստականների երեսից։ Ինքը Պետրոսը երկար ժամանակ տատանւում էր և փախուստ էր տալիս գլխաւոր ճակատամարտից „дѣло опаснаго дѣла“: Այս արշաւանքի ժամանակ Կարլոս XII աւելի շատ քան երբեւիցէ անձնատուր էր եղած իւր ճակատագրին, որը խոնարհեց Պետրոսի հանճարի առաջ։

Մազեպան այս շրջանի ամենանշանաւոր անձնաւորութիւններից մէկն է։ Մի քանի հեղինակներ ցանկանում էին դուրս բերել նրան որպէս ազատութեան հերոս, մի նոր Բոգդան Խմելնիցկիյ։ Պատմութիւնը ներկայացնում է նրան որպէս պատաւախնդիր անձնաւորութիւն, արմատացած չարագործութիւնների և խարդաւանանքների մէջ, շարախօսող իւր բարերար Սամոյլովիչից, իւր թշառ սիրուհու հօրը սպանող, Պետրոսի յաղթանակից առաջ—իւր խօսքը դրժող և յաղթանակից յետոյ—Կարլոսին դաւաճանող. նրա միջատակը, որ նզովել է եկեղեցին, չի կարող ազատել նաև մարդկութեան անէծքից։

Մէկն էլ մի ռոմանտիկ վէպիկի մէջ Մազեպային պատկերացրել է, որպէս մի երկչոտ պառաւի, որը սպրդնում է զինուած կնոջ առաջ։

Աւելի լաւ կը լիներ զարգացնել և բացատրել խոովարար գեղեցիկի իսկական բնաւորութիւնը, ինքնակամ չաղճատելով պատմական անձնաւորութիւնը։

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Կաչուբէյն [1]) հարուստ է և անուանի.
Նորա դաշտերը անվերջ ու անթիւ.
Այնտեղ ջոկերը իւր նժոյգների
Արածում են միշտ ազատ, անհոգիւ։
Պալտաւայի շուրջ բոլոր խրճիթներ
Շրջապատել են նորա այգիներ.
Պահած և աչք ունի շատ բարիք,
Ոտոս ու արծաթ և ազնիւ մորթիք։
Բայց ծեր Կաչուբէյն չի հպարտանում
Թաւաբաշ ու սէգ իւր նժոյգներով,

---

[1]. Ծանօթութիւնները տես վերջը։

Եւ ոչ էլ իրան հարուստ համարում
Ղրիմից հարկ ստացած ոսկու կոյտերով
Ու ժառանգական իւր խրճիթներով.
Գեղեցկատեսիլ դուստրն է միակ
Մեր Կաչուբէյի պարծանքն ու թագ։

Եւ իրաւ, չը կայ ողջ Պալատաւայում
Մարիայի նման չքնաղ, գեղեցիկ.
Նա թարմ է ինչպէս հով սուերներում
Գգւած, փայփայւած գարնան մի ծաղիկ։
Նա շնորհալի է սոսիների պէս.
Իսկ շարժւածքները, դիւրաշարժ ու վէս,
Մերթ յիշեցնում են վայրի կարապը,
Մերթ արագավազ, թեթեւ այծեամը։
Կուրծքը սպիտակ է փրփուրի նման.
Իսկ խոպոպիքը պերճ ծանանւելիս
Ճակատի շուրջը, վեհաշուք ու լայն,
Ամպերի նման սեւին են տալիս։
Աչերն ասողազարդ,
Իսկ շրթունքները՝ որպէս կարմիր վարդ։
Բայց ամբոխի մէջ ջահել Մարիան
Իւր գեղեցկութեան համար չէ յարգւած.
Նա ամենայն տեղ որպէս մի խոհեմ,
Որպէս մի համեստ կոյս է ճանաչւած։
Վայել փեսացուք տալիս է նոյնպէս
Թէ Ռուսաստանը, թէ Ուկրայինան.
Բայց այդ պսակից, շղթայից ասես,
Փախչում է հեռու երկչոտ Մարիան։
Մերժում բոլորին. բայց շատ չէ անցնում,
Ինքը գետմանն է նրա ձեռքը խնդրում։
Նա ծեր է։ Նեղւած ձիգ տարիներից,
Թազմից, հոգսերից, աշխատանքներից.
Բայց զգացմունքները եռացին յանկարծ —
Եւ ծեր Մազեպան վերստին սէր զգաց։

Եւ ջահել սիրտը մի ակնթարթում
Վառւում է, հանգչում։ Սէրը նորա մէջ
Մերթ յայտնւում է և մերթ էլ անցնում.
Իսկ զգացմունքները փոխւում են անվերջ։
Ոչ այնքան հնազանդ, և ոչ էլ թեթև,
Ո՛չ վայրկենական կրքերով յանկարծ
Ծերունու սիրտը վառւում է սիրով,
Մի սիրտ—տարիքից անզգայ, քարացած,
Որ վաղուց ի վեր դանդաղ և յամառ
Կրքերի կրակից անցել է երկար.
Տարաժամ տենդը էլ չի սառչելու.
Կեանքի հետ միայն
Կը թողնի նորան։

Ինչպէս այծեամը պահւում ժայռի տակ,
Լսելով ծանր թռիչքն արծւի,
Հարսնացուն սրահում շրջում է մենակ,
Դողդողում է և սպասում վճռի։
Եւ բոլորովին դժգոհ, զայրացած,
Եկաւ նորա մօտ մայրը կամացուկ.
Դողալով բռնեց ձեռքը և ասաց.
«Անամօթ, լպիրշ... անօրէն ծերուկ...
Կարելի՞ բան է... ո՛չ, երբէք, քանի
Մենք կենդանի ենք նա մեղք չի գործի.
Նա, որ պիտ՝ լինէր իւր սանի համար
Բարեկամ և հայր...
Անմիտ... իւր վերջին օրերին ասես
Նա մտածել է կին առնել նորան» [2]).
Մարիան ցնցւեց և դէմքը պատեց
Դալուկը մահւան.
Եւ կոյսը սրահում վայր ընկաւ ինչպէս
Սառած, անկենդան։

Նա ուշքի եկաւ, բայց նորից տրտում
Աչքերը փակեց

Եւ էլ ոչ մի խօսք չէր արտասանում։
Իսկ հայրն ու մայրը աշխատում էին
Իւր սիրտը սփոփել և հանգստացնել.
Հալածել երկիւղն ու վիշտը խորին,
Խառն տեսիլներ նրա մտքից հանել։
Բայց զուր։ Մարիան ամբողջ երկու օր
Մերթ հառաչում էր և մերթ արտասւում,
Ինչպէս ուրուական դժգոյն և անզօր,
Չէր ուտում, չէր խմում և ոչ քուն լինում,
Իսկ երրորդ օրը վաղ առաւօտեան
Նորա սենեակը ամայի տեսան։

Ոչ ոք չը գիտէր
Թէ երբ կամ ինչպէս նա անյայտացաւ.
Զկնորսն այն գիշեր
Լսել էր ձիու սմների դոփիւն,
Կազակի խօսքեր, կնոջ շշնջիւն,
Եւ առաւօտեան պայտի ուռթ հետքեր
Դաշտի ցօղի վրայ տեսանելի էր։

Ո՛չ միայն աղամազն ու շէկ գանդուրներն
Խնդալից կեանքով երիտասարդի,—
Երբեմն նոյն իսկ ալեխառն մազերն,
Ճակատի սպիներն, խիստ տեսքը ծերի—
Մի գեղեցիկ հոգ վառվռուն մտքում
Կրքոտ անուրջներ առաջ են բերում։

Բայց օրհասական լուրը, շատ չանցաւ,
Հասնում է նոյնպէս և Կաչուբէյին.
Ամօթ ու պատիւ նոյն իսկ մոռացաւ.
Եւ նա գրկում է այն չարագործին։
Օ՛, ինչ նախատինք! Նրա ծնողները
Այս շշուկներին չէին հաւատում,
Եւ այնժամ միայն ճշմարտութիւնը

Իւր ահեղ տեսքովն է ներկայանում։
Եւ այն ժամանակ միայն որոշեց
Այն երիտասարդ, յանցաւոր հոգին.
Այն օրից յետոյ միմիայն պարզեց
Թէ ինչու էր նա փախչում իւր կամքին
Ընտանեկան ծանր կապանքներից,
Տանջւում էր գաղտնի, հառաչում, տխրում
Եւ ողջոյններին փեսացուների
Հպարտ լռութեամբ էր պատասխանում.
Ճաշի ժամանակ ինչու այնպէս լուռ,
Նա գեռմանին էր միայն յուշ դնում,
Երբ գինու բաժակ ծածկում էր վրփուր,
Եւ բոլորեքեան խօսում, զւարճանում։
Թէ ինչու համար նա միշտ երգում էր
Նորա շարադրած երգերն [3]) մեղմաձայն—
Երբ նա աղքատ էր. երբ նա դեռ փոքր էր.
Երբ չէր ճանաչում ամբոխը նորան։
Թէ ինչու նորա այրական ոգին
Սիրում էր անյագ ձայներ թմբուկի.
Զիերի շարքեր, աղմուկ ու շառաչ
Մոլորոսիայի Տիրապետողի
Բուլաւայի և բունչուկի առաջ [4])...

Կաչուբէյն հարուստ է և անուանի,
Նա բարեկամներ ունի բաւական.
Նա իւր պատիւը կը վերականգնի,
Կարող է յուզել ամբողջ Պալտաւան.
Կարող է հէնց իւր պալատում յանկարծ
Հասնել այն հպարտ, գոռ. շարագործին,
Հայրական վրէժով տալ ուղիղ հարուած՝—
Բայց մի այլ միտք է վրդովում հոգին։

Լռան, աղմկայոյզ այն ժամանակն էր,
Երբ կռիւների մէջ ջահել Խուսիան

Ոյժերը լարած արիանում էր,
Անխոնջ Պետրոսի հանճարի նման։
Դաժան ուսուցիչ կարգված էր նորան
Փառք հասնելու արուեստի համար.
Նորան Շուէդների Պալատինան
Շատ մեծ դաս տուեց
Արիւնաշաղախ և անակնկալ։
Շատ պատուհասներ կրեց ու փորձուեց,
Բախտի հարուածներ տարաւ, համբերեց,
Այդպէս էլ ուռնապակին հանդարտ
Փշրում և կռում, կոփում է երկաթ։

Անօգուտ փառքով, Կարլոսն անվեհեր,
Պսակված՝ դէպի անդունդն էր դիմում.
Ցիրուցան տալով ռուսաց բանակներ,
Ուղիղ դէպի հին Մոսկուան էր գնում։
Հողմերի նման փոշոտ խոտերը
Եւ հովտի աւազն — սրբում է անցնում։
Գնում մոյն շաւղով — որտեղ հեռք թողեց
Նորեկ. բայց հզօր մի այլ թշնամի.
Երբ իւր անկումով փառաւոր դարձրեց
Իւր նահանջ քայլը — օրհասի որդին։

Մի խուլ վրդովմունք տիրել էր երկրին.
Վաղուց նորա մէջ վառւում էր մի կայծ.
Եւ սպասում էին ազգային կուին,
Բարեկամները ուազմասէր նախնեաց։
Տրտնջում էին և խրոխտ պահանջում
Գեոմանից իրանց կապերի քակում.
Եւ թեթև, անմիտ ոգևորութեամբ
Կարլոսին էին անհամբեր սպասում։
Գեոմանի շուրջը յանախ լսւում էր՝
«Ժամ է, ժամ արդէն» — յուզված աղաղակ.
Բայց ծեր գեոմանը շարունակում էր

Պետրոսին մեալ հնազանդ հպատակ.
Եւ հեռեւելով իրա խստութեան,
Հանգիստ վարում էր նա Ուկրայինան։
Շուկին կարծես ականջ չէր դնում,
Եւ միշտ անտարբեր, անհոգ զարձանում։
«Թողէք զեռմանին»,—միշտ կրկնում էին
Երիտասարդներն.—«նա հիւանդ է, ծեր,
Տարիքն և երկար ջանքերը հանգցրին
Նրա մէջ նախկին եռանդն անպեհեր։
Էլ ինչու համար դողդոջուն ձեռքով
Գրում է դեռ ևս նա մեր բուլաւան.
Մենք այժմ ահեղ մի պատերազմով
Պէտք է գրոհ տայինք ատելի Մոսկուան,
Եթէ որ միայն ծեր Դորոշէնկոն [5]),
Կամ Սամոյլովիչ Զահել Գրիգորիյն [6]),
Կամ թէ մեր Պալէյն [7]), կամ Գարդէենկոն [8])
Իրանց ձեռքի տակ զօրք ունենային.
Օտարութեան մէջ—այնժամ ձիւներում
Զուր չէին կորչիլ մեր կազակները,
Եւ կ'ազատուէին, վշտացած, տրտում
Մալորոսիայի բոլոր գնդերը [9])»։

Այսպէս ինքնակամ վառուած, բորբոքուած
Զահել կորիճներն տրտնջում էին.
Հայրենեաց նախնի դերութիւն մոռացած,
Մոռացած Բոգդանին.
Նորա երջանիկ վէճերի նման՝
Մոռացած դաշինքներ, կռիւներ սրբազան,
Եւ ֆիառք ու պատիւ անցած օրերի՝
Նորամուծութեանց փափագում էին.
Բայց ծերութիւնը շարժւում է դանդաղ
Եւ կասկածանքով չորս կողմն է նայում.
Ի՞նչն է կարելին, կամ անկարելին՝
Նա միանգամից չի չափում, վճռում։

Ո՞վ կ'իջնի արդեօք անդունդ ծովերի
Անշարժ ծածկըւած սպիտակ սառուցով.
Ո՞վ կը թափանցի նենդ հոգիների
Անյատակ խորքը իւր քննող մտքով։
Նոցա մօտ խոհերն—զսպած կրքերի
Ամբողջ արդիւնքը—մնում են խաւարում.
Եւ գուցէ միայն նախկին օրերի
Մտապրութիւնն է դիտում ու քննում։
Ո՞վ գիտէ։ Միայն քանի Մազէպան
Խորամանկ, և չար, և կեղծ է դառնում,
Այնքան նա անզգոյշ, արտաքուստ նոյնքան
Պարզ և քաղցր է ողջի հետ վարւում։
Օ՛, ինչպէս ճարպիկ, ինչպէս ինքնիշխան
Գիտէ նա դրաւել սրտերն և պարզել.
Վարել մտքերը անվախ, ինքնակամ,
Եւ ուրիշների գաղտնիքը լուծել.
Ի՞նչ կեղծուպատիր, բարեկամաբար
Խարդախ ծերունին խնջոյքների մէջ,
Միւս ծերերի մօտ, անցեալի համար,
Ափսոս է գալիս և. ցաւում անվերջ։
Ազատութիւնն է գովում մէկի մօտ,
Միւսի մօտ օրէնքն է պախարակում.
Անկարեկցի հետ թափում է արցունք,
Իսկ յիմարի հետ խելացի դատում։
Գուցէ շատերին յայտնի չէ ինչպէս
Անսանձ է նորա նենգամիտ ոգին.
Որ նա թէ ազնիւ, թէ սուտ միջոցով
Ուրախ վնասում է իւր ոսոխներին։
Որ ոչ անարգանք,
Ո՛չ վիրաւորանք,
Յարդ չէ մոռացել իւր ամբողջ կեանքում.
Եւ որ շատ հեռու յանցաւոր մտքեր
Գոռոզ ծերունին տածում էր մթնում։
Որ չէ ճանաչում ոչ մի սրբութիւն.

Որ չունի կեանքում արած մի բարիք.
Պատրաստ է թափել ջրի պէս արիւն.
Որ նորա համար չը կայ հայրենիք.
Որ նա աշխարհում ոչինչ չէ սիրում.
Որ ազատութիւնն է արհամարհում։

Վաղուց իւր սրտում մի միտք ահաւոր
Գաղտնի գգւում էր չարսիրտ Մազեպան.
Բայց հեռւից անխօս, մի վտանգաւոր
Հզօր թշնամի նկատեց նորան։
Ո՛չ, յանդուգն գիշատիչ,
Ո՛չ, ոչ կործանիչ,
Դառանացած խորհում էր ծեր Կաչուբէյն.
Ես կը խնայեմ քո բնակարանը՝
Իմ թշուառ դստեր արգելարանը։
Մոխիր չես դառնայ անգութ հրդեհից,
Ո՛չ, դու չարադործ, դու չես սատակի
Կազակ դաշոյնի անվրէպ հարւածից։
Այլ երբ Մոսկուայի դահիճի ձեռքում
Արիւնաշաղախ, լուռ կը ծռմռւես,
Եւ ցցի վերայ, տանջանքի կրակում
Զուր կը բացասես.—
Ապա կ'անիծես այն ժամն ու բոպէն,
Երբ կնքում էիր մեր սիրած դստեր.
Եւ այն խնջոյքը, որի ժամանակ
Տալիս էի գինով լի պատուի բաժակ.
Եւ այն գիշերը, երբ դու, պառաւ ցին,
Կոցահար արիր մեր խեղճ աղաւնին։

Կար մի ժամանակ երբ որ Մազեպան
Եւ Կաչուբէյն բարեկամ էին.
Երբ մտերմաբար, ինչպէս աղ ու հայ,
Սրտերն էլ իրար միշտ պարզում էին.
Նոցա ձիերը յաղթի դաշտերով

Սլանում էին կրակների միջին,
Նոյնպէս և յաճախ երկար զրոյցներով
Միայնակ գիշերն անցկացնում էին։
Կաչուբէյի մօտ, ծածկամիտ գեամանն
Ինկուշտ, խռովարար հոգու անդնդի
Քանի մի կողմերն բանում էր միայն.
Եւ մութ խօսքերով գալոց դաւերի,
Բանակցութեանց և խռովութեանց համար
Կարճառօտ կերպով ակնարկում էր նրան։
Այդպէս Կաչուբէյն իւր բոլոր սրտով
Նւիրւած էր նրան այն միջոցներին.
Բայց մի դառնալից քինով վառւելով,
Այն սիրտը ողջամբ միայն մի կանչի
Հնազանդում է արդ։ Թէ օր թէ գիշեր
Միմիայն մի միտք փայփայում է նա—
Կը լուծի վրէժը անպատւած դստեր,
Կամ նորա համար ինքն էլ զոհ կը գնայ։

Բայց Կաչուբէյն համարձակ մի ոգ
Ամուր պահում է իւր տանջւած սրտում։
Դէպի գերեզման, վշտից ոռնակոխ,
Այժմ իւր բոլոր մտքերն է ուղղում։
Վնասել չէ ուզում նա Մազեպային՝
Ողջին մեղաւոր գուստրն է միայն,
Բայց իւր դատերը նա նոյնպէս ներեց.
Թող նա Աստուծուն տայ իւր պատասխան.
Նա ընտանիքը ամօթով ծածկեց,
Օրէնք և երկինք տւեց մոռացման։

Բայց նոյն ժամանակ սրատես աչքով
Տանու շրջանում նա իրան համար
Լուռ որոնում է, համարձակ հոգով
Եւ քաջ ընկերներ—վեհ ու անվաճառ։
Ապա ամեն բան կնոջը [10]) հաղորդեց.

Եւ վաղուց արդէն գաղտնի իւր մտքում
Ձեկուցման ահեղ գիրն է ծրագրում.
Եւ լի կանացի կատաղութիւնով
Անհամբեր կինն է դրդում, շտապեցնում.
Խորին գիշերով քնոյ մահճի վրայ
Ինչպէս մի ոգի շշնջում է նա.
Վրէժն է յիշեցնում, յանդիմանում է,
Արցունք է թափում և խրախուսում է.
Երդում է խնդրում.
Եւ վերջ ի վերջոյ մեայլ Կոչուբէյն
Տալիս է երդում։
Անաւոր հարւածն կշռած է արդէն.
Նրա հետ է և՝ անվեհեր Սկրան. 11)
«Կը յաղթահարենք». նրանք մտածում են.
Վճռած է ժամը թշնամու անկման...
Բայց ո՞վ է արդեօք այն նախանձաւորն
Մեր ընդհանուրիս բարօրութեան,
Որ ձեկուցագիրն՝ չարագործ, հզօր
Գեոմանի մասին՝
Վստահ, համարձակ կը ներկայացնի
Նախապաշարւած արքայ Պետրոսին։

Կար Պալտաւայի կաղաքների մէջ
Արհամարհւած տարաբախտ կոյսից
Մէկը, որ նորան սիրում էր անկեղծ
Պատանեկական պայծառ օրերից։
Առաւօտեան և իրիկւան պահուն
Իրանց հարազատ գետակի ափին,
Կեռասիների հով սուերներում,
Սպասում էր երբեմն նա Մարիային.
Սպասում էր անվերջ, սպասում ու տանջւում.
Եւ կարճ ասուութեամբ մխիթարւում էր.
Աչաչանքներով չէր ճանձրացնում,
Նորա մերժումը չէր կարող տանել.
Անյոյս սիրում էր։

Իսկ երբ խմբեցին նորա մօտ շուքով
Իւր փեսացուներն՝ նա նոցա շարքից
Վհատ, որբի պէս, հեռացաւ վշտով.
Բայց երբ Մարիայի նախատինքը
Կազակների մէջ յանկարծ տարածուեց,
Եւ ժողովրդի անգութ կարծիքը
Դառն ծիծաղով լցնդ միշտ հարուածեց—
Նա դարձեալ պահեց նորա սրտի վրայ
Իւր նախկին բոլոր իրաւունքները.
Նա սպանեց նորան՝ և միայն դէպի նա
Տածում էր կրքոտ ցանկութիւնները,
Եւ իւր խռովայոյզ ու հիւանդ հոգու
Դառն տրտունջը և ցնորքները.
Տանջւում էր նա միշտ անմիտ ծարաւով—
Դէթ անգամ դարձեալ նորան տեսնելու.
Ո՛չ արհամարհել, ո՛չ ատել հոգով
Չէր կարող նորան, չէր իսկ ցանկանում։
Եւ եթէ մէկը, թէև պատահմամբ,
Մաղէպային էր նորա մօտ յիշում,
Նա գունատւում էր, տանջւում էր դաղտնի,
Եւ հայեացքները դեռին էր գցում։

Ո՞վ է արշաւում այս լռիկ ժամին,
Շողուն աստղերի և լուսնի լոյսով.
Որին է արդեօք անվաստակ այս ձին,
Սլացնում անվերջ անապատներով։

Կազակը դէպի հիւսիս է դիմում,
Կազակը հանգիստ առնել չէ ուզում.
Ո՛չ արձակ դաշտում, ո՛չ ծառերի տակ,
Ո՛չ իսկ անցնելիս սպառնալի հոսանք։

Դաշոյնն է փայլում ապակու նման.
Ոտքում կապոցն է հնչում բարձրաձայն.

Իսկ սիգաճեմ ձին քաշն է թոթափում,
Եւ միշտ անսայթաք առաջ է վազում։

Ոսկիներ պէտք են միշտ սուրհանդակին,
Դաշոյնը—կորճի զբօսանքն է միակ.
Զբօսանք է նոյնպէս և սիգաճեմ ձին,
Բայց ամեն բանից իւր գդակն է թանդ։

Ամեն բան կը տայ, բացի գդակից,
Կը զրկի ձիուց, ոսկուց, դաշոյնից,—
Գդակը կ'առնեն նորանից կուռով,
Եւ այն էլ միայն իւր գլխի գնով։

Ինչու է գդակն այնպէս պահպանում,
—Ձեկուցագիրն է նորա մէջ կարած.
Զարագործ, ծերուկ գեսմանի մասին
Կաշուբէյցը—Պետրոսին ուղղած։

Բայց նոյն ժամանակ յանդուգն Մազեպան
Ո՛չ վտանգ, ո՛չ վախ չը գուշակելով,
Շարունակում է միշտ լարել դարան.
Էիազոր եզուիտն կազմում է ջանքով
Ապստամբութիւն ժողովրդական [12]),
Մի գահ անկայուն խոստանալով նրան։
Գիշերուայ մթնում ինչպէս որ գողեր
Վարում են իրանց բանակցութիւններ,
Գին են գնում իրանց դաւաճանութեան,
Ունիվերսալի [13]) թուերն են հաշուում,
Գլուխն են սակարկում թագաւորական,
Եւ վասալների երդումներ գընում։
Անյայտ որսեղից—մտնում անդադար
Մի ինչ որ ագքատ, նոցա պալատում,
Եւ Պան Գեսմանի գործին կատավար
Օրլիկը [14]) նորան տանում է, բերում։

Թոյն են տարածում գաղտնի ամեն տեղ
Նոցա ուղարկած սպասաւորները.
Բուլաւինի [15]) հետ, Դոնի վրայ մի տեղ,
Նոքա յուզում են կազակ խմբերը։
Միւս տեղ դրգռում վայրի օրդաներ,
Երրորդ տեղ, Դնէպրի ժայռերի միջին,
Պետրոսի ահեղ ինքնիշխանութեամբ
Սպառնում են նորանք կատաղի խմբին։
Մազեպան չորս կողմ դիտում է շտապով,
Ջանազան տեղեր նամակներ է գրում.
Եւ Բախչիսարայն նենգ սպառնալիքով
Մոսկուայի դիմաց ապստամբեցնում։
Վարշաւայում նրան լսում է կայսրը,
Իսկ Աչակովում՝ փաշան խնդագին,
Բանակում՝ կայսրը և թագաւորը.
Չէ քնած նորա նենգամիտ հոգին։
Նա զարգացնում է մի միտք միւս մտքով,
Զարկի նշանն է ուղղում հեռաւոր.
Զար ցանկութիւնը նորան չէ թողնում,
Անյաղթելի է տենդը յանցաւոր։

Բայց ինչպէս ցնցուեց և շրթնեց ուժգին,
Երբ նորա առաջ յանկարծ դղրդաց
Ահեղ կայծակը։ Երբ հէնց Գեոմանին—
Ռուսայ թշնամուն—Պալտաւայում գրած
Զեկուցագիրը ռուսաց իշխաններն [16])
Ցեռ ուղարկեցին։
Փոխանակ արդար սպառնալիքների՝
Նուայլում էին քաղցրահաճ խօսքեր,
Որպէս մի զոհի։
Եւ պատերազմի հոգսերով զբաղուած,
Զար զրպարտանքից դարշելով զզուած,
Գիրը թողեցին նրանք անուշադիր.
Եւ թագաւորը ինքը ցուդային
Մխիթարում էր.

Աղմկոտ պատժով չարիքն անխտիր
Ընդմիշտ խաղաղել նա խոստանում էր։

Եւ թագաւորին Մաղէպան խոնարհ
Դիմում է սքողւած կեղծապատ վշտով.
«Գիտէ այդ Աստուած, տեսնում է աշխարհ,
Որ խեղճ գետմանը անխարդախ հոգով
Քսան երկար տարի հաւատարմութեամբ
Ծառայել է միշտ իւր թագաւորին.
Նորա անսահման բարեձեռնութեամբ
Վարձատրւած է իւր ծեր օրերին...
Օ՛, ինչքան անմիտ, կոյր է չարիքը...
Նոր պէտք է արդեօք մահուան դրան մօտ
Իւր թագաւորին նա դաւաճանի,
Բարի անունը արատաւորի։
Այդ նա չէր արդեօք, որ դժգոհելով,
Մերժեց օգնութիւն տալ Ստանիսլաւին [17]).
Ուկրայինայի թագը ամօթից
Հրաժարւեց կրել ալեխառ գլխին։
Եւ դաշնաթուղթը, նամակներ գաղտնի
Ուղարկեց իսկոյն նա թագաւորին.
Նա չէր, որ խանի [18]) և Ցարեգրադի
Հզօր սուլթանի հրապուրանքներին
Ականջ չէր դնում։
Խելքով, դաշոյնով պատրաստ է կռւել
Իւր թագաւորի ոսոխների հետ,
Ջանք, ոյժ և նոյն իսկ կեանքը չխնայել։
Իսկ արդ, թշնամին յանդգնեց դաւով
Նորա ալիքներ ծածկել ամօթով.
Եւ այն էլ ովքեր—Իսկրան, Կոչուբէյն,
Որ երկար օրեր բարեկամ էին...»
Եւ արիւնարբու արտասուքներով,
Սառնասրտութեամբ, յանդուգն կերպով
Զարագործը նրանց մահն է պահանջում [19])։

Ո՞ւմ մահը արդեօք,
Ծերուկ անողոք...
Ո՞ւմ դուստրն է նորա գրկում արբենում.
Բայց նա սառնօրէն վանում է հեռուն
Իւր մեռած խղճի գանգատ կիսարթուն
Եւ մտածում է. «Ինչո՞ւ անմիտը
Այս անհաւասար կռիւն է ոտք դնում.
Ինչո՞ւ այն գոռոզ ազատամիտը
Ինքը իւր համար կացին է սրբում.
Ինչի՞ վերայ է իւր յոյսը դրել.
Գուցէ... Բայց ի զուր. դատեր սէրը
Անզօր է իւր հօր գլուխը ազատել.
Սէրը Գեամանին պէտք է զինչանի,
Թէ ոչ—արիւնս տեղը կը թափի»։

Մարիա, խեղճ Մարիա,
Պարծանք Չէրկասի օրիորդների.
Օ՛, չես նկատում թէ այդ ինչ օձի
Դու գուրգուրում ես քո կրծքի վրայ։
Եւ այդ ինչ ոյժ է անըմբռնելի,
Որով կուրօրէն դէպ ինքն է դրաւում
Քեզ այդ կատաղի, խայտառակ ոգին։
Զգում ես արդեօք որին ես զոհւում.
Նրա ալեխառն, դանդուր մազերը,
Ճակատը, ծածկւած խոր կնճիռներով,
Նրա փոս ընկած փայլուն աչքերը,
Խստակցութիւնը՝ խորամանկ ժպտով,
Թանգ ամեն բանից գնահատեցիր։
Դու նոցա համար
Մօրդ մոռացար.
Եւ գայթակղութեամբ կանգնած առաջանն
Հայրական յարկին գերադասեցիր։
Քեզ, իւր հրաշալի, չքնաղ աչքերով
Ծերունին անդարձ կապեց, կաշկանդեց,

Եւ իրա խաղաղ, հանգիստ խօսքերով
Խիղճդ յաւիտեան քո մէջ քնացրեց.
Եւ նրա վրայ խոր պատկառանքով
Կուրացած, անպգայ անվերջ նայում ես.
Եւ դու՝ նրանով անմիտ արբեցած՝
Հպարտ ես, որպէս ողջախոհութեամբ.
Ամօթի քնքոյշ գեղեցկութիւնը
Դու արդէն կորցրիր քո թշուառ անկմամբ։

Բայց ինչ գին ունի Մարիայի աչքում
Ամօթը և կամ մեղադրանք մարդկանց.
Երբ խաղաղ կերպով, կուսական դրկում
Ծերունու հպարտ գլուխն է խոնարհած.
Երբ որ գեռմանը հոգս, աղմուկ, վիճակ
Ողջ մոռանում է նրա հետ միասին.
Կամ երբ յայտնում է յանդուգն, համարձակ
Մաքերի գաղտնիքն այն թշուառ կոյսին։
Եւ չէ ափսոսում նրա անմեղ օրերն.
Երբեմն միայն
Սև ամպի նման
Վիշտն է մթագնում նրա պարզ հոգին.
Եւ աչքի առաջ ներկայացնում է
Իւր Ծնողներին, ծերացած, տխուր,
Եւ արտասուագին նոցա տեսնում է
Մենակ, որբացած և յուսակտուր։
Երբէմն էլ կարծես լռութեան միջին
Նրանց մեղադրանքն է լսում դատնագին.
Օ՛, եթէ միայն նրան յայտնի լինէր
Այն, ինչ որ գիտէր ողջ Ուկրայինան...
Բայց զգուշութեամբ պահպանում են դեռ
Մահաբեր գաղտնիքը... հօր դլխատման։

Հեղինակի արած նկատողութիւնները առաջին երգի վերաբերմամբ

1. Վասիլիյ Լէոնտեւիչ Կաչուբէյ—գլխաւոր դատաւոր (генеральный судья), այժմեան կոմսերի նախահայրերից մէկը։

2. Մազեպան իսկապէս խնդրել է իւր սանի ձեռքը, բայց նորան մերժել են։

3. Աւանդութիւնը վերագրում է Մազեպային մի քանի երգեր, որոնք մինչև այժմս պահպանուել են ժողովրդի լիշողութեան մէջ։ Կոչուբէյն իւր զեկուցագրի մէջ լիշում է նոյնպէս այն հայրենասիրական խոսքի մասին, որ իբր թէ Մազեպան է շարադրել։

4. Բունչուկ և Բուլաւա—գետմանի աստիճանի նշանները։

5. Դորոշենկո, Մալորոսիայի հին հերոսներից մէկը, անհաշտ թշնամի ռուսաց տիրապետութեան։

6. Գրիգորիյ Սամոյլովիչ, Պետրոսի թագաւորութեան սկզբի տարիները Սիբիր աքսորուած գետմանի որդին։

7. Սիմէոն Պալէյ-хвостовскій полковникъ, լայտնի հեծւոր (ձիաւոր) ինքնակամ լարձակումների համար Մազեպայի խնդիրքով Ենիսէյսկ աքսորուեց։ Մազեպայի դատաճանութեան ժամանակ, Պալէյն, որպէս նրա արմատացած թշնամի, լետ բերուեց աքսորից և մատնակցեց Պալտաւայի կռուին։

8. Գարդէենկո-զապարոժցիների кошевой атаманъ. անձնատուր եղաւ Կարլոս XII-ին և գլխատուեց 1708-ին։

9. 20.000 ուղարկուած էր Լիֆլիանդիա։

10. Մազեպան իւր մի նամակի մէջ լանդիմանում է Կաչուբէյին, որ իրան կառավարում է իւր կինը։

11. Իսկրա, Պալտաւայի պոլկովնիկ. Կաչուբէյի համախոհը, որ մատնակից էր նորա մտադրութեան և նորա վիճակին։

12. Եղու

18. Ղրիմի անկախող արշաւանքից յետոյ Ղազի Գիրէյն առաջարկում էր նրան միանալ և յարձակուել ռուսների վրայ։

19. Իւր նամակներում գանգատւում էր, որ զեկուցագրողներին շատ թեթև էին տանջում, և անլսեմաձգելի կերպով պահանջում էր նոցա պատիժը, համեմատելով իրան Սուսանին՝ի հետ, որից զուր չարախօսել են անօրէն ծերերը, իսկ կոմս Գոլովկինին՝ Դանիէլ մարգարէի հետ։

ԴԱՌՆ ԽՈՍՏՈՎԱՆՔ

(Ճանապարհորդի յիշողութիւններից)

ՆԻԼԻՐ ՍՈՒՐՃԻ ՏԱՄԵԱՄԵԱՑ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Ա. ԱՊԵԼԵԱՆԻ

Վերջապէս լուեց շոգենաւի երրորդ սուլոցը իր ականջ խլացնող մունչիւնով և տախտակամածի վրայ կանգնած բազմութիւնը մի վայրկեանում իրարանցման մէջ ընկաւ։ Ճանապարհելու եկածները շտապով համբուրւում էին իրանց սիրելիների հետ և արագութեամբ դուրս իջնում նաւից։ Կանգնելով նաւահանգստի քարէ կամուրջի վրայ, նոքա իրանց հայեացքը դէպ նաւն էին ուղղում և տենդային անհամբերութեամբ որոնում իրանցից մեկնողներին։ Նոցա արտասուակալած աչքերը, վարագուրւած թախծադին ժպիտով, մի վայրկեան անգամ չէին հեռանում տախտակամածի բազմութիւնից։ Հրաժեշտի սրտաշարժ զգացմունքի հրով վառւած աչքերը շուտով գտնում էին միմեանց և վառզ, կցկտուր, անգամ հեւալի զրոյցը շարունակւում էր նաւի վրայից դէպ ափը։

Նաւաստիները արագ-արագ արձակում էին նաւի կապանքները, որոնցով նա միացած էր ցամաքի հետ։ Շուտով վերջացաւ այդ աշխատանքը և մի վայրկեանում մեր տակ փռւած խաղաղ ջուրը կորցրեց իր նիրհող անդորրութիւնը։ Նաւի հսկայական անիւի թեւերը իրանց ուժգին հարւածներով մեծ-մեծ հորձանքներ էին առաջ բերում ծովի խորքից. ծովը փրփրում, կատաղում էր իր խաղաղութիւնը վրդովող հսկայի վրա, որին նա երբեմն դարձնում է իր

քմահաճոյքի զոհը։ Տեղացող հարուածներից առաջացած փրփրադէզ օդակները սարսափահար եղած լայնանում, փախչում էին ահռելի պատուհասից և հեռանալով նօսրանում, չքանում էին աչքերից։ Իսկ նաւը, հպարտ և անվրդով, ճանապարհ էր յարթում իր համար։ Քիչ անցած ջրային տարածութիւնը արդէն բաժանում էր մեզ կամուրջից։ Ցամաքից և նաւից բարձրացած թաշկինակների ծածանումները վերջ չունէին։ Շուտով նաւը իր կուրծքը ուղղեց դէպ ծոցի նեղուցը, որից դէնը փռւում էր լայնատարած ծովը, և արագացրեց իր ընթացքը։ Ափում կանգնած բազմութիւնը աստիճանաբար մանրացաւ և վերջը միախառնւելով կազմեց մարդկային մարմիններից մի զանգուած։ Այլ ևս նկատելի չէին թաշկինակների ծածանումները և բազմութեան մի մասը արդէն հեռանում էր կամուրջից. Մենք էլ՝ նաւի պաշտպանութեան յանձնուածներս, թողնում էինք գեղեցիկ Եալտան։

Ամառուայ սկիզբներին էր։ Եալտան ամբողջապէս ծփում էր շքեղազարդ և ճոխ բուսականութեան գրկում։ Գողտրիկ և գեղեցիկ վիլլաները, որ կիսով չափ թաղուած էին թաւախիտ անտառի մէջ, թւում էին երջանկութեան մի-մի վայրեր։ Այդ վայրերում բացառապէս իշխում էին նոքա՝ այն բոլոր ընտրեալները, որոնք առատօրէն վայելում են կեղեքիչ կապիտալի թափած զանձերը և որոնք, շնորհիւ կեանքի չափազանց երես տալուն, անպատիժ չէին անցել անյատակ վայելչութիւնների միջով։ Եւ ահա այժմ նոքա եկել Եալտայի գիրկն էին նետուել՝ այստեղ հանգստանալու, այստեղ վերականգնելու իրանց քայքայուած ոյժերը։

Եալտայի հրապուրիչ գեղեցկութիւնը նաւի տախտակամածից բազմաթիւ աչքեր էր դարձրել իր վրայ։ Շատերը կանգնած՝ հիացմունքով դիտում էին այդ վայրը, որ իր բուսական ճոխութեամբ և շքեղութեամբ կազմում էր մի հսկայական թարմ փունջ՝ վայր ընկած մինչ Եալտան փռւած աւազոտ և կրային տափարակի ծայրում։ Այդ բանաստեղծական դիրքը բաւականաչափ հիացմունք էր պատճառում ինձ ևս։ Ոչ մի վայրենի, կոպիտ և տգեղ գիծ չունէր այդ պէյզաժը. ամեն ինչ այդտեղ կոկ էր, համաչափ և ներդաշնակ...

Ես ծոցիցս հանել էի յիշատակարանս՝ ստացած տպաւորութիւններս գրելու, երբ լսեցի կողքիս կանգնած պարոնի խօսքերը.

—Անկասկած Եալսան ձեզ վրա հիանալի տպաւորութիւն է գործել, ասաց նա ժպիտը երեսին։

—Այո, պատասխանեցի ես մի վայրկեան նրան նայելով, և շարունակեցի գրելս։

Երեսունից անց մի թխադէմ և միջահասակ տղամարդ էր սեպաձև միրուքով և վերին ատամների շարժուն, անհանգիստ աչքերով, որոնք իրանց ակոսների խորութիւնից արագ-արագ մի առարկայից միւսն էին թռչում։ Ուղեկցիս նիհար, դժգոյն դէմքը և չափազանց շարժուն մարմինը ջղոտ մարդու տպաւորութիւն էր թողնում ինձ վրա։

—Ցեռոյ կը գրէք ձեր տպաւորութիւնները, դարձաւ նա դէպի ինձ. ճանապարհորդները չպիտի կղզիանան, չպիտի առանձնանան իրանց աշխարհում, աւելացրեց նա ժպտալով. այլ պիտի մտերմանան, խօսեն զրուցեն, որպէս զի ճանապարհը իր ծանրութեամբ և ձանձրութեամբ աննկատելի անցնի. իսկ ինձ համար այս ճանապարհը իսկապէս որ անտանելի է, ծանր է...

—Ի՞նչու, հարցրի ես, տեսրս ծոցս դնելով. գնդեցիկ, պարզ օր, խաղաղ ծով, ջերմ եղանակ, յստակ օդ և այսպիսի մի զբօսանք, սրա ինչն է պակաս։

—Ոչինչ չունեմ դրա դէմ ասելու, բայց այդ ամենին մարդու միտքն ու հոգին էլ պիտի սազ գան. հակառակ դէպքում ձեր ասածները կորցնում են իրանց նշանակութիւնը։

—Բայց կարող է պատահել, ասացի ես, որ արտաքին մթիթարիչ պայմանները իրանց ազդեցութեամբ հոգեկան համապատասխան դրութիւն առաջացնեն։

—Այո, գուցէ. բայց ինձ վրա ախուր բոպէներին ուրախ, ժպտալի պայմանները աւելի շատ ծանրութիւն են բերում, հաճախ զգացնել տալով իմ դժբախտութիւնը, իմ կեանքի և արտաքին աշխարհի մէջ տեղի ունեցող կոնտրաստը։ Բայց երբ շուրջդ էլ ամեն ինչ սև քօղով է ծածկուած, այն ժամանակ դու, այսպէս ասած, լցւում, կշտանում ես և անզգայանում...

—Գուցէ, ասացի ես. այդ ամենը կախուած է հոգու անհատական առանձնայատկութիւններից։

—Ներողութիւն, դուք ճրտեղ էք ուսանում. փոխեց յանկարծ

խօսակիցս իր խօսքը, մի քանի վայրկեան լռութիւնից յետոյ։

—Խարկովի համալսարանում։

—Ի՞նչ մասնագիտութիւն էք ուսումնասիրում։

—Բժշկութիւն։

—Եւ այժմ ամառուայ արձակուրդներին հայրենիք էք վերադառնում։

—Այո։

—Շատ հեռու պիտի գնաք.—ներեցէք իմ հարց ու փորձին։

—Այո, Երևանեան նահանգի գիւղերից մինը։

—Օ՛օ... հեռու է։—Ի՞նչ արած. առ այժմ այդ է մեր բարձրագոյն ուսման ծարաւների վիճակը. հազարաւոր վերստեր ոտքի տակ տալ... Դեռ դուք համեմատաբար մօտ էք գտնուում Կովկասին. իսկ ես ուսանողական տարիներս նախ անց եմ կացրել Պետերբուրգում, որը քայքայիչ ազդեցութիւն է թողել առողջութեանս վրա, իսկ յետոյ Մոսկուայում։

—Ներողութիւն. ինչ է ձեր մասնագիտութիւնը, հարցրի ես։

—Գիւղատնտես եմ, բայց իմ փեշակը թողած՝ վաճառականական գործերով եմ զբաղուած, պատասխանեց գիւղատնտեսը մի դառն և հեգնական քրքիջով։ Դուք անկասկած այդպէս չէք անիլ. բժիշկների բանը բոլորովին ուրիշ է. ձեզ համար հող որքան ուզէք և որտեղ ուզէք՝ կայ, այնպէս չէ՞, ծիծաղեց ուղեկիցս։

—Ճշմարիտ է։

—Ասացիք դուք գիւղացի էք. անկասկած վճռած կը լինէք ձեզ գիւղին նուիրելու, հը՞... այնպէս չէ՞, ճիշտ որոշեցի ձեր մտքինը, չէ՞...

Եւ նա հաւատացած լինելով իր ենթադրութեան ճշտութեանը, կէս հեգնական ժպիտը երեսին, ձեռքը ուսիս դրած՝ սեղմում էր սերտուկիս օձիքը։

—Այո, պատասխանեցի ես. առ այժմ այդ մտադրութիւնը ունեմ, բայց թէ դէնը ինչ կը լինի, այդ Աստուած գիտէ. մարդ ենթադրում է, իսկ Աստուած կարգադրում։

—Ո՛չ, ոչ, վրայ բերեց խօսակիցս արագութեամբ՝ ես համաձայն չեմ այդ մտքին։ Ձեզնից, ամեն ինչ ձեզնից է կախուած։ Եթէ դուք հաստատապէս վճռէք որպէս բժիշկ գիւղին ծառայելու գնալ,

չէք կարող. անկասկած կարող էք, եթէ դուք վառած լինէք գիւղացուն ծառայելու անկեղծ մտքով և դրա հետ միասին ունենաք ուժեղ կամք, պահանջների չափաւորութիւն և այլն, և այլն։ Այդ դէպքում միայն կարող էք ձեր նպատակին նուիրուել. թէ չէ դրանում Աստուած ինչ գործ ունի։ Եթէ դուք գնաք գիւղ, և եթէ նոյն իսկ ամեն տեսակ խոշնդոտներ զոհեն ձեզ ձեր նպատակի համար, դուք այնուամենայնիւ գիւղացուն ծառայողների դասին կը հաշուիք. դուք գնացիք ձեր նպատակի յետևից և ընկաք պատերազմի դաշտում որպէս մի անվախ զինուոր, մահացու գնդակը կրծքին...

Նա պատասխանի էր սպասում, բայց ես ոչինչ չառարկեցի։

—Ներողութիւն. ձեր ազգանունը, հարցրեց ուղեկիցս։

Ես պատասխանեցի նրան։

—Շատ ուրախ եմ, ասաց նա. թոյլ տուէք ներկայանալ. իմ ազգանունն է Սուրէն Մորմոքեան։

Մենք սեղմեցինք միմեանց ձեռքը և այնուհետև մեր խօսակցութիւնը շարունակուեց իր կարգով։

—Գիտէք ինչ կայ, ասաց Մորմոքեանը, նստելով տախտակամածի վրա շարած նստարաններից մէկի վրա. նստեցէք խնդրեմ—գիտէք, այսօր իմ սիրտը շատ տխուր էր։ Այս տարի կինս հիւանդ է. բժիշկները խորհուրդ են տուել Եալտա բերելու. ասենք առանց դրան էլ ամեն ամառ ընտանիքս բերում եմ Եալտա. բնակավայրս Թէոդոսիան է։ Ես այժմ իմ գործերի յետևից եմ։ Ծանր, շատ ծանր էր ինձ համար այսօրուայ հրաժեշտը. ես դնում եմ մօտ երկու ամիս ժամանակով. վաճառականական զանազան կենտրոններ պիտի այցելեմ. ով գիտէ ինչ կարող է պատահել այդքան միջոցում... Աղջիկս էր եկել ինձ ճանապարհ դնելու. շատ խղճում էի նրան։ Երբ նա համբուրեց ինձ և հեռացաւ նաւից, ես նկատեցի, որ նա արտասուում է. բայց նա կարծէք չկամենալով վիշտ պատճառել ինձ, ղբսպեց իրան, մի թաքուն տեղ սրբեց արտասուքը և կրկին կանգնեց իմ առաջ։ Ծպիտ, ինչպէս շատերի երեսին էր փայլում, չկար նրանում։ Իմ սիրտը կսկծում, մորմոքում էր. դուք դեռ չահիլ էք. չգիտէք ինչ է ծնողական զգացմունքը... Ես ինձ չկարողացայ զսպել և դառն կերպով լաց եղայ. աղջիկս հետևեց ինձ և մենք, մեզ բաժանող տարածութեան վրայ կանգնած՝ ողբում էինք միմեանց վիշտը։

Այդ ժամանակ դուք ինձանից փոքր ինչ հեռու կանգնած՝ դիտում էիք Եալտայի գեղեցիկ տեսարանները։ Երբ նաւը պոկուեց ցամաքից, ասէք իմ սրտից էլ մի բան պոկուեց. ես հովութիւն չէի զգնում. մարդ էի որոնում, որ նրա հետ զրուցով կենամ և այդպիսով առ-ժամանակ անզգայ դարձնեմ իմ սիրտն ու ջղերը։

Մորմոքեանի աչքերում ցոլացին արտասունքի կաթիլներ։ Նա հանեց թաշկինակը, սրբեց աչքերը և լռեց։

Ես ոչ մի մխիթարական խօսք չգտայ նրան ասելու—այնքան ծանր թւաց ինձ այդ մարդու դրութիւնը։ Այնուամենայնիւ փոքր ինչ անցած՝ ես կամեցայ Մորմոքեանի մտքերը ցրել նրան տանջող առարկայից, գրաւել նրա ուշքը այլ իրերով, որպէս զի այդպիսով հոգեկան փոքր ինչ հանգստութիւն բերեմ նրան։

—Ասացէք դուք զիւղատնտեսական ճեմարանն էք աւարտել, դարձայ ես նրան։

—Այո, պատասխանեց Մորմոքեանը, սթափուելով մտայոյզ դրութիւնից. տասը տարի սրանից առաջ եմ աւարտել, իսկ աւարտելուց մի տարի առաջ էլ ամուսնացել։

—Ասացէք խնդրեմ, ի՞նչու ապա ձեր մասնագիտութիւնը թողած՝ զբաղւում էք բոլորովին մի այլ փեշակով։ Երևի տէրունական ծառայութիւն չէք ցանկացել, իսկ սեփական հող էլ չէք ունեցել։ Մեր այժմեան գիւղատնտեսներից միշտ այս գանգատն էք լսում։

—Ինչո՞ւ... որովհետև զանազան հանգամանքներ այսպէս են դասաւորել իմ կեանքը, և այդ հանգամանքներից մինն էլ իմ անհատականութիւնն է։ Եթէ ես ցանկանայի իմ մասնագիտութեամբ զբաղւել, կարող էի. այդ իմ ձեռքին էր. հարկաւոր էին մի քանի պայմաններ, որոնց գոյութիւնը դարձեալ ինձանից էր կախուած։ Մարդու կախումը կեանքի հանգամանքներից ես չեմ հերքում, բայց սաստիկ տուում եմ այն վարդապետութիւնը, որն անհատի դերը կեանքի մէջ զրօյի է հաւասարեցնում, համարելով նրան որպէս մի խաղալիք հանգամանքների ճանկերում, ամբողջովին դրանցից կախուած։ Այդ վարդապետութիւնը ես համարում եմ անբարոյականացնող, մարդկային բնութիւնը անասնացնող, քանի որ մեղքերի պատասխանատուութիւնը վերցնում է մարդկանցից։ Ամեն ոք կարող է տեսակ-տեսակ կոմպրոմիսների հետ հաշտեցնել իր խիղճը և կա-

տարած մեղքը հանդամանքների վրին փաթաթելով մէջ տեղը ինքը դուրս գայ մաքուր, անմեղ... Իսկապէս երբ մարդ դէպի մի որոշ նպատակ գնում է հաւատով, համոզմունքով, աներկիւղ, մեծ կամքով և ոչ գլխաւորն է, մի շարք ինքնազոհութիւններ վիզն առած, նա ի վերջոյ ոտքի տակ է տալիս ամեն խոչնդոտ և հասնում իր նպատակին։ Մեղանից շատ բան է կախուած։ Գիւղում գործելու խնդիրը և ինտելիգենցիայի վերաբերմունքը դէպ այդ խնդիրը վերջերս ինձ շատ է հետաքրքրում։ Տասը տարի սրանից առաջ ես էլ վճռել էի գիւղին նուիրուել, գիւղացուն ծառայել. բայց այժմ տեսնում էք որտեղ եմ ընկել և ինչով եմ զբաղւում։

Դառն, արհամարհական ժպիտը նորից փայլեց նրա դէմքի վրայ։

—Դէպի այս դրութիւնը գլորուելու ընթացքում, շարունակեց Մորմոքեանը. իմ խիղճը երբէք չէր թողնում, որ մաքիցս դուրս գայ իմ նախկին վճիռը։ Այդպիսով ես հաճախ վերլուծման էի ենթարկում այն, թէ ինչու հաստատ չմնացի իմ վճռին։ Ես ուսում. նասիրելով իրականութիւնն ու իմ հոգու խորքերը, գտայ, որ շատ մեծ մեղք ունիմ դրանում։ Մեանլ ի այլ դասաւորութեան համար ամենից առաջ ինձանից էի անբաւական, ամենից առաջ ինձ էի մեղադրում։

—Ներողութիւն, որ ընդհատում եմ ձեր խօսքը, ասացի ես. իշնենք ներքև փոքր ինչ նախաճաշելու. ես ուտելու բան և գինի ունեմ։

—Ցանկանում էք ուտել, ասաց Մորմոքեանը. գնանք. որ գինի ունէք, ես էլ ուրախութեամբ կը մասնակցեմ։

Մենք իջանք տախտակամածից ներքև տանող սանդուխքներով և մտանք այն սենեակը, ուր իմ իրեղէններն էին դրած։ Ես բաց արի հացիս կապոցը, մի շիշ գինի, նստեցինք փոքրիկ սեղանի շուրջը և շարունակեցինք մեր զրոյցը։ Ոչ ոք չկար այդտեղ, բացի մեզանից և մի գիմնազիստից, որի վրայ նաւի թեթև օրորումն անգամ ազդել էր... Խեղճ տղան պառկել էր կողքի վրայ, փակել աչքերը և տեղից ամենևին չէր շարժւում։ Առաջին անգամն էր նաւով գնում։

—Եւ այդպէս, խօսեցի ես, ասում էք մեր կեանքի դասաւորելը մեզանից է կախուած։

—Այո, գլխաւորապէս մեզանից։ Ես ինքս էլ գիւղացի եմ։ Հայրս բաւականաչափ հող ունի գիւղում։ այդ հողի հետ միասին զաղափարական մի այլ գործ էլ մտադիր կապել։ Ծառայել ընդհանուրի օգտին, բայց չեղա՛ւ։ ոչինչ չեղաւ։ Ես իմ սեփական կամքով եկայ և հասայ այս 'ասպարէզին։ Իմ կամքը այլ 'պահանջների և պայմանների յետևից էր ընկնում, պահանջներ, որոնք օր օրի վրայ աճում էին իմ մէջ և որոնց կատարեալ բացակայութիւնը գիւղում վրդովում, տեղհան էր անում ինձ։ Ես կը հաւատամ ձեր վճռին, եթէ դուք կարողանա՛ք ամենից առաջ ձեր անձնական պահանջների չափաւորումով մօտենալ գիւղացուն։ Եսական բոլոր պահանջներից ազատ և ինքնազոհ գործչի կատարածն է միայն արդիւնաւէտ։ Եթէ դուք նուիրելու էք գիւղացուն, պիտի զրկէք ձեզ այն բոլոր բարիքներից, որոնցից զուրկ է և գիւղացին. այդ բարիքների յետևից ընկնելը ձեզ իսկոյն հեռացնելու, բաժանելու է գիւղացուց, խորթ է դարձնելու ձեզ նրան։ Օրինակի համար, եթէ դուք ուզում էք հարստացնել աղքատ գիւղացիներին, դուք նախ պիտի հաւատարուէք նրանց և յետոյ ձեռք-ձեռքի տուած աշխատէք ընդհանուրի բարօրութեան համար։ Թէ չէ այդ նպատակը ձեր գլխի մի անկիւնում դրած՝ միւս անկիւնում շարունակ մնացում լինէք անձնական ապահովութիւն ձեռք բերելու, ձեր զարգացած, բազմաթիւ և բազմազան պահանջներին լիութիւն տալու մասին—դրանով դուք գիւղացուն բացի վնասից ոչինչ օգուտ չէք բերիլ։ Իսկ ինչ է ներկայացնում մեր ազգային ինտելլիգենցիան, եթէ ոչ շահամոլների մի ամբողջ դասակարգ։ Ամենքը միմեանց առաջ աշխատում են ձևանալ թէ գործ են կատարում ժողովրդի օգտին, ֆրազներով և կեղծ հոգատարութեամբ միմեանց են խաբում, իսկ ներքուստ իրանց բաներն են դրսում, իրանց փորին, իրանց կաշին են միայն ծառայում։ Հասարակական իսկական ծառայողը անձնական կաշի ունենալ չէ ընդունում։ Ծայրահեղ էգոիզմը և մատերիալիզմը մեր ինտելլիգենցիայի բնորոշ յատկութիւններն են, կեանքի անդատակ կոմֆորտը նրա նշանաբանն է։ Եւ երբ այդ բոլորը բուն են դրել մեր երիտասարդի հոգու մէջ, նա կամաց-կամաց, առաջին պատեհ դէպքում, դէն է շպրտում իրանից այն բոլոր իդէալները, որոնցով նա մի ժամանակ ոգևորուած էր. նա շատ շուտ իր խիղճը հաշտեց-

նում է իր «ես»ին՝ օգտակար կոմպրոմիսների հետ և գլորում անանական դրութիւն տանող ճանապարհով։ Քանի-քանի օրինակներ ենք տեսնում մեր կեանքում։

Մորմոքեանը վերցրեց լիքը բաժակը և դատարկեց միանգամից։

—Սա է մեզ երբեմն ազատում խղճի խայթերից, մոռացնել տալիս մեզ մեր ցաւերը, ասաց նա, բաժակը սեղանի վրայ դնելով. էլ ածէք։

—Ձեր կարծիքով ուրեմն ինչ պատճառներ են առաջ բերում յիշեալ տխուր երևոյթը, հարցրի ես, լցնելով բաժակը. ինչու ինտելլեգենցիան, համալսարանականները գիւղին և հասարակութեանը չեն նուիրւում ծառայելու, չնայած որ դոքա սկզբում մեծ-մեծ խոստումներ են անում։

—Ես մօտաւորապէս ձեզ յայտնեցի իմ կարծիքի գլխաւոր կէտերը այդ խնդրի առիթով։ Ես ձեզ ասացի. կը հաւատամ ձեր նպատակի իրագործման, եթէ դուք ազատ լինէք էգոիզմից, չափազանց պահանջներից և շռայլութեան յետևից ընկնելու ցաւից։ Աւելորդ պահանջներ և շռայլութիւն—սոքա են ամենամեծ ախտերը։ Մի խօսքով եթէ դուք կարողացաք մի շարք զոհաբերութիւններ անել ձեր եսական աշխարհում, ազատուել անձնական այնպիսի կապերից, որոնք գործ չեն շեղում են իր իսկական ճանապարհից և մղում նրան դէպի մանաւոր օգտի աշխարհը, եթէ դուք կարողանաք մոռանալ սեփականը, անձնականը—այդ դէպքում կը հաւատամ ձեզ։ Իմ ամբողջ անցեալը մի դառն խոստովանք է այժմեան տխուր իրականութեան և կարող է ծառայել որպէս պատկեր՝ ասածներս աւելի պարզաբանելու համար։

—Այդ շատ հետաքրքրական է, ասացի ես. պատմեցէք խնդրեմ, եթէ կարելի է և եթէ այդ ձեզ հոգեկան անհանգստութիւն չէ պատճառում։

Մորմոքեանը սկզբում ոչինչ չպատասխանեց ինձ։ Նա կամացուկ վերցրեց բաժակը, մի բոլէ մտախոհ հայեացքով գինուն նայեց և ապա հանդարտութեամբ ծծելով ցաւեր մոռացնող հեղուկը,—

—Պատմեմ, ասաց։ Մեր ժամանակ ուսանողութեան մէջ յաճախ էր պատահում գիւղին ծառայելու գաղափարը։ Այժմ էլ նոյն երևոյթը նկատելի է, կարծեմ։ Շատերն էին ոգևորւած Լև Տոստոյի, Գլէբ Ուսպենսկու և Զլատովրատսկու քարոզած գաղափարներով։ Նարոդ-

նիկների այդ երեք հսկաները հրաւէր էին կանչում ինտելլիգենտ ոյժերին գիւղ գնալու՝ «մուժիկ»-ին ծառայելու համար։ Մերոնք խօսքով արձագանք էին տալիս այդ կոչին և ուխտում էին նուիրուել այդ գործին։ Վերջում, ի հարկէ, ոչ ոք իր ուխտը չկատարեց. համալսարանը թողնելուն պէս՝ ամենքը «հոգս»-ի հոգսի յեռեւից ընկած՝ մոռացան ամեն ինչ և վերջը դարձան կարիերիստների կատարեալ տիպարներ։ Եւ եթէ այդպիսիներին պատահելուց յիշեցնում էիք իրանց խոստումը, մեր նախկին իդէալիստը հանգիստ հոգով և ցինիկական ծիծաղով պատասխանում էր.

—Դրանք բոլորն էլ ցնդաբանութիւններ էին...

Սակայն ես հաւատարիմ մնացի իմ խոստման և գիւղ գնացի. գնալս պիտի վերագրել այն հանգամանքին, որ ես գիւղացի էի. հակառակ դէպքում ես էլ առաջիններին նման կը վարուէի։ Իբր թէ այժմ նոցա դասին չեմ պատկանում... Ես ձեզ ասացի, որ աւարտելուցս մի տարի առաջ ամուսնացայ։ Բարերարս, (հայրս ինձ կարողացաւ միայն գիմնազիոնում սովորելիս երկու տարի օգնել), երբ լսեց դրա մասին, յետ կացաւ իր օգնութիւնից, պատճառ բերելով այն, թէ ինքը սկզբունքով դէմ է ամուսնացած ուսանողի օգնելուն։ Յետոյ իմացայ, որ այդ պարոնի նեղանալու պատճառը բոլորովին ուրիշ բան է եղել. նա իր աղջիկը ինձ համար էր պահել և ինձ էր սպասում... Ինչևիցէ. վերջին տարին մեծ դժուարութիւններ կրելով աւարտեցի։ Այդ ժամանակ Հրանոյշս նոր էր աշխարհ եկել։ Ամբողջ մի տարուայ նեղութիւնների և նորածնի հետ կապուած հոգսերի ծանրութեան տակ ես տատանւում էի գիւղ գնալ. սակայն վերջ ի վերջոյ կարողացայ վճռիս հաստատ մնալ։ Գիւղում աւելի հեշտ է ապրելը. պահանջները այնտեղ քիչ են և շրջապատող պայմանները նիւթական շատ կարիքներ չեն ստեղծում։ Աւելի գիւղում, քան մի որևէ այլ տեղ, մարդ կարող է իրան ապահով համարել. այդպէս էի մտածում ես։ Կինս կասկածով էր վերաբերւում իմ ծրագիրներին, բայց և այնպէս համաձայն էր հետս գիւղ գալու։ Եւ ահա ամառային մի գեղեցիկ օր ջորի նստած և փոքրիկ Հրանոյշը գրկներիս՝ հասանք գիւղ։ Ծննդավայրս գտնւում է բոլորովին մի յետ ընկած անկիւնում. քաղաքից, երկաթուղային գծից և նոյն իսկ պոստային հաղորդակութիւնից հեռու։ Տեղի բնու-

թիւնը գեղեցիկ է. լեռնային լանջ, շուրջը հրաշագեղ անտառ, թարմ, յստակ օդ, ցուրտ և կայծնահամ աղբիւրներ իւրաքանչիւր ձորակում, և կանաչազարդ մարգեր։ Այդ բոլորին հակապատկեր է հանդիսանում գիւղը իր ցածր, սև, մուրճն և համարեա գիտնափոր խրճիթներով, նեղլիկ, անկանոն և աղբոտ փողոցներով։ Գիւղացիների մէջ աղքատներ շատ կան, և այդ նրա համար, որ հողի քանակութիւնը չէ հաւասարւում որովայնների քանակութեանը։ Գիւղացիք ցանում են ցորեն. գիւղի ցածր, տաք մասերում ունեն խաղողի այգիներ և զբաղւում են շերամապահութեամբ։ Գիւղի կլիմայական պայմանները համապատասխանում են այդ զբաղմունքներին։

Երբ հայրս իմացաւ, որ ես վճռել եմ գիւղում մնալու և գիւղացիներին ծառայելու՝ շատ ախրեց.

—Որդի, ասաց նա. ես սպասում էի, թէ կ'աւարտես, կը գաս մի հարուստի, մեծ մարդու աղջիկ կը տանես, մենք էլ հարստանիքովդ կուրախանանք, բայց Աստուած ինձ համար ուրիշ բան էր տնօրինել։ Վնաս չունի՝ ինչ եղել է։ Իսկ հիմա գիւղում մնալուդ ինչ ասեմ։ Աստում էի կ'աւարտես և կը գաս կամ էս կողմերի անտառների վրայ «մեշարէկ» [1]) կը դառնաս, մեր հողերը կը շատացնես և կամ քաղաքում մեծ ուճիկով մի պաշտոն կը գտնես ու մեզ էլ օգնութիւն կը հասցնես։ Գիւղում ինչ պիտի անես դու. էլ ինչի՞ էր հարկաւոր էդքան ուսումը, եթէ վերջ ի վերջոյ գիւղ էիր գալու։ Ի՞նչ գործ կայ էստեղ քեզ համար։ Չէ, խորհուրդ չեմ տալիս. որքան քէֆդ ուզում է էստեղ մնա, իսկ յետոյ գնա քաղաքում քեզ համար մի բարձր պաշտոն գտիր։ Փոքր եղբայրներիդ էլ ճանապարհի վրայ դնելն էլ քո պարտքն է. տեսնում ես, որ հիմա ամենքն էլ դէպի քաղաք են վազում։

Ես, ի հարկէ, համաձայն չէի հօրս հետ. ես բացատրում էի նրան այն միտքը, որ ստանում են գիւղացիք քաղաքից, նկարագրում էի գիւղական կեանքի հրապուրիչ կողմերը և ապացուցանում, որ գիւղացու տնտեսական դրութիւնը բարւոքելով՝ կարելի է ազատել նրան պանդխտութիւնից։ Եւ գտնում էի, որ դրա համար հարկաւոր են անձնուէր մարդիկ, որոնք պիտի գիւղ դայլին՝ գիւղա-

---

[1]) Մեղարէկ=անտառապետ։

ցուն ծառայելու։ Այդպիսիներից մէկը ցանկանում էի ես լինել։ Ի՞նչ դուրս կը գայ միջից, եթէ ամէն ոք միայն իր մասին մտածելով հեռու փախչի հասարակական հոգսերից և գործերից։

—Դու գիտես, որդի, պատասխանեց հայրս. ես քո լաւն եմ ուզում. բայց էս էլ պիտի իմանաս, որ մենք էլ պակաս հոգսեր չունենք։ Դու պատահմամբ Սուրէն վարդապետի շնորհիւ, որ պըտում էր գիւղերը, քաղաք ընկար և ուսման աշխարհը մտար։ Հայր սուրբը ասաց. որդուդ ուղարկիր էջմիածին, ընդունակ է երևում, ես հոգ կը տանեմ՝ կը մտցնեմ ճեմարան։ Շնորհակալ եմ, յաջողեցրեց. իսկ դու չհաւանեցիր, գնացիր Թիֆլիս, մտար գիմնազ և այլն։ Գիւղացիք հիմա օտարութիւն գնալով-գալով լաւ են հասկանում ուսման օգուտը։ Էդ պատճառով դու էլ քո փոքր եղբայրների մասին պիտի մտածես։ Մէկ էլ պիտի իմանաս, որ առաջներում մի քանի շահի հաւաքած փողս քեզ վրայ գնաց, իսկ հիմա մինչև անգամ պարտք ունեմ։ Սրա մասին էլ պիտի միտք անես...

—Հեշտ է այդ ամենը, պատասխանեցի ես։ Եւ աշնան սկըզբներին կամաց-կամաց գործի կպայ։ Առ այժմ, որ պառհ ժամանակ էր, գիւղացոց հետ պիտի զրուցէի խաղող քաշելու բոլոր կանոնների և հող պարարտացնելու ձևի մասին։ Ես արդէն գիտէի, թէ գիւղացիք ինչպէս են կատարում այդ աշխատանքը։ Մեծամասնութիւնը խաղողը քաղում էր ժամանակից շատ շուտ, թէև գիւղացիք փորձով գիտէին, որ հասած խաղողից լաւ գինի է ստացւում։ Կայլն և այլ սխալներ այդ աշխատանքի մէջ։ Մի օր գիւղի հրապարակը ժողովեցի գիւղացոց և մի առ մի պատմեցի նրանց խաղողաքաղի բոլոր կանոնները։ Որպէս զի թթու գինի չունենաք, ասացի ես, թողէք, որ խաղողը բոլորովին հասունանայ. առաւօտը շուտ մի քաղէք, այլ սպասեցէք, որ արևը բարձրանայ, ցողը վերանայ և այլն, և այլն։ Գիւղացիք ընդունեցին մի քանի գործնական խորհուրդներ գինի պատրաստելու և պահպանելու համար, բայց և այնպէս խաղողները դեռ չհասած՝ քաղեցին։ Իմ հարցին, թէ ինչու ապա այդպէս են վարւում, գիւղացիք պատասխանում էին.

—Ի՞նչպէս կարելի է և ինչ միտք ունի. մենք գինի չենք ծախում, որովհետև ծախելու տեղ չկայ. պատրաստում ենք մեզ համար, շատ լաւ գինին ինչներիս է պէտք. միայն թէ շատ լինի։

եթէ խաղողաքաղը ուշացնենք, էն ժամանակ մեր բաղերում խաղող չի մնալ. տանեցիք մի կողմից կ'ուտեն, թուրք ու ճամբորդ էլ միւս կողմից կը գողանան. էլ ինչ կը մնայ գինու համար... Չէ, միտք չունի. թեթև գինուն էլ ենք մենք համաձայն, միայն թէ շատ լինի։

Ես մեր այգիների խաղողը ուշ քաղեցի։ Լաւ գինի ստացուեց։ Բայց որպէս զի գինին պահպանի իր յատկութիւնները, պարզուելուց յետոյ հարկաւոր էր շշերի մէջ ածել։ Ամբողջ գիւղում էլ հազիւ մի քանի շիշ կը գտնուէր։ Ի՞նչ անել. երկար ժամանակ պտտւում էի այդ հարցի շուրջը։ Վերջ ի վերջոյ երկու հարիւր շիշ բերել տուեցի քաղաքից։ Լաւ գինի էի ստացել։ Մի տարուց յետոյ գիւղացիներից շատերն էին համը տեսել և մնացել հիացած։

—Շատ լաւ է, ասում էին նրանք. բայց դէ ո՞վ կարող է շիշեր բերել տալ և քո ասածով պահել. ինչ միտք ունի։

Ես համաձայն էի դրան, որովհետև գիւղացին չունէր արտահանելու տեղ։ Այս դէպքում շիշը նրա համար դառնում է շռայլութիւն, աւելորդ կոմֆորտ,—մի բան, որից ազատ պիտի լինի գիւղացին։ Ինքս անձամբ վճռել էի այդպէս շարունակել, մեր տանը համեղ և պատուական գինի ունենալու համար։ Եւ դա իմ անձնական պահանջներից մինն էր արդէն, որ հակառակ էր ընդհանուրի պահանջներին և որ տնտեսական տեսակէտից վնասակար էր։ Չնայած դրան, ես չէի կարող հաշուել գիւղացոց այն մտքի հետ թէ մի քիչ՝ վատ՝ միայն թէ գինի, և եղածն էլ՝ շատ։

Գիւղացոց հետ ես զրուցել էի հողերը պարարտացնելու մասին. նրանք ընդունում էին իմ խորհուրդները, բայց ցոյց էին տալիս դրանց իրագործելու դժուարութիւնը։

—Այդքան աղբ որտեղից է. չկայ, ասում էին նրանք։

Արդարացի էր այդ պատճառաբանութիւնը։ Զմեռը ես մի զբաղմունք էլ գտայ ինձ համար. տարայ այդ եղանակին գիւղացիք ժողովուում էին գիւղի հրապարակի մօտ կանգնած էյլանը [1]) և շարելով այդտեղ այրուող կրակի շուրջը՝ իրանց պարապութիւնը անց էին կացնում անմիտ զրոյցների, բամբասանքների և կամ կռիւների մէջ։ Կամաց-կամաց այդ ժամերը կարելի եղաւ դարձնել ըն-

---

[1]) Էյլան=սրան։

թերցանութեան դասեր. ես կարդում էի վէպեր, բնագիտական տարբական զրոյցներ, իսկ գիւղացիք ուրախութեամբ և հետաքրքրութեամբ լսում էին։ Սկզբում չափազանց բաւական էի այդ աշխատանքով, բայց յետոյ երբ ուսումնարանի բացակայութիւնը աչք էր ծակում, դա համարում էի մի չնչին բան... Մի անգամ խօսք բաց արեցի ուսումնարան հիմնելու մասին. ամենքն էլ իմ առաջարկութիւնը համարեցին աւելորդ.

—Լաւ բան է տանդ առաջ ուսումնարան ունենալը, ասում էին գիւղացիք. բայց դէ դժար է մեզ համար։ Համ էլ հրէն Թարատափ գիւղը «նորմալնի» ունի, մենք էլ ուսումնահարկ ենք տալիս. ով իր որդուն ուզում է ուսում տալ, թող ուզարկի էնտեղ։

Տարրական դպրոցը բաւական հեռու էր գտնւում գիւղից. և հէնց դրա պատճառով շատ քչերն էին օգտւում դրանից։

Հասաւ գարունը։ Կատարելու գործեր կային իմ առաջ. հարկաւոր էր գիւղացոց սովորեցնել շերամի որդ հանելու իսկական կանոնները։ Ուրեմն յատկապէս կանանց համար ժողովներ պիտի կազմէի և սովորեցնէի նրանց ամեն ինչ։ Այդ ծառայութիւնը ուրիշի համար էր. բայց ինձ դեռ չէի մոռացել. մի նոր բնակարան պիտի շինել տայի. գարունը ամենայարմար ժամանակն է. աշնանը կարելի կը լինէր մէջը նստել։ Կինս շարունակ գանգատւում էր խրճիթներից. ասում էր Հրանոյշի կեանքը ամեն բանից թանկ է իր համար և պահանջում էր թողնել գիւղը, եթէ միշտ շրջապատւած պիտի մնայ այդպիսի պայմաններով։

—Ի՞նչ է սա, ասում էր կինս. մենք, մեծ եղբայրդ իր ընտանիքով, ծնողներդ, փոքրերը—բոլորն էլ մի սենեակի մէջ թափւած... Ի՞նչ օդ է կանգնած այստեղ... Ամռանական զոյգերի մի յարկի տակ մնալը ՝ի՞ սեղ է տեսնւած ժամանակներումս. դա վայրենութիւն է. կենդանիներ ենք, ի՞նչ է... Բարքերի այդքան պարզութիւնը ես չեմ ընդունում։

Կնոջս համար իսկապէս ծանր էր այդ ամենը, որովհետև նա բոլորովին սովոր չէր գիւղին։ Իմ մէջ էլ արթնացել էին նոյն զգացմունքները. և դա հասկանալի է... Ես վճռել էի նոր բնակարան շինել տալ, համարելով այդ բնակարանը արդարացի և օրինաւոր։ Երբ նոր ձևի սենեակները պատրաստւէին, առաջ էր գա-

լու, ի հարկէ, նոր կահկարասիների պահանջը և այդպէս ամեն ինչ իր կարգով։ Մտածում էի, թէ ախր այդպիսով կարող եմ զարգացնել գիւղացոց պահանջները, որոնք չհամապատասխանելով նոցա եկամուտներին, կը քայքայեն գիւղացուն անտեսապէս. իսկ գիւղացին այդպիսի փայլուն բաների յետևից նոյն իսկ աչքերը փակած է վազում։ Ուղիղ ենթադրութիւն էր, բայց այնուամենայնիւ տեսնում էի, որ բոլորի հետ մի յարկի տակ քնել անկարող եմ. իմ պահանջներին դէմ էր այդ։

Վճռել էի գարունքւանից անձամբ մասնակցել հողային աշխատանքներին և շերամի որդերն ինքս պիտի խնամէի։ Բանւորական հագուստ էր հարկաւոր, ուզում էի անպատճառ որոշ տարազի լինէր, թեթև, ամուր, էժան, բայց դեղեցիկ։ Ո՞վ պիտի կարէր այդպիսի բան գիւղում։ Կինս կար ու ձևի մէջ հմուտ չէր։ Քաղաքին պիտի դիմէի։ Եւ ահա մի օր դրա և կնոջս այլ պատուէրների համար գնացել եմ գաւառական քաղաքը, որ երկու օրւայ ճանապարհ է մեր գիւղից, մի շաբաթ մնացել եմ այնտեղ, թէ կնոջս և թէ ինձ համար կարել եմ տալ հագուստեղէն, երեխայի համար գնել եմ մաշիկներ, խաղալիկներ, և այլն, և վերադարձել։ Ահա ձեզ պահանջներ, որոնց կարելի էր մեռցնել մեր մէջ։ Գիւղացու հետ ապրողը գիւղացու նիստ ու կացին պիտի յարմարւի, գիւղացու պահանջներով պիտի բաւականանայ...

Եաոերը իմ պատմած կանոններով որդներ հանեցին սերմից, բայց նոցա խնամելու պայմանները իրագործելու համար ոչ մի ելք չկար առ այժմ. մութ, ցածր, տեղ-տեղ խոնաւ բնակարաններ. ինչ կարելի էր անել։ Բաւականաչափ էլ տերև չկար։ Խորհուրդներիցս օգտւում էին այնքան, որքան հնարաւոր էր։ Եւ դոյա օգուտը բոժոժաքաղի ժամանակ շոշափելի էր, թէև անտշան։ Այդպէս է. ինչպէս որ մանր աղբիւրները միանալով՝ կազմում են վտակներ, իսկ սոքա էլ միախառնւելով՝ կազմում են գետակներ և գետեր, այնպէս էլ գիւղական գործչի մանր գործերի օգուտները ի մի գումարւելով կարող են ի վերջոյ կազմել մի մեծ, աչքի ընկնող օգուտ։ Հարկաւոր է միայն միշտ մնալ գիւղում. բայց մենք չենք մնում. այնքան գերի ենք դառնում մեր անձնական պահանջներին։

Մեր նոր շինութեան հիմքը դրւած էր և գործը արագ-արագ

առաջ էր գնում։ Զորս սենեակ պիտի լինէր՝ առողջապահական կանոնների համաձայն կառուցած։ Այդ շինութիւնը երեք հարիւր ռուբլի կ՚արժենար, որից մօտ հարիւրը կը ծածկէր բոժոժից եկած մուրքը։ Մնացածը պարտք էր մնալու վրաս։ Որտեղից պիտի ծածկէի այդ պարտքը. դեռ հայրս էլ պարտք ունէր... Ինձ համար հեշտ էր թւում փող ձեռք բերելը և այդ պարտքերը վճարելը. այժմ սենեակ էր հարկաւոր, և իմ միտքը գլխաւորապէս դրա վրայ էր կանգ առել։ Արդէն կամաց-կամաց բացառիկ դիրք էի ընդունում դիւղում. դեռ ուրիշի համար ոչինչ չարած, ուրիշի խրճիթի մէջ ոչ մի բարեփոխութիւն չը մտցրած՝ իմ անձնական անդորրութեան համար էի հոգ տանում...

Հայրս ուրախ էր նոր շինութիւնով, թէև նրան անհանգստացնում էր վերահաս պարտքը. բայց նրան այնպէս էր թւում, որ մի օր այդ պարտքը հեշտութեամբ կը վճարուի. ապա որ օրուան համար էր համալսարանական որդին...

Կնոջս զանգատները՝ գիւղական միակերպ, տաղտկալի և իր համար բոլորովին օտար կեանքի վերաբերեալ՝ սաստկանում էին օր օրի վրայ։ Ես նրան խորհուրդ տուեցի տղջիկներ ժողովել և պարապել հեռոները։ Նա համաձայնուեց և աւելացրեց.

—Կ՚անեմ այդ. դիցուք մի տարի էլ դրանով կարողացայ ինձ զբաղեցնել. յետոյ. խում մինչև վերջը չեմ կարող այստեղ մնալ. ծընուած քաղաքում, սովորած քաղաքին և մի շարք որոշեալ պահանջների՝ ես այս յետ ընկած անկիւնում պիտի կեանքս մաշեմ։ Զուտնես քեզ հասկացող կին, տղամարդ, որի հետ խօսէիր երկուսիդ էլ հետաքրքրող հարցերի մասին. չկան բազմակերպութիւն բերող պայմաններ. ինչ է իմ դրութիւնը. պարապութիւն և լռութիւն. ինչ խօսես շուրջդ գտնուողների հետ, երբ նրանք քեզ բոլորովին չեն հասկանում.... Հարաւի հողին ու ջրին սովոր բոյսը տար հիւսիսում տնկիր. կարող է աճել. ոչ. այնպէս էլ ես. միայն կեանքս կը մաշի անտանելի միայնակութեան մէջ։ Այս կեանքը միայն թախծութիւն և ջղային քայքայում կարող է առաջացնել... Վերջապէս դու բոլորովին մոռանում ես Հրանոյշին. դու մոռանում ես ծնողական պարտականութիւններդ. նրան մեծացնել, կրթել և ուսում տալ է հարկաւոր։ Գիւղը ոչ մի նպաստաւոր պայման չի ներկայացնում

դրա համար։ Ձեմ հերքում, գիւղը երեխային առողջ կը մեծացնէ, կամրապնդէ նրա կազմուածքը, բայց որքան կը տուժէ նրա կրթութիւնը։ Ամեն քայլափոխում դու հանդիպում ես հակամանկավարժական և հակակրթական երևոյթների, որոնց դէմ կռուել անհնարին է. ընտանիք չկայ այստեղ։ Այլ է քաղաքը։ Եւ Հրանոյշի կրթութիւնը, իմացիր, որ շատ բանից է բարձր ինձ համար... Թող գիւղական կեանքի զարգացումը գնա ինքն իրան, արտաքին հանգամանքների, կեանքի ամբողջ մեխանիզմի ընդհանուր շարժումների հրոցներից, իսկ դու ոչինչ չես կարող անել գիւղացոց համար... Ի՞նչու իզուր տեղից զրկանքների ես ենթարկում թէ ինձ, թէ քեզ և թէ այս նորածին հոգուն։ Գիւղը մեր տունը չէ...

Ես համաձայն չէի այդ ամենի հետ և կնոջս ասածների մէջ տեսնում էի եսասիրական զգացմունքներ ու պահանջներ։ Թող իմ որդին էլ մեծանայ այնպէս, ինչպէս գիւղի մնացած երեխաները, ասում էի ես, մինչդեռ մենք նրան անհաւասարութեան մէջ էինք պահում. Հրանոյշը ունէր մաշիկներ, իսկ շատ երեխաներ վազվզում էին բոբիկ, գլխաբաց... Անկասկած էր, որ ես իմ ներկայութեամբ օգուտ էի բերում գիւղացոց. թող այդ օգուտը չնչին լինի. նա շուտափելի կը դառնայ երկար տարիների ընթացքում։ Եւ խնդրում էի կնոջս, որ նա զսպէ իր պահանջները, աշխատէ հաշտուել իր դրութեան հետ և կեանքը լցնէ նոր բովանդակութեամբ՝ վերցրած գիւղական մթնոլորտից։

Ամառը մասնակցում էի մեր հնձին ու կալին։ Մոքովս անցնում էր հնձի և կալսելու մեքենայ բերել տալու հարցը, բայց տեսնում էի, որ դա գլուխ գալու բան չէ. նախ այդ մեքենան բան կը տայ միայն տափարակ տեղերում, իսկ այդպիսի դիրքից զուրկ էին մեր գիւղի ցանքսերը... մէկ էլ որ գիւղացիք չէին համաձայնուիլ մեքենայի արժէքին հաւասար գումարը ժողովելու, մանաւանդ որ մի քանիսն էր հարկաւոր լինելու։ Գիւղացիք առ այժմ բաւական էին համարում իրանց հին միջոցները։ Մտածում էի սայլի ճանապարհ և սայլեր մոցնելու մասին, բայց այդ ուղղակի անկարելի էր իրագործել, բնական աննպաստ պայմանների շնորհիւ։ Մեծ աշխատանք և ծախք էր պահանջում այդ ամենը, որ գիւղացու ոյժից վեր էր։

—Մի բուռը հող ունեմ, ասում էր գիւղացին, որից մի տարուայ հացս հաղիւ եմ ստանում։ դրա համար գնալու եմ էդքան ծախքեր անեմ. ինչ միտք կայ։ Մաշինը որ բերել տուինք, էլ մեզ ինչ գործ է մնում անելու...

—Էդ դէն դնենք, ասում էր քաղաքում պանդխտութիւն կրածը. մի զաւոդչի, որ նոր է հլա գործ սկսում, գործը փոքր է և հարուստ չի, նա հասարակ և հին մաշիններով է իր զաւոդը բանեցնում։ հարստանալու հետ էլ նոր տեսակի մաշիններ է բերել տալիս։ Էնպէս էլ մենք. ստացածներս մի փոքր հաց է, էն էլ ուզում ենք, որ պարտքովի ձեռք բերած մաշինը բերի դնի մեր բերանում. ինչու, մենք ձեռք չունենք, թէ եզ ու էշեր...

Երկար չէի կանգ առնում դրանց վրայ, ընդունելով այդ ամենի անժամանակ լինելը։ Ցորենի հունձը լաւ չէր այդ տարի։ Անցած տարին նոյնպէս։ Զուտ կլիմայական պայմանների հետևանք էր, որոնց դէմ անհնարին էր կռուելը։ Հօրս դէմքը, իհարկէ, մթնած էր։

Որտեղից պիտի ծածկուէր աճող պարտքը։ Իսկ ես ինչ աշխատանք էի տուն բերում. ոչինչ. արածներս առանց ինձ էլ անում էր և կ'անուէր. ես միայն սիրող երկրագործ էի հանդիսանում, ուրիշ ոչինչ։ Բուն հողագործութեան վերաբերեալ խորհուրդներս էլ մեծ արժէք չունէին ինքնըստինքեան, որովհետև գիւղացին փորձով համարեա ամեն ինչ ձեռք է բերել. նա գիտէ, որ հասած խաղողից լաւ գինի է ստացւում, բայց զանազան հաշիւներից դրդուած՝ անժամանակ է քաղում խաղողը։ Ի՞նչ էր ապա իմ արածը, մտածում էի ես։

Աշունը կրկին հասել էր։ Գիւղական ընդհանրութեանը ուղղած մի աշխատանք, որ վերաբերուէր նրա տնտեսական կեանքին, այլ ես չկար իմ առաջ։ Պարզ տեսայ, որ մասնագիտութեանս գործադրութեան համար չկայ պահանջելի միջավայր։ Զկար տնտեսական խոշոր ձեռնարկութիւնների ասպարէզ. ես դէս դէն էի ընկնում և վերջը չիմանալով ինչ անել, ընկղմւում էի ճնշող մտքերի աշխարհը։ Միւս կողմից կամաց-կամաց ձայն էին բարձրացնում մեր պահանջները, ապահովութեան խնդիրը, ընտանիքի հոգսը և այլն, որոնց ուսերիցս շպրտել չէի կարող... Համայնական աչքի ընկնող գործեր ևս չկային. մնում էր աշակերտներ ժողովել և պարապել

հեռները. բայց ես դրա համար չէի գիւղ եկել և ցանկութիւն ու պատրաստութիւն չունէի այդպիսի աշխատանքի նուիրուելու։ Իմ գործունէութիւնը գլխաւորապէս պիտի նպաստէր գիւղացոց տնտեսական պայմանների զարգացմանը։ Իսկ դրա համար ես իմ ոտքերի տակ պատրաստի հող չունէի։ Ինչպէս կարող է մի տեղի արդիւնաբերութիւնը զարգանալ, եթէ չկան արտահանութեան և արդիւնաբերական պայմաններ։ Մնում էր էլի ընթերցանութեամբ զբաղուել գիւղացիների հետ, խառնուել համայնական մանր գործերի մէջ, իսկ տանը գինու շիշերով կենալ...

Մեր նոր բնակարանը արդէն պատրաստ էր և մենք ապրում էինք այնտեղ։ Զնայած դրան, կիսս յաճախ յիշեցնում էր ինձ, թէ այդ ձմեռը վերջինն է, որ մենք անց ենք կացնում գիւղում։ Ես ոչինչ չէի պատասխանում և լուռ ու մունջ մտածում էի այն մասին, թէ արդեօք իրաւացի չՁն կնոջս պահանջները։ Մի դէպք առիթ տուեց ինձ վերջնական եզրակացութեան գալ դրա մասին և հենց այդ դէպքը ընդմիշտ որոշեց իմ վիճակը։

Մի օր հայրս տուն եկաւ շատ տխուր դէմքով։ Իմ հարցին, թէ ի՞նչ է պատահել, նա վրդովուած եղանակով պատասխանեց.

—Ի՞նչ պիտի լինի. պարտատէրը այսօր իր փողն էր պահանջում։ ասում է մուրհակը նորոգելու ցանկութիւն չունի, որովհետև իրան փող է հարկաւոր։ Կամ փողս տուէք, ասում է, և կամ դրա փոխարէն հող, ջորի, տաւար, մի խօսքով մի ուրիշ ապրանք։ Հիմա քեզ եմ հարցնում, որդի, ինչպէս անեմ. ուրախ էի, թէ կը գաս եղած պարտքս կը վերջացնես և ինձ օգնութիւն հասցնելով՝ գիւղի համփանների շարքում կը դնես. բայց ինչ դուրս եկաւ միջից. եկար և եղած պարտքի վրայ նոր պարտք ստեղծեցիր։ Ինչ հարկաւոր էր էս շինութիւնը, որ հիմա էսպէս նեղ օրում մնամ ես, գլուխս քարշ սիրտս սև... Կամ եթէ էդպէս բաների ես կպչում, ուզում ես քաղաքի պատրաստ ունենալ, պիտի դրա համեմատ էլ աշխատանք, ռոճիկ բերես էս տունը։ Բայց դէ որտեղից կը բերես, գիւղում մնալով։ Գեղավարի էլ ոչ դու կարող ես ապրել, ոչ կինդ և ոչ երեխադ... Վերջապէս եթէ գեղավարի էիր ապրելու, ինչինչ էր էդքան ուսումը։ Օտարութիւն գնացողները, տեսնում ես, գալիս են և իրանց սովորութիւնների, իրանց նիստ ու կացի մէջ մի բան ստե-

լացնում: Հիմա դու կարող ես ախր մեզ նման ապրել։—Եթէ էս տեղ մի լաւ գործ ունենայիր, ինչպէս քէֆդ ուզում է, էնպէս էլ կ'ապրէիր, բայց որ չկայ... Պարտատիրոջ ձեռքից ինչպէս պրծնեմ ես, ասա...

Ես ոչինչ չգտայ առարկելու։ Միայն մխիթարել սկսեցի հօրս. մի յուսահատուիր, ասացի ես սաստիկ յուզմունքով. երբ որ քո դրութիւնը այդքան ծանր է և կրիտիկական, ես քաղաք կը գնամ և կ'աշխատեմ քեզ այդ ցաւից։ Հայրս փոքր ինչ միամտուեց և ասաց.

—Մի ուրիշ մարդուց փող եմ վերցնելու պարտքս վճարեմ, իսկ դու, յուսով եմ, քաղաք կը գնաս, կ'աշխատես և շուտով կ'ուղարկես։

Ոչինչ չպատասխանեցի այլ ևս։ Ամբողջովին ընկղմել էի ճընշող մտքերի աշխարհը։ Իմ կեանքում դեռ այնքան տխուր, այնքան շանթահար չէի եղել, ինչպէս այն երեկոյ։ Առանձնանալով իմ սենեակում, ես նեռուեցի մահճակալիս վրայ և աչքերս փակած մտածում էի իմ ներկան պարզաբանելու։ Սակայն հօրս արդարացի բողոքը ինձ հանդիստ չէր տալիս, մտքերս չէին կենտրոնանում մի որոշ հարցի շուրջը և աճող տխրութիւնը ծանր քարի պէս ճնշում էր իմ կուրծքը։ Ինձ տանջում էր այն, որ նոր բնակարան էի կառուցել, ունէի գիւղին և միջոցներիս անհամապատասխան նիստ ու կաց և որ իզուր տեղից գիւղ էի եկել... Սխալ քայլերիս յաջորդած փոշմանումը պատառում էր իմ կուրծքը։ Կինս մօտեցաւ ինձ և հանգըստացնելու նպատակով ասաց.

—Ի՞նչ ես սուգ արել. օրերս շատ ուրախ են անցնում, դու էլ այդպէս մթնացրել ես դէմքդ... Հորդ ասածները իրաւացի են։ Միւս կողմից ես նկատել եմ, որ դու ինքդ էլ բաւական չես եղել քո դրութիւնից, որ գիւղական կեանքը բաւականութիւն չէ տուել քո հոգեկան պահանջներին. այդ քեզ վշտացրել, անդամ վրդովել է. բայց և այնպէս դու ոյժ ես դրել վրայդ, ցանկացել ես անպատճառ հաշուել դրութեանդ հետ։ Ի՞նչու. անօգուտ, աննպատակ ճիգ է եղել այդ քո կողմից։ Գնանք քաղաք, աղաչում եմ. չգիտես, թէ որքան զզուել եմ գիւղից և որքան կարօտել քաղաքը. գիտես թէ որպիսի հոգեկան տանջանքներ եմ կրում ես ամեն անգամ այս բանտարկեալ դրութեան մէջ, երբ մտքով թռչում եմ Մոսկվայի

օպերային թատրոնը, երբ յիշում եմ Թիֆլիսը, գոլովինսկի պրոսպեկտը, ընկերուհիներիս, նրանց շրջանն ու գրականական երեկոները, երբ վերջապէս այս անապատի մենաստանում նկարւում է իմ առաջ սրտիս մօտ կեանքը իր գոյնզգոյն պատկերներով... Եւ արւում է հոգիս, յուսահատութիւն առաջացնող զգացմունքների մի ամբողջ հեղեղ. քիչ է մնում որ խանգարէ իմ հոգու հաւասարակշռութիւնը, և ես զգալով իմ անզօրութիւնը այդ բոլորի առաջ՝ ընկնում եմ շանթահարի նման... Ինչու կրել այդպիսի տանջանքներ։ Ես պահանջում եմ, որ դու ազատես թէ ինձ և թէ քեզ այս անտանելի դրութիւնից և մոռանաս թէ մեր և թէ զաւակներիդ ապահովութեան մասին։ Հրանոյշը արդէն երեք տարեկան է, մէկն էլ շուտով կ'ունենանք, և ես երաշխաւոր չեմ, որ այլ ևս չեմ ունենալ... Դրանց պահել է հարկաւոր... Ես չեմ կարող իմ որդուն բոլոր պահել, գլխաբաց և շորերը պատառոտած. ես չեմ կարող իմ որդուն առանց բարձրագոյն ուսման թողնել, իսկ այս ամենը պահանջում են միջոցներ... Վերջ դիր համառութեանդ։

—Եթէ քաղաքի շնորհիւ մեր վրայ պատուաստած պահանջները չենք կարողանում խեղդել մեր մէջ, այն ժամանակ այն, պիտի թողնել գիւղը, ասացի ես վրդովուած։ Կամք չունենք, եսասէրներ ենք, ամեն տեսակ պահանջների և կոմֆորտի գերի...

—Թող այդ խօսքերդ, ասաց կինս. հօրդ խօսքերին ինչ ունես պատասխանելու. քեզանից նա աշխատանք է պահանջում և դու պարտաւոր ես նրան օգնել...

Հոգեկան փոթորիկը կամաց-կամաց անցնում էր. մռայլուած մտքիցս բարձրանում էր խաւարի վարագոյրը և արշալոյսը լուսաւորում էր իմ հոգեկան աշխարհը... Հաշտւում էի վիճակիս հետ և օրինաւոր էի համարում ինձ ուղղուած բողոքները։

Մորմոքեանը մի առանձին դառնութեամբ և հեգնութեամբ արտասանեց այդ խօսքերը։ Նա շարունակեց.

—Դիտես ինչ, դարձայ ես կնոջս միւս առաւօտեան. ճիշտ էր, որ ես այսուհետև ոչինչ չունեմ այստեղ անելու։ Գործունէութեան այն էլ անտեսական գործունէութեան պայմաններ կատարելապէս բացակայում են այստեղ։ Գիւղում վայր ընկնելով կամ պիտի պարապ բերեմ վրաս յանուն իմ պահանջների և կամ դոցա լիութիւն տա-

լու համար պիտի մանաւորեմ, առանձնանամ, գիւղացոց տգիտութիւնից ու թուլութիւնից օգուտմ... Ես դեռ մտածում էի ինձ համար կանոնաւոր ընթերցարան և գրադարան կազմել. ինչ միջոցներով պիտի իրագործէի այդ, հարց է. հօրս ունեցածը ծախսելով... Այո, սիրելիս, առ այժմ պիտի հեռանանք գիւղից և թողնենք, որ կեանքը ինքը բերէ ու շպրտէ մեզ այստեղ. այդ դէպքում բնական կը լինի, հասկանալի և տանելի. սա արհեստական է և ծիծաղելի...

Այդպիսի կոմպրոմիսներ էի մտցնում իմ մտքի մէջ, աւելացրեց Մորմոքեանը նոյն հեղնութեամբ. և այդ ամենը յանուն այն պահանջների, որոնց ցանցի մէջ խճճուած էի ես։ Ենթադրեցէք մի բոպէ, որ ես էլ իմ պահանջները հաւասարացնում եմ գիւղացու պահանջներին, ես և կինս ապրում ենք գիւղացու և գեղջկուհու նման, երեխաս—գիւղացի երեխայի նման, և միայն այդ հաւասար դրութեամբ աշխատում գիւղացու դրութիւնը բարւոքել. հաւատացէք, որ դուք կը կպչէք գիւղին .. Կինս, իհարկէ, ուրախ էր նոր խօսքերովս, այլ ես չէր գանգատւում և համբերութեամբ սպասում էր այն օրին, երբ մենք կը թողնէինք գիւղը։ Հօրս ցանկութիւնն էլ այդ էր։

Ամեն ինչ վճռուած էր։ Ամառւան սկզբներին մենք ճանապարհուեցինք գիւղից։ Մոռացայ ասել, որ այդ տարի ես գիւղական գրագիր էի, տարեկան 25 րուբլով։ Այդ դումարը գիւղացու համար մի բան է, իսկ ինձ համար՝ պահանջներով հարուստ մարդու համար՝ ոչինչ։ Ահա թէ ինչու գիւղական գործչին անհրաժեշտ է պակասացնել իր պահանջները։ Թէ յետոյ ինչպէս քաղաքում մնալով վաճառականական ասպարէզ մտայ, այդ արդէն մեր խօսակցութեան բուն խնդրին չէ վերաբերում. չէ՞ որ մենք զրուցում էինք գիւղին նուիրուելու պայմանների մասին։ Այսքանն էլ բաւական է։ Զափաւորեցէք ձեր եսասիրական պահանջները, կոմֆորտի յետևից մի ընկնէք, սովորեցէք գիւղացու նման ապրել, նրա նիստ ու կացը ունենալ և ես կը հաւատամ, որ դուք կ'իրագործէք ձեր ասածները։

—Պարոն Մորմոքեան, կամք էլ է հարկաւոր, ասացի ես։

—Անկասկած։

—Բայց գիտէք ինչ, ասացի ես. կարծում եմ, որ առանց

այդպիսի միջոցների էլ բժիշկների և այլ մասնագէտների կազմող պրոլետարիատը ստիպուած է լինելու գիւղերը ցրուել...

—Այո, աւելի լաւ. բայց դա շատ երկար կը տեւէ մեզանում, իսկ գիւղացին այժմ է օգնութեան կարօտ։

Նա վեր կացաւ տեղից։

—Բարձրանանք տախտակամածը, ասաց նա. երկար նստեցինք այստեղ. ճանձրացայ։

Մենք բարձրացանք և միասին դիտում էինք շուրջները։

Ծովը խաղաղ էր։ Ջերմ արևի կիզիչ ճառագայթների արտացոլումից ջուրը արծաթի պէս փայլում էր։ Մանրիկ ալիքներն իրանց նայողի աչքն էին ծակոտում։ Իսկ նաւը՝ սեգ ու հպարտ՝ առաջ էր ընթանում։ Սուր կուրծքը դէմ արած՝ նա ուժգին սահումով պատառում էր ջրի հսկայական շերտերը և թողնում յետևից ջրային մի լայն ուղի—իր նաւման փառաւոր հետքերը...

1898 թ. Տիզա։

ՊՐՈՄԵԹԷՈՍԻՆ

ՓՐՈՒԴ'ից Թարգմ. Յակոբ Յակոբեանի

Անհուն տանջանքը սեղմած իմ կրծքին,
Ես դեռ լսում եմ քո հառաչն ու լաց,
Նայում ահռելի այն լերկ քարափին,
Ուր շղթաներով էիր կաշկանդված։
Օ, Արամազդը անգութ էր, անխիղճ,
Անողոք իրա դատաստանի մէջ...
Բայց պահ մի լռիր, ով դու անմեղ զոհ
Վրէժխնդրութեան, ու լսիր և ինձ.
Չեմ յափշտակել ես Աստուածանից
Անիրաւաբար սրբազան կրակ,
Նա ինքը տուեց իրան կամքով ինձ,
Որ վառեմ խաւար ամբոխի ճրագ.
Եւ այդ կրակը առանց տրիտուր
Ինձ չէ շնորհուած վերին պատգամից,
Արիւն արցունքովն իմ աղեկտուր
Միայն յաջողուեց գնել Նորանից.
Եւ մինչ այսօր էլ կրակի գլնով
Վճարում եմ ես նորան արցունքով։
Եւ չէ թէ մի անգղ է ինձ յոշոտում,
Այլ հարիւր անգղեր, բիւրաւոր օձեր
Իմ որբ, անպաշտպան սիրտս են խայթում
Ու պատառոտում արիւնոտ վէրքեր.
Օ', շատ չնչին են քո տառապանքներ
Թէ համեմատենք իմ կսկիծի հետ։

*
* *

ՓՐՈՒԴ'ի Թարգմ. Յակոբ Յակոբեանի

Մի բեռը կացին անտառի միջով
Տանում էր սայլը ճիչ ու ճռինչով
Եւ արեգակի հզօր ճաճանչներ
Փայլեցնում էին նորանց պողպատեայ
Սուր-սուր բերաններ։
Եւ ահա յանկարծ մատաղ թղթենիք՝
Լսելով ձայնը անգութ տապարի՝
Վախկոտ շշուկով սկսան դողալ,
Զգալով իրենց մահը եղկելի.
Բայց ծեր եղևին՝ դարերի որդին
Շշնջաց կամաց թղթենիներին.
Ինչու վախեցաք, դողում էք արդէն.
Թող որքան կ'ուզեն կտրեն մեզ հիմքից,
Մենք չենք վախենալ մեր ոսոխներից.
Քանի կացինին դուք կտաք կոթեր—
Դեռ շատ պիտ զրկուէք ձեր զաւակներից։

ՄԱՀԻԱՆ ԱՌՋԵԻ

ԻԶԱԲԷԼԼ ԿԱՅԶԷՐԻ Թարգմ. Ատոմ Շահէնի

Իրիկունն է, պատերազմէն եաքը։

Վիրաւորը քիչ վեր կը բարձրանայ ու կը նայի։

Թնդանօթին ձայնը կը զոռայ տակաւին, աղօտ լոյսեր կ'ալրեն հորիզոնը, և ետ մնացած գնդակներ կը թափառին օդի մէջ։ Հեծկլտանք մը կ'ելլէ։

Կը գիտէ չուրջը ու իր աչքերը մղձաւանջի երեւոյթի մը դերի կը կարծէ. դաշտը կը տարածուի՝ ստուերով ողողած, մարդկային մարմիններով բրգացած։ Ձիերը կը թափառին՝ գլուխնին կախ, բաշերնին հովին, իրենց աչքերը կը վառին գիշերուան մէջ և սարսափահար կը խրխնջեն։

Վիրաւորը ձեռքովը կը շոշափէ հողը, ու ձեռքը կը հանդիպի կակուղ, սահուն և տակաւին տաք բանի մը, իր ձիուն, իր ընկերոջը փայտացած կողերուն։

Այո՛, կը լիշէ, իրիկունն է, պատերազմէն եաքը. ու ինք մեռնելու է հոն, մին մինակ, առանց օգնութեան, սա լուսնին տակը որ իրեն կը նայի։

Թռչուններ կը ճախրեն, նեղցնելով իրենց շրջանակը... Այդ լափրացած և արիւնոտ կտուցով թռչունները մեռած զինուորներու կուրծքին պիտի քնանան այս գիշեր։

Թեր կը շարժէ՝ այդ զազրելի կենդանիները քշելու համար։

—Բայց ես չեմ փտիր... բայց ես կ'ապրիմ։

Կը փրցնէ թաց համազգեստին կոճակները. իր մատերուն մէջէն տաք հատանք մը կը սպրդի. կեանքը, իր աղտոտ կեանքը որը կը սիրէր...

Այո՛, կը լիշէ. գերութեան լուծին վերջին հարուած մը տալու համար հնչած էր լարձակման ժամը։ Դաշտնէ մը դատ ուրիշ ոչինչ զէնք չիկարաղպիսի ժամերուն այլ ես չեն վարանիր։ Իր բանակը ջարդ ու փշուր եղած էր և իր ձին ալ սպանուած իր տակը։ Զինուեր էր մեռածի մը ու�նով և ձախ բազուկով հարուածներ կուտար. ռումբ մը տարած էր իր աջ բազուկը։ Յետոյ, ուրիշ մեծ հարուած մըն էր իր կուրծքին ուղղուած ու

ինքն ալ ինկաւ իր կարգին, գրեթէ խսկոյն կոխոտուելով թշնամի ձիերէն։

Հիմա իրիկունն է, պատերազմէն ետքը։

Ալլարտ հարիւրապետը չուզեր մեռնիլ հոն, լքման մէջ։

Աղետաբեր հիւրերը—որ կը կողոպտեն մեռելները—կ'երթանք կուգան ու զինքն ալ պիտի կոցահարեն. պիտի լափշտակեն իրմէ իր նշխարները ու մատանին ալ որ կը շողայ իր մատը, Օտէթին մատանին։

«Չէ, չէ. օգնութեան հասէք ինծի» կը ճչայ իր ձայնը, և ափերով կանաչ խոտ կը փրցնէ ու անով իր վէրքը կը խցէ մոլեգնօրէն։

Օտէթ։ Ի՞նչպէս կրկին կը տեսնէ իր դեռատի նշանածը, կենսունակ և լուսազեղ. այդպէս էր տեսեր այն հանդէսին, որ ատեն, երկու պատերազմի մէջտեղ, լափշտակուած էր զինուորի իր սիրտը աղջկանը մէկ ժպիտով։

Օտէթ... Ուրբականը կը ծռի դէպի ինքը, բայց կը զգուշանար իր վէրքերէն։ Ուրբականը կը փախի՝ իր մանրիկ ոտքերովը հաղիւ քսելով ձիերու գաւակին... Օտէթ...

Իր ձեռքին տակ ճմռթկած թուղթ մը կը խշրտայ։ Վիրաւորը կը քննէ անիկա։ Գեղեցիկ ու քաղցր մտածում մը կը մխիթարէ իր հոգին։ Նամակ մըն է, բոլորովին տաք իր ծոցի ջերմութենէն ուր հանդչած է, Օտէթին վերջին նամակը։

Այդ նամակը բանակին մէջ ստացեր էր, այն միջոցին երբ փողը կը հնչէր արդէն marche-ը. ու չէր կրցած կարդալ։ Բայց երջանիկ անիկա ունենալուն՝ դրած էր իր ալտին վրայ, կնոջ մը սիրոյ խօսքերը դէն ու դրան ընելով։

Գնդակները աւելի վերօք զարնուած էին՝ արհամարհելով խեղճուկ նամակը. և գնդակները ճիշտ ու ճիշտ նշան առած էին։

Բայց կ'ուզէ կարդալ. ժամանակ կայ դեռ։ Իրեն կը թւի թէ այս նամակին ընթերցումը իր սթափադեղը պիտի լինէր՝ ապրելու համար, ու կամ մահադեղը։

Արդէն ծրարը կը տանի իր շրթներուն և ակռաներովը կը պատռէ։ Գէշ աղէկ կը բանայ նամակը, որ դերեզմաննոցի ապականութեան մէջ տիրող արեւածաղկի սուր հոտ մը կը բուրէր։

Կը դիտէ. բայց ոչինչ չի զանազաներ։ Ի՞նչ ընել։ Գիշեր մը լոյս, լուցկիի բոց մը զինքը պիտի փրկէր։

Ծունկերու վրայ սողալով կ'երթայ մինչև վիրաւորի մը մօտ, որ կը հեծէ։

—Է՛հ, ընկեր, կրակ ունիս ընկեր։

Բայց մարդը չի լսեր. անոր շրթները քաղցր, օտարոտի անուն մը կը կանչեն. «Միւէդերլի»։

Ալլարտ հարիւրապետը վար կ'իջնայ կրկին, ընկճուած։

—Աստուածս, Աստուածս, օգնեցէք... որ չան մը պէս չսատկիմ... օգնութիւն, օգնութիւն։

Վարը կարծէք թէ արիւնոտ լիճի մը վրայ թափառական կրակներ կ'երևան. գործոն կեանքի դողացող ձայներ իրար կը կանչեն ու իրարու կը պատասխանեն։

Վիրաւորը ճիչ մը կ'արձակէ։ Դթութիւնն է որ կու գայ օգնութեան. հիւանդախնամներ են։

—Ինծի՞ եկէք. Աստծու սիրուն։

Արդէն կին մը ծռած է իր վրայ և շրթներուն կը տանի զօրացուցիչ գեղի ամանը։

—Խմէ, զինուոր։

Բնազդաբար կուլ կու տայ լեցուն՝ բերնով զօրացուցիչը որ տաք գգւանքի մը պէս կը վազէ իր մարմնի երկանքն ի վար. ու կը նայի անոր որ իրեն կեանք կը հոսեցնէ թերևս։ Աղոտ կանթեղին լուսովը՝ կ'որոշէ հիւանդախնամի սպիտակ գլխանոցին տակ հիւծած դէմք մը, երիտասարդ մնացած՝ բարոյական զեղեցկութեամբ մը, և վշտի ու կարեկցութեան աչքեր։ Կուրծքին վրայ արծաթէ խաչ մը կը շողայ։

Ես, համարձակ, անոր կ'երկնցնէ նամակը։

—Կարդացէք, քոյրս, կարդացէք։

Ան չառներ նամակը։

—Ի՞նչ է սա։ Նախ, թող որ ձեր վէրքը կապենք. ամբողջ արիւնով կը կորսնցնէք։

Վիրաւորը կամացուկ ետ կը մղէ գթութեան քոյրը, անզօր շարժումով մը։

—Ի՞նչ ընեմ։ Կը տեսնէք որ կը մեռնիմ, թողէք իս. ես Բոլ Ալլարտն եմ, Շալոնցի, 13-րդ զինուորաշարին հարիւրապետ։ Կարդացէք ինծի սա նամակը, գթութիւն։

Արդէն կը հեռնդայ։ Քոյրը կը հնազանդի։ Խակապէս կարմիր հոսանքը դադրած է. խոտը խմած է ազնիւ ցողը։ Դատապարտուած մըն է։

Ուրիշ ճար չկայ, պէտք է տալ իրեն այն չնորհը որ կը թախանձէ։ Ակնկալութեամբ միայն կ'ապրի. յոյս մը կայ իր աչքերուն մէջ. այս նամակէն անտարակոյս իր վերջին ուրախութիւնը կը սպասէ, այն ճառագայթը որ պիտի ընկերանայ իրեն խաւարի ճամբուն վրայ...

Սիրուհիի մը նամակն է ուրեմն սա։

Ու կոյսը կը սարսռայ, իբրև թէ հովը՝ որ կ'ելլէ պատերազմի դաշտին վրայ՝ պիտի արթնցնէր անոր ծոցին մէջ մեռածները։

Կը բարձրացնէ լապտերը և լոյսի շառաւիղ մը կ'ողողէ թուղթը։ Արագ նայուածքով մը կը կարդայ պարունակութիւնը, և պատրանքին համար ցաւ կը զգայ։ Ո՛չ, հոգ սիրոյ մասին չէ որ խօսուած է։

—Բայց չէք կարդար, քոյրս, կը հառաչէ մահամերձը յանդիմանութեամբ մը. ու իր աչքերը—որոնց մէջ կեանքի հրատը կը մարի—քիչ մը խանդաղատանք կը մուրան։

Կոյսը կը պաղի կը մնայ, իբրև թէ իրմէն պահանջէր դէշ գործ մը կատարել։

Աւելի կը նախընտրէր անոր ճակտին հրացանի հարուած մը խփել, որ չանկարծակի մահ պիտի պատճառէր, քան կարդալ այդ բառերը որ գնդակներէն աւելի վայրագորէն պիտի հարուածէին անիկա։

Նամակը՝ որուն գռեհիկ պարունակութիւնը արիւնի կարմիր մկրտութիւն էր ընդունած՝ կ'ըսէր.

«Սիրելի պարոն Բոլ, պատերազմը շատ երկար կը տեւէ։ Ոչ մի պահէք անոր դէմ, որը «ձեր պզտիկ թռչունը» կը կոչէիք, եթէ ան չկարենայ մնալ երբ թնդանօթը կը գոռայ։ Ինծի արև ու նուագածութիւն է հարկաւոր։ Վաղը Սպանիա կը մեկնինք։ Սէվիլի մէջ գիշերանուագներ կան։ Մենք միասին երբէք երջանիկ չպիտի ըլլայինք. եթէ երբեմն վերադառնաք այդ ահռելի սպանութիւններէն, վառողէն սեցած պիտի լինիք. իսկ ես բաց-գոյն շրջազգեստներ միայն կը հագնիմ։ Ու նաև դուք շատ մեծ մարդ էք. ձեր փառքը ինծի վախ կը պատճառէ. ես ուրիշ բան չեմ բայց միայն պզտիկ աղջիկ մը։ Իրիկուն մը կարծեցի որ ձեզ կը սիրեմ, ծանր վալսի մը միջոցին։ Պարոն Սավալ մեզի ըսաւ որ վերջին պատերազմներէն ետքը գրեթէ բոլոր ողջ մնացողները պիտի ջարդուէին։ Սոսկալի է ատ։ Լաւ կը լինի որ ալ իրար չտեսնենք։ Ինծի վերադարձուցէք մատանին։

Մնաք-բարով, պարոն Բոլ, կը մնամ ձեր պզտիկ բարեկամուհին,

ՕՏԷԹ

Զէ, չպիտի կարդայ։ Անխիղճ կոչտ վերաբերմունքը չնչին աղջկան մը—որ հիւանդացած նշանած մը ունենալու հաւանականութենէն խոյս կուտայ—պէտք չէ որ տապալեր այս մահամերձին անպատում վոտահութիւնը։

Դթութեան քոյրը կը ծռի անոր վրայ՝ ցանկալով որ մեռնի ան ու ինք աղատի այդ նողկալի պատգամաւորութենէն։

Բայց հարիւրապետը կրկին բացած է աչքերը։

—Բայց չէք կարդար, քոյրս, դուք կը սպաննէք իս, սակայն ան, Օտէթը, շատ լստակ կը գրէ...

—Օ'հ, շատ լստակ, կը մտածէ հիւանդախնամը, դառնութեամբ լեցուած կարեկցութեամբ մը։

Կոյսը ոտքի կ'ելլէ.

—Ներողութիւն, հարիւրապետս, լապտերս շատ դէշ կը վառի։

Այն ատեն, մինչ բոցը կը շտկէր, դաղափար մը լղացաւ։ Նոյ, անարկիւղ, կոյսը որ մինչև այդ ժամանակ սրբութեամբ էր քալած հետքին վրայէն Անոր, որ ըսաւ. «Ես եմ ճշմարտութիւնը», սրոշեց սուտ խօսիլ։

Զէ, չպիտի կարդայ այդ, միմար աղջկան նամակը, որ կը դողայ իր մատերուն մէջ և որ հանդէր է զինուորին ծակուած կուրծքին վրայ։ սիրոյ

այս լաւացումին մէջ փոխակերպուած է ան. աղտերը անհետացած են. հիմա այնպէս եղած է ինչպէս արժան է մարդու մը որ կը մեռնի պատերազմի իրիկուն մը։

Այս նամակը արժանի է իրեն և կը յարմարի իր երազին. սիրող կնոջ նամակ մըն է որ պիտի կարդայ։

Ոչոք չպիտ մատնէ իր խուսափանքը. ու ահռելի հոգեվարք մը խնայուած պիտի ըլլայ այս հերոսին։

Այն ատեն, յուզումէն խեղդուելով, գթութեան քոյրը անպատրաստից սիրոյ նամակ մը չինեց։

«Բօլ, իմ սիրելի Բօլ, ուր էք։ Ուր որ ալ լինիք, ես ձեր հետն եմ, ձեզի շատ մօտիկ։ Ալ աւելի կը սիրեմ ձեզ իւրաքանչիւր վտանգին համար ուր կը վազէք, և, երբ քաղաքին վրայ գնդակներու սուլելը կը լսեմ, ցաւ կըզգամ, իբրև թէ անոնք բոլորը ձեզի դպէին։ Այն ժամանակ միացած ձեռքերս կ'երկնցնեմ. ինծի կը թուի որ կարող եմ ետ դարձնել այդ գընդակները իմ աղօթքիս ուժովը։ Զինուորներու անկելանոցին մէջ վիրաւորներ կը խնամեմ, յուսալով որ ուրիշ կին մըն ալ ձեզի պիտի շռայլէ նոյն խնամքները, եթէ կը տառապիք։

«Թող իմ սէրս զրահ մը լինի ձեր մարմնին շուրջը, թող իմ մտածումս սաղաւարտ մը լինի ձեր ճակտին վրայ, թող իմ խանդաղատանքս ճառագայթէ ձեր աչքերուն մէջ այնքան սքանչելապէս, որ թշնամիները կանգ առնեն ձեզ տեսնելով, ու ըսեն. «Խնայեցէք, կը սիրեն զինքը...»

Շնչասպառ, կ'ընդհատէ ու կը նայի վիրաւորին։ Վեր բարձրացած է ան ու կը խմէ իր խօսքերը անուշ ջուրի պէս... Քաղցր կը ժպտի և իր դէմքը դէմքն է ապաքինողի մը, երբ գարունը կու գայ...

—Աւելի վարը... տեսկաւին, կը թախանձէ ան։

Եւ քոյրը, զողզոջուն ձայնով, կը շարունակէ.

—«Իմ Բօլս, եթէ Աստուած թող տայ որ գնդակ մը հարուածէ ձեզ՝ ձեր փառքին համար, ատկէ աւելի գեղեցիկ մահ չկայ, իմ հարիւրապետս։

«Ու ես ալ պիտի դամ իսկոյն։ Ձեր նշանածը լինելու երջանկութիւնը ունենալէ լետոյ, կը մտածեմ որ այս աշխարհը ալ ես ոչինչ չունի ինծի տալու։ Ես կ'ապրեմ հոն, ուր դուք կը չնչէք։

«Մնաք-բարով, Բօլ, մնաք-բարով. ես օդն եմ որ ձեզ կը պարուրէ, բերանը որ ձեզ կը մխիթարէ, ձեռքը որ ձեզ կ'օգնէ և սիրտը որ ձեզ կը սիրէ։ Համբոյր մը կը դնեմ ձեր շրթներուն վրայ, որպէս զի ապրիք դուք. որովհետև սէրը աւելի զօրեղ է քան մահը, ու ես ձեզ կը սիրեմ»։

Կոյսը կը լռէ. դարձը գլուխ հանեց. առանց ճիգի խօսեցաւ, այնպէս պիտի խօսէր մինչև արշալոյս՝ այդ դժգունած դէմքին լուսաւորիլը տեսնելու ուրախութեանը համար։ Ծունկի եկած վիրաւորին մօտը՝ իր բազուկին վրայ առած է անոր գլուխը և կ'օրօրէ մօր մը պէս։

Ան մտիկ կ'ընէ դեռ, իբր թէ այն լսած բառերը, անհունապէս բազմապատկուած, ձիւնէին պատերազմի դաշտի վրայ և համր երանութեամբ մը ծածկէին զինքը։

Կծկած է ցրտահարի նման գթութեան քրոջ ուսին դէմ և կնոջ մատերու գգւանքին անցնիլը կըզգայ իր մազերու մէջէն։ Այլ ևս չի տեսներ իր վրայ ծռած դէմքը. ոչ ալ բերանը որ անդգայ և ողոքիչ խօսքեր արտասանեց. մտիկ կ'ընէ տակաւին.

«Ես օդն եմ որ ձեզ կը պարուրէ, բերանը որ ձեզ կը մխիթարէ, ձեռքը որ ձեզ կ'օգնէ... և սիրտը որ ձեզ կը սիրէ...»։

Ու իրիկուան օդը կ'անցնի իր մարմնի վրայով... Բազուկ մը անցած է իր վիզին տակէն, ու իր ականջին ալ տակ կըզգայ կնոջ կուրծքի մը բաբախումը։

—Օտէթ... Իմ պզտիկ Օտէթս, կ'ըսէ շատ կամացուկ։

Ու կոյսը չըսեր ոչինչ, չըներ շարժումը որ կարենար խռովել մեռնողին երջանիկ հաւատքը։

«Համբոյր մը կը դնեմ ձեր շրթներուն վրայ, որպէս զի ապրիք դուք»։

ՅՈՅՍ

ԱՐՇԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

Յուսոյ մի կայծ նըշուլեց,
Երբ յուշ բերի ապագան—
Հեռւում շողաց, փայլփըլեց
Մի հաշտութեան ծիածան։
Եւ ահա նոր սիրտ առած՝
Կեանքը սիրել եմ երդւում...
Բայց ա՛խ, չլինի՞ թէ խաբւած
Ցնորում եմ, ցնորում...
Իսկ ես կ'ուզեմ, որ յոյսեր
Եռան անվերջ կրծքիս տակ...
Վրա՛յ հասիր, ո՛ գիշեր,
Մոռացման վիհ անյատակ...

12 Օգոստ. 1898 թ.
Մաշտաղա.

ԱԹԱՋԻՆ ՍԷՐ

ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ

I

Տասնուվեց տարեկան էի։ Ծնողներս Նահապետական սկզբունքներ էին դաւանում։ Նրանք շատ չքաւոր էին նիւթապէս, բայց ծայրայեղ հարուստ բարոյապէս։ Զարմանալին այն է, որ երկուսն էլ միևնոյն հայեացքներն ունէին և կատարելապէս միևնոյն տեսակ էին մտածում։ Արդեօք մէկը միւսին էր կրթել և իր նման դարձրել, թէ երկուսն էլ միմեանց վրայ հաւասար կերպով ազդեցութիւն էին ունեցել՝ այդ գաղտնիք է մնացել ինձ համար։ Հասկանալի է, որ երկու մտերիմներ, որքան էլ իրար ի սրտէ յարգեն ու սիրեն, սակայն նրանցից մէկը իշխող է միւսի վրայ։ Որքան ես յիշում եմ, ծնողներիս մէջ եղած յարաբերութիւնը այս տեսակ չէր։ Նրանք ոչ թէ մտերիմներ էին, այլ երկու հոգեպէս իրար նման արարածներ։ Բայց թողնենք այս. ես խօսելու եմ իմ մասին։

Տասնուվեց տարիս նոր էր լրացել, երբ ուսումս աւարտեցի, այսինքն ամբողջ Աւետարանը կարողանում էի աշխարհաբարի թարգմանել, երբ ծերունի Տէր-Մարկոսը վկայական տուեց ուսումս լրացնելու մասին։ Վարժարանից դուրս գալը անասելի երջանկութիւն էր ինձ համար, որովհետև վերջապէս ազատուեցի ինձ քանոնի ու ճիպոտի հարուածներից։ Տէր Աստուած, այդ ինչ հոգեմաշ տանջանքներ էինք կրում մենք երեխաներս, այդ ինչ ինկուիզիցիական չարչարանքներ է տարել մեր անմեղ հոգին։ Եւ այս բոլորը ոմքեր էին մեզ պատճառում, չար մարդիկ. ոչ։ Անչափ սիրող ծնողներ,

պարտաճանաչ և բարեմիտ հոգաբարձուներ և մանուկների կրթութեան նախանձախնդիր վարժապետներ։ Յիշում եմ, մի անգամ տանը չարութիւն անելու համար, վարժարանում ուսուցիչս խորհրդաւոր կերպով դուրս կանչեց ինձ։ Ժամը երկուսը իսկոյն լրանալու էր, և ես անհամբեր սպասում էի զանգակի հնչելուն, քանի որ շատ էի քաղցել։ Վարժապետը կարճ կերպով դատավճիռ կարդալուց յետոյ, իր հատ քանոնով ուժգին հարուածներ հասցրեց փոքրիկ ձեռքերիս ու յայտնեց, որ մինչև երեկոյ մնալու եմ դասարանում առանց ճաշի։

Ասում են թէ անցեալը միշտ հրճւանքով է յիշւում։ գուցէ ճիշտ է, չեմ վիճում։ բայց չեմ կարող ծածկել, որ վերոյիշեալ անցք առանց անէծքի ու սարսափի անկարող եմ մտաբերել։ Բայց լաւ է չխօսել այս ախուր բանի մասին և շարունակենք մեր պատմութիւնը։

Շատ յաճախ անդորր, կանաչազարդ դաշտի երեսին պտոյտներ են տալիս խոնաւ գոլորշիներ, մերթ նոսրանալով, մերթ թանձրանալով, անտեսանելի են դարձնում նրա գրաւիչ դէմքը, բայց ահա հանդիպելով արևի այրող ճառագայթների՝ աննկատելի կերպով, զգուշութեամբ ցրւում, անյայտանում են։ Նոյն տեսակ դրութեան մէջ գտնւում էի ես։ Խառն ի խուռն մտքերը պատել էին գլուխս և ընկղմել էի անորոշ մտքերի մէջ։ Նստած էի մեր պարտիզում, ընկուզենու տակ, աչքերս բարձրացրել էի դէպի երկինք և տրամադրւել էի մի սրտաշարժ ոտանաւոր գրելու, բայց մի բան արգելք էր լինում։ Նիւթի մասին էի մտածում և չէի գտնում։ իսկ եթէ յաջողւէր գտնել՝ անշուշտ մի կրակոտ բանաստեղծութիւն պէտք է դուրս բերէի։ Առաջի տողը արդէն պատրաստ էր՝ «Ով Աստուածներ, պատառեցէք սրտիս կապանք»։ Այս նախադասութիւնը մեքենաբար անընդհատ կրկնում էի ի լուր, իսկ մտածում էի հազար տեսակ բաների վրայ, որոնք ոչ ձև էին ստանում, ոչ կերպարանք։ Գլխաւորապէս երևակայում էի սիրուց տանջուած մի երիտասարդ, որ, մի քանի տարի զուր տեղն իր սիրոյ առարկայի դռան շեմքում մաշւելուց յետոյ, դիմել էր ասպետութեան։ Կամ նոյն անբախտ սիրահարը, սար ու ձոր ընկած՝ գիշերները աստղերին էր գանգատւում, իսկ ցերեկով հովիտների ու գետակների հետ էր խորհրդակցում ու

աչակցութիւն աղերսում, իր փափագին հասնելու համար։ Այդ բաղմաչարչար երիտասարդի կերպարանքը աղօտ կերպով երեւում էր ընդհանուր գծերով աչքիս առջև և վերջապէս կարծես մառախուղի միջից ցաւարութեամբ կարողանում էի որոշել և, զարմանալի բան, իմ սեփական դէմքն էի տեսնում։ Զէ որ այդ միջոցին ես սիրահարուած չէի. ուրեմն ինչ է նշանակում այդ բոլորը՝ անկարող եմ բացատրել։

—Տրեխներս բոլորովին մաշել է... ոտներս փշերով լիքն է... Հոգուդ մեռնեմ, Վարդիկ ջան, ասա աղին...

Քնած միջոցին մարդու ականջին մօտ որ հրացան արձակեն՝ ինչ ազդեցութիւն կ'ունենայ. ուղիղ այդպէս ցնցեց ինձ, փուչ կենդանի մեր տան ծառան։

—Կորիր այստեղից, չիմար անասուն, գոռացի զայրացած.— կորիր իսկոյն...

—Առանց գործի խօ չեմ եկել, Վարդիկ ջան. Մինասենց Մելքոնն եկել է Թիֆլիսից ու ցանկանում է քեզ տեսնել։ Տանը նստած խանումի հետ խօսում է։

Իսկոյն վեր թռայ տեղիցս ու շտապեցի տան կողմը մանկութեան ընկերոջս տեսնելու համար, որին ի սրտէ սիրում էի։ Չորս տարի չէի տեսել։

—Ես քեզ ինչ արի որ չարացար։ Մելքոնն եկել է, բաս չգնայի, չասէի քեզ, փնթփնթում էր հաստագլուխ Համբօն։

Շուտով հասայ տուն և անզուգական բարեկամի հետ դրկախառնուեցինք։

II

Նոյն երեկոյեան, երբ արևը վաղուց մայր էր մտել և մոյգ-կապտագոյն երկնակամարը ծածկուել էր պսպղուն աստղերով, երբ զեփիւռը խաղում էր օդի մէջ և մարդու տրամադրութիւնն էր զարթացնում և երբ ծղրիդներն անվերջ փսփսոցով իրենց գոյութիւնն էին յիշեցնում՝ մեր գիւղից դուրս, հինաւուրց կիսաքանդ մատուռի մօտ, մամուռապատ մի մեծ քարի վրայ, նստած խօսում էինք ես և Մելքոնն։ Նա շատ բան էր տեսել և լսել, շատ բան էր սովորել։ Նա ինձ բոլորովին փոխուած երևաց, կարծես աւելի գեղեց-

կացել և քնքշացել էր։ Առաջուայ կոպիտ քայլուածքն ու խօսակցութեան անշնորք ձևերը անհետացել էին։ Հագուստի մասին էլ ինչ ասեմ. շատ և շատ հարուստ թուաց ինձ։ Խօսելու միջոցին օտար բառեր էր գործածում և իսկոյն և եթ հայերէնի թարգմանում։ Քարի վրայ նստելուց առաջ նա իր մաքուր թաշկինակը փռեց ու այնպէս նստեց. այդ արդէն բոլորովին նորութիւն էր ինձ համար։ Պատմեց ի միջի այլոց մի սարսափելի եղեռնագործութեան մասին, ուր մի երիտասարդ մեծ հերոսութիւն էր արել։

—Դու ինքդ ականատես եղար այդ դէպքին, հարցրի ես։

Նա բան չպատասխանեց, կարծես չհասկացաւ ինձ ու շարունակեց խօսել։

Ես կրկնեցի իմ հարցը։

—Ոչ, ես ականատես չեմ եղել. ինձ պատմեց գիմնազիօնի մի աշակերտ, որի հետ լաւ բարեկամ եմ։

Ես նկատեցի որ իրան շատ անհաճոյ թուաց խոստովանել, որ ինքը տեսած չէ։ Տասը տարի առաջ Գուստաւ Էմառի ռոմանի մէջ կարդացել էի այս պատմութիւնը։

—Դու հանդիպել ես Թիֆլիսում գեղեցկուհու, հարցրի ես։

—Շատ, խիստ շատ, ամեն մի քայլափոխում, նոյն իսկ մեր խանութի գլխին բնակւում է մի հրաշալի գեղեցկուհի։

—Ինչ բաներ ես ասում, Մելքոն, զարմանքով հարցրի ես — գեղեցկուհիներ վերին ասոիճանի հազուագիւտ են։ Խօսքս առանձին գեղեցկուհու մասին է։ Սևորակ խոշոր աչքեր, կամարաձև երկայն ու բարակ սև յօնքեր, գզած բամբակի նման սպիտակ կլոր դէմք, մինչև ոտները հասած գանգուր մազեր, վերջապէս գեղեցկուհի եմ ասում, որ արևին ասելիս լինի «դու գնա թագնուիր, ես եմ դուրս գալու»։ Այդ քո ասածները ոչինչ է։

Այդ բոլորը ես ասում էի այնպիսի հեղինակաւոր ձայնով, որ ինքս հիանում էի։ Մինչև անգամ ինձ թուաց, որ ես ամբողջ գբլխով բարձր եմ բարեկամիցս։ Տեղիցս վեր կացայ, ճակատս շփեցի, ձեռներս մէջքիս վրայ դարսեցի ու բարձրից նայելով ասացի.

—Ի՞նչ կ'ասես, Մելքոն, արդեօք տեսած կաս նկարագրածիս նման մի էակ։

—Ասածդ հազագիւտ է, խօսք չկայ, պատասխանեց նա խեղճ ձայնով.—բայց դարձեալ պնդում եմ, որ Թիֆլիսում կան կատարեալ գեղեցկուհիներ. օրինակի համար, ես մէկին ճանաչում եմ, այսինքն ծանօթ չեմ անձամբ, բայց շատ լաւ գիտեմ անունն ու ազգանունը, քանի տարեկան է և այլն։ Նրանց ծառան շատ յաճախ գալիս է մեր խանութը։

—Անունն ինչ է։

Սիմէ, այսինքն Հռիփսիմէ Սամուրեան։ Որ տեսնես՝ կը հիանաս, կ'ասես «ինչու երկու հատ չեն ծնուել քեզ նման, հրաշալի արարած»։

—Քանի տարեկան է, հարցրի ես անհամբերութեամբ։

—Կը լինի տասնուչորս, կամ մի երկու ամիս աւել պակաս։ Բայց գեղեցկուհի եմ ասում, որ չես գտնի երկրի երեսին։ Երկնքից որ հրեշտակ իջնի և կանգնի նրա կողքին՝ դարձեալ կ'ասես, որ հատը չէ։

Նա խօսում էր ոգևորուած և անկեղծ ձայնով, իսկ ես խորասուզուել էի երևակայութիւնների մէջ և չեմ հասկանում ինչու՝ սիրտս բաբախում էր։ Նայեցի երկնքին, աչքիս ընկաւ ամենափայլուն, խոշոր մի աստղ և ես ենթադրեցի, որ նա Հռիփսիմէին է պատկանում։ Ընկերս շարունակում էր խօսել, բայց ես այլ ևս չէի լսում նրան։ Ցանկանում էի որ այս ախորժելի պատմութիւնը Մելքոնը ընդհատէր, վախենալով, որ չլինի թէ մի աւելորդ խօսքով բանը փճացնի։

—Վաղը որտեղ կը տեսնուենք, ընդհատեցի նրա խօսքը,—գո՞ւ կը գաս մօտս, թէ ես գամ։

—Արդէն ուշ է, գնանք տուն, պատասխանեց նա վերկենալով տեղից.—իսկ վաղը հեշտ է տեսնուել. կամ դու կը գաս, կամ ես կը գամ մօտդ։

Դիւղը մտնելուն պէս՝ բարի գիշեր մաղթելով իրար՝ բաժանուեցինք։ Ես խսկոյն չմտայ տուն։ Կանգ առայ մեր տնակի առաջ, ձեռքերս խաչաձև դարսեցի կրծքիս վրայ, վիզս ծռեցի և աչքերս ուղղեցի խոշոր աստղի կողմը ու հազիւ լսելի ձայնով արտասանեցի. «Քեզ էր որոնում հոգիս և գտաւ։ Նայիր ինձ, տես որչափ մաքուր է և անարատ սիրտս»։ Ինձ թուաց որ աստղը հասկացաւ ինձ և ես երջանիկ զգալով ինձ մտայ տուն ու անմիջապէս պառկեցի քնելու։

Այդ օրից յետոյ մոռացելուս միակ առարկան դառաւ անունն Հռիփսիմէն։ Երևակայութիւնս այն աստիճան վառ էր, որ սկսեցի ուսումնասիրել նրա թէ արտաքին տեսքը և թէ ներքին աշխարհը և վերջապէս ամեն բան պարզուեց ինձ համար։

Մեր գիւղում կային Հռիփսիմէ անունով երկու աղջիկ. մինը արդէն հասունացած, իսկ միւսը եօթ տարեկան մանուկ։ Այդ երկուսին էլ սիրեցի։ Մեծին հանդիպելիս առանձին զարմանութիւն էի զգում և շատ ցաւում էի, որ հետը խօսել չէր կարելի, իսկ փոքրիկին պատահած ժամանակ գուրգուրում էի, համբուրում էի և ստիպում էի արտասանել իր անունը։ Երեխան շուտ հասկացաւ գաղտնիքս, այնպէս որ իւրաքանչիւր անգամ հարկադրուած էի լինում քաղցր բանով կաշառել, որպէս զի լսէի նրա բերանից «Հռիփսիմէ»։

Տանը նստելու ընդունակութիւնս կորցրի։ Առհասարակ ամեն մարդ (մանաւանդ երիտասարդ) դարնան սկզբին մի տեսակ ցանկութիւն է զգում բնութեան մէջ լինելու, անընդունակ է դառնում սենեակի մէջ նստելու։ Նոյն ցանկութիւնը առաջացաւ իմ մէջ, չնայած որ հոկտեմբերը վերջանում էր։

Մելքոնը այդքաղը պրծնելուց յետոյ թողեց գիւղը և գնաց Թիֆլիս։ Մեկնելուց առաջ խորհրդաւոր խօսակցութիւն ունեցանք իրար հետ։ Մտանք եկեղեցի և ժամերգութիւնից յետոյ, երբ ժողովուրդը ցրուեց, Սուրբ Աստուածածնի պատկերի առաջ երդուեցինք երբէք չդաւաճանել միմեանց։ Մենք երկուսս էլ նկատեցինք, որ Աստուածամայրը, երբ համբուրեցինք նրա փեշերը՝ ժպտաց։ Այս տեսակ հրաշքներին կարող են արժանանալ միայն հաւատացեալները։

Ընկերս ինձ խոստացաւ անպակաս անել նամակներ, որոնց գլխաւոր նիւթը պէտք է լինէր Հռիփսիմէի մասին տեղեկութիւնները։ Նա ամեն կերպ պէտք է աշխատէր ծանօթանալ օրիորդի հետ և տեղեկացնէր նրան գոյութեանս մասին։ Յայտնէր նրան, որ մեծ փափագ ունիմ հետը ծանօթանալու, իսկ եթէ նրա լուսանկարը ստանամ, այդ արդէն բարձրաստիճան երջանկութիւն կը լինի ինձ համար։ Բացի այդ, Մելքոնը խոստացաւ տեղեկանալու Հռիփսիմէի ուսման պաշարի մասին և էլի շատ ու շատ բաներ, որոնց մի առ մի թուելը հեշտ բան չեմ համարում։

Գեղեցկուհու դէմքը իր բոլոր մանրամասնութիւններով պարզուել էր ինձ համար, այնպէս որ եթէ մի փոքր նկարել գիտենայի, շատ հեշտութեամբ պէտք է գծէի նրա պատկերը։ Այդ դէմքը գեղեցկութեան կատարելատիպն էր։ Ինչքան ազնուութիւն և խելք կար նրա վառվռուն աչքերի մէջ, ինչպիսի ախորժելի և անմեղ ժպիտ էր խաղում նրա նուրբ շրթունքների վրայ, որքան դուրեկան ձայն էր հնչում, երբ խօսում կամ ծիծաղում էր։

Մեծ պահանջ էի զգում մէկի հետ խօսելու և գաղտնիքս յայտնելու, բայց դժբախտաբար չունէի մօտիկ ընկեր։ Մի անգամ փորձեցի մեր հարևան տղայի հետ խօսելու, որը սափրիչի մօտ աշակերտ էր։ Երբ ես ոգևորուած նկարագրում էի օրտիս ընտրեալի անօրինակ գեղեցկութիւնը (պատմում էի երազի ձևով, որ իբր թէ տեսել էի երկու գիշեր առաջ) և երբ կանգ առայ մի վայրկեան, նորից շարունակելու դիտաւորութեամբ՝ նա ինձ յանկարծ հարցրեց «ինչ ես կարծում, մնձն է շուտ մեծանում թէ եղունգը»։

—Չգիտեմ, պատասխանեցի ես. և շտապեցի շարունակել խօսքս։

Նա վերկացաւ տեղից։ «Վարունգի կորիզի մէջ հիւթ լինի, իսկ այդ քո ահագին գլխի մէջ ոչինչ չլինի՞, հրտեղ է Աստծու դատաստանը», ասելով բարձրաձայն ծիծաղեց ու վազ տւեց։

Աւելորդ է խօսել թէ ինչ ստոփճան վիրաւորուեց թէ ինքնասիրութիւնս և թէ նուրբ զգացմունքներս։ Այս անախորժ դէպքից մօտ մի շաբաթ անցած առիթ ունեցայ մեր ծառայ Համբոյի հետ խօսելու, բայց փոշմանեցի։ Շատ հեռուից սկսեցի խօսել։ Աշխատեցի առհասարակ գեղեցկութեան և սիրոյ մասին գաղափար տալ այդ կոպիտ էակին, դիտաւորութիւն ունենալով միւս անգամ միտքս աւելի պարզելու և գուցէ մի անգամ էլ, ապագայում, սիրոս բանայի նրա առաջ։ Բայց այդ ապերախտը նոյն օրն և եթէ մի չնչին բանի պատճառով գնացել էր ու ծածուկ մօրս պատմել՝ թէ «Վարդիկը սիրուն աղջկերանց մասին է խօսում հետս»։

Շուտով նամակ ստացայ Մելքոնից։ Նա գրում էր Հռիփսիմէի մասին այսքան միայն, որ բոլորովին առողջ է, որ մի անգամ անցել է նրանց խանութի առաջ, Մելքոնը գլխարկը վերցրել է և բարևել, նա էլ ժպտալով պատասխանել է։ «Ինչ գառնայ-գառնայ», գրում էր ի միջի այլոց նա,—«կը բարևեմ, ինչ անենք, որ ծանօթ

չենք, լսո՛ չեն գլխատի ինձ այդ բանի համար։ Համոզում էր ինձ, որ ես անմիջապէս հետամ Թիֆլիս։ Հայրս հակառակ չէր իմ Թիֆլիս գնալուն, նոյն իսկ նրա ցանկութիւնն էր տանել ինձ այնտեղ և մի ընտիր արհեստաւորի տալ։ Երբ նա հարց էր անում ինձ, թէ ինչ արհեստ կ'ուզէի սովորել, ես միշտ մի և նոյն պատասխանն էի տալիս թէ՝ ժամագործութիւն։ Կեանքումս տեսած չէի ոչ ժամագործ և ոչ նրա արհեստանոցը, բայց երևակայում էի արտաքոյ կարգի մի հիմնարկութիւն, հրաշագործութեան գաղտնիքներով լի։

III

Վերջապէս հասայ Թիֆլիս և այդ ահագին քաղաքը շշմեցրեց ինձ։ Բազմաթիւ եկեղեցիները մէկը միւսից գեղեցիկ, սովորականից դուրս խոշոր շինութիւնները, ընդհարձակ և հարուստ խանութները, խառնիճաղանճ ամբոխի անցուդարձը, կառքերի խլրտիրտոցը այնպէս կախարդել էին միտքս, որ ինձ թւում էր թէ այս բոլորը կատարւում է երազումս։ Յիշում եմ՝ կար վայրկեան, երբ մտածում էի թէ «արդեօք ես ե՞ս եմ։ Ամէն բան իրականութիւնից դուրս էր թւում ինձ։ Կորցրել էի ընդունակութիւն կենտրոնանալու մի առարկայի վրայ և աչքիս առջև պտոյտ էին գալիս հազարաւոր առարկաներ ֆանտաստիկական ձևերով ու դոյներով։ Մոռացել էի թէ ինձ և թէ հոգսերս ու դրծերս. միով բանիւ կատարեալ հարբածի էի նման։ Ահա այսպէս անցաւ առաջին օրը։ Յաջորդ օրը մի փոքր ընտելացայ, գոնէ այն չափ, որ պահանջ զգացի Մելքոնի հետ տեսնուելու։

Սաստիկ հիասթափուեցայ տեսնելով Մելքոնին հին շորերի մէջ, կեղտոտ դոգնոցը մէջքին կապած և ալիւրի տոպրակը թաւի տալիս։ Խանութն էլ սովորական թաւաց ինձ։ Սիրտս անասելի կերպով ճնշուեց, նամանաւանդ այն ժամանակ, երբ ընկերս աչքով նշան տուեց ինձ, որ դուրսը սպասեմ։ Նա ինձ թաւաց մի ողորմելի արարած. բայց զարմանալին այն է, որ կարծես բաւականաչափ փոքրացել էր։ Մի վարկեա՛նում օդի մէջ ցնդուեցին այն երևակայական ամրոցները, որ ես ստեղծել էի ինձ համար։ Հռիփսիմէի կերպարանքը այլ ևս չէի կարողանում պարզ պատկերացնել աչքիս առաջ. նա կարծես հեռացել, գնացել էր մոքիցս։

Դուրսը կանգնած սպասում էի Մելքոնին։ Սիրտս չափից դուրս տխուր էր, ինչպէս լինում է շշափելի կորուստի ժամանակ։ Չէի մտածում ոչ մի բանի վրայ և գտնւում էի ամենածանր տպաւորութեան տակ։ Այն ստիճան մոռացել էի, որ անգիտակցաբար սկսել էի գանակս սրել տաշած քարի վրայ, որը խանութի անկիւն էր կազմում։ Սթափւեցայ միմիայն այն ժամանակ, երբ Մելքոնը գաղտագողի դուրս վազեց ինձ հետ տեսնւելու համար։ Հարցրեց շտապով բնակութեանս տեղը, խոստացաւ երեկոյեան ժամը ինձանից այցելել ինձ, յայտնեց երկու խօսքով, որ իրանց խանութի համար իր նման մի տղայ է հարկաւոր և խորհուրդ տւեց, որ հայրս գնայ խնդրի խազինից։

Հիասթափւած վերադարձայ բնակարանս, որը կազմում էր «բերթի եկեղեցու» փոքրիկ սենեակներից մէկը։ Քաղաքը ճոխ էր, բայց ինձ համար գրաւիչ բան չգտայ։ Ժամագործների արհեստանոցները միանգամայն դուրս էին իմ երևակայած բաներից, նմանութեան նշոյլ անգամ չկար. Մելքոնի տեղը նոյնպէս ատեցի, մանաւանդ նրա տիրոջ դաժան դէմքը, որը այնքան անդուրեկան էր։ «Ի՞նչ անեմ, մտածում էի ես. ինչ գործի կանգնեմ, որ հնար լինի այստեղ ապրելու»։ Երեկոն հասնելուն պէս սաստիկ տխրեցի, կարծես սիրտս խաւարի տակ ծածկւեց։ Ճրագի աղօտ լոյսը, սենեակի անմաքրութիւնը, մկների արշաւանքը և վերջապէս անձրեւային խոնաւ եղանակը ստիպեցին ինձ արտասւելու։ Յիշեցի մօրս իր տխուր դէմքով ինձանից բաժանւելու միջոցին, յիշեցի մեր գիւղը իր այգիներով ու աղբիւրներով, ընդարձակ անտառներով ու լայնատարած հովիտներով։ Այդ բոլորը ինձ քաղցր թւաց և զղջացի որ ինքս իմ կամքով զրկեցի ինձ երջանիկ կեանքից։ Հայրս պատկած քնած էր։ Նա ամբողջ օրը մեն էր եկել, ինձ համար մի գործ, մի պարապմունք ճարելու և շատ յոգնել էր։ Թէ ինչ խօսակցութիւն ունեցայ հօրս հետ՝ այդ մասին աւելորդ եմ համարում պատմել, այսքանը միայն կ'ասեմ, որ ինչ նա առաջարկում էր՝ ես չէի ընդունում։ Նա յոնքերը կիտեց և «քեզանից մարդ չի դուրս գալու» ասելով անկողին մտաւ։ Վերջապէս եկաւ Մելքոնը։ Նա մտաւ սենեակս ուրախ-ուրախ, ծիծաղելով. գրկեց, համբուրեց ինձ և առաջս դրեց մի կիսարոն և կէս ֆունտի չափ էլ պաքսիմատ։ Հօրս

չզարթեցնելու պատրւակով գնացինք դուրս, պատսպարեցինք եկեղեցու դրան մօտ, ուր անձրև չէր հասնում և սկսեցինք մտերմաբար խօսակցել։ Նա շատ ծիծաղեց երեխայական բնաւորութեանը վրայ, հաւատացրեց ինձ, որ սկզբում նա էլ մի քանի օր տխուր էր, բայց այժմ «թէկուզ մեր ամբողջ գիւղը ինձ նեիրեն, զարձեալ չեմ համաձայնի գնալ ու ապրել աւանակների մէջ» աւելացրեց նա։

Քանի որ յաջորդ օրը կիրակի էր, մենք պայմանաւորեցինք ամբողջ օրը իրար հետ լինել։ Դեռ պէտք է այցելէինք երկու-երեք հատ եկեղեցիներ, իսկ յետոյ նա պէտք է ինձ ցոյց տար Հռիփսիմէին։ Մելքոնը գնաց։ Տրտմաղրութիւնս լաւացել էր, մի տեսակ զարթութիւն էի զգում, կարծես փոփոխութիւն էր կատարել իմ մէջ։ Նորից ընկղմեցի քաղցր երազների մէջ, նորոգեցին հրաւառ երևոյթներս և վերջապէս գլուխս յոգնելուց յետոյ՝ քնեցի այնպիսի հանգիստ քնով, ինչպիսին վիճակուած է հայր-սուրբերին։

Միւս առաւօտը, լաւ լուացուելուց յետոյ, հագայ ինչ ունէի ընտիր և Մելքոնի հետ միասին գնացինք եկեղեցիները։ Մողնու ժամը հիացրեց ինձ և ցանկութիւնս եկաւ լինել տիրացու այդտեղ։ Մի ակնթարթում երևակայեցի ինձ նոյն եկեղեցու սպասաւոր, քաղցր ձայնով «հրեշտակայինը» երգելիս։ Մինչև անգամ մտքումս մի տուն երգեցի և վերջացնելուց յետոյ հարցրի ընկերոջս «Հռիփսիմէն գալիս է այստեղ»։

—Անշուշտ գալիս է, պատասխանեց նա.—ոչ չի լինում այստեղ, մինչև անգամ Հաւլաբարից ու Կուկիից գալիս են մարդիկ։

Պատարագը դեռ շարունակւում էր, երբ մենք դուրս եկանք և դիմեցինք դէպի Երևանեան հրապարակը։ Սկզբում վազելով ու թռչկոտելով էի գնում առաջ՝ Հռիփսիմէին տեսնելու համար, բայց երբ Մելքոնն ասաց, որ արդէն հասանք, ես ակամայից կանգ առայ։ Տարօրինակ բան. այդ միջոցին փափագեցի որ ճանապարհը երկարանար։ Ընկերս ձեռքիցս բռնած առաջ քաշելով տարաւ դարձեալ երկու հարիւր քայլի չափ և վերջը արտասանեց. «տեսնում ես այն դեղին տունը, որի մի պատուհանը բաց է, այնտեղ է ապրում դեղեցկուհին»։ Ծունկերիս մէջ փոքրիկ թուլութիւն զգացի, սիրտս բաբախեց և ինձ թւաց որ գունատուեցի։ Ինձ չմատնելու համար թաշ-

կինակիս մէջ քթովս ուժգին փչեցի, որպէս զի կարմրութիւն առաջանայ։ Ընկերս մանրամասն պատմում էր Հռիփսիմէի սովորութիւնների մասին, թէ ինչպէս է պատժգամբ դուրս գալիս, անց ու դարձ անում և այլն, սակայն ես բոլորը չէի լսում։ Զուսել էի աչքերս ու որոնում օրիորդին, բայց աչքերս դաւաճանում էին, սովորականից անհամեմատ թոյլ էի տեսնում, կարծես քօղ էր ինձ խանգարում։

Դուռը յանկարծ բացւեց և պատշգամբի վրայ երևաց Նա։ Ես վայրկենաբար հակառակ կողմը դարձրի երեսս և անդիտակցաբար արտասանեցի «գնանք մանգալու»։

—Որտեղ պէտք է գնանք մանգալու, զարմանքով պատասխանեց ընկերս.—դա հայրն է, կարելի է օրիորդն էլ դուրս գայ։

Նրա գուշակութիւնը կատարւեց։ Շուտով երևաց Հռիփսիմէն։ Ընդհանրապէս աչքիս ընկաւ վերին աստիճանի սպիտակադէմ աղջիկ, սև մազերով և մուգ-կարմիր զգեստով։ Այնքան շփոթւեցայ, որ աչքերիս մէջ արտասուք առաջացաւ և գլուխս քաշ դցեցի։

—Ո՞ւմից ես քաշւում, հարցրեց զայրացած ընկերս.—Նրանք մեզ չեն տեսնում, չեն նայում այս կողմը։

Ես արդէն սիրտ արի համարձակ նայելու և տեսայ մի աղջիկ, որ փոքր ի շատէ նման էր իմ երևակայած արարածին։ Այն ինչ սպիտակութիւն էր դէմքի, այն ինչ աչքեր էր, ի՜նչ մազեր...

Բռնեց հօր ձեռքից, գլուխը թեքեց մի կողմը և երևի մի բան խնդրեց, որովհետև հայրը համաձայնութեան նշան տւաւ։ Նշմարեցի նոյնպէս նրա սև յօնքերը։ Թողեց հօր ձեռքը և թռչկոտելով տուն վազեց։

—Հաստատ գիտէս, որ հայրն է, հարցրի ես։

—Հաստատ գիտեմ։

—Ինչու նմանութիւն չկայ նրանց մէջ, մէկը բոլորովին սև է, իսկ միւսը շափից դուրս սպիտակ։

—Օ՜օ, սաստիկ խանգոտ ես եղել, ժպտալով պատասխանեց Մելքոնը.—որ ասում եմ՝ պէտք է հաւատաս, հայրն է, հայրն է, օտար չէ։

Ընկերս նկատելով որ իր սկսած գործը մեծ յաջողութիւն ունեցաւ, ուրախ-ուրախ բռնեց ուսերիցս ու փոթորկելով արտա-

սանեց «շնորհաւորում եմ. կաց Թիֆլիսում և սիրիր Հռիփսիմէին, սրա նման գեղեցկուհի չկայ ամբողջ քաղաքում։

Ինքս ինձ կատարեալ երջանիկ զգալով՝ վճռեցի անպատճառ մնալ։

Մելքոնը առաջարկեց սև գարեջուր խմել և մենք դիմեցինք Ալէքսանդրեան այգու կողմը։

IV

Ամբողջ ամիս Թիֆլիսում ապրելով՝ ամենայն օր, նոյն իսկ օրեկան մի քանի անգամ անցնում էի իմ գեղեցկուհու տան առաջ և բախտի բերմամբ շատ յաճախ յաջողւում էր ինձ տեսնել Նրան։ Կասկած չկար, որ նա արդէն ճանաչում էր ինձ, մինչև անգամ ցանկութիւն ունէր ինձ հետ անձամբ ծանօթանալու։ Իրաւունք ունէի այսպէս ենթադրելու, որովհետև մի անգամ, երբ պատշգամբից ուզեց սենեակ վերադառնալ, նկատելով ինձ՝ կանգ առաւ ու սկսեց ինձ դիտել։ Այդ վայրկեանին ծառան նոյնպէս դուրս եկաւ պատշգամբը և Հռիփսիմէն մատով ինձ վրայ ցոյց տալով ինչ որ մի բան հարցրեց։ Այդ օրից իմ երջանկութեան չափ չկար։ Բայց աւելի ճիշտ կը լինի եթէ ասեմ, որ այդ օրից սկսեցին երջանկութեամբ լի տանջանքներս։ Միակ առարկան, որի վրայ դիշեր ցերեկ մտածում էի, նա էր։ Նա էր որ ոգևորել էր ինձ ու կատարեալ բանաստեղծ դարձրել։ Նա էր ինձ արամադրել տասնեակ ոտանաւորներ ստեղծագործել մէկը միւսից գերազանց (գոնէ ինձ այդպէս էր թւում)։ Քնած տեղիցս արթնանալուն պէս, կայծակի արագութեամբ ներսս շուռ էր գալիս։ Վերջապէս սիրահարւած էի։

Բացի Մելքոնից ոչոքին չէի յայտնում սրտիս գաղտնիքը, հնացած որ Թիֆլիսում կային մեր գիւղի ազգերից մի քանի հոգի, որոնց հետ նոյնպէս մօտիկ յարաբերութիւն ունէի։

Մի օր, երբ Հռիփսիմէի տան դիմաց ամբողջ ժամ ի զուր կանգնելուց յետոյ՝ սուլելեցայ տխուր սրտով ու փշրւած յոյսերով հեռանալ այնտեղից՝ աչքիս առաջ բուսաւ մի պատանի, որը ինձ մի նամակ յանձնեց։ Ես շփոթւած հարցրի իրեն թէ, այս ինչ բան է։ Նա պատասխանի փոխարէն ցուցամատը մեկնեց օրիորդի պատշգամբի կողմը ու դլուխը շարժեց։ Պարզ էր, որ նա համր էր։ Մրարը բաց արի և չէի կարողանում հաւատալ, որ իրականութիւն է։

Զքնաղ աղջիկը նամակ էր գրել ինձ. և ինչ նամակ։ «Աննման երիտասարդ, այսպէս էր սկսում.—քեզ միշտ տեսնում եմ մեր տան առաջ կանգնած։ Արդէն սիրել եմ գեղեցիկ աչքերդ։ Արդեօք կ'յաջողւի՞ ինձ ծանօթանալ քեզ հետ. երևի ոչ, եթէ դու ինքդ չես աշխատի։ Եղիր համարձակ, մի հնար դուրը իրար հետ տեսնուելու համար։ Քո Հ.»։

Ամբողջ էութիւնս պաշարեց մի բան, որ նման է այն զգացմունքին երբ մարդս համարում է իրան երջանկութեան գագաթնակէտին հասած և այլ ևս կարիք չունի ոչ մտածելու, ոչ խորհելու և երբ սիրտը այն աստիճան լցւում է, որ դատարկութիւն է առաջանում։ Ուրախութիւնս ու զարմանքս իրար էին խառնուել. ես դուրս էի եկել իրական կեանքից։ Բռնեցի նամակաբերի փեշից ու քայլերս ուղղեցի բնակարանիս կողմը, պատասխանը գրելու համար։ Ճանապարհին թուրքից գնեցի շաքարից շինած ու փայտի վրայ ցցած մի հատ աքաղաղ և հիւրասիրեցի ուղեկցիս։ Զմոռացայ նոյնպէս ձևերով մի կերպ հասկացնել, որ այսուհետև աւելի շատ կ'առնեմ։

Օկսեցի գրել։ Մի քանի թերթ իրար յետևից փչացնելուց յետոյ վերջապէս աւարտեցի նամակս։ Ահա բովանդակութիւնը։ «Իմ անարատ, քնքոյշ տղաւնի, կրակ ես տուել ինձ ու այրում ես։ Մինթէ ծնուել եմ տանջուելու համար, կամ դու ծնուել ես ինձ տանջելու նպատակով։ Ոչ, այդպէս չէ։ Ես վաղուց դեռ քեզ չտեսած սիրել եմ, իսկ այժմ կատարելապէս սիրահարուել եմ և ոչ գիտէ ինչով պէտք է վերջանար, եթէ դու, իմ գեղեցիկ Հռիփսիմէ, չհանդիպիր ինձ օգնութեան թանկագին նամակովդ, որը համբոյրներով կ'ծածկեմ և արտասուքովս կը թրջեմ, երբ միայնակ կը մնամ։ Տաս օրից յետոյ Ս. Սարգսի տօնն է լինելու, այնտեղ կը սպասեմ քեզ երեկոյեան ժամը հնգից։ Ես այստեղացի չեմ, հեռու գիւղից եմ եկած։ Ուսումս աւարտել եմ և անունս Վարդիկ է։ Յոհեսութիւն, իմ անդին հրեշտակս։ Բերանացի կ'ասեմ մանրամասնաբար երբ կը տեսնուենք։ Այս նամակը ոչնչացրու։ Ներողութիւն, չոչնչացնես, այլ ապահով տեղ պահիր, որպէս զի մարդ չտեսնի։ Քո Վ.»։

Նամակը յանձնեցի համրին ու նրա գրպանները լցրի գիւղից բերած մրգերով։ Նրա գնալուց յետոյ սենեակիս դուռը կողպեցի,

պառկեցի մահճակալիս վրայ և նամակը երեք անգամ համբուրելուց յետոյ սկսեցի ուսումնասիրել։ Բացի անգիր անելուց, համարեցի քանի բառից էր բաղկացած, մինչև անգամ տառերն էլ համարեցի։ Մէջը մի քանի հատ տառասխալ գտայ և այդ բանը մի առանձին քաղցրութիւն էր ինձ պատճառում։ Մատծմունքի մէջ ընկայ թէ ինչտեղ, որ գրպանումս պահեմ այդ գեղեցիկ նամակը։ Որչափ փափագում էի գաղտնի գրպան ունենալ սրտիս մօտ։

Երեք ժամ չանցած հիւր եկան մօտս երկու հոգի իմ ծանօթ տղերքից, որոնք նոյնպէս մեր գիւղից էին։ Ես նրանց սովորականից դուրս սիրալիր ընդունեցի, մինչև անգամ համբուրեցի։

—Մեր տղա, շատ ես քնքշացել, նկատեց ինձ նրանցից մէկը։

Սկսեցինք խօսել այս ու այն առարկաների մասին, բայց, ճշմարիտն ասած, բան չէի հասկանում նրանց ասածներից, ուշքս ուրիշ տեղ էր։ Ինձ չմատնելու համար մի մի խօսք էի մոցնում նրանց խօսակցութեան մէջ, օրինակ՝ «հասկանալի է», «մի՞թէ». բայց երբ ականջիս ընկաւ նամակ բառը՝ իսկոյն աչքերս շռեցի։ Ստեփանը (մէկի անունը այդպէս էր, իսկ միւսինը՝ Բագրատ) գանգատւում էր, որ տանից նամակ չի ստացել։

—Ես ստացել եմ, ասացի յանկարծ և զգացի թէ ինչպէս դէմքս կարմիր գոյնի փոխուեց։

—Այդ ինչ խորհրդաւոր բան է, հեռաքրքրուեց Բագրատը, երբ տեսաւ, որ նամակը հանեցի խնամքով փաթաթած մաքուր թղթերի միջից։

Հեռուից ցոյց տուեցի ծրարը և կրկին դրի ծոցիս մէջ։

—Այդ ինչ տարօրինակ հասցէ է, այդ ինչ խորհրդաւոր նամակ է, գոչեցին ընկերներս և խնդրեցին, որ ցոյց տամ իրանց։

—Դուք դեռ երեխաներ էք, ծաղրեցի ես.—կը մեծանաք, դուք առիթ կ'ունենաք ստանալու այսպիսի նամակներ։

—Շատ-շատ, մի քաւթառից լինիս ստացած, խօսեց Ստեփանը արհամարհական ձևով և դիմելով Բագրատին՝ աւելացրեց.—անշուշտ իր հարևան քաւթառի գրածը կը լինի, իսկ տեսնենք ես, կարծես դժոխքի մաշխալա լինի։

—Եթէ երազումս տեսնեմ՝ լեղիս կը պատռի, շեշտեց Բագրատը ծիծաղելով։

—Դու ինքդ ես երեխայ, խօսեց Ստեփանը դիմելով ինձ.—որ դեռ չես հասկանում թէ ծրարի վրայ «գեղեցիկ երիտասարդին» բացառապէս քաւթառներն ունին սովորութիւն գրելու։

—Այո միմիայն քաւթառներ, պնդեց Բագրատը.—անցեալ անգամ մեր խանութի գործակատարը նոյնպէս ստացաւ մի նամակ, ճիշդ այդպիսի հասցէով, և վերջը իմացուեց, որ մի այլանդակ պառաւ էր գրել։

—Քանդուի Թիֆլիսը, բարկանալով արտասանեց Ստեփանը.—այսպէս են փչանում երիտասարդներն այստեղ։

Այդ բոպէին ի սրտէ ցանկանում էի, որ նրանք ուժով խլէին ձեռքիցս նամակը և կարդային։ Կանգնած էի սենեակի անկիւնում և ծրարը անդադար տեղափոխում մի գրպանից միւսը, կեղծելով իբր թէ չեմ լսում իրանց։

—Առայժմ չեմ կարող, ասացի վերջապէս.—բայց մի՞ ուրիշ անգամ ցոյց կը տամ ձեզ։

—Քեզ համար պահիր այդ տեսակ նամակները, պատասխանեց Ստեփանը վիրաւորուած ձայնով.—դու ուրիշ ընկերներ ունես. մենք ոչինչ ենք։

—Շատ սխալւում ես, բողոքեցի իսկոյն.—դուք ու Մելքոնը միևնոյն էք ինձ համար։

—Այդ սուտ է, մենք և Մելքոնը միևնոյն նշանակութիւնը չունենք քեզ համար, օրինակ այդ նամակը...

—Քաւթառի գրած նամակը, աւելացրեց Բագրատը։

—Այո, այդ քաւթառի մրոտած նամակը անշուշտ Մելքոնին կը տաս կարդալու, բայց մեզ թշնամու տեղ ես դնում։

«Քաւթառ» բառը սիրտս ալեկոծում էր։ Դա սարսափելի վիրաւորանք էր ինձ համար։

Անհասկանալի բան. առհասարակ աշխատում էի զաղտնի պահել այդ իմ սիրահարական արկածը, բայց միևնոյն ժամանակ ցանկանում էի, որ ամբողջ աշխարքը (բացի ծնողներիցս) իմանար, խօսէր ու նախանձէր ինձ։

Համբերութիւնս հատաւ. մօտեցայ բարեկամներիս և սիրահարւածներին յատուկ թեթևամտութեամբ թանկագին թուղթը գրի Ստեփանի առաջ։ Նա ձեռքի կոպիտ շարժումով հեռացրեց

իր մօտից այդ բանը և դժգոհութեամբ լի դէմքը ծռեց միւս կողմը։ Ինձ մնում էր ներումն խնդրել ու փաղաքշել, որպէս զի նամակը կարդար։ Վերջապէս ընկերներս շնորհ արին ինձ և գլուխ գլխի կպցնելով՝ սկսեցին միասին կարդալ և հակառակ իմ սպասածին դժուարանում էին որոշել։

—Այժմ հաւատում եմ որ օրիորդից ես ստացել, խօսեց Ստեփանը.—բայց զգոյշ կաց, որ ծնողները չիմանան։

—Այո, օրիորդի ձեռք է և անկասկած գեղեցկուհու, աւելացրեց Բագրատը.—իսկոյն երևում է, որ գեղեցկուհի պիտի լինի։

—Բացի այդ, ասացի ես ոգևորուած,—անսխալ է գրած. միմիայն մի երկու հատ թեթև սխալ կայ, բոլորովին թեթև, աննշան։

Ընկերներիս տրամադրութիւնը փոխուեց, սկսեցին ծիծաղել, ուրախանալ, հանաքներ անել, բայց յատկապէս իմ և Հռիփսիմէի մասին։

Շուտով վրայ հասաւ Մելքոնը։

Թէ ինչպէս անախորժ թուաց նրա գնալը Ստեփանին ու Բագրատին՝ այդ ես նկատեցի։ Նրանք խօսակցութեան ձևն ու եղանակը անմիջապէս փոխեցին և սկսեցին բոլորովին տարբեր բաների մասին զրուցել։ Ես սովորականից բարձր ձայնով էի խօսում, պահում էի ինձ այնպէս արձակ, շարժւում էի այնպէս անկախ ու համարձակ, ինչպէս քաջագործութիւն կատարած մի հերոս։ Մինչև անգամ ի միջի այլոց արհամարհեցի բոլորին միասին անընդունակութեան համար։ Հայհոյեցի առաջադիմութիւն անելու ձգտումներից հեռու լինելու համար։ «Դատարկ եկել էի գիւղից և դատարկ էլ յետ էք գնալու» ասելով վերջացրի մեղադրական ճառս։ Մելքոնը բերանը բաց լսում էր ինձ ու ժամանակ առ ժամանակ ուսերը շարժում, կարծես իր զարմանքը արտայայտելու համար։

—Այսօր դու տարօրինակ ես թւում ինձ, Վարդիկ. ինչ է պատահել քեզ, հարցրեց Մելքոնը. յետոյ դառնալով միւսներին ասեց՝—դուք էլ փոխուած էք երևում աչքիս։

Ցոյս ունէի, որ Ստեփանը կամ Բագրատը խօսք կը բացէին նամակի մասին, բայց, հակառակի պէս, վերին ատաիճանի զգաստ եղան և այնպիսի առարկաներից սկսեցին խօսել, որ շատ հեռու մնաց նամակը։

Ես մեքենաբար հարցրի Մելքոնին թէ արդեօք լուր ունի գիւղից։

—Երէկ հօրիցս նամակ ստացայ, պատասխանեց նա.—ձեզ բոլորիդ բարևում է։ Գրում է, որ մեր Զաֆարը լակոտներ է բերել...

—Ես նոյնպէս ստացայ, անսպասելի կերպով արտասանեցի և ընդհատեցի ընկերիս խօսքը։ Զգացի որ սաստիկ կարմրեցի և ստիպուեցայ երեսս միւս կողմը դարձնել։

Մելքոնը հեռաքրքրուեց իմանալու թէ ումից եմ ստացել։ Ես համոզուած լինելով, որ միւսները կը բացանեն գաղտնիքս ու կը պատմեն թէ ինչ նամակ եմ ստացել՝ ինքս լռեցի, բայց երբ նրանք լռութիւն պահպանեցին՝ հարկադրուած եղայ սուտ խօսելու, որ հանաք եմ անում։

Ա՛խ, որքան փափագում էի այն բոպէին լինել միայնակ Մելքոնի հետ և խօսել, անվերջ խօսել։

Արդէն ուշ էր և ընկերներս բարի գիշեր մաղթելով միատեղ գնացին։ Բաժանուելու միջոցին ես Մելքոնի ձեռքը առանձին կերպով սղմեցի, բայց ով գիտէ, արդեօք կարողացայ բան հասկացնել։

V

Վերջապէս հասաւ ցանկալի օրը՝ Ս. Սարգսի տօնը։ Առաւօտեան շատ կանուխ վերկացայ անկողնիցս և դեռ շորս չհագած՝ սկսեցի դէմքս զննել իմ փոքրիկ հայելու մէջ։ Ամբողջ գիշերը անքուն, զառանցանքների մէջ անցկացնելով, երկիւղ ունէի գունատ ու անհամակրելի լինելու։ Եւ իրաւ, մի գիշերուայ անքնութիւնը կարծես ինձ մաշել էր. աչքերս փոքրացել էին ու քիթս մեծացել։ Մի խօսքով չհաւանեցի ինձ։ Ցանկութեանս հակառակ յօնքերս կիսուում էին և ճակատիս վրայ ծալքեր գոյանում։

Հարկաւոր էր մի կերպ ժամանակ անցկացնել մինչև երեկոյ, առանց ձանձրութիւն պատճառելու ինձ։ Նպատակիս հասնելու համար մի քանի տեսակ զբաղմունքներ հնարեցի ինձ համար, բայց ամենից յարմար համարեցի գնալ Խոջիվանքի գերեզմանատուն և տապանագիրներ կարդալ։

Երկրորդ և երրորդ նամակներիս միջոցով Հռիփսիմէին ապրսպլրել էի անպատճառ գտնել Ս. Սարգսի եկեղեցում, երեկոյեան

ժամը վեցին կամ եօթին։ Նա ինձ հաստատ պատասխան չէր տալ։ Այսքան միայն խոստացել էր, որ կ'աշխատի գալ։ Ես միանգամայն համոզուած էի, որ նա անշուշտ կ'երթայ, ինձ հետ տեսնուելու համար։ Չէ որ սաստիկ բորբոքել էինք իրար սիրաբորբոք անզուսպ նամակների միջոցով։ Մելքոնի հետ պայմանաւորուել էի միասին գնալ, նոյնպէս խոստացել էի ծանօթացնել սրախօս հատորի հետ։ Մոռացայ ասել, որ ես իր ժամանակին յայտնեցի Մելքոնին նամակագրութեան գաղտնիքները, այնպէս որ նա էլ ինձ նման անգիր գիտէր իմ և թէ օրիորդի նամակների բովանդակութիւնը։

Ինչպէս որոշել էի, ամբողջ օրը զբաղուեցի տապանագրեր կարդալով։ Աստուած իմ, ինչ բազմատեսակ բաներ գտայ այնտեղ, ինչ սիրտ ճնշող ոտանաւորներ ու արձակ գրուածներ կար։ Բայց որ սարսափելի տպաւորութիւն գործեց վրաս և համարեա յուսահատութեան հասցրեց՝ հետևեալ երկտող գրութիւնն էր։ «Հայ կարդացող, կար ժամանակ, որ ես նոյնպէս քեզ նման կարդում էի հանգուցեալների տապանագրեր և անցնում, բայց տես այսօր ես էլ նրանց կողքին պառկած եմ։ Գիտցիր, որ դու էլ շուտով մեր հարևանն ես լինելու, ուրեմն եղիր բարի և ասա. «Աստուած հոգիդ լուսաւորի»։ Մի քանի քայլ հեռու աչքիս ընկաւ մի հին, հասարակ և մէջտեղից գծով բաժանուած քար։ Կէսի վրայ գրած էր «Հանգիստ եմ առնում ես Եղիսաբէթս» և այլն։ Միւս կէսի վրայ էլ գրած էր. «Իսկ ես սրա ամուսին Գուրգէնս, կողքին պառկած եմ, իբրև արթուն պահապան։ Ինչպէս հողի վրայ միայնակ չէի թողնում, այնպէս էլ հողի տակ, սիրելի Եղիսաբէթ, աներկիւղ կաց»։

Գուցէ դարձեալ երկար ժամանակ մնայի այնտեղ, եթէ պահապանը չխանգարէր։

Ես գրաւել էի նրա ուշադրութիւնը։ Զնշմարեցի ինչպէս եկել, կանգնել էր կողքիս։

—Ի՞նչ ես թափառում այստեղ, ինչ գործ ունիս, կոպիտ ձայնով հարցրեց ծերունին։

—Ոչինչ... Զբօսնում եմ... ինչ է, որ ման եմ գալիս, բան խօ չեմ փչացնում։

—Ոչ, ես այդ չեմ ասում, մեղմացրեց նա ձայնը.—ես միայն

զարմանում եմ, որ դու միայնակ ամբողջ օրը այստեղ անցկացրիր, երբ հասակակիցներդ խաղում ուրախանում են։

—Ես ոչ ոչոքին չեմ խանդարում, կամ բան ոչ չկայ գողանալու, որ երկիւղ ունենաս։

—Ոչ, սիրելիս, ես ոչ այդ չեմ ասում, ծիծաղելով խօսեց նա.— մեն ել որքան ցանկանում ես. բայց ես ցաւեցի, որ ընկերներդ խաղում զուարճանում են, իսկ դու այստեղ տխուր մեն ես գալիս։

Հանդստարան—և կենդանի մարդ. որչափ տարբերութիւն. բայց այդ պահապանը այն ատրճան նման էր գերեզմանոցին, որ կարծես այնտեղ լինէր բուսած։ Ժամանակի ընթացքում մարդու ճակատին դրոշմւում է իր մասնագիտութիւնը։

Հեշտութեամբ ծանօթացանք իրար հետ ու կարճառօտ պատմեցինք մեր կենսագրութիւնները և բաժանուեցինք իրրև լաւ բարեկամներ։

VI

Խարփուխ թաղում, Ս. Սարգիս եկեղեցում ժողովուրդը փոքր ռ փոքր հաւաքւում էր։ Կանայք ու երեխաներ իրար բոթելով շտապում էին առաջ անցնել ու մոմ վառել։ Մը ղոսին, մէջքից կռացած, ինչպէս բոլոր մղոսիները, աջ ու ձախ «կարգադրութիւն» էր անում։ Աշխատում էր բան դտնել, որպէս զի նկատողութիւն անէր։ Այն երեկոն նրա ընեթիան էր, ուստի իրան երևակայում էր եկեղեցու տէր և գլխաւոր։ Մերթ դուրս էր վազում և գաւթում հաւաքւած փողոցային աղերոնց յանդիմանում, նոյն իսկ ականջներից քաշում. մերթ մուրացականներին եկեղեցու դրան մօտից վռնդելոթին տալով դուրս անում։ Նեղ գաւթի մէջ, փոքրիկ սենեակների առաջ «գարմոնիկ» էին նստում ու ծափ տալիս, իսկ պարեկողները անհամբեր սպասելով իրանց հերթին, ոգևորութիւնից ակամայ թռչկոտում-տատանւում էին։ Աղմուկ ու գոռում-գոչիւնները միախառնւում էին զանգակների անդադար հնչիւնների հետ։

Ես և Սելքոնը նշանակած ժամանակից առաջ էինք դնացել և պայման կապել այսպէս. փողոցի կողմից, մուտքի աջ կողմը ես պէտք է կանգնէի, իսկ ձախ՝ ընկերս, և ուշադրութեամբ պիտի հետևէինք

Հռիփսիմէի գալուն։ Եթէ նա ինձանից առաջ նկատէր, թաշկինակ պէտք է պատեցնէր օդի մէջ, իսկ եթէ ես նրանից շուտ տեսնէի՝ ձեռնափայտս պէտք է բարձրացնէի։ Այս նշաններով միմեանց պէտք է հասկացնէինք, որ օրիորդը եկաւ, որովհետև արդէն մութը կոխել էր և եղանակն էլ խաւար էր։ Մարմնիս մէջ դող էր ընկել. գլխից սկսած մինչև ոտներս սարսուռ էր անցնում։ Ձեռքերս դարսել էի գրպաններիս մէջ ու միևնոյն տեղը կանգնած օրօրւում էի։ Ինձ թւում էր որ լղարել եմ ու պարանոցս երկայնացել է։ Յանկարծ այլայլեցայ, աչքերիս առաջ ինչ որ բոլորաձև գծեր պատեցին և մի ակնթարթում թռիչքներ գործելով մօտեցայ Մելքոնին։ Մեր առջևից անցաւ նա մի քանի կանանց ու մօտ տասը տարեկան աղջի ուղեկցութեամբ։ Մենք նրան չհետևեցինք, այլ փողոցում կանգնած նորից դաշն կապեցինք։ Ընկերս պէտք է գաւթում սպասէր, իսկ ես օրիորդի հետ պէտք է ծանօթանայի...

Տրամադրեցի ինձ և համարձակ, վճռողական քայլերով եկեղեցի մտայ։ Մեքենաբար առաջ անցայ ու խաչ ու աւետարան համբուրեցի։ Ձակատս տաքացել էր և քրտինք առաջացել։ Մի քանի անգամ աչքիս ընկաւ Հռիփսիմէն և կրկին անյայտացաւ ամբոխի մէջ։ Նա աջ ու ձախ ուշադրութեամբ դիտում էր. անտարակոյս ինձ էր որոնում։ Կեանքումս այդպէս սաստիկ բաբախած չէր սիրտս։ Կանգնեցի մեծ աշտանակի մօտ, որը ամբողջապէս պատած էր վառած մոմերով, որպէս զի ղէմքս խիստ լուսաւորի։ Աշխատեցի մի քանի անգամ հաղալ և այսպէս Նրա ուշադրութիւնը ինձ վրայ դարձնել։ Այդ միջոցին մէկը կոպտաբար բոթեց ինձ ու ստիպեց մի երկու քայլ փոխել։ Թէպէտ արիւնը գլխիս խփեց, ոչ այնքան վիրաւորւելուց որքան ամօթից, բայց մի կերպ պահեցի ինձ, իբր թէ ոչինչ, բան չի պատահել։ Այդ մղդսին էր, որը ինձ կարգի էր հրաւիրում։ Երկու դասակարգ կայ, որոնց մէջ հազիւ է պատահում օրինաւոր խելքի տէր մարդ, մէկը ժամկոչների, միւսն էլ սափրիչների։

Ահա և Հռիփսիմէն։ Նա մօտիցս անցաւ և նայեց ուղղակի աչքերիս։ Ինձ լաւ զննեց, իսկ ես բոլորովին խառնւեցի ու ծրագրիս թելը կորցրի, բայց իսկոյն ուշքի եկայ և համարեա ի լուր արտասանեցի «ինչ կայ այստեղ քաշւելու, մօտ գնալ և բարևել, վեր-

ջացաւ գնաց։ Օրիորդը պատկերի առաջ մոմ էր վառում և ես յարմար միջոց գտայ յետևից դիտելու։ Օ՛, այդ ինչ հիասթափութիւն էր ինձ համար. դէմքը կատարելապէս ծածկուած էր անթիւ մանր փոսիկներով։ Սպիտակութիւնը նոյնն էր, ինչ որ տեսել էի հեռուից, բայց վիզը փոքր ինչ թուխ էր։ Մի ինչ որ հատուչանի ու խորամանկ դէմքով կին փսփսաց իր հարևանի ականջին «լաւ չի ներկւեր»։ Ով գիտէ այդ ում հասցէին էր ուղղած, բայց չգիտեմ ինչու սիրտս սաստիկ ճնշւեց։ «Դուցէ նա չէ» մտածեցի մի բոպէ և յաջող հանգամանքից օգտւելով փոքր տղին մի կողմ քաշեցի ու հարցրի իր ազգանունը։

—Սամուրեան Դաթիս, պատասխանեց նա։

—Եղբօրդ անունն ինչ է։

—Եղբայր չունիմ, բայց շուտով կ՝ունենամ։

—Քրոջդ անունն ինչ է, նորից հարցրի ես։

—Սիմէ և Հռիփսիմէ, բայց երբ շատ կը մեծանայ միմիայն Հռիփսիմէն կը լինի։

—Նա ճրտեղ է, արդէն անտարբեր կերպով հարցրի ես ու արձակեցի։

Երեխան անմիջապէս խառնուեց ամբոխի հետ։ Գլուխս շշմել էր և այլ ևս բան չէի հասկանում։ Այնուամենայնիւ որոնում էի օրիորդին և աշխատում գտնել։

—Ահա սա է կանչում քեզ, լսեց տղի ձայնը, որը առաջնորդում էր Հռիփսիմէին դէպի ինձ։

Զգացի ինչպէս գլխիս տաք ջուր ածեցին և անցաւ ամբողջ մարմնովս։ Մի փոքր յետ քաշւեցի, բայց իսկոյն զսպեցի ինձ։

—Ո՞վ է ինձ հարցնում, սառն կերպով արտասանեց աղջիկը։

—Ես, ես չէի հարց... հարցնում՝ Թլատի նման խօսեցի ես, բայց դուք ինչու՞ ուշացաք...

—Դուք ո՞վ էք, աչքերը հուպ տալով հարցրեց նա.—չեմ մտաբերում։

Գող կատուի նման շուրջս նայեցի և հազիւ լսելի ձայնով արտասանեցի «Վարդիկ»։

Նա իր գլուխը իմ կողմը թեքելով ու ականջին ձեռքը մօտեցնելով հարցրեց «ինչ էք ասում, չեմ լսում»։

Դրութիւնս սարսափելի եղաւ. կարծես աշխարքը գլխիս փուլ եկաւ, սակայն կարողացայ արտասանել «Ներողութիւն... Վարդիկ... նամակ...»

Հուիսիմէն իր մօտ կանչեց մօրը և մատնացոյց անելով ինձ վրայ՝ հարցրեց «չգիտեմ ո՞ւմն է հարցնում սա. կարելի է դու ճանաչում ես սրան»։

—Ի՞նչ ես ուզում, որդի, դիմեց ինձ մայրը,—դու ո՞վ ես։ Այո, այո, հիմա յիշեցի, մեր Մարիամի տղէն է. ինչպէս մեծացել է, քանի տարի է չեմ տեսել։ Ի՞նչպէս է մայրդ... քրոջդ չէք նշանել... Նրանք էլ այստեղ են...

Նա խօսում էր բարձրաձայն և արագ, այնպէս որ ամբոխի ուշադրութիւնը դարձրեց իր վրայ, շատերը եկան հաւաքուեցին մեր շուրջը։

Այլ ևս չեմ կարող մանրամասնօրէն պատմել թէ ինչ պատահեց. այնքանը միայն մնաց յիշողութեանս մէջ, որ մեծ աշտանակին ոտս դիպցրի ու շուռ տուի, վառած մոմերը այս ու այն կողմը թափուեցին, կանայք աղմուկ ու ճիչ արձակեցին։ Ելնքիս մի քանի հատ քոթակ հասաւ, դժուարութեամբ դուրս պրծայ եկեղեցու միջից և տեսայ ինչպէս Մելքոնն ուզեց քար շպրտել մզկիթ գլխին, բայց բաւականացաւ հայհոյանքներ ուղղելով նրա հասցէին։

Բաւական ծանր հիւանդացայ. տաքութեան մէջ այրւում էի և գլուխս անտանելի ցաւում էր։ Մելքոնն անկողնիցս չէր հեռանում և բոլոր ինձ այցելողներին, որոնց թիւը շատ սահմանափակ էր, պատմում էր Ստեփանի ու Բագրատի ամարդութեան մասին, կրկնելով՝ «այդ սրիկաների յօրինած կեղծ նամակների շնորհիւ, այս խեղճը քիչ էր մնում վտանգի ենթարկուէր»։

---

*
* *

ԱՌԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Թէ մարդ, թէ հաւք ընկեր ունի,
Ե՛ս համ անտուն, չոր-գլուխ եմ,
Համ էլ սիրաս մենձ ցաւ ունի —
Մենձ էս սարէն, խորն էս ձորէն.

Դուն էլ կ'ըսես «Կորի, գնա»...
Ա՛խ, ուր չքւիմ, ում քովն երթամ.
Ա՞խր էս ցաւը քեզնէն առայ,
Դեղի համար ում քովն երթամ։

1797 թ. 25-ին նոյեմբեր.
Աղէքսանդրապոլ.

*
* *

Մանկուց գիտեմ, որ ամէն մարդ
Մի աստղ ունի երկնքում, —
Որ անբախտի աստղն է անփայլ,
Բախտաւորինը՝ բոց-փայլուն.

Մանկուց աչքս քցած երկինք
Ես իմ աստղն եմ փնտրտել,
Ու չեմ գտեր... Գրող աղջիկ,
Աստղս դուն ես, դու մարել...

28 նոյեմբեր. 97 թ.
Աղէքսանդրապոլ.

ԴԻՏԱԿ

(ԻՄ ԱՆՄԵՂ ԶՐՈՑՑՆԵՐԻՑ)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

I

Զէ՞ որ մարդիկ շատ աւելի երջանիկ էին այն ժամանակ, երբ դեռ վհուկներ կային աշխարհիս վրայ։ Գոնէ զրոյցները մեզ այդպէս են ապացուցանում։ Ամէն ցանկութիւն կարող էր կատարել, ոչէ՞ վհուկի կախարդական գաւազանի հպումը բաւական էր. չար և անարդար մարդիկ դողում էին. ոչ միայն պատիժ կար վատերի համար, այլ և վարձատրութիւնը չէր թողած մի ուրիշ կեանքի. հաւասարութիւնը եթէ ոչ միշտ, գոնէ հաճախ մխիթարում էր սարուկներին և ճնշուածներին, շնորհիւ հէնց այդ վհուկների, որոնք—լինի թող քէֆի համար—չանկարծ մի մեծ իշխանի ամուսնացնում էին հասարակ գեղջկուհու վրայ և կամ չէին թողնում որ, ամենքից մոռացուած սիրուն որբը՝ երկար հառաչէր մի ինաշխարհիկ արքայադստեր համար։

Բայց չար վհուկներ էլ կային. և ինչ չարութիւններ չէին անում... Հրաշալի երիտասարդների էշեր դարձնում, չքնաղ աղջիկների՝ կատուներ... Իսկ խեղճ բարի վհուկները ինչ արիւն—քրտինք էին մանում՝ դարմանելու համար նրանց թողած աւերածութիւնը։

Բայց չարութիւնը, որ բղխում էր մարդկանցից, քանի գնում—մեծանում էր, տիրում աշխարհին. բարեգործ վհուկները յուսահատւում էին։ Մարդիկ խաբւում էին չար վհուկների շլացուցիչ թակարդներից և խմբովին ընկնում նրանց մէջ։ Դէհ, դուք ասացէք,

էլ որ մէկին հասնել, որին զգուշացնել։ Վերջ ի վերջոյ, վհուկներն էլ յոգնել գիտէին, չէ՞.—տեսան որ աշխարհը բարու թեան ձայնը արհամարհում է, որ չարութիւնն ու անարդարութիւնը մարդուն աւելի սիրելի է դառնում—զայրացան։ Մի օր ժողով կազմեցին ու վճռեցին բոլորովին հեռանալ մեզնից։

Ի՛նչ սև օր էր այն։ Վհուկների իշխանուհին էլ ծերացել էր, դառնացել մարդկանց ապերախտութեան վրայ։

—Գնանք, ասում էր նա—սրանք աւելի լաւ են համարում կեղտի մէջ ապրել. մեր բարութիւնը ծաղրում են, մեր խրատները անմտութիւն համարում. հեռանանք այս ցեխի կոյտից...

Ու հեռացան բարի վհուկները, գնացին մի այլ աշխարհ, այլ ևս մեր երկրագնդի վրայ չը վերադառնալու պայմանով։

Ի՞նչ ասել կուզի, որ չար ոգիները ուրախացան. ասպարէզը այժմ իրենցն էր։ Եւ այդ օրւանից, չարութիւն ու անարդարութիւնը կրկնապատկուեց, տիրեց աշխարհին, թափանցեց ամեն անկիւն, ապականեց ամեն սիրտ, փչացրեց մարդկային ամեն հասարակութիւն։

II

Բայց Աստուած ուզեց, որ բարի վհուկներից մէկը, իր քոյրերի ժողովի ժամանակ հեռու գտնուի, շատ ուշ իմանայ նրանց վճիռը և որ նա որոշի մնալ մեր երկրի վրայ՝ մի վերջին փորձ ևս անելու համար։ Ո՞վ գիտէ. գուցէ գտնուէր դեռ մի մարդ, որ գնահատէր ճշմարտութիւնը. գուցէ լինէր մէկը, որ ոտի տակ չը տրորէր իդէալները։

Ու մնաց։ Երկար թափառեց, ամեն տեղ մտաւ, ամե՛ն տեղից հալածուեց։ Վերջ ի վերջոյ գնաց մի ամենախուլ գիւղ, պառաւի կերպարանք ստացաւ, վերցրեց մի որբ, անմեղ մանուկ ու վճռեց մեծացնել նրան բարութիւնն ու ճշմարտութիւնը սիրելու։

Միւս աշխարհից վհուկները հեգնօրէն էին դիտում նրա արածը. իշխանուհին սակայն երդուեց, որ եթէ վհուկը յաջողուէր, նրանք բոլորը նորից կը վերադառնային մեզ մօտ։

Մանուկը մեծացաւ. վհուկը տուաւ նրան ուսում, կրթութիւն, բարձրութեան ձգտելու փափագ և երբ 20 տարեկան էր եղել, ուղարկեց մարդկանց մէջ։

Մանուկը շուտով ծանօթացաւ աշխարհի հետ, տեսաւ թէ ինչպէս մարդիկ լաւ յատկութիւնները միմիայն բառարանների մէջ են տափակեցրել պահել, իսկ, ընդհակառակն, վատ յատկութիւններով զինուած՝ պատառոտում են միմեանց, կեղտեր շպրտում միմեանց վրայ և ամեն ջանք ի գործ դնում ընկերին թշուառացնելու։

Եւ երբ տուն էր վերադարձել, հարցրեց վհուկին.—Մայր, ասաց—այս ինչ է. մի՞թէ միշտ չարն է լինելու այս աշխարհի իշխողը, մի՞թէ բարութիւնը երբէք չի գնահատուելու մեզ մօտ։

Է՛հ, որդեակ, պատասխանեց բարի վհուկը—ահա թէ ինչու իմ քոյրերը թողին այս աշխարհը. բայց նրանք երդուել են որ եթէ դու կարողացար մինչև մահ լինել բարի և ճշմարիտ, եթէ դու յաջողեցիր անաղարտ՝ լինել բարի, արդար և ճշմարիտ, այն ժամանակ կ'իջնեն նրանք աշխարհիս վրայ և անհոգ եղիր որ չարի թագաւորութեան վերջը շուտով կը դայ։

—Իսկ ինչպէս իմանամ որ ես միշտ բարի, արդար և ճշմարիտ եմ իմ ընթացքի, իմ վարմունքների մէջ. մայր, չէ՞ որ ես կարող եմ բարի և արդար համարել եմ արածները. դժուար չէ ինքս ինձ մօտ արդարացնել իմ մի չար գործը. ո՞ր վատը համոզուած է որ ինքը վատ է։

Այն ժամանակ վհուկը տուաւ նրան մի դիտակ և ասաց.

—Ահա այս. պահիր և երբ կ'ուզենաս քննել արածներդ՝ նայիր սրա մէջ. այդտեղ դու կը տեսնես քո դատաւորին։

Միւս օրը երիտասարդը դիտակն առած, մտաւ նորից աշխարհ, մտաւ մարդկանց մէջ։

Թէ ինչեր տեսաւ նա, ինչ հալածանքների ենթարկուեց, որպիսի քարերի առաջ դլուխը փշրուեց—պատմութիւնը երկար է։ Միայն այսքան է յայտնի, որ մի քանի տարուց յետոյ սոված, թշուառ, հալածուած ու արհամարհուած և որը առաւելն է՝ միայնակ ընկել էր մի ամայի տեղ։

Նրան ասել էին որ բարձր իդէալները արմատ չեն բռնում ճահճի մէջ և որ միակ բարձր իդէալը մեր այս կաղմակերպութեան մէջ՝ ստամոքսի հարցն է։ Դառն փորձերն էլ ցոյց էին տուել նրան, որ այդ բոլորը թէև տխուր էր, ստորացուցիչ՝ սակայն իրականութիւնն էր։

Իսկ ինչ էր ասում դիտակը։

Նա տեռ լսում էր. նա չէր գուշակում, այլ կատարած իրողութիւնն էր միայն դատում։ Մինչև այդ օր նա միշտ ցոյց էր տուել որ երիտասարդը քայլել էր արդար, ճիշտ, եղել էր բարի... և քաղցած։

Բայց ստամոքսը իր կողմից այժմ պահանջներ էր առաջադրում. նա քաղցած էր. իդեալը նրան չէր կերակրում, իդեալը հարուստ չէր...

Ու երիտասարդը ելաւ, ծալեց մի կողմ դրաւ իդեալները և ուտել ուզեց։

Անցնում էր մի մանուկ ձեռքին մի կտոր հաց. երիտասարդը վրայ վազեց, յափշտակեց հացը, ծեծեց մանուկին և չը նայելով նրա արտասուքին՝ կերաւ խլածը։

Անցնում էր մի գիւղացի։ Երիտասարդը գնաց նրա մօտ, ճարպիկութեամբ խաբեց նրան, ինչ որ ունէր չունէր յափշտակեց և չը նայելով որ գիւղացու ընտանիքը սոված կոտորուեց՝ կլանեց խլածը։

Անցնում էր մի գործաւոր, որ գրպանն էր դրել ամբողջ շաբաթուայ քրտինքը և տուն էր դնում։ Երիտասարդը քարոզներ կարդաց նրան և վերջ ի վերջոյ յաջողուեց տիրանալ նրա ունեցածին։

Եւ երբ այդ բոլորը արել էր, նայեց դետակի մէջ և ինչ տեսնէր։ Դէպի մանուկը արածի դիմաց գրուած էր—անդթութիւն. դէպի գործաւորը՝ խաբեբայութիւն...

Ու զայրացած՝ խփեց դիտակը քարի վրայ և գոչեց.

—Գնա, կորիր դու, վատ դատաւոր, որ իդեալների անունով ես խօսում, բայց իդեալների ծառայողներին՝ անօթի թողնել կամենում...

Խեղճ բարի վհուկ. գրուած էր որ դիտակը փշրուելիս՝ նա պիտի մեռնէր։

Եւ մեռաւ տխուր, յուսահատ, որ մի կտոր արդար հաց չէ գտնուում այս աշխարհում այն մարդկանց համար, որոնք շիտակութեամբ ու մաքրութեամբ իդեալների են ծառայում, և որ ստամոքսն է դեռ մարդկանց միակ այն իդեալը, որի առաջ գլուխ է ծռում ամեն ճշմարտութիւն, բարութիւն և արդարութիւն...

ԺԱՅՌԵՐԸ

ԱՐԱՄ-ՁԱՐԳԻ

Անմատոյց լերան ապառաժ լանջից
Դարերով կախուած ժայռեր խստագին
Նայում են ծաղրով ամպերի միջից
Հիմքերը կրծող գետի յորձանքին։

Եւ հասել է օրը, երբ ժայռերն հպարտ
Օլիմպիական բարձունքից զրկուած
Լողում են գետում... Իսկ յորձանքն անպարտ
Նոցա անվախճան ծաղրի է մատնած։

97 թ. 6 օգոստ
Տիւբինգէն.

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻՆ

Քանի ձմեռ էր, ցուրտ սառնամանիք
Եղթայել աշխարհ,
Երազ չէր տեսնել հաշտ, ժպտուն երկինք
Եւ դաշտեր դալար.

Իսկ երբ ծագել է գարնան վառ արև
Հալում ձիւն ու սառ.
Երանգ է միթէ նոր կեանքի բարև
Ջերմ երկինք պայծառ։

97 թ. 14 սեպտեմբեր
Հայդելբերգ. Ը

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՖՐԻԴՈՆ ՄԱՐԵԱՆԵԱՆԻ

Թիֆլիս քաղաքը արդէն թուլտուութիւն է ստացել առևտրական ուսումնարան բանալու։ Մենք ողջունում ենք այդ նոր փայլուն գիծը Կովկասի մտաւորական կեանքի։ Մեզ՝ կովկասցիներիս վաղուց էր հարկաւոր այդ քայլը անել. որովհետև ամէն մի քայլափոխում զգալի կերպով աչքի է ընկնում կրթած ու զարգացած վաճառականների բացակայութիւնը, նամանաւանդ այժմ, երբ անգլիացի խելօք ու կշռադատ վաճառականների հետ երես առ երես ենք կանգնած։

Դեռ անցեալ տարի մենք մի առանձին յօդուածում խօսել էինք [1]) առևտրական գիտութիւնների անհրաժեշտութեան մասին ու ապացուցել նոցա կարևորութիւնը մեզ՝ կովկասցիներիս համար, ուր երկիրը օժտած է այնքան բազմաթիւ թէ հանքային և թէ այլ հարստութիւններով։

Այս անգամ մենք մտադիր ենք մի քանի խօսք ասել առևտրական գիտութիւններից մէկի՝ այն է հաշուապահութեան մասին, որը դեռ ևս քաղաքացիական իրաւունք չէ ստացել գիտութիւն անունը կրելու։

Ներկայ յօդուածով մենք կամենում ենք ըստ կարելւոյն, որքան կը ներեն մեր թոյլ ուժերը, ապացուցանել թէ՝ հաշուապահութիւնը, ինչպէս ասում է Պրուդոնը «իբրև բնազանցութեան ամենալաւ և յարմարագոյն գործադրութիւններից մէկը, իբրև գիտութիւն, որը իւր ճշդութեամբն ու կատարելութեամբը կարող է դասել թւաբանութեան և հանրահաշուի կարգը, և որը քաղաքատնտեսութեան համար ունի նոյն նշանակութիւնը՝ ինչ որ դատավարութիւնը արդարութեան համար», ուսումնասիրութեան արժանի գիտութիւն է։

---

[1]) Տես Մուրճ 1897 թ. № 5։

Մեզ՝ բոլորիս յայտնի է թէ իւրաքանչիւր գիտութեան զարգացման ընթացքը անցնում է երեք շրջանից.

1) Դիտութեան սաղմային դրութիւնը. երբ նա դեռ չէ ճանաչուած ու լարգած, և անօգուտ, նոյն իսկ վնասակար առարկայ է համարուում. հետևապէս լուրջ ուսումնասիրութեան առարկայ չէ կազմում։

2) Երբ գիտութիւնը վերջնականապէս ձև ակերպուած է. իրա համար լայն ճանապարհ է հարթել հասարակական դիտակցութեան մէջ, ընդհանուրի հիացումն է առաջացնում և կազմում արժանի բազմակողմանի ուսումնասիրութեան և աւանդութեան առարկայ այնքան աւելի, որքան լայն է նրա գործադրութեան ասպարէզն ու շահը ընդհանրացած։

3) Միջին դրութիւն, երբ կամաց կամաց զարգանում է և իւր ամեն մի քայլափոխին աւելացնում իրան համակրողների ու հովանաւորողների թիւը։ Շատերը այդ համակրողներից չեն մնում լոկ համակրողի դերի մէջ. այլ ամբողջովին նվիրուում են գիտութեան ուսումնասիրութեան, ու այդպիսով աւելացնում են մասնագէտների թիւը։

Ահաւասիկ, հաշւապահութիւնը ներկայումս մի այդպիսի դրութեան մէջ է գտնուում։ Նոր նոր է հասկացուում նրա այն մեծ ծառայութեան օգուտը՝ որ տալիս է իւրաքանչիւր տնտեսական, արդիւնաբերական և առևտրական ձեռնարկութեան։

Ուստի, այսօր մենք շատ շատերին ենք տեսնում՝ որոնք ամբողջովին նվիրում են իրանց այդ առարկայի բազմակողմանի ուսումնասիրութեան, և խորը ըմբռնելով վերլիշած նրա օգուտը, մի բոպէ անգամ չեն սատանում յայտարարել նրան մարդկային խելքի ամենաարդիւնաւէտ արտադրութիւններից մէկը։ Միևնոյն ժամանակ դուք նոյնպէս հանդիպում էք բազմաթիւ ինտէլիգէնտների, համալսարանականների՝ որոնք ոչ միայն հաշւապահական գիտութեան գոյութիւնը չեն ընդունում, այլ մինչև անգամ զարմանք են յայտնում և խելացնոր համարում այն մարդկանց՝ որոնք իրանց թանդ ժամանակը նվիրում են այդ առարկի ուսումնասիրելուն։

Մինչդեռ եթէ քիչ լրջօրէն նայենք գործին, մենք կը տեսնենք որ հաշւապահութիւնը իւրաքանչիւր առևտրական և տնտեսական ձեռնարկութեան համար նոյն դերն է կատարում՝ ինչ պատմութիւնը ազգերի կեանքում։ Ինչպէս պատմութիւնը՝ ուսումնասիրելով ազգերի դարաւոր վիճակը ու քննելով նոցա կեանքի պայմանները, դաս է լինում ապագայի համար, նոյնպէս և հաշւապահութիւնը՝ հիմնուելով կատարուած առևտրական դէպքերի վրայ, պարզելով նոցա հետևանքները, լուսաբանելով այն պատճառները՝ որոնց շնորհիւ կատարուած են այդ դէպքերը, ցոյց է տալիս այն ուղին, որով պէտք է դիմի ձեռնարկութիւնը դէպի իւր նպատակը։

Արդէն դի աւելի պարզ ու պերճախօս կերպով ապացուցած լինինք

մեր առաձները, աւելորդ չենք համարում առաջ բերել մի քանի նշանաւոր հեղինակների վկայութիւնները հաշւապահութեան մասին։

Իտալացւոց լուսաւորութեան նախագահը, Պերեաց, հաշւապահների առաջին կոնգրէսի նիստը՝ որ տեղի ունեցաւ Հռովմում 5 հոկտեմբերի 1879 թւականին, ինքն անձամբ բաց անելով մի ճառ արտասանեց, որից քաղուածօրէն առաջ ենք բերում հետեւալը.

«Այս ձեր առաջին կոնգրէսը ողջունում եմ որպէս մի ուրախալի երեւոյթ՝ որը խոստանում է երջանիկ ապագայ մեր ժողովրդի ամենայարգելի, կարեւոր և արժանաղոյն դասակարգերից մէկին։ Եւ իսկապէս, ազնիւ պրոֆէսիան, որով դուք պարապում էք, կազմում է մի գիտութիւն՝ որ ամեն դասակարգի և մանաւանդ կրթուած հասարակութեան հարկաւոր է իբրեւ միակ գիտակցական միջոց բարւոքելու ինչպէս համեստ ընտանեկան տնտեսութիւնը, նոյնպէս և բարդ պետական տնտեսութիւնը։ Նա զարգացնում է մարդուս մէջ չափաւորութիւն, ազնւութիւն ու կանոնաւորութիւն։ Ձեր գիտութեան ամենամեծ յատկութիւնը նրա մէջն է, որ նա կարողանում է ձեռնարկութիւնը ցոյց տալ իւր իսկական պատկերով այնքան ճիշտ, ինչպէս այդ կարելի է անել մաքուր հայելիի մէջ։ Դուք համարձակապէս կարող էք պարծենալ նրանով, որ ձեր ազնիւ պրոֆէսիան հասարակական բարոյականութեան ամենաճիշտ բնորոշ երեւոյթներից մէկն է, որովհետեւ նրա անկման կամ բարձրանալու հետ զուգընթացաբար պակասում կամ աւելանում է հասարակութեան յարգանքը դէպի ձեր ազնիւ հաշւապահական պրոֆէսիան։

«Աւելորդ ենք համարում նոյն իսկ խօսել այն կարեւորութեան մասին որ մեր ժամանակակից հասարակութիւնը զգում է դէպի հաշւապահութիւնը։ Կարեւորութիւն չեն զգալ, և նոյն իսկ կ'ասեն այն անձնաւորութիւնները միայն՝ որոնք իրանց գործի մէջ կարգ ու կանոն չեն սիրում, ամեն ինչ անում են ծածուկ, գողունի կերպով և անազնիւ են։ Անկասկած է, որ հաշւապահութիւնը,—ձեռնարկութեան այդ ճիշտ պատկերը,—դուր չի գալ այն չուալ իմաստակին՝ որը բացի իւր կալքից ստացած եկամտից ծախսում է նաև իւր կալքի մի մասը։

«Կ'ասի նոյնպէս հաշւապահութիւնը այն հպարտ տգէտը՝ որ բաղդի բերմամբ անցած է մի որ և է գիւղատնտեսական, արդիւնաբերական կամ առեւտրական գործի գլուխ. որովհետեւ, հաշւապահական ճիշտ թւերը պարզում են այդպիսիների կատարեալ ագիտութիւնը, որը շատ անգամ ծածկւած է լինում գործի մեծութեան ու կատարուած օպերացիաների բազմութեան տակ։ Այդպիսին՝ չնորհիւ իւր տգիտութեան և ճիշտ թւերի բացակայութեան, հարկաւ անկարող է նկատել թէ ծախսը եկամտից անհամեմատ աւել է։ Աւելորդ է խօսել այն բազմաթիւ տգէտների մասին՝ որոնք գիտութեամբ գործը հասցնում են անանկութեան։

«Բայց ուր համար թանգ է ազնուութիւնը, կարգ ու կանոնը, հասարակական ու մասնաւոր տնտեսութիւնը, նա չէ կարող չփառաբանել այն ազնիւ գիտութիւնը՝ որը միշտ ու ամեն ժամանակ ցոյց է տուել վնասակար ու օգտակար հետեւանքները կատարուած տնտեսական օպերացիաների»։

Ցարգելի ընթերցող, չը կարծէք թէ Պերեսցի արտասանած այդ ճառը կոմպլիմենտներ են՝ շռայլուած այդ նշանաւոր օրաւ առթիւ։ Ո՛չ, նոյնանման ճառ արտասանել է Ռուսաստանում Ն. Ֆ. Կրուզէ դրանից դեռ շատ առաջ, 18 մարտի 1866 թ. Պետերբուրգի գիւղատնտեսների համաժողովում։ «Հաշւապահութիւնը» ասում է Կրուզէն, «նպատակ ունի խրոնոլոգիաբար արձանագրել բոլոր կատարուած դէպքերը՝ վերաբերեալ առևտրական գիւղատնտեսական կամ արդիւնաբերական գործին մի որոշ ժամանակամիջոցի ընթացքում, որոշել արդիւնաբերութեան համար գործադրուած բոլոր նիւթերի արժէքը, վերաստուգել ծախսուած գումարների ճշտութիւնը։ Այդպէս, փոխարինելով կատարելապէս մեր լիշողութեանը, նա պարզում է ձեռնարկութեան ոչ միայն անցեալը ու ներկան, այլ և միջոց է տալիս մեզ ապագայ մեր օպերացիաներին և առևտրական ծրագիրներին ուղիղ և լաւ ընթացք դնելու։ Հաշւապահութեան ազդեցութիւնը արտայայտում է ոչ միայն արդէն ստացուած հետեւանքների վրայ, որոնց նա լուսաբանել է, այլ և ապագայի հետեւանքների վրայ, որովհետեւ մենք կարողանում ենք նախատեսել և կշռադատել ու զգուշանալ զանազան տխալներից։ Կրթուած վաճառականներն արդէն վաղուց հասկացել են հաշւապահութեան այդ բարերար ազդեցութիւնը, ուստի նոքա իրանց գործերի մէջ արդէն մտցրած են հաշւապահութիւնը։ Նոքա նրա վրայ նայում են որպէս փարոսի՝ որը միշտ լուսաւորում է նրանց առևտրական կեանքի հաղար ու մի դժուարութիւններով լի ճանապարհը կամ ընթացքը. ուստի նոքա ամենայն ճշտութեամբ արձանագրում են բոլոր դէպքերը, որպէս զի հեշտ լինի վերաստուգելը»։

Այս խօսքերը ասուած են աւելի քան 33 տարի սրանից առաջ։ Հաշւապահութեան վերաբերմամբ այդ վկայութիւնը աւելի կը ստուգի, եթէ մենք առաջ բերենք հռչակաւոր քաղաքատնտես Վ. Ռոշէրի կարծիքը՝ որը իւր „National Oekonomik des Ackerbau“-ում ասում է.—«Վիճակագրական հաշւապահութիւն, այսինքն կրկնակի տոմար մտցնելը գիւղատնտեսութեան մէջ կարող է արտադրել այն առաջադիմութիւնը՝ ինչ կարելի էր սպասել եթէ մեր բոլոր գիւղատնտեսները, ուսումնասիրելով քիմիա և ֆիզիոլոգիա, կարող էին կատարելապէս հասկանալ իրանց գործի տեխնիկական մասը»։

Մի այլ ոչ պակաս հռչակաւոր քաղաքատնտես Ժ. Բ. Սէ նկատում է.—«Ցնտեսութեան ամենագլխաւոր պայմանն է հաշւապահութիւնը. ուր նա չկայ, այնտեղ կը տիրէ կատարեալ քաոս, անկարգութիւն»։ Կ. Դիւ-

նույէ իւր "De la liberté du travail" աշխատութեան մէջ ասում է.—«Այն գործարանատէրը՝ որը իւր գործի մէջ չէ մտցրած հաշւապահութիւն, կամ եթէ մտցրած է, բայց կանոնաւոր չէն տանում հաշիւները, նա չգիտէ ինչ անել։ Երբեմն բոլորովին անտեղի յուսահատութիւնը կարող է ջլատել նրա ուժերը այն դէպքում, երբ նրան հարկաւոր է աւելի գործունեայ լինել։ Նա հաստատապէս չգիտէ թէ որ աստիճանի ձեռնտու է ներկայ ձեռնարկութիւնը։ Մինչև որ փորձով հասկանայ ձեռնարկութեան օգտաւէտութիւնը կամ ՀԼասակար լինելը, մինչ այդ տարիներ կ'անցնեն՝ որի ընթացքում գուցէ և մնանկանայ կամ օգտուելու հանգամանքներից զրկվի։ Մինչդեռ այն գործարանատէրը՝ որը մտցրած է իւր գործի մէջ կանոնաւոր հաշւապահութիւն, նա գիտէ իւր գործի իսկական դրութիւնը և կարող է որոշել ու պարզել իսկոյն և եթ թէ՝ մի որոշ ՀԼաս առաջացած է կամ ձեռնարկութեան տեսակից, կամ իրա անհոգութիւնից և կամ գործադրած միջոցներից։ Մի խօսքով նա ամեն րոպէ գիտէ թէ արդեօք արժէ այդ գործը թողնել, կամ շարունակել՝ միմիայն ծախքերը պակասեցնելով»։

Իտալացի պրոֆէսոր Բիգոբոն ասում է.—«Այժմ արդէն ակնիսա է դարձել թէ՝ հաշւապահութիւնը մի որոշ աստիճանի նպաստել է ու պէտք է նպաստի առևտրական ձեռնարկութիւնների կանոնաւոր ընթացքին, առևտրի զարգացման և մանուաորների հարստութեան աւելանալուն»։

Եւ չիրաւի ինչպէս կարող էր գոյութիւն ունենալ և ծաղկել մի առևտրական ձեռնարկութիւն առանց կանոնաւոր հաշւապահութեան և կոնտրոլի։ Կանոնաւոր հաշւապահութիւնը ներկայացնելով մեր առաջ ձեռնարկութեան իսկական պատկերը և դրութիւնը ֆոտոգրաֆիական ճշտութեամբ, պարզում է նաև մեր առաջ ձեռնարկութեան բոլոր թոյլ ու ՀԼասակար կողմերը, միջոց է տալիս մեզ նախօրօք զգուշացնել անախորժ դէպքը, մինչդեռ նրա բացակայութիւնը բազմաթիւ քարդութիւններ է առաջ բերում ու գործը քաոսական դրութեան մէջ դնում, այնպէս որ դժուար է լինում նոյն իսկ պարզել մեր յարաբերութիւնը զանազան վաճառականների հետ։

Բացի այդ բոլոր առաձներից, հաշւապահութիւնը ունի նաև մի անփոխարինելի կողմ, այն է բարոյական։ Նա մի տեսակ սանձահարում է մարդկանց, նպաստում մարդկանց չափաւոր ապրուստին, ցույց տալով նրանց թէ նոքա կարող են ծախսել միմիայն այնքան՝ ինչքան նրանց եկամուտն է. և ով ծախսում է աւելի քան որ նրա եկամուտն է, այդ կը նշանակէ որ նա ծախսում է ուրիշի սեպհականութիւնից. նա շռայլ է և անբարոյական։

Վերջապէս այն ձեռնարկութիւնը ուր չկայ կանոնաւոր հաշւապահութիւն, նա մեծ վարկ վայելել չէ կարող, որովհետև յայտնի չէ թէ արդեօք կատարուող ծախքերը իրանց նպատակին են ծառայում թէ տգէտ գլխաւորի քմահաճութիւններին։

Վերջացնում ենք մեր խօսքը իտալացի պրոֆէսոր Զիտտի խօսքերով, որը ասում է.—«Հաշւապահութիւնը հայելի է անցեալի, առաջնորդ ապագայի. կարգ ու կանոնը ձեռնարկութեան բոլոր մասերի և նրա վիճակագրութիւնն ու պատմութիւնը։ Նա հաւասար կերպով անհրաժեշտ է թէ փոքրիկ համեստ ընտանեկան տնտեսութեան համար և թէ մասնաւոր կամ հասարակական ձեռնարկութիւնների մէջ. մի խօսքով այն բոլոր դէպքերում և տեղերում՝ ուր գործը վերաբերում է մի որ և է կալք աւելի չնաւէտ կառավարելուն։ Ընտանիքի պետին հաշւապահութիւնը ցոյց է տալիս նրա եկամտի ու ծախքի չափը, ինչ ծախսեր ներելի են նրա ներկայ եկամուտով, և առհասարակ ինչպէս պէտք է նա գործադրի իւր եկամուտը։ Վաճառականին—ինչ տեսակի և որքան առ ու ծախս է եղել. նրա ապրանքի քանակութիւնը. պարտք ու պահանջի, օգտի ու վնասի չափը։ Արդիւնաբերներին ինչքան է նստում հում նիւթը և նրան մշակելը, որքան է արժենում պատրաստ ապրանքը։ Հողագործին նրա հողերի և գիւղատնտեսութեան զանազան մասերի օգուտը։ Պետական մարդուն—ինչքան և ինչ տեսակ պետական ծախքեր կան, ինչ տեսակ են շահագործում, ինչպէս են հասարակական պահանջները, ու ինչ տեսակի եկամուտները կարելի է գործադրել պետական և հանրային պահանջներին բաւարարութիւն տալու համար»։

Այդ բոլոր նշանաւոր հեղինակների վկայութիւնները կարդալուց յետոյ, ամեն մի մահկանացու ինքն իրա մէջ դատելով, անկասկած, կ'ընդունի որ չի կարելի մի ապրիսի կենսական գիտութիւն զանց առնել։

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐԻ ՃԻՒՂԵՐԸ

ՅՈՎՀ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

Վիճակագրութիւնն ակներև կերպով ցոյց է տալիս, որ, օրինակ, գերմանական, ամերիկական ու անգլիական ժողովուրդները գրականութեան արտադրութիւնների տեսակների վերաբերմամբ համանման ու որոշ դիրք են բռնում, իսկ ռուսականը՝ դեռ ոչ։ Քաղաքակիրթ երկիրների ժողովրդի կարդացած գրքերի 70—80%-ը «գրականութիւն, հնարովի պատմուածք (Ֆիկցիա) և դեռահասների ընթերցանութեան գրքեր» անուանեալ խմբից է դուրս գալիս, պատմութիւնից, կենսագրական և ճամբորդական նկարագրութիւններից մօտաւորապէս 10%, իսկ բնական գիտութիւններից, արհեստ ու արուեստագիտութիւնից 5%, և այլն։ Կրօնական ու աստուածաբանական գրքեր նոյն իսկ կրօնասէր Անգլիայում և Ամերիկայում հազիւ թէ 0,6—0,9% են կարդում։ Մի այլ վիճակագրութիւն, ուրիշ կերպ համադրելով նիւթերը՝ համարեա նոյն համեմատական հաշիւն է դուրս բերում՝ բացի բնական գիտութիւններին վերաբերեալից, որի մէջ այդ ճիւղը, երկրագործական գրքերի հետ միասին, մինչև 20 տոկոսի է բարձրացնում։ Ընտրութեան գործում դեր են կատարում ընթերցողի ազգութիւնը, նրա ժամանակակից սերնդի պատմական անցեալն ու ներկայ վիճակը, ընթերցողի հասարակական ու ընտանեկան կեանքը, անհատական զարգացումը, հասակը, ձգտումները, ճաշակը, խառնուածքը (տեմպերամենտ) և առժամանակեայ արամադրութիւնը։ Ահա այս գործոնների հիման վրայ կա-

բելի է բացատրել, օրինակ, նաև ռուս ժողովրդի փոփոխական վերաբերմունքը, որ նման է մանկականին։ Մինչդեռ, օրինակ, Պարիզի քաղաքային դրադարանի ընթերցող խառն ամբոխը վերին աստիճանի որոշ դիրք է բռնում բելլետրիստիկայի և գիտական բաժանմունքների նկատմամբ, ռուս ժողովրդին այդ առաջին տեսակին վերաբերեալներից յետոյ ամենից շատ հետաքրքրում են պարբերական հանդէսները և ապա գիտական գրքերը։ Բայց, ինչպէս յիշեցինք, այս էլ հաստատ չէ, և ով աւելի է հետաքրքրուում այդ շատ զգալի տատանումների խնդրով, կարող է իմ «Ժողովրդի ընթերցանութիւնը» գրքոյկից հետազօտութեան բուն աղբիւրներով հանդերձ տեղեկութիւններ ստանալ։ Արդ, եթէ ուշադրութեամբ աչքէ անցնենք վերոյիշեալ գործոնները, որ ղեկավարում են ընթերցանելի գրքերի ընտրութիւնը, կը տեսնենք, որ նրանցից մի քանիսը աւորական և մի քանիսն էլ փոփոխական ազդեցութիւն կարող են բանեցնել բոլոր ժողովուրդների վրայ. իսկ ինչ վերաբերում է ընթերցողի անհատական զարգացմանն ու հատակին, այս տարրերը մշտատև են ու ընդհանուր, այսինքն՝ միշտ պէտք է գործեն և այն էլ բոլոր ժողովուրդների մտաւոր կեանքում։ Ժամանակակից ռուս ժողովուրդը միջին անցողական երևոյթ է ներկայացնում քաղաքակիրթ ժողովուրդների և մանկական աշխարհի մէջ, դեռ գիտակցական ընտրողութեան անկարող լինելով։ Այսպիսով մանկան պէս դեռահաս ժողովուրդն էլ, յափշտակելով գրքի արտաքինով կամ շահագիտական նպատակներով կուտակուած «վերին աստիճանի հետաքրքրական» նիւթերով՝ կարօտում է առաջնորդութեան ու հոգատարութեան։

Արդ դուռնանք մեզ զբաղեցնող բուն խնդրին և նախ մի հայեացք ձգենք դեռահասների ընթերցանութեան նիւթերի ճիւղերի վրայ, ի նկատի առնենք իւրաքանչիւրի էութիւնը, պահանջները, ուշադրութեան առնենք համաշխարհային գրականութիւնից օրինակելի երկերը և վերջապէս տեսնենք, թէ հայերս ինչ ունինք ինքնուրոյն ու թարգմանական գրականութիւնից և ինչ պէտք է որ ունենանք։ Մեզ զբաղեցնող գրականութիւնը հետևեալ ճիւղաւորութիւնն է ներկայացնում։ ա. Հէքիաթը, բ. Ռոբինզոնեան պատմուածքը, գ. Զրոյցը (Sage, cara) և դ. Պատմուածքներն ընդհանուր առմամբ. այս բոլորը իբրև քաղաքակրթական-պատմական

աստիճանների ընորոշ արտայայտիչ բանահիւսութիւնները. և ապա ա. Նշանաւոր անձնաւորութիւնների կենսագրութիւնները, բ. Իրական աշխարհից վեր առած նիւթերը (պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական գիտութիւններ), գ. Բանաստեղծութիւնների հաւաքածուները և դ. Պարբերական հանդէսներն՝ իբրև լրացուցիչ ու լուսաբանող արտադրութիւններ։ Պատմական բանահիւսութիւնները, որոնց մասին խօսք կը լինի «պատմուածքներ» անուանուած հաւաքական հատուածի մէջ, նայելով բովանդակութեանը՝ կարող են ընթերցանութեան նիւթ դառնալ քնարերգական բանաստեղծութիւններից առաջ կամ յետոյ։ Գալով դրամատիկական բանաստեղծութեանը՝ նա մանկան բնութեանը մօտ չէ. այս ընթերցողը դրաման ըմբռնում է իբրև պատմութիւն և այս պատճառով նրան աւելի սիրելի են «Վիլհելմ Թէլը», «Մարիա Ստիւարտը», «Օրլէանի կոյսը»։ Դրաման մատչելի դառնալ է սկսում արդէն հասունութեան աստիճաններին մօտեցող ընթերցողին։

ա. Հէքիաթը։ Բանահիւսութեան արտադրութիւններից և ոչ մէկը թէ անցեալում և թէ ներկայում այնպէս չէ մօտեցրել ու մօտեցնում հասակաւոր սերունդը դեռահասին, ինչպէս հէքիաթը։ Նա նախապատմական այնպիսի ժամանակների ծնունդ է, երբ մարդը սկսել է ձգտել ազատուելու բնութեան ոյժերի կապանքներից, բայց տակաւին բաւարար ոյժ չունենալով՝ երևակայութեան օգնութեանն է դիմում։ Այսպիսով նա հասնում է առասպելական շրջանին, որ ըստ ժողովուրդների հոգեբանութեան զարդացման երեք աստիճաններ է ունեցել. 1. Բնութեանը պարզօրէն կենդանութիւն վերագրելը, այսինքն բնական իրերի նոյնացումը զգացող ու գործող էակների հետ, 2. Առասպելական ըմբռնումն, որ այս էակներին յարաբերութեան մէջ է դնում մարդու և նրա մտածողութեան ու գործողութեան հետ և 3. Բանաստեղծական յաւելում, երբ ժողովրդի երևակայութիւնը համադրական (combinirend) ու որոշիչ (determinirend) գործունէութիւն է յերևան հանում [1]։ Ահա այս վերջին

[1]) Dellbrück, Zeitschrift für Völkerpsychologie, B. III. Գրիմ ուզում է այն կարծիքի է, որ իրանց գերմանական հէքիաթները «կերպարանափոխուած առասպելներ են (Mythen)», թէև այլևս անհնար է նրանց կամ շատ դժուար սկզբնական առասպելներին վերածելը։

աստիճանումն է որ մարդն իւր մտապատկերների և զգացմունքների կեանքի բովանդակութեանը պատմուածքի ձև է տալիս և այսպիսով սկսում է ժողովրդի սրտից ու հոգուց բղխել անսպառ հէքիաթը չքնաղ ու երփներանգ պատկերներով, անուշ ու թովիչ մրմունջներով։ Դեռահաս սերունդներն էլ բոլորովին անկախ իրանց հայրենիքի ժամանակակից քաղաքակրթական աստիճանից՝ հետևելով կերպարանաւորութեան անխախտ օրէնքներով նախագծուած ընթացքին՝ նախ առաջին աստիճանի վրայ ոտք դնելով բարձրանում են նախնական մարդու վեր ելած աստիճաններով։ Ինչպէս որ ուրեմն մարմինը սաղմային աստիճանում նախ վիճակից է լինում ստորնադոյն կենդանիներին, ապա հետզհետէ աճելով ազգի ու ծնողների առանձնայատկութիւններին է հասնում, այնպէս էլ նրա մէջ զարգացող սիրտն ու հոգին։ Եւ ահա դեռ մինչև այսօր էլ ժողովուրդների կրօնական-բարոյական կեանքի, նրանց զգացմունքների ու կամքի արտայայտութեանց մի մասը դեռ անդրադառնում է հէքիաթներից։ Գերմանականը զգացմունքով հարուստ ու քնքոյշ է, սլաւոնականը թախծալի, արևելքինը՝ ֆանտաստիկական. իսկ հայկականը. մի՞թէ նա, իբրև հարազատ քոյր հնդեւրոպական հէքիաթների, ցոյց չէ տալիս նրանց առանձնայատկութիւնները իւր բուն հայկական բնորոշ նրբութիւններով [1]։

Ուշագրաւ երևոյթէ, որ ոչ միայն նահապետական ու կիսաքաղաքակիրթ ժողովուրդները, այլ և քաղաքակիրթ ազգերը երկու ձեռքով սլինդ բռնել են ու պահում պահպանում են իրանց հէքիաթները՝ իբրև թանկագին գանձեր, որոնք ամբարել են իրանց մէջ իւրաքանչիւրի նախնական ոգին։ Այս գուրգուրանքին շատ նպաստում է մանկան պահանջն ընտանիքում, որ այսպիսով միացուցիչ օղակ է հանդիսանում նախնական ու ժամանակակից սերունդների մէջ։ Բայց իհարկէ, մանուկը չէ կարող այս բանահիւսութիւնը բանաստեղծօրէն ըմբռնել, թէև մանկական աշխարհումն էլ կան այնպիսի զգաստ, խոհական անհատներ, որոնց հէքիաթները քիչ են հետաքրքրում։ Այդպիսիները նոյն իսկ թերահաւատու-

---

[1]) Տես այս մասին ակնարկութիւններ «Եղբայրական օգնութիւն» գրքում պ. Գ. Խալաթեանցի յօդուածում։

թեամբ են վերաբերում նրանց՝ հակառակ հասակակից մարմնացեալ երևակայութիւնով օժտուածներին, որոնք չափազանցօրէն յափշտակւում են այդ շնաշխարհիկ կեանքի տեսարաններով։ Թէ արդեօք երբ ինչ հէքիաթ պէտք է տալ մէկին և միւսին և ինչ հեռանոցութեամբ, այդ արդէն դաստիարակների, զարգացած ծնողների և ուսուցիչների գործն է, որոնք պէտք է որ յարգեն անհատականութիւնը և գիտենան, թէ ինչպէս պէտք է մեղմել մէկի չափազանց աւիւնը և ջերմացնել միւսի պաղ սիրտը։

Թէև հէքիաթը շատ հակառակորդներ է ունեցել, մանաւանդ մանկավարժական աշխարհում, սակայն նա հեռզհեռէ աւելի ու աւելի հաստատել է իր դիրքը գրական ու դիտակտիկական անստատ սկզբունքների վրայ։ Մեր գրականութիւնն էլ է ներկայացրել հում ու մշակուած նիւթեր, ժողովրդական ու արուեստական հէքիաթներ։ Գեղեցիկ նիւթեր ամբարուած են գլխաւորապէս «Աղբիւրի» մէջ, մանաւանդ հայ Անդերսէնի՝ Աղայեանի՝ շնորհով, ապա դասագրքերում ու վերջերս էլ Թիֆլիսի Հ. Հ. Ընկերութեան աշխատութեամբ, որ սկսել է հրատարակել մի շարք ընտիր ու գրաւիչ դերմանական հէքիաթներ գունատիպ պատկերներով, և մի հատ էլ Կոտ Մուրիկայինը։ Աղայեանցի թարգմանութեամբ ու բարեփոխութեամբ նորերս հրատարակուեց վերջինիս «Ի՞նչ է հէքիաթը», որի ինչպէս որ մակագրութիւնը նորանշան բան է մանուկների տեսակէտից, նոյնպէս էլ բովանդակութիւնը։ Յեսին Ծայր թշուառութեան հատած սիրազոյգը ճիւաղային թակարդին զոհ է դառնում և հէնց այստեղ էլ բանը վերջանում է։ Եթէ թարգմանիչը մի խելացի ու գեղեցիկ վերջաբան դրած չլիներ, այդ հէքիաթի խորհուրդը ոչ միայն մանուկներին, այլ և հասակաւորներին մութը կը մնար։ Հրատարակչական ընկերութիւնը յայտարարել է գրքոյկում, որ դա իսկապէս հասակաւորների համար է գրուած եղել, իսկ թարգմանիչը մասնաւոր խօսակցութեան մէջ մեզ հետ, հակառակ կարծիք յայտնեց։ Ինչ և իցէ. այդ ընտրութիւնը նաև այն պատճառով կարծում եմ աջող չպէտք է համալել, որ սարսափելի, հրեշային տեսարաններով լի հէքիաթները պէտք է հեռու պահել մանուկներից։ Պատկերներից էլ օրինակ «Նապաստակի ու Ոզնու գրաղը» որքան որ զուարճալի է իր պատկերներով ու բովանդակութեամբ, այնքան էլ նրա բարոյական

գողմը դատապարտելի է։ Լոկ նրա համար որ խեղճ նապաստակը ծաղրում է Ծուռ-ոտ ոզնուն, այս խարդախ փուչը նրան խաբէութեամբ այնքան է վազեցնում, որ կեանքից գրկում է։ Այս տենդենցիան ինձ յիշեցրեց Լ. Տոլստոյի „Много-ли человѣку земли нужно“ ժողովրդական գրքոյկը, որ խեղճ «մուժիկին» դատապարտում է, կարելի է ասել, համարեա անմեղ ցանկութեան համար մահուան պատժի։ Նա մեր նապաստակի պէս գրաղ է դալիս թաթարի հետ, որ նշանակած ժամանակում որքան տարածութեան շուրջը որ վազի, այնքան հող իրանը լինի։ Բայց արի տես, որ խեղճուկը վազելիս սխալւում մի քիչ մեծ է բռնում շրջանը և երկիւղ կրելով, որ մի գուցէ չհասնի ելման կէտին, արտաքոյ կարգի ճիգ է թափում ու մեր չարաբաստիկ նապաստակի պէս արնխեղդ լինում ու շնչասպառւում է։ Խրատը. հա, «մուժիկին» չէ որ մի գերեզմանի հողից աւելին հարկաւոր չէ, ուրեմն նա պէտք է չարաչար պատուհասի ենթարկուէր այդ ագահութեան համար... Հէքիաթների ընտրութեան ժամանակ ինկատի պէտք է ունենալ նաև, որ նրանք լոկ բառախաղեր ու պատկերախաղեր չբովանդակեն, որ նրանք որոշ կամքի արտայայտութիւն ու բարոյական (գովելի ու դատապարտելի) պարզ յարաբերութիւններ ներկայացնեն. նրանք չպէտք է հակառակ լինեն գեղարուեստական ու բարոյական դաղափարների (ինչպէս «Ոզնու և Նապաստակի» հէքիաթում) ու չափազանց ֆանտաստիկական լինեն (ինչպէս «Ինչ է հէքիաթը») և զերծ լինեն խորթ մայրերի սարսափելի ու դարշելի քարասրտութիւնից (օրինակ «Մոխրատիտիկ»-ը)։ Սա մի շատ մաշւած շարժիչ (մոտիւ) է, որ կարող է մանաւանդ հարազատ մայրերից զուրկ մանուկների սրտում զուր տեղը կասկած ու տարլուծիւն սերմանել դէպի խորթ մայրը, որ միշտ դև չէ, ինչպէս անխտիր ներկայանում է հէքիաթներում, և որի պարտաճանաչ վերաբերմունքը կարող էր ընդհակառակն աղէտալի թիւրիմացութեանց տեղիք տալ։

Արուեստական հէքիաթներից ընտիր են համարւած Անդերսէնինը, Հաուֆինը, Շամիսօինը („Schleimihl“) և Թոմաս Շորմի „Regentrude“ ու „Bulemannes Haus“։ Անդերսէնի հէքիաթներից լաւագոյն գերմանական թարգմանութիւնը Վարտիզ'ինն է համարւում, բայց պատկերների տեսակէտից Լոբեգանցի հրատարա-

կածներին չեն հասնիլ։ Մազիուսի, Բէքշտայնի հէքիաթներն էլ Հաուֆի կարգից են և ընտիր են համարուում։

բ. *Ռոբինզոնեան շրջանը։* Մանուկը նախ լիովին ապրելով ու շնչելով հէքիաթների աշխարհում՝ փորձառութիւնը նրա մէջ սկսում է հետզհետէ կասկածներ յարուցանել այն հրաշալի բաների ճշգրտութեան նկատմամբ, և վերջապէս վրայ է հասնում մի շրջան, երբ նրա մէջ արթնանում է երևոյթների պատճառականութեան բուռն հարցասիրութիւնը. ահա այս շրջակէտում է պէտք Ռոբինզոնեան պատմուածքը, որ բնական ու աննշմարելի կերպով մանկան այն. աշխարհից դէպի պատմականն առաջնորդէր։ Այս բանահիւսութիւնը համեմատելով հէքիաթի հետ, տեսնում ենք, որ, թէև երկուսն էլ երևակայութեան ստեղծագործութիւն է, քաղաքակիրթ կեանքի ասոիճանական պատկերահանդէս է՝ նկարուած պարզ ու գրաւիչ ձևով ու խորամուխ ոգով։ Բնական երևոյթների ստիպողական բնաւորութիւնն է այստեղ հանդէս գալիս, որ մի կողմից մարդուն դէպի գործունէութիւն ու առաջադիմութիւն է մղում, միւս կողմից էլ արդելքներ յարուցանելով սահմանափակում է պատմական անհատի ինչպէս նաև ժողովրդի զարգացման ընթացքը, նրան այլ ուղղութիւն տալիս։ Որովհետև Ռոբինզոն հերոսն այստեղ սովորական մարդ է, մանուկ ընթերցողը կարող է երևակայութեամբ նրա հետ ապրել ու նրա ձգտումներին ու գործքերին այսպիսով իրան կարծես մասնակից զգալ։ Մանկավարժութեան Հերբարտ-Ցիլլէրեան շկոլան աւելի էլ հեռու է գնացել, պահանջելով դասաւանդութեան համար (Ռոբինզոնը երկրորդ տարեայ հիմնական նիւթն է), որ մանուկները զործնականապէս էլ զբաղուին սիրելի հերոսի որսորդական, արօտական, երկրագործական ու արհեստական պարապմունքներով, և արդէն տասնեակ տարիներ է, որ, մանաւանդ համալսարաններին կից ուսուցչանոցների վարժոցներում, ծառայում են այս առաջարկութեան իրագործմանը ի հարկ է ինչ ինչ անհրաժեշտ սահմանափակումներով [1]։

Ռոբինզոնի սկզբնական ֆիլոսոֆայական իդէան պատկանելիս է

---

[1]) Տղերքս զրողն իբրև դասատու գործակից ու ականատես է եղել այդ խորհրդաւոր ու աչքսոյժ դասերին։

եղել իսկապէս XII. դարու մի արաբական վէպի հեղինակ Իբն Տոֆայիլին, իսկ իրողութիւնը ներկայացրել է Սելկիրը, որ մի անմարդաբնակ կղզի ընկնելով վայրենացել էր։ Գալով Դէ-Ֆո՝ին, նա ընդհակառակը առանձնութեան դատապարտուած անհատի կեանքը նկարագրում է աստիճանական առաջադիմութեան յարատև ընթացքի մէջ, թէև արդելքներ էլ հանում է այս ընթացքի դէմ։ Իսկ այս անուն մանկական պատմուածքը բնագրի չոկ մի յարավէպն է (էպիզոդը), որ իսկապէս մի ժողովրդական վէպ է, գրուած՝ պատմական մտածողութիւն առաջացնելու նպատակով։ Եւ, իհարկէ, ինչպէս հէքիաթը, այնպէս էլ Ռոբինզոնը մանուկն այլ կերպ է ըմբռնում, հասակաւորն՝ այլ. մէկը պարզ սրտով ու մտքով նրանց նկարագրած կեանքն իրականութիւն է համարում, իսկ միւսը՝ բանաստեղծութիւն, և երկուսն էլ հաւասարապէս հիանում են, երկուսն էլ նաև Ռոբինզոնի միջոցով կապւում են մտաւոր սերտ կապերով։ Ո՛չ մի ժողովրդական գիրք բացի սրանից մինչև հիմա չէ կարողացել մարդկային աշխատանքի էութիւնը, նրա արդիւնքներն այսպէս կոթիչ կերպով ներկայացնել. ո՛չ մի գիրք, բացի Ռոբինզոնից, չէ կարողացել այնպիսի ակներև, այնպիսի շօշափելի կերպերով իւրաքանչիւր քայլափոխում ցոյց տալ մանկանը, որ մարդուս ամեն մի յառաջադիմական քայլը նրա առանձին մտածողութեան ու գործունէութեան արդիւնքն է եղել, և ո՛չ մի գիրք աւելի կենդանի կերպով չէ ներկայացրել մարդկութեան թափած աներևակայելի ճիգը մի ամենահասարակ գործիք հնարելու և նամանաւանդ մի արհեստ կազմակերպելու համար։ Կան հեղինակներ, ասում է Տէնը իւր «Գեղարուեստի մասին դասախօսութիւններ» երկում, որոնց քսան արտադրութիւններից հազիւ մէկն ընտիր է դուրս գալիս, և այս երեւոյթը նա որոշ օրէնքով բացատրելով ի միջի այլոց Դէ-Ֆոյի «Ռոբինզոն» էլ օրինակ է բերում։ Նա նկատում է, որ այս հեղինակի երկու հարիւր հատորից միայն է այս գիրքը, որ պահպանել է իւր արժէքը՝ շնորհիւ այդ մնայուն բնաւորութեանը, այն բնորոշ տիպարին, որի մէջ դուրս է բերուած անգլիացու յամառ, եռանդուն, համբերատար, անխոնջ ոգին, որին ոյժ է տալիս նաև բողոքականութեան յուսատու հաւատը, որ նրան բարօրութեան է հասցնում։

Անհամար են այս գրուածքի զանազան տեսակի ու ծաւալի

մշակութիւնները (ռոբինզոնադները). մենք էլ ունենք սովորական փոխադրութիւնների թարգմանութիւններ։ Մանուկների Ռոբինզոնը նախ որ իսկապէս բոլորովին պէտք է զուրկ լիներ քաղաքակրթութեան բարիքներից, այսինքն՝ խորտակուած նաւում դաած գործիքներից և Եւրոպայից հետը բերած յիշողութիւններից։ Այս տեսակէտով առաջնորդուելով փոխադրել են գերմանացի Կամպէն ու Դրէբները, որոնց պրոֆ. Ռայնի մանկավարժական սեմինարն ենայում սկիզբները հայտնակ էր, այն առարկութիւնն անելով թէ՝ մանկանը շատ դժուար կը լինի երևակայութեամբ կտրուելով շրջապատող քաղաքակիրթ աշխարհից մի այդպիսի մոռացածին կեանքի մէջ մընել. բայց նոյն այս հաստատութիւնը վերջերս Ռոբինզոնը մշակել է վերոյիշեալ աւելի նպատակայարմար սկզբունքով։ Մի այլ թերութիւնն էլ այս կեանքի մէջ կնոջ և հետևաբար լիակատար-ընկերութեան պակասութիւնն է, որ անբնական ու միակողմանի է ներկայացնում այս կղզիացած աշխարհը։

Ահա առ այժմ գէթ առաջին սկզբունքով կազմուած մի գունատիպ պատկերազարդ Ռոբինզոնն էլ մեր մանկական գրականութեան զգալի պահանջներից մէկն է։ Ինչպէս տեսանք, սա մի սոսկական արժէք ունեցող գիրք չէ, այլ քաղաքակրթական բնորոշ շրջանների վերին աստիճանի խորհրդաւոր համատեսիլ պատկերն է (պանորամա)։ Մեր գրականութեան մէջ ամենից առաջ Ռոբինզոնը լոյս տեսել է 1818 թ. թարգմանութեամբ Հ. Մինաս Վ. Բժշկեանի։ Վենետիկի «Հայկական մատենագրութիւնից» տարաբախտաբար չի հասկացուում, թէ այս գիրքն արդեօք ինչ բնագրից է։ Դուցէ և ժողովրդականն է եղել։ Երևի այս գիրքն է եղել «Վէրք Հայաստանի»-ի յառաջաբանում Աբովեանի հետևեալ խօսքերով յիշատակածը. «Ում հետ էլ որ խօսում էի, էն էին Թանկայ տալիս՝ թէ մեր ազգը ուսումնասէր չի, կարդալը նրա համար գին չունի. բայց ես տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Ռոպէնսոնի պատմութիւնը, Պղնձէ Քաղաքի յիմար գիրքը ձեռնէ ձեռ էր մանածում»։ Եւ ահա նա, խրախուսելով, մի օր ու գիշերուան մէջ անհաց, անջուր, անքուն «երեսուն թաբաղայ» է լցնում։ Ապա երկրորդ Ռոբինզոնադը լոյս է տեսնում 1850 թ. Պոլսում՝ իբրև թարգմանութեան դասագիրք, ու վերջերս էլ մեր կովկասեան բար-

բառով մի փոխադրութիւն շնորհիւ Գիւտ քահ. Աղանեանի և Լ. Տոլստոյի «Ռոբինզոն փոքրիկների համար», թարգմ. փիլ. Վարդանեանցի, 1891։

գ. *Զրոյցներ* (Sage, ռս. cára)։ Մարդկութեան անդամները՝ իբրև առանձին ազգութիւն՝ պատմական շրջանը մտնելուց առաջ դեռ անցնում են կիսապատմականը, որ միացուցիչ օղակ է հանդիսանում առասպելական ու պատմական շրջանների։ Դիւցազնական դարի հերոսներն արդէն իրանց գործունէութեան որոշ վայրերը հայրենիք ու յաճախ նաև պատմական յայտնի անուններ ունին և գործում են որոշ ժամանակում։ Դիւցազներգութիւնը բնական հետևանք է վայրենի կեանքի, և նայելով այս կամ այն ժողովրդի քաղաքակրթական աստիճանին՝ ոչ միայն նախապատմական կեանքն է խառնում նա իւր նկարագրութիւնների մէջ, այլ և մեզ մինչև անգամ թագաւորների պալատներն է մտցնում։ Հերման Լոցէն, իւր «Միկրոկոսմոս» գրքի մէջ, ի միջի այլոց հետևեալ խօսքերով է բնորոշում այս դարը. «Քաղել առանց ցանելու՝ մարդկութեան բնական ու նախնական կեանքի եղանակն է։... Բնական գրութեանը յաջորդեց դիւցազնական դարը, գիշատիչ կենդանիների կեանքի նմանողութիւնը, որով մարդկային կեանքի զգացումը (Gemüth) երբէք մարդ չպիտի դադարի հիանալ»։ Այսպէս շարունակելով նա ցոյց է տալիս, թէ ինչպէս բանաստեղծութիւնը ճոխանում է մարդկային այս հիանալի ոյժերի ոգևորիչ ինքնագիտակցութեան շնորհով, թէ ինչպէս նոյն իսկ հելլէնները, որոնք մարդկային կեանքի նպատակն ու սրան հասնելու միջոցներն աւելի մեծ եռանդով են կըշռադատել՝ քան այլ ժողովուրդներ՝ Հոմերական բանաստեղծութեանց մէջ մեզ ներկայանում են իբրև աշխատաւորների մի մութ խաւ, որի հիման վրայ հաստատւում է ազնուականների զարթ ու վայելուչ կեանքը։ Լոցէն ուշադրութիւն է դարձնում այն երևոյթի վրայ, որ զարգացման այս աստիճանումը աշխատանքը ազատութեան հակառակորդ է համարւում, մի երևոյթ, որ դեռ տեսնում ենք մեզ շրջապատող ցեղերից մանաւանդ քրդերի կեանքում։

Դրաբարագէտ դեռահասների համար մեր գրականութեան մէջ 1843 թ. դոյութիւն ունի Հ. Եղիա Վ. Թոմաճեանի դասական Իլիականի դասական թարգմանութիւնը բնագրից, 1848 Ոդիսա-

կանը [1]) և 1864 թ. Հ. Ա. Կ. Բագրատունու Իլիականը նոր թարգմանութեամբ։ Վերջերս էլ Փիլ. Վարդանեանի շնորհով գերմաներէնից թարգմանուեցին Շմիդի փոխադրութիւնները, որ շատ մօտ են բնագրին։ Ինձ յայտնի չէ, թէ այս վերջին գրքերը որքան տարածուեցին մեր մանկական աշխարհում, միայն թէ այնպէս է թւում, որ, եթէ դէթ մեր գրաբար թարգմանութիւնից մի շնորհալի հայ վիպասան թեթև լեզուով փոխադրելու լինէր, գուցէ աւելի տարածուէին այդ փոխադրութիւնները։ Փ. Վարդանեանը ճոխացնում է մեր աշխարհիկ լեզուն նրան ծանրացնելով. պէտք է որ բանաստեղծ մարդն աւելի դիւրութիւններ ունենայ մանկան սրտի հետ հոմերական ոգով խօսելու [2])։

Նոյն թարգմանչի Ռուստէմ և Զոհրաբը մեր մանուկների հայեացքը դարձնել է տալիս դէպի արևելեան վիպաշխարհը, որ ծովացած է անսպառ Շահ-Նամէների մէջ և որ շողեր է ձգում մեր դեռևս կիսախաւար «Սասմայ ծռերի» աշխարհի վրայ։ Ս. Գիւլզադեանի «Ռոստոմ ու Սոհրաբ» ամբողջ վէպը զանազան այլ հատուածներով Շահ-Նամէից, որ 1893 թ. չափական ձևով հրատարակուեց, թէև, իբրև բնագրից թարգմանած՝ առանձին նշանակութիւն կարող էր ունենալ, սակայն իւր ամբողջութեամբ ծանրաշարժ է, չնայելով որ բառերով ու ոճերով էլ աղքատ չէ, ուստի և կարծեմ դեռահասների համար ընթերցանութեան հաճելի նիւթ չէ կարող լինել։ Գուցէ աւելի լաւ լինէր, եթէ թարգմանիչն այդ նիւթերն արձակ ձևի վերածած լինէր։ Փ. Վարդանեանի թարգմանութիւնն, ի հարկէ, աւելի թեթև ու նպատակայարմար է։

Հնդկական կախարդական աշխարհից էլ մի նշոյլ ընկել է հայ մանուկների երևակայութեան մէջ շնորհով Գ. Աքիմեանցի թարգմանած «Նալա և Դամայեանտի» գերմաներէն փոխադրութեանը, որ

---

[1]) Ոդիսականն՝ իբրև քաղաքակրթական-պատմական որոշ չրջանի անփոխարինելի արտայայտութիւն՝ ըստ Հերբարտեան ծրագրի միջնակարգ դպրոցի առաջին տարուայ հիմնական նիւթը պէտք է կազմէ։

[2]) Փոխադրութեան կերպերի մասին խօսք կը լինի յետոյ, և իբրև օրինակ վեր կառնենք նաև Շմիդի Ոդիսականը։

Այս լեզուական կողմի մասին ասելիքնիս վերապահում իմաք առանձին յօդուածի։

չգիտես ինչու «Հայկական մատենագրութիւնը» Նալա և Ռամաժանտի է անուանում, քանի որ Ռամաժանան բոլորովին այլ էպոսի հերոս է։ Ցիշենք Թիֆլ. Հր. Ընկ. հրատարակած «Նալ և Դամայեանտի» Ֆ. Շմիդտի. թարգ. Ցովհ. Լալայեանի. Թիֆլ. 1891։

Գերմանական Նիբելունգեան դիւցազներգութիւնը, որ հոմերականից յետոյ առաջինն է համարւում ժողովուրդների անդիր բանահիւսութեան մէջ, ըստ Շաքի, Շահ-Նամէ՝ներին ոգեկից է՝ իբրև բնական արդիւնք միևնոյն հին ցեղակիցների կեանքի ու երևակայութեան։ Նիբելունգներն էլ արտաքոյ կարգի ոյժի տէր հերոսներ են, թէև աւելի չափաւոր՝ քան Շահ-Նամէի հսկաները. երևան են գալիս ասպետական կեանքի պատկերներ. բնակարան, զգեստ, սովորութիւններ, վարք ու բարք, որոնք Շտաուֆէններին ժամանակակից երևոյթներ են և ոչ կուսպաշտական։ Հետևաբար քանի որ այդ երկու բանահիւսութիւնը կարող էին առնչութիւն ունենալ, հապա որքան ևս առաւել մօտ պէտք է լիներ մեր Սասմայ ծռերի կեանքը պարսկականին։

Օտարազգի զրոյցներից ընտրելագոյն են համարւում հետեւեալները. Գրիմ եղբայրների գերմանական զրոյցները, Շաբ'ի ժողովրդական գրքերը, Հէօքէր'ի գերմանական դիւցազներգութիւնները և տեղական բնաւորութիւն կրող շատ ուրիշ ժողովածուները. ոչ-գերմանականներից՝ Նիբհուրի յունական դիւցազներգութիւնները իւր որդուն պատմած, Շաբի կլասիկական հնութեան զրոյցները, նոյնը Շտոլ'ի. գնահատւած են նաև Անդրէա'ի Յունական դիւցազներգութիւնները դեռահասների համար։ Ցիշածներից ունինք «Գերմանական ազգային առակներ եղբարց Գրիմմայ աշխատութեամբ հաւաքած» թարգմ. Ֆրանսերէնից Եսայի Տէր-Գրիգորեանցի. Ս. Պ-բուրգ, 1864։

Արևելեան ու արևմտեան այս անսպառ ու զովարար աղբիւրներից ճոխացնելով մեր թարգմանական՝ գրականութիւնը և այդ բանահիւսութիւնները ժողովրդականացնելով կարող ենք յուսալ, որ մի ժամանակ նաև մեր ինքնուրոյն աւելի հարստանայ։ «Տորք Անկեղ» ու «Հայկանուշ Գեղեցիկը» Աղայանցի. և Գ. Առուածատրեանցի «Խաչլաչ լիճը», «Երկու հսկան» ապացոյց են, որ մեր բանաստեղծների ոյժն էլ պատում է այդպիսի չնաշխարհիկ կեանքը

վերաստեղծելու ու մշակելու։ Ի՜նչ քաղցր բուրմունք է գալիս այդ հին հին դարերի յուշիկներից, ինչպիսի՜ խրախուսական երևոյթներ են ներկայացնում նրանք մեր վհատած աչքերին։ Ափսոս, հազար ափսոս, որ Վանանդեցին 1836 թ. և ապա Բագրատունին 1858 նպատակայարմար ժողովրդական նիւթեր չեն ունեցել, որ իրանց բնղմնաւոր տաղանդը՝ փոխանակ կեղծ դասական «Արփիական Հայաստանի» և «Հայկ դիւցազնի» վրայ գործադրելու, մնայուն բանահիւսութիւն արտադրէին։

Մեր հնագոյն անցեալի յիշատակարաններից ցարդ միայն Սասունցի Դաւթի կամ, աւելի ճիշտ է ասել, Սասմայ ծռերի բազմաճիւղ դիւցազներգութեան հատակոտոր փշրանքներն են մեր ձեռքը հասել հիանալի Գողթան պատմական երգերի աւելի աղքատ մնացորդների հետ։ Այլ առիթով ուղերս դրողը առաջարկութիւն էր արել, որ մի անձ կամ մի հաստատութիւն դրամական զոհաբերութիւն անելով, միջոց տար հաւաքիչներին Սասմայ Ծռերի թանկագին ու անփոխարինելի մնացորդները փրկելու անդառնալի կորստից, կորուստ, որ շատ թանգ կը նստէր մեր ազգային բանահիւսութեանը։ «Սասմայ Ծռերի» հրատարակիչ Գարեգին սարկաւագը յառաջաբանում տեղեկութիւն է տալիս, որ իւր Աբարանի բարբառովը պատկանում է Մշոյ վարիանտին (Սրուանձտեանի), իսկ Մոկաց բարբառովը Մոկաց վարիանտին (Աբեղեանի)։ Ենթադրում է, որ կայ նաև Սասունի վարիանտ, որ նա լսել է այնտեղ երկար տարիներ ապրած մի մարդուց։ Աբեղեանն էլ տեղեկութիւն է տալիս, որ իւր պատմողն ամենայն ակնածութեամբ էր վերաբերում իւր պատմածներին, որոնց հաւատում էր։ «Այժմ էլ, աւելացրել է նա,—Սասմայ քաղաք շատ կորիճ փէհլուաններ կայ»։ Եւ ապա հաղորդել է, որ այս վէպը քառասուն ճիւղաւորութիւնով իմացողները շատ հազւադիւտ են արդէն, որ ինքը, այդ Ծերունի մոկացին, իւր կեանքում միայն մի մարդու է հանդիպել, որ այդ ամբողջը իմացել է ու պատմել իրանց գիւղիւմ, երբ ինքը դեռ երիտասարդ է եղել։ Եւ ահա մեր ազգային ծննդաբերութեան այս կենսատու ապրիւրները, որ խսպառ կորչելու վրայ են, աղբիւրներ, որոնցից մենք անհատներս ծագում ենք առել և անհատականութեան հասել։ Քանի որ մեր թշուառ ու տգէտ ժողովուրդն այդ

աւանդութիւններն իբրև նուիրական սրբութիւն մինչև մեր քաղաքակիրթ դարն իւր «զլխի պէս երկու ձեռքով» պահել պահպանել է, մինչ ներկայ աւելի լուսաւոր հայ սերունդը չդիտի աշխատի ոպատուել այդ թանկագին գանձի անդառնալի կորստեան ծանր պատասխանատուութիւնից։ Նպիլհագէնն ասում է իւր «Վէպի տեսութիւնն ու արուեստը» երկում, ի միջի այլոց, որ «ժողովրդական էպոսը միայն գոյութիւն է ունեցել այն ժողովուրդների մէջ, որ զօրաւոր գործունէութեան մէջ գտնուելիս ետ են նայել նախնիների մեծագործութիւններին, և որ ընտիր, բարձր մտքով ժողովրդական վէպ կարողացել է գոյութիւն ունենալ միայն այն ազգի մէջ, որ, իւր զօրութեան հաճոյական զգացմունքով տոգորուած, տեսնում է իւր ծաւալող ոյժը, ուրախ է ու պատրաստ գործունէութեան և որը կարող է դիտել իւր ներքինն ու շրջապատող ազգերը»։

գ. *Պատմուածքներ ու վէպիկներ* (նորավէպ, նովելլա, повѣсть)։ Մինչև այստեղ, քաղաքակրթական պատմական աստիճաններով բարձրանալով, տեսանք, որ իւրաքանչիւր շրջան՝ իբրև բնորոշ արտայայտութիւն իւր կեանքի՝ առանձին բանահիւսութիւն ներկայացրեց։ Հէքիաթական, Ռոբինզոնեան ու Դիւցազներգական շրջաններից յետոյ դեռահաս սերունդը պէտք է մտնէր նաև յաջորդ նահապետական, դատաւորների և վերջապէս թագաւորների աշխարհները, ընտելանար նրանց, և այսպիսով նախապատրաստուէր ժամանակակից քաղաքակրթութեան գրական արտադրութեանց ըմբռնման համար։ Այդ և ժամանակակից աշխարհների կեանքը նկարագրուած է պատմական ու նորագոյն կեանքին վերաբերեալ վէպերի ու դրամաների [1]) մէջ, որոնց ներքին աշխարհը թափանցելու կարողութիւն ձեռք բերելու համար՝ դեռահաս սերունդը պէտք է դեռ, իւր մտաշրջանին ու զգացմունքներին համապատասխան, պարապէր պատմուածքների ու վէպիկների ընթերցանութեամբ։

---

[1]) Իսկական պատմական վէպերն ու դրամաներն, ըստ Տէնի, իւրաքանչիւր արտադրութեան մէջ նկարագրուած կեանքի՝ ժամանակակից հեղինակներինն են, իսկ մնացեալները՝ հռչակաւոր բանաստեղծների գրածներով հանդերձ՝ չինծու, կեղծ են, որովհետև հանճարին էլ անհնարին է անցած գնացած կեանքը վերարտադրելը. նրա հերոսները պատմական ձևերով ժամանակակից մարդիկ են։

Միւս կողմից ժամանակակից քաղաքակրթութեանը հաղորդակից ու գործակից լինելու համար՝ ինքն ըստինքեան պարզ է, որ դեռահասը, Ռոբինզոնեան շրջանից սկսեալ, հետաքննին ու հարցասէր լինելով բնական իրերի և երևոյթների նկատմամբ՝ պէտք էր որ հետզհետէ գիտական գրքոյկների միջոցով աւելի ու աւելի խորասուզէր այդ երևոյթների պատճառական խնդիրների մէջ։ Դեռահաս սերնդին այս գործում պէտք է առաջնորդէին իսկապէս ոչ թէ մասնագիտութիւնից զուրկ կցկցանք անողներն ու փոխադրիչները, այլ գիտութեան իսկական ներկայացուցիչները։ Ո՞վ կարող է այդ գիտութեան մարդկանց չափ յափշտակել ընթերցողին, որոնք խորամուխ են եղել հետազօտութեան աշխարհի մէջ, նորանոր ճանապարհներ բանալով մարդկութեան առջև։ Բայց այդպիսի հեղինակաւոր ժողովրդական գրիչներ դեռ մասով են ցոյց տրւում։ Այսքան հաղւագիւտ են նրանք, որովհետև այդ գործը նւաստեցուցիչ է թւում, ուստի և առ ժամանակ հարկադրւած ենք բաւականանալ մեծ մասով երկրորդական ու շատ անգամ էլ երրորդական ձեռքերի արտադրութիւններով։ Սակայն այդ մասին այստեղ առ այժմ այսքան։

Հիմա վերադառնալով պատմւածքին ու վէպիկին (նորավէպին) ի նկատի առնենք այս երկու տեսակ գրւածքների հիմնական առանձնայատկութիւնները և ապա տեսնենք, թէ դեռահասների գրականութեան մէջ ինչպէս են գործադրւել այդ դաղափարները։ Որովհետև պատմւածքը նորավէպից միայն ծաւալի մեծութեամբ է տարբերւում, ուստի բաւականանանք միայն առաջին տեսակը բնորոշելով, որ գրականութեան պատմութեան մէջ Նովէլլա անւան տակ յերևան է եկել իբրև մի ինքնատիպ արտադրութիւն։ Մեզ զբաղեցնող գրականութեան մէջ կան շատ այնպիսի գրքեր, որ վէպիկ, մանրավէպ, նրավէպ անունը կրելով՝ իսկապէս վէպեր կամ կենսագրութիւններ են և կամ նոյն իսկ տեղ տեղ դասագրքի մեթոդով գրւած թերակատար պատմւածքներ։ Եւ որովհետև, ինչպէս ասցինք, նորավէպը դեռահասների գրականութեան հիմնական ձևն է, որի նմանողութեամբ կազմւում է այդ կարգի գրւածքների մեծամասնութիւնը, ուստի աւելորդ չենք համարում այստեղ մի փոքրիկ քաղւածք մէջ բերել հռչակաւոր վիպասան Եպիշեգէնի «Վէպի տե-

թութիւնն ու արեստախօսութիւնը» [1]) *հեղինակաւոր գրքից, որ այս և սրա հետ առնչութիւն ունեցող խնդիրները շատ մանրազնին ու շահեկան վերլուծութեան է ենթարկում։*

«Նորավէպի ու վէպի մէջ եղած տարբերութեան խնդիրը գեղարեստագէտներին արդէն շատ գլխացաւանք է պատճառել։ Սակայն և այնպէս էական կողմով համաձայնութիւն կայացել է. նորավէպը պատրաստ բնաւորութիւնների հետ գործ ունի, որոնք, պայմանների ու հանգամանքների առանձին կապակցութեան շնորհով, հետաքրքրական պայքարների (կոնֆլիկտ) մէջ են ընկնում, այսպիսով իրանց բնութիւնը արտայայտել հարկադրելով. ուրեմն առանձնայատուկ բնաւորութիւններով պայմանաւորուած պայքարը, որ Աստուած գիտէ թէ ինչպիսի ընթացք պիտի ընդունէր, ուղղակի այս ելքն է գտնում, և մի այլ ելք ոչ կարող է գտնել և ոչ էլ պէտք է գտնի։ Ցարենք, որ հին նորավէպի մէջ հանգամանքների ու պարագաների շղթայումն է գերակշռում, նորի մէջ, ընդհակառակը, նորագոյն զգացողութեան համապատասխան՝ գլխաւոր շեշտը բնաւորութեան առանձնայատկութեան վրայ է ընկնում.... Վէպն այնքան շատ չէ ձգտում կարելի եղածին չափ հետաքրքրական գործողութիւն ներկայացնել, այլ՝ որքան կարելի է, մարդկային լայն ու ընդարձակ կեանքի լիակատար ու համատեսիլ պատկերը տալ։ Այս պատճառով գլխաւոր գործող անձեր ներկայացնելու համար նա կարիք չէ զգում պատրաստի մարդկանց. և որովհետև բանն այսպէս է, նրանք այնպիսի մարդիկ չեն, որոնք ինչ բանի էլ որ միջամտելու լինեն, կացութիւնը տրագ վախճանի հասցնեն, այլ այնպիսի անհատներ, որ դեռ զարգացման ընթացքի մէջ են, ուստի և վրձռական ազդեցութիւն գործել չեն կարող. ընդհակառակը իրանք են որ հանգամանքների ու շրջապատող մարդկանց շնորհով՝ կրթութեան ու զարգացման մէջ որոշ ուղղութիւն են ստանում և այս-

---

[1]) Friedrich Spielhagen, „Beiträge zur Theorie und Technik des Romans“ 1883.

Մեր քաղած հատուածները «Նորավէպ թէ Վէպ», «Վէպ թէ Նորավէպ» և «Դրամա թէ Նորավէպ» գլուխներից են, ուր օրինակներով ապացուցանում է հեղինակը, թէ ինչպիսի չփոթութիւններ են տիրում նաև նշանաւոր գրողների գաղափարների մէջ։

պիսով բանաստեղծին աւելի առիթ են ներկայացնում, այո, նրան հարկադրում են ընթերցողին մեծ ու հեռաւոր (անշուշտ, որքան կարելի է, հաճելի) շեղ ճանապարհներով դէպի նպատակն առաջնորդել։... Ուստի և Նորավէպը թէ իւր վերջնական նպատակով և թէ գեղարուեստական տնտեսութեամբ վճռողական նմանութիւն ունի դրամայի հետ։... Մի անլուր, այսինքն՝ վերին աստիճանի ուշադրութեան արժանի իրողութեան նկարագրութիւնն է Նորավէպ գրողի նպատակը։... Նորավէպը նրանով էլ է տարբերւում վէպից, որ նրա գործող անձերը սակաւաթիւ են լինում և ամբողջ պատմութեան ընթացքն այնպէս արագութեամբ է լարւում, որ, որքան կարելի է, շուտ հասնի ելքին։... Ոչ մի վէպի նիւթ միևնոյն ժամանակ դրամայի նիւթ է, հետևաբար ոչ մի վէպ չէ կարող դրամայի փոխադրուիլ։ Նորավէպի նիւթը համարեա միշտ միևնոյն ժամանակ դրամատիկական է, ուստի և գրեթէ իւրաքանչիւր Նորավէպ կարող է դրամայի փոխադրուիլ»։

Նորավէպը՝ իբրև այսպիսի առանձնայատուկ արտադրութիւն՝ դեռահասների գրականութեան մէջ առհասարակ հազիւ է երևան գալիս. շատ անգամ, ինչպէս վերն ակնարկեցինք, անպատեհ խառնուրդների եռևից նրա լոկ սուերն է երևում։ Ի հարկէ, եթէ գեղարուեստի խիստ տեսակէտներից նայելու լինէինք մանկական գրուածքներին, անհնարին պիտի լինէր սրանց մեծամասնութիւնը Նորավէպ անուանել, քանի որ գործող անձերը՝ տհաս լինելով՝ դեռ խօսք էլ չէ կարող լինել կազմակերպուած բնաւորութեան մասին։ Անշուշտ այն գրուածքների փոքրիկ հերոսները, որոնք քաջաբար մարտնչելով ամեն տեսակ խոչնդոտների ու մոլորութեանց դէմ՝ մազի չափ չեն շեղւում՝ իրանց առաքինական որոշ ընթացքից, համապատասխան կը լինէին վերոյիշեալ պահանջներին, եթէ միայն կեանքը նրանց արտադրած լինէր, եթէ նրանք կեղծ ու պատիր ուրեականներ չհանդիսանային։ Այս ուղղութեանն իբրև արտայայտիչ կարող են ծառայել Վենետիկի «Մատենադարան մանկանց» ընդհանուր անուան տակ հրատարակած գրքոյկները գերմանացի Շմիտի գրուածքներից թարգմանած կամ նրա հետևողութեամբ կազմած։ Նոյն նկատողութիւնը պէտք է անել նաև այն փոքրիկ մարմնացեալ դև հերոսների նկատմամբ, որ նոյնպէս անյողդողդ են մնում իրանց

գործողութեանց մէջ և ոչ մի նշոյլ բարութեան, կարեկցութեան ցոյց չեն տալիս [1]։ Հետևաբար դեռահասների միայն այն գրուածքները կարելի պիտի լինի նորավէպ անուանել, որոնց գլխաւոր հերոսները գոնէ հասակաւոր են կամ չափահասութեան մօտ և որոնք գործում են իրանց հոգեկան զարգացման համապատասխան՝ որոշ դիրք են բռնում այս կամ այն ընդհարման դէպքում։ Իսկ եթէ գլխաւոր գործող անձերը դեռահաս են, բնաւորութեան մասին դեռ խօսք էլ չի կարող լինել։ Այդպիսիները կարող են զեկավարուել միայն որոշ ցանկութիւններով, տրամադրութիւններով, միտումներով, որոնցից իրական կեանքում նախ կամք և ապա իսկական բնաւորութիւն է առաջանում ու կազմակերպութիւն ստանում գործողութեան շնորհով։

Համաշխարհային գրականութեան մէջ չափազանց սրագ բազմանում են դեռահասների համար գրուած նորավիպանման գրուածքները, որոնք միայն Գերմանիայում յիսուն տարուայ ընթացքում 800-ից հասել են 10 հազարի։ (Գերմանական օրինակելի նովէլիստներ հանդիսանում են Գէօթէն, Տիքը, Գէլլէրը, Շտորմը, Հայզէն)։ Ոչ մի գրական վաստակ այնպէս անխիղճ կերպով չէ կազմուում, ինչպէս դեռահասների համար նշանակուածները, որոնց մէջ դասագրքերն էլ բացառութիւն չեն կազմում և որոնք նորագոյն գործարանական սիստէմով ձեռակերտուում ու շահաստաններ են հանուում և հմտալից միջոցներով միլիոնաւոր օրինակներով տարածուում։ Այդքան գրողներից շատ քչերն են ընտիր. նրանց կարելի է մատով ցոյց տալ։

---

[1]) Տէնը իւր «Անգլիական գրականութեան պատմութեան» վերջաբանում, խօսելով այս ազգի կրիտիկոսների, ֆիլոսոֆների, պատմաբանների ու վիպասանների մասին՝ ի միջի այլոց ասում է. «զգացումների ճշգրիտ ու մանրամասն նկարագրութիւնը նրանց մօտ միշտ հանդում է գովասանքի ու դատապարտութեան. միայն բողոքական երկրում եւթ կարելի է այնպիսի վէպ գտնել, որ ամբողջովին նուիրուած լինէր տասներկու տարեկան մանկան պարտականութեան զգացման ստուգանական զարգացման նկարագրութեանը։ Եւ այս առիթով լիշում է նա անգլիական երեք կին գրողների՝ Էլիսաբէթ Ութիուլ, միս Իւնդի և մանաւանդ միս Էլանոի գրուածքները։ Այս տեսակէտից, ինչպէս երևում է, բնորոշ առնչութիւն կայ գերմանուհի նորելուկ կին գրողների անչափ մանկական արտադրութեանց և նրանց անդրծովեան դաւանակից քոյր հեղինակների մէջ։

Մեր գրականութիւնն այդպիսի ինքնուրոյն արտադրութիւններ դեռ համարեա թէ չունի առանձին գրքոյկներով հրատարակած։ «Աղբիւրի» մէջ կան այդ կերպով հրատարակելու արժանի նիւթեր, որոնցից խիստ ընտրութիւն պէտք է անել։ Այս առիթով կարդացի երեք տարեշրջանների համարները, ուր օրինակ աչքի են ընկնում կոպիտ ու երբեմն էլ արիւնարբու վրէժխնդրութեան պատկերներ, որոնք շատ միտումաւոր են (տեղենցիոզ [1])։

---

[1]) Այս ճիւղի մեր թարգմանական գրքոյկների մասին կը խօսի նաև ընդհանուր հաշուում։

ՀԱՅԵՐԷՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԵՌԸ

Նուէր «ՄՈՒՐՃ»-ի տասնամեակին

ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ

Սեռը լեզուների մէջ երկու տեսակ է լինում. տրամաբանական և քերականական։ Երբ լեզուի մէջ ճանաչուած սեռը համապատասխան է առարկաների իրական սեռին, դա կոչւում է տրամաբանական. օրինակ. հայերէն մարդ արական է, կին՝ իգական. իսկ ջուր, որ ոչ արական կարող է լինել ոչ իգական, չէզոք է։ Այն ինչ՝ գերմաներէն՝ մարդ արական է, (Mensch), կին (Weib) չէզոք, իսկ ռուսերէն և ֆրանսերէն ջուրը իգական է։ Հայերէնում և անգլիերէնում սեռը տրամաբանական է, գերմաներէն, ռուսերէն, ֆրանսերէն և շատ այլ լեզուներում քերականական, որ և լեզուի աւելի ստոր աստիճանի վրայ կանգնելու նշան է։

Անուններին համապատասխան են և դերանունները. գերմաներէնը և ռուսերէնը անունների երեք սեռ ունին. դերանուններն էլ ունին երեք սեռ. ֆրանսերէնը երկու սեռ ունի, դերանուններն էլ երկու սեռ ունին։

Հայերէնը երեք սեռ ունի. արական, իգական և չէզոք, բայց դերանունները ոչ մի սեռ չունին։

Առաւելութիւն է արդեօք դա, թէ պակասութիւն։ Երբ ֆրանսիացին, առանց առարկայի անունը տալու elle կամ la է ասում, ռուսը՝ она, գերմանացին՝ sie կամ die, իսկոյն հասկացւում է, որ խօսքը մի իգական անուան մասին է, որովհետև եթէ արական կամ չէզոք լինէր առարկան, նրանք այլ դերանուններով կ'արտայայտէին իրանց միտքը։

Մեր լեզուն այդ առաւելութիւնից զուրկ է. երբ մենք ասում ենք նա, նրանք, նոցա, նորանցից շատ անգամ չգիտենք, թէ խօսքը ում մասին է, մարդու, կնոջ, թէ մի անշունչ առարկայի։

Օրինակ՝ «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև ծնողները նրան չէին սիրում»։—ում, Մարկոսին, թէ կնոջը՞,—անորոշ է։ Եթէ մեր դերանունները սեռ ունենային, այդ չփոթութիւնը չէր առաջանայ։ Այս պա-

կասը լրացնելու և միտքը պարզելու համար մեր լեզուն ստիպված է անհամ և անճաշակ կրկնութիւնների դիմելու, որոնք մարդու ականջ են ծակում։—Այսպէս՝ Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև ծնողները Մարկոսին չէին սիրում. կամ. «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև ծնողները կնոջը չէին սիրում։

Աւելի անտանելի է դառնում նախադասութիւնը, եթէ որոշել ենք ուզում հեռանալու տեղն ու ծնողները։—«Մարնոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև կնոջ ծնողները չէին սիրում կնոջը». կամ հա՛յառակը՝ «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև Մարկոսի ծնողները չէին սիրում Մարկոսին» Ճիշտ լինելու համար մենք ստիպված ենք մի նախադասութեան մէջ երեք անգամ կին կամ Մարկոս լիշել։

Նոյն պակասութիւնը շարունակ զգալի է լինում մանաւանդ թարգմանութիւնների ժամանակ. այսպիսի մի տարրական արտայայտութիւն՝ онъ և она, կամ er և sie, il և elle, և կամ ihr, eñ, մենք անկարող ենք հայերէն ասել։ Այսպէս՝ Die Geschichte war nicht lange zu Ende, als die Jungfer Pfarrerin mit dem sogenannten Herrn Schmidt durch den Garten herkam; sie bewillkommte Lotten mit herzlicher Wärme, und ich muss sagen, sie gefiel mir nicht übel". (Geothe, Werther)։—Այսինքն՝ պատմութիւնը նոր էր վերջացած, որ պաստորի աղջիկը պ. Շմիտի հետ այգու միջից եկաւ. նա սրտանց բարևեց Լոտտին, և ես պիտի խոստովանիմ, նա ինձ դուր եկաւ»—Ո՞վ, պ. Շմիտը, թէ պաստորի աղջիկը.—Եթէ ուզենք միտքը բնագրի նման հեշտ ու որոշ անել, դարձեալ մի անճոռնի նախադասութիւն պիտի կազմենք, մի քանի անգամ լիշելով «Պաստորի աղջիկը»։

Նոյն վէպի մէջ Վերթէրը յուլիսի 16-ի նամակում խօսում է մի անձի մասին առանց նրա անունը տալու. միայն դերանունից ենք իմանում, որ խօսքը մի կնոջ կամ օրիորդի մասին պիտի լինի։ Ի՞նչպէս թարգմանել հայերէն, երբ անունը չկայ. կի՞ն, աղջի՞կ, օրիո՞րդ...

Եթէ փորձենք թարգմանելու հետևեալ ֆրանսերէն հատուածը, մնալու ենք միանգամայն ձեռնունայն.

—Nonine. Qui n'aime qu'elle, comme elle n'aime et n'a jamais aimé que lui, et qui l'épousera, c'est moi qui vous le dis. (Dumas fils.—„La dame aux camélias"—երես 4)։

Այսպիսի հարիւրաւոր օրինակներ կարելի էր բերել մեր դերանունների պակասը ցոյց տալու համար, եթէ այդ բանը արդէն ուրիշներից նկատած ու ճանաչած չլինէր։

Բանն այն է, որ այդ պակասը զգացել է նոյն իսկ գրաբարը, մեր ճոխ, փարթամ և հարուստ գրաբարը, որի առաջ մեր լեզուն դեռ մի մանուկ է։ Այդ կարիքն ունեցել է և ունի արևմտեան հայերէնը, որ անհամե-

մատ աւելի հարուստ ու ճկուն է մեր լեզուից, և զգացել են արևելեան լեզուով գրողներից շատերը, բոլորն էլ գիմելով Դաւիթ Անյաղթի տաղանդաւոր դեղատոմսին, որը մեր դերանունների պակասը լրացնելու համար, դեռ հինգերորդ դարում, իգական ձևեր էր հնարել արականի նմանութեամբ, կազմելով նէ, նէրա, ի նէրանէ, և այլն։

Այդ ձևերը, սակայն, ընդունելութիւն չգտան ոչ գրաբարում, ոչ արևմտեան բարբառում, ուր մի ժամանակ բաւական եռանդուն գործածողներ կային, ոչ էլ մեզանում.—Պ. Մալխասեանը մեր մէջ միակն է իր անուանակից մի այլ պարոնի հետ, որ իր թարգմանութիւնների մէջ հարկից ստիպուած գործ է ածում այդ ձևերը։

Ի նկատի ունենալով, որ ամեն մի արհեստական նորմուծութիւն լեզուի մէջ կենդանութիւն առնել անկարող է, քիմերա կը լինէր, եթէ աշխատէինք նոր ոյժ տալ այդ ձևերի կիրառութեանը։ Հարց է հիմա, ինչպէս ապա դարմանել եղած կարիքը, ինչպէս այդ անադին պակասը վերացնել լեզուի միջից, առանց մի խորթ տարր մտցնելու նորա մէջ։

Դարմանը պէտք է որոնել եղածի, սովորականի մէջ։ Արդեօք լեզուն չունի՞ մի որ և է միջոց, որ սովորական, առօրեայ լինելով հանդերձ՝ կարողանար մեր նպատակին ծառայել, առանց մի խորթութիւն պատճառելու մեր ականջին, առանց լեզուի օրգանական ամբողջութեանը վնասելու, որ հիմնուած լինէր լեզուի մէջ տիրող օրէնքների վրայ։

Այսպէս՝ մենք ամեն օր միանգամայն նոր գաղափարներ ու մտապատկերներ ենք արտայայտում բարդութիւնների միջոցով, լեզուի հին արմատների միութեանը տալով նոր նշանակութիւն. հեռու և դիր տուել են մի բոլորովին նոր բառ՝ հեռագիր. երկաթ-ուղի=երկաթուղի, դերասան, լր-ա-դիր և այլն։

Եւ կամ միևնոյն բառի տարբեր ձևերին տալիս ենք նոր նշանակութիւն։ Մի տասը տարի հազիւ կայ, որ ոմանք սկսեցին տարբերել գիտական և գիտական, արհեստ և արուեստ, կայան և կայարան [1]), քաղաքային և քաղաքական, հիմք և հիմունք, զգայական և զգայարանական, որոնք այսօր մեծամասնութիւնից ճանաչուած են որպէս տարբեր մտապատկերների արտայայտութիւն։

Սա ամեն մի զարգացող լեզուի կարևորագոյն աղբիւրն է։ Արմատական բառերի թիւը ամեն մի լեզուի մէջ վերին աստիճանի սահմանափակ է, որոնք ծառի նման ճիւղաւորուելով, լեզուին շարունակ մատակարարում են նորանոր բառեր։

Չէինք կարող արդեօք լեզուի մէջ տիրող այս օրէնքից օգտուել մեր նպատակի համար։ Չունէին արդեօք մեր դերանունները այնպիսի սո-

---

[1] Կայան=Haltestelle, կայարան=station։

վորական ձևեր, որոնց միջոցով մենք վերևը վիշած չփոթութիւնների առաջն առնել կարենալինք։

Այո, մեր դերանունները բազմաթիւ ձևեր ունին. նրանք, նորանք, նոքա, սրանք, սորանք, սոքա. իրենք, իրանք, իւրեանք. դրանց, դորանց, դոցա և այլն, որոնք բոլորն էլ սովորական են, բոլորն էլ գործ են ածւում ամենամեծ խառնակութեամբ, առանց մի որ և է կանոնի։ Արդեօք նպատակաւորմամբ չէր լինի, դրանք մի պաշմանական կանոնի ենթարկել, մի ձևը գործածելով արական, միւսը իգական, իսկ երրորդը, եթէ կայ, չեզոք անուններին տեղ։

Փորձենք, օրինակ, նրա, նրանից, նրանով, և իր՝ արականի, իսկ նորա, նորանից, նորանով, և իր՝ իգականի տեղ գործածել և տեսնենք արդիւնքը։—Թարգմանենք Գէօթէի Վերթէրից հետևեալ հատուածը [1])։

«Մեր հարևանուհիք քնեցան. Լոտտէն (օրիորդի անուն է) ինձ հարցրեց, թէ արդեօք ես էլ չէի ուզի նորանց ընկերանալ. նա չէր ուզում, որ ես իր մասին անհանգիստ լինէի.—Քանի որ ես այս աչքերը բաց եմ տեսնում, ասացի ես և պինդ նայեցի նորան, քնելու վտանգ չկայ.—Եւ մենք երկուսով չքնեցանք մինչև նորա տունը, երբ աղախինը, դուռը բաց անելով, նորա հարցին պատասխանեց, որ հայրն ու փոքրերը լաւ դրութեան մէջ են»... (Նամակ 10-ն յուլիսի)։

«Ես կ'ուզէի, որ դու տեսնէիր այն ահռելի կերպարանքը, որ ես ստանում եմ, երբ հասարակութեան մէջ նորա մասին խօսք է լինում. մանաւանդ երբ ինձ հարցնում են, թէ արդեօք նա ինձ դուր է գալիս»։

Այս նամակը հայերէն անկարելի էր թարգմանել առանց իգական դերանուան, քանի որ անունը ոչ մի տեղ չի վիշւում։

Նոյն աջողութեամբ թարգմանւում է և վերևը դրւած ֆրանսերէն հատուածը, որ մինչև հիմա անկարելի էր թւում։

Նանին. «Որը միայն նորան է սիրում. ինչպէս որ նա էլ բացի նրանից երբէք ոչոքին չէ սիրել, և որը նորա հետ կ'ամուսնանայ»։

«Երկուշաբթի առաւօտ նա Լոտտէին հետևեալ նամակն էր գրում, որը նրա մահից յետոյ գտնելով, նորան յանձնեցին» (Վերթէր)։

«Ես նրանց ընդ առաջ չտապեցի, սարսափով բռնեցի նորա ձեռը և համբուրեցի։ Լոտտէն ներս մտաւ և նստաւ. Ալբէրտը նորա կողքին, ես էլ միւս կողքին. ոակայն, իմ անհանգստութիւնը թոյլ չտաւ երկար նստելու. ես վերկացայ, կանգնեցի նորա առաջը. և այլն։

Եթէ փորձենք այս ձևով կոկելու վերևի հայերէն նախադասութիւնները, նոյն փայլուն արդիւնքը կ'ունենանք։

«Մարկոսը իր կնոջ հետ հեռացաւ, որովհետև ծնողները նորան չէին սիրում»։

---

[1] Դիւրութեան համար իգական դերանունները մենք ընդգծում ենք։

Եթէ Մարկոսը լինէր չսիրուածը, կը գրէինք. «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև ծնողները նրան չէին սիրում»։

Եթէ ուզենք որոշել ծնողները, կը գրենք. «Մարկոսը կնոջ հետ հեռացաւ, որովհետև իր ծնողները չէին սիրում նրան». և կամ ընդհակառակը... իր ծնողները չէին սիրում նրանն» կամ... իր ծնողները չէին սիրում նրան։

Նոյն նրբութիւնները կարելի է արտայայտել և լոգնակի։

Օրինակ. «Մարկոսը կնոջ և աղջկայ հետ հեռացաւ, որովհետև իր ծնողները չէին սիրում նրանց» (կնոջը և աղջկանը)։

«Մարկոսը իր կնոջ, աղջկայ և որդու հետ հեռացաւ, որովհետև իր ծնողները չէին սիրում նրանց» (այսինքն բոլորին, կամ ի մասնաւորի հօրն ու որդուն)։

Այս մի չնչին նորմուծութիւնով, ինչպէս ընթերցողը նկատում է, հայերէնը այնպիսի նրբութիւն և արտայայտութիւնների ճշտութիւն է ստանում, որ առանց դրան երևակայել անկարելի էր։ Այո, այդ դէպքում նա տեղ տեղ գերազանցում է ռուսերէնին, որոնք իրանց իգական դերանունների չնորհիւ բազմաթիւ նրբութիւններ են կարողանում արտայայտել։ Վերջին երկու նախադասութիւնները անկարելի է ճշտութեամբ ռուսերէն կամ գերմաներէն թարգմանել, առանց անունները առանձնակի վերցնելու և մի քանի անգամ կրկնելու։

Այս օրինակները կարծեմ բաւարար էին ցոյց տալու, որ այդ կարիքը անդարմանելի չէ. հարց է հիմա, դորանով արդեօք մեր լեզուն մի բան կորցնում է։ Ոչ։ Մեր ականջը ստիպուած է լինում մի խորթ նորութեան ընտելանալու։ Դարձեալ ոչ։ Այս նորութիւնը նպաստում է լեզվի կատարելութեանը։ Անդայման։ Ազնուացնում, գեղեցկացնում է նրան։ Անտարակոյս։ Առաջացնում է մի որ և է խառնակութիւն կամ մտցնում է մի օտար նիւթ լեզվի մէջ։ Ոչ երբէք։ Ընդհակառակը, մեր առաջարկի մի այլ կարևորութիւնն էլ այն է, որ դերանունների բազմաթիւ ձևերը, որոնք մինչև օրս գործ էին ածւում ամենամեծ խառնակութեամբ, կարգի ու կանոնի են ենթարկւում, ամեն մինը ստանում է իւր տեղն ու իւր պաշտօնը, ծառայելով միևնոյն ժամանակ լեզվի կատարելութեանը։

Այս ամենի հետ կարևորն այն է, որ մենք իսկի մի նոր բան չենք ասում. մեր հնամոլները թող այս հանդամանքը լաւ կշռադատեն և շարունակ ի նկատի ունենան։ Երբ մենք առաջարկում ենք նորա, նորանից, նորանով իգականի տեղ գործածել, դա մի նորութիւն չէ.—ամեն մէկն էլ մինչև օրս այդ դերանունը այդ մտքով գործ է ածել։ Եթէ մեր առաջարկի մէջ մի նորութիւն կայ, դա նա է, որ դորանք այլ ևս խառնակութեամբ չգործածուեն, մի ձևը վերապահենք իգականին, միւսը արականին։

Մեր առաջարկը սխալ էլ չի կարող լինել, որովհետև մենք այդ ձև-

ներին նոր միտք չենք յատկացնում, նոր նշանակութիւն չենք տալիս, նորանք պահում են, ինչ որ առաջուց արդէն ունեցել են։

Կարող են առարկողներ լինել, որ մեր առաջարկը լեզուի ոգուն դէմ է, կենդանի լեզուից չի բղխում։ Գրական լեզուի մէջ, սակայն, մարդկային կարիքն ու արուեստը մեծ տեղ են բռնում. դա ցոյց է տալիս իգական անունների այն ահագին քանակը, որ օրէ-օր ստեղծելով գրականութեան մէջ՝ անցնում է կենդանի լեզուին. ինչպէս օր. վարժուհի, աշակերտուհի, դաստիարակչուհի, դերասանուհի, հեղինակուհի. ոպատուհի, խոհարարուհի, հալուհի, դերմանուհի, խոալուհի, ղերձակուհի, և այլն և այլն։

Դա դեռ մի տրամաբանական երևոյթ է. գրական լեզուն այնպիսի արուեստական ձևեր է ստեղծում և մտցնում կեանքի մէջ, որ հակառակ է ամեն մի առողջ դատողութեան, ինչպէս, օրինակ, քաղաքավարական ձևը, Դու-ի տեղ յոգնակի—Դուք ասելով։ Աւելի զարգացած լեզուները, ինչպէս օրինակ գերմաներէնը, յարգանքի և պաուի մի առանձին դերանուն էլ ունին (Sie), որը միմիայն բարձր կուլտուրայի և գրականութեան արդիւնք է և ընդհանրացած է լոկ կրթութեան միջոցով։

Եթէ այս հանգամանքները լաւ ի նկատի ունենանք, կը տեսնենք, որ մեր առաջարկը արհեստի ոչ մի հետք չի կրում, նա թէ տրամաբանական և թէ մանաւանդ բնական է իւր էութեամբ, և բղխում է մեր լեզուի զարգացման անհրաժեշտութիւնից։

Հիմա ոմանք կարող են ասել, որ մեր ընտրութիւնը կամայական է։ Ինչու նրա, իր, սրա արական ենք ընդունում, նորա, իւր, սորա—իգական, քանի որ հակառակն էլ եթէ ընդունէինք, նոյն արդիւնքը պիտի ունենային։

Պատճառը հետևեալն է. եւրոպական լեզուներում իգական դերանուններն ու յօդերը արականից զանազանւում են սովորաբար իրանց երկարութեամբ և լայն ձայնաւորներով. ֆրանսերէն un, il, գերմաներէն ein, ռուսերէն ОНЪ արական են. une, elle, eine, она,—իգական։—Հայերէնը այդ լեզուների քոյրն է. տրամաբանական կը լինէր, որ դերանուններով էլ նորանց նմանէր. կարճը՝ արական, երկարը—փակուկը՝ իգական։—Այսպիսով մեր առաջարկի համեմատ հայերէն դերանունները հետևեալ բաժանումը կը ստանային.

Արական դերանունները

Եզակի	Յոգնակի
ինքը, սա, դա, նա	սրանք, դրանք, նրանք, իրենք
իր, սրա, դրա, նրա	սրանց, դրանց, նրանց, իրենց
իրեն, սրան, դրան, նրան,	սրանց, դրանց, նրանց, իրենց
իրենից, սրանից, դրանից, նրանից	սրանցից, դրանցից, նրանցից, իրանց.
իրենով, սրանով, դրանով, նրանով	սրանցով,դրանցով,նրանցով, իրանցով

Իգական դերանուններ

ինքը սա (սէ) դա, նա (նէ)	իրանք, սորանք, դորանք, նորանք
իր սորա, նորա, նորա	իրանց, սորանց, դորանց, նորանց
իրան, սորան, դորան, նորան	» » » »
իրանից, սորանից, դորանից, ն.-ից	իրանցից, սորանցից, դորանցից,-ցից
իրենով, սորանով, դորանով, նորանով	իրանցով, սորանցով, դորանցով,-ով

Այս ցանկը մի պակասութիւն ունի միայն, որ իգական դերանունների եզակի թուի առաջին դէմքը չի զանազանւում արականից. տարբեր ձևեր չկան. նոր հնարելը դէմ կը լինէր լեզուի ոգուն. կարիքը՝ պահանջած տեղում, անշուշտ մենք ստիպւած ենք դիմելու Դաւիթ Անյաղթի դեղատոմսին, և կամ, կարող ենք գործ ածել սա, դա, նա, միայն տակը գծած, ինչպէս այդ Հայնէի պ. թարգմանիչն է արել։ Ալնպիսի դէպքերում, ուր կարիք կայ թարգմանելու ՕНЪ և ОНА, il և elle, անշուշտ պիտի գրենք՝ նա և նէ։ Սակայն, այդ նէ ձևը որքան սահմանափակ գործածենք, այնքան լաւ է լեզուի համար, դերադասելով միշտ տակը գծած նա-ն։

Կայ և մի երրորդ ձև, որ մենք բոլորովին չչիշեցինք. սոքա, դոքա, նոքա, սոցա, սոցանից, սոցանով և այլն, որ մի ժամանակ գրաբարի ազդեցութեան տակ ահագին կիրառութիւն ունէր, որ այսօր կարելի է ասել բովորովին տեղի է տուել կենդանի ձևերի առաջ։ Այդ ձևը կարելի էր գործ ածել չէզոք (անշունչ) առարկաների տեղ. բայց բանն այն է, որ նա եզակի բոլորովին չունի, և ինքն էլ գրաբար լինելով, կենդանանալու չանսեր շատ քիչ ունի։ Ինձ թւում է, որ անբնական չէր լինի, եթէ մի անգամ ընդ միշտ ուզում ենք մի կանոնի հետևել, որ իգական դերանունները գործ ածէինք նաև չէզոք անունների տեղ [1])—ինչպէս այդ արել ենք մենք մեր ներկայ լօդւածում։

Միւս դերանունների մասին ալ ևս աւելորդ եմ համարում խօսել. հարցի մանրակրկիտ ուսումնասիրութիւնը կախւած կը լինի այն ընդունելութիւնից, որ կը գտնի այս առաջարկը մեր գրականութեան առողջ մտածող բարեկամներից։ Առայժմ մեր ասելիքը կարող ենք ամփոփել հետևեալ կանոնի մէջ—

---

[1]) պ. Աբեղեանը «Նոր-Դար» 1897 թ. № 160—161. աշխատում է մի լօդւածով ցոյց տալ, որ հայերէն դերանունների անորոշութեան չնորհիւ մենք չփոթում ենք անշուշտ և շնչաւոր առարկաները. և մեր լեզուի պակասը առաջարկում է լրացնել արևմտեան դերանունների ձևերով։

Պր. Աբեղեանի բերած օրինակների մէջ, սակայն, մենք սխալ չը գտանք։ Այդ հարցին մենք կը վերադառնանք մի այլ անգամ։

Ուր կարիք կայ եւ դերանունը երկու ձեւ ունի, այդ ձեւերին ատլ որոշ նշանակութիւն, կարճը պահելով արականի, իսկ երկարը իգականի եւ չէզոքի համար։

Եթէ ձեւերը մի քանի են, մի կողմ թողնել գրաբարը և առաւելութիւն տալ այն ձեւերին, որոնք սովորական և կենդանի լեզուի մէջ առօրեայ են։

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Ցետադարձ ակնարկ։—Սոցիոլոգիան։—Միջնադարեան հասկացողութիւնը. Թոմաս Ակվինացին։—Հուգո Գրոցիուս։—Լոկկ։—Մոնտեսքիէօ։—Հերդէր։—Տիւրգօ, Կոնդորսէ։—Օգիւստ Կոնտ։—Սպենսէր։—Դրեպէր։—Շէֆլէ եւ այլք։

Մի փոքրիկ յետադարձ ակնարկ։

«Էվոլիւցիայի գաղափարը» խորագրով մի երկար շարք յօդուածներում մենք հետևեցինք էվոլիւցիայի տիեզերական պրոցէսին սկզբնական քաոսային զանգուածից սկսած՝ մինչև մարդը. տեսանք, որ այդ պրոցէսը անընդհատ է, յաւիտենական, միշտ աւելի այլազանուող ու բեղմնաւորուող։ Մենք ցոյց տուինք՝ Կանտ-Լապլասեան թէօրիայից հրահանգուած՝ թէ ինչպէս տիեզերքի անդրագոյն շրջանում միգային նախազանգուածը հետզհետէ թանձրանալով անջրպետի այլ և այլ կէտերում, կենտրոնախոյս ու կենտրոնաձիգ ուժերի շնորհիւ, անհամար դարերի ընթացքում ծնունդ է տուել տիեզերական բիւրաւոր համաստեղութիւններին, որոնց թւում՝ և մեր մայր-երկրին։ Մենք դիտեցինք համաօտարէն՝ առաջնորդուելով միշտ միևնոյն թէօրիայով՝ երկրագնդի աստիճանական կազմակերպումը սկզբնական հրահեղուկ դրութիւնից, երբ նա դեռ նոր էր անջատուել ընդհանուր քաոսից, մինչև այն շրջանը, երբ գոյանում է երկրային կեղևը և երբ ջուրն է երևում նրա մակերեւոյթին, ջրի հետ միասին նա և կենդանի մարմինները։ Մենք երկարօրէն կանգ առինք կեանքի ծագման վրայ և դիտել տուինք, որ բացարձակ սահմանագիծ չկայ այսպէս կոչուած «կենդանի» ու «անկենդան» աշխարհների միջև. ապա մենք տեսանք, որ այդ սահմանա-

գիծը բացակայում է նաև բոյսերի ու կենդանիների միջև։ Պալէօնտոլոգիայում (հնէաբանութիւն) արած մեր զբօսանքը ջրեց ստեղծագործական առասպելները, որ տարածել է Մովսիսական աստուածաբանութիւնը աշխարհիս «6000-ամեայ գոյութեան» մասին։

Օրգանիզմների բովանդակ աշխարհը ներկայացաւ մեզ, որպէս յամրընթաց էվոլիւցիայի մի հսկայական պրոցէս։ Մենք որոնեցինք այդ էվոլիւցիայի հիմնական օրէնքը և գտանք նրան դարվինիզմի կամ բնական ընտրութեան մէջ—բնական ընտրութեան՝ որ կատարւում է գոյութեան կռիւի մէջ։ Վերջապէս, համեմատեցինք մարդուն իր ֆիզիկականով ու հոգեկանով բարձրագոյն անասնական տեսակների հետ և իմացանք, որ բոլոր շնչաւոր էակները առանց բացառութեան շղթայուած են մէկ արիւնակցական կապով. որ նրանց մէջ տարբերութիւնները յարաբերական են միայն, և երբէք՝ աբսոլիւտ։

Այս ամենը ուսուցանում է մեզ մի վերին աստիճանի ուշագրաւ ճշմարտութիւն։ Մենք կարող ենք՝ անմահ Սպինոզայի հետ՝ վճռականապէս ասել՝ որ «ստեղծագործութիւն» ասած բանը չը կայ իսկապէս, այլ կայ միայն կերպարանաւորումն մէկ անսահման, «անվերջօրէն անվերջ» սուբստանցի (la substance infiniment infinie)։ Էվոլիւցիայի յաւիտենական հոսանքի մէջ նոր բան չի ստեղծւում, այլ եղածը նոր-նոր ձևեր, կերպարանքներ է ընդունում։ Տիեզերական մետամորֆոզը իր չուկէան առնելով նիւթի քաօսային, շփոթ վիճակից՝ առաջ է ընթանում—ըստ Սպենսէրի արտայայտութեան—միշտ փոխանցուելով հոմոժէնից դէպի հետերոժէնը (=համատարրից դէպի այլատարրը)։ Մասաւոր-հոգեկան կեանքը աւելի այլատարր է (հետերոժէն), քան զուտ օրգանականը (բուսական-կենդանական), օրգանական կեանքը աւելի այլատարր է (հետերոժէն), քան թէ անօրգանականը։ Բայց միայն այդ «աւելի»ի մէջն է տարբերութիւնը, և երբէք՝ էութեան մէջ։ Ամեն տեղ՝ արեգակի վրայ, թէ երկրիս երեսին, անկենդան հողի մէջ, թէ մարդկային հանճարեղ ուղեղում՝ միևնոյն նիւթն ենք գտնում, միևնոյն ոյժն ու շարժողութիւնը։ Եւ ամեն տեղ նոյն անփոփոխ օրէնքները։ Երբէք չնշմարեցինք կամայական մի ձեռք, որ քմահաճութեամբ զեկավարէր իրերի ընթացքը, ոչ մի տեղ չտեսանք գերբնական յայտնու-

թեան սուերը։ Տիեզերքը շարժուում է—և այդ մշտնջենական շարժման պատճառը ինքը տիեզերական սուբստանցն է։ Անտիպոդները (ներհակ ուժերը) բոլորն էլ միանում են այդ համաստուածային սուբստանցի մէջ. ձգողութիւն և վանողութիւն, զարգացում ու քայքայում, կեանք և մահ, բոլորն էլ իբրև անհրաժեշտ փոխադարձ լրացուցիչներ՝ հաշտուում են միևնոյն համատարած գոյութեան Տոցում։ Սա մի հոյակապ փիլիսոփայական աշխարհայեցութիւն է, որի անունը *մոնիզմ* է։ Փոփոխականութեան գաղափարը նոյնպէս չի կարող գոյութիւն ունենալ մեր գլխում առանց իր հակոտնեայի՝ մշտակայութեան (permanence) գաղափարի. ամեն բան փոփոխուող ու յարաբերական է տիեզերքում. մի բան միայն մշտակայ ու աբսոլիւտ է՝ գերագոյն սուբստանցը, կամ թէ, աւելի որոշ ասենք՝ *ոյժ-նիւթի* յաւիտենական, անխզելի դաշնակցութիւնը։

*
* *

Մենք այժմ մօտենում ենք, ոչ առանց վարանման, *հասարակական* (սոցիալական) *էվոլիւցիայի* տեսութեան։ Կենսաբանը աւարտում է իր գերը և ընկերաբանին է յանձնում էվոլիւցիական պրոցէսի հետաւոր շրջանների լուսաբանութիւնը։ Այստեղ—աւելի քան բիոլոգիական էվոլիւցիայի տեսութեան մէջ—մեզ պէտք կը լինի ճանապարհ գտնել հարիւրաւոր այլազան թէօրիաների ու տեսակէտների լաբիւրինթոսում։ Որքան ուղեղներ՝ այնքան կարծիքներ։ Այստեղ ևս յաճախ հարկադրուած կը լինենք օրիժիններին (ծագում) հարցում—որոնք ընդհանրապէս ամեն տեղ մութ են—օգնութեան կանչել հիպոթէզները, որոնք շատ թէ քիչ գիտական հաւանականութիւն ունին։

Սոցիոլոգիան մի մանուկ գիտութիւն է. իր ուսումնասիրութեան նիւթը՝ վերին աստիճանի բարդ ու կնճռոտ։ Նա ընդգրկում է բոլոր մարդկային հասարակութիւնները տարբեր ժամանակներին։ Նա ուսումնասիրում է ամերիկական նեգրներին, աւստրալիական վայրենիներին, ամերիկական կարմրամորթներին նոյնքան հետաքրքրութեամբ, որքան և եւրոպական քաղաքակրթութեան պատկանող ազգերին։ Քաղաքակիրթ հասարակութիւնները քննելու ու հասկանալու համար անհրաժեշտ է ծանօթանալ նախապատմական

վայրենի ցեղերի հետ, քանի որ նրանց վայրենութիւնից ու բարբարոսութիւնից է առաջացել մեր քաղաքակրթութիւնը։ Սոցիոլոգիան (ընկերաբանութիւնը) քննում է մի առանձին ուշադրութեամբ «հասարակական սկզբնաւորութիւնները» (օրիժինները)։ ընտանիք, սեփականութիւն, պետութիւն, իրաւունք, բարոյականութիւն և այլն—այդ բոլորի ծագումն է փնտռում նա և ճգնում է բացատրել նրանց էւոլիւցիան։ Մարդկային նախնական հորդաներից նա բարձրանում է մինչև քաղաքակրթութեան դագաթը, քննելով հասարակութիւնները առանձին՝ իրենց ֆիզիկական ու սոցիալական միջավայրերում, իրենց աճման ու զարգացման մէջ՝ և ապա բոլոր հասարակութիւնները քննում է միասին՝ փոխադարձ նմանութեան ու տարբերութեան յարաբերութիւնների մէջ. այդ համեմատական ուսումնասիրութիւնից նա ձգտում է սինթէզ անել և ընդհանուր օրէնքներ մշակել, որոնք զեկավարում են համայն մարդկութեան էւոլիւցիան։ Դժւար է ասել, թէ սոցիոլոգիայի այդ ձգտումը բոլորովին իրականացած է այսօր։ Օրէնքներ մշակել, բաց անել այն, ինչ որ կոչւում է պատճառականութիւն երևոյթների մէջ,—դա առաջնագոյն պայմանն է գիտութեան ամեն մի ճիւղի համար. գիտութիւնը օրէնքով է միայն գիտութիւն։ Բնութեան երևոյթներից անհամեմատ աւելի բարդ են հասարակական երևոյթները, այդ պատճառով և սոցիոլոգիայում այնպէս դիւրութեամբ չեն մշակւում օրէնքները, ինչպէս բիոլոգիայի կամ ֆիզիկայի ու քիմիայի մէջ։ Երբ մենք ասում ենք՝ ձգողութիւն (attraction)՝ հասկանում ենք մի երևոյթ, որ ինքն իրեն հաւասար է ամեն տեղ և ամեն ժամանակ. նա իշխում է նոյնութեամբ տիեզերքի բոլոր ծայրերում. նա օրէնք է։ Երբ ասում ենք՝ թթւածինն ու ջրածինը որոշ պրոպորցիայում միանալով, տալիս են ջուր, դա էս մի բացարձակ օրէնք է, անկախ ժամանակից ու տարածութիւնից։ Օրէնք է գոյութեան կռւի ֆաքտը կենդանական աշխարհում, ժառանգականութեան, յարմարման երևոյթները, և այլն։ Դրանք բոլորն էլ բացառութիւն չեն ճանաչում։ Բայց գտէք մի այդպիսի օրէնք սոցիալական երևոյթների աշխարհում. գտէք մի երկաթէ հասարակական օրէնք, որի զօրութիւնը տարածւէր համայն մարդկութեան և նրա առանձին ընտանիքների վրայ։ Երկրագնդիս վրայ սփռւած անթիւ մարդկային հասարակու-

թիւնները իրենց աշխարհագրական տարբեր միջավայրերով, ռասայի ազգայնական առանձնայատկութիւններով, մտաւոր, բարոյական, քաղաքական և այլն պայմաններով այնպիսի մեծ այլազանութիւն են ներկայացնում, որ նրանց բոլորի համար էվոլիւցիայի մի ընդհանուր օրէնք գտնելը առաջին հայեացքից ուտոպիա (=անիրագործելի երազանք) է թւում։ Աւելացրէք և այն, որ հասարակական երևոյթների ուսումնասիրութիւնները ընդհանրապէս սուբեկտիւ են լինում. սոցիոլոգների մէջ միշտ դեր են խաղում որոշ անհատական համակրանքներ ու հակակրանքներ, կամ որոշ շահեր՝ ազգայնական, դասակարգային, կուսակցական, և այլն, որոնք դժուարացնում են օբյեկտիւ ու ճշմարիտ ուսումնասիրութեան գործը։ Նկարագրել սառնասիրտ ու անտարբեր կերպով տիեզերական երևոյթները, աստղաբաշխական, երկրաբանական յեղաշրջումները, անասնական աշխարհի գոյութեան աւերիչ կռիւները, և այն և այլն,—դիւրին բան է. բայց նոյն չափով սառնասիրտ մնալ ի տես մարդկային պատմութեան արհաւիրքների, դարաւոր բնաջնջող պատերազմների ու արիւնհեղութիւնների, տարկութեան ու ծովածաւալ թշուառութեան, մասսային հարստահարումների, սովի, բռնակալական սարսափների, ժողովրդային արիւնալից բռնկումների, որոնք, աւաղ, սկզբից մինչև վերջ լցնում են նախապատմութեան ու պատմութեան էջերը, նկարագրել այդ բոլորը անդամահատող անատոմիստի անխռով հանդարտութեամբ՝ գրեթէ անհնարին է։ Ահա թէ ինչու այնքան դժուարին է սոցիոլոգի պաշտօնը, և ահա թէ ինչու սոցիոլոգիան ներկայանում է իբրև ամենանեռոտը գիտութիւնների երկարաձիգ սանդուղքի վրայ։

Զիմմելը (պրոֆ. Բերլինում) այն կարծիքն է յայտնում, որ սոցիոլոգիայի մէջ տակաւին օրէնք չկայ, որ այդ գիտութիւնը, եթէ կարելի է գիտութիւն անուանել, շատ-շատ գտնւում է նոյն վիճակի մէջ, ինչ որ աստղաբաշխութիւնը Կեպլերի ժամանակն էր։ Մոլորակային շրջումների իսկական օրէնքը գտնուեց այն ժամանակ միայն, երբ Նիւտոնը բաց արեց իրական ոյժը, որ ղեկավարում է այդ երևոյթները։ Ըստ Զիմմելի, Վորմսի և մի քանի ուրիշների՝ սոցիոլոգիական գիտութիւնը սպասում է դեռ իր Նիւտոնին, որը պիտի հաստատէ սոցիալական էվոլիւցիայի հիմնական օրէնքը ու

այդպիսով գրական գիտութեան ասպիճանին պիտի բարձրացնէ սոցիոլոգիան։ Կան իհարկէ հակառակ կարծիքներ եւ։ Սուերագծենք գլխաւոր թէօրիաները եւ ապա մի քննական հայեացք ձգելով տեսնենք, թէ դէպի որ կողմն է թեքւում ճշմարտութիւնը։ Սկսենք սոցիալական թէօրիաների նախապատմութիւնից։

Մարդս ի բնէ հարցասէր է։ Վայրենին անգամ որոշ չափով փիլիսոփայել գիտէ։ Ինչպէս տիեզերական, այնպէս եւ հասարակական երեւոյթները՝ ընտանիքի, պետութեան ծագումը, հարստի ու աղքատի, սեփականութեան, իշխողների ու հպատակների երեւոյթը միշտ եւ ամեն ժամանակ զբաղեցրել են մարդկային միտքը։ Եւ տարբեր ժամանակներում մարդիկ բնականաբար տարբեր եզրակացութիւնների են հանգել։

Միջնադարեան աշխարհայեցութիւնը բաւականանում էր հաստատելով՝ «այսպէս է, որովհետեւ այսպէս պէտք է լինի». եւ նա ամեն անգամ դիմում էր անպայման որ եւ է աւտորիտէտի, որպէս զի նրա միջոցով ապացուցանի, որ «այնպէս պէտք է լինի»։ Օրինակ՝ պետութիւնը, հասարակութիւնը՝ սխոլաստիկայի կարծիքով գոյութիւն ունէին, որովհետեւ Աստուած ինքն է իր գերագոյն իմաստութեամբ սահմանել նրանց, եւ ժողովուրդները պիտի հնազանդուէին իրենց իշխողներին, որովհետեւ, այդ վերջինները Աստուծուց են ընտրւում եւ նրանից են լիազորութիւն ստացել վարելու ժողովուրդների երկրաւոր ճակատագիրը։ Կրօնական առաջնորդները այն ժամանակներում առանձնապէս փայլում էին կոյր հեզինակապաշտութեամբ։ Թոմաս Ակվինացին, միջնադարեան յայտնի փիլիսոփան եւ պապականութեան հուչակաւոր ջատագովը, համարում էր գերութիւնը Աստուածային պատուհաս սկզբնական մեղքի համար։

Սխոլաստիկայի շրջանը անցաւ, նրա հետ միասին եւ դոգմաների տիրապետութիւնը։ Լուսաւոր մտքերը հետզհետէ ըմբռնեցին, որ աստուածներին օգնութեան կանչելով չի կարելի ապացուցանել սոցիալական հաստատութիւնների անհրաժեշտութիւնն ու բանաւորութիւնը, այլ որ պէտք է՝ աւելի խորը քննելով՝ բաց անել հասարակական երեւոյթների մէջ նոյնպիսի մի պատճառական շղթայումն, որպիսին դիտւում է շրջապատող բնութեան մէջ։ Հա-

տարական հաստատութիւնների մեկնաբանութիւնը կամաց-կամաց գիտական կերպարանք է ստանում։

Հոլլանդացի Հուգո Գրոցիուս (1583-1645) առաջին գիտնականն էր, որ փորձեց ազատել պետական-սոցիալական փիլիսոփայութիւնը սխոլաստիկայի մառախուղներից։ Մերժելով կրօնական ու աշխարհական հեղինակութիւնները, նա յայտարարեց, որ իրաւունքի զաղափարը Աստուածային մի պատգամ չէ, այլ որ նա բղխում է մարդկանց փոխադարձ յարաբերութիւններից, նրանց ընկերական պահանջներից ու ձգտումներից։ Իրաւունք է այն՝ ինչ որ ներդաշնակ է մարդկային հասարակութեան բարեկեցութեան հետ, և անիրաւութիւն՝ ինչ որ նրան հակառակ է...

Աստուածային իրաւունքի տեղ՝ երևան է գալիս մարդկանց գլուխներում այսպէս ասած՝ «բնութեան իրաւունքը»։ Հասարակական, պետական հաստատութիւնները սկսում են ենթարկուել քննադատութեան իրենց օգտակարութեան կամ վնասակարութեան տեսակէտից։ Դա եւրոպական լիբերալիզմի արշալոյսն էր, որ ծագեց համեմատաբար ազատ Հոլլանդիայում։ Անգլիայում նոյն ոգով շարունակեց փիլիսոփայ Լոկկը (1632-1704), սահմանադրական մոնարխիայի հռչակաւոր թէօրետիկոսը։ Որպէս սոցիոլոգ՝ նա քննեց սեփականութեան իրաւական հիմքը ու գտաւ նրան աշխատանքի մէջ։ Ամեն մի սեփականութիւն ուրեմն, որ չէ հիմնուած աշխատանքի վրայ՝ դիտում էր նա որպէս բռնական շահագործման արդիւնք։

Սակայն մինչև 17-րդ դարի կէսը մենք չենք տեսնում տակաւին զուտ սոցիոլոգիական հետազօտութիւն։ Ոչ ոք չէր զբաղւում դեռ մարդկային հասարակութեան էվոլիւցիայի պրոցէսով։ Գրոցիուս, Լոկկ և ուրիշները սահմանափակում էին միայն այս կամ այն առանձնակի հաստատութեան քննութիւնով, այն ձևով, ինչ ձևով նա նրանց ներկայանում էր։ Էվոլիւցիայի, ատոմիստական զարգացման գաղափարը բացակայ էր այն ժամանակուայ աշխարհայեցութիւնից։ Միմիայն, երբ տեխնիկական զարգացման շնորհիւ յեղաշրջուեց Եւրոպայի տնտեսական, արդիւնաբերական դրութիւնը, դրա հետ միասին մեծ փոփոխութիւն կրեց նաև մտածողների աշխարհայեացքը։ Անգլիան և Ֆրանսիան առաջապահն էին տնտեսական զարգացման, այդ երկու երկրներում էլ ծնունդ առան գլխաւորապէս սոցիալա-

կան թէօրետիկոսները, որոնք սկսեցին իրենց գործը տիրող կարգերի քննադատութեամբ։ Անգլիայում մեղմ՝ Ֆրանսիայում այդ քննադատութիւնը անողորմ էր, մոլեգին։ Անգլիայում ազնուականութիւնը (տիրող դասակարգը) դարերից ի վեր հասարակական-ժողովրդական բնաւորութիւն էր կրում, Ֆրանսիայում զուտ կաստայական։ Հակառակութիւնը երկու դասակարգերի մէջ (ազնուականութիւն և բուրժուազիա), որ հետևանք էր տնտեսական կեանքի փթթման, աւելի խոր էր և աւելի սպառնալից Ֆրանսիայում, այդ պատճառով այնտեղ բուրժուազական թէօրետիկոսները անհամեմատ աւելի արմատական էին. Վոլտերի ու Ռուսոյի թունաւոր գրիչները չունեցան անգլիական սոցիոլոգները։ Ամեն մի հեղինակութիւն մերժուեց, ամեն բան դրուեց քննող բանականութեան դատաստանական սեղանի առաջ։

Մոնտեսքիէօն (1689 1755) կարելի է ասել, աւեց առաջին շատ թէ քիչ լուրջ սոցիոլոգիական հետազօտութիւնը իր «Օրէնքների ոգին» (Esprit des Lois) աշխատութիւնով։ Նա այդտեղ փորձում է արդէն պատճառական հիմք տալ հասարակական-իրաւական հաստատութիւններին, որոնք նրա կարծիքով պայմանաւորուում են կլիմայական ազդեցութիւններով։ Մասսաների սոցիալական բնազդումներն ու կրքերը վերջին ինստանցիայում՝ արտայայտութիւն են երկրի կլիմայական պայմանների։ Այդպիսով Մոնտեսքիէօն մոցնում է սոցիալական երևոյթների մէջ բնական-օրինական անհրաժեշտութիւն. այդ է նրա ամենագլխաւոր ծառայութիւնը իբրև սոցիոլոգի։

Գերմանացի Հերդէրը իր „Ideen zur Geschichte der Menschheit“ գրաւածքում («Մտքեր մարդկութեան պատմութեան մասին») լրացնում է Մոնտեսքիէօյին աւելի ընդլայնելով նրա ըմբռնումը։ Մոնտեսքիէօյի կլիմա հասկացողութիւնը նշանակում էր գլխաւորապէս օդի անհարթութիւններ, եղանակ. Ճնացածը երկրորդական արժէք ունէր։ Հերդէրը հաշուի է առնում ամբողջ շրջապատող բնութիւնը՝ աշխարհագրական դիրքը, տեղագրական պայմանները, հողի որպիսութիւնը, ֆլորան (բուսականութիւնը), ֆաունան (կենդանիները) և ապա մարդկանց պարապմունքների տեսակը։ Իր այդ մատերիալիստական ըմբռնումով հանդերձ (հասարակական երևոյթների նկատմամբ) Հերդէրը չկարողացաւ այնուամենայնիւ

հեռևոզական լինել և մի ամբողջական թէօրիա տալ։ Նրան արգելք էր լինում իր թէօլոգիական տեսակէտը։ Մարդկային հասարակութիւնը պայմանաւորւում է շրջապատող բնութիւնով, բայց քանի որ այն բնութիւնն էլ Աստուծոյ ստեղծագործութիւնն է՝ ergo, անուղղակի կերպով Աստուած կամ Նախախնամութիւնը ղեկավարում է պատմութեան ընթացքը։

Ցիւրգо և Կոնդորսէ, երկուսն էլ 18 րդ դարի յեղափոխական շկոլայից, մոցրին պատմութեան մէջ մարդկային հասարակութեան շարունակական պրոգրէսի հիմնական գաղափարը։ Մարդը կատարելագործուող էակ է. մարդկային հասարակութիւնը կերպարանափոխւում է, յառաջադիմում։

Աւելի երկար չենք ուզում կանգ առնել։ Թողնում ենք Վիկոյին (+1744) Բոսսիւյէին [1]), Վոլտէրին, Ռուսօին և այլն, սրանցից իւրաքանչիւրը մի որոշ ըմբռնումն է ներկայացրել պատմական զարգացման վերաբերմամբ։ Այդ բոլորը սոցիոլոգիայի նախապատրաստական շրջանն է միայն։ Անցնում ենք սոցիալական էւոլիւցիօնիզմի կարևորագոյն թէօրիաներին։

Էւոլիւցիական մտքի երկու զօրեղ հոսանքներ ենք դիտում դարուս քսանական և երեսնական թուականներից սկսած, որոնք բղխում են տարբեր աղբիւրներից և տարբեր դաշտերով էլ առաջ են ընթանում՝ բաժանելով հարիւրաւոր մանր գետակների ու առուների։ Մինը այդ հոսանքներից ունի իր չուկէսը բիոլոգիական գիտութիւնների մէջ և Օգիւստ Կոնտից անցնելով՝ ստանում է իր կատա-

---

[1]) Երկուսն էլ «Նախախնամութեան թէօրիայի» պաշտպան էին պատմութեան փիլիսոփայութեան մէջ։ Վիկոն (իտալացի) մի օրիգինալ էր։ Նա փորձեց որոշել մարդկութիւնը կառավարող ընդհանուր օրէնքները։ Նկարագրեց «ճակատագրական շրջագիծը», որի մէջ յաւիտեանս պտտւում է դալիս իրական աշխարհը։ Բոլոր ժողովուրդները անհրաժեշտաբար անցնում են երեք շրջաններ՝ 1) Աստուածների, 2) Հերոսների և 3) Քաղաքակրթութեան շրջանները։ Երբ ազգերը քաղաքակրթութեան որոշ ֆազիսի հասնելով՝ ծերանում են՝ սկսում է նրանց անկումը և մահը. ապա կրկնւում են մի և նոյն երևոյթները մի և նոյն կարգով։ Նախախնամութիւնը նախագահում է այդ բոլոր էւոլիւցիաներին... Ահա մի թէօրիա, որ ժիտում է պրոգրէսի ամեն միտք և մատնում է մարդկանց յուսահատութեան ու ֆատալիզմի։

բելութիւնը Սպենսէրի հոյակապ սիստէմի մէջ, միւսը մեկնում է Հեգելի փիլիսոփայութիւնից. դրա ամենախոշոր ներկայացուցիչներն են՝ Հեգել, Ֆոյերբախ, Կարլ Մարքս։ Առաջինի չուկէտը ուրեմն պոզիտիւիստական է, կամ, կ'ուզէք, մատերիալիստական. երկրորդինը՝ զուտ իդէալիստական։ Ուշագրաւ է, թէ ինչպէս դերերը փոխուեցին յետոյ։ Օգիւստ Կոնտի պոզիտիւիզմը դեռ իր հիմնադրի օրով ընկաւ մետաֆիզիկայի մէջ, այն ինչ Հեգելի ծայրայեղ փիլիսոփայական իդէալիզմը իր ձախակողմեան աշակերտների՝ Մարքսի ու Էնգելսի մէջ յանգեց լիակատար փիլիսոփայական ու պատմական մատերիալիզմի։

Քննենք առաջին հոսանքը։

Նա մոցրեց սոցիոլոգիայի մէջ այսպէս անուանուած «օրգանական թէօրիան» կամ թէ՝ որ միևնոյն է՝ «բիոլոգիական հասկացողութիւնը», որը իր կատարելութեան հասաւ մանաւանդ Սպենսէրի ընդարձակ աշխատութեան մէջ («Սոցիոլոգիայի պրինցիպները»)։ Մարդկայինհասարակութեան էւոլիւցիան այդ թէօրիայի համեմատ՝ ընթանում է օրգանական (բուսական-կենդանական) զարդացման և կամ աւելի ընդհանուր, տիեզերական օրէնքներով. հասարակութիւնը նոյնացւում է իրական օրգանիզմին, սահմանւում են այդ երկուսի միջև անթիւ նմանութիւններ (անալոգիաներ), յաճախ չափազանց գայթակղեցուցիչ։

Օգիւստ Կոնտը (Ֆրանսիացի 1798—1857), որ պաշտօնապէս սոցիոլոգիայի հայր է ճանաչւած՝ առաջինը մոցրեց «օրգանական զարդացման» հասկացողութիւնը սոցիալական էւոլիւցիայի աշխարհում, սերտ կապ հաստատելով սոցիոլոգիայի և բիոլոգիայի միջև։ Նրա սահմանած «գիտութիւնների երարխիա»-յում (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, բիոլոգիա, սոցիոլոգիա) սոցիոլոգիան յաջորդում է բիոլոգիային (կենսաբանութեան), որպէս մի տեսակ շարունակութիւն։ Սակայն նա իրեն յաջորդող աշակերտներից աւելի զգուշաւոր եղաւ. և թէպէտ անհրաժեշտ է գտնում բիոլոգիական գիտութիւնը սոցիոլոգիայի համար (անհրաժեշտ՝ ճանաչելու սոցիոլոգիայի ագենտներին՝ մարդ-անհատներին)՝ այնուամենայնիւ կատարելապէս չի նմանեցնում հասարակական և անհատական օրգանիզմների ֆունկցիաները՝ պաշտօնները։ Մարդկութեան էւոլիւ-

ցիայի մէջ Կոնտը մեծ տեղ է տալիս հոգեբանական ֆակտորին, միջավայրին՝ բարքերին, սովորութիւններին և այլն. բայց նա ծանրանում է առանձնապէս մտաւոր շարժման վրայ։ Մարդկութիւնը ըստ Կոնտի անցուցել է երեք մեծ շրջաններ՝ ռիոլոգիական, մետաֆիզիկական և պոզիտիւիստական (կամ դիտական)։ Սկզբում տիրում էր ֆետիշիզմ, ապա յաջորդեցին նրան աստիճանաբար՝ կռապաշտութիւն, բազմաստուածութիւն, միաստուածութիւն։ Դա—առաջին շրջանը։ Երկրորդ շրջանում կրօնական դոգմաները տեղի են տալիս մետաֆիզիկական պրինցիպներին («Աստուծոյ» տեղ՝ «սուբստանց», «աբսոլիւտ» և այլն)։ Վերջապէս գալիս է դրական դիտութեան թագաւորութիւնը, որտեղից հալածուած են թէ աստուածները և թէ մետաֆիզիկան։... Կոնտի այդ «երեք դրութիւնների» օրէնքը չի բռնում իհարկէ հասարակական բովանդակ զարգացման ծաւալը։ Նա գծում է միայն փիլիսոփայական էվոլիւցիան, որը ամբողջ սոցիալական էվոլիւցիայի մի չնչին մասնիկն է։ Սոցիոլոգիայի հայրը իր ընդարձակ տեսութեան մէջ անտես է առնում մի շատ կարևոր ոյժ՝ տնտեսական ֆակտորը։ Տնտեսագիտութեան աշխարհում ազգա էր նա, և այդ տգիտութիւնն էր պատճառը, որ նա յարեց վերջ ի վերջոյ կատարեալ իդէալիստական հասկացողութեան՝ սոցիալական զարգացման վերաբերմամբ, և՝ էվոլիւցիոնիստ լինելով հանդերձ՝ պնդեց, որ պէտք է անմիջապէս յեղաշրջել ու վերակազմել հասարակութիւնները համաձայն պոզիտիվ (դրական) փիլիսոփայութեան հիմունքներին...

Նոյն պէսիմիստական եզրակացութեան է յանդում և մի ուրիշ թէօրիա, որի ներկայացուցիչներից մինն է ֆրանսիացի դարվինիստ Լապուժ։ Հասարակական երևոյթների մղիչը նա տեսնում է անտրոպոլոգիայի (մարդաբանութեան) մէջ և մասնաւորապէս՝ ռասաների պայքարում։ Սկզբում, ասում է նա, տիրապետում են բարձր ռասաները (ցեղերը), բայց այդ տիրապետութիւնը մշտնջենական չէ. ժամանակի ընթացքում ուժասպառ են լինում նրանք և դուրս են մղում ստոր ռասաներից, որոնք աւելի բազմաթիւ և «յարմարման» աւելի ընդունակ են լինում։ Այդ պրոցէսը շարունակւում է ամբողջ պատմութեան մէջ... Այդպիսի մի վիճակ ապրում է նաև եւրոպական քաղաքակրթութեան...

Կարէյ (ամերիկական գիտնական) գտնում է սոցիալական էվոլիուցիայի «տիեզերական օրէնքը» աստղաբաշխութեան մէջ։

Հերբերտ Սպենսէր՝ Կոնտի անգլիացի աշակերտը և ժամանակակից փիլիսոփայութեան ու սոցիալական գիտութիւնների հզօր պարագլուխը՝ իրագործեց ուսուցչի դրական մեթոդը ու հիմնականապէս ուսումնասիրեց Դարուինիզմը, որի վրայ և կառուցեց իր սոցիոլոգիական հսկայ ու գեղեցիկ շէնքը։ Նա դարձաւ էվոլիուցիոնիզմի թէօրետիկոս par exellence։ Մարդկային հասարակութիւնը Սպենսէրի համար մի օրգանիզմ է (=մարմին), նման բոլոր ուրիշ անհատական օրգանիզմներին, այն տարբերութեամբ միայն՝ որ հասարակական օրգանիզմը աւելի բարդ է, նա մի գերօրգանիզմ է (Superoganisme). Եւ նա ապացուցանում է այդ. ապացուցանում է, որ յիրաւի հասարակութիւնը, ինչպէս ամեն մի կենդանի մարմին՝ ունի իր կազմութիւնն ու աճումը, օրգաններն ու ֆունկցիաները... հաստատում է գրեթէ լիակատար նմանութիւններ սոցիալական և բիոլոգիական մարմինների մէջ։ Այդպիսի մի հայեցողութիւնից հետևում է, որ սոցիալական մարմինը ևս ենթակայ է նոյն ուժերին, զարգանում ու կառավարւում է նոյն օրէնքներով, ինչ որ ամեն մի ուրիշ կենդանական մարմին... Նոյն տիեզերական, ընդհանուր օրէնքները կիրառւում են թէ սոցիոլոգիայի և թէ բիոլոգիայի մէջ։

Մինչդեռ ֆրանսիացիք ընդհանրապէս զգուշաւոր դիրք էին բռնում հասարակական և անհատական օրգանիզմների փոխադարձ նմանութիւնների հարցում՝ անգլիացիք և գերմանացիք նուիրեցին խոշոր ու յախուռն ընդհանրացումների մէջ։ Շեֆլէ՝ Սպենսէրից անկախ՝ նկարագրեց ամենայն մանրամասնութեամբ հասարակական քջիջը (ընտանիք), հիւսուածքները, օրգանները, հասարակական հոգին և այլն իր հսկայական աշխատութեան մէջ՝ «Սոցիալական մարմնի կազմն ու կեանքը» [1]։

Դրնպէրը աւելի հեռու է տանում նմանութիւնները։ Նրա կարծիքով՝ ազգութիւնները ենթակայ են միևնոյն ֆիզիկական օրէնքներին և անցնում են միևնոյն շրջանները, ինչ որ ամեն մի

---

[1]) Schäffle, „Bau und Leben des sozialen Körpers“.

անհատական մարմին. այսինքն՝ մանկութիւն, երիտասարդութիւն, հասունութիւն, ծերութիւն և մահ... Այդ դրքարինը ուղեկցում է մեզ դէպի Վիկոյի ճակատագրական շրջագիծը, ուր պտտւում են յաւիտենապէս մարդկային հասարակութիւնները. այդտեղից առաջանում են պեսիմիստական թէորիաները, որոնք ողբում են կեանքի անմտութիւնն ու ունայնութիւնը։

Եւ ինչու չէ։ Զէ՞ որ «մարդկային հասարակութեան մէջ կենտրոնացման ու ապակենտրոնացման երևոյթը յիշեցնում է ձգողութիւնն ու վանողութիւնը մոլորակների էվոլիւցիայի մէջ...»

Ստանլէյ Ջէվոնս (անգլ. տնտեսագէտ) փորձում է բացատրել տնտեսական ճգնաժամերը պարբերական խանգարումներով, որոնք տեղի ունին արեգակնային ջերմութեան բաշխման մէջ։

Հէկկէլ, Վայսման, Էսպինաս և այլ անթիւ դարուինիստ գիտնականներ, հիմնուելով Դարուինի ուսուցումների վրայ՝ հռչակում են «բնական ընտրութիւնը» կամ «գոյութեան կռիւը», որպէս միակ հզօր մղիչ սոցիալական էվոլիւցիայի և քաղաքակրթութեան զարգացման։ Ուշադրութեան արժանի են ոմանց եզրակացութիւնները. գոյութեան արիւնոտ պայքարից դուրս՝ չկայ փրկութիւն մարդկութեան համար... Բուրժուազիայի փաստաբան գիտունները օգտւում են դարուինիզմից՝ (որի արժէքը սոցիոլոգիայի մէջ, ի հարկ է, կարելի է զանազան կերպ մեկնաբանել) սրբադրծելու համար ժամանակակից քաղաքակիրթ հասարակութեան դասակարգային անհաւասարութիւնները... (Բայց նոյն ինքը Դարուինը յայտնում է, որ բնական ընտրութիւնը և գոյութիւնն կռիւը երկրորդական տեղ ունին բարձր քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ, որովհետև այնտեղ ուրիշ ուժեր են երևան գալիս)։ Մինը այդպիսի սոցիոլոգներից նորերս ազդարարեց մինչև անգամ, որ եթէ գոյութեան կռիւը մարդկանց մէջ դադարէ և կեանքի հաւասար պայմաններ հաստատուին, մարդկային հասարակութիւնը կ'ապականուի... Մենք ակնարկում ենք Բենիամին Կիդդի աշխատութեան վրայ «Սոցիալական էվոլիւցիա» խորագրով, որը բաւական աղմուկ հանեց վերջերումս իր ինքնօրինակ յայտարարութիւններով և ի միջի այլոց արժանացաւ Վայսմանի ու Միխայլովսկու ծաղրահարութիւններին։ Աւելի ուշ առիթ կունենանք, գուցէ, այդ աշխատութեան

մասին խօսելու։ Դա միշտ միևնոյն օրգանական թէօրիան է, որը հասարակական երևոյթների բացատրութիւնը վնտռում է հասարակական պատճառներից դուրս՝ բնական երևոյթների մէջ։ Սոցիոլոգիան չի զատւում բիոլոգիայից. նրա մէջ չեն տեսնում յատուկ ֆակտորներ՝ տարբեր ձգողութիւնից ու վանողութիւնից, բնական ընտրութիւնից ու գոյութեան կռուից։ Բայց դրանք էլ ընդհանուր բառեր են միայն, որոնց կիրառումը սոցիոլոգիայի մէջ բնաւ չի բացատրում հասարակական կեանքի բարդ երևոյթները։

(Շարունակելի)

ԱԶԳԱԲՆԱԿՉԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ

Քաղաքակիրթ եւրոպական երկիրները և Հիւսիսային Ամերիկան անընդհատ զբաղած են ազգաբնակութեան խնդրով։ Նամանաւանդ 19-րդ դարում աւելի քան այլ ժամանակներում այդ խնդիրը գրաւել է իր վրայ մարդկանց ուշադրութիւնը։ Խնդրի ծաւալմանը շատ նպաստեց մեր դարում ծաղկած վիճակագրական գիտութիւնը։ Մինչև այս գիտութեան երևալը, մարդիկ չէին կարողանում բացատրել շատ հասարակական երևոյթներ, որոնք ուղղակի բղխում էին ազգաբնակչական վիճակից և պայմաններից։ Հետաքրքրական էր իմանալ թէ մի ազգի թիւը աւելանում է թէ պակասում։ Այս երևոյթը իմանալու կամ բացատրելու համար՝ անհրաժեշտ էր իմանալ ծնունդների և մահուան դէպքերի թիւը։ Եթէ կենդանի ծնունդները գերակշռում են, հետևաբար ազգաբնակութեան թիւը աւելանում է։ Հակառակ դէպքում, ուր մահուան դէպքերը ծնունդներից աւելի են՝ առաջ է գալիս ազգաբնակութեան պակասումը։ Այս ազգաբնակութեան օրէնքը ունեցաւ շօշափելի հետևանքներ ազգաբնակութեան խնդրի համար։ Առաջ են գալիս այնպիսի հարցեր, որոնք սերտ կապ ունին հասարակական տնտեսութեան պայմանների հետ։ Ի՞նչ և ինչ պատճառներով ծնունդներ կամ մահուան դէպքերը պէտք է աւելնային կամ պակսէին։ Ազգերը, որոնք նախանձախնդիր են իրանց ազգային և քաղաքական գոյութեան՝ լաւ են ըմբռնում այս ամէն ինչ մոռացնել աւող հարցը։ Անկասկած, երևոյթը ծանրակշիռ է և կրում է ընդհանուր բնաւորութիւն, որ կարելի է բացատրել հասարակական, քաղաքական և ազգային տեսակէտներից։

19-րդ դարու առաջին քառորդում Եւրոպայում իշխում էր այն կարծիքը՝ թէ ազգաբնակութեան աւելումն մի չարիք է, որի առաջ պէտք է առնել զանազան միջոցներով։ Ընդհանրապէս շեշտում էին այն բանը թէ կենսական միջոցները չեն բաւում ազգաբնակութեան աւելցած թիւի ապրուստը ապահովելու։ Եւ այդ պատճառով առաջ է գալիս աղքատութիւնը և սորա հետ կապուած ամենավատ հասարակական վէրքերը, որոնք իբր թէ անբուժելի են։ Այս կարծիքի հեղինակն էր հռչակաւոր անգլիացի հոգեւորական Մալթուսը, որ շատ կողմնակիցներ գտաւ ամենուրեք և նամանաւանդ իր հայրենիքում։ Մալթուսի կարծիքը [1] իսկապէս չունէր ոչ մի գիտական հիմք, որ ֆակտերով ապացուցուած լինէր։ Սա լոկ կուսակցութեան մտքի արտայայտութիւն էր, որ քաղաքական դիտումներ ունէր և որը վերջ ի վերջոյ պարզուեց ու՝ ոչ մի հետք չթողեց, որ գործնական նշանակութիւն ստանար մարդկանց կեանքի բարեաւորութեան համար։ Ընդդէմ այս տխուր հեռանքին, այդ կարծիքը մի առ ժամանակ ժողովուրդներին հետաքրքրեց և ազդել էր նոյն իսկ այնպիսի ֆիլոսոֆաների վրայ, որոնք իրանց անունը անմահացրած են իրանց գրուածներով։ Օգտուելով Մալթուսի կարծիքից՝ հարուստ և ունեւոր դասակարգը պնդում էր, որ մարդիկ իրանք պիտի պատասխանատու լինին ածման հետեւանքների համար։ Նոքա ասնզգոյշ կերպով իրանց ապրուստի միջոցներից վեր շատ որդիք են ունենում, այսինքն աւելի են ածում քան միջոցները ներում են և այդպիսով աւելացնում են աղքատների թիւը։ Անգլիայում մինչև անգամ սկսեցին անել անյաջող փորձեր չունեւոր դասակարգերի պակները սահմանափակելու։ Սորա նման անբնական միջոցներով կարծում էին պակսեցնել ազգաբնակութեան աճող թիւը, որ այնտեղ վտանգաւոր էր թւում։ Եւրոպական ժողովուրդները դեգերում էին բաւականին երկար ժամանակ այսպիսի անհիմն և անիմաստ մեկնաբանութիւնների մէջ այդ վերաբերու-

---

[1]. Մալթուսի թէորիա-ուսուցումը այն էր, թէ ազգաբնակութիւնը աճում է գէոմէտրիական աճումով, իսկ ապրուստի միջոցները՝ թւաբանական աճումով։ Այսպէս ազգաբնակութեան գէոմէտրիական աճումը կը լինէր 2, 4, 8, 16, և այլն, իսկ ապրուստի միջոցների (բուսականութեան) թւաբանական աճումը կը լինէր՝ 1, 2, 3, 4, 5, և այլն։

թեամբ, մինչև որ հետազօտող գիտութիւնը փաքտերով ապացուցեց այն պատճառները, որոնք առաջ են բերում ազգաբնակութեան աճումն։ Գիտութեան ուժգին խօսքերից առաջ՝ միանգամայն աչքաթող էր անում այն հանգամանքը, որ ազգաբնակութեան թիւը նախ մի մեծ և առաջնակարգ գործօն է գոյութեան կուռում, որ ազգերը կատաղի կերպով մղում են իրար մէջ՝ անյագ քաղաքական իշխանութեան դրդմամբ։ Բացառապէս անհատական ապահովութեան տեսակէտն էր ի նկատ առնում ներկայ խնդրի մասին, միշտ կրկնելով նոյն առարկութիւնը՝ թէ մարդիկ ապրուստի սուղ միջոցներից աւելի են աճում։ Հարկաւ սրանով ոչ մի երևոյթ չէր մեկնուում, բայց մտածելու և հետազօտելու առարկայ էր ծագում, որի ուսումնասիրութիւնը անդրդուելի ճշմարտութիւններ առաջ բերաւ։ Փաքտերի այս մթնոլորտում արդիւնաբերութիւնը ունևոր դասակարգի ձեռքով զարգանում էր։ Արդարև սա մեծ միջոց էր ժողովրդական հարստութեան։ Նակայն շնորհիւ անտեսական պայմանների, ուր անհատի յաջողութիւնը իր կապիտալի ուժով է որոշուում, ամենից շատ դարձեալ ունևորներն են ստանում օգուտներ այդ իսկ հարստութիւնից։ Ուր արդիւնաբերութիւնը շատ է զարգանում, այնտեղ բնակիչները աւելանում են և խտանում, որովհետև կապիտալը նրանց իր կողմն է քաշում՝ նրանցից օգուտ քաղելու համար։ Ազգաբնակութեան խտութիւնը արդիւնաբերութեան կենտրոնատեղերում առիթ էր տալիս շատերին եզրակացնելու, որ ազգաբնակութիւնը աւելորդ կերպով աճել է։

Մինչդեռ բազմաթիւ ապրուստ և բան որոնող մարդիկ, նամանաւանդ գիւղերից, գնում են արդիւնաբերութեան տեղերը՝ իրանց աշխատանքը վարձով առաջարկելու։ Պարզ է, որ բանուորների թիւը արդիւնաբերութեան տեղերում շատանալով՝ մրցումը գործ ճարելու համար նոցա մէջ շատ խիստ է։ Այս պայմաններից օգուտ են գործարանատէր կապիտալիստները, տալով ստաստորէն առաջարկուած աշխատանքին ցածր վարձատրին, որ յաճախ չէ բաւում մարդկային ամենահամեստ պիտոյքներին, բայց որով բանուորները պիտի իրանց ապրուստը հայթայթեն սովամահ չլինելու վախից։ Յայտնի է, որ պատկները յառաջադէմ եւրոպական երկիրներում շատ են լինում բանուոր դասակարգի մէջ։ Հետևապէս և ծնունդները նոցա

մէջ շատ են լինում, այնպէս որ վարձագնով ապրող աշխատաւորների թիւը աճում է նամանաւանդ արդիւնաբերութեան կենդրոններում։ Մի կողմից այս նշանաւոր հանգամանքը, միւս կողմից բազմիցս դիտուած աճելու անդուսպ հակումը չունեւորների կողմից յառաջացնում են այն, որ աղքատութիւնը Եւրոպայի չարեաց ամենամեծն է երեւում։ Ժողովրդական որոշ դասակարգի աղքատութիւնը պիտի բացառապէս բացատրել այն պայմաններով, որոնց հիման վրայ բաշխւում և բաժանւում է ժողովրդական հարստութիւնը։ Եթէ սորա բաշխման եղանակը դասակարգերի մէջ արդար և բաւարար է, աղքատութիւնն էլ պիտի քչանայ և մեծ մասամբ լուծւի։ Իսկ սխալ և անհիմն է աղքատութիւնը վերագրել ազգաբնակութեան աճմանը, որ իբր թէ գերազանցում է ապրուստի միջոցների աճմանը։ Ընդհակառակն՝ ուր որ արդիւնաբերութիւնը տընտեսական շատ ճիւղերում զարգանում և յառաջադիմում է, նոյն տեղում ապրուստի միջոցները ծոխանում են։ Միշտ ազգաբնակութեան աճման հետ զուգընթացաբար աճում են և ապրուստի միջոցները։ Ահա մի քանի ապացոյցներ։ Անգլիայում 1865 թ. ազգաբնակութիւնն էր 30 միլիոն, ժողովրդի ունեցած հարստութիւնն էր այդ թւականում 6.000 միլիոն ֆունտ ստերլինգ (60 հազար միլիոն ռուբլի). մարդագլուխ ընկնում էր 200 ֆունտ ստերլինգ (2.000 ռուբլի)։ 1875 թւին ազգաբնակութիւնը 33 միլիոն էր, ժողովրդական հարստութիւնը դնահատւում էր 8·500 միլիոն ֆ. ստերլինգ (85 հազար միլ. ռուբլի). մարդագլուխ գալիս էր 260 ֆ. ստերլինգ կամ 2.600 ռուբլի։ 1887 թ. ազգաբնակութիւնն էր 37 միլիոն, ժողովրդի հարստութիւնը հասնում էր 10.000 միլիոն ֆունտ ստերլինգի (100.000 միլիոն ռուբլի), իսկ մարդագլուխ—270 ֆ. ստր. այսինքն 2.700 ռուբլի։ Վերցնենք անտեսապէս բարգաւաճ Ֆրանսիայից մի օրինակ։ Այստեղ 1789 թ. (անցեալ դարու վերջում) ազգաբնակութիւնը 24 միլիոն էր, իսկ հացահատիկների արդիւնաբերութիւնը տալիս էր 31 միլիոն հեկտոլիտր։ 1890 թւին ազգաբնակութիւնը անցնում էր արդէն 38 միլիոն, բայց հացահատիկների արդիւնաբերութիւնը հասել էր 112 միլիոն հեկտոլիտր։ Մարդագլուխ գործ էր աճում 1821 թ. $1^1/_2$ հեկտոլիտր, իսկ 1888 թ. մարդագլխի գործաճու-

թիւնը հասել էր $2^1/_2$-ից աւելի հեքտոլիտրի [1]։

Այս թիւերը համոզիչ են յամենայն դէպս նրանով, որ ցոյց է տալիս թէ ազգաբնակութեան աճումը հասարակութիւններին ոչ մի կերպ վտանգ չի սպառնում։ Ժողովրդի աճած թիւի համար ընդարձակող արդիւնաբերութիւնը տալիս է ապրուստի միջոցներ։

Այլ խնդիր է թէ որ աստիճան հաւասար է բաժանւում արդիւնաբերութեան տուած հարստութիւնը։ Ներկայ անհատական ձեւի արդիւնաբերութիւնը իւր շուրջն է հաւաքում մեծ քանակութեամբ բանւոր մարդկանց։ Կուտակուած կամ խտացած աշխատասէր ազգաբնակութիւնը սխալմամբ կարծել է տալիս, որ նա «աւելորդ կերպով» աճել է։ Գոյութեան կռիւի մէջ, ուր մարդիկ իրար հետ սաստիկ մրցում են, անյաջողների և չունևորների թիւը բազմանում է։ Սոցա մէջ բազմամարդ ընտանիքները ընդհանուր երևոյթ են կազմում։ Սոցա յայտնի քանակութիւնը մի երկրից գաղթում է մի այլ երկիր, ուր գտնւում են մրցման աւելի հեշտ պայմաններ։ Բայց այդպիսի գաղթականութիւն կատարւում է ոչ երկրի միջոցների սակաւութիւնից, այլ յամենայն դէպս ապրուստ ճարելու անկանոն և անարդար պայմաններից։ Իսկ ունևորները Եւրոպայի ամեն մի երկրում փայլում են իրանց սակաւամարդ ընտանիքներով։ Ունևոր դասակարգերը չեն աճում նոյն իսկ դիտաւորութեամբ, որովհետև նոքա չեն ուզում վատ ապրել ընտանիքի բազմամարդութեան շնորհիւ։ Նամանաւանդ նոցա ընտանիքների սակաւամարդութեանը նպաստում են նոցա շրջանում ընդունուած ուշ պսակները, երբոր մարդիկ ֆիզիկապէս արդէն մաշուած և յոգնած են։ Դորա հակառակ աղքատ դասակարգերը աճում են գլխաւորապէս այն պատճառով, որ չլինելով ապրուստ ճարելու յաջող պայմաններում՝ գտնում են իրանց միակ մխիթարանքը ընտանեկան կեանքում, ուր բազմամարդ լինելը նոցա գոյութեան առաջին պայմանն է երևում։ Մասաւոր և հոգեկան վայելչութիւններին նոքա անմասն են, որովհետև գոյութեան կռիւի անհարթութիւնները նոցա համար այդ բարիքը դարձրել են անմատչելի և ամայացրել են նոցա մէջ վսեմ

---

[1]) De Foville. La France économique. 1890 թ.

[2]) M. Block. Statistique de la France. 1892, II 389 թ.

զգացմունքները դէպի մարդկային ճոխ կացութիւնը։ Ուրեմն այն օրէնքը, թէ գոյութեան կռիւ մէջ յաղթողները պիտի ապրեն, իսկ յաղթուածներին վիճակուած է կորչել առանց մի հետք թողնելու՝ այդ օրէնքը սահմանափակւում է և չէ կարող անպայման կերպով գործադրուել մարդկային հասարակութեան վերաբերմամբ։ Ազգերն ու հասարակութիւնները հարկաւ ենթակայ են բնական օրէնքներին իրանց զարգացման զանազան աստիճաններում. սակայն մարդկային ոգեկան և մտաւոր շարժառիթները ունին նաև խոշոր նշանակութիւն հասարակական կերպարանափոխութեան մէջ։ Բնական իրերի և մարդկանց ոգեկան շարժառիթների փոխադարձ ազդեցութիւնից ծագում են գործողութեան հակումները։ Հարուստը չէ աճում՝ վախենալով զրկուել կեանքի վայելչութիւնից. նա սովորել է նայել կեանքի վրայ նիւթապաշտ հայեացքով։ Աղքատը աճում է չգտնելով կեանքում ոչ մի վայելչութիւն բացի միայն իր ընտանիքում, ուր նա կատարելապէս վայելում է բնական իրաւունքը։ Թող թիւերը խօսեն այդ երևոյթի մասին։ Պարիզի աղքատ թաղերում ամեն մի հազար բնակչի վրայ գալիս է 30-38 ծնունդ, իսկ հարուստ թաղերում այդ ծնունդների թիւը 1000 բնակչի վրայ կազմում է 16-17։ Լոնդոնում աղքատ թաղերը տալիս են 1000-ին 35 ծնունդ, հարուստ թաղերը միայն 25 ծնունդ։ Բերլինում չունևոր դասակարգերը, մանաւանդ բանւոր դասակարգերի ամեն մի 100 ընտանիքը տալիս են 65 ծնունդ, իսկ ամեն մի հարիւր հարուստ ընտանիքը տալիս է 45 ծնունդ։ Նոյն երևոյթը նկատւում է ամենուրեք այլ երկիրներում։ Այսօրինակ բազմաթիւ փաքտերը հերքում են գոյութեան կռիւ օրէնքի անպայման գործադրութիւնը մարդկանց վերաբերմամբ։ Այդ օրէնքին ենթակայ են անպայման կերպով կենդանիները և ոչ ուղղակի մարդը, որ ամենաբարձր էակն է հողի վրայ և ունի ոգեկան բարդ շարժառիթներ և ինքնուրոյն մտքեր, որոնք նոյնպէս կերպարափոխող դեր են կատարում հասարակութեան գործոնների շարքում։ Այս տեսակէտը լաւ մշակած է նորագոյն հասարակական գիտութիւնը [1])։

---

[1]) Այդ տեսակէտի ընդարձակ լուսաբանութիւնը գտնում է Լէստեր-Ուօրդի՝ Психическіе факторы цивилазиціи Лестеръ-Уорда 1897 г. (անգլիերէնից)։

Ազգաբնակութեան խնդրում մարդկային ոգեկան կողմերի լուսաբանութիւնը պարզում է շատ մութ կէտեր։ Ամեն մի մեծ կամ փոքր ազգի համար ազգաբնակութեան խնդիրը նոյնպէս յարուցանում է մոքեր հասարակական և քաղաքական տեսակէտներից։ Վերցնենք Գերմանիան, Անգլիան և Ֆրանսիան։ Երկու առաջինների ազգաբնակութիւնը աճում է, իսկ Ֆրանսիայում նա մնում է գրեթէ անշարժ դրութեան մէջ։ Ֆրանսիայում միջին և մանր հողային սեփականութիւնը շատ է տարածուած։ Հողատէրերը այնքան զբաղուած են իրանց հողային շահերով, որ նոքա չեն ուզում շատ ժառանգներ թողնել, որպէս զի իրանց սեփականութիւնը չմանրանայ։ Նոյն սկզբունքով ղեկավարում են և այլ ունևոր դասակարգերը Ֆրանսիայում։ Որքան ստոր պիտի երևայ այն բարոյական ասոիճանը, ուր անհատական շահերի պաշտպանութեան շնորհով՝ զոհւում է ազգի ընդհանրութեան գործը։ Արդար է այն բողոքը, որ անում են այսօր Ֆրանսիական դիտնականները և մամուլը այդ մոլորեցնող սկզբունքի դէմ։ Որքան վտանգաւոր է թւում Ֆրանսիային իրան շրջապատող ազգերի աճումը։ Ֆրանսիայում հազար բնակչի վրայ ընկնում էին 27 կենդանի ծնունդներ ամեն մի տարում 1841-ից մինչև 1850 թ., իսկ 21 կենդանի ծնունդ էին ընկնում 1000 բնակչի վրայ ամեն տարի 1881—1890 թ.։ Գերմանիայում ընկնում էին ամեն մի 1000-ին 38 ծնունդ ամեն տարի 1841—50 թ. և նոյն 38 ծնունդները ընկնում էին հազարին 1881-1890 թ.) [1]։ Ֆրանսիային հարևան երկիրներում յիշած ժամանակամիջոցներում ծնունդների թիւը անփոփոխ է մնում կամ աւելանում է, իսկ Ֆրանսիայում ծնունդների թիւը 27-ից ընկնում է մինչև 21։ Մի երեւոյթ, որ արդարև անկեղծ հայրենասէրներին պիտի յուսահատեցնի։ Այսօր Ֆրանսիան ունի 38 միլիոն ազգաբնակութիւն, Գերմանիան ունի 52 միլ., Աւստրիան 44, Անգլիան 39 միլլ.։ Այս իրողութեան

—Основанія соціологіи, Ф. Г. Гидингса. 1898 г. (անգլ-ից)։—Соціальное развитіе, Веніамина Кидда, 1897 г. (անգլ-ից)։—La logique sociale G. Tarde. Paris, 1898 г. L'organisation sociale et la population, par Franchesko Nitti 1897 г. Paris.

[1]) Dr. Jacques Bertillon. Le problème de la dépopulation. էջ 13 և յաջորդները։

ծանրութեան տակ Ֆրանսիան բարձրացնում է ամենայն իրաւամբ տագնապի աղաղակներ։ Մի երկիր, որ անցեալում իր ազգաբնակութեան թւով հսկայական էր, ինչպէս այդ քաղաքակիրթ երկիրը յանձին իր լաւագոյն մտածողների չաղաղակի իր ազգաբնակութեան նւազման մասին և չմարտնչի այդ սոսկալի երևոյթի դէմ։

Ազգաբնակչութեան խնդիրը ազգերի գոյութեան խնդիր է։ Եթէ ազգաբնակութեան թիւը անբաւարար է, այն ժամանակ մի ազգի քաղաքակրթական և քաղաքական դերը նսեմանում է։ Մի ազգի ազգաբնակութեան թւով որոշւում է նորա քաղաքակրթական և տնտեսական ոյժը։ Եթէ նա թւով աճում է, նա տնտեսապէս ևս հարստանում է։ Անընդհատ զարգացող արդիւնաբերութիւնը պէտք է ստեղծէ նորանոր գործեր, որոնց համար պահանջւում են աշխատաւոր ձեռքեր։ Եթէ մի երկրում նորա պահանջից աւելի է արդիւնաբերւում, այդ աւելորդը արտահանւում է հեռաւոր երկիրներ, ուր քաղաքակրթութեամբ ուժեղ երկիրը գաղութներ է հիմնում։ Ազգաբնակութեամբ աճող երկիրը ստանում է նոյնպէս քաղաքական որոշ ոյժ, որ նորան պատկանելի դիրք է տալիս միջազգային և քաղաքական մրցման ասպարիզում։ Հաչակաւոր գոյութեան կռւին ենթակայ են մարդիկ հէնց գլխաւորապէս այս տեսակէտներից։ Պատմութեան մէջ գոնէ ազգերը աշխատել են իրար կլանել՝ դրդւած լինելով գերիշխանութեան բնազդումներով։ Այս կատաղի կռւի մէջ դեր է խաղացել այլ յառաջադիմական պայմանների հետ նաև ազգաբնակութեան թիւը, որ փրկել է ազգերը կատարեալ կորստից։ Աճելով՝ նա զգացնել է տւել իրան հալածողներին պատմութեամբ յատկացրած գոյութեան իրաւունքը։ Այնպէս որ իւրաքանչիւր մարդ պարտաւոր է իր հայրենիքի կեանքի շարունակութեանն և պաշտպանութեանը նպաստել։ Բոլորովին սխալ և վտանգաւոր է այն կարծիքը թէ ազգաբնակութեան աճումն առաջ է բերում աղքատութիւն։ Սա միայն ծնունդ է անտեսական-հասարակական կազմակերպութեան։ Երբ որ ժողովրդական հարստութիւնը աւելի արդար կը բաշխւի զանազան դասակարգերի միջև, աղքատութիւնը մեծաւ մասամբ կը նւազի։ Երբ որ ազգաբնակութեան դասակարգերը կարելիին չափ ապահովւած կը լինեն, յոյս կայ, որ ազգաբնակութեան աճումը չի թւայ անճոռնի և կը կանո-

նաւորի ինքն ըստ ինքեան, բնականօրէն։ Քիչ ու շատ ապահովուած դասակարգերը կ'ունենան ժամանակ և եռանդ ֆիզիկական աշխատանքից դուրս՝ նուիրելու ոչ միայն անասնական աճման բնազդումներին, այլ նաև մարդավայել մտաւոր ու բարոյական պահանջներին։ Գոյութեան կռիւն էլ կը ստանայ արդար մրցման կերպարանք, բայց ոչ ջնջման և կործանման բնաւորութիւն, որ ստորացնում է մարդկային արժանիքը։ Թող ազգերը չխախտեն բնութեամբ տուած աճելու յատկութիւնը և աշխատեն ընդարձակող տնտեսական գործունէութեամբ տալ ազգաբնակութեան աճած թիւին բաւարար գոյութեան իրաւունք։ Այս տեսակ մարդկային աշխատանքը բոլոր ազգերի մէջ մեր առաջադրած խնդրի մշակողը, վճռողը և լուծողը պիտի հանդիսանայ։

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՇԱՆԹ. — *Վերժին։* Արտատպած «Մուրճ» ամսագրից, Թիֆլիս, տպ. Մ. Դ. Ռոտինեանցի, 1898 թ. 220 էջ, գինը 60 կոպէկ։

Շանթի ներկայ վէպը պէտք է յաջողուած համարել թէ գործող տիպերի իսկութեան և թէ հասարակական քնաւորութեան տեսակէտից։ Այս վէպի ընթերցողը նկատում է, որ հեղինակը գործ ունի հայ կուլտուրական կեանքի որոշ երևոյթի հետ։ Վերժինը հայ օրիորդների այն շարքին է պատկանում, որոնք լրջօրէն ըմբռնելով չարքաշ ազգիս կուլտուրական վերածնութեան գաղափարը, նուիրում են իրանց հայ մատաղ սերնդի ժամանակակից կրթութեանը։ Վարժուհուհին է այն առաջադրած նպատակը, որին վճռում է ծառայել Վերժինը։ Օրիորդը Պոլսի ունևոր ընտանիքի աղջիկ է, այն տեսակ ընտանիքի, որի գլխաւորները սովորաբար ուրոյն հայեացք ունին կնոջ դերի մասին հասարակութեան մէջ, այն է տալ աղջկան թեթև կրթութիւն, որով նա կարողանայ կատարել միայն այն պարտաւորութիւնները, որ նորա վրայ դնում է ամուսնական կեանքի վայելչական կողմը։ Եթէ ծնողներն այդ հայեացքն ունին կնոջ դերի մասին, օժտելով իրանց որդուն լոկ այդ տեսակի կրթութիւնով, հետևաբար նորա դժուար կը լարգեն մի օրիորդի լուսաւորութեան գործին նուիրելու ձգտումները։ Թէև Վերժինը այնքան էլ լուրջ կրթութիւն չէ ստացել լուսաւորուած կնոջ տպաւորութիւն անելու համար, սակայն օժտուած է ազնիւ յատկութիւններով, որոնց շնորհիւ նա կարող կը լինի ազատել իր ծնողների անարդար ու սխալ հայեացքից։ Նա ներշնչուած է ազնիւ գործունէութեան մտքով, որ լցրել են նորա մէջ արդի հայկական կուլտուրայի պահանջները։ Հարկաւ Վերժինը պիտի կռիւ մղի իր ծնողների դէմ իր ապագայ գործունէութեան համար։ Եւ հեշտ է երևակայել ծնողների չկամութիւնը և հակաճառութիւնը իրանց աղջկայ վայելուչ ապագայ ասպարէզի նկատմամբ, որ ոչ միայն նրանից յայտնի զոհողութիւններ է պահանջում, այլև անձի որոշ ազատութիւն, որի հետ ծնողների հայեացքը չէ հաշտուում։

Երբ Վերժինը տանը լսանում է իր վճիռը վարժուհութիւն անելումասին, նրան ընդդիմադրում են՝ մի շարք դժուարութիւններ դնելով նրա առաջը։ Վերժինի ծնողների հետ այս բանում միանում է և նորա եղբայրը, որ բժիշկ է, բայց որ կանանց իրաւունքների խնդրին թեթև աչքով է նայում։ Ընդհատ սրան՝ Վերժինը դիտակցօրէն աշխատում է մաքառել իր վրայ իշխող ընտանիքի անդամների հայեացքների դէմ։ Մի կռիւ, որի արդիւնքը կարող էր լեռ մղել տալ Վերժինին իր նպատակն մրտքից, եթէ արտաքին կարգի գաղափարական շփումը չամրացնէր օրիորդին իր կայացրած վճռի մէջ։

Օրիորդ Վերժինի տանեցիք չեն խորշում ժամանակակից ընտանիքի սովորական ձեւականութիւններից։ Նոքա ընդունում են իրանց մօտ բարեկիրթ երիտասարդներ։ Այս հանգամանքի շնորհիւ Վերժինը ծանօթանում է Տիրան անունով մի կրթուած երիտասարդի հետ, որ Պոլսում գրող է ճանաչուած։ Տիրանը ծանօթացնում է Վերժինի հետ իր ընկերոջ Արշակին, որ նոյնպէս կրթուած և լուսաւորուած երիտասարդ է։ Արշակը ստացել է իր ուսումը Գերմանիայում, ուր նա ուսել է բնական գիտութիւններ։ Արշակի հայեացքը կեանքի մասին դրական է։ Նա պահանջում է լրջութիւն և լուրջ պատրաստութիւն բոլոր ասպարէզներում գործողների համար։ Նոյն իսկ Պոլսի երիտասարդութեան մէջ չէ գտնում հասունացած, լուրջ և խելացի հայեցողութեան տէր մարդիկ, որոնք պաչար ունենային իսկական գիտութիւնից։ Նա տեսնում է միայն մարդիկ, որոնք հնչեցնել գիտեն յաճախ եւրոպական գիտնականների անունները, որոնց մտքերը սակայն նոքա չեն մարսել։ Արշակը խիստ է։ Նա պահանջում է սիստեմատիկական պատրաստութիւն ամեն մի գործունէութեան համար, այսինքն մտածել և գործել հաւաքօրէն և միապէս, և ոչ ցրուած և անկապ։ որովհետև մեր կեանքի զարգացման աստիճաններն էլ ընթանում են համաձայն այն օրէնքի, որի զօրութեամբ ձգտումն է արտայայտուում դէպի սիստեմը կամ հաւաքական կազմակերպութիւնը։ Իսկ մտքի այս գիտակցութիւնը տանում է մեզ դէպի լառաջդիմութիւն և կատարելագործութիւն, որ մեր հեռաւոր նպատակն է։ Մտածողութեան այս եղանակը չէ իշխում Տիրանի վրայ, որ բարձր եւրոպական ուսում չէ ստացել, բայց և այնպէս շատ է կարդացել եւրոպական ընտիր հեղինակութիւններից և նոյնպէս պաչար ունի ազնիւ գործունէութեան պահանջը լրացնելու համար։ Յամենայն դէպս Արշակը և Տիրանը ժամանակակից համակրելի և ազնիւ անձեր են, որոնք յաճախելով Վերժինի ծնողների տունը, խօսում են օրիորդի հետ ուշադրութիւն դրաւող հասարակական խնդիրների մասին։ Իսկ կարծիքների այնպիսի փոխանակութիւնն ու արտայայտութիւնը ունենում են որոշ նշանակութիւն Վերժինի ժտաւոր հոգեվոնի համար։

Հօր մահից յետոյ՝ օրիորդ Վերժինը մտնում է Պոլսում գտնուող մի ամերիկական դպրոց իր ուսումը շարունակելու և աւարտելու համար։ Այս-

տեղ նա մտերմանում է մի ամերիկացի ուսուցչուհու հետ։ Այս ծանօթութիւնը Վերժինի համար բաւականին օգտաւէտ է լինում յետոյ։ Օտար ուսուցչուհին նրան դրդում է ընթերցանութեամբ պարապելու, օրիորդին տալիս է մտաւոր զարգացում և աւելի զարկ է տալիս նրան աշխատելու և գործելու հասարակական յառաջդիմութեան օգտին։ Մի քանի ժամանակից յետոյ՝ Վերժինը թողնում է այդ դպրոցը և պարապում ընթերցանութեամբ։

Այնուհետև Վերժինի մէջ յղանում է արտասահման գնալու հաստատ միտքը։ Նամանաւանդ Արշակն է այն գլխաւոր գործոնը, որ դրդում է նորան գնալ արտասահման՝ լուրջ, սիստեմատիկական ուսման նպատակով, որ անհրաժեշտ է կըրթութեան գործին նուիրելու ցանկութիւն ունեցող հայ օրիորդին։ Զէ՞ որ այս գործը ենթադրում է յատուկ պատրաստութիւն, որ ընդունակ է բաւարարութիւն տալու այն արդարացի խստութեանը, որ պահանջում է դպրոցական գործողներից նորագոյն մանկավարժութիւնը։ Այս ուրեմն օրիորդի հաստատ կամքը, որ կազմուել էր գիտակցօրէն յատուկ բարոյական պատճառների դրդմամբ, յարգւում է և ի կատար ածւում։ Բնական խելքով և չնորհքով օժտուած օրիորդը պատրաստ է արդէն արտասահման գնալու առաջադրեալ նպատակով։

Շանթի սահուն և յափշտակիչ գրիչը մեզ մի նմուշ է տալիս այն հոսանքի, որ հայկական կեանքի կողմերից նշանաւորագոյններից է։ Այդ հոսանքը արմատ է գցել հայերիս մէջ և ունի հասարակական նշանակութիւն։ Մարդիկ, որոնք պատրաստւում են անձնուրացութեամբ այդ քաղաքակրթական հոսանքի համար, պէտք է լարեն մեր ուշադրութիւնը և շարժեն մեր մէջ կենդանի հետաքրքրութիւն։ Եթէ մենք նախանձախնդիր ենք մեր յառաջդիմութեանը, մեզ համար նշանաւոր է բնորոշումը այդ գործին նուիրուած մարդկանց։ Այս տեսակէտից Շանթի նոր վէպը հասարակական է. նա ընթերցողի վառ համակրանքը ուղղում է դէպի այն հասարակական երևոյթը, որ կազմում է վէպի նիւթը։

Գ. Վարդանեան

Էքերս, Գ.—Մարդ եմ (Homo sum) Վէպ. Գերմաներէն բնագրից թարգմանեց Ստ. Մալխասեանց. Թիֆլիս. տպ. Մ. Դ. Ռօտինեանի. 1898 սեփ. Թիֆլիսի Հ. Հրատ. Ընկ. ութածալ. 428 էջ. գինն է 50 կոպ։

Լոկ «Մուրճ»-ի խմբագրութեան յանձնարարութիւնը, գրախօսելու և համեմատելու այս գիրքը բնագրի հետ, ինձ համբերութեամբ զինեց

ծայրէ ծայր կարդալու այն և տեղ-տեղ ստուգելու թարգմանութեան ճշտութիւնը, որովհետև երկու երեք գլուխ կարդալուց յետոյ՝ արդէն երևում է այս գործի նուազ գեղարուեստական արժէքը և հերոսների անբնական տիպերը։—Զուգելով իմ անհատական տպաւորութիւնը իբրև զուտ ոսկի ծախել, ես դիմեցի մի քանի բանիմաց գերմանացիների կարծիքն իմանալու։

Նրանք զարմանում են, որ գերմանական ծով գրականութիւնից մի „Homo sum“ է հայերէն թարգմանում, այն էլ տպելուց տասնեակ տարիներ յետոյ (առաջին տպագրութիւնը եղել է ութիզ քսան տարի սրանից առաջ 1878-ին)։

«Էքերսը երկրորդ կարգի գրող է. իսկ „Homo sum“-ը նրա երկրորդական գործերից». «տասնիններորդ դարու գերմանացիներին նա ներկայացնել է ուզում չորրորդ դարու փալասների մէջ».—այսպէս կարելի էր ամփոփել գերմանացիների կարծիքը նրա մասին։

Էքերսի նշանակութիւնն ինձ համար աւելի պարզուեց նրա ոչ անակնկալ մահով օգոստ. 7-ին, որովհետև նա վաղուց հիւանդ էր։ Նորա գործունէութեանը նուիրած մի լոգուածում մի լայնի լրագիր հետևեալն է ասում. «Էքերսը մեր գրականութեան հերոսների թւին չէր պատկանում, թէև իր ժամանակին նա շատ կարդացած հեղինակներից մինն է եղել»...

Նա ծագում է մի քրիստոնէացած հրէական ընտանիքից, որը լիապէս օժտուած է եղել այդ ազգին յատուկ ընդունակութիւններով և պակասութիւնով։—Ծնուել է Բերլինում 1837-ին. ուսել է Գէօտինգենի և Բերլինի համալսարաններում. մասնագիտութիւնը եղել է եգիպտաբանութիւնը, որով և մեծ գիտական հռչակ է վայելում։ Իր գիտական ուսումնասիրութիւնների արդիւնքը նա աշխատել է վ[illegible]պերով մատչելի դարձնել նաև ընթերցող հասարակութեանը և ժամանակին մեծ ժողովրդականութիւն է վայելել մանաւանդ «Եգիպտոսի արքայադուստր» վէպով [1]։

Էքերսը, սակայն, այն գրողներից է, որոնք մոդայի չնորհիւ սիրով ընդունելութիւն են գտնում, շատ կարդացուում, շատ էլ մոռացուում են. և վերջին տասնամեակում նա արդէն մոռացած տաղանդների թւին էր պատկանում.—Ինձ այն չի զարմացնում, որ մի այսպիսի երկրորդական գործ թարգմանութեան է արժանանում, որովհետև ըստ ռուսական առածի „на вкусъ и цвѣтъ товарища нѣтъ“, այլ այն, որ մի Հրատ. Ընկ. արժան է համարում այդ տպագրելու։

«Մարդ-եմ» վէպի բովանդակութիւնն աւելորդ եմ համարում այստեղ դնել. ով ուզում է, կարող է կարդալ, ես միանգամայն կորած եմ համարում այն ժամանակս, որ գործ դրի այդ գիրքը կարդալու։—Գրքի նիւթը չորրորդ դարու անապատականների կեանքից է առնուած և

[1]) Այդ գիրքը թարգմանուած է «Փարաւոնի աղջիկը» խորագրով։

Ծան. Խմբ.

համեմատած է արհեստական էֆեկտներով։ Միակ արժանիքը, հարաբերաբար բնութեանը նուիրած գեղեցիկ, կարելի է ասել բանաստեղծական նկարագիրներն են։ Թէ որքան աչող է այս գրքի թարգմանութիւնը, ընթերցողը կարող է հետևեալ հատուածների համեմատութիւնից դատել։ որ մենք արել ենք զանազան պատահական երեսներ դիտելով։—Առաջին երեսը սովորաբար ամենից ինամքով է թարգմանուում. ահա դորա համեմատութեանը։

Und doch, in jener Höhlung des Bergeswand regt sich menschliches Leben, und zwei kleine graue Vögel wiegen sich in der reinen, leichten, von der Mittagssonne durchglühten Wüstenluft und verschwinden hinter einer Klippenreihe, die wie eine Mauer von Menschenhand, eine tiefe Schlucht begrenzt“:

Թարգմանուած է.

«Բայց ահա այնտեղ, լեռնային պարապի մի խորշում, մարդկային կեանքի նշաններ են երեւում, և երկու զորշագոյն մանր թռչուններ սաւառնում են կէսօրուայ արևից ջերմացած, անապատի մաքուր ու թեթև օդի մէջ, և անհետանում են քարաժայռի շարքերի նաև, որոնք իբրեւ մարդկային ձեռքի շինած պարիսպներ՝ խոր ձորի բերանից վեր են ամբառնում»։

Մենք նոյնը ապակէս կը թարգմանէինք.—Սակայն, այնտեղ, լեռնային պարապի մի խոռոչում, մարդկային կեանք է շարժուում. և երկու փոքրիկ, զորշ թռչուն օրօրուում են անապատի մաքուր, թեթև ու կէսօրուայ արևից տապացած օդի մէջ՝ և անյայտանում են քարաժայռի շարքերեանը, որը ձեռակերտ պարսպի պէս սահմանափակում է մի խորին անդունդ։

Հաւերէն չի կարելի ասել մանր թռչուն, մանր երեխայ, մանր մարդ. այլ փոքր, փոքրիկ, որ գործ է ածուում սովորաբար չնչաւոր առարկաների համար։ Ֆերմաներէնը չունի այդ նրբութիւնը, որ չփոթեցրել է թարգմանչին։—Höhlung այստեղ չի կարելի խորշ թարգմանել. մեր նոր դրականութեան մէջ այդ բառը շատ փոքրիկ փոսի նշանակութիւն է տացել. «սրտախորշ», «նախախորշ»,... այնինչ խոռոչ սովորաբար գործ է ածուում գաղանների որջը ցոյց տալու համար, ուր և «մարդկային կեանք կարող էր շարժիլ»։—«Նրկու թռչուններ», հինգ մարդիկ. վեց կենայք, խորթ է հնչում մեր ականջին. աշխարհաբարի առանձնայատկութիւններից մինն է այս, որ թուականի մօտ գոյականը եզակի է դրուում, բայց լոգնակի հասկացուում։

Grau նշանակում է գորշ. ինչ կարիք կայ մի աւելորդ բարդութեան։—«Գորշագոյն» կարելի էր այն ժամանակ թարգմանել, եթէ բնագրում graufarbig—լինէր։ Wiegen այստեղ նշանակում է օրօրել, տատանուիլ ոչ երբէք «սաւառնիլ»։

Klippenreihe և դորան լաչորդող ամբողջ նախադասութիւնը եզակի է, այն ինչ հաւերէն լոգնակի է թարգմանուած և այն էլ լիովին սխալ. «eine tiefe Schlucht begrenzt»—բառացի նշանակում է. «մի խոր անդունդ սահմանափակուած». թարգմանուած է. «խոր ձորի բերանից վեր են ամբառնում». Մենք մի քիչ մանրակրկիտ ենք

քննում, որ գերմաներէնին անծանօթ ընթերցողին գաղափար տանք թարգմանութեան արժէքի մասին։

«Denn ein Quell benetzt ihren steinigen Boden» «Որովհետև մի աղբիւր է ոռոգում և ոռոգում է քարեղէն գետինը»...։ Բղխում է, բնագրում չկայ և աւելորդ է. իսկ steinig —չի նշանակում քարեղէն, այլ քարոտ. նոյնը մենք կը թարգմանէինք. «Որովհետև մի աղբիւր ոռոգում է իր (կամ նորա) քարոտ գետինը»— Սոյն առաջին երեսում Strauch թարգմանուած է թուփ. աւելի ուղիղ կը լինէր մացառ թարգմանել. թուփ գերմաներէն Busch է կոչւում։ Մոռանալու չէ, որ խօսքը անապատի մասին է, ուր միայն մացառներ են աճում սովորաբար։

Ի բաց առեալ նախադասութիւնները, առանձին բառերը շատ անճիշտ են թարգմանուած։ Այսպէս երկրորդ երեսում. vielzweigige Federpalme, թարգմանուած է «սաղարթախիտ փետրատերև արմաւենի».—պիտի լինէր—բազմճիւղ—«Սաղարթ»մեր լեզուաշէն բառատեղծը (Քաթիպա) առաջարկել է հասկանալ ծառի տերևների ամբողջութիւնը (Laub, feuillage) և այդ մտքով էլ գործածական է այսօր.

«Ակունը եկաւ ծափեցաւ սաղարթ,
«Էլ մի վիտալ մանուշակ ու վարդ», իսկ «սաղարթախիտ»—նշանակում է տերևաշատ, կամ տերևախիտ

Dabei biegt die Hirtin die Zehen so zierlich, als wolle sie einen Zuschauer auffordern ihre Feinheit zu bewundern. (երես 3). թարգմանուած է. Այս խաղի ժամանակ աղջիկն այնպէս վայելչաբար ծալում է ոտքի մատները, որ կարծես հրաւիրելիս լինէր մի հանդիսատեսի՝ զարմանալ իւր արուեստով։ Պիտի լինէր. «Միևնոյն ժամանակ հովուուհին ոտի մատները այնպէս վայելուչ է ծալում, որ կարծես հրաւիրելիս լինէր մի հանդիսատեսի զարմանալու իւր նրբութեան վրայ։ Նկատել ենք ուզում, որ մեր դրած օրինակները ճշտութիւնից զատ մի առաւելութիւն էլ ունին—կարճ և դիւրընթեռնելի բառեր. ինչ կարիք կայ «ձեռքի», «ոտքի», «վայելչաբար» գրելու, քանի որ ձեռի, ոտի, վայելուչ, աւելի կարճ և աւելի ընտիր ձևերն ունենք.

Sie aber regte sich nicht bis er sie mit dem Fusse unzart berührte (5 երես)

թարգմանուած է։ «բայց նա տեղիցը չշարժուեց, այնպէս որ երիտասարդը վերջապէս նրան ոտքով դրդեց զայրացած»։ Պիտի լինէր. բայց նա տեղիցը չշարժուեց, մինչև որ երիտասարդը ոտով կոպիտ դրդեց նորան։

Und liess sich das blonde Haar von einer alten schwarzen Sklavin ordnen. (101) «և սև պառաւ ստրկուհին լարդարում էր նրա խարտեաշ մազերը»։—Պիտի լինէր՝ և սև պառաւ ստրկուհուն լարդարել էր տալիս իւր շէկ մազերը։

Sie seufzte, während die Dienerin mit duftigem Oel auf der flachen Hand bald hier bald dort den glänzenden Hauptschmuck ihrer Herrin berührte. «Մինչ սպասուհին, անուշահոտ իւղը ձեռքին ածած՝ օծում էր ափերուն չքեղ փայլուն վարսերը՝

սիրուհին հառաչանք էր արձակում» (101). Աւելի ուղիղ կը լինէր.—Յիրուհին հառաչում էր, մինչ սպասուհին հոտաւէտ իւղն ափին ածած չոչափում էր նորա փայլուն վարսերի այս և այն մասերը...

Jetzt fasste die shwarze kräftig in den vollen, lang herabwallenden Strom der goldig schimmernden Fäden und theilte ihn mit beiden Händen, um mit dem Flechten der Zöpfe zu beginnen, aber Sirona wehrte ihr und sagte»... «Խափշիկ պառաւը պինդ բռնեց նրա խիտ ու երկար, ոսկէփայլ, ալէծածան վարսերը և երկու մասի բաժանեց, որպէս զի հիւսել սկսէ. բայց Սիրոնան թոյլ չտուեց և ասաց». (101 եր.). քնապրի գեղեցկութիւնն այստեղ լիովին կորած է։ Մենք նոյնը այսպէս կը թարգմանէինք.—Ահա Սեուկը պինդ բռնեց երկար և ալեծածան հոսանքի ոսկէփայլ թելերը և երկու ձեռով բաժանեց այն, որպէս զի հիւսել սկսէ, բայց Սիրոնան հեռացրեց նորան և ասաց...

Fest vorausbestimmt und scharf abgemessen ist die Bahn jeden Sterns, jede Pflanze trägt Blüten und Früchte genau in der Form und Farbe ihrer Gattung; in den Grundzügen ihrer Anlagen und Neigungen ihrer gemütlichen und äusseren Bewegungen bleiben auch alle Thiere der nämlichen Gattung einander gleich, und der Jäger, der das Rothwild in dem Forste seines Vaters kennt, kann in allen Wäldern der Erde wissen, wie das Reh sich injedem einzelnen Fall verhält.—

թարգմանուած է. «Խստիւ նախասահմանուած և ճիշտ որոշուած է ամեն մի աստղի ընթացքը. իւրաքանչիւր բոյս՝ ծաղիկ ու պտուղ է տալիս իւր ցեղի բոլորովին համանման գունով ու ձևով. բոլոր անասունները իրանց սովորութիւններով ու ցանկութիւններով, ներքին և արտաքին շարժումներով հիմնապէս նմանում են իրանց ցեղի անհատներին, և այն որսորդը, որ իւր հօր պուրակում ծանօթացել է եղջերուներին՝ կարող է աշխարհիս բոլոր անտառներում գիտնալ, թէ քարայծը մի լայնի դէպքում ինչպէս է պահում իրան»—Մենք կը թարգմանէինք.—Հաստատ նախասահմանուած և ճիշտ չափուած է ամեն մի աստղի ընթացքը. ամեն մի բոյս իւր ցեղի գոյնին ու ձևին յատուկ ծաղիկ ու պտուղ է տալիս. միևնոյն ցեղի բոլոր անասունները իրանց ունակութիւնների և հակումների հիմնադիրներով իրանց ներքին և արտաքին շարժումներով նման են միմեանց. և այն որսորդը, որ իւր հօր պուրակի եղջերուներին ճանաչում է, կարող է աշխարհիս բոլոր անտառներում գիտնալ, թէ եղնիկը ամեն մի դէպքում իրան ինչպէս է պահում։

Ես կը խնդրէի ընդգծեալ բառերի վրայ առանձնապէս ուշ դարձնել. սխալ է Reh «քարայծ» թարգմանել (Steinbock) դա ոչ այծ է, ոչ էլ քարի հետ գործ ունի. ապրում է անտառներում, լայնի է իւր վերին աստիճանի աղնիւ ու նուրբ կազմուածքով ու շարժումներով։ Պատկանում է եղջերուների տեսակին, միայն թէ մարմնով և թէ պոչերով անհամեմատ փոքր խոկական եղջերուներից։

Sie War zusammengefahren und hatte... «Մարիամը ինքնիրան ժողովեց և» (369)—Պիտի լինի. Մարիամը սարսռեց, սոսկաց և...։

«Und er ihr ein fröhliches Willkommen zugerufen hatte.—Թարգմանուած է. «և նա քաղցրութեամբ բարև տուեց աղջկան» (370)—պիտի լինի՝ ուրախութեամբ բարի գալուստ մաղթեց աղջկան։

Հիմա անցնենք գրքի լեզուին. եթէ սխալ և անճիշտ թարգմանութիւնները մատամբ ներելի են, որովհետև դիւրին չէ թարգմանելիս ամեն անգամ համապատասխան արտայայտութիւնը կամ բառը գտնել, ապա ամեն մի գրողից և այն էլ մի Հրատ. Ընկ. տպած գրքից պիտի պահանջել կարողանանք, որ նորա լեզուն մաքուր, անարատ հայերէն լինի։

Այս գիրքը այդ կողմից էլ մեծ պակասութիւններ ունի, որոնք մի քանի տեսակի կարելի է բաժանել.

ա. Անորոշ դերբայի սխալ կիրառութիւն.

«Կարծես հրաւիրելիս լինէր մի հանդիսաւորի՝ զարմանալ իր արուեստով». (3 երես) պիտի լինի՝ զարմանալու իր արուեստի վրայ։

«Նրա համար միենոյնն է, որ քո մէջ միտք է ծնեցնում՝ քարերով ինձ այս աղբիւրից հալածել». (12)=հալածելու։—«Որ անասուններին միջոց տայ աղբիւրին մօտենալ» (15 եր.)=մօտենալու։ «Մենք քեզ յանձնեցինք այծերն արածեցնել». (66)=արածեցնելու. և այլն. այս սխալը առհասարակ շատ լաճախ է պատահում թարգմանութեան մէջ։

բ. Բառերի սխալ դասաւորութիւն.

«Պատմում է եգիպտական դիցաբանութիւնը».—(2 եր.)=Եգիպտական դիցաբանութիւնը պատմում է։—Անտոնիոսը սկսեց բացատրել նկարն այն կամարի, որը մտադիր էր ձգել ձորի վրայ, ամուր և ապահով» (եր. 52)=... Թարգմանողը այստեղ հետևել է այն օտարաբանութեանը, որ շատ սովորական է արևմտեան հայերէնին. դա կատարել է այն նպատակով, որ մտքի կարծեցեալ չփոթութեան առաջն առնուի, որովհետև եթէ գրէինք «բուն հայերէն»—«Անտոնիոսը սկսեց բացատրել այն կամարի նկարը, որ մտադիր էր ձգել ձորի վրայ, ամուր և ապահով», կարող էինք կարծել, թէ ձգողը կամուրջը չէ, այլ նկարն է։—Սակայն, այդպէս միայն օտար մտածողն է կարծում. հայի տրամաբանութիւնը թոյլ չի տալիս կարծելու, որ կարելի լինի «ձորի վրայ ամուր և ապահով նկար ձգել», ուստի և այդ նորմուծութիւնը զէթ այստեղ աւելորդ է։

«Փախչող Մարիամը միոն էր այն ուրուականներից, որոնց տեսքից սարսափել էր Պաւլոսը» (206)=Փախչող Մարիամն այն ուրուականներից միոն էր, որոնց տեսքից սարսափել էր Պաւլոսը։—Այստեղ էլ չփոթութիւն չի կարող լինել, քանի որ «ուրուականներ» և յարաբերող դերանունը, «որոնք»—յոգնակի են, իսկ Մարիամ և միոն՝ եզակի...

«Որպէս թէ կամենար հայեացքովը նրան հալեցնել (136)=Որպէս թէ հայեացքովը նրան հալեցնել կամենար։

գ. Օտարաբանութիւններ.

«Պանդուխ մաղերը, որ առատու-

թեամբ ծածկել էին նրա գլուխը՝ ինչպէս առիւծի բաշ». (5)=առիւծի բաշի պէս. «ինչպէս փթած փայտը». (21)=փայտի պէս։

Այդ կերպով չներին են զարթեցնում. такимъ образомъ? այդպէս չներին են զարթեցնում «և ես նորան չնորհակալ եմ». (9). «Շնորհակալ լինում ես Տիրոջը»։ (10) Շնորհակալ հայերէն բացառականով է խնդիր առնում. պիտի լինի. նորանից, Տիրոջից.

«Տարածում էր մի չափաւոր մեծութեան բարձրաւանդակ». (16) (умѣренной величины?) պիտի լինի՝ չափաւոր մեծութեամբ։

«Ոչ ոք չէ կարող լինել աւելի քան մարդը» (23)=Ոչ ոք մարդուց աւելի չի կարող լինել։

«Աւելի քան երեսուն արբեստագէտ մրցում էին» (50)=Երեսունից աւելի արբեստագէտ...

«Աւելի քան երեք քառորդը կը ծածկէ» (52)=երեք քառորդից աւելին... Այս օտարաբանութիւնն էլ ռուսերէնից է. болѣе чѣмъ։

«Միայն խնդիրը նրանումն է» (52)=дѣло въ томъ...=խնդիրն այն է.—«Հարցը միայն նրանումն է» (54)=հարցն այն է։—«Բանն ինչումն է» (57). «Լաւագոյն գրանիտ, քան որ հայտ հանում է իմ առիւծների համար, ես ոչ մի տեղ չեմ կարող գտնել»=Հօրս հանած գրանիտից աւելի լաւը, իմ առիւծների համար... «Եւ ես ինչու համար աչխարհից հեռացայ՝ եթէ ոչ որպէս զի նորան հետեւիմ» (206)=Եւ ես ինչու աչխարհից հեռացայ, որպէս զի նորան հետեւիմ... կամ. ես ինչու աչխարհից հեռացայ, չէ՞ որ նորան հետեւելու...

«Նրա դէմքը աւելի էլ սիրուն էր՝ քան որչափ դեղեցիկ էր».—Այս նախադասութիւնը ես բոլորովին չեմ հասկանում. տարաբաղդաբար բնագիրն էլ մօտս չէ, որ միտքը ստուգել կարողանամ։

«Նա փափագում էր չարչարանքի՝ ինչպէս սենդով հիւանդը» (131)=Ցենդով հիւանդի պէս...

«Ձեռներով փնտռեց մատանին, գտաւ նրան». (136)=գտաւ այն։

«Լայն փողոցը փայլում էր այնպէս՝ որպէս թէ սպիտակ մարմարիոնով սալայատակած լինէր». (138) պիտի լինի. կարծես։ «Ոչ մի զատաւճիռ այնքան խիստ չէ լինում՝ քան երբ ստրուկն է ստրուկին դատում».—(64)։

Գալով բառերի զանազան ձևերին, մենք պատահում ենք. նորա և նրա, նորանք և նրանք, նորանցից և նրանցից»... մինչև անգամ նրա իգական դերանուն. կուրիոզների թէին է պատկանում հիմա բառի ուղղագրութիւնը, որ ամեն տեղ հիմայ է գրւած...

Այս սխալների և օտարաբանութիւնների թիւը կարելի էր տասնապատկել։ Դա, առնք, մեզանում նոր-լի երևոյթ է։ Ցաւալին այն է, որ մի Հրատարակ. ընկերութիւն, տպագրելով գրքերի քանակը չատացնելու եռանդով մոռանում է նոցա որակը և միևնոյն ժամանակ ինչպէս այս օրինակներից կարելի է եզրակացնել, հայերէնին արգի ծառայութիւն է մատուցանում...

Ի վերջոյ, եթէ անտես առնենք գրքի այս պակասութիւնները, պի-

տի նկատենք, որ պ. Մալխասեանի լեզուն առհասարակ պարզ և մատչելի է. նա բառերի և ձևերի մեծ պաշար, միևնոյն ժամանակ դրանցից խելացի կերպով օգտելու ընդունակութիւն ունի, որ մի թարգմանչի համար կարևոր յատկութիւն է։ Այդ հանգամանքն ի նկատի ունենալով, մենք մի քիչ իստապահանջ եղանք. ում շատ է տրուած, շատ էլ պահանջւում է։ Ներելի չէ, որ մի Մալխասեան այն սխալներնան է, ինչ որ մի համբակի է յատուկ։—Եթէ նա գրքի նիւթը խնամքով ընտրէ, թարգմանելի լեզուն աւելի խնամքով ուսումնասիրէ, և հայերէնը աւելի հոգածութեամբ մշակէ, ապա նորանից կարող է մի ընտիր թարգմանիչ զարգանալ։—Մենք այդպիսի թարգմանիչների մեծ կարիք ունինք։

Դր. Վանցեան

ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ.—*Դեռ. արևելեան վէպ. թարգմանութիւն Մելքոն Այտընեանի*, Թիֆլիս, տպ. Մ. Նարաձէի. 1898 թ. 48 էջ, գինը 15 կ.
ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ. ԻՒ.—*Մակսիմ Մակսիմիչ. թարգմ.* Ա. Հրատարակ. Մ. Սուլթան. Բաքու, տպ. Ա. Մ. Ղազարեանի, 1898 թ. 30 էջ. գինը 8 կ.

Գիտակցութեան պակասութիւնը մի ցաւալի և տարածուած երևոյթ է մեզանում. եթէ մեր հասարակութիւնը գիտակցաբար վերաբերուէր դէպի անձերն ու երևոյթները, գործերն ու խնդիրները, շատ բան մեր կեանքում այն պատկերը չէր ունենալ ինչ որ ունի այժմ. և դեռ աւելին՝ կեանքի կերպարանքը կը փոխուէր։ Այդ ցաւը նկատւում է նաև մեր թարգմանիչների մէջ։ Դիտելով մեր գրական հրապարակում երևցող բազմաթիւ թարգմանութիւնները, մարդ շատ անգամ չուարած է մնում, երբ ուզում է մի քանի ամենաբնական և օրինաւոր հարցերի պատասխանն ստանալ. ինչու է թարգմանուած այս ինչ գիրքը, ինչ տեսակէտով է առաջնորդուել թարգմանիչն ու հրատարակողը, ինչ ձգտումների արդիւնք է այդ գործը կամ ինչի է գալիս բաւարարութիւն տալու... Եւ միշտ մարդ մնում է ձեռնունայն. ոչ մի որոշ պատասխան չկայ. միշտ այս եզրակացութիւնն է գլուխ բարձրացնում, թէ գործ անողները իրանք էլ չգիտեն թէ ինչ են անում և ինչու են անում. անգիտակցութիւն, և ուրիշ ոչինչ. չկայ համակարգ, չկան ղեկավարող սկզբունքներ, որ մեծ կարեւորութիւն ունեցող պահանջների արդիւնք լինեն և ըղձեն մի ընդհա-

նուր ու բարձր տեսակէտից։

Օրինակ հէնց այս երկու թարգմանութիւնները։ Մի գրականութեան համար հարստութիւն է անկասկած օտար դասական երկերի թարգմանութիւնը և պակասը լրացնելու ձգտումն այդ չէ նանում օրինաւոր է ու գովելի. բայց միայն կատարեալ անգիտակցութիւնը՝ թէ գրականութեան ու հասարակութեան չափերի և թէ սեփական ուժերի՝ կարող է մոլորեցնել հասկանալ պակասի լրացնելը։ Որ մարդ համարձակւի օրինակ «Դեռը» նորից թարգմանելու, հարկաւոր է այն հաւատումն ունենալ թէ նա ոչ միայն Սատաթեանից լաւ է ըմբռնում բնագիրը, այլ և աւելի լաւ է արտայայտելու երկը թէ ոգու և թէ լեզուի կողմից. և եթէ մէկը ձեռնարկում է այդպիսի գործի՝ նշանակում է այդ համոզումն ունի. իսկ եթէ ձեռնարկութեան արդիւնքը ստոր է ամէն գնահատութիւնից՝ եղած թարգմանութեան հետ համեմատած, ապա նրա դրդիչը ձեռնարկողի ծայրայեղ անձնասիրութիւնն է, որ արդիւնք է միմիայն բարոյական ու մտաւոր տգիտութեան։ Եւ սա մի առանձնակի երևոյթ չէ. պ. Մելքոն Այտընեանը անձը չէ, տիպ է։ Էլ չեմ խօսում այն լարգանքի մասին, որ պիտի մարդ ունենայ դէպի մի ազգի ու մարդկութեան մեծագոյն գրականները, ոգեկան աշխարհի հերոսները...

Նոյնը պիտի ասել քիչ աւելի նուազ չափով, և «Մակսիմ Մակսիմիչը» թարգմանողի մասին, որովհետև սա գոնէ լեզուի պէս մի բան ունի բերնում, թէև սրան էլ լիովին անմատչելի են Լերմոնտովի խոր հոգու մռայլ ու մութ ծալերը և ուժգին ու համարձակ լուսատատ ճիգը։ Շատ ենք խօսել թարգմանութիւնների մասին այս էջերում, բայց, երևում է որ կրկնութիւնն անհրաժեշտ է դառնում։ Մի անգամ ընդմիշտ պէտք է համոզել, որ լաւ թարգմանիչ նա միայն կարող է լինել, ով ընդունակ է հեղինակի հոգին թափանցելու, զգալու այն ամենը՝ ինչ որ զգացել է նա երկը ստեղծագործելիս, և ով վստահ է թէ ունի ոչ միայն հեղինակի զգացմունքների ուժն ու թափը (այս դէպքում), այլ և նրա արտայայտելու կարողութիւնը, թէև ուրիշ լեզուով։ Այդպիսի դէպքում անկարելի է որ թարգմանութիւնը վատ դուրս գայ. խօսքերն էլ տեղին կընտրուին մտքերն էլ տրոյ ու լաւ՝ հաւասարազօր կ'արտայայտուին, ոգեւորութիւնն էլ բնագրինը կը լինի։ Եթէ այդպէս չլինէր բանը, թարգմանելուց էլ դիւրին ինչ կը լինէր. վերառ ու թարգմանիր. այսինքն ստոր լեզուի խօսքերի տեղ դիր մայրենի լեզուի խօսքերը պրծաւ, գնաց...

Ահա ձեզ «Դեռի» վերջից՝ այդ սիրտ պատառող ունայնութեան մանանեագից մի կտոր Սատաթեանի թարգմանած. համեմատեցէք նոր թարգմանութեան հետ։

ՍոֆաՀՒՆԱՆ՝

Իսկ այն տաճարը լերան գագաթին,

Բայց տաճարը ժայռի գագաթին

ԱյրՔՆՅԱՆ՝

Ուր թաղած են նրանց ոսկրներ,

Ուր որ թաղուած են նոցա ոսկերքը,
Պահել է անխախտ տեսչութիւն վերին
Եւ ցարդ կանգնած է ամպերի մէջը։
Նրա դրան մօտ հաստատ կանգնած են
Երկու մեծ քարեր իբրև պահապան,
Կուրծքերի վրայ ճօշի փոխարէն,
Սառոյցն է փայլում լաւիտենական։
Եւ ձիան հիւսերի դէզերը անզոր
Զրէժի նման լեռնիվայր թափած,
Այստեղ ու այնտեղ կանգնած են խոժոռ
Մի լանկարծասաս ցրտից բռնուած,
Ձերմակ պատերից ձիւնը փչելով
Այնտեղ նայելու գալիս է քամին,
Երգէ չորինում մերթ երկար ձայնով,
Մերթ ձայն է տալիս պահապաններին։
Եւ շատ վաղուց է, որ չիրիմների
Քարերի վրայ ոչ ոք չէ լացել.
Ապառաժ ժայռը խոժոռ Կազբէկի
Իւր պահած գիւաը ամուր է բռնել[2]։

Տիրոջ կամքովն է պահուած դեռ,
Տեսնում ես նրան թուխպերի միջին.
Եւ դռների մօտ կանգնած են
Նրա պահապան հատաքարեր մռայլ,
Ծածկուած են ձիան չերտով մաքրափայլ
Եւ զրահի տեղ նրանց վրայ լաւէտ
Սառուցներ են փայլում և եթ։
Ձիան հիւսերի քնկոտ կառկառներ,
Լեռնակողից, իբրև ժրէժներ,
Ցրտից լանկարծ պինտ կաշկանդուած,
Խոժոռադէմ շուրջն են կանգնած։
Եւ պահապան բուքն աչք է ածում,
Հին պատերից փչում փոշին,
Երկարաձիգ երգ է մերթ սարքում,
Մերթ ձայն է տալիս ժամապահին [1]։
Եւ խումբ չիրիմ-քարերի վրայ
Վաղուց արցունք թափող չկայ։
Մռայլ Կազբէկի ապառաժ ժայռեր
Պահպանում են որսն անքթիթ [3]...

Համեմատեցէք. ահա ձեզ անօգուտ աշխատանք, զուր ջանք, կորած փող թէ հրատարակողի և թէ առնողի համար. գիտակցութիւն եղած դէպքում այդպէս բան կը լինէր. կամ գոնէ այդպիսի երևոյթը սովորական կը լինէր միթէ...

Такъ сидѣли мы долго. Солнце прятало́сь за холодныя вершины, и бѣловатый туманъ начиналъ расходиться въ долинахъ. когда на улицѣ раздался звонъ дорожнаго ко-

Այսպէս մենք երկար նստած էինք։ Արևը թագնուել էր սուրը գագաթների ետևը, և սպիտականման մառախուղը սկսել էր ցրուել հովիտների մէջ, երբ փողոցում լսուեցին

[1]) Այստեղ չորս տող կայ, որ թարգմանութիւնից այդ կտորը մէջ չենք բերել [2]։ Սատաթեանը չի թարգմանել. Նոր թարգմ. էջ 56. [3]) Նոր թարգմ. էջ 46—47։ Սատաթեանի թարգմ.

локоличка и крикъ извощиковъ. Нѣсколько повозокъ съ грузными армянами въѣхало на дворъ гостиницы и за ними пустая дорожная коляска: ея легкій ходъ, удобное устройство и щегольскій видъ имѣли какой то заграничный отпечатокъ.

Я смотрѣлъ въ окно. Множество низенькихъ домиковъ, разбросенныхъ по берегу Терека, который разбѣгается шире и шире, мелкали изъ за деревъ, а дальше синѣли зубчатою стѣною горы и изъ-за нихъ выглядывалъ Казбекъ въ своей бѣлой архирейской шапкѣ. Я съ ними мысленно прощался, мнѣ стало ихъ жалко. (Соч. Лермонтова, изд. 1887 г. т. I, 226).

զանգակների զողանջիւն և կառապանների աղաղակ։ Հիւրանոցի բակը մտան մի քանի սալլակներ, որոնց մէջ կեղտոտ հագնուած հայեր էին նստած, իսկ նրանց ետևից մի դատարկ կալեասկա. սրա թեթև գնացքը, լարմար չէնքը և կոկիկ տեսքը արտաստանմանեան դրօշմ էին կրում։ (էջ 6—7) Ինչ համեմատութիւն. այնտեղի նկարագրութեան պարզորոշութիւնը, ազմածութիւնը, և այստեղի անդոյն ու մեռած խօսքերը!...

Ես նայեցի լուսամուտով։ Ընդարձակօրէն տարածած Թերեքի ափերում ցրուած տների բազմութիւնը երևում էր ծառերի միջից, իսկ դէնը կապտին էին տալիս սարերը ատամնաձեւ պատի նման, և նրանց ետևից դուրս էր ցցած Կազբէկն իր սպիտակ մեծափառ կատարով։ Ես նրանց հրաժեշտ էի տալիս մտքումս. ես ափսոսում էի նրանց համար...

Ինչ ասենք բանաստեղծականութեան մասին, երբ նոյն իսկ լաւ չէ թարգմանուած... համեմատեցէք գոնէ ընդգծածը։

Այս երկու թարգմանութիւնը ոչինչ չեն տալ մեր օտար դասական երկերով աղքատ գրականութեանը։

Ն. Աղբալեան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՏԱՐ ԿԱՊԻՏԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ամբողջ Ռուսիայի մամուլի ուշքը իւր վրայ դարձրեց օտար կապիտալների ահագին մուտքը Ռուսիայում և մասնաւորապէս Բաքուում, ուր մի շարք նաւթահանքերի ֆիրմաներ վաճառեցին անգլիական ընկերութիւնների։ Մի վաճառք միւսին յաջորդելը կարճ միջոցում,—ահա թէ իսկապէս ինչն էր պատճառը, որ դա մի նոր երևոյթի կերպարանք ստացաւ։ Նոյն իսկ Անդրկովկասի համար, սակայն, օտար կապիտալների մուտքը ինքնըստինքեան նորութիւն չէ. նորագոյն Բաքուայ ստեղծողը՝ Նոբէլ եղբայրներն են—շէֆդացիք, որոնք Բաքու գործ սկսեցին եօթանասնական թուականների վերջը, և այժմ էլ նաւթային գործի գլուխն են, թէ կապիտալի մեծութեամբ, թէ այն ամեն կատարելութիւններով, որ նոքա ներմուծել են իրենց նաւթային գործի տեխնիկայի, վարչութեան ու ծառայողների նկատմամբ։ 80-ական թուականների վերջերքում մուտք գործեց Ռոտշիլդի մեծահարուստ ֆիրման։ Այդպէս՝ նաւթային գործում։ Պակաս նշանաւոր չէ անցեալը պղնձահանքերի նկատմամբ, որոնցից Գեոտաբէկում եղածը, Գանձակի գաւառում, վաղուց հետէ գերմանացի Սիմէնս եղբայրների ձեռքումն են և բոլորովին անօրինակ են այն կատարելութեամբ, որ այդ հռչակաւոր գործարանական ֆիրման մտցրել է պղնձահանքի շահագործութեան մէջ։ Բորչալուի գաւառում (Թիֆլ. նահ.) Ակտալայի պղնձի հանքերը տարիներից ի վեր մի ֆրանսիական անանուն ընկերութեան ձեռքով են շահագործւում, թէև արդէն առանց սպասած յաջողութեան։ Քութայիսի նահանգում մաբգանէցի շահագործութիւնը օտարերկրեայ ընկերութեան ձեռքումն է, առանց

իւր վրայ ում և ինչ ուշք դրաւելու։ Օտար դրամագլուխը Անդրկովկասում նոյն իսկ գործադրութեան տեղ է գտել քաղաքային գործերում, ինչպիսին է ձիաքարշ երկաթուղին, որից մի ընդգիական ընկերութիւն, ահա 15 տարի է ինչ Թիֆլիսում բանելով իւր արժեթղթերը ամենանախանձելի բարձրութեան է հասցրել։

Մենք ցուցակ չենք ներկայացնում բոլոր ձեռնարկութիւնների, որոնք մեր երկրում օտարների ձեռքումն են. բայց միայն այդքանով կամեցանք յիշեցնել որ օտար դրամագլուխների մուտքը մեր երկի համար նոր չէ։

Նոր չլինելով երևոյթը ինքն ըստ ինքեան, նոր է սակայն հոսանքը. որովհետև երևոյթը մի այնպիսի բնաւորութիւն է ստացել, թէ օտար դրամագլուխները ճամբայ են հարթել Կովկաս մըտնելու և տեղաւորուելու, որով Կովկասը առհասարակ շահագործման մի նշանաւոր երկիր պիտի ճանաչուի։ Եւ ահա հարց է ծագում թէ այդ բանը օգտակար թէ վնասակար հեռանքներ է ունենալու մեր երկրի տնտեսական ու բարոյական կեանքի համար։

Խնդիրը շատ հեռու է զուտ ակադեմիական լինելուց. նա իսկապէս շատ գործնական խնդիր է, որովհետև պարզ է, որ երբ մի բան վնասակար ճանաչուի—պետութեան պարտքը կ'լինի այդ վնասի դէմն առնելու։ Մինթէ հնարաւոր է մի բան ակնյայտնի կերպով վնասակար ճանաչելուց յետոյ՝ լոկ հանդիսատեսի դեր կատարել. պետութիւնը նրա համար էլ հէնց պետութիւն է, որ նա ճանաչած չարիքի դէմն առնէ, օգտակար ճանաչածը խրախուսէ։

Եւ ահա, երբ խնդիրը դալիս է օգտակարին ու վնասակարին, մենք տեսնում ենք որ օտար կապիտալը երկու տեսակ դեր է կատարում մեզնում. մէկ՝ օրինակ տուողի դեր, և մէկ՝ զուտ շահողի դեր։

Եկան Բաքու հաստատուեցին իրենց մեծամեծ կապիտալով Նոբէլ եղբայրները։ Բայց այդ Նոբէլ եղբայրները կերպարանափոխեցին նաւթային գործը որը պահանջում էր այլ կերպի շահագործութիւն. և ահա կապիտալը գործ դրին նաւթային գործը այլ հիմքերի վրայ դնելու համար, այն հիմքերի վրայ, որ պահանջում է ժամանակիս տեխնիկան և ամերիկական փորձառութիւնը։ Եւ ստեղծուեց նորագոյն Բաքուն։ Նոբէլ եղբայրների օրինակից օգտուեցին տե-

զացիք. Նոքա հետևեցին այն ամենին, ինչին կենդանի օրինակը կարող էր դրդել ասիացի հայի և Թուրքի կաշկանդուած ուղեղը։ Հետևեցին դոքա դրեթէ միայն այն բանում, ինչ որ անմիջական շահ կարող էր տալ և հարստացնել. նորագոյն ձևի հոր փորելը, նաւթանցքներ շինելը, կերոսինի և իւղերի գործարաններ շինելն ու կառավարելը, նաւթատար նաւեր ունենալը Կասպից ծովում, երկաթուղու վագոն-ցիստերն ձեռք բերելը և այլն և այլն։ Այս բոլորը Նոբէլ Ֆիրմայի օրինակի ոյժն էր։ Օտարը եկաւ և գործ ստեղծեց ու սովորեցրեց։ Նոբէլը Բաքուի բարերարն եղաւ և բնիկներից էլ աւելի հարազատը։

Կարիղ էր որ և է խնդիր ծագել այստեղ, Եւ ոչ մի խնդիր։

Բայց ահա աւելի քան տասնեակ տարի դորանից անց եկաւ հաստատուեց Բաքու մի այլ օտար—Ռոթշիլդ Ֆիրման։ Ինչ էր Ռոթշիլդների նպատակը։ Միմիայն կապիտալը արդիւնաշահ տեղ դնել, և փորձել նաւթի առուտուրը իւր ձեռքը գցել, մոնոպոլիական դիրք ստեղծել նաւթի առուտուրի մէջ։ Եթէ միայն նաւթային գործի շահը այդ պահանջէր, անշուշտ նաև Ռոթշիլդը կարող էր օգտակար գործ կատարել մեր երկրում. բայց քանի որ այդպիսի մի մոնոպոլիական դիրք բնաւ անհրաժեշտ չէր կարող լինել նաւթային գործին,—ուրեմն Ռոթշիլդներից Բաքուն չպիտի ունենար օգուտ, եթէ միայն չունենար վնաս։ Մենք թողնում ենք Բաքուայ նաւթային գործը—մեզնից աւելի ի մօտոյ ճանաչողներին դատելու թէ արդեօք մեր հայեացքը Ռոթշիլդ Ֆիրմայի մասին որքան ճիշդ է և որքան սխալ. բայց մենք ներկայ յօդուածում նպատակ չունինք իւրաքանչիւր մի օտար Ֆիրմայի օգտակարութեան և վնասակարութեան չափը որոշելու, այլ մենք օրինակներ վերցնում ենք միմիայն տեսականապէս լուծելու համար օտար կապիտալիստների մեր երկիրը մուտք գործելու խնդիրը։

Ենթադրելով, ուրեմն, որ Նոբէլի ու Ռոթշիլդի մասին մեր ասածը ճիշդ է, մենք ասում ենք՝—Նոբէլը օտար է, բայց բնիկից աւելի հարազատ է մեր երկրի համար. նա իւր մեծ կապիտալով չեկաւ խլելու, այլ եկաւ ու մի գործ ստեղծեց, որից շահուեց ամբողջ պետութիւնը։ Ռոթշիլդը նոյնպէս օտար է, Կովկասեան հասկացողութիւններից շատ աւելի մեծ կապիտալով,—բայց նորա կապի-

տալը եկաւ միայն ճնշելու ուրիշներին, իւր ձեռքը դցելու ուրիշի ձեռքով նոյնքան լաւ կատարուող գործը, թող թէ նա այդքանին հասնել չկարողացաւ։

Մէկի մէջ տեսնում ենք ստեղծագործական ոյժ, միւսի մէջ լոկ խլելու ոյժ կամ ձգտում։ Եւ եզրակացնում ենք,—մէկը օգտակար է, միւսը վնասակար մեր երկրի համար։ Երբ որ Զոհնը իսկ և իսկ նոյնը պիտի կատարի, ինչ կատարում է Յովհաննէսը, մենք ուրախանալու պատճառ չենք տեսնում, երբ Զոհնը իւր մեծ դրամագլուխով գալիս ու Յովհաննէսից թէկուզ թանկ գնով գնում է սորա նաւթահորերը։

Բայց խնդիր է ծագում. յառաջդիմութիւնը մի՞թէ միայն գործի տեխնիկական մասումն է։ Պատասխանում ենք—ոչ։ Բացի տեխնիկայից, որը կարող է տեղացին իւրացրած լինել, կայ նաև նաւթահորերի ու կերոսինի գործարանների հետ կապ ունեցող հազարաւորների բարօրութեան խնդիրը։ Այստեղ կայ վերաբերմունքի խնդիր դէպի գործի կառավարութիւնը, դէպի գործակատար և բանւոր դասակարգերը, դէպի քաղաքի ու ամբողջ երկրի այն հարցերը, որոնց բաւարար լուծումը զգալի չափով կարող է կախուած լինել այդ հանքատէրերի վերաբերմունքից, և այլն և այլն։ Մի խօսքով այստեղ առաջ է գալիս մեր երկրի լուսաւորութեան խնդիրը ընդհանրապէս։

Այս խնդիրներում, որոնք կարևորագոյն են, մենք նոյնպէս տեսնում ենք օտարի մէջ և օգուտ և վնաս։ Օտար կապիտալիստը միմիայն այն չափով ցանկալի է մեր երկրի համար, որքանով որ նա կարող է օրինակ ծառայել տեղացիներին, այսպէս այն չափով միևնոյնը չէ թէ ինչ օտարներ են հաստատուում մեր երկրում, անգլիացիք թէ ֆրանսիացիք, բելգիացիք, իտալացիք թէ գերմանացիք, թէ պարսիկներ։ Ընդհանուր առմամբ աւելի ցանկալի են անգլիացիք, այն հիման վրայ, որ բանւոր դասակարգը Անգլիայում աւելի բարձր դիրքի վրայ կանգնած լինելով քան որ և է այլ երկրում, նաև անգլիական կապիտալիստները աւանդաբար սովորած պիտի լինեն աւելի ոյժ ու պատիւ յատկացնել բանւոր դասակարգին. վերջինս հարկաւ ինքը պիտի աշխատի իւր մասին հոգս քաշել օրէնքով թոյլատրած ամեն միջոցներով, գլխաւորապէս բանւորական կազմակերպութիւններով, առանց իւր յոյսերը այլոց գթասրտութեանը թող-

նելու, լինեն սոքա օտարերկրեայ թէ բնիկ երկրացի կապիտալիստներ։ Բայց դարձեալ այս կէտում ևս մենք, բարեփոխութեան համար, բնաւ հարկ չենք տեսնում օտարերկրացիների կողմից ամբողջապէս գրաւումը Բալխանու հրապարակի. եթէ միայն օտար կապիտալիստի հաստատուելու հետ Բաքուում արդարև կապուած են այդ կարգի բարեփոխութիւններ, ապա նաև մի քանիսի տուած օրինակը նոյնքան ընդունակ են այդ մտքով փոփոխութիւն առաջ բերելու, որքան մի Նոբէլի օրինակը ընդունակ եղաւ գործի տեխնիկայի մէջ յեղաշրջում առաջացնելու։

Իսկ ինչ վերաբերում է կապիտալիստների մասնակցութեանը երկրիս այլ կարգի պիտոյքների մատակարարման համար, ապա ոչ մի կասկած չի կարող լինել, որ տեղացին, զգալով իրեն զուտակ այս երկրի, իւր զգացմունքներով կապուած այս երկրի հետ, նաև աւելի ջերմ վերաբերմունք կարող է ցոյց տալ դէպի երկրիս մտաւոր ու ոգեկան յառաջդիմութեան գործը, քան օտարերկրացի կապիտալիստը (օտարերկրացի աքցիոնէրը), որը նոյն զգացմունքը կը վերապահի իւր հայրենիքի համար։ Այս կէտում ուրեմն պարտաւոր ենք ընդունել, որ օտարերկրացին լոկ *բացասական* դերի հաւասար չեզոք դեր կը կատարի մեր երկրի համար, թէև դորանով չի ժխտուում, որ օտարերկրացիների աւելի լուսաւոր վերաբերմունքը դէպի իրենց հայրենական գործերը կարող կ'լինէին կրթական բարերար ներգործութիւն անել նաև տեղացիների վրայ, եթէ միայն իրենց հայրենիքի հեռաւորութեան պատճառով՝ նոցա կատարածները թաքնուած չմնան մերայիններին տեսողութիւնից։

Օտար կապիտալիստների մուտքը դէպ մեր երկիրը ոմանք շնորհաւորում են այս տեսակէտով, որ մերոնք վաճառելով իրենց ունեցածը թանկ գնով, *ազատ դրամագլուխ* են ձեռք բերում, որ նոքա պիտի գործադրեն երկրիս մէջ այլ և այլ ուրիշ գործարաններ հիմնելու համար, որպէս ոմանք իրօք այժմ ձեռնարկել են։ Բայց դա մի սխալ եզրակացութիւն է։ Մեզնում ոչ ոք չի ձեռնարկել այնպիսի գործի, որը պահանջէր 5—10—15 միլիոն ռուբլու դրամագլուխ։ Եթէ իրօք մի գործարան—թղթի, կտաւի, շաքարի և այլն, պահանջելու լինի տասնեակ միլիոն դրամագլուխ, արդարև օտար կապիտալիստը, մի տեղացու ձեռքը տասնեակ մի-

լիոն ռուբլի տրամադրելի թողնելով՝ ծառայութիւն մատուցած կը լիներ երկրին։ Բայց իրաք այդ այդպէս չէ։ Մի գործարան կարող է արդիւնաւէտ լինել ունենալով միայն՝ խոշորը՝ կէս և ամենահսկայականը՝ մի միլիոն ռուբլի դրամագլուխ։ Իսկ ներկայիս նաւթատէրերի համար մի բաժնեւոր ընկերութիւն կազմելը որ և է կէս միլիոն և նոյն իսկ մի միլիոն ռուբլի դրամագլխով — դորա համար բնաւ չի պահանջւում անգլիական մեծ կապիտալների օգնութիւնը։ Բաւական է ասելը, որ խոշոր նաւթատէրերի (սոսկանան անհատների և թէ ընկերութիւնների) համար տարեկան մի քանի հարիւր հազար ռուբլի զուտ արդիւնք ստանալը մի սովորական երևոյթ է[1], իսկ կան, որ ստանում են տարեկան կէս միլիոնից աւելի և նոյն իսկ երբեմն դորա կրկնապատիկը ու դեռ դորանից էլ աւելի։ Միջակ ու խոշոր ֆիրմաների համար, որոնց թիւը սակայն մի տասնեակ չէ, այլ շատ մեծ է, ունենալ հարիւր հազարներ և միլիոններ իբրև զուտ զուտարդ, առանց ֆիրման դադարեցնելու, միմիայն իրենց բարի կամքի գործ է։ Եւ եթէ այս երկու տարիներում օտար կապիտալիստները տեղացիներից նաւթահանքեր են ձեռք բերել, ստացած միլիոնները ամենամեծ մասով դարձեալ գնացել են նոր հորեր փորելու և նման գործերի, այս պարզ պատճառով, որ ներկայ պարագաներում նաւթային գործը տալիս է կապիտալիստին աւելի հաստատ և աւելի խոշոր զուտ արդիւնք, քան որ և է մի այլ գործարանական ձեռնարկութիւն։

Այդ այդպէս լինելով՝ հարց է ծագում, թէ ուրեմն ինչ վնաս, եթէ օտար խոշոր կապիտալիստները նաև մեծ թւով գան ու հաստատուեն Բաքւում, և կամ աւելի լաւ ասած՝ ուր է վերջանում նոցա տուած օգուտը և ուր է սկսում վնասը, մեր տեսակէտով։

Վնասը, կ'ասեմք մենք, կ'սկսի այն կէտից, երբ օտար կապիտալիստների ոյժը շատ հզօրանալով՝ նոքա իրենց ձեռքը կը գցեն նաւթի առուտուրը։ Անկարելի չէ, և նոյն իսկ հաւանական է, որ

---

[1] Օգտուում ենք այս քանի օրերս Торгово-промышленный Вѣстникъ թերթում հրատարակած տեղեկութիւնից, որից երևում է, որ Բաքուայ Մ. Շիբաեւ և Էնկ. ֆիրման (մինեռալային իւղեր պատրաստող), ունենալով ընդամէնը 2½ միլիոն ռ. հիմնական դրամագլուխ, ստացել է 1897—1898 թուականի հաշուական տարում 456.556 ռ. զուտ արդիւնք։

անգլիական ֆիրմաները, հաստատելով Բաքուում, միանան իրար հետ իբրև նաւթատէրերի անգլիական գաշնակցութիւն և գէթ արտասահմանի նաւթի առուտուրը իրենց ձեռքը գցեն, ու այդպիսով տեղական նաւթատէրերի համար գների թելադրող հանդիսանալ։ Եւ որովհետև նաւթահորերի գները նաւթի գների հետ են կապուած՝ անգլիացոց համար նոյնքան աւելի հեշտ կը լինի նաւթային հողերը իրենց ձեռքը գցել, որքան նոքա ոյժ կ'ունենան նաւթի գների վրայ ազդելու, և այդպիսով արդէն հրապարակի տէրը դառնալու։ Ոչ միայն անգլիացոց աւելի մեծ փորձառութիւնը և բարձր կրթութիւնը կ'նպաստի նոցա իրար հետ հեշտութեամբ միանալ այդ գործում, այլ և այն հանգամանքը նոցա կ'նպաստի արտասահմանում Բաքուայ նաւթի մենաւաճառութիւնն ունենալ, որ Բաքուայ նաւթը, արտասահմանում, վաճառւում է ամենամեծ մասամբ Անգլիական և կամ Անգլիային ենթարկուած երկիրներում, ինչպէս Հնդկաստանն է և Եգիպտոսը, ուր անգլիական ֆիրմաներին անգլիական կառավարութիւնը անշուշտ կ'տայ դիւրութիւններ, որ նա կ'զլանայ տալ մեր երկրացիներին։ Եւ նոյն իսկ այն ամենքին զարմացնող երևոյթը թէ ինչու անգլիացիք և ոչ այլ ազգերի կապիտալիստներ սկսել են այժմ ներս խուժել Բաքու,—պէտք է բացատրել նոյն հանգամանքով. մեր նաւթը շատ չի գնում Եւրոպա, այլ Արևելքի երկիրները, ուր անգլիական տիրապետութիւնն է կամ ազդեցութիւնը։

Կամ արդեօք այդպիսի վտանգ ներկայումս. այդ կարող է յայտնի լինել միմիայն նաւթային գործի զեկավար շրջաններին. մենք կամեցանք միայն մեր տեսակէտը որոշել մի խնդրի դիմաց, որը ներկայումս զբաղեցնում է նաև ֆինանսական մինիստրութեան ու նորա հետ նաև բարձր կառավարչական շրջաններին առհասարակ։ Սակայն, մինչև որ մի այդպիսի վտանգ հաստատուած չի լինիլ —օտար կապիտալիստների մուտքը մեր երկիրը նաև նաւթարդիւնաբերութեան գործում ոչ մի լուրջ ընդդիմադրութեան հանդիպել չի կարող։

Կարծում ենք, որ սորանով պարզ կացուցինք թէ մեզ համար կատարելապէս նոյնը չէ թէ օտար կապիտալիստների մուտքը մեր երկիրը որչափով օգտակար և որչափից դէնը՝ արդէն վնասակար և նոյն իսկ վտանգաւոր կարող է լինել։

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ԴՐԱՄԱ

ԵՒ

ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐԻԵՍՏ

(Հայոց ներկայացումները Բաքուում: 1898/99 թ. ձմեռային սեզոն: Թատրոն Թաղիեւի)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

I

Հոկտեմբերի 3, շաբաթ. «Հայրենական տուն» (Heimat), դրամա չորս գործողութեամբ, հեղ. Զուդերմանի. թարգմ. Ս. Թառայեանի։

Վերն լիչած պիեսայով բացուեց 1898/99 թ. թատրոնական սեզոնը Բաքուում։

Զուդերմանը մէկն է Գերմանիայի ժամանակակից դրամայի երեք գլխաւոր ներկայացուցիչներից։ Եթէ Ֆոն-Վիլենբրուխը բարձր դասակարգի, արիստոկրատիայի ողբերգակն է և Հաուպտմանը բանւոր դասակարգի զօրաւիգը, ապա Զուդերմանը, իբրև բուրժուազիական կեանքի հետազօտող, կանգնած է այն երկուսի մէջտեղը։ Տարիքով էլ այս վերջինը միջնակն է. սա վոքր է առաջինից, բայց մի քանի տարով մեծ երկրորդից։ Այս թատերական եռապետութեան շուրջը խմբուած են նոր և երիտասարդ ոյժեր, որոնցից, անշուշտ, բան է սպասւում ապագայում։ Առհասարակ մի առանձին կենդանութիւն է նշմարւում դարավերջի տասնեակ տարիներում ոչ միայն Գերմանիայի, այլ և ընդհանրապէս Եւրոպայի դրամատուրգիայի մէջ, մանաւանդ Սկանդինաւիայում, ուր Իբսէնը և Բիեռնսոնը, երկու հսկաների պէս, իրանց առոյգ ձայնը լսել տուին հիւսիսից նաև հեռաւոր Կովկասի բնների վրայ։ Բայց այդ մասին յետոյ։ Ցարմար առիթից օգտուելով, մենք, երևի, մի այլ անգամ կըվերադառնանք այդ խնդրին և կըտանք մի համառօտ ակնարկ եւրոպական ժամանակակից թատերգութեան։

Այժմ մեր խօսքը Զուդերմանի մասին է։ Վիպագրութեան մէջ նա ունի աշխատութիւններ («Հոգա», «Անցածը անցաւ» և այլն), և նորա այս տեսակի գրածքները ներկայումս ամենաշատ կարդացող գրքերիցն են Գերմանիայում. բայց մեր հասարակութեան համար նորա անունը կապած է համարեա բացառապէս ողբերգութեան հետ։ Նորա «Պատիւը» մի քանի անգամ երևացել է մեր բեմի վրայ. նորա «Սոդոմի կործանումը», երևի, կըտեսնենք այս սեզոնում, քանի որ բեպերտուարի մէջ, ի թիւս այլ թարգմանական պիեսաների, լիշած է նաև այդ թատերգութիւնը։ Տեսանք այժմ առաջին անգամ և «Հայրենական տունը», որի ներկայացման մասին մենք կամենում ենք հաղորդել ընթերցողին մեր տպաւորութիւնները։

Ով ծանօթ չէ բովանդակութեանը, նորա համար վատ չէր լինիլ իմանալ պիեսայի գործողութեան կարևոր մոմենտները։ Գերմանիայի մի մեծ գաւառական քաղաքում կատարւում է երաժշտական տօնախմբութիւն, որի հերոսուհին է մի հռչակաւոր երգչուհի՝ գերմանուհի իւր ծագումով, բայց անունը իտալական։ Երգչուհու հայրենական տանը խմացում է, որ նա նոյն այդ ընտանիքի հարազատ զաւակն է։ Թէ հայրը և թէ աղջիկը իրար տեսնել են փափագում։ Բայց երկուսի հպարտութիւնն էլ թոյլ չէ տալիս հաշտութեան առաջին քայլն անելու։ Աւացի հաշտութեան այն պատճառով, որ հայր և աղջիկ տասը տարի միմեանցից բաժան են, իրար հետ խռով։ Եւ ահա ինչն է եղած այդ անբնական գրութեան շարժառիթը։ Տարիներ առաջ աղջիկը մերժած է լինում մի երիտասարդի առաջարկութիւնը, հոր կամքի հակառակ։ Տեղի է ունենում անախորժ ընդհարում, որից լետոյ աղջիկը հեռանում է հայրենական տնից, լինում է Բերլինում, լարաբերութիւն է սկսում Ֆոն-Կելլեր անունով մի պարոնի հետ, որը, սակայն, դաւաճանում է իւր սիրուհուն, և սա մնում է անպաշտպան ու անտէր իւր մանկան հետ միասին։ Այրուստը ապահովելու համար մտնում է կաթէ-չանտանական մթնոլորտը, ուր, չնորհիւ իւր լաջողակ ձայնի, աւուն է ձեռք բերում և լետոյ, կամաց-կամաց բարձրանալով իւր արուեստի մէջ, սկսում է նշանաւոր երգչուհու հռչակ ու համբաւ վայելել։

Եւ ասացի, որ հպարտութիւնը թոյլ չէր տալիս հաշտութեան առաջին քայլն անելու։ Բայց մէկի ծնողական զգացմունքը և շրջապատողների լորդերը, մանաւանդ պատտորի համոզիչ խօսքերը, միւսի որդիական սէրը լաղթող են հանդիսանում, և տասը տարուայ անջատումից լետոյ, փափագած աղջիկը կրկին հայրենական տանն է, իւր հոր, քրոջ, սիրելիների գրկումը։

Զիջանելով մերձաւորների թախանձանքին, երգչուհին համաձայնում է հիրանոցից փոխադրուել իւր հայրենական տունը, բայց մի պայմանով, որ նորա անցեալից ոչինչ չհարցնեն։ Բայց հայրը անտարբեր հայրերից չէ։ Նա պիտի իմանայ, թէ իւր աղջիկը որքան անարատ է վերադարձել

հոգով և մարմնով։ Եւ ահա սկսում է քրքրել նորա անցեալը։ Եւ որքան աւելի մօտ է ծանօթանում աղջկայ անցեալին, այնքան աւելի և աւելի խոր է խոցոտւում հօր բարոյական զգացմունքը։ Նա պատրաստ է մենամարտի կոչել այն ստահակին, որ իւր աղջկան դալթակղեցրել է և ապա ձգել։ Նա պէտք է ստիպի երիտասարդին կամ ջնջել իւր տան պատի վրայից ամօթալի բիծը կամ կուրծքը դէմ յանդիման պահել ատրճանակին։ Իսկ աղջիկը, չնայած այն խոր ատելութեան, նոյն իսկ արհամարանքին, որ տածում էր դէպի իւր նախկին սիրոյ առարկան, ընկճւում է հօր պահանջի առաջ և խօսք է տալիս ամուսնական լուծը կրելու ատելի մարդու հետ։ Բայց անարժան ամուսինը պայմաններ է դնում՝ ոչ միայն ձգել սիրած բեմը, այլ մինչև անդամ հարազատ մանկան հետու պահել աչքի առաջից, որպէս զի ապօրինի զաւակը, բամբասանքների առարկայ ստեղծելով ծնողների համար, արգելք չլինի իւր փառասիրական ձգտումներին։ Երգչուհին, որը մինչև այդ ժամանակ, զիջումներ էր անում, թէև այդ զիջումները հեշտ չէր լինում կորզել նորանից, այն ստոլեան բորբոքւում է իւր ապագայ ամուսնու դարշելի և ցած առաջարկութիւնից, որ իսկոյն ցոյց է տալիս նորան դէպի դուռը։ Հայրը ստիպում է իւր փեսային ետ վերցնել պայմանների երկրորդ կէտը, վերաբերեալ ապօրինի զաւակին։ Բայց աղջկայ համար արդէն պարզ է, որ ապրել մի մարդու հետ, որը իւր հարազատ զաւակին ամաչում է իւրը անուանել աշխարհի առաջ, հնար չկայ։ Նա յայտնում է իւր հօրը, թէ Ֆոն-Կելլերը միակ անձը չէ, որին նուիրուած է եղել։ Մի այսպիսի բարոյական հարուած էր պէտք, որպէս զի հայրը, մանացու կաթուածի արդէն վազուց տրամադիր, ջղաձգութեան մէջ վայր ընկնէր և ատանդէր հոգին։

Այս է դրամայի ուղն ու ծուծը։ Մնացածը—մանրամասնութիւններ են։ Պիեսայի ամբողջ հետաքրքրութիւնը կազմում են այն ընդհարումները, որոնք տեղի են ունենում հօր և աղջկայ միջև։ Մի կողմից ազատ կեանքի ոգի, անզուսպ քմահաճոյք և չուլած հպարտութիւն, միւս կողմից՝ զօրեղ կամք և անկուն ոգի, որ իւր բոլոր էութեամբ դէմ է այն ամենին, ինչ հակառակ է իւր միջավայրի ընդունած բարոյական հասկացողութիւններին։

Աղջիկը համբաւաւոր երգչուհի է, հպարտ իւր փառքով, անսովոր զիմադրութեան. մի էակ, որ սիրում է ապրել «ազատ թռչունի» պէս, ապրել լիքը, կատարեալ կեանքով, ազատ նախապաշարմունքից և բարոյական կաշկանդումներից։ Քամել վայելչութեան բաժակը մինչև վերջին կաթիլը—ահա նորա գոյութեան նպատակը։ Նա ատելով ատում է այն բոլորը, ինչ կարող է խոչնդոտ լինել այդ նպատակին հասնելու, և ամենից առաջ—վիշտը։ Ահա ինչու Նա հեգնում է պատասրի «էլեգիական տոնը», զարմանում է, որ իւր հայրենական տանը մինչև անդամ կարգին ծիծաղել չգիտեն, նորան դուր չէ գալիս, որ մարդիկ թթւած երեսով են

նայում աշխարհին։ Նա այն աստիճան ընտելացել է իւր նոր միջավայրի հասկացողութիւններին, ընդունուած ձևերին, մինչև անգամ խօսակցութեան եղանակին, որ պատորի զօրեղ միջնորդութիւնն էր հարկաւոր, որպէս զի նա համաձայնէր դէթ մի քանի օրով տեղափոխուել հայրենական տունը։ Կեանքը նորա համար դարձել էր մի ուրախ կատակ, և նորան դեռ հարկաւոր էր հասկացնել, որ կան դէպքեր, երբ նա պարտաւոր է լուրջ վերաբերուել լուրջ մարդկանց։ Բայց թէ որչափ հարուստ սիրտ է դրուած այս «աղատ թռչունի» մէջ, այդ երևում է նորանից, որ նա, ի սէր իւր ծերունի հօր, ամեն բան պատրաստ է զոհել՝ իւր անկախ կեանքը, իւր սիրած աստարէզը, իւր փառքը...

Այսպէս ենք մենք հասկանում Մագդալի տիպը։

Բոլորովին ուրիշ բնաւորութիւն է նորա հայրը—Շեարցէն։ Կամքով աւելի զօրեղ, քան թէ աղջիկը։ սորա հակապատկերն է նա իւր հասկացողութիւններով, իւր վերաբերմունքով դէպի կեանքը և բարոյականութեան խնդիրները։ Դա հին սովորութեանց տէր մի ծերունի է, որը մխիթարութիւն է գտնում քրիստոնէական բարեգործութեան մէջ, մի աւանդապահ քաղաքացի, որի կարծիքով ընտանիքի կապերը և հեղինակութիւնը խախտելու վտանգի մէջ են, որի զայրոյթը չարժում են ժամանակակից դաղափարները՝ «ժառանգականութիւն», «Պոլութեան կռիւ», «Անհատի իրաւունքներ», և այս նոր դաղափարների մէջ նա տեսնում է ժամանակի «բողոքող ոգին»։ Չկայ նորա համար աւելի մեծ թշառութիւն, աւելի խայտառակութիւն, քան թէ բարոյական սկզբունքների խախտումը ընտանիքի մէջ։

Անհաւասիկ կենտրոնական երկու անձը, որոնց ընդհարումներից ծագում է «Հայրենական տան» ամբողջ դրամատիզմը։

Տեսնենք այժմ, ինչպէս կատարեցին իրանց պատասխանատու դերերը տ. Սիրանոյշը (Մագդա) և պ. Աբէլեանը (Շեարցէն)։ Մենք տ. Սիրանոյշի տաղանդի գնահատողներից ենք։ Իւր դերերի համար նա բեմական շատ լարմարութիւններ ունի. ձայնը լայող և դրամատիկական. արտասանութիւնը կանոնաւոր և պարզ. ձևերը վայելուչ և չափաւոր։ Բայց այսուհանդերձ, բարձր դեղարուեստի տեսակէտից, մենք չենք կարող ասել, որ նորա մէջ ստեղծագործող ոյժը բաւականաչափ կորով ունենար։ Մենք իզուր աշխատեցինք ճանաչել Մագդալին։ Նորա խաղի մէջ Զուդերմանի Մագդան չերևաց բեմի վրայ։ Բեմի վրայ «Հայրենական տան» ազատ թռչունը չերևաց։ Նորա գորովը, փայփայանքը, նորա կարօտալից սիրոյ արտայայտութիւնները, հարկաւ, գեղեցիկ էին, բայց, այդ զգացմունքներից դուրս, նա միայն մատնում էր խակականին կամ բոլորովին սխալ տոն էր վերցնում։ Գեղարուեստական միջավայրի դրոշմը չէր նշմարուում նորա ձևերի վրայ։ հոչակաւոր երգչուհու առանձնայատուկ լեզուն չէր չեչտուում խօսակցու-

թեան ժամանակ—չէ՞ որ Մադդան այնքան սիրում է համեմել իւր մայրենի լեզուն իտալական և ֆրանսիական բառերով ու դարձուածներով։

Նորա չոլուած ինքնասիրութիւնը և երես առած երգչուհու քմահաճոյքները այլի չէին զարնում. բաւականաչափ կծու չէր նորա հեգնութիւնը, բաւականաչափ ազդու, սպանիչ չէր ստելութեան և արհամարանքի հալեցքը. դգացումների արագ փոփոխումները չէին ընդդեմում։ Տ. Սիրանուշի ընդհանուր խաղի մէջ հարկաւոր էր ներշնչել աւելի մեծ կենդանութիւն և ամենից քիչ-«էլեդիական տոն»։ Վիշտը երկար միջոց չպիտի տիրապետէր նորա հոգուն. այդ բանին նա սովոր չէ։ Բայց կային և ուրիշ հանգամանքներ, որոնք թուլացնում էին խաղի տպաւորութիւնը և նեմացնում դերի տիպականութիւնը։ Տեղ տեղ դերասանուհու խօսքերը չէին լսւում նոյն իսկ առաջին կարգերում։ Դա զարմանալի չէ?

Հանդիսականը դեռ ներողամիտ է գտնւում, երբ լսողութիւնից վրիպում են ոչ այնքան կարևոր խօսքեր. բայց երբ այդ խօսքերը վճռական են, կամ բնորոշ կամ անհրաժեշտ գործողութիւնների կապը ըմբռնելու համար, նոքա պիտի արտասանեն այնպիսի խնամքով, որ դահլիճի ամենաեսին նստողները պարզ որսչեն նոցա իմաստը։ Դա հանդիսականների պահանջը և իրաւունքն է։

Բայց սա մի թերութիւն է, որ յատուկ է մեր դերասաններից գրեթէ իւրաքանչիւրին, և այդ առաջ է գալիս յաճախ այն հանգամանքից, որ իրանք դերակատարները, լաւ լսած չլինելով յուշարարին, կուլ են տալիս խօսքերը և շրթունքը շարժում, իբր թէ տեսէք, բան ասացինք։

Բեմի վրայից արտասանած ասեն մի խօսքը պէտք է լսի ամեն մի հանդիսական։

Լսենք, թէ ինչ է ասում ֆրանսիական մի փորձառու արտիստ բեմական արուեստին վերաբերեալ մի յօդուածի մէջ (Ալբէր Լամբէր—«sur les planches»—բեմի վրայ)։ «Հասարակութիւնը միշտ գոհ է մնում այն դերասանից, որի խօսքերը բոլորովին պարզ լսում է, և շատ դերասաններին, որոնք միայն այդ տաղանդն ունին, չնորհիւ միայն դորան, յաջողել է հաստատուն գիրք ստեղծել բեմի վրայ»։

Շարունակենք ընդհատածը։

Տ. Սիրանուշի դիմադարձն էլ մեզ թւաց անլսելի։ Իսկ լաւ, տիպական գրիմը որքան անհրաժեշտ պայման է դերի յաջողութեան համար։ Վատ գրիմը միշտ ընտսում է գործած տպաւորութեան։

Կրկին մի պակասութիւն, որի վրայ մեր դերասաններից շատերի ուշադրութիւնն ենք հրաւիրում։ Մի քանիսը միայն բախտաւոր բացառութիւն են կազմում, մանաւանդ մենք գոհ ենք այդ կողմից պ. Արկլեանից և պ. Վրոլրից, որոնք երբեմն նոյն իսկ վարպետութեամբ կերպարանափոխում են իրանց դէմքը, դերի համապատասխան։

Տ. Սիրանոյշի գրիմը բնորոշ չէր մի հռչակաւոր երգչուհու համար՝ գոնէ Զուղերմանի Մագդայի համար։ Ինչու նա չիկահեր էր? Մագդան սևամաղ է և սևաչեայ։ Հեղինակը այդպէս է կամեցել և, մեզ թւում է, ոչ առանց նպատակի։ Կրտսեր քրոջը, այն, կրսաղէին չէկ մազերը. նա բնութեամբ հանգիստ է, հեզ է և մի բուրժուական ընտանիքի իսկական զաւակ։ Բայց այդ ընտանիքի մէջ դիսոնանս մտցնողը Մագդան է։ Եւ ինչպէս բնութեամբ և իւր ձգտումներով սա բոլորովին տարբեր էակ է, թող ուրեմն իւր արտաքինով էլ այդ տարբերութիւնը չեշտի։ Վերջապէս, կարծում ենք, մենք աւելի մօտ կըլինինք բնականին, եթէ դեղարուեստի մէջ ևս սև աչքերը և սև մազերը ընտրենք աչխոյժ և կրքոտ բնաւորութեան համար, իսկ կապոյտ աչքերը և չէկ մազերը թողնենք հանգիստ և խաղաղ բնաւորութեան։

Երկրորդ կենտրոնական անձը Մագդայի հայրն է, որի դերը կատարում էր պ. Աբէլեանը։

Իրաւ է, Եւարցէն բռնակալ հայր է, դիւրադրգիռ բնաւորութիւն, զայրացկոտ ջղայնութեան չափ, բայց այսուհանդերձ նա գիտէ և ուրախ ժպիտով խօսել, գիտէ կատակել, սիրել, փայփայել։ Առաջին գործողութեան մէջ նա, ճիշտ է, կրում է յուզումներ, օրինակ, երբ ժամանակակից գաղափարները և բարք ու վարքի անկումն է դատափետում։ Բայց ի՞նչ են այդ յուզումները համեմատած զգացման այն բորբոքումների հետ, որ նա պիտի կրէր յետոյ? Նորա սիրտը սկսում է տակն ու վրայ լինել սակաւ առ սակաւ, դրամայի զարգացման հետ միասին։ Որքան աւելի ակներև է դառնում աղջկայ արատաւոր կեանքը անցեալի մէջ, այնքան աւելի և աւելի մեծ ծաւալ է ստանում հօր զայրոյթը։ Պարզ է, որ հեղինակը առաջադրում է արտիստին մի հոգեբանական խնդիր—ցոյց տալ կրքի աստիճանաբար զարգանալը։ Մենք այդ չըտեսանք պ. Աբէլեանի խաղի մէջ! Ձայնի բարձրացման աստիճանը, որով նա իւր բարկութիւնն էր յայտնում, համարեա նոյնն էր բոլոր գործողութիւնների մէջ։ Մինչդեռ, եթէ այդ ձայնը աճէր crescendo, ճակատի մռայլը թանձրանար սակաւ առ սակաւ, պարզ է, որ դա կըլինէր աւելի բնական, աւելի էսթետիկական, և ապաւորութիւնն էլ անհամեմատ աւելի ազդու կըլինէր։ Արդէն սկզբից դերակատարը սխալ տոն վերցրեց, և դորա համար էլ տուժեց Նորա խաղը մինչև վերջը։ Զգացման և դէմքի արտայայտութեան միօրինակութիւնը հետաքրքրութիւն չէ շարժում, ձանձրալի է և յոգնեցուցիչ։ Ահա որտեղ էր թագնուած պ. Աբէլեանի խաղի էական սխալը! Վերջին արարածի սկիզբն է։ Աղջկայ հետ ունեցած վիճաբանութիւնից յետոյ, նա դուրս է գալիս օրօրելով, գունաթափ, դիմագծերը ներքին յուզումներից աղաւաղած, ձայնը կերկերուած բարձր դոռդոռալուց—և այդ առանց խօսքի նոյն իսկ մի դեղանկարչական պատկեր է։ Բայց արդեօք այդպէս երևաց

դերակատարը? Բնաւ ոչ։ Նա երևաց այնպէս, ինչպէս շատ անգամ երևացել էր մինչև այդ—ըստ երևութիւն բարկացած—և միայն։

Չնայած այս բոլորին, այնուամենայնիւ մենք հաւատացած ենք, որ Շեարցէն պ. Արէլեանի իսկական ամպլուային է վերաբերում։ Այդ դերը նա կարող է վարպետութեամբ կատարել, եթէ պատրաստի այնպէս, ինչպէս հարկաւոր է։

Լաւ չէին ուսումնասիրուած նմանապէս երկրորդական դերերը։ Պ. Ցարութիւնեանը, որ առաջին արարածում բաւական տանելի էր, վերջին գործողութեան մէջ, Շեարցէի հետ խօսելու ժամանակ, աչքերով և յօնքերով այնպիսի տգեղ և անտեղի ծամածռութիւններ էր անում, որ հանդիսականին կատարեալ ապշութեան մէջ էր թողնում, թէ ինչ է նշանակում այս բոլորը։ Ֆոն-Կելլերը, որի դերը նա կատարում էր, ունի պաշտօնի մէջ բարձրանալու իւր մտածած ծրագիրները, ունի անափառութիւն, բայց չիմարներից չէ։ Ստորութիւնը և չիմարութիւնը նոյնանիշ հասկացողութիւններ չեն։ Պէտք է չափաւորել ձևերը և առհասարակ շարժուածքը, եթէ չեք կամենում, որ խաղից, տիպարի փոխանակ, ծաղրանկար դուրս գայ։ Պատորի դերը կատարում էր պ. Ստեփանեանը։ Սա էլ մի ուրիշ ծաղրանկարութիւն էր։ Երկար մի խոց, էչ չեմ լիշում, որքան, Մագդալի մօտից մի պատկառելի հեռաւորութեան վրայ կանգնած, նա խօսում և խօսում էր մի լար եղանակով։ Ոչ մի քայլ առաջ, ոչ մի քայլ ետ, ձեռքի ոչ մի շարժում։ Ձայնը ոչ մաղաչափ բարձր, ոչ էլ ցածր։ Եւ այսպիսով նա կարծում էր, որ կարող է խելքի բերել մի հռչակաւոր երգչուհու, որը սկզբում մինչև իսկ հեգնութեամբ և ծաղրով էր խօսում նորա հետ։ Ճշմարիտ է, հեղինակը ներկայացրել է պատորին իբր սառը և անվրդով մի անձ, բայց դորա սահմանը նա չէ նշանակել. այդ նա թողել է դերասանի հոգեբանական հոտառութեան։ Նորա ձայնին և խաղին պակասում էր այն կորովը, որի շնորհիւ արտասանած խօսքերը համոզիչ պիտի լինէին Մագդալի համար։ Միւսների համար էլ մի առանձին նպաստաւոր խօսք չունինք ասելու։ Տ. Փառանձէմը կամ չէր կարողանում ընդգծել Շեարցէի կնոջ կանացի ինամառութիւնը կամ չէր մտածել այդ մասին. բայց այդ նա սառն էր աւելի, քան թէ պահանջւում էր դերից։ Թող թէ նա խորթ մայր է, բայց միևնոյն ժամանակ այն կանանցից չէ, որոնց անտարբեր և սառը բնաւորութիւնը հեղինակները դիտմամբ ընդծում են։ Օր. Վարդուհին լաւ կըլինէր, եթէ այնքան բարկացկոտ չըլինէր։ Պ. Աղալեանը (Մագդալի քրոջ նշանածը) ունի բեմական ձայն և վալելուչ գէմք։ Միայն թող չտկէ իւր ձևերը, որպէս զի ձևերն էլ վալելուչ լինին. և ձևերը չտկելու համար ամենից առաջ հարկ կըլինի չափաւորել այդ ձևերը։ Օր. Մարի-Հրանուշը այն դերասանուհիներից չէ, որ դեր փճացնէ։ Բայց պէտք է յայտնենք և այն, որ նրան աւելի սաղում և ուրեմն աւելի լաջողում են

չարաճճի, արագաշարժ, կենդանի և, եթէ կուզէք, միամիտ ու շաղակրատ բնաւորութիւնները, քան թէ հեզ ու հանդարտ և սակաւախօս անձանց դերերը։

Ներկայացումը մենք լաջողած չենք համարում։ Դա մի խառը և անորոշ երազ է լիշեցնում. իսկ այդպիսի երազը շատ շուտ ցնդում է լիշողութիւնից։

«Հայրենական տունը» բեպերտուարի մնալուն պիեսաներից կարող է լինել։ Միայն անհրաժեշտ է, որ նա աւելի մեծ նախապատրաստութեամբ կրկին երևալ բեմի վրայ։

Հոկտեմբերի 7, չորեքշաբթի. Արդիւնաւոր պաշտօն, կոմեդիա հինգ գործողութեամբ, հեղ. Օստրովսկու։

Դա մեր թարգմանական բեպերտուարի ամենահին պիեսաներից մէկն է, մեր հասարակութեանը լաւ ծանօթ, ներկայացուած, եթէ չենք սխալւում, Ադամեանի և Մնակեանի օրով, և ռուսաց լայտնի ողբերգակի ամենալաջող թատերգութիւնների շարքումն է։

Նորա մէջ դուրս բերուած կաշառակերութիւնը՝ լանձին Վիշնևսկու և բոլոքը այդ արատի դէմ՝ լանձին համալսարանական երիտասարդ ծաղովի, այն թեմաներից են, որոնք շուտով չեն հնանում, քանի որ ինքը կեանքը դորա համար նիւթ է արտադրում։ Կաշառակերի տիպը վաղուց է, որ գրական մշակութիւն է ստացել ռուսաց մատենագրութեան մէջ։ Մի դար առաջ Կապնիստն էր իւր մի կոմեդիայով („Ябеда“) հասարակութեան ծաղրին մատնում այդ արատը։ Եւ ի դէպ. Նորերս լրացաւ այս պիեսայի հարիւրամեակը, և կոմեդիան սեպտեմբերին ներկայացուեց մայրաքաղաքի Ալէքսանդրեան թատրոնում։ Յետոյ քիչ չէ ծիծաղել այդ բարոյական ախտի վրայ և Գոգոլը («Վերաքննիչ»—„Ревизоръ“) կոմեդիայի մէջ։ Այսպէս ուրեմն, մի կողմից թեմայի կենսունակութիւնը, միւս կողմից վարպետի վրձինով նկարուած տիպերը և, վերջապէս, հէնց պիեսայի հետաքրքրական սիւժէն պայմանաւորում են Օստրովսկու թատերգութեան լարատևութիւնը բեմի վրայ։ Բայց զարմանալի բան։ Ասում են, որ անցեալ սեզոնին այս պիեսայի ներկայացման շատ սակաւ հասարակութիւն է եղած թատրոնում։ Այս տարի ներկայացրին—կրկին թափուր նստարանների առաջ։ Երկուսից մէկը. կամ դորա պատճառը պատահական հանգամանքներ են եղած և կամ տեղիս հասարակութեանը դուր չէ գալիս «Արդիւնաւոր պաշտօնը»։

Դերակատարների խաղի քննութեան վրայ երկար կանգ առնելու նպատակ չունինք։ Ամենքը բաւարար կերպով, մի քանիսը մինչև անգամ շատ կոկ կատարեցին իրանց դերերը։ Մանաւանդ դուր եկաւ մեզ պ. Արաքսեանը (Իւսով) և լետոյ օր. Վարդուհին (Ֆելիսատա Դերասիմովնա)։ Առաջինի գրիմը վերին աստիճանի տիպական էր։ Նորա մարդահաճ հա-

չեացքները, երբ մեծաւորի հետ էր, նորա հովանաւորող տոնը աւելի սար ատիճանաւորի վերաբերմամբ, նորա հեգնական խօսակցութիւնը ազատամիտ երիտասարդի հետ և, վերջապէս, նորա ինքնագոհ կերպարանքը կանանց շրջանում—այս բոլորը գեղեցիկ էր։

Օր. Վարդիթերը (տիկ. Վիշնեսկայա) և պ. Յարութիւնեանը (Վիշնեսկիյ) պէտք է աշխատէին լաւ ընդգծել այն անբնական դրութիւնը, որ ստեղծուել է երկու ամուսինների մէջ, առաջինը՝ չեշտելով իւր վիշտը և ատելութիւնը, իսկ երկրորդը՝ փոխադարձ սիրոյ փափագը։

Դլխաւոր դերը (Ժադով) կատարում էր պ. Աբելեանը։

Սա, պէտք է ասել, մեզ չգոհացրեց այն չափով, որչափ մենք սպասում էինք։ Նորա խոշոր պակասութիւնը սառնութիւնն էր, սրտով չէր խաղում։ Սակայն դորա պատճառը գուցէ պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ նա ստիպուած էր կատարել դերը համարեա դատարկ դահլիճի առաջ. իսկ դատարկ դահլիճը ոգեորութիւն մեռցնելու ընդունակ է։ Այսպէս թէ այնպէս, պ. Աբէլեանը ցանկալի տպաւորութիւն չգործեց։

Ոչ երիտասարդին լատուկ ջերմութիւն նորա բողոքների մէջ Լեսովների և Բէլոգուբովների դէմ, ոչ բաւականաչափ դառնութիւն նորա հեգնութիւնների մէջ, ոչ խոր զգացուած տանջանք ցած ընկնող հոգու, երբ նա հարկադրուած է տեսնում իրան թուլութեամբ զիջանել իւր կնոջ պահանջին՝ արդիւնաւոր պաշտօնի հետամուտ լինելու նկատմամբ։ Պակասում էր կրակը նաև ամենավերջին տեսարանում, երբ կրկին զարթնում են նորա հոգում սեփական արժանապատուութեան վիրաւորուած զգացմունքը և ամօթը, որոնք թելադրում են նորան վերադարձ դէպի իդէալ և համեստ աշխատաւորի մաքուր կեանք։ Խաղի մանրամասնութիւնների մէջ ևս մենք նկատեցինք մի քանի տեղ թերութիւններ։ Վերջընթեր արարածում, վարագոյրը ընկնելուց մի րոպէ առաջ, Ժադովը, համակերպելով իւր կնոջ ցանկութեանը, նորա ձեռքը առնում է և ասում. «գնանք հօրեղբօրից արդիւնաւոր պաշտօն խնդրենք»։ Ինչ ասել կ'ուզէ, հետաքրքրական պիտի լինէր այդ րոպէին նորա դէմքի արտայայտութիւնը. բայց պ. Աբէլեանը փոխանակ en face երևալու հասարակութեան առաջ, վերջին խօսքերը արտասանելիս, չուռ տուեց երեսը այնպէս, որ նոյն իսկ կիսադէմը չտեսանք։ Կամ հետեեալը. նոյն գործողութեան մէջ նա կատակով է ասում կնոջը. «չէ՞ որ ես եղան պէս աշխատում եմ». մինչդեռ այդ խօսքերը տանջուած հոգու հառաչանքի պէս պէտք է հնչեն։

Պ. Աբէլեանին ի բնէ տրուած է տաղանդ։ Բայց նա, լոլոը դնելով իւր բնածին ընդունակութեան վրայ, թող չարը չգործ դնէ իւր տաղանդը։ Նա պարտաւոր է ամենալուրջ կերպով աշխատել իւր ինքնակրթութեան վրայ, դրամատիկական բանաստեղծութեան հին և նոր լիչատակարանները քրքրել, իւր արուեստը նաև տեսականապէս ուսումնասիրել, այո, այս

բոլորը նա պարտաւոր է անել, եթէ չէ կամենում, որ արտասանի քննադատութեան մէջ այն խօսքը, թէ «սա էլ մի բան խոստանում էր, բայց քարացաւ տաղանդը»։

Հոկտեմբերի 10, շաբաթ. Երկրորդ Երիտասարդութիւն, դրամա 4 գործ., հեղ. Նեժինի, թարգմ. Մանասեանի։

Թատրոնը լիքը չէր, բայց կար բաւական ստուար հասարակութիւն։

Մելոդրամայի նիւթը հետեւեալն է։ Մի հասակաւոր մարդ, ընտանիքի տէր, որ հայր է հասունացած որդոց, երկրորդ և վերջին անգամ իւր կեանքում մի Հանելուկիւն է թոյլ տալիս իրան։ Նա սիրահարւում է իւր տան վարժուհու վրայ, հեռանում է իւր ընտանիքից և սկսում է ապրել սիրոյ առարկայի հետ. Այդ դեռ բաւական չէ։ Մի դեղեցիկ օր գալիս է կնոջ մօտ և առաջարկում ապահարզան այն մտքով, որ նա իւր վրայ առնի անհաւատարմութեան յանցանքը։ Որդին, մօր վրէժը լուծելու և ընտանիքի պատիւը վերականգնելու համար, սպանում է հօր սիրուհուն։ Բայց դրաման սորանով չէ վերջանում։ Սպանողը բանտումն է, պիտի գնայ աքսոր։

Մայրը, քոյրը և ուրիշները գալիս են բանտ՝ աքսորականին վերջին հրաժեշտը տալու։ Եւ ահա սկսւում է բեմի վրայ սուգ ու շիւան, ինչպէս երբեմն «Ասլան Բաստիի» վերջին արարածում։ Այն տեղ երեւում է և հայրը, բայց արդէն զղջման տանջանքով խորտակւած և կաթւածահար։ Արտաշարժ խօսքերից, լացուկոծից, համբոյրներից և գրկախառն հրաժեշտից յետոյ, դրաման վերջապէս վերջանում է։

Պիեսայի թեման՝ ամուսնական անհաւատարմութիւնը տարիքաւոր հասակում՝ կենսական երեւոյթ է չօշափում և հետաքրքրութիւնից զուրկ չէ։ Այս է վերոյիշեալ թատերգութեան միակ արժանիքը։ Մնացածը շինծու է։ Հոգեբանական անհեթեթութիւններ, բոլորովին մի աւելորդ գործողութիւն, որպիսին է վերջինը—ահա ինչպիսի տարրերից է հիւսւած «Երկրորդ երիտասարդութիւնը»։

Մեզ մնում է յայտնել մեր զարմանքը, որ այդ պիեսը դեռ հանդուրժւում է բեմի վրայ և բեպերտուարի մէջ։

Դերասանների խաղի մասին երկարաբանելը աւելորդ է։ Իւրաքանչիւրը աշխատում էր, իւր կարողութեան համեմատ, կանգուն պահել պիեսան։ Բայց որովհետև պիեսան դրւած է խախուտ հիմքի վրայ, ուստի և նորա տապալումը անխուսափելի կերպով պիտի կատարւէր։

Ներկայացման մատնակցում էր նաև մի թատերասէր (պ. Ա. Վարդանեան)։ Խօսւում էր, որ նա մտադիր է իրան նուիրել բեմին։ Նորա արտիստական ընդունակութեան մասին մենք, տարաբախտաբար, չենք կարող մեր վերջնական կարծիքը յայտնել, մինչև չտեսնենք նորան կրկին անգամ մի աւելի շնորհունակ դերի մէջ։ Բայց զարմանում ենք, որ երիտա-

սարդ թատերասէրը համաձայնել էր իւր ոյժը փորձել մի այնքան ապաչնորհ և խղճալի պիեսի մէջ։ Այնու ամենայնիւ մի երկու խօսք կ'ասենք։ Զայնը կարծես բեմական լինէր, բայց ինքը սաստիկ քաշւում էր. դիրքը, քայլւածքը, ձեռքերի շարժումը—մէկը միւսից անվստահ էր. իսկ հայեացքը բեմի տախտակամածից սակաւ էր հեռացնում։ Մեզ քաջ լայտնի է, թէ անվստահութիւնը որչափ կարող է վնասել խաղի տպաւորութեանը, և այդ իսկ պատճառով մենք աւելի ևս դժւարանում ենք մեր վերջնական կարծիքը լայտնելու պ. Վարդանեանի ձիրքի մասին։

Հոկտեմբերի 14. չորեքշաբթի. «Փշոտ ճանապարհ կամ Դառնութեան բաժակը», դրամա երեք գործողութեամբ, հեղ. Ֆելիքս Ֆիլիպպիի, թարգմ. Ս. Հախումեանի։

Պիեսան խաղացւում էր Բաքւում առաջին անգամ։ Ահա բովանդակութիւնը։ Տիկ. Վէդէկինդը (Սիրանուշ), այրի կին և հասունացած որդոց մայր, սաստիկ տանջւում է մի դաղանի վշտից, որ նա խնամքով թաքցնում է։ Սորա ամուսնու կենդանութեան օրով նորա դրամարկղից գողացած է եղել մի խոշոր գումար։ Դատարանը մեղաւոր է ճանաչել Վէդէկինդի գործերի կառավարիչ Էրնեստ Բիւլաուին (Աբելեան) և վերջինս դատապարտել է երեքամեայ բանտարկութեան։ Երբ դրաման սկսւում է, նա արդէն ազատւած է բանտից, բայց հոգով և մարմնով խորտակւած։ Սորա աղջիկ Դորոթէան (Վարդիթեր) գտնւում է տիկ. Վէդէկինդի տանը և նորա հովանաւորութեան ներքոյ։ Այս օրիորդին սիրում է այրի կնոջ որդիներից մէկը, Հերբերտը (Աղայեան), որը պարապմունքով փաստաբան է։ Բիւլաուն երդւելով երդւում է, որ ինքը բոլորովին անմեղ է և պատիժը զուր տեղն է կրել։ Փաստաբանը, ի սէր Դորոթէայի հօր և լանուն արդարադատութեան, խոստանում է լաջողցնել գործի վերաքննութիւնը։ Բայց սորա մայրը, տիկ. Վէդէկինդը, խնդրում է հանգիստանում։ Ինչու—այդ ոչոք չգիտէ։ Այրի կնոջ այդ օտարոտի վարմունքը շրջապատողների մէջ կասկած է ծնեցնում, թէ «այստեղ ուրեմն մի բան կայ»։ Նեղն ընկնելով, մայրը ստիպած է մերկացնել դաղտնիքը։ Բանից դուրս է գալիս, որ փոդերի վաճառիչը, իսկական գողը ուրիշ մարդ չէ, բայց եթէ տիկին Վէդէկինդի կրտսեր որդի Էդոնը (Ալիխանեան), և որ մայրը, իւր որդուն պատժից ազատելու համար է, որ նորա լանցանքը ծածուկ է պահել և թոյլ տուել լռելեայն, որ անմեղը տուժի։ Բիւլաուն անչափ ուրախ է, որ այժմ կարող է վերականգնել իւր անարդւած պատիւը և վրէժը լուծել լանցաւորից։ Բայց լետոյ ամեն ինչ վերջանում է հաշտութեամբ։ Բիւլաուն և Վէդէկինդը հաշտւում են ի սէր որդոց ապագայ երջանկութեան՝ Դորոթէայի և Հերբերտի, որոնք սիրոյ խոստումով կապւած են միմեանց հետ։ Թատերգութիւնը գրւած է չնորքով, անցքը իրական հողի վրայ է, հոգե-

քանական սիրալներ և հակասութիւններ չկան կամ շատ սակաւ են, սրտաշարժ տեսարաններով հարուստ է. բայց չնայած այս բոլոր արժանաւորութեանց, նա չէ կարող կատարեալ գոհացում տալ և էսթետիկական զարմանութիւն պատճառել մտածող մարդուն։ Եւ ահա ինչու։ Նախ և առաջ այն գաղափարը, որ արծարծուած է դրամայի մէջ, մի շատ տարրական գաղափար է։ Ո՞ւմ չէ լսուած մայրական սիրոյ աստիճանի չափը? Ո՞վ չգիտէ, թէ ինչեր կարող է անել մայրը ի սէր իւր որդու? Այդ մէկ։ Յետոյ, նոյնքան տարրական է և գործող անձանց հոգեբանական վերլուծումը։ Հոգեբանական բարդութիւններ և նրբութիւններ չկան, բնաւորութիւնները թանձր գոյներով չեն նկարագրուած և բազմակողմանի չեն։ Դա, այսպէս ասած, առաւել անելանելի դրութեան ողբերգութիւն է, քան թէ բնաւորութիւնների։ Եւ իբրև այդպիսին, բաւական կորցնում է իւր նշանակութիւնը։ Մեզ թւում է, որ, եթէ Բիւրաւի թշուառութեան սկզբնապատճառը լինէր ոչ թէ մի 18 տարեկան պատանի, որի լանցանքը հէնց իւր ջահել հասակը մեղմացնում է, այլ կատարեալ գիտակցութեան հասած մարդ, որը, չարագործութիւնը կատարելուց յետոյ, մօրն էլ մեղսակից է անում իւր լանցանքին, խնդրելով կամ ստիպելով նորան եղածի մասին լռութիւն պահպանել, այն ժամանակ դրաման աւելի լուրջ կերպարանք կը ստանար։ Մի ուրիշ թերութիւն էլ կայ դրամայի մէջ։ Կան այստեղ մի քանի անձինք, որոնք, բացի խօսելուց, ոչինչ չեն գործում, ոչ դանդաղեցնում, ոչ էլ առաջ են տանում գործողութիւնը։ Դոքա են՝ տիկ. Վէդէկինդի եղբայրը, Նաւապետ Հենրիկը (Վրոյը) և որդի Ալֆրէդը (Արաքսեան) իւր կնոջ հետ (Մելիքեան)։ Եթէ սոքա չլինէին, պիեսայի մէջ գործողութիւնը, առանց մազաչափ իւր ընթացքից շեղելու, կըսկսէր կըզարգանար և կըմերջանար։ Միայն խօսող և գործ չըկատարող անձինք կամ ամենին չպէտք է լինեն թատերգութեան մէջ, կամ նոցա շատ փոքրիկ տեղ պիտի լատկացուի, որպէս զի հանդիսականի ուշադրութիւնը գլխաւոր առարկայի վրայից չանցնի երկրորդական և ոչ կարևոր առարկաների վրայ։ Այս պայմանով կարող է ստացուել ամփոփ տպաւորութիւն։

Դանք այժմ դերակատարների խաղին։

Այնքան էլ չնորհապարտ դեր չէր լանձնուած տիկ. Սիրանուշին։ Տիկ. Վէդէկինդը դրամայի հերոսուհին է, այո, և նորա վրայ է հիմնուած պիեսայի գաղափարը։ Բայց ինչումն է կայանում նորա հերոսութիւնը? Ի՞նչ է նորա պարտականութիւնը?—լռել, տանջուած սրտից հառաչներ արձակել և ձեռքերը գալարել։ Դոնէ առաջի երկու արարածներում դորա մէջ է կայանում դերակատարի գլխաւոր խաղը։ Հոգու զեղման մասին խօսք չէ կարող լինել այստեղ։ Տիկ. Սիրանուշը կատարում էր այն, ինչ որ պահանջւում էր դերից, և, եթէ հանդիսականը այնուամենայնիւ անտարբեր էր մնում դէպի նորա հառաչները և ձեռքերի գալարումը, դերատանուհին

մեղաւոր չէր։ Որտեղից իմանար հանդիսատեսը, թէ այն վշտատանջ կնոջ սրտումը սարսափելի բան է թաղնուած? Թէև մեր ներկայ դերասանական իմքի մէջ մեզ լայտնի չէ մի ուրիշը, որը, չեմ ասում աւելի լաւ, նոյն իսկ նորան հաւասար կարող լինէր այդ դերը կատարել, բայց այնուամենայնիւ մենք չէինք ցանկանալ, որ տաղանդաւոր դերասանուհին կրկին երեւար այդ դերի մէջ։ Նորա ոյժերը հարկաւոր է խնայել իսկական հերոսուհիների ամպլուայի համար։

Ուրիշ բան էր պ. Աբէլեանի խաղը։ Նորա դերը (Բիւլաու) այնպիսի դերերից էր, որոնք միջոց են տալիս դերասանին պահած ոյժերը երեւցնելու։ Եւ պ. Աբէլեանը իրօք արտիստաբար կատարեց այն։ Սա առհասարակ ցոյց է տալիս իւր բոլոր վարպետութիւնը ամեն անդամ, երբ հարկաւոր է ստեղծել հասակաւոր, կամքի տէր, ջղային և զայրացկոտ անձի տիպար։ Ահա ինչու չեն մոռացուում Նորա դոկտոր Շտոկմանը, նոյնանուն պիեսայի մէջ, կաթուածահար հայրը «Պարիզի չրջմոլիկի» մէջ, մասամբ Շեարցէն «Հայրենական տան» մէջ և վերջապէս Բիւլաուն «Դառնութեան բաժակի» մէջ։ Պ. Աբէլեանը, իբրև Բիւլաու, ազդու էր և հետաքրքրական։ Նախ և առաջ դրիմը կատարուած էր խնամքով և արտայայտիչ էր։ Արտաքինի վրայ արտափայլել էր հոգին։ Դէմքը ընկճուած և վրտտահար, գլխի մազերը նւազած և ճերմակած, հագուստը աղքատիկ։ Եւ որ մանաւանդ աչքի էր զարնում, այդ Նորա վաղաժամ ծերութիւնն էր և լոգնած հայեացքը։ Ակզրից արդէն, միայն իւր կերպարանքով, մեր դուխը շարժում է, իսկ լետոյ, երբ իմանում ենք այդ խորտակուած մարդու ցաւը, մենք բոլոր սրտով սկսում ենք Նորան համակրել։ Չէ որ դա մի անմեղ զոհ է։ Եւ լետոյ, հոգի ցնցելու չափ ազդու և սրտաշարժ էր Բիւլաուն II գործողութեան մէջ, երբ նա զգացած լայնտում է, թէ իւր կեանքի երեք տարին լափշտակել են իրանից, թէ վաղաժամ ծերացել է, թէ մաքուր անունը արատաւորուած է և այլն։ Համարեա նոյնչափ զօրեղ տպաւորութիւն գործեց պ. Աբէլեանը նաև վերջին արարուածում, երբ իսկական լանցաւորը լայտնուում է, և Նորա մէջ եռ եկան զալիս զգացմունքները՝ ուրախութիւն, զայրոյթ և վրէժխնդրութեան ծարաւը։

Պ. Վ.բոլը իւր դերը վատ չտարաւ, չնայած, որ դա Նորա ամպլուան չէր։ Նա կոմիկ-արտիստ է բառիս բուն նշանակութեամբ, նա լուրջ դրամատիկական դերերի համար չէ։ Առաջներումը մեզ լաճախ պատահել է հլանալ Նորա մոռացած և նուրբ խաղի վրայ, և մենք հաւատացած ենք, որ Նորա ոյժը կըպատի ամենալուրջ կոմիկական դերերի համար, եթէ միայն իւր ամպլուայիցն են։ Ցանձնել Նորան այնպիսի անհամապատասխան դերեր, ինչպիսի դերերի մէջ տեսնում ենք Նորան վերջին ժամանակներս, նշանակում է չլինալել այդ չնորհալի դերասանի անունը և սխալ ճանապարհի վրայ դնել Նորա տաղանդը։

Պ. Արաքսեանը տիկ. Մելիքեանի հետ մինչև վերջը հաւատարիմ մնացին իր ունց արիստոկրատական ձևերին, stoccato խօսելու եղանակին և փքած հպարտութեան։

Պ. Ալիխանեանը թէև փոքրիկ դեր ունէր, և այն՝ երրորդ արարածում, բայց դերը շնորհքով կատարեց։ Եթէ կար մի կասկած նորա բեմական ընդունակութեան մասին, այդ երեկոյ փարատուեց, գոնէ յատկապէս մեզ համար։ Նա ապացուցեց, որ գիտէ ոգևորուել, զգալ և իւր զգացածը հաղորդել հանդիսականին։ Աշակցել այդպիսի ջանէլ և ապագայ խոստացող ոյժերին կատարելագործելու դրամատիկական կրթարաններում նշանակում է ծառայութիւն մատուցանել մեր բեմին։

Վատ չէր և պ. Աղայեանը, տեղ-տեղ նոյն իսկ հետաքրքրական։ Միայն ձևերը լաւ մտածուած չէին։ Առհասարակ մեր խորհուրդն է՝ երբ ձևերը չեն յաջողուում, ոյժ տալ ինտոնացիային և դիմախաղին. աւելի լաւ է ձեռքով ոչ մի շարժում չանել, քան թէ, առանց կարիքի, գլուխը բռնել, շոյել մազերը, կուրծքը բաղխել և ձեռքերով սղոցել օդը. անտեղի շարժումները պարզ ցոյց են տալիս, որ դերասանը լաւ չէ մտածել իւր դերը։

Հոկտ. 17, շաբաթ։ «Ղարաբաղի ատղաղէտը», փոխադրութիւն Նոյնանուն վէպի։ Այդ պիեսայի մասին մենք մեր կարծիքը յայտնել ենք իւր ժամանակին սոյն ամսագրի էջերում. (Տես «Մուրճ» 1895 թ., № 7)։ Մեր այն ժամանակուայ ասածի վրայ մենք ոչինչ չունինք աւելացնելու, բացի մի բանից, այն է, որ արդէն ժամանակ է այդ անհամ պիեսը հանելու բեպերտուարի միջից, չնայած որ Նորա ներկայացումը, ինչպէս երևաց, դեռ եկամուտ տալիս է։ Զանձրալի էր այդ երեկոն, և, կարծեմ, պակաս չէին ձանձրանում նաև իրանք դերակատարները։ Մինչև անգամ գլխաւոր դերակատարը (պ. Տէր-Դաւթեան) մեզ չէր հետաքրքրում։

Հոկտ. 21, չորեքշաբթի։ «Ապահարզանի ծաղիկներ», կոմեդիա երեք արարածով, հեղ. Մարսի, թարգմ. Թարխանեանի։

Զարմէ լուրջ ուշադրութեան առնել այս ֆարսը։ Դա կեանքի անմիտ և անհամ հեգիաթներից մէկն է։ Պիեսայի մէջ, ճշմարիտ է, շարժողութիւններ չատ կան և հանդիսականների մէջ ծիծաղի աղմուկ էր բարձրանում, բայց ծիծաղ էլ կայ, ծիծաղ էլ... ծիծաղի բռնկումը դահլիճի մէջ թող չծառայէ իրրև չափ պիեսայի յաջողութեան։ Այդ պիեսան հարկաւոր է ջնջել բեպերտուարի միջից այնպէս, որ հետքն էլ չերևայ!

Դերասանների խաղը անցաւ բաւական աչխուժով, թէև ոչ առանց նափաղանցութիւնների, որոնց շնորհիւ «Հերովդէսը առաւել ևս հերովդիսանում էր»։

Հոկտ. 24, շաբաթ. «Անմեղ մեղաւորներ», կոմեդիա 4 գործ., հեղ. Օստրովսկու, թարգմ. Ատովմեանի։

Հազիւ թէ այս թատերգութիւնը մի առանձին նշանակութիւն ունենայ մեր հասարակութեան համար։ Գեղարուեստական տեսակէտից, պիեսան, մեր կարծիքով, նշանաւոր ողբերգակի գրչի լաջող արտադրութիւններից չէ, չնայած համակրելի գաղափարին, որ արծարծուած է նորա մէջ։ Ֆարուլան ոչ այնքան հետաքրքրաշարժ, գործողութիւնը սակաւ, այն էլ ձգձգուած, խօսակցութիւնները շատ և առհասարակ զգալի է դրամատիզմի բացակայութիւն։ Վերջին արարուածն է, որ փրկում է պիեսան. նորա մէջ ամփոփւում է կոմեդիայի կամ, աւելի ճիշտ, դրամայի ուղն ու ծուծը։ Դրամատուրգի տաղանդը փայլում է ոչ այնքան ծրագրի ընդհանուր իրագործման մէջ, որքան այս կամ այն մասնրամասնութեան մէջ։ Ողբերգակը մի ծանր վիճակ, մի այնպիսի հետաքրքրական դրութիւն չէ ստեղծում «անմեղ մեղաւորի» համար, որ մենք մեր աչքով պարզ տեսնենք և համոզւենք, որ, իրաւ, խղճալի են այնպիսի իրաւազուրկ և հալածուած անձինք, որպիսին է Նեղնամովը։ Պիեսայի թուլութիւնը կայանում է սիւժէտի աղքատութեան մէջ։ Տիպերն էլ մեզ թւում են բաւական անգոյն։

Բայց այսուհանդերձ թատերգութիւնը առաջադրում է արտիստներին երկու շնորհապարտ դեր՝ Շմագան և Նեղնամով, որոնք աբեհստով դերասաններ են։ Նեղնամովը պ. Աբէլեանն էր, Շմագանը—պ. Տէր-Դաւթեանը, որոնք երկուսն էլ աշխատում էին իրանց խաղով մօտենալ Օստրովսկու ստեղծած տիպերին, և այդ մասամբ լաջողւում էր։

Մնացած դերակատարների մասին չարժէ երկարաբանել. նոցա խաղի մէջ ոչ լաւն էր շեշտւում և ոչ վատը աչքի զարնում։ Գոյն տալ դրժգոյն դերերին շատ էլ դիւրին բան չէ։

Մի խօսք էլ բեմազարդի մասին։ Վերջին գործողութիւնը կատարւում է գիշեր ժամանակ պարտիզում։ Բեմը աւելի լաւ տպաւորութիւն կըգործէր, եթէ պարտէզում թելի վրայ կախուած գունաւոր լապտերները դասաւորուած լինէին մի որոշ համաչափութեամբ, և ոչ թէ փոքրիկ և անհաղին լապտերները աչք ծակելու չափ իրար հետ խառնուած, և ոչ այնքան ցած, որ դերասանների գլուխները համարեա կպչէին նոցա և խափանէին հանդիսականների առաջ բեմի պերսպեկտիւը։

Հոկտ. 28-ին ներկայացրին Զուդերմանի «Սոդոմի կործանումը», որ անլաջող անցաւ, իսկ 31-ին «Մեղէան», որի մէջ տիկ. Սիրանուշը փայլեց իւր տաղանդի բոլոր զօրութեամբ, արտասովոր լաջողութիւն ունեցաւ և ցոյց տուեց վերջապէս, թէ ինչ տեսակ դերերի համար է եղել թագնուած նորա ոյժը։

Բայց այդ մասին լետոյ։

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. ՍԵԻԵԱՆԻ

XIV

Ներկայացումներ Երեւանեան նահանգում.—Ներկայացումներ Կարսում.—Ներկայացումներ Շուշում.—Դ. Թուրեանի մահը.—Բազմայ խմբի կազմակերպութիւնները.—Ներկայացումներ.—Ռէցէնզէնտներ.—Մի նորոգիւտ հանճար։

Մեր քրոնիկի թելը ձեռք ենք առնում, մի քանի ամսուայ ակամայ լռութիւնից յետոյ և մի համառօտ հայեացք ձգելով դերասանական խմբերի գարնանային և ամարային ներկայացումների [1]) վերայ՝ անցնում ենք ներկայումս թատրոնի շուրջը յայտնուող երեւոյթներին։

Ապրիլի սկզբներին պ. Աբելեան 8 հոգուց բաղկացած մի խմբի գլուխ անցած ճանապարհորդեց դէպի Երեւան, Ալէքսանդրոպոլ և ներկայացրեց հետեւեալ պիէսները. «Կրէչինսկու հարսանիքը»—«Բաղդաւոր աղքար»—«Անազնիւ չեն ծնուում»—«Անմեղ մեղաւորներ»—«Խանում»—«Ժանբողրի»—«Ասլան-բալասի»—«Բանդած օջախ»—«Երդիւնաւոր պաշտօն»—«Կրէչինսկու հարսանիքը»—«Ոճրագործի ընտանիքը». ապա անցնելով Ղարաքիլիսա գիւղը և Դիլիջան ամարանոցը՝ այդ տեղերում էս համարեա կրկնեցին միևնոյն ռէպէրտուարից պիէսներ։ Ներկայացումները, որ բաւականին աջող անսամբլով էին տրուում, նիւթապէս միջակ յաջողութիւն ունեցան։ Միայն այքի ընկնող երեւոյթ է որ գաւառներում թատրոնի

[1]) Մենք հնացած պէտք է համարէինք այդ յիշատակութիւնը եթէ միևնոյնը եղած լինէր պարբերական մամուլի միջոցով. բայց դժբաղդաբար այդ չեղաւ, և մենք կրկին պարտք համարեցինք մեզ «Մուրճի» էջերում արձանագրել ամառուայ ընթացքում գաւառներում գործող դերասանական խմբերի գործունէութեան ամփոփ պատկերը։

գաղափարը հետզհետէ հիմք է բռնում և հասարակութեան թատերասէրմասը առանձին սենչանքով սպասում է դերասանական խմբերի գալուն։

Նոյն ամսին Ֆէլէկեան քոյրերը պ.պ. Վրոյրի և Մելիք-Յովսէփեանի հետ միացած գնացին Կարս։ Հետզհետէ ներկայացուցին «Գաղտնի ոյժ»—«Սֆինքս»—«Դոն-Գրիգորիո»։ Այդտեղից Ֆէլէկեանները գնացին Կաղզան և ներկայացրին «Մայրական սէր» ու «Պարիզի չրջմոլիկը» իսկ պ. Վրոյր Կարսում երկու ներկայացումն ևս տուց՝ «Բաղդասար աղբար» և «Ագահը»։

Յունիս ամսին Շուշի գնալու համար մի ընկերութիւն կազմուց, որի անդամներն էին տ. Զաբէլ, Ֆէլէկեան քոյրեր պ.պ. Պետրոսեան, Վրոյր, Յարութիւնեան, Օհանեան, Մամիկոնեան, Մելիք-Յովսէփեան և Զարիֆեան. ներկայացուցին հետևեալ պիէսները «Օտարներ»—«Կրքի ըռնկումն». «Աչնանալին երեկոյ»—»Մոլեչրջիկ կրակներ»—«Բին», «Խելագար»—«Անմեղ մեղաւորներ»—«Ասլան Բալասի»—«Բաղդասար աղբար», «Վարձու կին»—«Պարիզու ադբատներ»—«Զարագուչակ քալը».—«Մկնիկը» - «Կեանքի խրնճոյքում»—«Սանդուխտ», «Կարմիր բրիւկ»—«Գաղտնի ոյժ», «Անանուն կատակ»—«Բոյր Թերէզա», «Միւս անգամ»—«Համլէտ» (II գործող.) «Օթելլո» (III գործող.) «Օտարոտի դժբաղդութիւն»—«Ագահը»—«Կամէլիազարդ Տիկին»—«Էս էլ քի մոցիքլութիւն», «Շկոլի վարժապետը»։ Այս ներկայացումների չարքից լատ ընկերութիւնից անկախ խաղացել էին տ. Մելիքեան «Պարիզի չրջմոլիկը». «Փաստաբանի մօտ»—պ. Օհանեան՝ «Անազնիւ չենծնուում»—իսկ Ֆէլէկեան քոյրերը «Մայրական սէր»։

Ներկայացումների տուած նիւթական արդիւնքը չատ գոհացուցիչ է եղել։ Շուշին, իբրև ամարանոց, առհասարակ մեծ յարմարութիւն ունի ամառները մի կանոնաւոր խումբ պահելու, որին միևնոյն ժամանակ նպաստում է պ. Մ. Խանդամիրեանի ամեն յարմարութիւններով չինուած թատրոնը՝ որ միակն է գաւառական քաղաքներում։

Հալ բեմը կրկին մի անփոխարինելի կորուստ ունեցաւ Դաւիթ Թուրեանի մահովը։ Ընալելով իւր 60-ամեայ հասակին և լօգացաւի, սրտի և այլ տկարութիւններին, նա բաւականին ճարտար և առոյգ կերպով կատարում էր իւր դերերը։ Թէև իւր դերակատարութեան այն չլացնող փայլը՝ որ տեսել ենք 1883 թ., Թիֆլիս խաղացած ժամանակ, վերջերքս մասամբ պակասել էր, բայց իրրև դերասանց տաղանդ նրա ամեն անգամ բեմի վրայ երևալը մեծ հրճուանք էր պատճառում հասարակութեան։ Ա։ելորդ չենք համարում

Ա. Վրայրի բրոշիւրից [1]) քաղուածօրէն հաղորդել ընթերցողին նրա կեանքի գլխաւոր գծերը։ 1840 թ. Կ. Պոլսի Պերայումն է ծնուած հանգուցեալը՝ հայ-կաթոլիկ Թրեանց յայտնի գերդաստանից, որ Կովկաս գալիս իւր անունը եղակիացնելով իրան Թուրեան էր անուանում։ Իւր մօտիկ ազգականն է եղած Մխիթարեան միաբանութեան անդամներից Թրեանց գիտնական վարդապետը—որի գործունէութեան մասին դժբաղդաբար մեզ ոչինչ չգիտենք չէ—և այժմ էլ հանգուցեալի եղբայրը ուսուցիչ է Պերայի Մխիթարեան վարժարանում։ Ինչպէս երևում է ակներև ապացոյցներից (օր. իւր անցագիրը) Թուրեան իրան համարել է Դր. Լուսաւորչի եկեղեցու զաւակ։ Մինչև ժամանակ մի անտեղի մեղադրանք է, որ բարձեցին մամուլի միջոցաւ Կովկասեցոց վերայ, իբր թէ Թրեանց ձեր կովկասեցիք Թուրեանի վոխարկած լինեն։ Դա ճիշդ չէ. Թուրեան ինքն է իրան այդպէս ներկայացնել, որին վկայում են բացի իւր ձեռագիր ստորագրութիւններից նաև իւր այցեստմները։

Թուրեան 14 տարեկան հասակում Վենետիկ ուղարկուեց և մինչև 19 տարեկան դառնալը մնաց այնտեղ և վերադարձաւ Կ. Պոլիս իւր հիւանդութեան պատճառով։ Դպրոցում եղած ժամանակ աշակերտական ներկայացումներին Թուրեանը ցոյց էր տուել իւր ընդունակութիւնները և հակումը դէպի բեմական արուեստը։ այդ պատճառով էլ 1860 թ. կազմակերպած «Արևելեան» թատրոնի առաջին դերասանական խմբին անդամակցեց։ Երանելի էին այդ ժամանակները։ հակառակ կաթոլիկ հոգևորականութեան ջանքերին՝ անջրպետ քաշելու կրօնով բաժանուած միևնոյն ազգութեան անդամներին՝ երկու կողմի երիտասարդներն էլ ամեն կերպ աշխատում էին համերաշխ գործելու։ Պէշիկթաշլեան ամեն կողմ հնչեցնում էր իւր աննման «Եղբայր եմք մենք»-ը։ «Եղբայր եմք մենք»-ն էր ամենքի հաւատքը և գործունէութեան նշանաբանը։ այդ ոգով էլ գործում էին, և Մխիթարեանները իրանց դպրոցական ներկայացումներով անգիտակցաբար համարեա ստեղծեցին հայ թատրոնը։ ամենեղից կամ այնտեղ ուսած մարդկանց ներշնչումների արդիւնք էին հայ թատրոնի նշանաւոր գործիչները և փայլուն աստղերը՝ Պէշիկթաշլեան, Ս. Հէքիմեան, Մազաքեան, Ագամեան և նրանց վերջին ներկայացուցիչը—Թուրեան։

«Արևելեան թատրոնի» խումբը երկու տարի գոյութիւն ունենալուց յետոյ, դրամագլխի վատնելովը (կարծեմ մօտ 100.000 ռ.) խումբը ցրուեց և դերասանները գնացին Զմիւռնիա, ուր կրկին զանազան ձախորդու-

---

[1]) Հարկ ենք համարում յայտնել մեր մամուլի այն վարմունքի մասին, որ Թուրեանի մահից յետոյ քաղուածօրէն հաղորդելով նրա կենսագրութիւնը՝ արժան չհամարեցին լիովին նրա միակ աղբիւրը «Դ. Կ. Թուրեանի երևելագոյն բեմական գործունէութեան առիթով» բրոշիւրի գոյութիւնը։

թիւնների հանդիպեցին և Թուրեան սիրեց Ապուլլահ եղբայրների լուսանկարչատանը ռըսուչէօրի պաշտօն կատարել։ Այնտեղ էլ ամուսնացաւ։ 1870 թ. Ֆասուլաճեանից հրաւիրուեց Նոր-Նախիջևանի ներկայացումներին մասնակցելու. 1872 թ. մասնակցեց անմոռանալի Յակոբ Բէյի կազմակերպած խմբի ներկայացումներին։ Այդ թեականից Թուրեան անընդհատ մասնակցել է թէ Կ. Պոլսում և թէ գաւառներում գործող խմբերի հետ։ 1883 թ. Բոլղարիայից անցնելով Թիֆլիս եկաւ։ Շատ լաւ ենք յիշում Թուրեանի առաջին ներկայացմանը ժողովրդի զգացած անչափ խնդութիւնը և հրացմունքը։ Շատ կատարներ ունեցել և տեսել էր Թիֆլիսը. բայց սա մի բոլորովին ուրիշ, իրա համար մի բոլորովին նոր ուղղութեան ներկայացուցիչն էր։ Այդ թեականներին թատրոնը նիւթական ոչ մի ապահովութիւն չունէր։ «Մշտական» անուանուած կարճատև թատրոնի ղեկավարներն ու առաջնորդները խորթ զաւակի պէս էին նայում թատրոնին։ Թուրեան իւր ընտանիքով մեծամեծ զրկանքներ կրելով 84 թ. գարնան մեկնեցաւ Թիֆլիսից շատ մռայլ տպաւորութիւնների տակ. և այնուհետև իւր կրած բարոյական և նիւթական նեղութիւնները պատճառեցան որ նա մինչդեռ որոշել էր միանգամայն հրաժարուել բեմից և առնտրով զբաղուել, հէնց այդ ժամանակ (1891 թ.) Թիֆլիսից հրաւէր ստացաւ։ Հոգով եռանդով լի, բայց տարիների բեռան տակ ընկճած Թուրեանը այն չէր՝ ինչ որ տեսել էինք 1883 թ.։ Միևնոյն ժամանակ չգիտենք ինչ պատճառով այն ժամանակուայ թատրոնի ղեկավարները չէին կարողանում օգտուել Թուրեանի նման մի ուժից. հապա նա առիթ ունեցաւ մի քանի պիէսներում ցոյց տալ իրան։ Նոյն թեականին էր որ առաջարկեց այդ տաղանդաւոր և աշխատաւոր բեմի մշակի 35 ամեակը տօնելու. բայց այն ժամանակուայ «բեմին անձնուէր» ղեկավարների նեղ հասկացողութիւնից դուրս էր այդ. և համարեա այդ միևնոյն մարդիկ տօնում էին այս տարի պ. Մանդինեանի չունեցած գործունէութեան 25-ամեակը։ 1897-ին հրաւիրուեց Բաղու և հասարակութեան սիրելի դերասանը դարձաւ։

—Կովկասում պիտի մեռնիմ.—կրկնում էր նա լաճախ. այդպէս էլ եղաւ. չնայելով իւր պատկառելի տարիքին, տաղանդին, փորձառութեանը՝ բեմի վրայ նոր ոտք դնող դերասաններից աւելի համեստ էր։ Դժբաղդաբար նա չարունակ ապրել էր այնպիսի երկրում և այնպիսի միջնորդում ուր բեմի, թատրոնի մասին հասկացողութիւնը շատ նահապետական վիճակումն է. այդ պատճառով էլ նա չունէր այնպիսի ռէպերտուար, որ հետաքրքրէր մեզ, որ մեղք է չունենալն այդպիսի տաղանդաւոր դերասանին. բայց այդ նրանից չէր կախուած՝ ինչպէս բացատրել ենք։ 97—98 թ. նրա կատարած մի քանի ուժեղ և աշխոյժ դերերը ապացոյց էին, որ դեռ չէ մարած տարիներով բեռնաւորուած բաղմաչարչար արտիստի եռանդը։ Նրա կատարած այդ դերերը իւր կեանքի մարող ճրագի վերջին ցոլմունք-

ներն էին։ Օգոստոսին նա կաթված ստացաւ և 15 օրուայ հիւանդութիւնից յետոյ վախճանուեց նոյն ամսի 20 ին և թաղուեց Խոջիվանքի գերեզմանատանը։

1898—99 թ. համար Բագուում կազմուած խումբը բաղկացած է հետեւեալ անձերից տ. տ. Աղնիւ, Մէլիքեան, Սիրանոյշ, Փառանձէմ. օր. օր. Գարագաշ, Վարդուհի և Ֆէլէկեան քոյրեր. պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Աղայեան, Անդրանիկ, Արաքսեան, Ղազարեան, Մէլիք-Յովսէփեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Ստեփանեան, Վրոյր և Տէր-Դաւթեան. ռէժիսէօր պ. Ս. Հախումեան, լուսարար պ. Թորոսեան, սցէնարիուս պ. Ամիրեան։ Այս տարուայ ներկայացումները առհասարակ գրաւում է դէպի թատրոն աւելի շատ ժողովուրդ. և հաւատացած ենք որ քանի երկար շարունակի թատրոնի գոյութիւնը, այնքան աւելի հասարակութիւնը կը կապուի նրա հետ. միայն մի աչքի ընկնող պակասութեան վերայ ստիպուած ենք կրկին մատնացոյց անել. թէև քանի քանի անգամներ «Մուրճ»-ի էջերում չեշտուած է այդ մասին, բայց զժբաղտաբար այդ ամենակարևոր խնդիրը մնացել է անուշադիր, այն է պիէսների լեզուի անհարթութիւնը. չկայ մի պիէս, որի լեզուն նման լինի միւսին. և դերասաններից իւրաքանչիւրը—կարդող թէ անկարող—ստիպուած է սրբագրել պիէսի լեզուն՝ ըստ իւր ճաշակի, ըստ իւր հասկացողութեան։

Բագուի դերասանական խումբը հետզհետէ ներկայացրեց մինչև հիմի հետեւեալ պիէսները «Հայրենական տուն», «Արդիւնաւոր պաշտօն», «Երկրորդ երիտասարդութիւն» և «Փաստաբանի մօտ», «Փշոտ ճանապարհ», «Գիսակ և ագռաւներ», «Ղարաբաղի աստղագէտը», «Ապտարղանի ծաղիկներ» և «Դալալ Ղազօ», «Անմեղ մեղաւորներ», «Սոդոմի կործանումը», «Մէղէա» և «Կարմիր բրիւկ», «Գրեչինսկու հարսանիքը» և «Սիրահարը սեղանի տակ», «Անազնիւ չեն ծնուում», «Մէղէա», «Հոգւով աղքատներ», «Մեղանչեց կորաւ», «Վերաքննիչ»։ Մեր ռէժիսէրները (մանաւանդ մէկ-երկուսը) վերոյիշեալ պիէսներից և ոչ մէկին դեռ չեն հաւանել, տեսնենք ինչ կ՚ասեն սրանից յետոյ խաղացելոցների մասին։

Ակամայ լիշեցինք կրկին մեր ռէժիսէրներին, մանաւանդ մէկին՝ որի քնարը լոկ ըստ երևոյթին։ Այդպիսի գրածքների մէջ ամեն ինչ կայ. և՝ ազնուութիւն, և՝ անմեղութիւն, և՝ լաւակնութիւն, և՝ ծաղր, բայց ոչ մի նշան որ այդ գրածքը նմանուէր ռէժիսէրի, որ լուսաբանէր, կրթէր հասարակութեան գեղարուեստական ճաշակը և առաջնորդէր կամ

մատնացոյց անէր դերասանին այն՝ ինչ որ խուսափել, մութ է մնացել նրա հայեացքից. և դէպի բեմի աշխատաւորները ռէժիսէնտների բռնած դիրքը չատ ամուր է, որովհետև նրանք լաւ գիտեն, որ ըստ աւանդութեան ամեն մի դերասանի մասին ամեն ինչ կարելի է ասել, իսկ դերասանը լուռ պիտի մնայ։ Մենք մեր դրականութեան մէջ (բացի 2—3 հոդուց) ոչ մի ռէժիսէնտ չենք ունեցել. իսկ նրանք որոնք գրել են այդ ձևով, աւելի լայտնել են իրանց կարծիքը իբր մի մասնաւոր մարդու—որպիսին ըստ իւր ճաշակի և քմաց կարող է ամեն ոք լայտնել—քան թէ կրթել են հասարակութեան ճաշակը և առաջնորդել դերասանին։

Մօտաւորապէս $1^1/_2$ տարի կը լինի որ մեր պարբերական մամուլի էջերում 3—4 անգամ Պարիզից անծանօթ անձերի ստորագրութիւններով լուրեր են տպւում՝ հռչակող Գալֆաեան անունով պարոնի հանճարը։ Այն պարոնը որի մասին գրւում է այդ գովասանքը (աւելի ճիշտ է ասել ծաղրը, որովհետև վերջերս այդ ատիճանին է հասնում) մեզ ծանօթ է անձամբ և մեզ նման չատ չատերը առիթ ունեցել են նրա շնորքի ապացոյցները տեսնելու։ Դա թատրոնով լափշտակւած, «հռչակաւոր» լինելու տենչանքից բռնուած մի երիտասարդ է. և դրա մէջ է գալանում բոլոր նրա շնորհքը, նրա հանճարը (ինչպէս միամտաբար գրում է Նաւարեան անունով մի անձն «Ցարաղում) բայց լաւ կը լինի որ թողնենք երբեմն խօսի այդ պ. Նաւարեանը.

«Արտակարգ երևոյթ մը, հանճար մը նորածին, դեռ չատ երիտասարդ, արդէն իր փառաց դափնիներուն մէջ, կը դրդէ զիս քանի մը տող գրել իր մասին։ Ապա այս հանճարից չլացած պարոնը նկարագրում է Գալֆաեանի հասակը, աչքերը, դէմքը, մազերը և այլն. և նրա արտասանած Համլէտի (անպատճառ Համլէտի) մենախօսութիւնից հիացած մի բարոնուհի իւր ձեռքն է մեկնել «շնորհալից ժպիտով մը» և Մունէ-Սիւլլի ճակատը համբուրել։ Բայց խնդիրը այս չափով չի փակւում. պ Գալֆաեան ըստ պ. Նաւարեանի ոչ միայն մի հանճար է այլ և մի Բին կամ մանաւանդ մի Ադամեան է, երկրորդ Ադամեան և այս «նորածին հանճար»ը նորանից էլ դերազանց։ Ադամեանի պէս մի Համլէտ դանելուց ինտոլ նամակագիրը խելքին զոր է տալի իւր գտած «նորածին հանճարը» Ադամեանին նմանեցնելու. «Գալֆաեան ժողովրդին մէկ ազգատ զաւակն է, Բինի կամ Ադամեանի նման»... դարձեալ. «Ամեն ոք գիտէր (?) որ Ադամեան լդէալ մ'ունէր լոկ... այն էր ներկայացնել հալ դաշնակաւոր լի զուն եւրոպական թատերաբեմին վրայ... Սակայն այսօր, իրագործած կը տեսնենք այն շնորհիւ երկրորդ Ադամեանի մը, թատրոնի նոր աստղին, որ օժտւած է այլազան ու չքնաղ ձիրքերով, ինչպէս գեղեցիկ կը գրե

«Դէպի Նիւս։ Ապա հետևում է «եւրոպական բովանդակ մամուլին կողմէ» այս «նորածին հանճարին» նուիրած դրուատիքներու մի ցանկ. Բերլին, Մադրիդ, Պարիզ, պաշտօնական, կէս-պաշտօնական, ոչ-պաշտօնական թերթեր չգիտեն թէ ինչպէս փառաւորեն այս «նորածին հանճարը» և այդ թերթերում գրողները այնքան լայտնի են գրականութեան մէջ և ի հարկէ նրանց գրածը այնքան կարևորութիւն ունի ընթերցողի աչքում, որքան պ. Նաւարեանինը։ Բայց շատ տարօրինակ կերպով լայտնուեց այս նորածինը. մեր աչքի առաջ եղած ոչինչը 6 ամիս յետոյ մի ինչ դարձաւ. մի տարուց յետոյ տաղանդ և այժմ, մօտ երկու տարի՝ «աստղ», «արտակարգ երևոյթ», «արդէն իր փառաց դափնիներուն մէջ», «հանճար», և վերջապէս «երկրորդ Ադամեան»։ Նախ կը խնդրէինք նամակագիր պարոնից, որ իւր կամեցած անձերին ինչ կերպ որ կամենայ կարող է դրուատել, իւր բառգրքի բոլոր գովասանական բառերով ներբողներ հիւսել, բայց իւր համեմատութիւնների մէջ այնչափ առաջ չգնայ, որ մի մանուկի կթոտ քայլերը բեմի հսկայի հետ համեմատէ. թող հանգիստ թողնէ նրա անունն ու գերեզմանը, որ ծնուած էր մեծերից մեծ լինելու—նոյն իսկ ըստ պ. յօդուածագրի փաստաբանութեան Ադամեան շատ բարձր էր Իրլինգից, Իոսսիից, Սալվինիից և այլն—և ոչ թէ Գալֆաեաններին հետ համեմատելու։ Գեղարուեստը այնպիսի մի բան չէ, որ մարդ կարճատև վարժութիւնով իւրացնէ։ Նոյն ինքը, բեմի թագաւորը, չնայելով որ Կ. Պոլսում ունէր գերազանց դերասանի համբաւ, երբ եկաւ Թիֆլիս (11—12 տարեայ դերասան էր), չնայելով իւր ինորհալի արտաքինին, մեծաղանման դաշնակաւոր ձայնին, վերին աստիճանի զարգացած գեղագիտական ճաշակին և ուսումնասիրութիւնների ընդունակ մտքին, երբ ներկայացրեց շատ դերեր, ինչպէս և Համլէտ, զերծ չէր նրա խաղը աչքի ընկնող պակասութիւններից, և բանիմաց քննադատը դերասանի ուշադրութիւնն էր հրաւիրում դրանց վերայ. բայց մեր «նորածինը» անթերի է. բարձր է իւր վարպետից՝ որի անունն է միայն լսել... մեղք է պարոններ. մեղք. Գալֆաեան այնչափ սիրում է բեմը, որ աշխատանքի ոյժով գուցէ մշակէ իւր իսօսակցութեան ձևը, քայլուածքը, շարժուածքը, գուցէ աշխատի զարգացնել իւր միտքը, ընդունակ դարձնէ իրան ըմբռնելու թէ ալժմեան և թէ կլասիկ հեղինակների ստեղծագործութիւնները, իսկ այնպիսի յօդուածագիրներ ինչպէս պ. Նաւարեան կրկնակի լանցանք են գործում նախ մոլորեցնելով հասարակութեանը և, երկրորդ, «կատարեալ» հռչակելով մի «նորածին»։ Մենք չենք կամենում այդ գովաբանական գրուածքի ամեն մի տողը քննութեան ենթարկել, դա ոչ մի քննադատութեան չի դիմանայ։ Մենք Պարիզում ունենք թէ գրական և թէ գեղարուեստական աշխարհի աչքի ընկնող բաւականաչափ ներկայացուցիչներ, զարմանում ենք որ նրանցից և ոչ մէկը չի կամենում գրել պ. Գալֆաեանի լաջողութիւնների մասին, և

այդ գործը մնում է պ. Նաւարեանին։ «Տարազ»-ի միևնոյն համարում (№ 43) ուր տպւած է այդ գովասանքը, կայ մի լուր, որ հաղորդելով թէ Պարիզում Խ. Աբովեանի լիշատակին կայացել է գրական-հրաժշտական երեկոյթ, ուր մասնակցում էին օր. Պապայեան, պ.պ. Եղիազարեան, Սաճեան, Միհրդատեանց, Զոպանեան, և ուրիշներ, բացակայել է միայն... Գալֆաեան։

Ի վերջոյ յօդուածագիրը աւետում է, որ այս տարի Գալֆայեան Պարիզում Օթէլլոն ներկայացնելուց յետոյ գնում է Լոնդոն խաղալու և՛ Համլէտ, և՛ Արքայն Լիր և՛ Օթէլլո...

„ՄՈՒՐՃ"-Ի ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ

Սառն դնում ենք այն նամակներն ու հեռագրերը, որ խմբագրութիւնը ստացել է Մուրճ'ի տասնամեակի առթիւ, որ մեր աշխատակիցները որոշել էին լիշատակել հոկտ. 25-ին։ Մասնաւորապէս Թիֆլիսում խմբագրութիւնս բաղդ ունեցանք ընդունելու Մուրճի քաղաքումս ներկայ եղող աշխատակիցներից և այլ համակրող անձերից շնորհաւորութիւններ, ընդունելու մի քանի լիշատակ-ընծաներ և հրաւիրուելու տասնամեակի առթիւ տրած մի ճաշկերոյթի, շուրջ քառասուն հոգուց, երկու սեռից։ Ճաշկերոյթին, որի լիշատակը անմոռաց կը մնայ մեզ մօտ, խօսեցին ջերմ խօսքեր՝ պ.պ. Գր. Վարդանեան, Պ. Պռոշեան, Գ. Բաշինջաղեան, Ֆ. Մարդանեան, Յ. Թառաքեան, Գ. Ղարաջեան, Ա. Ամանասեան, Հ. Խօջայեան, Ե. Լալայեան, և այլք, որոնց կարող էինք միայն մեր խորին շնորհակալութիւնը լայտնել այն բանի համար, որ Մուրճ-ը իւր դեռ ևս կարճատև գործունէութեամբ կարող էր այդքան ջերմութիւն հաղորդել և այդքան ազնիւ զգացմունքներ արթնացնել։

(ՆԱՄԱԿՆԵՐ)

Մեծարգոյ Պարոն Խմբագի՛ր

Ձեր հիմնարկած «Մուրճ» հանդէսը, որ միեւոյն ժամանակ և մեր սիրած օրգանն է, ահա բոլորում է իւր գոյութեան տասնամեայ շրջանը, և այսքան տարուայ ընթացքում նորա արած ծառայութիւնները մեր հասարակութեան և գրականութեան համար անուրանալի են։

Նախ և առաջ, «Մուրճի» հիմնադրութեան առաջին տարուանից, Դուք ակներև կերպով ցոյց տուիք, որ Ձեր ամսագրի էջերը բաց էք արել ոչ միայն անուանի հեղինակների համար, այլ և առհասարակ այն ամենքի համար, որոնք, թէև դեռ ջահել և անլուր, սիրում են գրական խօսքը և անկեղծ վարպետ ունին գործելու գրականական-հասարակական ասպարիզում, և այդպիսով շատ նոր և ազատաշունչ խոստացող երիտասարդների միջոց տուիք լիովին արտայայտուելու։ Ձեր ամսագրի մէջ։ Շնորհիւ այդ հանդամանքի, 90-ական թուականների նորաբողբոջ և հարուստ գրական շար-

ժումները այլ և այլ ճիւղերի մէջ անիզելի կերպով կապւում են այդ օրգանի պատմութեան հետ։

Իսկ այն, որ «Մուրճը», միշտ հաւատարիմ իւր կոչմանը և ծրագրին, լուրջ և բազմակողմանի մտածողութեան եղանակը և դորա անհրաժեշտութիւնը ցոյց է տուել իւր սեփական օրինակով, որ նա աշխատել է ընդարձակել ընթերցողների մտքի ծաւալը և կեանք ու բովանդակութիւն տալ առհասարակ ընդհանուր գաղափարներին, միթէ այս բոլոր արժանաւորութիւնները պակաս գովելի և քաջալերութեան արժանի են։

Իւր ծրագիրը իրագործելու համար «Մուրճը» գործադրել է երկու գօրաւոր միջոց՝ ուսումնասիրութիւն և քննադատութիւն,—այդ ևս ամսագրի անպալման արժանիքն է։

Անժխտելի օգուտ ենք համարում և այն, որ այդ ամսագիրը, հնարաւոր եղածի չափ, ձգտել է գիտութեան խօսքը մատչելի կացուցանել ընթերցող հասարակութեան համար, հետևել է ընթացիկ գրականութեան և իւր անաչառ կարծիքը լայտնել նորա արդիւնքների մասին, քննադատական փորձեր է արել մեր առաջնակարգ հեղինակների ուսումնասիրութեան, գաւառական և մասնաւորապէս գիւղական և բանւոր ժողովրդի խաւերն է թափանցել և ներկայացրել մի չարք հիմնաւոր ուսումնասիրութիւններ այդ կեանքից։

Նմանապէս հասարակական, մանկավարժական և լեզուագիտական զանազան խնդիրների արծարծումը ամսագրի կարևոր նպատակներից մէկն է եղած և իրագործւած է, որքան այդ հնարաւոր է եղած։

Լուրջ ուշադրութեան են առնւած նաև մեր գեղարուեստական կեանքի երևոյթները, վերաբերեալ թատրոնին, նկարչութեան և այլն։

Առաջնիմական քայլ ենք համարում և այն հանգամանքը, որ «Մուրճը» փորձեր է արել ծանօթացնելու ընթերցողներին դրացի ազգերի գրական վաստակների հետ ոչ միայն ընդհանուր դիտողութիւններով, այլ որ աւելի կարևոր է, և անմիջական աղբիւրների, այն է՝ թարգմանութիւնների միջոցով։

Մոռացւած չեն եղած նաև ռուսաց և Եւրոպայի դասական հեղինակների գործերը, որոնց թարգմանութիւնները յաճախ երևացել են «Մուրճի» էջերում։

Բայց նամանաւանդ թանկագին և սիրելի է եղած մեզ համար «Մուրճի» ուղղութիւնը, որին նա հետևել է անշեղ և անսայթաք. և դա ուրիշ բան չէ, եթէ ոչ առաջադէմ գաղափարների ջատագովութիւնը, նորա հիմնաւորութիւնը ամեն տեսակ խնդիրների մէջ, նորա չիտակ զէնքը թշնամական ոտնձգութիւնների դէմ և, վերջապէս, նորա ղեկավարի անօրինակ եռանդը և տոկունութիւնը, որոնց չնորհիւ միայն նա կարողացել է ամենածանր պայմանների մէջ դիմանալ մի ամբողջ տասնեակ տարի և

պատով դուրս գալ իւր գոյութեան ընթացքում տեղի ունեցած բոլոր պատահարներից։

Այս բոլոր ակնարկների արժանիքը և օգուտները ի նկատ առնելով, մենք, «Մուրճի» Բաքուայ աշխատակիցներս, ի սրտէ ցանկանում ենք յաջողութիւն մեր սիրած օրգանին, որպէս զի նա միջոց ունենայ թափանցելու մեր ժողովրդի խորքերը և հաղորդակից անելու մեր ժողովրդի խորքերը և հաղորդակից անելու ընթերցողների Եւրոպայի քաղաքակրթութեան լաւագոյն արդիւնքին. Ձեզ ևս, մեծարգոյ Խմբագիր, իբրև այդ ամսագրի ժրաջան ղեկավարի, ցանկանում ենք երկար կեանք, անսպառելի եռանդ, առկուռութիւն և ամենայն յաջողութիւն։

Լեոն Մանուէլեան, Գարեգին Սարգսեան, Աւետիս Գաբեանց, Յարութիւն Միրիմանեանց, Ֆ. Մարգանեան, Մկր. Մանուչարեան, Վրոյր

1898 թ. հոկտեմբերի 22.
Բաքու։

Մեծապատիւ Պարոն
Աւետիք Արասխանեանց

Այսօր, Ձեր «Մուրճի» տասնամեակի աւթիւ հաւաքուելով, ուղարկում ենք Ձեզ մեր սրտագին ողջոյնները և ցանկանում ենք անընդհատ յարատևել Ձեր՝ ազգային լաւաջադիմութեանը նուիրած գործունէութիւնը։

Թող տարիների ընթացքում Ձեր տեսած ձախորդութիւնները չվհատեցնեն Ձեզ, որովհետև tempora mutantur—և մենք հաւատացած ենք, որ կը գայ ժամանակ, երբ Ձեր «Մուրճ»-ը կ'ապրի աւելի բարեյաջող պայմանների մէջ և կը գտնի աւելի լայն համակրութիւն հասարակութեան կողմից, որը մինչև այժմ չկարողացաւ տպահովել Ձեր ազգաշահ ամսագիրը։

Ղազարոս Աղայեան, Պօղոս քահ. Բեղլեան, Գէորգ Զուբար, Յովհ. Տէր-Միրաքեան, Մինաս Բերբերեան, Ատրպետեան, Իսրայէլ Բերբերեան, Հաւաղ Բալուղեան, Երանդ Շահազիզ։

18 հոկտ. 1898 թ. Ն. Նախիջևան։

Միանալով «Մուրճ»-ի բոլոր անկեղծ բարեկամների հետ, սրտանց շնորհաւորում ենք նորա առաջին և կարևորագոյն տասնամեակի բոլորումը։

«Մուրճ»-ը միակն եղաւ մեր ամսագիրներից, որ կարողացաւ գլուխ դուրս բերել բազմաթիւ խոչընդոտների և զրկանքների միջից։

Յիշելս ենք, որ երկրորդ տասնամեակը թեւակոխելով՝ նա նոր եռանդով ու առկուռութեամբ պիտի շարունակէ իւր կոչումը՝ միջնորդ հանդի-

սանալ եւրոպական գիտութեան և հայ հասարակութեան մէջ, լայն և բազմակողմանի ուսումնասիրել հայ ժողովրդի կեանքն ու պիտոյքները և թարգման լինել առօրեայ եւրոպներին անաչառ և անկողմնակալ քննադատութեամբ։

«Մուրճ»-ի խմբագրին ցանկալով նոր ոյժ և եռանդ ստանալու թեամբ յաղթելու խոչընդոտներին, լուսով ենք, որ հայ ինտելիգենտ երիտասարդութիւնը, որ նախանձախնդիր է մեր լաւ մտաւորի առաջադիմութեանը, կարելոյն չափ պիտի թեթեւացնէ պ. Արասխանեանցի լուծը, օժանդակելով նրան թէ գրչով, թէ խօսքով, թէ բարոյապէս և թէ նիւթապէս։

Գրիգոր Վանցեան, Միքայէլ Յովհաննիսեան։

28-ն (16 հոկտ.) 1898 թ. Ժընև։

Մեծարգոյ Պարոն Արասխանեանց

Թոյլ տուէք այս երկտողով միանալ այն անենսահման ուրախութեանը, որը ներկայ բոպէում զգում էք Դուք։ Քիչ բան չէ, հայկական, միանգամայն անապահով ամսագիր՝ և ամբողջ տասը երկար ու ձիգ տարի գոյութիւն է ունեցել, հերոսաբար զանց առնելով այն բոլոր խոչընդոտները, որոնց միշտ արտադրել է մեր կուլտուրական մնանկութիւնը, ու այն սուղ նիւթական դրութիւնը, որը ընկերակցել է Ձեզ, Ձեր պատուական ամսաթերթը հրատարակելու օրից։

Ուրիշն Դուք լիակատար իրաւունք ունէք պարծենալու, որ կարողացել էք պահպանել մի հանդէսի գոյութիւնը այնքան ժամանակ, որքան մեր համանման հանդէսներից ոչ մէկին չէ յաջողուել ապրել։ «Մուրճ»-ի վերաբերմամբ Դուք նմանել էք ալնպիսի ծնողի, որը նստած իւր թանկագին, բայց անլուս գաւակի մահիճի մօտ, մայրական բուռն զգացմունքով, կարծես, մարտնչելով մահուան հետ, աշխատում է հեռացնել նրան իւր սիրելիից—ու մայրը տանում է յաղթանակը։ Դուք նոյնպէս յաղթող հանդիսացաք. փառք ու պատիւ Ձեզ։

Կեցցէ «Մուրճ»-ը. թող նա դեռ չատ տասնամեակներ տաք-տաք երկաթ ծեծէ և նրանից կուէ-կովէ հայերի համար հոգի և միտք վարելու խոփեր։

Ուսանողներ և ուսանուհիներ՝

Լիպարիտ Նազարեանց, Գէորգ Խատիսեանց, Ռուբէն Մուրադեան, Ե. Մելիքեան, П. Яѳовъ (ռուս), Լ. Մուշեղեանց, օր. Թ. Մեծբաշեան, Մամիկոն Գէորգեան, Սամսոն Յովհաննիսեանց, օր. Վ. Բարիկեան։

21 հոկտեմբերի, 1898 թ. Մոսկւա.

Ուղերձ Մեծապատիւ Աւետիք Արասխանեանցին

Բարձր գնահատելով ձեր արդիւնաւոր գործունէութիւնը գրական-հրապարակախօսական ասպարէզի վրայ և լուրջ նշանակութիւն տալով Ձեր զեկուվարութեամբ հրատարակուող «Մուրճ» ամսագրին, որի տասնամեակը լրանում է այսօր, մենք, իբրև «Մուրճ»ի անկեղծ բարեկամներ և ձեր բըռնած ուղղութեանը համակրողներ, չենք կարող լռութեամբ անցնել այն աչքի ընկնող օգուտը, որ տուել է «Մուրճ»-ը մեր հասարակութեանը այդ 10 տարուայ ընթացքում, ինտելլիգենցիայի մեծամասնութեան այն համակրանքը և գրողների այն լաւագոյն մասը, որ նա գրաւել է այդպիսի կարճ ժամանակամիջոցում, վերջապէս այն ուրախալի երևոյթը, որ մեր գրականութեան կեանքի մէջ «Մուրճ»-ը առաջինն է, որ, չնայած մեծամեծ նիւթական արգելքների ու ուրիշ խոչնդոտների, իր գոյութիւնը պահպանել է ամբողջ 10 տարի։ Իսկ եթէ չեշտելու լինենք նիւթական այն անտանելի պայմանները, որանցով շրջապատուած գործել էք դուք ձեր աշխատակիցների հետ, միշտ հասարակութեան ինտերէսները զերադասելով անձնական շահերից, եթէ ի նկատի ունենանք այն սառնութիւնը, անտարբերութիւնը և ընթերցանութեան չհասունութիւնը, որ նշմարուում է մեր դեռ տգէտ ժողովրդի մէջ, եթէ աչքի առաջ ունենանք Ձեր թշնամիների այն ամբողջ լեգիոնը, որ, անընդունակ լինելով ջոկել անձնականը հասարակականից, շատ անդամ, դիմելով կեղտոտ պոլեմիկաների, անջատել է Ձեզ գործից—այդ բոլորը աչքի ունենալով մի կողմից, և միւս կողմից աւելի ու աւելի համոզուելով Ձեր չիտակութեան մէջ, Ձեր անճկուն եռանդի և տոկուն աշխատանքի, մենք չենք կարող չզգացուել մինչև սրտի խորքը և չլայնել մեր համակրութեան ամենարուռն զգացմունքը։

Գալով Ձեր գրական գործունէութեան, մենք, միշտ մի առանձին հետաքրքրութեամբ կարդալով «Մուրճ»-ի գրեթէ բոլոր համարները, չենք կարող մատնանիշ չանել այն մի քանի այրող հարցերի վերայ, որոնք անմիջապէս Ձեր գրչի տակից են դուրս եկել կամ Ձեր ինիցիատիւով արծարծուել։ Դուք, միշտ տոգորուելով Ձեր ազգի վշտերով և ուրախութիւններով, ամենայն լրջութեամբ հետևելով ժամանակակից կեանքին և լաւ ուսումնասիրելով ժողովրդի պահանջները ու կարիքները, առանձին ուշադրութիւն դարձրիք հարատևաբար ժողովրդի տնտեսական վիճակի վերայ, աշխատեցիք ցոյց տալ նորա ցաւալի դրութեան պատճառները և քարոզելու միջոցները։ Այդ նպատակով Դուք էիք, որ քաղաքատնտեսական լօզուածներ տուիք զուտ գիտական հողի վերայ—և առհասարակ տնտեսական հարցերը կարմիր թելով անցկացրիք «Մուրճ»-ի գրեթէ բոլոր համարների մէջ։ «Մուրճ»-ն էր առաջինը, որ լուրջ ուշադրութիւն դարձրեց գրական քննադատական բաժնի վերայ և տուեց մի շարք գեղեցիկ քննադատական լօզուածներ մեր առաջնակարգ գրողների երկերի մասին.

դրանց չնորհիւ միայն մենք կարողացանք որոշ գաղափար կազմել մեր գրական հոսանքներից ոմանց մասին։ Նա էր, որ զարկ տուեց քննադատական ոգուն հայերիս մէջ. և ինքը, ուշի ուշով հետեւելով մեր գրականութեան մէջ երևան եկող գրքերին, սիստեմատիկաբար, «Մուրճ»-ի բոլոր համարներում, որոշում էր նոցա էութիւնը և տեղը մեր գրականութեան մէջ։ «Մուրճ»-ն էր, որի սիւնակներում չարունակ արծարծւում էին ժամանակակից ազրող խնդիրներ, որոնց լուծումը մեծ նշանակութիւն ունէր մեր հասարակութեան համար. «Մուրճ»-ն էր, որի մէջ լոյս տեսան բազմաթիւ ինքնուրոյն և թարգմանական էջեր և պատկերներ, որոնք իրենց բովանդակութեամբ, չօշափած հարցերով ու գեղարուեստական պահանջների համեմատ կողմերով մեր գրականութեան մէջ աչքի ընկնող տեղ գրաւեցին։ Նա էր, որ լաջող կերպով ծանօթացրեց հասարակութիւնը այնպիսի գիտական հոսանքների հետ, որոնց մասին որոշ տեղեկութիւն չունէր մեր ընթերցող միջին հասարակութիւնը։

Մի կողմից անկարող լինելով մի առ մի թուել Ձեր և «Մուրճ»-ի աշխատակիցների բոլոր կողմերը և մատուցած օգտակար ծառայութիւնները մեր հասարակութեան և գրականութեան, միւս կողմից լիովին գոհ լինելով վերև լիշած Ձեր չիտակ և ազնիւ գործունէութեան պտուղներից,—մենք բարոյական պահանջ ենք զգում լայտնել Ձեզ և «Մուրճ»-ին լարգող աշխատակիցներին մեր շնորհակալութեան բուռն զգացմունքները և ի սրտէ ցանկանալ, որ դուք անչեղ չարունակէք Ձեր փչոտ ճանապարհը՝ բարձր պահելով «Մուրճ»-ի դրօշակը հասարակութիւնը ղեկավարող կոչման բարձրութեան վրայ, ազատ ամենայն ստոր և գծուծ թշնամական ինտրիգներից, մաքառել հասարակութեան վնասակար տարրերի և երևոյթների դէմ,—չարունակէք ձեր փչոտ ճանապարհը՝ արձագանք տալով հասարակութեան արդար պահանջներին և կեանքի հոգեթրթիռ երևոյթներին, վարելով մասնալի այդ պահանջները ու երևոյթները ճշմարիտ գաղափարի ոյժով դէպի վսեմ, բարձր-կուլտուրական սֆերան, ուր կը գտնէք ձեր գործունէութիւնը ու զրկանքները գնահատող և երախտագէտ հասարակութիւնը—և այդ կը լինի ձեր փալլուն լաղթանակը։

Մի խումբ երիտասարդներ Օդեսսայի կոլոնիայից—«Մուրճ»-ի համակրողներ՝

Ս. Մինասեանց, Մարիամ Մինասեանց, Ց. Միրզայեանց, Սիմ. Տէր-Սիմէոնեանց, Մ. Մանուէլեանց, Յովհ. Ադամիրզեանց, Գասպար Պալասատեանց, Աւետիք Խաչակեանց, Միք. Մուտաֆեանց, Գասպար Գաբրիէլեան, Պ. Թիթրեան, Կարապետ Խաչամիրեան, Տէր-Ստեփանեան, Ցարութիւն Ցարութիւնեանց։

«Մուրճ» ամսագրի տասնամեայ մաքուր գործունէութեան առթիւ նորա Ախալքալաքի ընթերցողներից ու յարգողներից

ՈՒՂԵՐՁ

Ազգերի զարգացման, լառաջադիմութեան փարոսն է մամուլը։ Առանց նորան կոյր է մարդկութիւնը, առանց նորան անհաչտ թշնամի էին մարդկութեան անդամ ցեղերն իրար. մամուլն է որ, ի միջի այլոց՝ եղբայրութեան սկզբունքները տարածեց։

Հայոց ազգն իրրև մի փոքրիկ զերդաստան մարդկային ցեղի, ներկայ դարում մամուլի առաջնորդութեամբ դուրս եկաւ մտաւորական խաւարից, քայլափոխեց լառաջադէմ ազգերի հետ, եթէ ոչ հաւասար, գոնէ ըստ իւր կարողութեան և պայմանների՝ որ ընկած կեանքը ստեղծել էր նորա համար։

Մեր մամուլի հարիւրամեայ գոյութիւնը, ասիճանաբար սերունդներ պատրաստելով, այսօր մեզ կանգնեցրել է գրական սեղանի առաջ։ Ունինք օրագրեր, շաբաթագրեր և հանդէսներ, արդարև մեծ ու գնահատելի է նոցա ծառայութիւնը, որովհետև մեր առօրեայ կեանքի պատկերն են նոքա. սակայն ամսագիրն ունի իւր լատուկ նշանակութիւնը։ Անմահ անուն «Հիւսիսափայլից» մեր գրական հսկաներ՝ Նազարեանի, Նալբանդեանի և այլոց կտակարանից լետոյ՝ երևացել են մեր գրական հորիզոնում ամսագրեր և, աւաղ, շուտով չքացել։ Դեռ ևս Հայն անընդունակ էր ապահովել ամսագրի գոյութիւնը։ Միայն «Մուրճն» է՝ որ տոկալով նիւթական և բարոյական հարւածների՝ այսօր տօնում է՝ թէև ընտանեկան շրջանում, իւր գոյութեան, ազնիւ գործունէութեան տասնամեակը։

«Մուրճն» իւր ծննդից մինչև այսօր տուել է հատընտիր նիւթեր։ Նորա բոլոր համարներն իրար մօտ շարած՝ ունինք մի փոքրիկ և լուրջ մատենադարան թարգմանական և ինքնուրոյն գրուածքների, վէպերի, բանաստեղծութիւնների, կչռադատուած քննադատութիւնների, և որ աւելին է, նա յտեմարան է Հայոց ներկայ պատմութեան։

Որքան հիացումն կ'ազդէ անկողմնակալ ընթերցողին «Մուրճի»-ժամանակակից ատեստիւններին» գեղեցիկ ու տիտուր երեոյթների պատմական շղթան։

«Մուրճն» իւր մաքուր գործունէութեամբ դրաւած է արդէն ընթերցող հասարակութեան լարգանքը, նրա տոկուն խմբագիրն իւր աշխատակիցների բանակով պատկառելի է հասարակութեան, որովհետև նոցանից շատերը մեր ժամանակակից հեղինակներն ու գրողներն են։

Ցանկանում ենք «Մուրճին» լարատեւութիւն և լաջող ապագայ, ցանկանում ենք ի խոր սրտէ՝ «Մուրճը» միշտ լառաջադիմական, մաքուր և ազնիւ տեսնել, որպէս եղել է մինչև այսօր։

Ընդունեցէք մեր լարգալիր խնդակցութիւնը.

Դերենիկ Դեմիրճեան, Աղասի Հովուեանց, Շաւարշ Դեմիրճոզլեան, Զ. Տէր-Գրիգորեան, Սէլլան, Կարապետ Պապինեանց, Ստեփան Լէխուլեանց, Խորէն Մեծասունեանց, Ղազարոս Տէր-Գրիգորեանց, Յակոբ Ազնաւուրեանց, Վաղարշակ Մանանտեանց, Սարգիս Գասպարեանց, Արշաւիր Մալոլեանց, Վարդան Շահպարոնեանց, Հմայեակ Ալբերդեանց, Մ. Խ. (գիրը անորոշ), Ստեփան Մելիքսեդեան, Պօղոս Դիլանեան։

1898 թ. 26 Հոկտեմբ. Ախալքալաք.

Մուրճ ամսագրի մեծարգոյ խմբագրութեան

Թոյլ տուէք Ախալքալաքի մի խումբ հայ տիկիններիս և օրիորդներիս շնորհաւորել «Մուրճի» տասնամեայ չրջանը։ «Մուրճ»ի տասնամեակը առիթ է մեզ համար արտայայտելու այն ջերմ վերաբերումներն ու զգացումները, որ ինքնազարգացման համեստ ճանապարհի վրայ՝ առանձնապէս հայկական նորագոյն գրականութեան նախանձախնդիր՝ մենք տածել ենք առանձնապէս դէպի «Մուրճը», որոնելով այնտեղ հայկական մտքի և խօսքի ամփոփ և լուրջ արտայայտութիւններ։ Վերջինս մեր հոգսերի առարկան, մեր անհրաժեշտ պահանջն է։ Եւ հարկաւ «Մուրճը» իր տասնամեայ՝ առանձնապէս մեր կեանքի ասպարիզում դժուար ու արտասովոր աշխատանքով՝ արտայայտել է այդ, վերաբերելով դէպի իր գործը մաքուր և չիտակ, բացէ ի բաց զգացումներով։

Յանկանում ենք ի սրտէ, որ «Մուրճ»-ը այսուհետև էլ աւելի հնարաւորութիւն և ոյժ ունենայ արտայայտիչ ու թարգման լինելու նորագոյն մտքի, լինի օթեան հայկական անօթեան դրականութեան և, որ անհրաժեշտ և զգալի է մեր կեանքում, այդ արտայայտութիւնները լինեն ամփոփ և լուրջ։

Օր. Մարիամ Շահպարոնեանց, օր. Սաթենիկ Յովհաննէսեան, օր. Կատարինէ Յովհաննէսեան, Տիկ. Երանուհի Տէր-Գրիգորեանց, օր. Հռիփսիմէ Քաջազնունի, տ. Փեփրոնէ Դիլանեանց, օր. Տիգրանուհի Զառաֆեանց, տ. Սօֆիա Տէր-Ստեփանեան, օր. Վիրգինէ Քաջազնունի, Հեղինէ Այվազեանց, օր. Աշխէն Հասրաթեանց, օր. Շողակաթ Պապինեանց, տ. Շամունէ Դարբինեան, տ. Սաթինիկ Բարէկեան, օր. Վարդուհի Գասպարեանց, տ. Շուշանիկ Տօնականեանց, տ. Աննա Շահպարոնեանց։

Մուրճ ամսագրի Մեծապատիւ Խմբագրին

Հոկտեմբերի 19-ին, 1893 ամի։ Մեղրի գիւղ.

«Մուրճ» ամսագրի տասնամեայ համեստ շրջանն ստորագրող մեղրեցիներս իրերին լարգանօք չնորհաւորելով՝ ակն ունինք նրա բեղմնաւոր քանդինգամեակը տեսնելու։

«Մուրճ»-ի դրօշակին լարատեւութիւն և առաւել փայլ բարեմաղթելով ասում ենք. «Կեցցէ դոքտոր Արասխանեանց, կեցցէ «Մուրճ»-ը և կեցցէ ըստ չափու կարողութեան Մուրճի առաջադիմութեանը զարկ տուող խումբը»։

Վահան քահանայ Տէր-Գրիգորեանց, Մատթէոս Շահեանց, Եփրեմ Վարդանեանց, Ղազարոս Տողեանց, Գէորգ Իսրայէլեանց, Յովհաննէս Մալումեանց, Գալուստ Յարութիւնեանց, Կարապետ Շահեանց, Անաստաս Գաբրիելեանց, Տիգրան Տէր-Ազարեանց, Արշակ Վաչեանց։

Մեծապատիւ բարեկամ պ. Ա. Արասխանեան

Ամեն մի ազն ւ գործ իրաւունք ունի ընդհանուրի համակրութեան։ Ձեր գործի ազնուութիւնը,—մի գործ, որի ծանր խաչը կրում էք ահա 10 տարի,—ինչպ նրանումն է, որ նա ներշնչած է ազնիւ զաղափարով, այն է՝ ծառայել հասարակաց մտաւոր և բարոյական պիտոյքներին։ Գրականական, հասարակական պատմաբանին է մնում, ի հարկէ, քննադատել, ապացուցել, թէ որքան էք հասել Ձեր նպատակին, իրագործել Ձեր պլանները. բայց այժմ—լռել և ամենամաքուր, սրտագին ցանկութիւններով չողջունել «Մուրճ»-ի գործունէութեան համեստ տասնամեակը, մենք իրաւունք չունինք. դա ծանր լանցանք կը լինէր բարոյականութեան ամենատարրական պահանջների դէմ։ Անշնորհակալութիւնը մի հրէշ է, որ ոչ միայն անձնաւորութեան, հասարակութեան մտաւոր ու բարոյական տգիտութիւնն է ապացուցանում, այլ և չատ դէպքերում խանգարող է հանդիսանում ամեն մի առաջադիմութեան։

Նամանաւանդ ուրախալի է ինձ այդ տօնախմբութեան ժամանակ չնորհաւորական ողջոյններով դիմել «Մուրճ»-ին, որտեղ ես սկսել եմ գրականական գործունէութիւնս։ Դեռ 1891 թվին, զետեղելով «Մուրճ»-ում իմ գրականական առաջին փորձը, և խրախուսած Ձեզանից, շարունակեցի գործել լօգուտ ընթերցող հասարակութեան։ Այդ չորս-հինգ տարուայ ընթացքում ես, ի հարկէ, չատ չնչին բան եմ տրել, հանդամանքները թոյլ չեն տուել լիովին լանձնել սիրած գործիս,—բայց գրականի խաչը ես միչտ աչքիս առաջ եմ ունեցել. նա է եղել ինձ առաջնորդողը, ինձ խրախուսողը. նրանով է միչտ լցած եղել կեանքիս իմաստը։

Եւ ինչքան տարիներ էլ անցնեն, «Մուրճ»-ի համարները իմ մէջ միշտ և բարի վիշտերութիւն և՝ բարի զգացմունքներ են զարթեցնելու։ Ընդունելով իմ առաջին գրախօսական փորձերը, Դուք գրանով արդէն ինձ, կարծես, ասում էիք, որ ես գրիչս վայր չդցեմ ձեռքիցս։ Եւ եթէ չլինէր այդ սիրալիր ընդունելութիւնը Ձեր կողմից, հիասթափումը, ամեն մի նոր գործի այդ անեղ թշնամին, դուցէ իմ ոտներն էլ կարէր։

Սրանից ցանկանում եմ Ձեր գործին աւելի և աւելի առաջադիմութիւն, թող ստուարանայ «Մուրճ»-ի աշխատակիցների թիւը, թող աւելի և աւելի ճոխանայ նրա բովանդակութիւնը, — և իր օրինակելի գործունէութեամբ թող խրախուսող հանդիսանայ մեր գրականութեան ուրիշ գործիչների համար...

Ես և ինձ հետ միասին «Նոր-Փորձ»-ի խմբագրութիւնը, որտեղ ես խմբագրի պաշտօնն եմ վարում, ամենալաւ ցանկութիւններով ողջունում ենք «Մուրճ»-ի գրականական և հասարակական գործունէութեան տասնամեակը։

Ձեզ բարի կամեցող Յովհաննէս Շահնազարեանց

1898 թ., հոկտ. 6. Մոսկուա։

Թաւրիզ, 25 հոկտեմբերի 1898 թ.

...Ուրախութեամբ մասնակցում եմ մամուլի և գրականութեան այդ ընտանեկան տօնին և անկեղծ շնորհաւորութիւններս լայտնում եմ ազնիւ խմբագրութեան, մաղթելով նաև վայելել մի քանի վիսնամեայ յորելեաններ։

Մարդկային զարգացման պատմութեան և գաղափարների բարեշրջութեան մէջ ամենամեծ դերը խաղացել է և խաղում է մամուլը։ Գրականութեան մատուցած անհերքելի ծառայութիւնը մանաւանդ հայերիս համար՝ էլ աւելի չօշափելի և չնչտելի է։ «Մուրճ»-ը իբր հանդէս, իրա կարգին ունի գրաւած մի կարևոր և հանրօգուտ դիրք հայ ազգատիպ գրականութեան մէջ. նրա բաղմակողմանի և ճոխ պարունակութիւնը անշուշտ արտադրած է հիւթեղ պտուղներ, որոնցից օգտուել է և վայելում է հայ հասարակութիւնը։

Լիապէս եմ, որ հայ գրականութեան արժանի մշակները և համակրողները, ինչ կուսակցութեան էլ պատկանում լինին, ուրախութեամբ և անկեղծութեամբ պիտի մասնակցեն «Մուրճ»-ի նման մի հայ հանդէսի տասնամեայ գործունէութեան յիշատակութեան։

Մնամ լարգանօք՝ Դոքտոր Փաշալեան

Մեծապատիւ Պարոն Արատիանեանց

Թոյլ տուէք ինձ միացնել իմ ձայնը ընդհանուրի ձայնին և ամբողջ հոգով շնորհաւորել «Մուրճ»-ի տասնամեայ հասակրելի գոյութիւնը և Ձեր շիտակ ու անկաշառ հրապարակախօսական ու հասարակական գործունէութիւնը, որը չպիտի մոռանալ, թէ սկսել է «Մուրճ»-ից շատ առաջ։

Օտարութեան մէջ ինձ համար կատարեալ մի տիտանք է, որ հայ հասարակութիւնը ընդունակ եղաւ այնքան անկեղծ գնահատել մի մաքուր գրականական օրգանի և մի առողջամիտ գործիչի գործունէութիւնը։ Թող այդ ընդհանուր համակրանքն ցոյցերը կրկնապատկեն Ձեր զովելի եռանդը և գօրացնեն Ձեր հաստատուն կամքը, որպէս զի աւելի համարձակ մատնչէք խաւարի, կեղծիքի և հասարակութեան առողջ առաջադիմութեանը խոչնդոտ տարրերի դէմ։ Ես միշտ այն համոզմունքի եմ եղել, որ «Մուրճ»-ը մատաղ հայ գրականութեան ամենաչիտակ քարեկամներից մէկն է, և եթէ եղել են բռնէներ, երբ, իմ հաւատացողութեամբ, նա գործել է սխալներ, երբէք այդ սխալները իմ աչքում չեն նսեմացրել նրա արժատական, խոշոր ու հայ մամուլի մէջ հազագիւտ արժանաւորութիւնները։ Այժմ «Մուրճ»-ը, անցնելով 10-ամեայ անընդհատ գործունէութեան քուրայով, հարկաւ, իւր անկեղծութեանը, ազնիւ ձգտումներին և առողջամիտ ուղղութեանը կաւելացնի և՛ փորձառութեան պաշարն ու հմտութիւնը, որով և աւելի աջող կը կրի բուն առաջադիմութեան դրօշակը։

«Մուրճ»-ը արդէն ամուր հիմք է դրել հայ հասարակութեան մտքի ու զգացումների մէջ, և, համոզուած եմ, ոչ մի թշնամական ցոյց չի կարող մաղու չափ մեղանել նրա բարոյական վարկին։ Ձեր կողմն է բոլոր հայ գրականական գործիչների անկեղծ համակրանքը. դէպի «Մուրճ»-ն է թեքուած զուտ գրականութեան բուն շահերը հասկացողների լարգանքը, իսկ այս մի ազնիւ դրաւական է, որով Դուք պիտի պարծենաք և որը Ձեր ամենապէսաւոր ոյժերից մէկն է։

Ընդունեցէք լարգանքներիս հաւատիքը Նիրվանզադէ

1898 թ. նոյեմբերի 10,
Ցղեստա։

Յարգոյ Խմբագրապետ «Մուրճ» ամսագրի

Պարիզ, 20 նոյեմբ. 1898 թ.

Պարիզու Հայ Ուսանողական միութիւնս սրտի անհուն գոհունակութեամբ կը փութայ «Մուրճ»-ի ազգային սուրբ հանրօգուտ ամսագրին տասնամեակին առթիւ զրկել Ձեզ իր ամենաջերմ շնորհաւորութիւնները և

մաղթել Ձեզ յարատևություն և յաջողություն առ ի մեծ գարգացումն ոգի ամսագրին, գրական ու հասարակական, որ կոչված է նշանաւոր տեղ մը գրաւել հայ լրագրության մէջ։

Մնամք խորին յարգանօք ի գլխաց գործադիր ժողովոյ

Ատենադպիր Խ. Սարգիսեան

Ատենապետ Վ. Մեսրոպեան

«Մուրճ»-ի տասներեայ յոբելեանի տօնախմբության Կարգադրիչ Մասնաժողովին

Ցկարողանալով անձամբ ներկայ գտնուել այսօրուայ հանդէսին, խնդրեմ եմ սրտաբուղխ շնորհաւորանքս յայտնէք յարգելի պ. Յոբելեարին «Մուրճ»-ի հրատարակության տասնամեակի առիթով։ Ամսաթերթի անընդհատ տասնամեայ գոյությունը անօրինակ երևույթ է մեր մամուլի մամուլի կարճատև կեանքի մէջ, և այսօրուայ տօնը ինձ համար մեր մամուլի առաջադիմության տօն է, որ ինձ խորին կերպով ուրախացնում է իբրև լաւագոյն ապագայի գրաւական։ Աւելի քան համոզված լինելով որ Մուրճի այս աջողությունը անկասկած արդիւնք է նրա խմբագիր-հրատարակչի անչափասէր ջանքերի, խոնարհում եմ պ. Արասխանեանի տակտության և անձնուիրության առջև և չեմ մոռանում, որ «Մուրճ»-ը իւր հրատարակության առաջին օրից ի վեր միշտ անկեղծօրէն, առանց հային նկատումների մասնակցել է մեր գրական և հասարակական ընթացիկ խնդիրների կարգադրության չափ բազմակողմանի քննությանը, աշխատելով ճշմարտությունը լուսաբանել և ազատ պահել նրան ամեն տեսակ բարեկամական կամ թշնամական աչառու հակումներից։

Միանում եմ Ձեր զգացմունքներին և ցանկանում եմ «Մուրճ»-ին և պ. Արասխանեանցին յարատևություն արդիւնաւէտ գործունեության մէջ։

Ստեփան Լիսիցեանց

25 հոկտ. 1898 թ. Թիֆլիս։

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 հոկտեմբ.։ Շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը, ցանկանում ենք յաջող ու երկար չարունակութիւն դժուարաչատ աշխատանքի՝ յօգուտ ազգի։ Ուսանողութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 հոկտեմբ.։ Պետերբուրգի հայերը ջերմագին շնորհաւորում են Մուրճի տասնամեակը, որպէս շիտակ մարտիկի ճշմարտութեան և յառաջդիմութեան։

Եղիսաբէթ և Մարգարիտ Մելիք-Բեգլարեաններ, Եղիսաբէթ Զաքարեան, Ալմաստ Եաղուբեան. բժշկապետներ՝ Վարդանեան, Քալանթարեան, Զալեանց, Զաքարեան, Բուդուղեան, Թաղէոսեան, Օհանեան. քահանայ Խանասաճեան. Բաշինջաղեան, Արտակէսեան, Թումասեան, Գէորգեան, Աւագեան, Խոջայինթեան, Սողոմոնեան, Պատկանեան։

ԱԳՈՒԼԻՍ, 17 հոկտեմբ.։ Շնորհաւորելով Մուրճի տասնամեակը՝ ցանկանում ենք նոյն եռանդով և չիտակութեամբ չարունակել հրատարակութիւնը երկար տարիներ։

Թոգէոսեան եղբայրներ, Սամսոն Արասխանեան, Շահնազար Շահնազարեան, Գրիգորափոր Ալանեանց, Լեոն Արտոխանեանց, Անդրիաս Տէր-Գէորգեան, Միքայէլ Մկրտչեան, Աւետիս Ներսէսեանց, Ալէքսանդր Աբեանց, Բաղդասար Շիրազեան, Դաւանիէլ Քալանթարեանց։

ՆՈՒԻԻԻ, 24 հոկտեմբ.։ Շնորհաւորում ենք մեր յարգելի, միակ ամսագրի տասնամեակը. ցանկանում ենք Մուրճին լիակատար յաջողութիւն չարունակելի կեանքում և լուրջ լրագրութեան զարգացումն ու ծաւալումը մեզնում, որի ներկայացուցիչ է հանդիսանում Մուրճը. ներկայացնում ենք հարիւր ռուբլի Մուրճի նիւթական պաշտպանութեան համար։

ՆՈՒԻԻԻ, 24 հոկտեմբ.։ Շնորհաւորում ենք տասնամեակը. ցանկանում ենք յաջողութիւն չարունակելի գործունէութեան, հաստատուն և արդիւնաբեր հոգ նորա ապագային։

Փեփրոնիա, Խաչատուր (Խոջամիրեանց)։

ՆՈՒԻԻԻ, 24 հոկտեմբ.։ Ցաւում ենք որ չենք կարող ներկայ լինել. ցանկանում ենք Մուրճին լիակատար յաջողութիւն և նոր յօբելենական հանդէսներ։

Յովհաննէս, Աբրահամ, Սոնա, Մենաոր (Բունիաթեաններ)։

ՇՈՒՇԻ, 24 հոկտեմբ.։ Շնորհաւորում եմ Մուրճի տասնամեակը և ցանկանում կատարեալ յաջողութիւն մեր միակ ամսագրին. թող նա հասնի այն տեղին, ուր լսում է ալլոց կիրքը և խոստովանում ճշմարտութիւնը։ Արշակ Ադամեանց։

ԷՋՄԻԱԾԻՆ, 24 հոկտեմբ.։ Արտանց շնորհաւորում եմ խմբագրին և աշխատակիցներին տասնամեակի և չիտակ, արդիւնաւոր ծառայութեան համար հայրենի գրականութեան։ Գալուստ Տէր-Միքայէլեան։

ԲԱՔՈՒ, 24 հոկտեմբ.։ Շնորհաւորում եմ տասնամեայ գործունէութիւնը գրական ասպարէզում. ցանկանում ենք Ձեզ կատարեալ յաջողութիւն ապագայում։ Համբարձում Միլիքեան։

ԲԱՔՈՒ, 24 հոկտեմբ.։ Արտանց շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք յաջողութիւն երկար տարիներ չիտակ և լուրջ օրգանին։

Մալրիկ, Վիրգինէ (Մանուէլեանցներ), Շուշանիկ Շամքորեանց, Պերճանուշ (Տիգրանեան), Տրդատեանց։

ԲԱՔՈՒ, 24 հոկտեմբ.։ Շնորհաւորում եմ Մուրճի տասնամեակը՝ ցանկանում եմ Մուրճի չիտակ ու բազմակողմանի գրական հասարակական գործունէութեան ծաղկումն ու բարգաւաճումը երկար տարիներ։

Լեոն Մանուէլեանց։

ԲԱՔՈՒ, 24 հոկտեմբ.։ Չափազանց ցաւում եմ որ առողջութեանս անհասատաութիւնը խանգարեց անձամբ շնորհաւորել։ Լեոն Մանուէլեանց։

ԲԱՔՈՒ, 24 հոկտեմբ.։ Շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք Մուրճի չիտակ և բազմակողմանի գրական հասարակական գործունէութեան ծաղկումն ու բարգաւաճումը երկար տարիներ։

Վրոյր, Գ. Սարգսեան, Մ. Նաւասարդեան, Յ. Միրիմանեանց։

ԲԻԳԱ, 24 հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք նորան յաջողութիւն ընտրած փշոտ ճամբի վրայ. թող անաչառ խորը քննադատութիւնը և յառաջադէմ ուղղութիւնը չիջնեն Մուրճի դրօշակից. թող նա լինի վառ լապտեր՝ հասարակութիւնը վարող դէպի գիտութեան և նոր մտքի բնագաւառը. կեցցեն Արասխանեանց և Մուրճին նուիրուած աշխատակիցները։ Հայ ուսանողներ։

ԼԱՅՊՅԻԳ, 24 հոկտեմբ.։—Յարգանք վայլուն և ստեղծագործող Մուրճին։ Շահէն։

ԳԱՆՁԱԿ, 24 հոկտեմբ.։ - Դանձակի մի խումբ լարդոդնելից մատուցանում եմ անկեղծ շնորհաւորութիւններ Մուրճի օգտակար գործունէութեան տասնամեակի առթիւ և ցանկանում եմ նոն նորա ապագայ բարգաւաճումը նաև։

Վարդապետ Գէորգ-Թաւարալեան։

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 24 հոկտեմբ.։—Ողջունում ենք Մուրճի տասնամեայ ծառայութիւնը հասարակաց ճշմարտութեան և ինտելլիգենցիայի քաղաքացիական յաջողութիւններին. ցանկանում ենք ամսագրին կատարեալ յաջողութիւն և շատ տասնամեակներ։

Ուսուցիչներ՝ Տէր-Գրիգորեան, Հովհան, Տէր-Գրիգորեան, Պետրոսեան, Սիմէօնեանց, Բեզիրգանեանց, Դիլանեան, Բոռեան, Դեմիրճօղլեան, Աղնաուրեան։

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 24 հոկտեմբ.։—Զգալով Մուրճի ամբողջ կարևորութիւնը մեր հասարակական, գրական կեանքի մէջ՝ ողջունում ենք համեստ գրականական ուղղութիւնը. լառնջ՝ շիտակ, ճշմարիտ, լառաջադէմ ուղղութեամբ։

Սոֆիա Տէր-Ստեփանեան, ամուսիններ Տէր-Գրիգորեան, ամուսիններ Շահսարոնեան, Դեմիրճեան, Սէյլան։

ՄՈՍԿՈՒԱ, 25 հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք Մուրճի խմբագրութեանը տասնամեայ շիտակ, անձնուէր ծառայութեան համար հայրենի գրականութեանը և մամուլին. ցանկանում ենք եռանդ և յաջողութիւն ապագայ գործունէութեան։

Լեոն Սարգսեանց, Կարապետ Կուսիկեան։

ԹԱԻՐԻԶ, 25 հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք տասնամեակը. ապրի Մուրճը։ Լիլաւալի ուսուցչական խումբը։

ԲԱՔՈՒ, 25 հոկտեմբ.։—Անկեղծ շնորհաւորում ենք Ձեր հրատարակած Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք Ձեզ անշէջ եռանդ։

Եղենիա, Մուշեղ (Թալանթար)։

ԲԱՔՈՒ, 25 հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք երկար կեանք արդիւնաւէտ գործունէութեան մէջ։

Պերճանուշ, Ստեփան (Տիգրանեանց)։

ՄՈՍԿՈՒԱ, 25 հոկտեմբ.։—Սրտանց ողջունում եմ Ձեզ, որ ամբողջովին նուիրած է Ձեզ ժողովրդական կրթութեան։ Դուք անձնուիրաբար, բարոյական և նիւթական փորձութիւնների մէջ, մրմիալն քարու դիմադրութեամբ անցաք Ձեր փառաւոր տասնամեայ ճանապարհը՝ ապագայի հեռանկարով. ցանկանում եմ լայն և հեռու ուղեգծեր ժողովրդի ոգեկան զարգացման ճանապարհի վրայ, որի համար կոչ եմ անում նաև հասարակութեան՝ աջակցել գործին նիւթական միջոցներով, որոնք այնքան պակասում են մեր աշխատաւորներին առհասարակ։

Շահազիզեան (Ամբատ)։

ՇՈՒԼԱՒԵՐ, 25 հոկտեմբ.։—Շուլաւերի երիտասարդութիւնը շնորհաւորում է Մուրճի տասնամեակը գրական գործունէութեան ասպարիզում, ցանկանալով ապագայ բարգաւաճում չիտակ շաւիղով որ տանում է դէպի իդէալը։ Երիտասարդութիւն։

ՊՐԻՇԻԲՍ, 25 հոկտեմբ.։ Սրտանց շնորհաւորում եմ լարգելի ամսագրի խմբագրութեան տասնամեակը. ցանկանում եմ աւելի ու աւելի բարգաւաճում և յաջողութիւն։ Վարվարա Միանոարեան։

ԵՐԵՒԱՆ, 25 հոկտեմբ.։—Յաւում եմ որ չեմ կարող ներկայ լինել. շնորհաւորում եմ տասնամեակը. աշխատանքը, անձնուիրութիւնը և իրաւունքը մեր ապագայի յաջողութեան՝ գրականներն են։

Մնացականեանց (Գաբր.)։

ԲԱՔՈՒ, 25 հոկտեմբ.։—Խմում ենք Արտխանեանցի և աշխատակիցների կենացը։ Մանուէլեանց (Լեոն)։

ԲԱՔՈՒ, 25 հոկտեմբ.։—Միացնելով Ձեր բարեկամների անկեղծ բարեմաղթութիւններին նաև մերը՝ շնորհաւորում ենք Ձեզ տասնամեակի համար. սպասում ենք ապագայում աւելի լայն գործունէութիւն։

Էրամեան, Մկրտչեան, Դանիելեան։

ՄՈՍԿՒԱ, 25 հոկտեմբ.։—Մեծ է և դժուարին գրչի աշխատաւորի խնդիրները, հասարակաց զարգացման ղեկավարի. Դուք տասը տարի ծառայեցիք այդ գործին անխոնջ, անձնուրաց կերպով, խորը հաւատով. փառք և պատիւ Ձեզ և երկար կեանք Մուրճին, որի աշխատակից լինելու պատիւն ունիմ նորա գոյութեան օրից։ Թատուրեան։

ԺՆԵՒ, 25 հոկտեմբ.։—Անկեղծ շնորհաւորանքներ Մուրճի տասնամեակի առիթով։

Հայ ուսանողներ և ուսանուհիներ. 17 սորագրութիւն։

ԱՐՄԱՒԻՐ, 25 հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք տասնամեակի համար. ցանկանում ենք բազմամեայ բեղմնաւոր գործունէութիւն Մուրճին, կուլտուրալի՞ծաւալողին իւր ազգի մէջ, և որը քարոզել է սէր դէպի հարևան ազգերը։

Հմայեակ Մաժինեանց, քահանայ Սէֆէրեան, դոքտոր Սէֆէրեան, Օլգա Խաչիկեան, Վախթանգ Նալբանդեան, Մկրտիչ Լիսիցեան, Սարգիս Մխիթարեանց։

ԲԵՐԼԻՆ, 25, հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը։ Հայ Ուսանողութիւն։

ՄՈՍԿՈՒԱ, 25 հոկտեմբ.։—Շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք յետագայ բարգաւաճումը յօգուտ հայրենի գրականութեան. ցանկանում ենք խմբագրին այժ, եռանդ անձնուիրաբար ծառայելու հայկական ժուրնալիստի ծանր ասպարէզի վրայ։

Ստեփան Մամիկոնեան, խմբագիր Հանդէսի Բարխուդարեան, Մինաս Լազարեան, Ալէքսանդր Ծատուրեան, Սեւոնս Պօղոսեան, Խարմաջեան, Մկրտիչ Պապովեան, Բողդան Արուչանեան։

ՄԻԻՆԻԷՆ, 25 հոկտեմբ.։—Երկար արդիւնաւէտ գործունէութիւն ազնիւ Մուրճին ու ջերմ յաջողութիւն ձեզի։ Շանթ։

ՇՈՒՇԻ, 25 հոկտեմբ.։—Այս հեռագրով չատալում ենք յայտնել Մուրճի խմբագրին մեր անկեղծ ուրախութեան խորին զգացմունքը և խնդրում ենք մասնակից համարել մեզ Մուրճ ամսագրի տասնամեակի առթիւ կատարուող բերկրալի տօնին։ Օրիորդներ և Տիկնայք։

ԼԱՑՊՅԻԳ, 25 հոկտեմբ.։—Սրտով մասնակից եմ հանդէսին։

Զարբգ։

ՄՈՍԿՒԱ, 27 հոկտեմբ.։—Բերկրանքով ողջունում ենք Մուրճի տասնամեակը. նորա չիտակ ուղղութիւնը և արդիւնաւէտ գործունէութիւնը անցեալում լաւագոյն երաշխաւորութիւնն է յաջողութեան ապագայում. շնորհաւորում ենք Ձեզ, պարոն խմբագիր, աղաչում ենք Աստծուն, որ այժ տայ Ձեզ նոյն այժով և նոյն եռանդով շարունակելու լաւ սկսած և չիտակ վարած գործը։ Մոսկուայի հայ ուսանողներ։

ՄԱՅԿՈՊ, 30 հոկտեմբ.—Սրտանց շնորհաւորում ենք Մուրճի տասնամեակը. ցանկանում ենք յաջողութիւն և բաղդաւորութիւն։

Կարապետեանց, Մնացականեանց, Սաթունեանց, Անդրէասեանց, Աւետիսեանց, Մալեանց, Շապովարեանց։

ՊԱՆԴԻՍՏՈՒԹԻՆԸ ԳՈՂԹԱՆԻՑ

ԱՒԻՏԻՍ ԴԱՒԹԵԱՆՑԻ

Մի ցաւալի երեւոյթ է մեր մէջ նկատւում, որը ներկայումս քրոնիկական կերպարանք է ստացել։ Այդ երեւոյթը գաղթականութիւնն է դէպի օտար քաղաքներ, որը գնալով ընդարձակ ծաւալ է ստանում և սպառնում է դատարկել մի ժամանակ հարուստ և անուանի Գողթանի [1]) կենտրոն Ագուլիս գիւղը։ Բայց մենք ամենեին սխալւած չենք լինիլ, եթէ նոյնը ասելու լինենք ամբողջ Գողթան գաւառի մասին, ուր նոյն երեւոյթն է նկատւում, ինչ որ Ագուլիսում։ Եւ չատ էլ բնական է, քանի որ երկուսն էլ միատեսակ պայմանների մէջ են։ Սակայն մենք կը բաւականանք Ագուլիսով, որը աւելի պարզ է արտայայտում պատճառները։ Որոնք

---

[1]) Գողթան անունը ներկայումս ոչ պաշտօնական է և ոչ ժողովրդական, այլ գործ են ածում միայն ուսածները՝ պատմական լիշողութեամբ, և այդ իսկ պատճառով անկարելի է նորա սահմանները որոշել։ Առաջաբար Գողթանին են չատկացնում այն հայ գիւղերը, ուր դարերից ի վեր տիրում է հայերէնի այսպէս կոչւած զոկերէն բարբառը, կենտրոն ունենալով Ագուլիսը. այնպէս որ գողթնեցի պատմական անունը ներկայումս նոյնանիշ է դառել զոկ ժողովրդական անունին։ Այդ գիւղերն են՝ Վերին Ագուլիս, Դաշտ Ագուլիս (կամ Ստորին Ագուլիս), Վերինգետ, Հանդամէջ, Տանակերտ, Բաղաքիկ, Գիսար, Յղնա։ Բայց բնական է, որ աշխարհագրական տեսակէտով դա նեղ ըմբռնումն է, որովհետեւ այդ գիւղերին հարեան կամ կպած կան չատ ուրիշ գիւղեր, ուր թրքական ազգաբնակութիւն է և կամ ուր հայեր են՝ ոչ զոկ բարբառով. օրինակ հէնց Հանդամէջին այգիներով կպած Օրդուբաթ քաղաքը (1886 թ-ին 4199 բնակիչ, որից 411 հայ, մնացածը թուրք) Ընդունելով Գողթանի սահմանները ներկայիս Վերին-Ագուլիսի գաւառակը (ուչաստոկ), այդտեղ տեղ են գտնում 54 գիւղ, որոնցից 17-ում կան հայ բնակիչներ. բոլոր 54 գիւղերի բնակիչների թիւն է թուրք և հայ միասին 2.˙02 տուն կամ 21 297 հոգի (18·6-ի պաշտօնական թուականով, որ պէտք է իբրև մինիմում ընդունել)։ Օրդուբաթ քաղաքի հետ միասին գաւառակը կ'ունենայ ուրեմն առնւազն 25.496 բնակիչ։

են այդ պատճառները՝ 1) որդկերանց ուսում տալը, 2) գործերի անհրաժեշտ պահանջը և 3) տնտեսական անապահովութիւնը։

Ագուլեցին պատելով զանազան երկիրներ, շատ բնական է, որ նրա մէջ պիտի լցնար սէր և պահանջ դէպի ուսումը։ Ասենք որ Ագուլիսը ամենաառաջիններիցն էր Անդրկովկասում, որը հիմնեց նախ коммерческое училище անունով (1852-64 թ.) մի դպրոց, ապա մասնաւոր տղայոց և օրիորդաց դպրոցներ Հայր. Բալանթարեանցի (1862-68)և վերջապէս կանոնաւոր ծխական դպրոցներ (1867-ից) 4-6000 ռուբլի բիւջէով, որ սովորում էին երկու սեռից մանուկներ։ Սակայն այդ ուսումը համեմատապէս չնչին լինելով՝ հարուստները իրենց որդոց սկսեցին ուղարկել գլխաւորապէս Թիֆլիս, մասամբ և Մոսկուա, միջնակարգ ուսման և ապա նաև բարձրագոյն դպրոցներում ուսանելու համար։ Այդպիսի ուսանողներ Գողթանից և ի հարկէ գլխաւորապէս Ագուլիսից ներկայումս մի պատկառելի թիւ են կազմում և կարծիք չկայ, որ դրանք բոլորը մեծ ծախք են պահանջում Ագուլեցիներից։ Սկզբներում, երբ Ագուլեցոց գործերը լաջող էին ընթանում, այդ դեռ այնքան էլ թեալի չէր նրանց։ բայց երբ լաջողութիւնը չը լարատեւեց՝ այդ զգալի եղաւ նոցա համար, որոնք մի քանի որդոց ուսման հոգսը պիտի քաշէին։ Այդ հանգամանքը թելադրեց մի քանիսին ընտանիքով գաղթել միջնակարգ դպրոցներ ունեցող քաղաքները, որպէսզի միասին ապրելով թէ թեթեւացնեն ծախքերը և թէ անմիջապէս հսկեն որդոց կրթութեան վրայ։ մի քանիսներն էլ, ապահով լինելով, գիտակցաբար արին այդ քայլը, նախ՝ իրենց որդոց հետ լինելու լարմարութիւնից և ապա՝ կեանք վայելելու ձգտումից։ Բայց այդ հանգամանքը ամենեին չթեթեւացրեց նրանց ծախքերը, այլ նորանոր ծախքերի դուռ բացանելով նրանց համար, աւելի զարկ աւեց նրանց նիւթական անկման։ Նոյնը պիտի ասեմ կանոնաւոր կրթութեան մասին։ Եւ իրօք ինչ կրթութիւն կարող են տալ մարդիկ, որոնք միանգամայն անծանօթ են կրթութեան ու դաստիարակութեան գործին և իրանք էլ գտնւում են բոլորովին անզարգացած դրութեան մէջ։ Շատ բնական է, որ տւած կրթութիւնը միանգամայն սխալ և միակողմանի պիտի լինի։ Բացի որդոց ֆիզիկական առողջութեան վրայ փոքր ի շատ հոգան, բայց ինչ վերաբերում է նրանց մտաւոր և բարոյական լառաջադիմութեան, դա միանգամայն պիտի բացասել։ Ընդհակառակը ցանկալի է, որ Ագուլեցի երիտասարդը մեծանար ուրիշ միջնոլորդում, որպէսզի նա կարողանար դուրս գալ Ագուլեցոց անհամակրելի կրթութեան ազդեցութիւնից, կրթութիւն, որը ներշնչում է մատաղ սերնդի մէջ արծաթասիրութիւն, եսասիրութիւն, չար նախանձ, երկչոտութիւն ամեն տեսակ բաներում և այլ վատ հակումներ։

Միւս պատճառը մենք վերադրեցինք գործերի անհրաժեշտ պահանջին։ Յայտնի է, որ Ագուլիսը չնորհիւ իր աշխարհագրական դիրքի և հողի

սակաւութեան, անկարող է աղգաբնակութեանը գործ տալ և ապահովացնել և այդ պատճառով իրենց տպրուստը մարդիկ հալթալթում են գիւղից դուրս, օտարութերում, պարապելով վաճառականութեամբ, ծառայութիւնով, արհեստներով և այլն։ Օտարութեան մէջ չարքաշ կեանք վարելով նոքա եւ են գցում մի փոքրիկ գումար և նրանով պահում հայրենիքում իրենց ծնողներին ու ընտանիքները, իսկ իրենք այցելութեան են գալիս 2—3 տարեն մէկ, չատ առաջ՝ 6-7 տարէն մէկ, ամեն անգամ մնալով 3—5 ամիս։ Թէ ինչ անլարմարութիւնների և ծախքերի հետ է կապած այդ գնալ-գալը, իրենց լաւ լալանի է։ Լաւ է, եթէ երկու եղբայր միասին կամ ընկերովի են գործ կատարում, որովհետև մէկը կարող է միւսին փոխարինել և գործը չի կանգնիլ կամ վնասուիլ, հակառակ դէպքում կամ խանութը պիտի կողպի տուն գնալու համար և կամ պիտի չանձնի գործակատարին. և ինչ կարծիք, երկու դէպքում էլ անչուչտ կը վնասուի տէրը։

Նոյն և դեռ աւելի վատ պայմաններում են գտնում արհեստաւոր և ծառայող դասակարգերը, որովհետև չատ անգամ վերադարձին գտնում են իրենց տեղերը բռնուած, որի պատճառով ստիպուած են լինում մի քանի ամիս պարապ թափառել և պարտքի մէջ ընկնել։ Այդ հանգամանքից և դնալ գալու հետ կապուած անլարմարութիւնից ստիպուած չատերը գաղթում են ընտանիքներով դէպի այն քաղաքները, ուր և իրենց ծառայութիւնն է լինում։ Մենք արհեստաւորներին և գործակատարներին այդ առթիւ յանդիմանելու ոչինչ չունինք, քանի որ դա պայմանաւորուած է յարմարութեան և տնտեսական չահերով. բայց ինչ-վերաբերում է վաճառական դասակարգին, դրա մասին հարկաւոր ենք համարում մի քանի խօսք ասել։ Մենք վերև վիչատակեցինք, որ ոմանք վաճառականներից գաղթում են։ Դրցոց դասաիարակութիւնը ինկատի ունենալով. սակայն կան և այնպիսիները, որոնք գաղթում են գործերի անյաջողութիւնից, որի պատճառով չեն կարողանում երկու ծախք անել միաժամանակ թէ իրենց և թէ ընտանիքի վրայ։ Սակայն այդ քայլն անելով նա միթէ կարողանում է դարման անել իր ցաւերին, այսինքն բարձրել իր վիճակը. ամենևին ոչ, որովհետև այդպիսիները չարիքը գտնում են իրենցից դուրս և ոչ իրենց մէջ։ Դարերի ընթացքում Ադուլեցին պարապում է վաճառականութեամբ, որի համար նա հաստատել է Կովկասի և նոյն իսկ Ռուսիայի գիւղերից ու քաղաքներից չատերում [1]։ Նրան վա-

---

[1]) Կովկասում գլխաւորապէս Թիֆլիս, Նուխի, Կախ, Զաքաթալայ, Երևան. այլ և չատ գիւղերում. և աւելի սակաւ Թեւրով նաև Բաքու, Բաթում. Ռուսիայում գլխաւորապէս Մոսկուա, բայց մենք ճանաչում ենք հատ հատ մարդիկ՝ առևտրի գործով Օդեսայում, Վարշաւա, Սարատովում, Ռիգա, Պետերբուրգ, Ռոստով, և հարկաւ կը լինեն նաև այլ տեղերում. նոքա բաւականին թուով կան այժմ Անդրկասպեան երկրում, իսկ վաղուց

լելի է ամենուրեք դանել. Նոյն իսկ առած է դառել, որ Հնդկաստանում ձմերուկ են կարել, միջից Ագուլեցի է դուրս եկել։ Սակայն որքան է նա յանել իր ոգի պատելուց և չիումից լոգուտ իր մտքի և սեփական գործի։ Դիտելով հայրենակիցներիս ես միայն տխուր իրողութեան եմ հանդիպում։ Դառն ներկան պարզ ապացոյցներ է տալիս միայն յետադիմութեան և պանդանողականութեան։ Առածներս ապացուցանելու համար հարկաւոր եմ համարում ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ դարերի ընթացքում Ագուլեցի վաճառականական դասակարգը դեռ չի ներկայացրել իր միջից մի այնպիսի անձնաւորութիւն, որի վրայ այսօր, թէ հայը և թէ օտարը մատնացոյց անէր իբրև օրինակելի վաճառականի վրայ, թէև ընդհանրապէս այնպիսի կարծիք է կազմուած հայերիս մէջ, որ Ագուլեցիք են ամենաընդունակ վաճառական ժողովուրդը։ Սակայն այդ միանգամայն սխալ կարծիք է։ Այդ համոզմունքը կազմուել է մի քանի յաջողուցիչ դէպքերից, առանց լ ժ ոտոյ նրանց ճանաչելու և այն ժամանակներում, երբ գլխաւորապէս ասպարէզը նրանցն էր. իսկ այսօր նրանք գրեթէ լեռին տեղն են բռնում, տեղ տալով Ղարաբաղի քաջ և ընդունակ զաւակներին։ Ագուլեցին մինչև այսօր անընդունակ է հանդիսացել վաճառականական ասպարիզում։ Նա երկչոտ և անվճռողական է. չունի ստեղծագործող, նախաձեռնող ոգի և համարձակ քայլեր. նա միայն զոյր հետևող է ուրիշի արածին։ Նա մինչև այսօր քիչ կուլտուրական դեր է խաղացել մեր երկրի տնտեսական զարգացման գործում. նա, եթէ կուզէք ասեմ, մեծ մասամբ դեռ ՀՆասակար, նոյն իսկ չլսուող դեր է խաղացել, վատ գաղափար տալով շրջապատողներին վաճառականութեան մասին։ Տարիների և նոյն իսկ դարերի ընթացքում նա փոփոխութեան չի ենթարկել իր այդ սիստեմը։ Նա ժամանակից խիստ ետ է մնացել և այդ պատճառով ոստիկ տուժում է։ Ես ամբողջ շրջաններ դիտեմ, ուր վաճառականութեան մեծ մասը դանուելով գողթնեցիների ձեռքում, այսօր կատարեալ ողբում են իրենց վիճակի վրայ։ Դոքա Զաքաթալի, Նուխուայ և Կախի շրջաններն են։ Ամբողջ կարողութիւնները ապառիկ բաց թողած լինելով, իրենք պարտ են մնացել մի քանի ընկերութիւնների և գլխաւոր վաճառականների, որոնք ներկայացուցիչ են գործարանատէրերի և նրանց մէջ։ Ահա այդ երևակայական և միմիայն մատեաններում նշանակուած ապառիկներն են առհասարակ, որ կազմումեն գողթնեցիների մեծ մասի հարստութիւնը։ Ապառիկները տարուայ յայտնի ժամանակներին վա-

---

հետ Պարսկաստանի չատ քաղաքներում՝ Ռէշտ, Թաւրիզ, Թեհրան, Բարֆրուշ, Սաբզըւար, Մեշէդ, Թուրբէթ, Աստարա և այլն. կան գողթնեցիք Պոլսում, Մարսէլում, Կալկաթա, եթէ հաշի առնելու լինինք միայն մեր ճանաչածները։

ճառականները ժողովում են բերքով. փոքով քիչ է պատահում ստանալ։ Ուրեմն վաճառականի բաղդը գտնւում է բնութեան ձեռքին. հակառակ դէպքում, հինը չատացած՝ լաչորդ տարւայ համար դեռ նոր ապառիկ պիտի աւելացնի, որովհետև եթէ նորը բաց չթողնի, կարող է հնից էլ զրկւել, քանի որ գիւղացին, կարիքը լրացնելու համար, պիտի դիմի ուրիշին և պարտ մնայ նրան. իսկ այս ամենին ձեռնտու չէ առաջնին։ Այդ է պատճառը, որ ներկայումս սատիկ կրիզիս է տիրում այդ շրջաններում։ Աւելացրէք դրա վրայ և այն, որ ուած «նիսիաներն» էլ չեն կարողանում ժողովել, քանի որ մեծ մասը անհատատատ ձեռքերում են, զանգատն էլ չի օգնում, քանի որ օրէնքներից նոյն չափով ժողովուրդն էլ գիտէ օգտւել, իսկ չիմացածն էլ թէ իրենք վաճառականներն են միմեանց ջիգրու սովրեցնում և թէ այն գրագիրները, սորին պաշտօնեաները և նոյնպէս աբլակատները, որոնք վխատում են իւրաքանչիւր գատատատանատան մէջ։ Սակայն այսօր այդ ամենը իրենց ցանածն են հնձում։ Ամբողջ ժողովուրդը այսօր այնպիսի անբարոյական բաներ է անում, որ մարդ ապշում է, իսկ այդ ամենը նրանցից է սովորել։ Ուրեմն փոխանակ ժողովրդին ուղղելու դէպի պարտաճանաչութիւն և ցոյց տալու նրանց իրենց դրութիւնը բարւոքելու ճանապարհը, որից անչուշտ իրենք ևս մեծ չահ կ'ունենան, նրանք աւանդում են ժողովրդին անբարոյականութեան դասեր և այդպիսով նրանք այսօր հնձում են այն, ինչ որ տարիների ընթացքում ցանել են։ Անչուշտ ժողովրդի տնտեսական քայքայման պատճառը անարդար կը լինէր բոլորը վերագրել վաճառականներին, ընդհակառակը չարիքի մեծ մասը գտնւում է իւր մէջը։ Այստեղ մեծ դեր է խաղում ժողովրդի տգիտութիւնը ու անհոգութիւնը։ Տգիտութիւնից օգտւում են թէ տզրուկ վաճառականը և թէ գրագիրներն ու աբլակատները, մանաւանդ վերջին երկուսը, որոնք կատարեալ պատուհաս են ժողովրդի համար։ Նրանք են, որ իրենց մի քանի կոպէկների համար նոյն իսկ անարդար տեղից գիւղացուն ուղղում են դատարան, ուր նա այնքան է մսխում, որ կարողէր իր պարտքը վճարել, և այնքան է ժամանակ կորցնում, որ եթէ գործադրէր իր հողի մշակելու վրայ՝ նա տասնապատիկ աւելի պարտք կը վճարէր։ Ուրիշ ժողովուրդ լինէր տիրողը այդ բարեբեր, դրախտանման և ընդարձակ հողերի, երբէք այդ վիճակում չէր գտնւիլ բայց չնորհիւ վերոյիշեալ յատկութիւններին, նա ողորմելի վիճակում է գտնւում։ Ահա ինչ ժողովրդի հետ գործ ունին Գողթանի վաճառականները։

Ցաւի դէմն առնելու համար մի քայլ արւել է Նուխայ մի քանի գլխաւոր վաճառականների կողմից, որոշ կանոններով գործելու ծրագրով։ սակայն վերջացել է անյաջողութեամբ. նոքա պայմանաւորւել են ապրանքը մանր վաճառականներին բաց թողնել ոչ աւել, քան երեք ամսով և հակառակ վարողին նոյն իսկ նշանակել են տուգանք, բայց այնու-

ամենայնիւ այդ պայմանը երկար չի տեւել, որովհետեւ մէկը միւսի վրայ վստահ չլինելով, սկսել է նորից հին սիստեմը բանեցնել, որը և առիթ է տուել կրկին բաժանուելու։ Ձգամութիւնը, անվստահութիւնը և նախանձը յատկանիշն է բոլորին, իսկ մեասելը, իրարու տուն քանդելը շատերի համար նոյն իսկ միխիթարական է։ Այո, ընթերցող, չզարմանաք եթէ ասելու լինեմ, որ տեսել եմ մի չալանի հարուստ վաճառական, փիչեալներին բնաւորութեամբ մօտ չրջաններից, երբ նա գոլում էր իրեն, թէ ինքը որոը այնպէս է գցում թակարդը, որ սա հաճութիւն էլ է զգում։ Իսկ ինձ պատմել են և այնպիսի հրէշների մասին, որոնք ուրախանում են եղել ուրիշի անյաջողութիւնով և ինդրում եղել երբէք իրենց մօտ ուրիշի յաջողութեան մասին չպատմել։ Դուք այդ հրէշներին կը տեսնէք միշտ ժպիտը երեսին, թէև հոգեբանը աչքերից իսկոյն կը նկատի չարութեան հոգին։ Այդ հրէշները չկարծէք թէ խուլ անկիւնների վաճառականներ են. ոչ, նրանք գործում են գլխաւոր քաղաքներում, լուսաւոր կենտրոններում. դրանից կարելի է եզրակացնել նոյն՝ կրթութեան մարդկանցից ինչ հրէշներ կարող են լինել խուլ անկիւններում, ուր լոյսի ճառագայթ չի թափանցում։

Եւ իրօք, տգիտութիւնը այդ տեղերքում անլատակ է և ոչ մի լուսաւոր միտք դուք չէք լսիլ դրանցից. և ինչպէս լսես։ Բացառութիւն այդ չրջանի մէջ կազմում են մի քանի գլխաւոր վաճառականներ, որոնք թէև թերթ ստանում են, լաճախում են երբեմն լուսաւոր կենտրոններ. բայց չեն ազդում, այնպէս որ սրանք էլ իրենց ձգտումներով հեռու չեն գնացել միւսներից։ Փոխոխութիւն նկատւում է սրանց նիստ ու կացի մէջ, իսկ մտքի և յառաջդիմութեան մէջ՝ բնաւին։ Այդ կողմից ողորմելի են գլխաւորապէս Կախի վաճառականները, իսկ ինչ վերաբերում է գիւղերում գրաածներին, նրանք հում նիւթ են ներկայացնում, չրջապատող լեզգիներից քիչ տարբերելով։

Վերոյիշեալ վաճառականական ձախորդութիւնների համար շատերը իրենց ընտանիքով գաղթում են չիշեալ քաղաքները և տեղները, ուր նրանք ներկայումս մեծ կոլոնիաներ են կազմում. բայց դրանով նրանք բնաւին չկարողացան իրենց մտաւորական դրութիւնը բարձրացնել, քանի որ անյաջողութեան գլխաւոր գաղտնիքը, ինչպէս վերև ասացի, առևտրի սխալ սիստեմի և ատիճանարար աճող չռայլ կեանքի մէջն է։ Խաբուած ժամանակաւոր յաջողութիւնից, նրանք սկսեցին չռայլութիւններ մտցնել իրենց կեանքի մէջ առանց չարմարելու իրենց կարողութեան։ Փոխելով իրենց արտաքին նիստ ու կացը, նրանք մնացին խելքով նոյնը։

Մի այլ անգամ մենք կը դառնանք այն գաղթական վաճառականներից խօսելու, որոնք կենդրոնացած են գլխաւոր քաղաքներում։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ս. ՅԱՐՄԱՐԵԱՆԻ

Թաւրիզ, 1898 հոկտ. 25.

Պարսկաստանը կուլտուրապէս շատ ցած է Կովկասից, ուստի այն-տեղից գրուած նամակները կարող են լոկ հետաքրքրութեան բաւականութիւն տալ. բայց այստեղ էլ գուցէ լինեն բաներ, որոնք կարող են օրինակ լինել Կովկասցիների համար։ Մենք մտադրւել ենք մի շարք լուսանկարներով Մուրճի ընթերցողներին ծանօթացնել Պարսկաստանի կեանքի զանազան կողմերի հետ։

Սա այն երջանիկ երկիրն է, որը ստեղծագործութիւնից մինչև հիմա ոչ մի փոփոխութիւն չէ կրել. և Աստուած, մի անգամ, երբ ցանկութիւն է յայտնում իւր ստեղծած աշխարհը տեսնել, և Գաբրիէլ հրեշտակի հետ միասին շրջում է աշխարհս զանազան կողմերը, բոլոր երկիրները՝ Եւրոպա, Ռուսիա, Կովկաս և այլն, մերժում է ընդունել իբրև իւր ստեղծագործութիւն. իսկ Պարսկաստանը տեսնելով՝ բացականչում է,—ահա իմ ստեղծած աշխարհը։ Այնքան միւսները փոփոխւած էին, իսկ սա՝ ոչ։ Երկիր, որտեղ ամենազօրեղ կերպով արտայայտւում է տգիտութեան և աղքատութեան վրայ հիմնւած տարկութիւն և աղնւականութիւն. ուր օրէնք ասած բանը դոյութիւն չունի, ուր տգէտ պաշտօնեաների կաշառակերութիւնը անհերեակայելի չափերի է հասնում։

Պարսկաստանի պետական հիմնարկութիւնների մասին մի թոյլ գաղափար տալու համար պատմեմ, թէ ինչ դրութեան մէջ տեսանք Թաւրիզի պոստատունը։ Խնդրեցինք բայց նամակներ. մեզ տին. ի հարկ է այդ մենք կատարեցինք բակում կանգնած. իսկ պաշտօնեան ներսից լուսամուտի երկաթների արանքով էր կատարում իւր առուտուրը։ Մենք հարցրինք, արդեօք տեղ կայ նամակներ գրելու. մեզ հրաւիրեցին ներս։ Բանից դուրս եկաւ, որ մեր գնացած տեղը պաշտօնեայի համար նշանակւած տեղն էր, որը Ռուսաստանում բաժանւած է լինում այցելուների համար նշանակւած բաժնից ցանկապատով կամ ամենաքիչը՝ սեղաններով։ Ներս մտնելով ըստ սովորութեան մենք վերցրինք գլխարկներս, բայց մեզ ասեցին, որ դա հարկաւոր չէ, քանի որ դնելու տեղ չկայ և ըստ տեղական

սովորութեան կարելի է և գլխարկով ներս մտնել։ Եւ իրաւ, մենք տեսանք, որ հնարաւորութիւն չկար գլխարկը սեղանի վրայ դնելու փոշու ահագին շերտի պատճառով, որ նստած էր սեղանի, մի երկու դարակի և փռուած թաղիքի վրայ։ Մինչ ընկերներս նամակ էին գրում ես զբաղուեցի սենեակը դիտելով։ Հէնց ոտքի տակ, բառիս բուն նշանակութեամբ, թափուած էին այդ օրը ստացուած նամակները, որոնց վրայից մենք կոխ տալով անցանք, որի ժամանակ ես մի տարօրինակ զգացում ունեցայ, կարծես մի սրբութիւն արատաւորած լինէինք։ Չէ՞ որ ոտքի տակ թափուած էին նամակները, որոնց տէրերը, տեսնես, որքան անհամբերութեամբ սպասում էին նրանց։ Մի անկիւնում փոշոտ դարակի վրայ թափուած էին ամենաանկարգ դրութեան մէջ զանազան լրագրեր և նամակներ։ Իսկ մի ուրիշ անկիւնում, դարձեալ գետնի վրայ փոշու մէջ լցրած էին նոյն օրուայ ընդունած նամակները, որոնց մէջ տակաւին չգտուեցին մեր անձնածները, այլ դրուեցին մի ուրիշ տեղ, երեի քանի դեռ մենք չէինք դուրս եկել այնտեղից, որից յետոյ նրանք էլ կարժանանային նոյն վիճակին։ Իսկ ի լրումն բոլորի, յանկարծ ներս բերին նոյն սենեակը մի սինի վրայ երկու ծածկած ման, որոնցից մինի խուփը բարձրացնելուց յետոյ տակից յայտնուեց պարսկական փլաւ մի կողքին մսի կտորներ շարուած։ Այդ սինին դրեց յատակի վրայ, նրան մօտեցաւ թուրք պաշտօնեան, պզզեց կողքին և ամենայն անտարբերութեամբ սկսեց ճաշել։ Այո, չկարծէք, կատակ եմ անում—պաստատանը, այս ու այն կողմը թափուած նամակների կողքին, փլաւի գլխին պզզած փափախաւոր պաշտօնեան մատներով վերցնում է մսի կտորները, նրա օգնութեամբ բռնում փլաւը և ամենայն ախորժակով ուտում։ Փլաւին յաջորդեց սեխը, որից յետոյ մի կողմը դրած ամանից ջուր վերցնելով պ. պաշտօնեան լուաց իւր ձեռքերը։ Ջուրը, ի տարկէ սրսկելով նոյն սենեակի յատակի մի մասի վրայ, որը ազատ էր թաղիքից։ Այո, սա էր պարսկական երկրորդ քաղաքի՝ Թաւրիզի պաստատունը։ Ասեմ, որ պաստը Պարսկաստանում համարւում է ամենաանոնաւոր հիմնարկութիւնը, որի վրայ առանձին ուշք է դարձնում։ Երևակայեցէք ուրեմն միւս հիմնարկութիւնները։

3

Եւ, պարզ բան է, երբ մարդ մտադրում է նամակներ գրել մի երկրից, ուր գոյութիւն ունին այս տեսակ կարգեր, անշուշտ միսիթարական բաներ չի կարող գրել։

Սկսենք հէնց հացի խնդրից, որ Պարսկաստանում պարբերական հիւանդութիւն է դարձել։ Այստեղ, ինչպէս ասում են, սովորական բան է օրերով առանց հացի մնալ, կամ կերակրուել աւաղախառն հացով, թէ հացի խնդիրը Պարսկաստանում ինչու այս դրութեան մէջ է, դա շատ հասկանալի է։ Պարսից կառավարութիւնը գիւղատէրերից հարկերը ստանում է տասանորդի հաշուով։ Մի անգամ արդէն հաստատուած սովորութիւն էր,

որ գիւղատէրը իւր ստացած բերքի $^1/_{10}$ հասցնում է կառավարութեան, ոչ մթերքով, այլ նշանակուած գնով. օրինակ ցորենի խալւարը (30 պուդը) 3 թիւման (6 ռ.) հաշուելով։ Անցեալ տարուանից պարսից կառավարութիւնը, նկատելով այդ ձևի անլարմարութիւնը և ցորենի թանգութիւնը, հարկերը պահանջում է ցորենով և ստացած ցորենը ամբարում օրինակ Թաւրիզի բերդի ամբարներում, ենթադրելով կարիքի դէպքում օգնել ժողովրդին։ Պարսկաստանում կան շատ թւով կալւածատէրեր. մարդիկ, որոնք ունին 100—120 գիւղ—մեծ մասամբ հոգևորականներ և խաներ։ Պարսկաստանը առատ երկիր է. հացի պակասութիւն չի լինում. հաց բաւնում է այնքան, որ հնարաւորութիւն կայ բոլոր բնակիչներին կերակրելու։ Բայց վերոյիշեալ հարուստ կալւածատէրերը իրենց ագահութեամբ, մասամբ էլ ի նկատի առած կառավարութեան վերջին կարգադրութիւնը, ամբարում են ցորենը և ուղղակի, առանց քաշելու, սպասում են սովի իրենց ապրանքը լաւ վաճառելու համար։ Ներկայումս, ասում են, կալւածատէրերի ամբարներում ահագին քանակութեամբ ցորեն կայ, իսկ ժողովուրդը քաղցած է, չնորհիւ ալպիսի արհեստական ձևով առաջացրած թանգութեան։

Պարսկաստանի այժմեան գլխաւոր մինիստր Սադրազամը, հանդուցեալ Նասր-էդդին Շահի քաղաքականութեան միակ շարունակողն է ամբողջ Պարսկաստանում. քաղաքականութիւն, որը ձգտում է հոգևորականների ազդեցութիւնը երկրում զէրօացնել, իբրև մի տարրի, որ ամեն մի յառաջադիմական քայլի խոչնդոտ է հանդիսանում։ Այդ քաղաքականութեան է հետևում նաև Ատրպատականի այժմեան Ամիր-Նիզամը, որը և այս ամառ յաջողեցրեց մի քայլ անել այդ ուղղութեամբ։ Այս ամառուայ ժողովրդական յարձակումը յայտնի Սէյիդի տան վրայ, սէյիդի, որ իբրև հոգևորական և իբրև՝ իւր եղբայրների միջոցով մեծ կապեր ունեցող կառավարութեան հետ, ահագին ազդեցութիւն ունէր ժողովրդի վրայ, մի մեծ քայլ էր հոգևորականութիւնը ժողովրդի աչքում գցելու գործում։ Միևնոյն ժամանակ պարսից հոգևորականները և խաները, և առհասարակ կալւածատէրերը համոզեցին, որ այժմ իրենց հետ այնքան էլ քնքշաբար վարելու տրամադրութիւն չկայ։ Ուստի, երբ մօտ օրերս Ամիրը յայտարարեց, որ մի ամուսաւ ընթացքում ցորեն ունեցողները, եթէ չհանեն վաճառքի և չսպառեն, կ'ենթարկուեն խիստ պատասխանատուութեան, իսկ ունեցած ցորենը արքունական կը համարուի. միւս կողմից էլ այս ամառուայ ամբոխային գործողութիւնների թարմ տպաւորութիւնների տակ՝ ամբարատէրերը հրապարակ հանեցին իրենց ցորենները։ Այդ է պատճառը, որ մի օրուայ ընթացքում ցորենի խալւարը 30 թիւմանից իջաւ 12-ի։ Նկատելով, որ հացը դեռ այն աւազախառն զանգուածն է, սակայն դրա դէմ էլ կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում։ Նորերումս էլ մի մասնաժողով է կազմուել, որը պիտի հանգանակէ 100.000 թիւման Ռուսաստա-

նից ալիւր բերել տալու համար։ Իսկ այս կարգադրութիւնները ընդունակ են լուսահատեցնելու ցորենատէրերից ամենահամարձակներին անգամ, որոնք կարող էին սպառնալիքներից չվախենալ, բայց հակառակ դէպքում ոչիսկ կանէին իրենց ապրանքը ամբարներում փթեցնել, ի նկատի ունենալով կարիքի դէմ ձեռք առնուած այդքան միջոցները։ Ուրեմն տեսնում է, որ Պարսկաստանում ևս կարող են տեղի ունենալ լուսաւոր երեւոյթներ, որոնց տեղականութիւնը խիստ կասկածելի է սակայն։

Այս տեսակ հացային կրիզիսների ժամանակ, այս ծանրութիւնը իրենց կաչու վրայ զգում է ժողովրդի այն դասակարգը, որը հնարաւորութիւն չունի առաջուց իւր «բեռը բռնել», իսկ հայերը աւելի ևս։ Բանը նրանումն է, որ մահմեդական մոլեռանդութիւնը հային զրկում է հաց ունենալու հնարաւորութիւնից։ Թուրքը չի համաձայնում հաց վաճառել հայերին։

Այդ պատճառով Թաւրիզի Էլչաւա թաղի արհեստաւոր և մանր-վաճառական դասակարգը մի ժողով գումարեց, որի ժամանակ ընտրեց մի մանդաժողով 12 հոգուց կազմած, որը պիտի Առաջնորդի հետ միասին դիմէ Ամիր-Նիզամին և պետական ամբարներից ցորեն խնդրի, որի համար փող կը վճարի հասարակական զանազան հիմնարկութիւններից՝ դպրոցից, կանանց բարեգործական ընկերութիւնից, եկեղեցուց և այլն։ Ցորենը կամ մաս-մաս կը վաճառուի, կամ հաց կը թխուի և օրական վաճառելուց դուրս եկած փողը կը վերադարձուի յիշեալ հիմնարկութիւններին։

Այս տեսակ քաղցի բոպէներում արտայայտում է ամբոխի կատաղութիւնը, որը երբեմն եկաւ ամառուան լայնի դէպքերում։ Եւ Պարսկաստանը ոչ մի միջոց չունի այդ շարժումներին դիմադրելու, բացի նրանց բաւարարութիւն տալուց։ Որովհետև զօրքը, որ այսպիսի դէպքերում պետութիւնները գործ են դնում որպէս խաղաղացնելու միջոց, Պարսկաստանում ռոճիկ չստանալու պատճառով, նախ սաստիկ կաչառուող և ապա շատ հեշտութեամբ, դիսցիպլինայի բացակայութեան պատճառով, անցնում է իւր նման թշուառների կողմը և դառնում բողոքող տարր։ Երբեմն զօրքին խռովութիւնների ժամանակ բաժանում են անգործութիւնից ժանգոտած հրացաններ, բայց այդ զինուորը գործածելն էլ չգիտէ։ Զինուորները, որոնք ամառուան դէպքերին նշանակուած էին հայերի տները պաշտպանելու համար, պատմում են, որ մտնում էին հայերի բակերը, և, հրացանները ցած դնելով հաց էին ուզում իբրև վարձատրութիւն, որ պաշտպանում են նրանց տները։

Մի տխուր և միևնոյն ժամանակ պարսկական կառավարութիւնը բնորոշող դէպք նորերումս Պարսկաստանի Սալմաստ գաւառում տեղի ունեցած տաճկաստանցի դաղթականների կոտորածն է։ Դէպքը տեղի է ունենում Սալմաստի Մանդում հայաբնակ գիւղում։ Հայ դաղթականներ՝ Մո-

կացի, Շատախցի և Ոզմցի, օգուտելով իրենց երկրի ներկայիս խաղաղ դրութիւնից, վերադառնում են Տակճաստան։ Այնտեղ քրդերի կողմից հալածանքի են հանդիպում, ընկերներից շատերին թուրքերի և քրդերի ձեռքում թողնելով. 10 հոգի փախչում են, ամբողջ ճանապարհը քրդերից հալածուած, երկար ժամանակ տաժանելի ճանապարհ կարելով, հիւանդ, վիրաւորուած և ուռած ոտներով հասնում են Սալմաստի Մահլում գիւղը և գիւղացիներից հիւրընկալութիւն խնդրում։ Սոքա մերժում են նրանց հիւրընկալել, պատճառաբանելով, որ նրանք «դաչաղներ» են և առաջարկում են անմիջապէս հեռանալ գիւղից։ Դաղթականները ֆիզիկապէս անկարող լինելով անմիջապէս հեռանալ, իրաւունք են խնդրում մի քանի օր մնալու կազդուրելու համար։ Բայց գիւղացիների խստութիւնը հասնում է այն աստիճան, որ նրանց այն խնդիրքն էլ են մերժում։ Բացի դրանից իրենց միջից պատգամաւորներ ուղարկելով Սալմաստի և Խոյ գաւառին, Զարզամ—միւլքին, գանգատւում են, որ իրենց մօտ դաչաղներ են եկել ու իրենց նեղացնում են։ Եւ խնդրում են, որ նրանք ձերբակալեն և պատժեն։ Միայն անգամ չեն զլանում իրենց խորհուրդներով էլ օգնել Զարզամին, որ նա իւր սարբազների հետ միասին հրաւիրէ նաև մօտակայ Սոմալի քրդերին։ Այսպէս էլ լինում է. հայերը առաջնորդում են Զարզամի օգնական, նոյն գիւղի տէր Հաջի-խանին և քրդերին այն ալգին, ուր թաղնուած են լինում դաղթականները. դա լինում է ամսիս 13-ին, լուսաբացին։ Դաղթականները, ինչպէս պատմում էր ականատեսը, յանկարծ լսելով հրացանաձգութեան ձայներ, դուրս են փախչում ալգուց և դիմում են գիւղի մօտի սարը. բայց այնտեղ տեսնում են իրենց առաջը կտրող քրդեր. դիմում են դէպի մօտակայ գիւղի ճանապարհը, այնտեղ ևս քրդերը բռնած են լինում։ Վերջը ճարահատուած ապաստանում են այնտեղ գտնուած մի հին բրդում, որի վրայ անմիջապէս արձակւում է թնդանօթ և բուրդը քանդում։ Այդ րոպէին ապաստանուածները դուրս են գալիս, յանձնում են իրենց մօտ եղած մի քանի հրացանները (5 հատ) և յայտնում, որ նրանք պարսիկների դէմ բան չունին, նրանց վրայ հրացան չեն արձակել և չեն էլ արձակի, ի նկատի ունենալով այն հովանաւորութիւնը, որ ցոյց է տուել իրենց Պարսից կառավարութիւնը։ Նոքա երեմ ենթադրել են, որ կը բռնուեն և կը յանձնուեն Տաճկաց կառավարութեան, ինչպէս առհասարակ եղել է միջազգային օրէնքի համեմատ։ Զինուորները և քրդերը անմիջապէս ձերբակալում են նրանց։ Մահլամի հայ գիւղացիների ներկայացուցիչները ծնկաչոք աղաչում են Հաջիխանին մորթել այդ դաչաղներին, ասելով, որ պատասխանատուութիւնը իրենց վրայ են վերցնում։ «Դաչաղները անմիջապէս մորթւում են քրդերի ձեռքով 9 հոգի, (1-ը փախչում է) հակառակ ամեն մի օրէնքի. բայց դրա համար էլ Պարսկաստան է, ուր տեղի ունեն նմանօրինակ դէպքեր։ Սպանուածների գլուխ-

ները կարում են և ուղարկում են Զարդամին Բեռնա-Շհար գիւղը, իսկ մարմինները թողնում են։ Երբ Սալմաստի լաջորդ Խաչիկ վարդապետը պահանջում է գլուխները, պատճառաբանելով, որ հայ եկեղեցական օրէնքով չի կարելի մարմինը թաղել առանց գլխի, Զարդամը մերժում է ասելով, որ գլուխները ուղարկեցին Տաճկաստան։ Մինչդեռ ականատեսի ասելով, Զարդամը գլուխներից լուսանկարը հանելով, նրանց հորել է տալիս Բեռնա-Շհարի փողոցներից մինի մէջ։ Խաչիկ վարդապետը ստիպւում է մի քահանայ ուղարկել, որ մարմինները թաղէ առանց գլուխների Մահլումի գերեզմանատանը։ Թաղման ժամանակ չրջապատում են գիւղի կանայք և աղիողորմ լալիս։ Միջանկեալ ասեմ, որ Պարսկաստանի հայ կանայք շատ և շատ կողմերով բարձր են տղամարդկանցից, որը առիթ կ'ունենամ ապացուցելու։ Նոյն գիշերը մտնում են գիւղացիներից ամենահարուստի և այս դէպքի պատճառներից մինի՝ Զաքէի տունը ու իրեն կնոջ ու նշանուած աղջկայ հետ կոտորում։ Ազատւում է մի փոքր երեխայ, որ և վկայում է, թէ մորթողները քրդեր էին։ Այս դէպքի շարժառիթները մութ են, բայց ինկատի առած այն հանգամանքը, որ գիւղը այդ գիշեր չրջապատուած է եղել քրդերով, իսկ գիւղում օտար մարդ չէ եղել, իսկ սպանումը տեղի է ունեցել քրդերի ձեռքով, ուստի պարսկական գործերին հմուտ մարդիկ ենթադրում են, որ այս էլ արուած է կառավարութեան հրամանով, որպէս զի մի պատրուակ ստեղծի գաղթականների կոտորածի. մանաւանդ որ Թաւրիզ այդ բոլորի մասին տեղեկութիւն տրուեց, ոչ թէ 13-ին—այլ 15-ին։

Այստեղ մարդ ստիպւած է լինում մի աւելորդ անգամ ևս ապացուցելու մեր հոդևորականների անպէտքութիւնը։ Բանից դուրս է գալիս, որ Ատրպատականի առաջնորդ Սահակ եպիսկոպոս Այվազեանը և Խաչիկ վարդապետը, եթէ լաւ յարաբերութիւնների մէջ լինէին, շատ հեշտութեամբ տեղի չէր ունենայ այս դէպքը։ Բանի որ վարդապետը Սալմաստում ահագին ժողովրդականութիւն և ազդեցութիւն ձեռք բերած լինելով, հեշտութեամբ կարող էր այն դէպքի առաջն առնել, եթէ վերջին ժամանակներս Սահակ եպիսկոպոսը կողմնակի կերպով աջակցած չը լինէր պարսից կառավարութեանը նրան գցելու գործում։ Արբաղան Սահակը վերջերումս չէր ճանաչում Խաչիկ վարդապետին, որովհետև վերջինս էլ մի ինչ որ բանում նրան չէ պատասխանել. էս էլ մեր հոդևորականները։ Ինչ եղիցէ, դէպքը կատարուած է. անմեղ մարդիկ գլխատուած, իսկ վարդապետն էլ Ամիր-Նիզամի հրամանովը, այս անգամ, հակառակ Առաջնորդի կամքին, բերուած է այստեղ։

Ահա, ընթերցող, այսպիսի բաներ են տեղի ունենում Պարսկաստանում. զորն ասեմ, կամ զորն խոստովանիմ։ Առայժմ այսքան. միւս անգամ կը գրեմ Թաւրիզի հայերի մի քանի հասարակական հիմնարկութիւնների մասին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՐԻԶՈՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Պարիզու հայ ուսանողական միութիւնը համալսարանական ուսանողներէ կազմուած գաղթականութեանս միակ մարմինը ըլլալով ուսանողական՝ կարժէ պահ մը հետաքրքրիլ իրմով։

Միութիւնը հիմնուած է 1888-ին իր գլխաւոր նպատակը ըլլալով մտաւորական ու եղբայրական կապ մը հաստատել Պարիզու բոլոր հայ ուսանողաց մէջ. այս պատճառաւ իսկ կարելի է նա նկատել միակ ընդհանուր ուսանողական միութիւնը, որու երկրորդ նպատակն է եղած նպաստել ուսանողաց նիւթապէս ու բարոյապէս։

Ասոր համար միութիւնը ունի իր՝

Ա. Ընթերցարան մատենադարանը, որ կը կազմէ մի ճշմարիտ ժամադրավայր հայ ուսանողներուն ի Պարիզ։

Բ. Գործադիր դիւանը, հինգ հոգիներէ բաղկացած, որք ընտրուած ըլլան միութեան ուսանող անդամներուն քէջից բացարձակ առաւելութեամբը։

Դիւանը կը զբաղի միութեան ընթացիկ գործերով ու ինքն է որ կը կազմակերպէ դասախօսութիւններ, գրական ու գիտական բանախօսութիւններ, գեղարուեստական երեկոյթներ և այլն։

Գ. Իր Ընդհանուր ժողովները՝ որոնց նիստերը տեղի կ'ունենան տարին 4 անգամ և մէկ մ' ալ բացառիկ պարագաներու մէջ միմիայն։

Այս ընդհ. ժողովներուն միութեան անցուցած վայլուն ինչպէս նաև անչուք շրջաններուն համեմատ մասնակցած են մինչև 50 ուսանող անդամներ, ինչպէս նաև 13 հոգիներով ալ ընդհ. ժողովով նիստեր գոյութիւն ունեցած են, որ ըստ կանոնագրի՝ անդամոց նուազագոյն թիւն է այս ընդհ. ժողովները օրինաւոր համարուելու համար։

Իր սկզբնաւորութեան տարիներուն միութիւնը փայլուն գործունէութեան մը հետքերը թողուցած է, և վերջին աղետից տարիներուն բաւական անչուք ու թաղձագին շրջանէ մը անցնելէ վերջ՝ այսօր վերստին կը ձգտի վերստանալ իր նախկին փայլը և նոյն իսկ գերազանցել զայն։

Արդարև վերջին յուլիս ամսոյն մէջ 30-է աւելի ուսանողներ ընդհ. ժողով գումարելով վճռեցին միութեան հիմնովին վերակազմութիւնը, որմէ

ետեւ ուսանողական միութիւնը հոկայ քայլեր առնելու վրայ է անցած, և սորա անմիջական հետեւութիւնն է եղած անդամներու թիւին զգալի կերպով աւելանալը օրէ օր։

Այսպէս. Ուսանողական միութիւնը ունի այժմ.

12	Բժշկական	ուսանող
1	Ճարտարապետութեան	»
3	Քաղաքագիտութեան	»
1	Փորագրութեան	»
1	Արձանագործութեան	»
4	Նկարչութեան	»
2	Դեղագործութեան	»
3	Դրականութեան	»
	Ասոնցմէ մին իգական սեռէ.	
2	Քիմիագիտութեան	»
3	Եղեկարականութեան	»
1	Նաւաշինութեան	»
4	Երգեցողութեան և երաժշտութեան	
	ուսանող	»
	ասոնցմէ երկուքը իգական սեռէ.	
1	Ճարտարապետութեան	»
1	Նախնական ուսմանց	»

Ընդամենը 39 *ուսանողներ։*

Հոս աւելորդ չըլլայ թերեւս փիշատակել թէ Պարիզու ուսանողութիւնը կը բաժնուի երկու գլուխ բաժանումներու. անոնք՝ որք իրենց յաճախած համալսարանները ընդունուած են և կամ մոլոց ատոմ և հետեւաբար իրաւունք ունին մասնակցելու մրցմանց, և անոնք՝ որք միմիայն ազատ ունկնդիրներ են։ Ուսանողական միութիւնը այս վերջիններէն մօտաւորապէս 8 ուսանողներ ունի, իսկ մնացեալները ճշմարիտ համալսարանականներ են. նոյնպէս միութիւնը ունի իբր ռուսահայ ուսանող միայն երեք հոգի, մնացեալները բոլորն ալ թրքահայեր են, մեծաւ մասամբ Կ. Պոլսեցի։

Պարիզու ուսանողական միութենէն դուրս կը մնան քանի մը անկախ ուսանողներ, թուով չուրջ 8, որք մեծաւ մասամբ հեռու մնացած են միշտ ուսանողական հարցերով պարապելէ։

Այժմ ուսանողութեան կողմէն մեծ ջանք ու հոգածութիւն ի գործ կը դրուի որպէս զի միութիւնը մի անգամ ընդ միշտ թոթափէ թաղեալութեան այն մռայլ վիճակն, որուն ներքեւ թաղուած մնացած էր, և քաղցր է ինձ յայտարարել, մօտէն տեղեակ ըլլալուս միութեան գործունէութեան վրայ, թէ դժուարութեանց մեծ մասը արդէն անհետացած է։

Այսօր գրեթէ ամբողջովին մաքրուած է անցեալ մարտ ամսուայ մէջ

տեղի ունեցած երեկոյթին պարտքերը, որն որ, հակառակ իր բարոյական մեծ յաջողութեան, կազմակերպիչ մարմնոյն անչափահասութեան պատճառաւ բաւական կարեւոր գումարի բացով մը վերջացած էր, բայց մը, որ կը սպառնար միութեան գոյութիւնն ու պատիւը վտանգել։

Նոյնպէս միութիւնը, ի նշան իր վերակազմութեան, նոյեմբերի սկիզբը, աղգային անմահ վիպասան Աբովեանի յիշատակին շատ չքեղ մի երեկոյթ կազմակերպեց գրական ու երաժշտական, որու յաջողութիւնը մեծ եղաւ։ Ներկայ էին 300 է աւելի գաղթականութեան ընտրեալ բազմութիւն մը, որոնք անհուն ոգեորութեամբ համակուած ծափահարեցին պարզապնակ մեր անուանի արուեստագէտ ընկերները, որք ազնուօրէն փութացած էին միութեան հրաւէրին գործքով պատասխանել։

Այս առթիւ անկարելի է ինձ չյիշել օր. Պապալեանի և տիկին Պէնթլէյի (օր. Պէչիրճեան), ինչպէս նաև պարոնայք Սվաճեանի, Զոպանեանի և Եղիազարեանի անուններերը, որոնք այս գիշերը ճշմարիտ փառաց յաղթանակներ տարին, բան մը որ թերեւս աւելորդ չըլլայ ըսել թէ սա իրենց համար առաջին անգամը չէր։

Նոյնպէս՝ գարձեալ մեր ընկերներէն մին, պ. Դրիգոր Գալֆայեան, իր երաժշտութեան ճիւղին մէջ շատ փայլուն սկզբնաւորութիւն մը ցոյց տուաւ այս գիշերը, որն որ յիշատակել կ'արժէ իրաւամբ։

Ծանօթութիւններուս շարքը աւարտած ըլլալու համար կը փութամ աւելցնել թէ միութիւնը այս տարի առաջին անգամ ըլլալով վաւերացուցաւ քաղաքիս մատուռին հոգաբարձութեան կնիքովը իբրև ուսանողական միակ օգտակար ու վստահելի մարմինն ի Պարիզ, նոյնպէս գաղթականութեան երկու շատ պատուաւոր ու ազգասէր անձնաւորութեանց նախաձեռնութեամբ, որք իրենց հովանաւորութեամբը աւելցուցած էին նոյեմբերի երեկոյթին փայլը, լուրջ հանգանակութեան մը ձեռնարկուած է միութեան նիւթական միջոցները ապահովցնելու համար։

Ուսանողութեան բարեկամներուն այս ճշմարիտ առթիւ մը չէ անգամ մը ևս ապացուցանելու համար իրենց սէրն ու համակրութիւնը, որոնցմէ ուսանողութիւնը մեծապէս քաջալերուած է. ու, թող ներուի ինձ ցնծութեամբ յայտարարել թէ՝ շատ մօտաւոր ապագայի մէջ միութեանս ժամանակէ մը ի վեր փակուած մատենադարանը, արդիւնք նախորդ դիւանին ապիկար գործունէութեան, կարելի պիտի ըլլայ շատ նպաստաւոր պայմաններու մէջ վերաբանալ։

ԱՐԱՄ ԹԱՆՏԱՃԵԱՆ

Ճարտարապետ-Ուսանող Գեղարուեստից վարժարանին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամերիկական-իսպանական հաշտութեան դաշնը նոյ. վերջը ստորագրուեց Պարիզում, երկու պատերազմող պետութիւնների ներկայացուցիչների յանձնաժողովում։ Իսպանիան կորցնում է Ամերիկայում Կուբան, որը դառնում է անկախ երկիր, կորցնում է Պորտո-Ռիկո մեծ կղզին, կորցնում է Ասիայում, Խաղաղ ովկիանոսում՝ Ֆիլիպեան կղզիները և Կարոլեան կղզիները. ընդամէնը ովկիանոսում՝ 128.147 քառակուսի կիլոմէտր և 2.430.000 բնակիչ, Խաղաղ ովկիանոսում՝ 297.632 քառ. կիլ. և 7 միլիոն բնակիչ։ Մինչդեռ ինքը Իսպանիան ունի ընդամէնը շուրջ կէս միլիոն քառ. կիլ. և 18 միլիոն բնակիչ։ Կորուստը չափազանց մեծ է, բայց և արդարացի է։ Եւրոպայում յետամնաց Իսպանիան այլ ևս հեղինակութիւն չունէր իւր դրսի հեռաւոր երկիրներում։ Դա պատմութեան անողոք դատավճիռն էր, որ տրուեց Հիւս. Ամերիկայի ձեռքով։ Իսպանիայինմնում է միայն տրուած մեծ դասից օգտուել և վերափոխուելով։ Իւր տարածութեամբ նա այնուամենայնիւ բաւականաչափ մեծ երկիր է, որպէս զի կարողանայ պատկառելի դիրք բռնել Եւրոպայում, իրար յաջորդող յառաջադէմ կառավարութիւններ ունենալու պայմանով։ Գուցէ, ազատուելով հեռաւոր երկիրներ կառավարելու իւր ոյժերին անհամապատասխան դերից, Իսպանիան իւր դրսի քաղաքականութիւնը ուղղէ դէպի իրեն կպած Աֆրիկան, ուր հէնց Իսպանիայի կողքին դեռ ևս գոյութիւն ունի մի արաբական-մահմեդական ընդարձակ Մարոկկո։

Կուբան դառնում է անկախ երկիր, իսկ Ֆիլիպեան կղզիները, դաշնադրութեան համաձայն, Իսպանեան զիջանում է Հիւսիսային Ամերիկային, դրամական վարձատրութեան փոխարէն։ Ամերիկայի կառավարութեան մտադրութիւնը այն է, որ Ֆիլիպեան կղզիները դարձնի ամերիկական կոլոնիական երկիր։ Դորա դէմ է Ֆիլիպեան կղզիների ազգաբնակութիւնը, որը իւր համար յեղափոխական ժա-

մանակաւոր կառավարութիւն ունի ներկայումս Ագուինալդոյի նախագահութեամբ։ Իսպանիայի դէմ պատերազմում էին միաժամանակ և յեղափոխականները և Հիւս. Ամերիկան. վերջինս բռնած ունի կղզիներում միայն չորս քաղաք, մինչդեռ մնացեալը յեղափոխականների ձեռքումն է, որոնք, ընդունելով հանդերձ ամերիկական օգնութիւնը, երկիրը իրենցն են կարծում և չեն ճանաչում Իսպանիայի իրաւունքը Ֆիլիպինները վաճառելու ում և ինչ։

Ամերիկական-Իսպանական պատերազմի ելքը արթնացրեց Հիւս. Ամերիկացոց մէջ իրենց ոյժի գիտակցութիւնը տիեզերական խնդիրներին մասնակցելու համար։ Այդ խնդիրներից կարևորագոյնն է ներկայումս չինականը։ Չինական կայսրութիւնը, Եապոնիայի վայրուն յաղթութիւնից և ապա այն յայտնի գրաւումներից յետոյ, որ յաջորդաբար կատարեցին Գերմանիան, Ռուսիան և Անգլիան, մտել է իւր պատմութեան մի նոր շրջանը։ Օտար պետութիւնների միջամտութիւնը մի կողմից, և միւս կողմից ռեֆորմների չինական կուսակցութեան երևան գալը, դցել են կայսրութիւնը ալեկոծման մէջ։ Կառավարութեան անկարողութեան պատճառով ապահովել եւրոպացիների կեանքը և գոյքը չինացիներից՝ եւրոպական պետութիւնները արդէն մի-մի խումբ զինուորներ են մտցրել Պեկին՝ դեսպանութիւնները և իրենց հպատակներին պաշտպանելու համար։

Այս խառնաշփոթութեան մէջ Անգլիան, նոր ոյժ առած իւր փառաւոր յաղթութիւններով Սուդանում, որով Եգիպտոսը աւելի ու աւելի անվիճելի կերպով անգլիական է դառնում, ապահովելու համար իւր իշխանութիւնը Ասիայում՝ առանձնապէս փայփայում է *Անգլո-ամերիկական դաշնակցութեան խնդիրը*, որը մանաւանդ այնքան եռանդոտ քարոզիչ է գտել յանձին անգլիական կոլոնիաների մինիստր Չեմբերլէնի։ Եւ Անգլիան, միաժամանակ, նաւային մեծ պատրաստութիւններ է տեսնում, որպէս զորանից առաջ Ռուսիան նոյնն արեց, երբ սա միանգամից մօտ հարիւր միլիոն ռուբլի որոշեց նոր նաւերի համար. Ֆրանսիան, դրդուած Անգլիայից, նոյնպէս արտակարգ ծախսեր է անում իւր նաւային ոյժը զօրացնելու համար, իսկ Գերմանիան ստեղծում է նաև երեք նոր կորպուս ցամաքի զօրք։

Z.

ՋԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՍ իւր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն ամենքին, որոնք Մուրճի Տօնամեակի առթիւ մեզ իրենց շնորհաւորութիւններն յայտնեցին անձամբ և թէ հեռից նամակներով, հեռագրերով, ընծաներով և թէ գրական նպաստներով։

ՄՈՒՐՃ'Ի ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՐԸ բաղկացած 320 երեսից սպառրւում է սովորականից կրկնապատիկ աւելի մեծ քանակութեամբ։ Դեկտեմբերի համարը պատրաստ կ'լինի տարեալ վերջին։

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ սկսած է։ Ներկայ համարով բաժանորդներին ղրկւում են պատրաստի ծրարներ և նամակի ցանկեր։ Խնդրում ենք աւելորդ ղրկածները տալ բաժանորդ գրւել ցանկացողներին։

ՆԻՒԹԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏԵՔԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ (Տես սկիզբը Մուրճ № 1, 2—3 և 4)։ Տիկին Աննա Անդրէասեան Քալանթարեանից (Բաքու) 200 ռ., պ. Առաքել Մատուրեանից (Բաքու) մի երկրորդ նէրով՝ 200 ռ., պ. Եղիա Տէր-Խաչատրեանից (Թիֆլ.) 25 ռ., 150 ռուբլի նէր պ. Համբարձում Ս. Մելիքեանից (Բաքու), 150 ռ. նէր պ. Պօղոս Յովս. Ղուկասեանից (Բաքու), 150 ռ. նէր պ. Յովհ. Դ. Ադամեանից (Բաքու), 150 ռ. նէր Քրիստափոր Գ. Թումաչեանից։ Նուխուց Մուրճին համակրող մի խմբից 100 ռ.։

ՄՈՒՐՃ ՆԻՒԲՈՂՆԵՐ։ 1) «Ռմն» Մոսկուայից ղրկել է մեզ 50 ռ. Մուրճ'ի տասնամեակը լրանալու առիթով, կարգադրելով 5 տարի մի օրինակ Մուրճ ղրկել մի սր և է հասատատութեան՝ խմբագրութեանս ընտրութեամբ։ մենք որոշեցինք այդ դումարով 5 տարի չարունակ Մուրճ ղրկել Աշտարակ գիւղի համայնքին։

2) Պր. Սերովբէ Անանեանց, Նոր-Նախիջևանից, մի օրինակ նոյն քաղաքի Ս. Հռիփսիմեան աղջկանց դպրոցին։

3) Պր. Ս. Բէկթաշեան, անտառային վերահսկող, Գանձակից, մի օրինակ թողած լինելով մեր կարգադրութեան, մենք յատկացրինք այն Գանձակի արհեստաւորաց դպրոցի հայ աշակերտներին, սոցա խնդրանօք։

4) Եղբ. Թամիարեան, Մոսկուայից, մի օրինակ՝ Նուշուայ Հայոց թեմական դպրոցին. երկու օրինակ ևս թողած լինելով մեր կարգադրութեան, որոշեցինք ղրկել՝ մէկը Գորում բանակող զինուորական գնդի հայ զինուորներին, միւսը Լագոդեխում բանակող գնդի հայ զինուորներին։

5) Բժիշկ Գարեգին Սարգսեան՝ Պարիզի «Հայ ուսանողական ակումբին», rue St. Jacques. № 15։

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ դեկտ. 8-ին առաւօտը ոտաւում է Թիֆլիսում։

ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ։ Հոկտ. 25-ին Ս. Էջմիածնում Վեհափառ Կաթողիկոսից ձեռնադրուեց եպիսկոպոս՝ Եղիշէ եպիսկ. Դուրեան, Արմաշի դպրեվանքի (Թիւրքիայում) տեսուչ, Յակոբ եպիսկոպոս Աշտարակեան, Եգիպտոսի առաջնորդական փոխանորդը. Գէորգ եպիսկ. Իւթիւճեան, որին Վեհ. Կաթողիկոսը կարգել է Լոնդոնի, Պարիզի, Բուլգարիայի և Ռումինիայի հայ գաղթականութիւնների հովիւի պաշտօնը. Յովհաննէս եպ. Շիրակունի՝ Գորայ լաջորդը։

ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴ. ԳԷՈՐԳ-ԹԱՒԱՔԱԼԵԱՆ։ Գանձակից մեզ գրում է պ. Աշ. Աթանասեանը.

«Լուրեր են պտտում և նոյն իսկ պաշտօնական, որ Գանձակի լաջորդ արժ. Բագրատ վարդապետ Գէորգ-Թաւաքալեանը, համաձայն Նորին Վեհափառութեան բարեհաճ կարգադրութեան, նշանակում է Նուշի, որպէս ժամանակաւոր կառավարիչ Ղարաքաղի թեմի և նախանդամ կոնսիստորիայի։ Այս նշանակումը խիստ անհանգիստ է արել Գանձակի հայ հասարակութեանը—որը պատրաստւում է մի յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Էջմիածին Վեհ. Կաթողիկոսի մօտ միջնորդելու, որ Նորին Վեհափառութիւնը, եթէ հնարաւոր է, չանջատի հայր Գ.-Թաւաքալեանցին Գանձակի իր հոտից։ Հայր-Բագրատը իր պաշտօնավարութեան այս համեմատաբար կարճ (երեք տարի) ժամանակամիջոցում թէ որպէս անաչառ պաշտօնեայ, թէ որպէս հմուտ և ոգեորող քարոզիչ և թէ որպէս ժողովրդասէր և գործունեայ լաջորդ դրաւել է դէպի ինքը Գանձակի թէ քաղաքի և թէ գաւառի ժողովրդեան անկեղծ սէրը և համակրութիւնը, ուստի գանձակեցիների համար հայր Գ.-Թաւաքալեանից ղրկուելը կը լինի շատ ծանր և զգալի։ Նա դեռ ևս շատ գործեր ունի կատարելու այստեղ»։

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ տեսուչ, հոգաբարձուների ընտրութեամբ և Վեհ. Կաթողիկոսի հաստատութեամբ նշանակուած է բժ. Սիմէոն Շահնազարեանց. Վերջինս իւր 1500 ռուբլի ռոճկից հրաժարելով

1000 ռ. նվիրեց դպրոցին, 500 ռ. յանձնեց հոգաբարձութեան՝ աշակերտներին համազգեստ ձեռք բերելու համար։

ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ։ Երևանի վերաբացված Հռիփսիմեան աղջկանց դպրոցի հոգաբարձութեան պարտաւորութիւնները բարձրագոյն կառավարութեան վճռով յանձնուած են Սուրբ Նինայի բարեգործական ընկերութեան երևանեան ճիւղի վարչութեան (Հեռագիր Պետերբուրգից 29 նոյեմբ.)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՄՈՒԼ։

—Պր. Մինաս Բերբերեան (Նոր-Նախիջևան), որպէս մեզ հաղորդում են, խնդիրք էր տուած կառավարութեան հայոց ամսագիր հրատարակելու համար, բայց հոկտեմբերի վերջը մերժում ստացաւ։

Ծաղիկ շաբաթաթերթ. (ազգային, քաղաքական, բանասիրական և զուարճալիք) ԺԱ. տարի։ Խմբագրապետ Մ. Սուլթանեան. տնօրէն՝ Մարտիրոս Տէօքմէճեան. թերթի գինն է հատով 40 փարայ։ Ծաղիկ շաբաթաթերթը, որպէս երևում է մեզ ղրկած 17-րդ համարից, մինչև այժմ հրատարակում էր Պաղտասարեան դրատունը, որից անցել է նա նոր տնօրէնի. «խմբագրական մարմինը նոյնն է, կազմուած աւելի նոր ոյժերով»։ Նոր խմբագրութեամբ հրատարակած №-ում զետեղած է առաջնորդող՝ «Կրթական հարցեր». Տեղագրական (որ սխալմամբ անուանուած է՝ Տեղեկագրական)—ուր ծանօթութիւն է տրւում երկու դիւղերի մասին։ Ոտանաւորներ՝ թարգմանական (Ռիչարդէնից) և հայ ժողովրդական (Խարբերդից), նորավէպեր ու պատկերներ (չորս հատ, բոլորը շարունակելի), մի մեծ վէպ (շարունակելի), մի լօղած «Խեղճ օղին». Ազգային լուրեր։ Ծիծաղելի բան է մի փոքրիկ շաբաթաթերթում հինգ վէպեր տեսնել, այն էլ բոլորը շարունակելի։ Առաջնորդողը լաջող միտք է լայտնում։

ՆԻԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ։

—Գալուստ Կոստանդեան, Իզմիրցի, հեղինակ «Մեթոդի վրայ» և շատ այլ գիտական դրքերի, իւր գրադարանը, արժողութեամբ ենթադրաբար 10.000 ռ. կտակել է Իզմիրի Ցունաց գրադարանին, որը քաղաքի ամենահարուստ գրադարանն է և, թէև դպրոցական լարկին ներքև, բայց բաց է ամենքի համար և մուտքը ձրի։ (Մի հալի ալպպիսի կտակը լոյն գրադարանի օգտին տեսիլք է տուել խոստակցութեան թիւրքահայոց մամուլի մէջ, թէ ինչու Կոստանդեան իւր գրադարանը չի կտակել հայոց մի հասարակական գրադարանի օգտին)։

—Տիկին Վարվարա Քանանեան նվիրեց 4000 ռ., դորա տոկոսիքով Մոսկուայի համալսարանի պատմական-լեզուաբանական բաժ-

նում ուսանող հայերից մի թոշակաւոր պահելու համար Մոսկվայի պրոֆ. Վ. Ի. Դերլէ'ի անուան. թոշակաւորի ընտրութիւնը պատկանելու է պրոֆ Դերլէ'ին։

Կարապետ Խուպեսէրեան (Թալասցի, Թիւրքիա), կտակած է 3000 լիրայի արժեթղթեր 4%-արեր, որ անում է տարեկան 120 լիրա. դորանից 80-ը Կեսարիա քաղաքի մի թաղի վարժարանի համար, 25 լիրա Ս. Փրկչի և այլ բարեգործական հաստատութեանց, իսկ 15 լիրան իւր մոցանակ «մանկավարժական ընտիր երկ մը» լրիհողին։ Կտակը պիտի գործադրուի իւր մահից յետոյ, բայց կտակատարը, որ կենդանի է, այժմէն տարին 18 լիրա է տալիս իւր թաղի վարժարանին Կեսարիայում, որին ինքը անձամբ հոգ է տանում։

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ԿՏԱԿՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ։ Օսմանեան Պետական խորհուրդը որոշեց, ըստ հին կայսերական հրովարտակների, օրինաւոր նկատել այն կտակները, որոնք լրացուած են կտակակատարի ողջութեամբ վկաների ասջև, և հաստատուած առաջնորդների ու Պոլսոյ պատրիարքների կողմից։ Եթէ վէճ ծագի ժառանգորդների կողմից, Շէրին քննում է խնդիրը. բայց Շէրիի առջևն էլ վաւերական է վերը որոշած ձևով կատարած կտակը։

ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ։

«Հայ-ռուսական որբանոց, հիմնուած «Նղբայրական օգնութիւն Թիւրքիայում վնասուած հայերին» ժողովածուի խմբագրութեանը նվիրած միջոցներով (Orpelinat Arméno-Russe, fondé par souscription sous les auspices de la rédaction du recueil de Moscou Secours fraternel aux Arméniens de Turquie)—այդ է պաշտոնական անունը այն որբանոցի, որ ռուսաց հրատարակիչ պ. Գրիգոր Զանչեանի ջանքերով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը հիմնել է Գիարբէքիրի Պալուի թեմում Բաղդրատաղեաց Աստուածամօր վանքում, 25 որբերի համար։ Այդ թեմում, ծիսական ցուցակների համաձայն, հաշուում են 2.250 որբ։ Պատրիարքարանի հաշուով՝ ամեն որբ նստում է տարեկան 50 ռուբլի, որի համաձայն պ. Զանչեանը, իւր խմբագիր «Նղբայրական օգնութեան» ժողովածուի, տուել է պատրիարքանին 5.000 ռուբլի (բացի 13.140 ռ. 65 կոպեկից, որ ուղարկել էր՝ վնասուածներին նպաստելու համար)։ Նուիրատուներից պ. Զանչիեւ Ռուսսկիյա Վեդոմոստի լրագրում տպած իւր մի նամակում) վերում է հետեւեալներին—Է. Ի. Սալոմոն, Ա. Ն. Թալիրեան, Ա. Ծ. Ծատուրեան և Ա. Ա. Շիլինգ 500-ական ռուբլի. Ի. Ե. Փիլիպեան 300 ռ., Ս. Պ. Բելոգոլով 250 ռ., եղբ. Յոհարեաններ, Ծ. Ս. Թումանեան 200 ական ռուբլի, Պ. Պ. Բոտկին 125 ռ., հայր Իոհան Սերգեև Կրոնշտատսկի, Ի. Ի. Պետրունկեւիչ, իշխ. Ե. Խ. Արամելիք-

Լազարեւ, Ի. Քանանեան, իշխ. Լ. Ս. Պոլեակով, Ե. Կ. Պոպովա, Ա. Ա. Տարասով և Ս. Մ. Ա—100-ական ռուբլի. Ս. Կ. Զանուվեան, Ա. Ա. Կորշինկին, Ն. Կ. Ֆոն Մեկկ և Ն. Ա. Նալգինով 50-ական ռուբլի։

Պր. Զանչիեւը արդէն հոգ է տանում երկրորդ որբանոցի համար, որի հաշւի դրված է Կ. Պոլսի դեսպան Զինովիեւին Հայոց Պատրիարքարանին հասցնելու համար, 2000 ռ., հետեւեալ նուիրաբերութիւններից. տ. Ե. Ս. Միրզոյեան 500 ռ., տ. Ս. Ա. Պրոտոպոպովա 300 ռ., բժ. Ց. Բ. Գասպարեան 200 ռ., Ա. Վ. Բերենչտամ 104 ռ. (նոյնը խոստացել է կարելոյն չափ ամեն տարի տալ 100 ռ. երկու որբի կրթութեան համար). 100-ական ռուբլի՝ տիկ. Ե. Ց. Միանսարեան, Ց. Մ. Ալաջալեան, Ե. Գ. Լիանոզեան, Ա. Վ. Մորոզով, Ա. Ա. Տարասով, Գ. Ա. Տարասով, Մ. Ա. Տարասով. 50-ական ռուբլի՝ Իս. Ց. Ժամհարեան, Ս. Ն. Քիսաեան, Վ. Ե. Մորոզով, Լ. Ս. Շորշորեան։

Անգլիական կանանց ընկերութիւնը կայ, «որի նպաստներով և արդիւնքով մեծ օգնութիւն են տեսնում երկրի խորերը՝ Կիլիկիա, Բղի, Զմշկածագ, Բալու, Մարաշ, Զէյթուն, Ատանա, Ուրֆա, Վան, Խարբերդ, Դիարբէքիր» վերջինիս մէջ որբանոցի մանչերին (=տղաներին) որոշված է սովրեցնել երեք արհեստ՝ կահագործութիւն, կոշկակարութիւն և դերձակութիւն, և աղջիկներին՝ արհեստներ խաւլու հիւսել։ Կանանց և որբերի հիւսած ձեռագործները Անգլիայում մեծ ընդունելութիւն են գտնում։ Մեկն Գլասգո քաղաքում (Շոտլանդիա) անցեալ տարի 1.500 անգլ. ոսկու (=չուրջ 15.000 ռուբլու) հայկական ձեռագործ է ծախւած։ Այդ տակները գործ են ածւում տաճկահայոց մէջ բարեգործական նոր հաստատութիւններ կառուցանելու և եղածները զօրացնելու։

Թորոսեան եղբայրները (Տարասով) Արմաւիրում (Հիւս. Կովկաս) վճռել են իրենց հաշւով մի որբանոց պահել Տաճկաստանում 30 որբի համար, հաշւելով իւրաքանչիւրի համար 50 ռ. տարեկան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։

Թեհրան։ Թեհրանի Հայոց թեմական առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոսի հրաւէրքով հոկտեմբ. 2-ին կայացաւ Թեհրանի հայ ժողովրդի ընդհանուր ժողովը, որին առաջարկված էր եօթն անձերից մի մարմին կազմել ազգային և եկեղեցական գործերը կառավարելու համար. ընտրեցին՝ Յովհ. խան Մասէհեան, Մարտիրոսեան, Ալբերտ Տէր-Յովհաննիսեան, Ռաֆայէլ Թադէոսեան, Ալէքսան Թունեան, Արամ Քարամեան, Յովսէփ Թադէոսեան։ Ցուսացւում է, որ այդ ընտրված պարոնները կը յաջողեն Պարսկաստանի Հայոց ազգային սահմանադրութիւն հաստատելու։

Անգլիական ընդհ. հիւպատոսը Թաւրիզում՝ Վուդ, որպէս ամեն տարի, այս անգամ ևս աշնանը շրջեց Ուրմի և շրջականները, ուր կան անգլօսպատակներ և ամերիկական միսիոնարներ ու նոցա հաստատութիւններ, որոնք անգլիական հիւպատոսարանի պաշտպանութեանն են յանձնուած։ Այդտեղից նա գնաց Սալմաստ գաւառը, այն ժամանակ, երբ ամբողջ Սալմաստում սիրում էր կոտորածի սարսափելի երկիւղ, շնորհիւ դատաւոր Զարղամ-իւլ-Մուլքի, որի հրամանով Մահլամ գիւղում գլխատուել էին մոկացի, շատախցի և ոզմբցի իններ թիւրքահայեր։ Շնորհիւ անգլիական ընդհ. հիւպատոսի թեհրանի անգլ. դեսպանատունը զրկած հեռագրական զեկուցման Սալմաստի վիճակի մասին, հոկտեմբերի վերջերքը վիշեալ դատաւորը և Մահլամի տանուտէր Հաջի-Խանը պաշտօնանկ եղան և հրամայուեց գնալ Թաւրիզ՝ ընդհ. նահանգապետ Ամիր-Նիզամի առաջ պատասխանատուութեան ենթարկուելու համար։ (Տես սոյն №-ում թղթակց. Պարսկաստանից)։

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ԳԱՂՈՒԹՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ։ Ռուսաց գաղթական խնդրի իրականացման առաջին սկզբնաւորութիւնը լինում է Գանձակի նահանգում, շնորհիւ նահանգապետ գեներալ-մայոր Ն. Պ. Կիրէեվի։ Իշխ. Կառավարչապետը արդէն իւր համաձայնութիւնն է տուել Կուրսկի նահանգի Նովո-Օսկոլսկի գաւառի և Վորոնէժի նահանգի Կարոչաեւսկի գաւառի մի քանի գիւղերի հաւատարմատարներին, որ իրենց կլիէնտների հետ հաստատուեն Զիւանչիրի գաւառի (Գանձակի նահ.) արքունական ազատ հողերում։ Այդ առթիւ Գանձակում եղաւ խորհրդակցութիւն, ներկայութեամբ նահանգապետի, պետական կալուածների կառավարչի, նահանգական կառավարութեան խորհրդատուի և պետական կալուածների կառավարութեան մի պաշտօնեայի։ Խորհուրդը վճռեց կազմել երկու ռուսաց գիւղ՝ մէկը Տէրտէր, միւսը Ջան-Նաթաղ կոչուած գիւղերում։ Տէրտէր'ում պիտի յատկացուի ամեն ընտանիքին տան շինութեան համար (ПОДъ усадьбу) 600 քառակուսի սաժէն տեղ, պարտէզի և պտղատու ծառերի կամ խաղողի այգու համար 2-ական դեսեատին, և դաշտային մնտեսութեան համար 10-ական դեսեատին՝ հարևան Զալլի և Շահար-երի հողերից։ Կարելի է համարում Տէրտէրում բնակեցնել 50—70 ընտանիք։ Ջան-Նաթաղում ամեն ընտանիքին կարելի է համարել տալ 20 դեսեատին բոլոր պիտոյքների համար և բնակեցնել 40—50 ընտանիք։ Թէ Տէրտէրում և թէ մանաւանդ Ջան-Նաթաղում հողը հիանալի է, նոյնպէս և կլիման և ջուրը։ Նահանգապետ Կիրէեւը արդէն իսկ որոշել է Տէրտէրում եկեղեցու և դպրոցի անդերը։

ՎՈՒՐՍԵՐԻ ՆՈՐ ԲԱԺԻՆԸ ՄՈՒՐՃ'ՈՒՄ։ Մեր ընթերցողներին յայտնի է, որ Թիֆլիսում և Բաքուում բացած են ճիւղեր Ս. Պետերբուրգի ռուս

գաղթական ընկերութեան։ Խնդիրը արդէն սկսել է իրականանալ և այսուհետև մենք պիտի առիթներ ունենանք լաւագոյն իմանալու ռուսաց նոր գիւղերի մասին Անդրկովկասում։ Ի նկատի առնելով այդ հանգամանքը, որ երկրիս կեանքի ամենակարևոր երևոյթների թւին է պատկանում, Մուրճ'ի «Լուրերի» մէջ մի լայնատարածին կը լինի լատկացրած այդ կարգի փաքտերին, որպէս զի ընթերցողները հնարաւորութիւն ունենան հետևելու նոր սկսած հոսանքին սորա ամբողջ ծաւալով։

ՌՈՒՍԱՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ։ Պր. Իւրիլ Վեսելովսկի'ն, որ հանրածանօթ է իւր հրատարակած „Армянскіе беллетристы“ ժողովածուով, պատրաստում է մայրաքաղաքների թերթերից մէկում մի աշխատութիւն խորագրով՝ „Армяне и русская литература“ (Հայերը և ռուսաց գրականութիւնը)։ Իւր խնդիրքի համաձայն մենք զրկեցինք իրեն ցուցակը ռուս հեղինակներից կատարած թարգմանութիւնների, որոնք երևցել են Մուրճ'ում։ Պէտք է կարծել, որ Մուրճ'ի տուած թարգմանութիւնները ռուսաց գրականութիւնից, թէ իրենց քանակով (18 հեղինակներից 50 կտոր՝ ոտանաւոր, պոէմա, վէպ) և թէ որակով, նշանաւոր տեղ են բռնելու պ. Վեսելովսկու ուսումնասիրութեան մէջ։

ՏՐԻԵԱԼՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ։ Այդ հաստատութիւնը, որ զուլթիւն ունի Արևմտեան Եւրոպայում, Ամերիկայում և Ռուսիայի ներքին նահանգներում, նրանով է տարբերւում սովորական դատարաններից, որ առաջինում, պաշտօնական դատաւորների հետ՝ մեղադրեալի մեղաւորութիւնը կամ անմեղութիւնը քննելու համար՝ դատում են նաև ժողովրդի մարդիկ, ընտրութեամբ, որոնք, երդումն ընդունելուն համար կոչւում են երդեալներ (судъ присяжныхъ)։ Այդ հաստատութիւնից զուրկ են Ռուսիայի ծայրի երկիրները, որոնց մէջ և Կովկասը։ Այդ մասին խնդիր լարուցեց միերկու տարի առաջ, Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում տեղական ինքնավարութիւն ներմուծելու խնդրի հետ միաժամանակ։ Մեզնում միմիայն պ. Վելիչկո'ն էր, որ «Կաւկազ»-ում Կովկասի համար այդ պատուական հաստատութիւնը վաղաժամ էր համարում։ Աւելի ևս մեծ պատճառ ուրախանալու, որ Կովկասում երդեալների դատարան հաստատելու խնդիրը ներկայումս լարուցած է արդէն արդարադատութեան մինիստրութեան մէջ, և ինքը մինիստր Ն. Վ. Մուրաւիով, նորերս լայտնեց՝ «Ներկայումս, XIX դարի վերջում, հերքել օժանդակիչ ժողովրդական դատարանի գաղափարը ամենից առաջ հակառակ կը լինէր մեր դարաւոր դատարանական-պատմական աւանդութիւններին»։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ։

Երեւանի քաղաքապետ։ Նոյեմբ. 11-ին Երեւանի խորհրդարանը ընտրեց միակ ընտրող պ. Ի. Մելիք-Ազամալեանցին, որ ստացաւ 41 սպիտակ և 9 սև քուէ։ Ռոճիկը նախօրօք որոշուած էր 5.000 ռ., յետ աւելի քան մինչև այժմ եղել է (կարծեօք 3000 ռուբլի էր մինչև այժմ)։ Ռոճկի բարձրացնելը կատարուած էր լատուկ նպատակով, որ ասպարէզ կոչեն քաղաքի առաջնակարգ փաստաբան և հեղինակութիւն վայելող պ. Ի. Մելիք-Ազամալեանցին (որդի յայտնի հանգուցեալ Ղահրաման աղալի)։ Նորանից մեծ սպասելիք կան։

ԵՐԵՒԱՆԻ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ։ Երեւանի առուների և աղբիւրների ջրերը ենթարկուեցին տարրալուծութեան. յայտնի եղաւ որ բոլոր առուների ջրերը պարունակում են բազմաթիւ վնասակար նիւթեր՝ թէ մինեբրալական և թէ օրգանական, և այդ պատճառով առողջութեան համար կատարելապէս վնասակար ճանաչուեցին։ Իսկ աղբիւրներից միայն Կիրեակով կոչուածը ճանաչուեց չատ թէ քիչ տանելի, միւսները՝ անպէտք։ Մինչդեռ այդ աղբիւրը հազիւ կարող է բնակիչների միայն մի քառորդին բաւականութիւն տալ։ Առողջարար ջուր քաղաք բերելը դառնում է անհրաժեշտութիւն, որի համար և պէտք է հոգալ քաղաքային խորհրդարանը։

ԺԱՆՏԱԽՏՐ Անդրկասպեան երկրում, ուր նա բուն էր դրած Անզոր գիւղում, վերջացրած է հաստատում. Բոմբէյում (Հնդկաստան) չարունակում է սաստկութեամբ։

ԲԱՖՖԻԻ ՄԱՀԱՐՋԱՆԻ առիթով անցեալ անգամ մեր դրած հարցին պատասխան չստացուեց ոչ մահարձանի յանձնաժողովից և ոչ Մշակ'ի խմբագրութիւնից։ Յանձնաժողովին վերաբերեալը այս էր՝ քանի որ իւր հրատարակած հաշուից երեւում էր որ Մշակի խմբագրութիւնից ոչինչ չէ ստացած։ գիտէ՞ նա արդեօք, թէ ոչ, որ Մշակի խմբագրութիւնը ընդունում էր նուէրներ Բաֆֆիի մահարձանի համար. եթէ գիտէր, այդ ինչպէս է որ նա քաջաբար պախարակում էր այն հասարակութիւնները, ուստից նա՝ յանձնաժողովը՝ մահարձանի համար նուէր չի ստացել, բայց միմիայն իրեն հասկանալի պատճառներով լռութեան էր մատնում Մշակ'ում այդ նոյն նպատակով փողեր հաւաքուած լինելու հանգամանքը։ Մշակ'ին վերաբերելին այն էր թէ արդեօք որքան ճիշդ է այն լուրը թէ Մշակի խմբագրութիւնը 9—10 տարի առաջ հաւաքում էր Բաֆֆիի մահարձանի համար նուէրներ. և եթէ ճիշդ է՝ այդ ինչպէս է պատահել որ նա չի յանձնում դումարը մահարձանի յանձնաժողովին և դեռ նոր նոր նուէրներ էլ է հաւաքում Բաֆֆիի գերեզմանի ցանկապատի համար։

Համբերութիւն ունենանք մի փոքր էլ սպասելու մինչև պա-

տասխան կ'լսենք! Այժմ մենք կարող ենք բոլորովին անհերկրալ կերպով պնդել, որ արդարև 1888-ին Մշակը ընդունում էր Բաֆֆիի մահարձանի համար փողեր առանձին, և Բաֆֆիի հեղինակութիւնները հրատարակելու համար փողեր առանձին։ Դորանից աւելին մենք այդ մասին չգիտենք։

ՄԱՐԱԳԱՅԻ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ ստացել ենք հետևեալը տպագրելու համար։

«Մարաղա. Նոյեմբ. 13, 1898 թ.

«Յարգելի Խմբագիր!

«Ընկերութիւնս կայնոր համարեց պատեական «Մուրճ»-ի միջոցաւ լայտարարել 'ի գիտութիւն հայ հասարակութեան, որ 1898 թ. Նոյեմբերի 10-ից Մարաղայի հայոց ազգային ընթերցարանը—որ մինչ վերոյիշեալ թուականը գտնուում էր անհանձնելի՝ նոյն իսկ ոգորմելի վիճակի մէջ—բարեկարգուել է. կանոնաւորապէս շարունակուում է ընթերցանութիւնը։ Ասիական աշխարհի այս ետ ընկած անկիւնում թէ որքան կարևորութիւն ունի ընթերցարանը և ընթերցանութիւնը՝ այդ թողնում ենք յարգելի ընթերցողների լուրջ ուշադրութեանը։ Ընկերութիւնս իրեն անչեղ նպատակ ընտրել նախ տեղացի, ապա - երբ գործը բաւական ընդարձակուց—գաւառացի թրքախօս և քրդախօս հայերին ծանօթացնել իրենց մայրենի բարբառի հետ՝ հայերէն մատչելի գրքերով և պարբերական հրատարակութիւններով։ Ուստի սրանով դալիս ենք խնդրելու հայազգի լաւաջանդիմութեան նախանձախնդիր հեղինակներին, հրատարակիչներին, խմբագիրներին և բարերար անհատներին՝ չզլանալ իրենց նպաստաւորութեամբ (գրքեր, պարբերական հրատարակութիւններ) նպաստել մեր աղքատիկ ընթերցարանին և օժանդակել մեր քարեպատակ ձեռնարկութեանը, որով մի մեծ բարիք արած կը լինեն ազգին։

Ընկերութեան հասցէն է՝ Mapara (Персія). Bibliothèque Arménienne. Maraga (Perse). Նախագահ՝ Մ. Տէր-Յակոբեան, Քարտուղար՝ Է. Մ. Մուրհաճեան։

ՄԹԻԹԻ ՎՐԱՑ ՎԱՆԻ վերանորոգութեան համար ց 20 հոկտ. ժողովուած էր 16.000 ռուբլի (որից նուիրել են՝ մեծ Իշխ. Միխ. Նիկոլայևիչը 2 հազար ռ., Կառավարչապետ Իշխ. Գալիցին 3 հազ., Վրաստ. էքզարխ ս. Ֆլաւիանը 1000 ռ., Գուրիա-Մինգրելիայի եպիսկ. ս. Աղէքսանդր 1.500 ռ., Ռուսաց ս. սինոդի տնտեսական վարչութիւնը 1.111 ռ., մնացածը ստացուած է Ռուսիայի ներքին նահանգներից ու Կովկասից)։ Վերանորոգութիւնը, որպէս յաղորդել ենք, հաշուուած է 200 հազար ռ., որից 40.000-ը միայն գրքերի և տանիքի համար։ Այդ գործի համար մասնաժողովը հոկտ.

20-ին վճռեց դիմել աջակցութեան համար Ռուսիայի բոլոր նահանգապետներին, ոստիկանապետներին ու գաւառապետներին։

ԱՐՑԻԶԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ, որը 1888 թվին տուել էր 4.095.542 ռ., 1897-ին տուեց արքունի գանձարանին 19.093.922 ռ.։

ԲԵՐԲԵՐԻ ՀՈՒՆՁԸ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ։ 1) Խաղողը ընդհանրապէս միջինից ցածր. մանաւանդ դարեան ցրտերը չատ տեղ չորացրին որթերը։ Դեսեատինից հաւաքել է 120-ից մինչև 350 փութ խաղող. համեմատաբար լաւ էր Սուրմալուի և մանաւանդ Լէմիածնի գաւառներում. Աչտարակ գիւղում, օրինակ, դեսեատինը տուել է մինչ 500 փութ խաղող։ Խաղողը ծախւում էր խալւարը (30 փութ) 16—25 ռուբլի. իսկ Երևանում, սեղանի սկզբին, ծախւում էր մինչ 30 ռուբլի։ Երևանի նահանգում խաղողի այգիները բռնում են 8.526 դեսեատին, և, ֆիլոքսերայնի կոմիտէի տեղեկութեամբ, ժողովել է մօտ 2.303.580 փութ խաղող. փութը միջին հաշուով 60 կոպէկ ընդունելով՝ արժէքը կազմում է 1.382.148 ռուբլի։ 2) Բամբակը ամենուրեք վատ հունձ տուեց, դեսեատինը 14—25 փութ։ Երևանի և Նախիջևանի գաւառներում ծախւում է 6 և 7 ռուբլով փութը։— Բրինձը անբաւարար հունձ տուեց. անցեալ տարուայ հունձից դրեթէ երեք անգամ պակաս։ Երևանի և Շարուր-Դարալագեազի գաւառներում խալւարի (30 փութ) գինը 25—30 ռուբլի է։—Յորենի բերքը ընդհանրապէս վատ էր. ծախւում էր հոկտեմբերին Երևանում խալւարը (30 փութ) 38 ռուբլով, որ բարձր գին է։

ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Դորա համար կազմուած է բաժնեւոր ընկերութիւն, որի կանոնագրութիւնը հաստատուց նորերս։ Հիմնադիրներ անուանում են՝ Դերասիմ Յով. Թումանեան, Յովհ. Աղամեանց, ինժենէր մեքենագէտ Պետրոս Յակոբեանց և Ջումշուդ Յակոբեանց (ամենքը Բաքուից)։ Ընկերութեան դրամագլուխն է կէս միլիոն ռուբլի, բաժանուած երկու հազար բաժնեմասերի։ Վարչութիւնը կը լինի Բաքուում («Ցարաղ»)։

ԲԼԷԿ-ՌՈՏ խաղողի սարսափելի հիւանդութիւնը, որ կարծւում էր թէ դտնուած է Անդրկովասում, այժմ վերջնականապէս հերքուած է, շնորհիւ Պարիզի բուսական պաթոլոգիայի աշխատանոցի գործնական հետազօտութեանց վարիչ պրոֆ. դը-Լակրուայի հետազոտութեան, որ նա կատարել է սենատոր Պրիլլիէ՝ի հսկողութեամբ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԴԵՐԲԷՆԴՈՒՄ։ Հոկտեմբ. 25-ին Դերբէնդ եկաւ առաջին դնացքը Վլադիկաւկազեան երկաթուղու Պետրովսկ-Դերբէնդի ճիւղի։ Մնում է այժմ որ Դերբէնդը միացւի Բաքուի հետ։

ԼԵՋԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ «ԱՐԵՒԵԼՔ»ՈՒՄ։ «Արեւելք» լրագրի մէջ պ. Հրանտ Աստուր և նորա ընդդիմախօս պ. Գ. Անդրէասեան (թերթի

նալեմքերի համարն.) գրաղուած են մի լեզուական կնճռոտ խնդրով, որի պարզ լուծումը տրուած է Մուրճ'ում անցեալ տարի (1897, №7-8, էջ 1057-59)։ Տեսնելով որ միավանկ գոյականով վերջացող բարդ գոյականները յոգնակիում երբեմն եր են ընդունում, (օր. գլխացաւեր) երբեմն ներ (օր. հողագործ—ներ), իսկ բառերից ոմանց համար յոգնակին անորոշ է, հարց են դնում թէ որն է կանոնը։ Եւ ահա ստեղծում են կանոններ. կարծում էք մի կանոն. ոչ, տասնեակ կանոններ։ Պր. Հ. Աստուրը և ոչ մի բառով չի ակնարկում թէ այդ խնդիրը իրենից առաջ և դրուած և լուծուած է Մուրճ'ում. իսկ պ. Անդրէասեան աւելի բարեխիղճ է կամենում լինել, ասելով թէ՝ «Ու որչափ կը լինի, Հրանտ Աստուր ահա առաջինն է, որ մեր արեւմտեան բանասէրներուն ու քերականութեան հեղինակներուն մէջ, կը փորձէ քերականական բառաղիտութեան այս մասը որոշ կանոններու ենթարկել։ (Ստորագծումը մերն է).—Սակայն, որչափ գիտենք, խնդրին վերաբերեալ բարդ բառերի յոգնակին նոյնն է թէ արեւմտեաններին և թէ մեր արեւելեաններիս համար, և եթէ մի արեւմտեան բանասէր առաջին անգամն է խնդիրը չօշափում, այդ դեռ մի պատճառ չէ որ նա՝ մի արեւելեան բանասէրի գրածը կարդալուց յետոյ անգամ՝ լռութեան անցնի։

Կանոնը մի հատ է. եր ունին յոգնակիում միավանկ բառով վերջացող այն բարդ բառերը, որոնք պարզ բարդ բառեր են (այսինքն այնպիսի բարդ բառեր, որոնց իմաստը բղխում է բարդ բառը կազմող բառերից ուղղակի. օրինակ՝ գլխացաւ=գլխի ցաւ, քարանձաւ=քարի հանդ). ներ ունին յոգնակիում միավանկ բառով վերջացող այն բարդ բառերը, որոնք ոչ-պարզ բարդ բառեր են. (այսինքն որոնց իմաստը ուղղակի չի բղխում բարդ բառը կազմող մասներից, և կամ ուր միավանկ բառը անկախաբար գոյութիւն չունի. օր. հողագործ, որը չի նշանակում հողի գործ, այլ հող մշակող. պատմաբան, որը չի նշանակում պատմութեան բան, այլ պատմութիւն գիտցող կամ գրող, ուսումնասիրող. մանուաղէտ, ուր գէտ բառը անկախաբէն գոյութիւն չունի հայերէնում. աչաբոյժ՝ նոյնպէս, և այլն, լինին վերջին վանկը կազմող բառերը բայարմատներ թէ ոչ)։

Այդ է ահա միակ կանոնը։

Ըստ այդ կանոնի, տեղեկագիր (պարզ բարդ բառ), որ նշանակում է տեղեկութեան գիր, յոգնակիում պիտի լինի տեղեկագրեր. լրագիր, որ նշանակում է լուրի գիր, յոգնակիում պիտի լինի լրագրեր՝ բայց խմբագիր, որ չի նշանակում խմբի գիր, այլ փոխաբերական իմաստ ունի, յոգնակիում ունի, խմբագիր-ներ. տանտէր, որ նշանակում է իսկ և իսկ տան-տէր, յոգնակիում ունի տանտէր-ներ. մինչդեռ տանու-

ակը, որ չի նշանակում տանտէր, այլ փոխաբերական իմաստ ունի և նշանակում է դիւղապետ, լոգնակիում ունի տանուտէր-ներ։ Այսպէս առում է հողակոտ-եր, բայց՝ ծերակոտ-ներ (որովհետև չի նշանակում ծերերի կոտ, այլ ծերերի ժողով—իմաստը փոխաբերական է)։

Անվիճելի դէպքերին այս կանոնը լարմարւում է. հետևապէս բոլոր վիճելի դէպքերի համար պէտք է այդ կանոնով վարուել։

Այդ կանոնից, մեր դիտութեամբ, դէմ արևելեան հայերէնում միայն մի բառ կայ բացառութիւն կազմող. դա պետ բառն է, որով բարդւած բառերը՝ զորապետ, դիւղապետ, գնդապետ և այլն, որոնք պարզ բարդ բառեր են, բայց լոգնակիում կազմում են զորապետներ, դիւղապետներ և այլն։

ԿՐԵՏԷՆ ԱԶԱՏ։ Տաճկական զորքերը վերջնականապէս թողին Կրետէն նոյեմբերի 14-ին։ Կրետական ժողովի նախագահ Աֆակիանակի ուղարկեց չորս պետութիւնների ներկայացուցիչներին մի հեռագիր, շնորհակալութիւն յայտնելու Կրետէի ժողովրդի կողմից թիւրքական լծից ազատելու համար և լոյս յայտնելով, որ տաճկական դրոշակը Կրետէից իսպառ կ'ջնջուի։ Թիւրքիային վերապահւում է գերիշխանութեան անունը, որի համար միակ նշան լինելու է մի դրոշակ, որ կանգնեցրած կ'լինի Սուդայի ծոցում գտնւող Սուդա մանրիկ կղզու վրայ, ուր ազգաբնակութիւնը տաճկական է։ Չորս պետութիւնները՝ Ռուսիան, Ֆրանսիան, Անգլիան և Իտալիան (Ռուսիայի առաջարկով) ճանաչել են յունաց թագաւորի որդի Գէորգի՝ ընդհանուր կոմիսար Կրետէ կղզու երեք տարով և համաձայնել են Կրետէի կառավարութեանը տալ իւրաքանչիւրը մի-մի միլիոն ֆրանկ փոխառութիւն։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ։ ՖԱՇՈԴ։ Ֆրանսիան զիջեց, ինչպէս և սպասելի էր։ Մարշան և իւր զինուորները թողին Ֆաշոդը, որը գրաւեցին անգլիացիք։ Ֆրանսիան յայտնեց թէ Ֆաշոդում Մարշանը կառավարութեան կողմից չէր ղրկւած և Մարշանը նուաճողական նպատակներ չունէր։ Այսուամենայնիւ ֆրանսիացիք վճռել են Ֆաշոդում ֆրանսիական դպրոցներ բաց անել։ այդ բանը Անգլիացիք ընդունեցին որպէս նոր ասեղի ծակոց։ Անգլիայի դէմ Լորդ Սալիսբիւրին մի բանքէտում ճառախօսեց, ուր մեղադրում էր Ֆրանսիային որ վերջինս Անգլիային չարունակ ասեղի ծակոցներ է տալիս։ Նոյն մտքով ճառախօսեց Պարիզում նաև անգլիական դեսպան Մոնսոնը, որի համար ֆրանսիական արտաքին գործոց մինիստր Դելկասէ բացատրութիւն պահանջեց. Մոնսոնը երկիցս բացատրեց թէ իւր ճառի մէջ նա իւր իսկական դիտաւորութիւնից աւելի ասաց, որի համար և ներողութիւններ խնդրեց։

ԴՐԷՅՖՈՒՍԻ ԴՈՐԾԻ ՄԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ։ Խնդիրը պարզւում է այնպէս, որ մեր սիրտը լքցւում է ուրախութեամբ, ի նկատի ունենալով այն հալեցքը, որով ղեկավարել ենք այդ աչխարհաշաւաչ գործի սկզբից ի վեր։

Երանի թէ ճչուէր ղեկտ. 1-ին հաղորդած լոնդոնեան Observer-ի հետեւեալ տեղեկութիւնը, որից երևում է որ նախկին մինիստր դեն. Մերսիէ, գլխաւոր չտաբի նախկին պետ դեն. Բուադէֆր և սորա օգնական դեն. Գոնզ գործում են եղել կատարեալ և անկեղծ համոզմունքով և որ նոքա զոհ էին խաբէութեան. Ահա հեռագիրը.

«Ֆլանկֆուրտէր Ցայտունգ-ի մէջ զետեղած է լոնդոնեան Observer-ի մանաւոր հեռագիրը, որի համաձայն բորդերբո'ն գրած է եղել 1894-ի մեծ զօրախաղերից քիչ առաջ, և պարունակում էր իսկական հաղորդագրութիւնները Շեարցկոպպէնին (գերմանական նախկին զինուորական կցորդ Պարիզում) սորա սովորական ագէնտի կողմից, որի անունը ամենքին լաւտնի է, և այդ պատճառով աւելորդ է նորա անունը տալ։ Ագէնտը տեղեկութիւնները ստանում էր Հանրիից (որ իրեն սպանեց անցեալ ամիսները)։ Հանրի'ն հաղորդողն էր և թելադրողը, իսկ միւսը—լոկ միջնորդ-կատարող էր, որը հաղորդածներին թղթի վրայ իսկական ձև էր տալիս և կամ ինքն էր հաղորդում գերմանական զինուորական կցորդին, կամ այդ անում էր Լեմերսիէ-Պիքարի միջոցով, որը այդ ժամանակից դէս մեռաւ օտարոտի հանգամանքներում։ Բորդերբո'ն անզգուշ կերպով զրկւում էր պաստով և ընկաւ Կորդէի ձեռքը, որը տեղեկագրի բիւրօի պետի օգնականն էր։ Երբ որ բորդերբոի բռնուած մասերը հասան մինիստրութեան, մեծ չուզմունք եղաւ։ Հանրի'ն նախադրուչացրեց յանցակից ագէնտներին։ Ասա եղաւ Լատերհազիի հռչակաւոր այցելութիւնը Շեարցկոպպէնին, որի միջոցին Լատերհազի'ն սպառնում էր կամ սպանել Շեարցկոպպէնին և կամ իւր կեանքին վերջ դնել։ Խորամանկ տաքտիկայով և ինքնանոար դոկումէնտներով իսկական յանցաւորները կատածը գցեցին Դրէյֆուսի վրայ։ Կեղծ դոկումէնտները բերին Մերսիէին, Գոնզին և Բուադէֆրին այն համոզման, որ Դրէյֆուսը մեղաւոր է դաւաճանութեան մէջ։ Բայց բաւական չէր միայն մատնանիշ լինել Դրէյֆուսի վրայ. նորա դէմ գործ դրեց մամուլը, և գտնուեց Դրիւմոնի «Libre Parole»-ը, որը կուրացած ատելութեամբ (դէպի հրէաները), կատարեց Լատերհազիի յանձնաարարութիւնը և ամբողջ աչխարհի առաջ ուեց Դրէյֆուսի անունը, իբրև դաւաճանի։ Դեներալները, մինիստրները և ամբողջ աչխարհը խաբուեցին»։

Ֆրանսիակ. ներկայիս մինիստրութիւնը (նախագահ Դիւպիւի, պատերազմ. մինիստր Ֆրէյսինէ, որը զինուորական չէ), առաջ է

տանում իւր գործը՝ Դրէյֆուսի գործը վերաքննելու համար. վճռաջինջ ատեանը՝ քննում է խնդիրը Դրէյֆուսը այժմ ուելի ապապահովմանների մէջ է դրուած, լուսալով գործի վերաքննութեան։

† ԿՈՍՏԱՆԴԵԱՆ, Գալուստ, վախճ. Զմիւռնիայում. հեղինակ իւր ժամանակին աղմուկ բարձրացրած «Մեթոտին վրայ» գրքին. գրեց նաև բազմաթիւ գիտական երկեր մեծ մասամբ ֆիզիկայի բաժանմունքներից՝ Հասարակաց թանգարան, Դանկաբանութիւն, Երկրաբանութիւն, Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Առողջաբանութիւն, Աստղաբանութիւն, Քիմիաբանութիւն, Զգողաբանութիւն, Զայնաբանութիւն, Ելեքտրաբանութիւն, Ջերմաբանութիւն, Լուսաբանութիւն, Մագնիսաբանութիւն, Մէսմէրաբանութիւն, Հմայաբանութիւն, Մթնոլորդաբանութիւն, Եգիպտական նշանագիրք, Սիպիլ, Տիեզերք, Զապել, Սաթենիկ. (տես «Բազմավէպ» նոյեմբ.)։ Երկար տարիներից ի վեր պարապում էր նաև ֆրանսերէն ընդարձակ «Հանրագիտակ բառարան»-ի վրայ։ (Տես նաև վերը՝ Կտակներ և նուէրներ).

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թուական չկայ — ներկայ տարեանն է)

1) ԲԱԲԽՈՒԴԱՐԵԱՆՑ, Ուստա-Գէորգ.—Բարոյական առածներ։ Տփխիս, տպ. Շարաձէի և ընկ. 20 կոպէկ։

2) ՎԱՐԻՆՑԻ, դը, Գ.—Օդը և կեանքը։ Թարգմ. Ե. Տէր-Յակոբեանց։

3) ԾԱՏՈՒՐԵԱՆ, Ալ.—Երեսուն և հինգ տարի. 1862—1897 (Սմբատ Շահազիզեանի 35 ամեայ մանկավ. յօբելեանը)։—Մոսկուա, հրատարակ. Մ. Բարխուդարեանի. 30 կոպէկ։

4) ԵՐԻՑԵԱՆՑ, Աղէքսանդր Դ.—Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի որ ի Թիֆլիզ (1824—1899 թ.)։ Հատոր Ա. (1824—1850 թ.), վեց պատկերով։ Հրատարակութիւն Հոգաբարձութեան Դպրոցի։ Թիֆլիս, տպար. Ց. Մարտիրոսեանցի, 1898. (գինը նշանակուած չէ. 494 մեծադիր էջեր)։

5) ԱՏՐՊԵՏ.—Շխնոց (պատկեր)։ Նոր-Նախիջևան. տպ. եղբ. Աւագեանների. գինը 30 կոպէկ։

6) ՍԼԻՎԻՑԿԻ, Ա. Մ.—Խորամանկ աղէսը։ Փոխադրեց (ռուսերէնից) Պերճ Պռոշեանց։ (Մանկական գրադարան)։ Թիֆլիս, տպար. Մն. Մարտիրոսեանց, 10 կոպէկ։

7) ԿՈՍՏԱՆԵԱՆՑ, Կ.—Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը։ Յաւելուած՝ Աղէքսանդրի Պատմութեան կաֆաները։ Թիֆլիս, տպ. Շարաձէի 30 կոպէկ։

8) ՍԵԴՐԱԿԵԱՆ, Արիստակէս եպիսկոպոս.—Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը։ Ս. Պետերբուրգ, տպ. Լիբերման։

9) ԲԷՐՆԷՏ, Ֆրէնսիս.—Փոքրիկ լորդի պատմութիւնը (Վէպիկ)։ Ազատ թարգմ. Գ. Բաղր.։ Պատկերազարդ։ Բաքու, տպար. Շահբազեան և Ախունդով. գինը 1 ռ. 25 կոպէկ։

10) ՏԱՂԱՒԱՐԵԱՆ, Ն. դոքտ.—Առողջապահութիւն առանին և ի պէտս ազգ. երկրորդական վարժարանաց. Կ. Պոլիս, տպ. Նշ. Կ. Պէրպէրեան, գինը 25 դրուշ կամ 2 ռուբլի։

11) DAGAVARIAN, N. Dr.— L'Univers et sa formation. — Constantinople. imp. H. Matteossian. 2 ֆր. կամ 1 ռուբլի։

12) ԼԱՆԳՈՍԻՐՈՍ, Լ. Է.—Մեղուներ։ Թարգմ. ռուսերէն թարգմանութիւնից Զոկ։—Թիֆլ., տպ. Ռոտինեանցի, գինը 15 կոպէկ։

ՎԲԻՊԱԿՆԵՐ։ Մուրճ № 9-ում։

Պր. Յովհ. Տէր-Միրաքեանի «Դեռահասների ընթերցանութիւնը» յօդուածում, էջ 1212 տող 6 ուղիղն է՝ լորդ Անզոնի։—էջ 1218, տող 4—ուսումնարանական (ոչ՝ ուսումնական)։—էջ 1223 տող 5 ուղիղն է՝ ընթերցանութիւն սկսելու խնդիրը։—էջ 1224, տ. 19, ուղիղն է՝ զուրկ լինելով, անկարող կը լինեն հիանալ։

Լուրեր, էջ 1308, «Պարիզի հոլ ուսանողութիւնը» յօդուածում տպած է Ռ. Թանտաճեան, ուղիղն է՝ Արամ Թանտաճեան։

Լուրեր, էջ 1307, տող 2, տպած է՝ Դէ ալժմ գործել. ուղղել՝ Դէ ալժմ գործից.

Լուրեր, էջ 1312. «Փիւրքիա» յօդուածի 6-րդ տող, տպած է 7-ը հոգի, պիտի ուղղել՝ 70 հոգի։

Մուրճ № 7—8. պ. Կուսիկեանի յօդուածում մի տեղ տպած է՝ համեմատ ժամանակակիցներ. կարդալ՝ համամիտ ժամանակակիցներ։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ԲԱՑԻԱԾ Է 1899 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԾԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XVII ԱՂԲԻՒՐ XVII

Միամսեայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար։

X ՏԱՐԱԶ X

Պատկերազարդ չաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար։

Կը հրատարակուին նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ

ՆՊԱՏԱԿ

ԱՂԲԻՒՐԻ նպատակն է զարթեցնել և զարգացնել Հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու աղնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը։

Ա. ՂԲԻՒՐԸ իր մատաղ ընթերցողները սիրելու մի յանուն է դթութեան ինքնամոռանաչութեան, անվեհերութեան սերմեր։

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ հասունացած ոգերի խնդակցութեան և վշտի արտայայտողն է, զգացումներով թարգմանը։

Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտուած, դիտութեան անշէջ լուսով զարդացած, եղբայրսիրութեամբ լցուած Հայ անդամները անուշանալու։

ԾՐԱԳԻՐ

ԱՂԲԻՒՐԸ լոյս կը տեսնի իւրաքանչիւր ամիս 3—5 թ., տարեկան 12 №№։

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանրալէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն։ Գիտութիւն և արուեստ նոր լուրեր։ Այլ և այլք։ Զարմանալիք։ Մանկական, Ֆրեոբէլեան. Շախմատի և այլ խաղեր, Բեբուսներ, Թաքանական խնդիրներ. Անեկդոտ. Հանելուկ, Երգեր նոտաներով։

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ Առաջարկութիւններ։ Խորհուրդներ։ Մատենախօսութիւն և նոր գրքեր։ Խառն լուրեր։ Պատասխաններ։

ՏԱՐԱԶԸ լոյս կը տեսնի ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—3 թերթ. տարեկան 48—50 №№։

Գեղարուեստ և գիտութիւն։ Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, Թատրոնական գրուածներ։ Բանաստեղծութիւն։ Քննադատութիւն։ Կենսագրութիւն։ Կար, ձև, ձեւագործ և ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ։ Տնային արդիւնաբերութիւն, անասնութիւն։ Ճանապարհորդութիւն և արկածք։ Բժշկութիւն և թատրոն։ Լուրեր, տեղեկութիւններ։ Յօդուածներ և այլն—Ֆելիեթոն, դաղր. առած և կատակ։ Շախմատի և այլ խաղեր, Բեբուս։ Հարցեր, խորհուրդներ։ Այլ և այլ։ Սուրհանդակ։ Յայտարարութիւններ։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

Հին Յունաստանի չքնաղ առասպելներից երկու խրատա-օլէոգրաֆիական շատ շքեղ պատկերներ պատրաստուած Եւրոպայի հռչակաւոր գործարաններում

1) ԱՆՏԻԳՈՆԷ ԵՒ ԷԴԻՊՈՍ 11) ԱՆՏԻԳՈՆԷ ԵՒ ԻՍՄԷՆԷ

Պրէմիաները բաժանորդները կը ստանան Աղբիւր-Տարազի նոր տարւայ №№-ի հետ, եթէ տարեկան բաժանորդագինը լիովին վճարած լինին։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

ԱՂԲԻՒՐԻ տարեկան բաժանորդագինը **3** ր. պրէմիայով 5 ր. (15 ֆր.)։ **4** արտասահման։ ՏԱՐԱԶԻ տարեկան բաժանորդագինը **6** ր., պրէմիայով **7** ր. արտասահման 10 ր. (30 ֆր.)։

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ միևնոյն հասցէով և պրէմիաները ստացող բաժանորդը լոխանակ 11 ր. վճարում է միայն **10** ր. բացի այդ **ձրի** ստանում է **ՏԱՐԱԶԻ** գեղանի վառակազմ **ՕՐԱՑՈՅՑ** 1899 թ., եթէ բաժանորդ է դրել մինչև դեկտ. 15-ը։

Նոր բաժանորդները Տարազ և Աղբիւր կը ստանան դեկտեմբերի 1-ից։ Աղբիւր և Տարազ միևնոյն հասցէով բաժանորդը եթէ ստորագրել է մինչև առաջիկայ դեկտեմբերի 15-ը։ կը ստանայ և հետեւեալ պրէմիաները

աւելացնելով բաժանորդագինին մեկայն 2 ր. I) **ԱՂԲԻՒՐԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ** վեց շքեղ գրքոյկները, որոնք իրանց ներքին եւ արտաքին վայելով կարող են լինել ամենաթանկագին ընծայ նոր Տարու համար։ II) **ՏԱՐԱԶԻ ՕՐԱՑՈՅՑ**

գեղանի վառակազմ հրատարակութիւն, աղջիկների համար։ Հեռու առօրեայ, աչխարհային իրարիգներից նուիրված գեղեցկին և ճշմարտին՝ հայ գրական անդաստանում **ՏԱՐԱԶԸ** մեծ պարտք և զերուն կատարելու... Ամենանից չայտարարել ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ճոխ, իմաստալից և բազմաբովանդակ առաջիկայ 1899 թ. հրատարակելուն համար մեր նախապատրաստութիւնների մասին, կը նշանակէր ընթերցողին կանխաւ զեկուցանել իր ստանալիք սիրաբերները... Ահա այժմ խնդրում ենք միայն, որ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻՆ բաժանորդ գրել ցանկացողները աճապարին փութով ստորագրել, որպէս զի այս անցնող 1898 թուականի նոյեմբերի չորրորդին բաժանորդ գրողների չորրորդին ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ առաջին №№-ները։

Առաջիկայ 1899 թ. համար է մինչ այլոց իմաստասիրութեան պրոֆէսորում պատրաստեն Տարազի համար ԱԼՖՈՆՍ ԴՈԴԷԻ **ԱՆՄԱՀԸ** և ԺՈՐԺ ՕՆԷԻ **ԱՆՄԱՐՏԻ ՈՃԺԸ** պատկերազարդ վէպերը, որոնց կրիչները ստացած են Պարիզից և արդէն մեր պահարանումն են։ Տաճկա-Հայաստանի կեանքից **ԱԼԱՐՕ**, տաճիկներին կեանքից **ՎԻՔԵՆԱԼԱՑԻ ԴԱՂՏՆԻՔԸ**, ինքնուրոյն վէպեր և մի շարք գլխական լուրջ յօդուածները, որոնց թւում **ՐԱՑԱ**, Խալամ, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները. Ի. Աբովեան, Ալբերտ Համար՝ Աբիսոտել, Շիլլէր, Վալտեր-Սկոտ, Զ. Դիկենս, Փուտեմբերգ, Ռիշելիօ, Պեստալոցցի, Ժաքարեկի և այլն։

Բայց այն, որ ՏԱՐԱԶԸ ընթերցանութեան չատ նիւթ է տալիս բերլեարիստիկոյից, պակաս էջեր չեն զարդարում և կրիտիկական յօդուածներով Գեղարուեստ ու անտեսագիտական, հասարակական գիտական յօդուածները քաղում են և կազմում հաստատում աղբիւրներից մեր մասնագէտ աչխատակիցների ձեռքով։ ԱՂԲԻՒՐԸ ներկայ նոյեմբերից լոյս է տեսնում ընդարձակ ծաւալով։ Առանձին հոգս է տալիս, որ ԱՂԲԻՒՐԸ իր ընտանեաց՝ օգտակար և չքեղ բովանդակութեամբ ամեն հայ ծնողից և դաստիարակից ճանաչի իբրև ամենալաւ բարեկամ և ընկեր հայ մանկան և պատանուն։

Հասցէն Тифлисъ, редакція иллюст. журн. Агбюръ Таразъ կամ Tiflis (Caucase) Red. des jour. Agbur et Taraz

Խմբագիր-Հրատարակիչ՝ **ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

		Ր	Կ.
1.	ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ՑԵՑՆԵՐ» (վէպ)	1	—
2.	ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ (Ղզլարցի)՝ «Մանուկների մարսողութ. գործարանների հիւանդութիւնները»	—	05
3.	ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.—«ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթոլիկների կեանքից	1	—
4.	ԼԷՕ.—«ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	—	50
5.	Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս.—«ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ»	—	40
6.	ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»	—	60
7.	ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ.—«ԲՂԴԷ», վէպ	1	20
8.	ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԽԱՊ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից	—	15
9.	ՄԱՐԻՍԵԱՆ, տիկին Մ.—«ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը	—	50
0.	» » » » բ. մասը	—	75
11.	ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ, Ց.—«ՍԵՒ-ԼԵՌՆՑԻՔ» (տոհմագ. պատկ.)	—	15
12.	ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.—«ՀԱՐԵՒԱՆՆԵՐ»	—	03
13.	» » «ՄԻՆԱՍԻ ԵՋԸ»	—	03
14.	» » «ԵԶԻԴ ԱՂՋԻԿԸ»	—	03
15.	» » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
16.	» » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
17.	» » «ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ	—	03
18.	ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, ԱԼ.—«ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	—	15
19.	ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.—«ՄԻԿՐՈԲՆԵՐԸ»	—	10
20.	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՋԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ»	—	10
21.	ՑՈՒԷՆ, ՄԱՐԿ.—«ՋԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ»	—	15
22.	ՎԸՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ»	—	20

23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», *Մասն ա.*. . — 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» (*դրամա*). . — 50
25. ՇԻՐՎԱՆԶԱԴԷ.—«ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ» 1 50
26. ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ.—«ԱՒԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ» . . . 1 50
27. ԱՂԱՅԵԱՆՑ, ՂԱԶ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ» — 75
28. «ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՕԻՆ», *յառաջաբանով և ընտրութեամբ* ՎՐՈՅՐԻ . . . . . — 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», *մասն բ.*. . . . . — 50
30. ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ.—«ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ *Արևմտեան Եւրոպայում և Ռուսիայում* . . . . — 50
31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳ.—«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱՒ. ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» . . . . . — 40
32. ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ» (*պատկերներ*) . . . . . — 40
33. ՄԻՐԻՄԱՆԵԱՆ, ՅԱՐ.—ՇՈՊԱ ՌՈՒՍԹԱՒԵԼՈՒ «ԸՆԶԵՆԱԻՐԸ» *արձակ պատմուած, կենսագրութիւնով* . . . — 15
34. ՇԱՆԹ.—«ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐ», *վէպ*. . . . . — 50
35. » «ԵՐԱԶ ՕՐԵՐ». . . . . — 40
36. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ, Յ.—«ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ» — 25
37. ՁԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԷՈՍ ԲԺ.—«ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ» . . . . . — 20
38. ԲԱԲԿԵՆՑ, Գ.—«ՆՈՐԵԿ» (*վէպ*) . . . . . — 70
39. ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ.—«ԱՆՑԱԳԸ» . . . . . — 15
40. ՇԱՆԹ.—«ՎԵՐԺԻՆ» (*վէպ*) . . . . . — 60
41. ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷ.—«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ» . . . . . — 40
42. ՆԻԿ. ՄԱՐՐ.—«ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՅԵԱԼՈՒՄ» . . . . . — 20
43. ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ.—«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ» — 20

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնէ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

(Մօտ 250 երես, գինն է ՄԻԿ ռուբլի)

Յանկացողները դիմում են հեղինակին՝ Москва, Садовая-Каретный, Мебл. комн. Ивановой, № 10.

Կարելի է գիտել նաեւ Մուրճ՝ի խմբագրութեանը։

Ա. Արասխանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հին եգիպտական, փիւնիկական եւ ասորական գրութիւններով եւ Արեւելքի հին պետութիւնների քարտէզով։

281 *երես, յառաջաբան եւ նիւթերի ցանկ*

պատած է **800** *օրինակ, փայլուն թղթի վերայ*

Գինն է ճանապարհածախսով միասին **1** *ռուբլի*

Պէտք է դիմել Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, *Ուսումնարաններին անուում է* 20% *զիջում։*

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

1895 Մարտ 1-ին, Պոլիս, ԾԱՂԻԿ հանդէսին հրատարակութեան նպատակը բացատրելով, սա սողերը կը գրէի. «ԾԱՂԻԿԻ խմբագրութիւնը իրապէս համոզած է թէ ցեղի մը հոգեկան զաստիարակութիւնը իր գրականութեամբը միայն կը կատարուի, պայմանով որ այդ գրականութիւնը մտածման և զեղեցկին սնուցանող և մեծցնող տարրերն ունենայ... ԾԱՂԻԿ; ճշմարիտ հանդէսի մը հանգամանքները պիտի ունենայ, ամբողջական ուսումնասիրութիւններ ներկայացնելով ու խնդիրները իրենց ընդանրութեան մէջ նկատելով։ Անիկա սահմանուած է մանաւանդ ընդարակ և աշխատուած գրականութեան»։

Մինչեւ ոն ծրագիրը, աւելի լայն սահմաններով, իրագործելու համար է որ այսօր կը ձեռնարկեմ ԱՆԱՀԻՏը հրատարակելու, տոգորուած մանաւանդ այն մտածմամբը թէ Պարիզէն՝ այս տիեզերական կեդրոնէն՝ մեկնած գրական բազմակողմանի հրատարակութիւն մը կրնայ տեսակ մը միջնորդ հանդիսանալ Եւրոպական քաղաքակրթութեան ու մեր ժողովուրդին միջև, և միանգամայն՝ աշխարհի չորս կողմը ցրուած Հայերուն մէջ բարոյական կապ մը ձեւացնել։

Ո և է քաղաքական գործունէութենէ զերծ, ո և է կուսակցութենէ անկախ, անձնական խնդիրներու բացարձակապէս անմատչելի, ԱՆԱՀԻՏ պիտի ըլլայ զուտ մտաւորական հրատարակութիւն մը։ Ամէն տեսակ խընդիրներ,—նոյն իսկ ազգային և քաղաքական հարցերը, որոնց բաժին մը պիտի յատկացուի,—նկատողութեան պիտի առնուին այս հանդէսին մէջ՝ գրագէտի անկողմնակալ քննական ոգիով, և երբեք գործիչի, աղանդաւորի կրքոտ ու նպատակաւոր ձգտումներով։

ԱՆԱՀԻՏ պիտի պարունակէ 1. Ուսումնասիրութիւններ հայ ժողովուրդին պատմութեան, գրականութեան, գեղարուեստին ու լեզուին վրայ, և տեսութիւններ անոր ներկայ բարոյական և նիւթական կացութեան մասին. 2. Ուսումնասիրութիւններ գեղարուեստական, գիտական և ընկերական ընդհանուր խնդիրներու վրայ. 3. Թարգմանութիւններ օտար հին և նոր մատենագրութեանց ամենէն կարեւոր հրաշակերտներուն. 4. Վէպեր, վիպակներ և բանաստեղծութիւններ ազգային կամ առհասարակ արեւելեան կեանքէ. 5. Ոտանաւոր և արձակ գրութիւններ՝ գրական ամէն տեսէ. 5. Հրատարակութիւն և ուսումնասիրութիւն հին ու նոր հայ ժողովրդական բանաստեղծութեանց, աւանդութեանց և հէքեաթներու։ ԱՆԱՀԻՏ պիտի ձգտի մասնաւորապէս ազգային գրականութիւնը զարգացնել զուտ հայ տարրերով։

Այս բազմաղան ծրագրին իրականացման համար ուրախ եմ ծանուցանելու որ գրագէտներու, արուեստագէտներու և գիտնականներու խումբի մը աջակցութիւնն ապահոված եմ արդէն, և կը յուսամ գործակից ունենալ բոլոր այն հայ մտքերը որոնք կը բաղձան մտաւորական լծակին միջոցով ազգին բարոյական մակարդակը բարձրացնել։

Եթէ ընդունելութիւն գտնէ այս ձեռնարկը և միջոցները ներեն, մտադիր եմ հետզհետէ ճոխացնել հանդէսին գեղարուեստական մասը, պատկերներ, արուեստի հրաշակերտներու վերարտադրութիւններ, ինքնուրոյն գծագրութիւններ, հրատարակելով. իմ փափաքս է մանաւանդ հայկական վաղեմի զարդանկարչական արուեստին վերանորոգում մը փորձել այլազան ձևերով։ Այդ գաղափարին մէկ առաջին գործադրութիւնն է այս Ազգին ճակատանկարը զոր ծանօթ հայ նկարիչը՝ Պ. Է. Շահին լօրինեց նմանողութեամբ հին հայ նկարազարդ ձեռագիրներու։

ԱՆԱՀԻՏ կոչեցի Հանդէսը, մեր հինաւուրց և լաւիտենական աստուածուհին անունով, որպէս զի Ոսկեծղին, Անարատը, բարութեանց Բաշխիչը, հայ ցեղին հոգին պատկերող մայրական Դիցանուշը՝ այս ազգային-գրական ձեռնարկը իր լուսաւոր թեւերովը հովանաւորէ և զայն գեղեցկութեամբ ու կենդանութեամբ պսծառացնէ։

ԱՆԱՀԻՏԻ առաջին թիւը հրապարակ պիտի ելլէ յառաջիկայ Նոյեմբեր 1-ին։ Բաժանորդագինը պիտի ըլլայ տարեկան 12 ֆրանք և վեցամսեայ 6 ֆրանք՝ օտար երկիրներու համար, 10 ֆրանք և 5 ֆրանք Ֆրանսայի համար։

Բաժանորդագրութիւնը բացուած է արդէն։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Պարիզ. Paris. 6, Place de l'Odéon
1 Յուլիս 1898

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԱԶԳԱՊՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1898 թուի

Բաժանորդագրութիւնը

Լոյս է տեսել № 1. իսկ № 2 լոյս կը տեսնի դեկտեմբերին։

Երկու գրքի բաժանորդագինն է 3 ռուբլի

Դիմել՝ Е. Лалаянъ. Семинарія Нерсисянъ. Тифлисъ.

ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԺՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1899 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՍԿՍԻԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱՓԻՆԸ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆռանկ։

ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիևսկայա փողոց, տուն № 6։ Այլ քաղաքներից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

ԲԱՔԻՈՒՄ կարելի է գրել նաև պ. Գրիգոր Մարգարեանի մօտ (գրասենեակ Ե. և Հ. Մելիքեանների)։